



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

21.004

33

F-78



15 JAN 2010

Հրատարակութիւն «Զանգ» № 1.

Ա. ԲՈԳԴԱՆՈՎ

3.47

# ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ

## ՀԱՄԱՌՕՏ ԴԱՍԸՆԹԱՅ

Հեղինակի յասուկ յատարարումով



Ռ.Ս.Ս. վերջին հրատարակութիւնից  
Թարգմ. Ա.ՅՈՏ Հիլինկիրեան

ԳԻՆՆ Է 1 ԲՈՒԹԼԻ

ԹԻՖԼԻՍ  
Էլէկտ. տպարան Գուտախերբոզ  
1907

33  
P-78

05 FEB 2007

Ա. ԲՈԳՂԱՆՈՎ

# ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ

**ՀԱՄԱՌՕՏ ԴԱՄԸՆԹԱՅ**

Հեղինակի յայտնի յառաջաբանով



*Թարգմանեց*

Ա. ՇՆՏ ԶԻՂԻՆ ԿԻՐԵԱՆ

ԳԻՆՆ Է 1 ԲՈՒԲԼԻՔ

ԹԻՖԼԻՍ

Էլէկտ. տպարան Գուտտենբերգի  
1907

05 MAR 2013

21.000



3468-82

Тифлисъ, Электронпечатня Гуттенбергъ.

### ՅԱՌԱՋԱԲԱՆ ՀԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

Այս գիրքը ներկայացնում է քաղաքական անտեսութեան մի շատ սեղմ և համարեա համառօտ մեկնութիւն, գիտական սօցիալիզմի տեսակէտով: Գրքի մեկնութեան կարգն այնպէս է պահւած, ինչպէս որ վերոյիշեալ տեսակէտից ամենայարմարն է. անտեսական ձևերը նկարագրուում են իրանց զարգացմամբ և այնպիսի հետևողականութեամբ, ինչպէս որ նրանք առաջ են գալիս մարդկանց սօցիալական կեանքի մէջ: Այն ընթերցողի համար, որը զանազան գրքերից ու բրոշուրներից օղտւած լինելով արդէն քիչ թէ շատ տեղեկութիւն ունի քաղաքական անտեսութեան մասին, այս ձեռնարկը կձառայէ իբրև միջոց իւր հաւաքած տեղեկութիւնները մի սխառէմի վերածելու: Իսկ նոր սկսող ընթերցողին այս ձեռնարկը կարող է, բացի ամենակարևոր տեղեկութիւնների համառօտ մեկնութիւնից, տալ նաև այս առարկայի յետագայ ուսումնասիրութեան պատրաստի սխեման: Հէնց վերջին տեսակի ընթերցողների համար էլ բնագիրը բաժանւած է խոշորատառ և մանրատառ մասերի: Խոշորատառ մասը, առանց մանրատառ մասի, նոյնպէս ներկայացնում է մի ամբողջութիւն. միևնոյն ժամանակ այդ մասը աւելի հանրամատչելի մեկնութիւն է այն ամենակարևոր նիւթի, որի ուսումնասիրութիւնը հարկւոր է նոր սկսող ընթերցողին:

Այս գիրքը կազմել է մի շարք դասախօսութիւններից, որ կարգացել են բանւորական ինքնակրթական ժողովներում: Կարելի է ասել, որ այս գիրքը բանւորների հեղինակութիւնն է, որովհետև հեղինակը

թէ գիտական նիւթի ընտրութեան և թէ նիւթի դասաւորութեան մէջ հէնց բանւորների հարցմունքներով ու պահանջներով է առաջնորդել: Բանւորներն ուզում էին, որ պրօլետարիատի և միւս դասակարգերի գրութիւնը, շահերն ու խնդիրները իրանց առաջ դրէին ամենայն հետևողականութեամբ, սկսած հէնց սկզբից, — որպէսզի պարզ լինի, թէ որտեղից ինչ է առաջացել և ուր է գնում: Հեղինակն իրագործել է այդ պահանջները, որքան որ կարողացել է. ըստ որում, նիւթի ամենամեծ յոսքը, ի հարկէ, գերմանական սօցիալ-դէմօկրատիան է տւել:

Տեսեսական գիտութիւնը պրօլետարական տեսակէտով լիովին միջազգային է, ինչպէս միջազգային է ամենից առաջ ինքը պրօլետարիատը: Տիրապետող դասակարգերը շարունակ և բոլոր ուժով աշխատում են մթագնել այս վերջին ճշմարտութիւնը. նրանք աշխատում են խաբէութեամբ փոխել բոլոր երկրների պրօլետարիատի դասակարգային կռիւն ընդդէմ ամբողջ բուրժուազիայի և դարձնել նրան ազգային կռիւ, ժողովուրդների թշնամութիւն: Նրանք աշխատում են անջատել պրօլետարիատը, որպէսզի տիրապետեն նրա վրայ. նրանք գրգռում են ռուսական պրօլետարիատը հրէականի դէմ, թուրքականը — հայկականի դէմ: Այն պրօլետարական մասսաների խաւերում, որոնք դեռ սակաւագիտակից են, այդ ճնշումները երբեմն յաջողութեամբ են սպակւում և այն ժամանակ թափւում է եղբայրական արիւնը ու պրօլետարիատի թշնամիները ցնծում են այդ յաղթանակով:

Սակայն այդ յաղթանակը երկարատե չի լինում: Դասակարգային ինքնագիտակցութեան լոյսը անխուսափելիօրէն թափանցում է նոյն իսկ ամենայնտամնաց խաւերի մէջ և այն ժամանակ խաբւածների ատելութիւնն աւելի ուժգին է բորբոքւում իրանց թշնամիների դէմ, որոնք գրգռել էին նրանց՝ իրանց դաշնակիցների ու բարեկամների դէմ: Բոլոր ազգերի ամբողջ պրօլետարիատի եղբայրական միութիւնը զարգանում, ամրապնդւում է և անպարտելի է դառնում:

Մեր ապրած էպօխայում, որ յեղափոխական էպօխա է, մասսաների քաղաքական զարգացումը տասնեակ անգամ աւելի արագ է ընթանում, քան սովորական ժամանակներում: Ամիսներն անցնում են իբրև տարիներ, օրերը — իբրև ամիսներ: Թշնամիների հնարագիտութիւնները, որ ազգերի մէջ թշնամութիւն են սերմանում, օր ըստ օրէ աւելի քիչ յաջողութիւն են դտնում. պրօլետարական մասսաները հետզհետէ աւելի ու աւելի սերտ են համախմբւում: Եւ ազգային բան-

ւորական կազմակերպութիւնները, պրօլետարիատի քաղաքական ներկայացուցիչները ամբողջ Ռուսաստանում միանում, մի բանւորական կուսակցութիւն են կազմում:

Ջերմագին ողջունելով հայ պրօլետարիատի մէջ գործող ուժերի միութիւնը, չեմ կարող չարտայայտել իմ յոյսն ու ցանկութիւնը, որ այս գրքի հայերէն թարգմանութիւնը ի կատար ածէ ոչ միայն իւր ուղիղ կոչումը՝ իբրև մի դասագիրք, որ պէտք է օգնէ հայ բանւոր ընկերօջը ընդհանուր կռիւ համար իւր ինքնակրթութեան դժւարին ու բարդ գործի մէջ, — այլ որ հանդիսանայ այն բազմաթիւ թելերից մէկը, որոնք ամբացւում են ռուս և հայ պրօլետարիատի եղբայրական միութիւնը, որոնց առաջ կանգնած է միևնոյն մեծ և ընդհանուր նպատակն ապագայում և միևնոյն խնդիրները՝ ներկայ յեղափոխութեան մէջ:

Ա. ԲՈՅՊՍՆՈՎ

# ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

## 1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Մարդկութեան զարգացման պրօցէսսում մարդկանց գոյութեան կռիւը միշտ աւելի ու աւելի ցիտակցական և հասարակական է դառնում: Գիտակցական գոյութեան կռիւ կամ, աւելի կարճ, աշխատանք, կոչւում է մարդկային էներգիայի ծախսումը որոշ և առաջուց գիտակցւած նպատակի համար: Այդ նպատակը կայանում է մարդկային որ և է կարիքին բաւարարութիւն տալում: Եթէ խնդիրը միայն հէնց աշխատաւորի անձնական կարիքի մէջ է, այն ժամանակ մեր առաջն է «անհատական-օգտակար» աշխատանքը: Այդպէս է օր.՝ այն մարդու աշխատանքը, որը ուտում կամ հագնւում է: Տնտեսական գիտութիւնը այդ տեսակ աշխատանքի հետ գործ չի ունենում: Նրան հետաքրքրում է միայն «հանրօգուտ» աշխատանքը, այսինքն այնպիսին, որը բաւարարութիւն է տալիս ոչ բացառապէս աշխատաւորի անձնական կարիքներին, այլ հասարակական կարիքներին, յօգուտ հասարակութեան քիչներին, այլ հասարակական կարիքներին, յօգուտ հասարակութեան ամբողջութեան, որի մի անդամն էլ ինքն աշխատաւորն է: Այդ դէպքում մարդ անխտիր գիտակցօրէն է ձգտում օգուտ տալ ուրիշ մարդկանց, թէ այս բղիւղում է նրա ուղիղ, անմիջական նպատակներին, կամ թէ նոյնիսկ՝ ստրուկն աշխատում է ծեծից խուսափելու կամ վարձեթէ նոյնիսկ՝ ստրուկն աշխատում է ծեծից խուսափելու համար, այդ միևնոյնն է, նրանց աշխատանքը հանրօգուտ է, երբ նա փաստօրէն նպաստում է միւս մարդկանց կարիքներին բաւարարութիւն տալուն:

Չգրադելով կարիքների հետադատութեամբ, տնտեսական գիտութիւնը հանրօգուտ է անւանում ամեն մի աշխատանք, որ պիտանի է հասարակութեան. բաւարարութիւն է տալիս նա կենսական թէ երկբորդական, բնական թէ արհեստական կարիքներին, այս տեսակէտից երկրագործի աշխատանքն ու ականագործինը, ուսուցչինն ու ծառայինը՝ չեն տարբերւում:

«Հանրօգուտ աշխատանք» արտայայտութեան հետ բոլորովին համանիշ պէտք է գործածենք «արտադրութիւն» տերմինը: Արտադրութեան պրօցէսսների մէջ գիտութիւնը զանազանում է երկու կողմեր. — տեխնիկական և հասարակական:

Արտադրութիւնը մարդկանց՝ արտաքին բնութեան հետ ունեցած կռիւն է: Այս կռիւ մէջ մարդն անմիջականապէս ներգործում է բնութեան վրայ, օգտւելով նրա ասարկաներից և ոյժերից, փոփոխում է

վերջինս իւր շահերի մէջ: Աշխատաւորի՝ արտաքին բնութեան հետ ունեցած անմիջական յարաբերութիւնն արտադրութեան տեխնիկական կողմն է: Այդ կողմն ուսումնասիրուում է տեխնիկական գիտութիւններով (մեխանիկա, տեխնոլոգիա) և բնական գիտութիւններով (մատեմատիկա, ֆիզիկա, քիմիա, կենսաբանութիւն):

Արտադրութեան հասարակական կողմը կազմում են այն յարաբերութիւնները, որ մարդ արտադրութեան ժամանակ ունենում է ուրիշ մարդկանց հետ: Հիմնական և ընդհանուր արտադրական յարաբերութիւնն արգէն պարզ արտայայտուում է հէնց «հանրօգուտ աշխատանք» նշանակութեան մէջ. մարդիկ աշխատում են միմեանց համար, հասարակութեան ամբողջութեան համար, հետևապէս նրանց մէջ գոյութիւն ունի միութեան և բնութեան դէմ մղած աշխատանքային կռիւ միաբանութիւն: Այս ընդհանուր յարաբերութիւնը զանազան դէպքերում զանազան ձևեր է ստանում, որոնք միանում են և մի քանի հիմնական տեսակներ դառնում. նասարակ աշխատակցութիւն, — երբ բանւորները միասին կատարում են միևնոյն աշխատանքը. աշխատակցի բաժանումն. — երբ մի արտադրութեան պրօցէսի տարրեր մասերը կատարում են տարբեր բանւորներ. ստորադրութիւն (աշխատանքի բաժանման մասնաւոր դէպք). — երբ մի մարդ կատարում է միևսի ցուցմունքները:

Տնտեսական գիտութեան հիմնական առարկան կազմում է հէնց արտադրութեան հասարակական կողմը — մարդկանց մէջ եղած յարաբերութիւնները և ոչ թէ տեխնիկականը, ոչ թէ մարդու՝ արտաքին բնութեան հետ ունեցած յարաբերութիւնը:

Գիտութեան մէջ վաղ ժամանակներից արմատացել է հանրօգուտ աշխատանքի բաժանումը «արտադրականի» և «ոչ արտադրականի»: Արտադրական է կոչւում այն աշխատանքը, որ նիւթական օգտակար առարկաներ է ստեղծում. ոչ արտադրական — այն աշխատանքը, որի պրօդուկտը (արդիւնք) նիւթական չէ. օրինակ՝ ֆարբիկային բանւորի աշխատանքն ու գասախօսի աշխատանքը: Այսպիսի խիստ սահմանափակման դէպքում, օրինակ՝ ամբողջ փոխադրական զբաղմունքը, չնայեա՞ծ հասարակութեան նիւթական կեանքի վրայ ունեցած նրա անմիջական ահազին նշանակութեանը, պէտք է ոչ արտադրական աշխատանքին վերաբերի: Այդ կերպ սահմանափակումը գիտական չի կարելի համարել: Կարելի է մի ուրիշ, գիտական մտքով աւելի բաւարար ձևակերպումն (формулировка) տալ նրան. արտադրական անւանել ամեն մի հանրօգուտ աշխատանք, որ արտաքին բնութեան մէջ նիւթական փոփոխութիւն է առաջ բերում: Այն ժամանակ չեն ստացւիլ այնպիսի հակասութիւններ, որպիսին տեղի ունի նախընթաց օրինակում փոխադրական արդիւնաբերութեան մէջ (перевозочная) (ПРОМЫШЛЕННОСТЬ): Բայց այն ժամանակ հէնց ինքը սահմանափակումն էլ վերանում է: Իւրաքանչիւր հանրօգուտ աշխատանք պէտք է արտադրական համարել, որովհետև ոչ մի աշխատանք չի կարող հան-

րօգուտ դառնալ, առանց նիւթապէս երևան գալու, առանց նիւթական փոփոխութիւններ առաջ բերելու արտաքին բնութեան մէջ. հեղինակի աշխատանքը միայն նիւթական ձեւագրով կամ գրքով է ներգործում մարդկանց հոգեկանի (ПСИХИКА) վրայ. գասախօսի աշխատանքն օգտակար է դառնում ունկնդիրների համար այն պատճառով, որ նրանց ականջին է հասնում գասախօսի առաջացրած հնչիւնային տատանումները — նիւթական փոփոխութիւններ միջնորդաի մէջ, և այլն:

Առաջ գիտութեան մէջ արտադրական և ոչ արտադրական աշխատանքի սահմանափակումը շատ կարևոր դեր էր խաղում. էկոնոմիայի մէջ պարունակել են մարդկանց այն յարաբերութիւնները միայն, որոնք սկիզբն են առնում «արտադրական» աշխատանքի շրջանում: Սակայն, եթէ նոյնիսկ յաջողէր բաւականաչափ ճիշտ և պարզ ձևակերպումն տալ այս սահմանափակման, հազիւ թէ նա օգտակար լինէր գիտութեանը՝ երևոյթների օրինաչափ հետազօտութեան համար: Խնդիրը միայն հին բաժանման ծայրայեղ պայմանականութեան մէջ չէ, բանը նրանումն է, որ հին բաժանումը զուտ հասարակական, մարդկանց յարաբերութիւնների մասին եղած գիտութեան մէջ գիտութեան համար օտար տեսակէտներ է մտցնում, որոշելով այս գիտութեան սահմանները իրերի բնական յատկութիւններով, նրանց նիւթականութեամբ կամ ոչ նիւթականութեամբ: Մինչդեռ հասարակական աշխատանքի մէջ մարդկանց յարաբերութիւնները կարող են բոլորովին նոյն ձևերն ընդունել, ինչպէս նիւթական, այնպէս և ոչ նիւթական իրերի արտադրութեան ժամանակ: Եւ տնտեսական գիտութիւնից բացի մի գիտութիւնը կարող էր իւր վերայ վերցնել աշխատանքային միաբանութեան այն յարաբերութիւնները հետազօտութիւնը, որոնք կապում են «ոչ արտադրական» հասարակական աշխատաւորներին միմեանց և «արտադրական» բանւորների հետ:

Արտադրութեան հասարակական կողմի հետ, որ ներկայանում է որպէս նրա շարունակութիւնը, անքակտելի կերպով կապւած է բաշխումը (распределение):

Անհատական գործածութիւնը դուրս է տնտեսական գիտութեան սահմանից, — տնտեսական գիտութեան, որ հասարակական գիտութիւններից մէկն է և պատկանում է օրգանիզմի մասին եղած գիտութեանը (ֆիզիոլոգիա): Սակայն արտադրութեան պրօցէսաները չէին կարող հանրօգուտ դառնալ, եթէ նրանց հետևանքները, նրանց նիւթական և ոչ նիւթական արդիւնքները չբաշխէին այս կամ այն եղանակով հասարակութեան անդամների մէջ անձնական գործածութեան համար: Այսպիսով հասարակական արտադրութեան և անձնական գործածութեան մէջ կայ բաշխումն — մի հասարակական պրօցէսս, որի մէջ աշխատանքի արդիւնքը գործածութեան է անցնում:

Բաշխման ամբողջ պրօցէսսն առաջանում է մարդկանց մէջ եղած զանազան յարաբերութիւններից: Այս յարաբերութիւնների էութիւնն ամեն տեղ միևնոյն է. յայտնի մոմէնտից սկսած, իւրաքանչիւր տառն-

ձին անհատ սկսում է հանրական աշխատանքի արդիւնքն իրանը համարել, այսինքն՝ իւր՝ անհատականապէս օգտուելու առարկան համարել։ Իսկ հասարակութեան միւս անդամներն այդ թոյլ են տալիս։

Բաշխման մասնաւոր ձևերը յանգում են երկու հիմնական տիպերի. առաջին՝ օւղիղ կամ կազմակերպւած բաշխումն, երբ մի անձնական կամ հասարակական կամք հասարակական արդիւնքի մէջ որոշում է առանձին անձերի բաժինը. օր.՝ երբ ստրկատէքն՝ իւրացներն բաժին է տալիս կենսական անհրաժեշտ միջոցներ, կամ երբ ցեղական համայնքի խորհուրդը բաժանում է իւր անդամների մէջ գործածութեան իրերը. երկրորդ՝ կողմնակի կամ անկազմակերպ բաշխումն կամ փոխանակութիւն, երբ հասարակական արդիւնքը մինչև գործածողին հասնելը, անցնում է փոփոխական պրօցէսսների մի շարք, հերթով անարբեր մարդկանց սեփականութիւն դառնալով։ Օրինակ՝ առուծախսի միջոցով գործարանատէրերից անցնում է մեծ քանակութեամբ ծախող վաճառականին, սրանից—մանրավաճառներին և նրանցից էլ—իսկական սպառողներին։

Սովորաբար փոփոխման գիտութիւնը ջնկում են տարածման գիտութիւնից, իբրև տնտեսական գիտութեան առանձին ինքնուրոյն մաս։ Սրա համար բաւարար հիմունքներ չկան. փոփոխութիւնը բաշխման մի մասնաւոր, պատմականապէս անցած, զարգացման որոշ շրջանի մէջ ծագած և որոշ շրջանի մէջ չբացած ձև է։

Ճշգրիտ որոշելով տնտեսական գիտութեան շրջանը՝ պէտք է ասել հետևապէս, որ սա արտադրութեան և բաշխման հասարակական յարաբերութիւնների գիտութիւն է։

Էսպէս բոլորովին ճիշտ և բաւական կըլինէր խօսել արտադրութեան յարաբերութեանց մասին։ Բաշխումը ուսումնասիրւում է տնտեսական գիտութեամբ այն չափով միայն, ինչ չափով որ նա անքակտելի կերպով կապւում է արտադրութեան հետ, ինչ չափով որ նա ներկայանում է նրա մի այլ կողմը։ Եթէ մի դասակարգին պատկանում է աշխատանքի գործիքներն ու նիւթերը, իսկ միւսին նրա բանւորական ոյժը, այդ դէպքում սա բաժանման յարաբերութիւն կըլինի, բայց միևնոյն ժամանակ արտադրական յարաբերութիւն է, որով ցոյց է տալիս աշխատանքի պրօցէսսի մէջ առաջնի տիրապետութիւնն երկրորդի վերայ։ Ընդհանրապէս բաշխումը, որ ուսումնասիրւում է տնտեսական գիտութեամբ, արտադրութեան պայմանների բաշխումն է. յարաբերութեանց թէ այս և թէ միւս շրջանը անքակտելի մի ամբողջութիւն է նրա համար։

Հասարակական յարաբերութիւնները չեն ներկայացնում որ և է մշտական և անփոփոխ բան. ինչպէս բնութեան մէջ ամեն ինչ, նրանք էլ շարունակ փոփոխւում են։ Նրանց փոփոխութիւնների մէջ արտայայտւում են յառաջագիմութիւն կամ հասարակութեան ոյժերի

անկումն, հասարակութեան յաղթութիւնը բնութեան վրայ՝ կամ ընդհակառակը։ Կար ժամանակ, երբ մարդիկ փոքր և նեղ կապակցւած և իրարից անկախ համայնքներով էին ապրում, այն ժամանակ արտադրական յարաբերութիւնները շատ նեղ և պարզ էին, իսկ բաշխելի իրերն ուղղակի կերպով էին բաժանւում. այժմ մարդկային հասարակութիւններն ահագին են, տնտեսական յարաբերութիւնները վերին աստիճանի բարդ. սակայն անցեալի և ներկայի մէջ զարգացման անընդհատ շղթայ է հաստատուում։ Եղել են և ուրիշ կարգի փաստեր—երբ հասարակութեան ոյժը բնութեան դէմ կուելիս ընկնում էր, հասարակական ընդարձակ կապերը խզւում էին, տնտեսական յարաբերութիւններն աւելի նեղ ու պարզ դառնում. այստեղ գիտութիւնը պէտք է հետազօտէ փոփոխութիւնների մի ուրիշ անընդհատ շղթան, ոչ թէ զարգացման, այլ յետաշրջման (արքանալի) շղթան։ Յետաշրջման և զարգացման հարցերի մէջ է գիտութեան ամբողջ ինտերեսը, որովհետև կեանքի և զարգացման համար մարդկութեան կուելու զէնքերից մէկն էլ գիտութիւն է։

Այժմ մենք կարող ենք վերջացնել տնտեսական գիտութեան բնորոշումը, գիտութիւն, որ հետազօտում է արտադրութեան հասարակական յարաբերութիւններն ու նրանց փոփոխութիւնների, նրանց զարգացման և յետաշրջման մէջ եղած բաժանումները։

Յաջորդ բացատրութիւնների կարգը էական գծերով այս որոշումներով է նկատուում։

2. Ա Ր Տ Ա Դ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Մենք կսկսենք արտադրութեան վերաբերեալ մի քանի հիմնական խնդիրների պարզարանութիւնից իւր ամբողջութեամբ, դեռ առանց բաժանելու նրա տեխնիկական և հասարակական կողմերը։

Այս հիմնական հարցերը հեշտութեամբ պարզւում են արտադրութեան որոշելովը, իբրև հանրօգուտ աշխատանքի։ Աշխատանքը մարդկային էներգիայի՝ որոշ նպատակի համար արւած ծախսումն է. ակնհերև է, որ ամենից առաջ պէտք է պարզել հետևեալը։

Առաջին—Ի՞նչ նպատակի համար և ի՞նչ ուղղութեամբ է լինում էներգիայի ծախսումը (հանրօգուտ աշխատանքի «որակը»)։

Երկրորդ—Ո՞րքան մեծ է այդ ծախսումը (հանրօգուտ աշխատանքի «քանակը»)։

Երրորդ—Ի՞նչ չափով է նա հասնում իւր նպատակին (աշխատանքի «յաջողութիւնը» կամ «արտադրողականութիւնը»)։

ա) Հանրօգուտ աշխատանքի որակը

Եթէ մի մարդ զբաղւում է հողի մշակութեամբ, մի ուրիշը—մետաղների մշակութեամբ, երրորդը—ուսում աւանդելով և այլն, ուրեմն

նրանցից իւրաքանչիւրն իւր մասնաւոր գործողութիւններէ մէջ ձըգտում է յատուկ անմիջական մի նպատակի, իւր էներգիան մի այլ ուղղութեամբ է ծախսում, քան ուրիշները: Աշխատանքի այս տարբեր ուղղութիւնը նշանակում է նրա տարբեր «որակը»:

Աշխատանքի որակը իւրաքանչիւր առանձին դէպքում կախած է երեք պայմաններից. առաջին՝ աշխատաւորի կարիքից, նրա ձգտումներից. երկրորդ՝ աշխատանքի այն արտաքին միջոցներից, որոնք գտնուում են նորա արամադրութեան տակ. երրորդ՝ նրա բանւորական ոյժից: Վայրենին կարիք ունի պատսպարել իւր մարմինը ցրտից. իրանից դուրս նա գտնում է սուր քար և տաք մորթի ունեցող գազաններ. վերջապէս վայրենու կազմաւածքը ընդունակ է կտրուկ, ոյժեղ, ճիշտ ուղղւած հասարակ շարժումներէ: Այս էլեմենտներով լիովին որոշւում է աշխատանքի որակը, որը, ներկայ դէպքում, կատարւած կըլինի—նախնական կոպիտ որսորդութիւն գազանների վրայ՝ նրանց մորթու համար:

Տնտեսական գիտութեան մէջ խնդիրը միայն արտադրութեան մասին է, այսինքն հասարակական աշխատանքի մասին, ուստի այստեղ բացատրւած միտքն արդէն այսպիսի ձև է ընդունում. արտադրութեան մէջ տարբեր մարդկանց աշխատանքի որակը որոշւում է առաջին՝ հասարակական կարիքներով, երկրորդ՝ արտադրութեան հասարակական միջոցներով, երրորդ՝ հասարակութեան բանւորական ոյժերի ամբողջ առձեռն սխտեմով:

Հասարակական կարիքների ընդմիջում ու չափը պայմանաւորւում են հասարակութեան ամբողջ նախընթաց զարգացումով. երոպական հասարակութեան կարիքները բաւականին տարբեր, շատ աւելի ընդարձակ, բարդ և դանադանակերպ են, քան պապուասի հասարակութեանը: Ինչ չափով որ հասարակութեան ոյժը ընտելանում է մարած կուր մէջ զարգանում է, նոյն չափով էլ աճում են նրա կարիքները:

Արտադրութեան միջոցները—նիւթերն ու գործիքները—ընդհանրապէս արտաքին ընտելան այն էլեմենտներն են, որոնց ուղղւած է մարդկանց աշխատանքը: Մի քանի դէպքերում արտադրութեան այս միջոցներ ուղղակի պատրաստի ստացւում են ընտելանից—այդպէս են կուսական անտառների ծառերը, որոնց վրայ աշխատում է փայտահատը, երկաթի հանքը նիւթ է հանքահանի համար, սուր քարը գործիք է վայրենու համար: Ուրիշ դէպքերում էլ արտադրողը գործ է ունենում նախընթաց աշխատանքով արդէն մշակւած ընտելան էլեմենտների հետ, օրինակ՝ հանքից դուրս բերած երկաթի, երկաթից շինած մեքենաների և այլն: Այս մի շարք դէպքերը համապատասխանում են, ընդհանրապէս ասած, աւելի մեծ բարդութեան, հասարակական արտադրութեան աւելի բարձր զարգացման:

«Նիւթի» և «գործիքի» մէջ եղած տարբերութեան հարցը

որոշ նշանակութիւն ունի տնտեսական գիտութեան համար: Շատ անգամ անճիշտ, զուտ բերանացի որոշումներ են արւում. նիւթն այն է, որի վրայ աշխատում են, գործիքը—այն, որի միջոցով աշխատում են—այդ միևնոյնն է, թէ ասել՝ նիւթը նիւթ է, իսկ գործիքը—գործիք: Արտադրութեան այս երկու տեսակ միջոցների գործնական տարբերութիւնը կայանում է հետեւելում. նիւթն անցնելով արտադրութեան մի առանձին պրոցէսով, այնքան զգալի կերպով փոխւում է, որ նոյնը չի լինում, ինչ որ առաջ էր և առաջւայ գործածութեան համար պէտք չի գալիս. եթէ բամբակի որ և է քանակութիւնը մի անգամ մանւած է, երկրորդ անգամ նըրան չի կարելի մանել. եթէ ածուխը վառւած է, երկրորդ անգամ չի կարելի վառել: Ընդհակառակը, գործի մէջ մի անգամ գործածւած գործիքը զարձեւալ առաջւայ գործիքն է մնում և մինչև մի որոշ սահման դարձեալ պէտք է գալիս նախկին գործածութեան համար. հասկանալի է ի հարկէ, որ այսօր բամբակի որ և է քանակութիւն մանող մեքենան կարող է նոյն նպատակին ծառայել և վաղը, միւս օրը, մինչև որ կըմաշւի:

Երրորդ էլեմենտը, որով որոշւում է տարբեր բանւորների հասարակական աշխատանքի որակը, հասարակութեան բանւորական ոյժերի սխտեմն է: Այս արտայայտութիւնը ցոյց է տալիս բանւորական ոյժերի ամբողջութիւնը նրանց կարգաւորող, առձեռն, փոխադարձ յարաբերութիւնների մէջ: Նախնական հասարակութիւնը, որ բաղկացած էր մի քանի տասնեակ մարդկանցից, ակնհերև է, չէր կարող զարգացնել տարբեր որակ ունեցող աշխատանքի այն այլազանութիւնը, ինչպէս աւելի յետագայ և աւելի ընդարձակ հասարակութիւնը: Նախնական հասարակութեան մէջ համարեա կարիք չի լինում տարբերել առանձին «մասնագիտութիւններ», մէկի աշխատանքը քիչ է տարբերւում միւսի աշխատանքից. մինչդեռ ժամանակակից հասարակութեան մէջ իր ճիւղաւորւած արտադրութեան մէջ զանազան մասնագիտութիւնների թիւը հազարներով է հաշււում:

Այսպիսով գոյութիւն ունեն հասարակական աշխատանքի «որակականապէս» տարբեր տեսակներ, ուրիշ խօսքով, հասարակական աշխատանքի էներգիան արտաքին ընտելան վրայ տարբեր ուղղութիւններով է ծախսւում: Այնուամենայնիւ մարդիկ հնարաւոր են համարում բաղդատել աշխատանքի քանակապէս ամենատարբեր տեսակները. օրինակ՝ նրանք ասում են, թէ այս ինչ դասերինը աւելի շատ է աշխատում, «քան այն ինչ կօշկակարը, թէ այս ինչ գրքի վրայ աւելի շատ աշխատանք է թափւած, քան այն ինչ մեքենայի վրայ և այլն: Եւ այս բոլորովին ընական է, որովհետև ամեն աշխատանք ընդհանրապէս մարդկային ուղեղի էլեմենտներին, մկանների, ջղերի, արեան ծախսումն է, որը կարելի է համեմատել մի ուրիշ քանակական ծախսման հետ, անկախ այն բանից, թէ նա ինչ բանի է ուղղւած, ծառի մշակման, թէ երկաթի, հողի, թէ երեխաների զուլաների:



Ց-ժամեայ օրը, բաւականաչափ լաւ կենսական պայմաններում, աշխատանքի աւելի մեծ քանակութիւն կարող է պարունակել, քան 10-ժամեան:

Որ լարւած աշխատանքի համար անհրաժեշտ է սովորութիւնը, այդ հանրածանօթ փաստ է: Անգլիական բանւորների աշխատանքի խիստ լարւածութիւնը գլխաւորապէս կախւած է այդպիսի սովորութեան զարգացումից: Այնտեղ լարւածութիւնը մի ամբողջ շարք սերունդների ընթացքում աճեց, ըստ որում իւրաքանչիւր յետնորդ իւր նախորդից մի քիչ աւելի էր զարգացնում:

Բանւորի ոյժի էական էլեմենտներից մէկը նրա ինտելիգենտութիւնն է, թէև սրա ազդեցութիւնը աշխատանքի լարւածութեան վրայ առաջին հայեացքից աչքի չի ընկնում:

Իւրաքանչիւր աշխատանք ամենից առաջ նւար յայիւն էներգիայի ծախսումն է, իսկ բարձր ինտելիգենտութիւնը, էներգիայի մեծ քանակութիւն զարգացնելու համար, ընդհանրապէս նեարգային սխտեմի ընդունակութեան հետ է կապւած: Այս պատճառով բանւոր դասակարգի ցածր ինտելիգենտութեան մէջ, միջին հաշւով, աշխատանքի պակաս լարւածութիւն է նկատուում: Աշխատանքի ամենաշատ լարւածութեամբ աչքի են ընկնում ամերիկական բանւորները, որ մտաւորապէս ամենից շատ են զարգացած. յետոյ՝ անգլիականները: Ռուսները թէ սրանում և թէ ներանում բաւականին յետ են մնացել ևրոպայիներից. չինացիները ուսաններից էլ աւելի ցածր են կանգնած:

Աշխատանքի լարւածութեան միւս պայմանները արտադրութեան եղանակի մէջն են: Օրինակ՝ մեքենայական արտադրութեան մէջ բանւորը ենթարկւած է մեքենային, հարկադրւած է շարունակ հասնել նրա յետևից: Ուստի այստեղ աշխատանքի լարւածութեան մեծացումը հնարաւոր է մեքենայի արագութիւնը աւելացնելով:

Երրորդ կարգը կազմում են աշխատանքի իրաւական և գաղափարական պայմանները: Առաջին պլանի վրայ պէտք է դնել աշխատանքի ազատութիւնն ու հասարակական յարգանքը դէպի նա:

Հարկադրւած և ճեծի տակ եղած աշխատանքը վատ աշխատանք է. այստեղ մարդ երբէք չի ուզենայ լրիւ էներգիայով աշխատել, ինչին որ նա ընդունակ է: Այսպէս էր ստրուկների աշխատանքը հին աշխարհում, այսպէս էր ճորտերի աշխատանքը Ռուսաստանում: Ըստորուկը, միջին հաշւով, ծախսում է այն էներգիայի կէսից պակասը, որ նա կարող էր առանց վնասելու ծախսել իւր համար: Այդ վաղուց յայտնի էր հէնց ստրկատէրերին: Աւելի շտապողական գործերը նրանք շատ անգամ յանձնում էին ազատ վարձկաններին, հաւատ չընծայելով իրանց ստրուկների աշխատանքի էներգիային: Եւ որքան աւելի ծանր է ստրուկութիւնը, որքան աւելի նախնական ու կոպիտ են նրա ձեւերը, այնքան աւելի ցածր է ստրկական աշխատանքի լարւածութիւնը:

Ճիշտ նոյնպիսի նշանակութիւն էլ ունի հասարակական յարգանքը դէպի աշխատանքը, որն, ընդհանրապէս ասած, աշխատանքի իսկական ազատութեան հետ է ընթանում:

Եւ այսպէս ուրեմն, հանրօգուտ աշխատանքի քանակը լիովին որոշուում է հետևեալ էլեմենտներով:

- 1) Արտադրող բանւորների թւով:
- 2) Բանւորական ժամանակի միջին տևողութեամբ:
- 3) Աշխատանքի միջին լարւածութեամբ (ИНТЕНСИВНОСТЬ):

գ. Աշխատանքի արտադրողականութիւնը

Եթէ երկու բանւոր աշխատում են միևնոյն էներգիայով և այնուամենայնիւ, նոյն ժամանակայ ընթացքում մէկն աւելի շատ բան է շինում, քան միւսը, ուրեմն ակնհերև է, որ նրանց աշխատանքի յաջողութիւնը կամ, ինչպէս ընդունւած է ասել, արտադրողականութիւնը տարբեր է:

Առանձին դէպքերում աշխատանքի արտադրողականութիւնը որոշող պայմաններն անթիւ ու այլազան են, և այստեղ նրանք ընդգրկում են ոչ միայն հասարակութեան կեանքի ժամանակակից պայմանների ամբողջ գումարը, այլ և նրա նախընթաց ամբողջ զարգացումը:

Միայն թէ այս պայմանները, հետազօտման յարմարութեան համար, կարելի է բաժանել մի քանի խմբերի, որոնցից իւրաքանչիւրն այստեղ ամենաընդհանուր գծերով միայն հնարաւոր կլինի բնորոշել: Հիմնական խմբերը կլինեն հետևեալները.

Առաջին՝ արտաքին բնութեան անմիջականապէս տուած պայմանները: Սրանցից է կախւած աշխատանքի արտադրողականութիւնը յատկապէս երկրագործութեան և հանքային գործերի մէջ, նոյնպէս և արտադրութեան միւս ճիւղերում, թէև քիչ չափով:

Երկրորդ՝ տեխնիկան—աշխատանքի միջոցների և եղանակի կատարելագործման աստիճանը, տեխնիկական գիտութիւնների և արհեստակցականութեան արւեստի մակերևոյթը.

Երրորդ՝ արտադրութեան հասարակական կազմակերպութիւնը—գործակցութիւն, աշխատանքի բաժանումն և այլն:

1) Որքան բնութիւնը շատ ճրի նիւթ և ոյժ է տալիս մարդուն, այնքան նրա աշխատանքը, ընդհանրապէս ասած, աւելի արտադրող է: Տնտեսական գիտութեան գործը չէ մանրամասն քննել տարբեր բնական պայմանների ազդեցութիւնը հասարակական աշխատանքի յաջողութեան տեսակէտից. այդ՝ նիւթական կուլտուրայի մասին եղած գիտութեան գործն է: Այստեղ միայն այդ ազդեցութիւնը պարզող մի քանի օրինակներ կարելի է բերել:

Ամենից առաջ—կլիման, ջերմութեան և մթնոլորդի խոնավութեան

աստիճանը: Իւրաքանչիւր բոյսի և իւրաքանչիւր կենդանու համար անհրաժեշտ է օդի որոշ բարեխաւանութիւն, աւանց որի նրանք ապրել չեն կարող: Ռուսաստանի հիւսիսային գօտում ցորենն ամենևին չի բուսնում, հաճարն էլի բուսնում է, բայց վատ: Իսկ հարաւում տաքութիւնը բաւական է թէ հաճարի լրիւ աճման և հասունանալու և թէ ցորենի համար. ակնբրևէ, որ այնտեղ երկրագործական աշխատանքն աւելի արտադրողական է:

Տաքութեան պէս՝ խոնաւութիւնն էլ առանձին մեծ նշանակութիւն ունի երկրագործական աշխատանքի շրջանում: Ռուսաստանի հարաւում, տափաստանների (степи) գօտում, տաքութիւնն էլ բաւական է, հողն էլ պտղաւէտ է. բայց կլիման պակաս խոնաւ է. յաճախ երաշտ և անբերրիութիւն է լինում:

Ապա,—երկրի կեղեւի կազմը, այսինքն՝ նրա վերին շերտերը, հողը և հողի նտորին խաւերը: Սրանցով են որոշուում հողի պտղաբերութիւնն ու նրա հանքային հարստութիւնները, հետևապէս և աշխատանքի արտադրողականութիւնը՝ երկրագործութեան և լեռնային գործի, ընդհանրապէս՝ հանքային արդիւնաբերութեան մէջ (добывающая промышленность): Իսկ հանքային արդիւնաբերութեան տւած նիւթերից խիստ կախումն ունի հասարակական աշխատանքի արտադրողականութիւնը նաև նրա միւս շրջաններում:

Այնուհետև՝ մակերեսային կազմութիւնը—ծովերի, գետերի, լեռների և այլն դասակարգութիւնը: Բնական պայմանների այս շարքն ահագին, սակայն գլխաւորապէս ոչ ուղղակի, ազդեցութիւն ունի աշխատանքի արտադրողականութեան վրայ: Յիրաւի, մակերեսային կազմութիւնից է կախւած մարդկանց յարաբերութիւնների հեշտութիւնը կամ դժւարութիւնը. իսկ յարաբերութիւնները էական դեր են կատարում արտադրութեան զարգացման մէջ. նախ՝ միմեանց հետ յարաբերութիւններ ունենալիս մարդիկ իրարից արտադրութեան աւելի կատարելագործւած եղանակներ են սովորում. երկրորդ՝ նրանք փոխում են իրանց արդիւնքները (պրողուկտ) ուրիշ արդիւնքների հետ և սրա շնորհիւ հնարաւորութիւն են ստանում թողնելու արտադրութեան այն ճիւղերը, որոնք, տեղային պայմանների պատճառով, աշխատանքի չափազանց մեծ ծախսում են պահանջում, և ընդարձակել այն ճիւղերը, որոնց մէջ աշխատանքն աւելի արտադրող է:

Եւրոպայում ծովափնեայ երկրները—Յունաստանը, Իտալիան ուրիշներից առաջ զարգացրին աշխատանքի արտադրողականութիւնը գլխաւորապէս այն հանգամանքի շնորհիւ, որ Միջերկրական ծովը մօտեցրեց նրանց Ասիայի և Աֆրիկայի կուլտուրական ժողովրդներին. ծովերն ու գետերն առհասարակ մարդկանց մօտեցնում են իրար և դրանով թեթևացնում են աշխատանքի արտադրողականութեան յառաջադիմութիւնը: Այս բանի մէջ մեծ նշանակութիւն ունեն այնպիսի

հանդամանքներ, ինչպէս ավերի գծագրութիւնը, նրանց մատչելիութիւնը, ձմեռը ծովերի և գետերի սառչիլը, գետերի ընթացքը, նրանց նաւարկելիութիւնը և այլն: Ընդհակառակը, լեռները, անշատելով մարդկանց և խանգարելով նրանց յարաբերութիւնները, դանդաղեցնում են աշխատանքի արտադրողականութեան զարգացումը: Ընդհանրապէս դեր էին կատարում նաև ծովերը, քանի դեռ ծովագնացութիւնը չէր զարգացել:

Աւելի ընդհանուր ձևով քննելով բնութեան տւած անմիջական արտաքին պայմանների ազդեցութիւնը հասարակական աշխատանքի արտադրողականութեան վրայ, պէտք է ասել հետևեալը. որքան բերութիւնը շատ է տալիս մարդկանց, այնքան աւելի թեթեւ ու յաջողակ է մարդու աշխատանքը: Սակայն բնութեան ջախջախաց առատամեռէ մարդու հաղիւ թէ կուլտուրայի բոլոր աստիճանների վրայ օգտակար է հանդիսանում աշխատանքի արտադրողականութեան զարգացմանը. շատ դէպքերում նա ևս նոյնպէս է ազդում, ինչպէս բնութեան չափազանց աղքատութիւնը:

Ոյժի չնչին ծախսումով ապրուստի միջոցներ ստանալով, մարդը կարիք չի ունենում նաւարակական աշխատանքի զարգացմանը, և վերջինս, ի հարկէ, տեղի չի ունենում: Աֆրիկայի հասարակածային տաք ջրնային հարկաւոր է տարւայ մէջ մի բանի օր միայն գործադրել Տեղացուն հարկաւոր է տարւայ մէջ մի բանի օր միայն գործադրել օրինակ՝ 400 ցողուն սօրգօ տնկել,— և իւր ու ընտանիքի գոյութիւնն ապահովւած է: Դէպի աշխատանքն եղած այսպիսի թոյլ դրդման դէպքում արտադրութեան յառաջադիմութիւնն անհնարին է:

Չափազանց աղքատ բնութեան մէջ ևս աշխատանքի արտադրողականութիւնը վատ է զարգանում, թէպէտ ուրիշ պատճառով: Այստեղ մարդ ամբողջ ժամանակն և ամբողջ ոյժը պէտք է կենսական ամենամանրաժեշտ միջոցներ հայթայթելու վրայ ծախսէ: Տաք բընակարան շինելն ու տաք հագուստներ պատրաստելը Գրենլանդիայի բընակիչներից ահագին աւելորդ աշխատանք է պահանջում, որից ազատ են տաք երկրի բնակիչները: Առաջինին հարկաւոր է և աւելի շատ կերակուր, այն էլ աւելի մնդաղաբ: Նա պէտք է բնութիւնից աւելի շատ վերցնէ. քան հարաւային. մինչդեռ, նոյն քանակութեամբ աշխատանքի ծախսման դէպքում, բնութիւնը նրան անհամեմատ աւելի է տալիս: Հիւսիսային շարունակ կաշւից դուրս է գալիս, որ քոքի է մի բան ձեռք բերէ և մշտական մահաւան սպառնալիքի տակ է ապրում: Ոչ նրա միտքը և ոչ մարմինը հնարաւորութիւն չունին զարգանալու:

Խիստ սոստաձեւն և խիստ վատ բնութիւն էլ նոյնպէս է ներգործում մարդկային ամբողջ հասարակութիւնների վրայ, ինչպէս մի

կողմից առանց աշխատանքի ստացած հարստութիւնը և միւս կողմից անտանելի աղքատութիւնը—առանձին մարդկանց վրայ: Արդեօք բնութիւնն է չափազանց շատ տալիս մարդուն, թէ ուրիշ մարդկանց աշխատանքը, արդեօք բնութեան խստութիւն է մարդու էներգիան մաշում կամ հասցնում հոգեմաշ աղքատութեան—այս բոլոր դէպքերում ոյժերի լիակատար զարգացումն անհնարին է:

Առայժմ յառաջագիմութեան լաւագոյն պայմաններն ամենից բարեխառն գօտու երկրների պայմաններն են. բնութիւնն այնտեղ ոչ չափազանց առատաձեռն է և ոչ էլ չափազանց ժլատ. մարդը պէտք է այնքան էլ քիչ չախատի, բայց ոչ էլ այնքան շատ, որ աշխատանքը խեղդէ նրան:

Պատմութիւնը ցոյց է տալիս, որ արտադրութեան զարգացման մէջ առաջին խոշոր քայլերը, կուլտուրայի առաջին սաղմերը երևացել են տաք և բնութեամբ հարուստ երկրներում—Հնդկաստանում, Միջագետքում, Եգիպտոսում և այլն: Պատճառը հասկանալի է.— գիւղացի բնակիչները միշտ ազատ ժամանակ շատ են ունեցել, սրովհետեւ ապրուստի միջոցները գիւրութեամբ էին ձեռք բերում: Սակայն կուլտուրայի այդ սկզբնաւորութիւնները զարգացան մինչև մի որոշ ոչ բարձր սահման, այնուհետև սկսեց անշարժութիւնը: Իսկ բարեխառն գօտու ժողովուրդները իւրացրին տաք երկրների ժողովուրդների կուլտուրան և շատ աւելի զարգացրին: Եւ ներկայումս աշխատանքի արտադրողականութիւնն և առհասարակ ամբողջ կուլտուրան բարեխառն գօտու երկրներում են ամենից բարձր կանգնած—Եւրոպայում և Հիւսիսային Ամերիկայում:

Բնական պայմանները ոչ մի տեղ միշտ միատեսակ չեն մնում: Նրանք փոփոխում են և նրանց հետ, իհարկէ, փոփոխում է նաև նրանց ազդեցութիւնը աշխատանքի արտադրողականութեան վրայ:

Արտաքին բնութեան փոփոխութիւններն իրանց ծագումով երկու կարգի կարելի է բաժանել. առաջին, այսպէս ասած, ինքնուրոյն փոփոխութիւններ, որոնք առաջանում են ձեռք արտաքին բնութեան գործողութեամբ. երկրորդ՝ մարդու գործունէութիւնից առաջացած փոփոխութիւններ:

ա) Ինքն ըստ ինքեան բնական պայմանները շատ դանդաղ են փոփոխւում: Ստորերկրեայ ոյժերի գործնէութեան պատճառով երկրի կեղևի մի քանի տեղերը բարձրանում են, մի քանիսը՝ ցածրանում, կազմւում են նոր լեռներ, կղզիներ, ծովերը փոխւում են իրանց գիրքը, խորութիւնը: Բայց սովորաբար այս բոլորը կատարւում է տասնեակ հարիւր, հազար տարիների ընթացքում: Փոփոխութիւններն աւելի արագ կատարւում են գետերի հոսանքների մէջ: Զանազան ոյժերի ազդեցութեան տակ նրանք քանդւում են իրանց հին ափերը և նոր հուններ անցնում: Այսպէս, Միւր-Դարիան, որ այժմ թափւում է միայն Արա-

լեան ծովակը. սրանից մի քանի հազար տարի առաջ նրա մի ճիւղը կասպից ծովն էր թափւում: Երբեմն գետերը տիղմից ու աւազից ահագին կղզիներ են առաջացնում: Հոլանդիայի մեծ մասը վերջին 2—3 հազար տարիներում Րէյնի առաջացրած տղմից է կազմւել: Փոփոխւում է և կլիման, թէև շատ դանդաղ: Երկրաբանութիւնից յայտնի է, օրինակ, որ մի ժամանակ, սրանից հազարաւոր տարիներ առաջ, Եւրոպայի կլիման անհամեմատ աւելի ցուրտ էր, քան այժմ, մօտաւորապէս այնպէս, ինչպէս այժմեան Սիբիրի կլիման: Ոսկորների և քարէ գործիքների զանազան մնացորդներին նայելով, այն ժամանակ էլ, անկասկած, Եւրոպայում մարդ էր ապրում: Այն ժամանակների դաժան բնութիւնը, հաւանօրէն, զօրեղ արգելք էր աշխատանքի արտադրողականութեան զարգացմանը:

Ընդհանրապէս հասարակական զարգացման այն կարճ շրջանների համար, որոնք ժամանակակից անտեսական դիտութեամբ պէտք է ուսումնասիրել, բնական պայմանների այդպիսի դանդաղ փոփոխութիւնները համարեա նշանակութիւն չունեն:

Իբրև բացառութիւն, արտաքին բնութեան մէջ երևում են և արագ, կտրուկ մեծ փոփոխութիւններ: Երբեմն երկրաշարժները, հրաբուխների ժայթքումները, հեղեղները մի քանի ժամայ, նոյն իսկ մի քանի րոպէի մէջ երկրի մակերևոյթի վրայ ահագին փոփոխութիւններ են առաջացնում: Հասարակական աշխատանքի զարգացման համար նմանօրինակ կատասարտֆները, շնորհիւ իրանց առաջացրած աւերումների, կարող են երբեմն մեծ, բայց բացասական նշանակութիւն ունենալ:

բ) Այն ժամանակահատից, երբ հասարակական աշխատանքն իւր զարգացման մէջ սկսեց յաճախակի յաղթանակներ տանել բնութեան դէմ, բնութիւնն սկսեց մարդու գործունէութեան առաջին նկատելի կերպով փոփոխւել և փոփոխութեան աստիճանը դնալով աւելի սաստկանում էր: Այս գործունէութիւնն երբեմն բնական պայմանների բարելաւման է տանում, երբեմն—վատթարացմանը: Թէ այս և թէ այն տեսակի բազմաթիւ օրինակներ կարելի է բերել:

Երբ մարդիկ անտառներն արմատախիլ են անում, կլիման աւելի չոր և անհաւասար է դառնում, ձմեռայ սառնամանիքն և ամառայ չոր և անհաւասար է դառնում, ձմեռայ սառնամանիքն և ամառայ տապը աւելի սաստկանում են, երաշտներն աւելի յաճախ են լինում, գետերը բարակւում: Երբ մարդիկ ճահիճները չորացնում են, հողը բարելաււում ու աւելի պտղաւետ է դառնում, կլիման էլ է բարելաււում ու աւելի առողջարար դառնում: Երկրի արհեստական և անհիմն մշակումը վատթարացնում է հողը և ուժասպառ դարձնում:

Գետերը խորացնելով և իրար հետ ջրանցքներով միացնելով՝ մարդիկ զգալի չափով բարելաւեցին գետային ճանապարհները: Հազարաւոր վերստերի վրայ երկաթուղիներ անցկացնելով՝ մարդիկ մօտեցրին այնպիսի տեղեր, որոնց մէջ առաջ, շնորհիւ հսկայական տա-



3468 82

բածուկեան, յարաբերութիւնները խիստ դժար էին: Շատ անգամ յարաբերութիւններն արգելող անադին լեռներ կտրուած թիւնէլ են շինուած: Այսպէս կտրուած են Ալպերը, — Եւրոպայի ամենամեծ լեռնաշղթան, երկու տեղում (Մոն-Սենիսուս և Սեն-Գոտարդուս): Սուէզի ջրանցքի բանալը միացրեց Հնդկական և Ատլանդեան ուղիտանսներէ անջատուած հողերը և մի քանի հազար վերստով Եւրոպային մօտեցրեց Հարաւային և Արեւելեան Ասիան:

Ներկայումս արդէն այդպէս է հասարակական մարդու ընդունակութիւնը — փոփոխել արտաքին բնութիւնը, այդպէս է նրա իշխանութիւնը բնութեան վրայ: Եւ մարդկային աշխատանքի յառաջադիմութիւնը որքան առաջ է գնում, այնքան մարդու գործնէութեան ազդեցութիւնը բնութեան վրայ աւելի զօրեղ և միևնոյն ժամանակ մարդկութեան համար աւելի օգտակար է դառնում:

Հասարակութեան բնութեան վրայ ունեցած աճող իշխանութիւնն անմիջականապէս արտայայտուում է բնութեան դէմ վարած կռի միջոցների կատարելագործման և նրանցից օգտուել կարողանալու — տեխնիկայի զարգացման մէջ:

2) Առանց գործիքների, լոկ ձեռքերով, մարդ շատ քիչ բան կարող է անել, և որքան գործիքն աւելի կատարելագործուած է, այնքան աշխատանքն աւելի յաջողակ է և արտադրող:

Մեր հեռուոր նախնու քարէ կացինով մի փոքրիկ ծառ կըտրելու համար, հաւանօրէն, հարկաւոր էր ոչ պակաս, քան մի ժամայ աշխատանք: Բրոնզէ գործիքները, որոնք երևան եկան Եւրոպայում քարէ գործիքների փոխարէն, արդէն շատ աւելի յարմար էին. բրոնզէ կացինով 2—3 անգամ աւելի արագ կարելի էր աշխատել, քան քարէ կացինով: Բայց բրոնզէ գործիքն էլ այնքան ամուր չէ, հեշտութեամբ բթանում է և կտրւում: Ուստի ալժմեան պողպատէ կացինով աշխատանքն աւելի արտադրող է — միևնոյն արդիւնքների համար աւելի քիչ ժամանակ է պահանջում:

Գործիքի ամենակատարեալ ձևը մեքենան է: Մեքենաները տասնեակ, հարիւրաւոր անգամ մեծացնում են մարդկային աշխատանքի արտադրողականութիւնը:

Արտադրութեան նիւթերի որակն էլ, գործիքների շինածքի նրման, մեծ նշանակութիւն ունի աշխատանքի արտադրողականութեան համար: Բնութեան առաջարկած նիւթերից ամենալաւի, ամենայարմարի, դիմացկունի և հեշտ մշակուողի ընտրութիւնը շատ դէպքերում անագին աշխատանք է տնտեսում:

Գործիքների և նիւթերի հետ հասարակական տեխնիկայի անբաժանելի էլեմենտ են հանդիսանում իւր իսկ բանուորի օրգանիզմի մէջ եղած մի քանի պայմանները, — արհեստի ճարպիկութիւն, աշխատանքի որ և է տեսակին սովորած լինելը — ընդհանրապէս՝ արտադրութեան

միջոցներից օգտուել կարողանալը: Երբ արտադրութեան միջոցները միատեսակ են, որքան աւելի բարձր է այդ կարողութիւնը, այնքան աշխատանքն աւելի արտադրող է. բանուորը աւելորդ և իւր նպատակին անօգուտ շարժումներ քիչ է անում, որոնց ուղղեկցում է աւելի կամ պակաս քանակութեամբ իւրաքանչիւր աշխատանք: Քիչ է փչանում նիւթը, քիչ են մաշուած գործիքները, որոնք ներկայացնում են իրանցից անցեալ աշխատանքի տնտեսումն և այլն: Առանձին բանուորի համար այդպիսի կարողութիւնը սովորելու և վարժութիւնների արդիւնքն է հանդիսանում: Հասարակական հայեցակէտով՝ այդ կարողութիւնը հասարակութեան ամբողջ նախընթաց պատմական զարգացման արդիւնքն է:

Հասարակական տեխնիկայի զարգացումն աւելի արագանում է մանաւանդ վերջին դարերից յետոյ, երբ մարդկային միտքը գիտակցօրէն ուղղուում է դէպի այդ կողմը, երբ արտադրութեան մէջ առաջօրէն ուղղում է դէպի այդ կողմը, երբ արտադրութեան մէջ առաջօրէն շաղիմութեան մղիչը գիտութիւնն է դառնում: Տեխնիկական գիտութիւնները, որոնք հիմնուած են բնութեան ոյժերի հետ ամենամօտիկ ծանօթութիւնների վրայ, մարդուն տալիս են բնութեան վրայ մի իշխանութիւն, որն առաջ անյայտ էր նրան:

Տեխնիկական գիտութիւնների դերն ամենից պարզ այստեղ է հանդէս գալիս, ուր նրանք, անկախ արտադրութեան միջոցներից, կարող են խիստ բազմացնել աշխատանքի արտադրողականութիւնը: Այսօր պէս՝ այն երկրագործը, որ գիտէ, թէ երբ, որտեղ և ինչպիսի բոյսեր ցանելն աւելի լաւ է, միշտ աւելի յաջողակ է աշխատում. նա թէ աւելի շատ բտն է ստանում հողից և թէ աւելի քիչ է ուժասպառ անում հողը, քան թէ նա, որ այս բոլորը չգիտէ:

Տեխնիկական կարող է զարգանալ միմիայն հասարակութեան մէջ միայն կազմակերպութեան մէջ կարող է մարդը օգտուել տեխնիկայի զարգացումից:

3) Աշխատանքի արտադրողականութեան աստիճանը զօրեղ կախումն ունի արտադրութեան կազմակերպութեան եղանակից, արտադրութեան հասարակական յարաբերութիւններից: Այս կախումն աւելի մանրամասն կըքննել յետագայում. տնտեսական զարգացման պրօյեկտի մասին եղած գիտութեան ընդհանուր կապի մէջ. իսկ այստեղ այդ պէտք է նշանակենք ամենաընդհանուր գծերով միայն:

Աշխատանքի արտադրողականութիւնը մեծանում է նախ՝ նրա միացումով և երկրորդ՝ նրա բաժանմամբ:

ա. Աշխատանքի միացումը, կամ աւելի լաւ, հասարակ այնպէս տակցութիւնը (կօօպերացիա) նրանումն է կայանում, որ մի քանի մարդիկ միասին և միաժամանակ նոյն գործն են կատարում: Նրա ազդեցութիւնը աշխատանքի արտադրողականութեան վրայ հետևեալն է: Նախ՝ աշխատակցութիւնը, նոյն իսկ աշխատանքի արտաքին հա-

սարակ միաբանութեան ձևով, ազդում է աշխատանքի արտադրողականութեան վրայ աշխատանքի հոգեկան դրուբեան միջոցով: Իւրաքանչիւր բանւոր, ուրիշների հետ միասին բանելով, մի առանձին նեարդային գրգիւ է զգում, աշխոյժ, եռանդուն մի տրամադրութիւն, որ արտացոլում է, գլխաւորապէս, աշխատանքի լարւածութեան վրայ և բարձրացնում նրա արտադրողականութիւնը: Տասը մարդ, իւրաքանչիւրն իւր տարբեր գործն անելով, բայց միասին, մի արհեստանոցում, մէկ օրւայ մէջ աւելի շատ գործ են տեսնում, քան տասն օրւայ մէջ մի մարդ, որ միեւնոյն աշխատանքն անում է իւր փոքր սենեակում:

Երկրորդ՝ միաբան աշխատանքի ժամանակ արտադրութեան միջոցների համար գործադրւած աշխատանքի էներգիան կրճատւում է. արհեստանոցի շինութեան, լուսաւորութեան, վառելիքի համար աւելի քիչ է ծախսւում. աւելի հեշտ է լինում գործին յարմարեցնել նիւթի մնացորդները, քրովհետև նրանք աւելի շատ են հաւաքւում և այլն: Օրինակ՝ 20 մարդու ծառայող մի արհեստանոց շինելու համար շատ աւելի քիչ նիւթ և աշխատանք է պահանջւում, քան 2 մարդու ծառայող 10 արհեստանոցի շինութեան համար:

Երրորդ՝ աշխատակցութիւնը շատ անգամ օգտակար և երբեմն անհրաժեշտ է այն պատճառով, որ նա հնարաւորութիւն է տալիս գործը կարճ ժամանակում վերջացնելու: Ենթադրենք հարկաւոր է ցորենը հնձել ու հաւաքել դաշտից. եթէ այդ գործը ձգձգւում է, շատ հատիկներ են ցրտւում և աշխատանքի մի մասը կորչում է առանց արտադրելու. իսկ աշխատակցութիւնը հնարաւորութիւն է տալիս խուսափել դրանից:

Չորրորդ՝ որ յատկապէս կարևոր է, աշխատակցութիւնը ստեղծում է մասսայի մեքենայական ուժը: Շատ գործեր կան, որ առանձին մարդն երբէք չի կարող կատարել, ինչքան էլ որ նա աշխատելու լինի: Օրինակ՝ եթէ հարկաւոր է մի մեծ զանգակ բարձրացնել զանգակատուն, մի մարդն ուղղակի ոչինչ չի կարող անել. 100 հոգին էլ մէկը միւսից յետոյ աշխատելով՝ դարձեալ ոչինչ չեն կարող անել. բայց 100 հոգին միասին կարող են զանգը բարձրացնել:

Բ. Աշխատանքի բաժանումը ընդհանուր անւան տակ միանում են արտադրութեան հասարակական տարբեր յարաբերութիւնների մի ամբողջ շարք:

Աշխատանքի հասարակական բաժանումը նրանումն է կայանում, որ հասարակութեան մէջ արտադրութիւնը բաժանւած է առանձին տնտեսութիւնների և ձեռնարկութիւնների. մի տնտեսութիւն զբաղւում է երկրագործութեամբ, միւսը—հազուատներ պատրաստելով, երրորդը—մետաղներ ստանալով, չորրորդը—գործիքներ շինելով և այլն: Երբ աշխատանքի այդպիսի բաժանումն չկար, իւրաքանչիւր առան-

ձին տնտեսութիւնն ստիպւած էր արտադրել իւր համար ամեն ինչ. հասկանալի է, որ այդպիսի արտադրութեան քանակութիւնը խիստ չնչին պէտք է լինէր և նրա զարգացումը խիստ դանդաղ պէտք է գնար:

Աշխատանքի հասարակական բաժանման ժամանակ իւրաքանչիւր ձեռնարկութիւն ունի իւր արտադրող աշխատանքի աւելի կամ պակաս նեղ շրջանը: Այդ հնարաւորութիւն է տալիս բանւորներին գործի մէջ աւելի շատ արեւստ ու ճարպիկութիւն ձեռք բերել և իւր արդիւնքը մի քանի անգամ աւելի շատ պատրաստել. քան ինչ որ հարկաւոր է ներկայ դէպքում որ և է տնտեսութեան համար: Օրինակ՝ կօշկակարական գործի արհեստաւորը տարին երկու դոյզ կօշիկից աւելի կարիք չունի, բայց նա 100 դոյզ է կարում. դազադագործն իւր ամբողջ կեանքի ընթացքում ոչ մի դազաղի կարիք չունի, բայց իւր հարիւրաւոր դազաղներ է շինում: Ամբողջ աւելորդը արտադրւած է ուրիշների, մնացած հասարակութեան համար: Այս կամ ուրիշ եղանակով բաժանւած ձեռնարկութիւնների բոլոր արդիւնքները բաշխւում են հասարակութեան մէջ, և իւրաքանչիւր տնտեսութիւն, միջին քանակ, շատ աւելի կարիքի առարկաներ է ունենում, քան եթէ նա ինքն իւր համար արտադրէր բոլորը:

Տեխնիկական բաժանումը առանձին տնտեսութեան, առանձին ձեռնարկութեան սահմաններում աշխատանքի բաժանումն է: Իբրև օրինակ կարող են ծառայել մանուֆակտուրները, որոնց մէջ աշխատանքի նիւթը, նախ քան արդիւնքի վերջնական ձևով արհեստանոցից դուրս գալը, անցնում է մի քանի բանւորների ձեռքով: Այսպէս օրինակ՝ մէկը դարձնում է դանակը, մի ուրիշը յղկում, երրորդը սրում, չորրորդը տաշում է կոթը, հինգերորդը դանակին կոթ գցում և այլն:

Աշխատանքի տեխնիկական բաժանումը բարձրացնում է նրա արտադրողականութիւնը ճիշտ այնպէս, ինչպէս հասարակականը և նոյնիսկ այդպիսի բարձրացման ամենափայլուն օրինակներ է տալիս: Գնդասեղի մանուֆակտուրայի մէջ 10 աշխատաւոր, տեխնիկօրէն բաժանւած աշխատանքի ժամանակ, դիւրութեամբ պատրաստում են ժանւած աշխատանքի ժամանակ, իւրութեամբ պատրաստում են օրական 48,000 գնդասեղ, ամեն մէկը—4,800. մինչդեռ ամբողջ աշխատանքը մենակ կատարող բանւորը հազիւ թէ մի քանի հատ շինէր:

Աշխատանքի բաժանման տարբեր տեսակների ազդեցութիւնը նրա յաջողութեան վրայ հետեւալ կերպով է բացատրւում. նախ՝ ուղղակի ահագին ժամանակ է տնտեսւում. երբ մարդ իրար յետեից շատ մանր գործեր է կատարում, մի աշխատանքից միւսին անցնելիս՝ ձեռքը տարբեր գործիքներին վարժեցնելու համար պակաս ժամանակ չի կորցնում:

Երկրորդ՝ աշխատանքի բաժանումն օգնում է բանւորի ճարպիկութեան զարգացմանը: Ով որ շարունակ շատ տարբեր և բարդ գոր-

ծեր է անում, նա չի կարող այդ գործերն այնքան արագ, այնպէս արւեստօրէն, խնամքով կատարել, որքան ամբողջ կեանքում մի քանի հասարակ աշխատանքներով զբաղւած բանւորը:

Վերջապէս, բաժանւած աշխատանքի ժամանակ աւելի հեշտ է գործիքների մէջ գիւտեր ու բարելաւումներ անել: Երկար տարիներ մի գործիքով աշխատելով՝ մարդ աւելի հեշտութեամբ է գտնում, թէ ինչպէս աւելի յարմար է մեքենան յարմարեցնել գործին և ինչպիսի փոփոխութիւններ մտցնել նրա շինւածքի մէջ: Բանւորները սրա շնորհիւ պակաս կատարելագործումներ չարեցին:

3. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՐԺՈՂՈՒԹԻՒՆ

Արտադրութեան հետևանքը հասարակական արդիւնքն է: «Նիւթական» է նա թէ «ոչ նիւթական», ունի այսպիսի կամ ուրիշ ֆիզիկական, քիմիական յատկութիւններ, այդ տնտեսական գիտութեանը չի վերաբերում: Սա մի հասարակական գիտութիւն է և արդիւնքը նրան հետաքրքրում է այն մտքով, որ նա նախ՝ հարկաւոր է հասարակութեանը և երկրորդ, որ արտադրւած է հասարակութեան աշխատանքով: Ուրեմն տնտեսական գիտութեան համար արդիւնքը երկու էական յատկութիւն ունի.—նրա ընդունակութիւնը հասարակական որոշ կարիքներին բաւարարութիւն տալու կամ նրա հասարակական օգտակարութիւնը, և նրա արտադրութեան համար հասարակական աշխատանքի էներգիայի ծախսումը.—նրա հասարակական արժողութիւնը:

Եւ այսպէս, արդիւնքը հասարակական օգտակարութիւն ունի, եթէ հասարակութիւնը նրան կարիք ունի, և այդ մինչև այն ժամանակ, քանի նրան կարիք ունի: Օրինակ՝ եթէ հասարակութեան հացի կարիքին բաւարարութիւն չի տրւած, հացը հասարակական մեծ օգտակարութիւն ունի, բայց հացն անմիջապէս կորցնում է այդ բանը, եթէ նրա ներկայ քանակութիւնն արտադրւած է այն չափից աւելի, որքան իրօք պահանջում է հասարակութեան համար:

Հասարակական օգտակարութեան բնաւորութիւնը խիստ զանազանակերպ է լինում, նայելով, թէ արդիւնքն ինչպիսի հասարակական կարիքների պէտք է բաւարարութիւն տայ. հացի օգտակարութիւնը տարբեր է կացնի, գիտական գրքի կամ գրամատիկական ներկայացման օգտակարութիւնից: Օգտակարութեան այս բնաւորութիւնը կախւած է արտադրութեան վրայ գործադրւած աշխատանքի որակից, երկրադործի, գործարանային բանւորի, ուսուցչի, հեղինակի աշխատանքը, շնորհիւ իւր անմիակերպ որակի, անմիատեսակ օգտակարութիւններ է առաջ բերում, զանազան տեսակի հասարակական կարիքների է բաւարարութիւն տալիս:

Չպէտք է խառնել հասարակական կարիքը հասարակութեան

անդամների անհատական կարիքների գումարի հետ: Առանձին մարդկանց կարիքները յաճախ կարող են խիստ հակասական լինել ընդհանուր հասարակութեան կարիքներին, կարող են հակահասարակական լինել. այդպէս է, օրինակ, հանրօգուտ աշխատանքի սխտեմի մէջ չմտնող, չարտադրող տարրերի փարթամ ապրելու կարիքը: Հասարակական կարիքը բնութեան դէմ մղուող հասարակական կուռի, արտադրութեան կարիք է: Նա միայն այն ժամանակ է մտնում հասարակական կազմի մէջ, երբ, արտադրութիւնը պահպանելու համար, անհատական կարիքներին բաւարարութիւն տալն անհրաժեշտ է: Ոչ ոք անձամբ չի գործածում մեքենաներ, հողի պարարտացումն, երկաթի հանք և արտադրութեան ուրիշ միջոցներ. սակայն նրանք բաւարարութիւն են տալիս հասարակական կարիքին, որովհետև հասարակութեանը արտադրութեան համար պէտք է: Ընդհանրապէս տնտեսական գիտութիւնը չի կարող հետաքրքրել ու զբաղւել մարդկանց անմիջական-անձնական կարիքներով. եթէ նա ստիպւած է շօշափել երբեմն վերոյշիջեալ խնդիրը, այդ միայն այն մտքով, ինչով նա շօշափում է ուրիշ ոչ-տնտեսական երևոյթներ—այսինքն՝ տնտեսականների հետ ունեցած նրանց կապերի և նրանց՝ այս կապերի վրայ ունեցած ազդեցութեան պատճառով:

Հասարակական արժողութիւնը աշխատանքի էներգիայի այն քանակութիւնն է, որ որ և է արդիւնք նստում է հասարակութեան վրայ: Հետևապէս արժողութիւնը չափւում է այն մարդկանց աշխատանքի տեղութեամբ և լարւածութեամբ, որոնք մասնակցել են արդիւնքի արտադրութեանը: Եթէ մի արդիւնք առաջացնելու համար 30 ժամ հասարակական աշխատանք է պահանջւում և մի ուրիշի համար 300 ժամայ աշխատանք, այն էլ 2 անգամ աւելի լարւած, քան առաջին դէպքում, ուրեմն ակներև է, որ երկրորդ արդիւնքի հասարակական արժողութիւնը, որի մէջ ամփոփւել է աշխատանքի էներգիայի քանակը, 20 անգամ աւելի է առաջինից:

Հասարակական արժողութիւնը կախւած չէ նրանից, թէ այս կամ այն բանւորը մասնաւորապէս որքան աշխատանք կը թափէ արդիւնքն արտադրելու վրայ: Եթէ, շնորհիւ անհմտութեան կամ անհրաժեշտ գործիքների պակասութեան և կամ որ և իցէ պատահական հանգամանքի, բանւորն իր ձեռագործը պատրաստելու համար աւելի շատ աշխատանքի էներգիա է ծախսում, քան որ և է հասարակութեան մէջ սովորաբար ծախսւածը, սրանից՝ արդիւնքի հասարակական արժողութիւնը սովորականից աւելի չի դառնայ: Եւ ընդհակառակը, նա սովորականից աւելի պակաս չի դառնայ, եթէ շարքից դուրս մնացած արւեստը կամ որ և է հասարակութեան մէջ դեռ գործածութեան չմտած ուրիշ գործիքների գործադրութիւնը թոյլ է տալիս բանւորին աշխատանքի սովորականից դուրս քիչ վատնումով մի արդիւնք արտադրել: Հասարակական արժողութիւնը ներկայանում է աշխատանքի էներգիայի այն քանակութիւնը, որը, որ է. հասարակ-

կոսթեան մեջ, աշխատանքի սովորական պայմաններում, անհրաժեշտ է արդիւնքն արտադրելու համար:

Այդպիսով պէտք է տարբերել հասարակական կամ նորմալ արժողութիւնը՝ անհատականից կամ պատահականից, աշխատանքի էներգիայի այն քանակութիւնը, որ ընդհանրապէս անհրաժեշտ է հասարակական զարգացման որ և է աստիճանի համար, նրանից, որ ծախսւած է մասնաւոր դէպքում: Տնտեսական գիտութեան համար էական է միայն նորմալ արժողութիւնը. անհատական արժողութեամբ նա կարող է ըզբազել այնքան միայն, որքան որ սա անհրաժեշտ է նորմալի չափը հասկանալու համար:

Աշխատանքի քանակապէս տարբեր տեսակներն առանձին քննելով, դժւար չէ տեսնել, որ նրանցից մի քանիսն աւելի բարդ են, միւսներն՝ աւելի պարզ: Այսպէս, զիտականի աշխատանքն աւելի բարդ է, քան ժամագործինը, իսկ ժամագործի աշխատանքն աւելի բարդ է, քան կոշկակարինն և այլն: Արդիւնքների հասարակական արժողութիւնը հետազոտելիս՝ պէտք է ի նկատի ունենալ աշխատանքի բարդութեան աստիճանը:

Աշխատանքի տարբեր տեսակներն իրանց տարբեր բարդութեամբ հետեանք են բանւորների անմիակերպ կրթութեան և հետեապէս օրգանիզմների անմիակերպ զարգացման: Աշխատանքի աւելի բարդ տեսակը համապատասխանում է մեծ զարգացման, աւելի հասարակը— փոքրին: Սակայն սկներև է, որ աւելի զարգացած օրգանիզմը աշխատելիս միևնույն ժամանակում աւելի շատ աշխատանքի էներգիա է ծախսում, քան աւելի քիչ զարգացածը: Այս պատճառով աւելի բարդ աշխատանքը համեմատած աւելի պակաս բարդ աշխատանքի հետ, պէտք է նկատել իբրև էներգիայի մեծ ծախսում: Երբեք հաւասար է երկրորդի կրկնապատկին: Այդպիսով գիտականի աշխատանքի մի ժամը, ծախսւած էներգիայի նկատմամբ, համապատասխանում է միխանիկի աշխատանքի թերևս 3 ժամին և հասարակ բանւորի 12 ժամին:

«Հասարակ աշխատանք» տերմինն այսուհետև պէտք է նշանակէ արտադրական աշխատանքի ամենապակաս բարդ ձևը, որպիսին գոյութիւն ունի որ և է հասարակութեան մէջ: Արժողութիւնները համեմատելիս՝ հասարակ աշխատանքը ներկայացնում է այն բնական չափը, որին յանգում են աշխատանքի աւելի բարդ ձևերը: Աշխատանքի էներգիայի բնական միաւորը հանդիսանում է որ և է հասարակութեան համար միջակ լարւածութիւն ունեցող հասարակ աշխատանքի մի ժամը: Եթէ արդիւնքն արտադրւած է 100 ժամւայ հասարակական աշխատանքով՝ այնպիսի բարդութեամբ ու լարւածութեամբ, որ նրա մի ժամը՝ լարւածութեան նկատմամբ միջակ հասարակ աշխատանքի 10 ժամահետ կազմում է էներգիայի հաւասար ծախսում, ուրեմն արդիւնքի հա-

սարակական արժողութիւնը արտայայտւում է 1000 աշխատանքի միաւորով և այլն:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ զարգացման տարբեր աստիճանների վրայ կանգնած հասարակութիւնների համար աշխատանքի էներգիայի այդպիսի միաւորը խիստ ամենակերպ է երևում:

«Հասարակ աշխատանք» արտայայտութիւնն այստեղ մի քիչ ուրիշ նշանակութեամբ է գործածւած, քան այն, ինչ որ մինչև այժմ ընդունւած է գիտութեան մէջ: Հասարակ աշխատանքի տակ սովորաբար հասկանում են այն աշխատանքը, որին, աւանց սովորելու, ընդունակ է որ և է հասարակութեան միջակ ոյժով, առողջութեամբ ու զարգացմամբ անդամը,—բանաձևը խիստ վերացական է և նոյնիսկ մի քիչ մութը («աւանց որ և է ուսման» ոչինչ չի կարելի անել):

Ակներև է, որ ինչքան աշխատանքի յաջողութեան արտադրողականութիւնը իր որոշ ճիւղերի մէջ բարձրանայ, այնքան արդիւնքի արտադրութեան համար քիչ աշխատանքի էներգիա կը պահանջւի—այնքան հասարակական արժողութիւնը կիջնի: Սա մատիմատիկօրէն այսպէս պէտք է արտայայտել. արդիւնքի հասարակական արժողութիւնը հակառակ յարաբերական է աշխատանքի արտադրողականութեանը—եթէ երկրորդը երկու անգամ մեծանում է, առաջինն երկու անգամ փոքրանում է և ընդհակառակը:

Ուրեմն՝ արդիւնքի հասարակական օգտակարութիւնը նրա ընդունակութիւնն է՝ բաւարարութիւն տալու հասարակական կարիքին: Իսկ հասարակական արժողութիւնը աշխատանքի էներգիայի այն քանակութիւնն է, որի արդիւնքը պէտք է արժենայ հասարակութեանը որ և է հասարակութեան արտադրութեան սովորական պայմաններում:

«Հասարակական» կամ «նորմալ» արժողութիւն տերմինը յաճախ փոխարինում է «աշխատանքի արժողութիւն» կամ ուղղակի «արժողութիւն» արտայայտութեամբ: Վերջինը միշտ աւելի յարմար է, եթէ չմոռանանք, որ խնդիրը հասարակական ֆակտի մասին է:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՒՆՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՒՆ

1) Տնտեսական գիտութիւնը հասարակական գիտութիւններից մէկն է: Նա ուսումնասիրում է նախ՝ արտադրութիւնը, այսինքն՝ հանրօգուտ աշխատանքը, յատկապէս՝ նրա հասարակական կողմը—մարդկանց յարաբերութիւնները. երկրորդ՝ արտադրութեան արդիւնքների կանց յարաբերութիւնները. երկրորդ՝ արտադրական և ըաշխողական յարաբերութիւնը նա ուսումնասիրում է նրանց փոփոխութիւնների զարգացման և դեգրադացիայի (յետաըջման) մէջ:

2) Հանրօգուտ աշխատանքին վերաբերող հիմնական հարցերը



դառնում, բայց տիրապետող խմբի կարիքների չափերի մէջ գտնում է իւր սահմանը:

II. Փոխանակական տնտեսութիւն: Հասարակական արտա-  
գորութեան չափերն ու նրա էլեմենտների բազմատեսակութիւնն աճում  
են: Հասարակութիւնը հանդիսանում է մի բարձր ամբողջութիւն, որ  
բաղկացած է աշխատանքի անկազմակերպ բաժանմամբ և փոխադար-  
ձաբար կապւած առանձին կազմակերպւած խմբերից: Բաշխոյղական  
յարաբերութիւնների մէջ գերազանցողը փոխականութիւնն է: Հա-  
սարակութեան զարգացման պրօցեսը արագացած է ներկայանում:

Այս շրջանը զարգացման երկու աստիճանների պէտք է բաժանել:

1) Մանր-բուրժուական կազմ.—ընտրուում է առանձին  
տնտեսական կազմակերպութիւնների փոքր չափերով. արտադրու-  
թեան միջոցները պատկանում են նրան, ով անմիջականապէս  
գործադրում է նրանց. այստեղից է առաջանում շահագործու-  
թեան բացակայութիւնը կամ նրա շատ թոյլ զարգացումը:

2) Կապիտալիստական սիստեմ: Արտադրութեան չափերն ու  
բարդութիւնը, սրա հետ և հասարակական մարդու՝ բնութեան  
վրայ ունեցած իշխանութիւնն աճում են չտեսնւած չափերով:  
Մակայն չլուծւած չափերի է հասնում և հասարակական յարաբե-  
րութիւնների իշխանութիւնը մարդկանց վրայ, յարաբերութիւն-  
ներ, որոնք անսովոր կերպով զարդանում են: Այս յարաբերու-  
թիւնների հիմքը կազմում է ազատ վարձու աշխատանքը: Հա-  
սարակական զարգացման պրօցեսը ձգտող բնաւորութիւն է ըս-  
տանում:

III. Զարգացման աստիճանին դեռ, ճիստապես սօցիալապէս կազ-  
մակերպւած տնտեսութիւն: Արտադրութեան չափերն ու բարդութիւնն  
անդադար շարունակում են աճել, բայց նրա էլեմենտների բազմատես-  
ակութիւնն անցում է գործիքներին և աշխատանքի մեթոդին, իսկ  
իրանք՝ հասարակութեան անդամները միատեսակ են զարգանում: Ար-  
տադրութիւնն ու բաշխումը հէնց հասարակութեան միջոցով է կազ-  
մակերպւած, համաչափ, իբրև մի ամբողջական սիստեմ, գերծ բայքա-  
յումից, հակասութիւններից և անարխիայից: Զարգացման պրօցեսը  
շարունակ աւելի արագանում է:

Մինչև մի որոշ աստիճան, ներկայ կուլտուրական հասարա-  
կութիւնների զարգացման ընդհանուր աստիճանից առանձին,  
հարկ կլինի վերցնել կլասիկ աշխարհի կեանքը նրա մի քիչ ա-  
ռանձնայատուկ հոսանքի հետ միասին, որը կըրտանէր դէպի  
սարկական աշխատանքի շահագործման աւելի վերջնական ձևերն  
ու նրան յաջորդող դեգրադացիան:

Իւրաքանչիւր շրջանի հասարակական յարաբերութիւնները  
վերլուծելիս՝ անհրաժեշտ է պարզել թէ ինչու, և ինչ եղանակով են ա-  
ռաջացել նրանք, ինչու և ինչ կերպով են փոփոխւել՝ նոր յարաբերու-  
թիւնների մէջ մտնելով:

Շնորհիւ տնտեսական երևոյթների և իրաւական ու գաղափարա-  
կան երևոյթների մէջ եղած անքակտելի կապակցութեան, տնտեսա-

կան գիտութիւնը չի կարող կառավարել առանց այն փոխադարձ կա-  
պակցութեան հարցի, որի մէջ է գտնուում հասարակական-մարդկային  
կեանքի այս երեք շրջանների զարգացումը:

Ամենից յաճախ տնտեսական գիտութիւնն այսպիսի մասն-  
երի են բաժանում. քաղաքական տնտեսութիւն, տնտեսական քա-  
ղաքագիտութիւն, տնտեսական զարգացման պատմութիւն և տնտե-  
սական հայեացքների պատմութիւն: Տնտեսական հայեացքների  
պատմութիւնը, իսկապէս, տնտեսական գիտութեանը չի վերաբե-  
րում. սա՛ հոգևոր կուլտուրայի մասին եղած գիտութեան ճիւղերից  
մէկն է և ո՛չ թէ—արտադրողական յարաբերութիւնների: Այնու-  
հետև, սխալ է քաղաքական տնտեսութիւնն ու տնտեսական քա-  
ղաքագիտութիւնը անջատել տեսական զարգացման պատմութիւ-  
նից, որովհետև թէ առաջինը և թէ երկրորդը չեն կարող գործ չունե-  
նալ պատմականօրէն փոփոխուող հասարակական յարաբերութիւննե-  
րի հետ: Այդպիսով կարելի է միայն ընդունել տնտեսական գիտու-  
թեան բաժանւելը քաղաքական տնտեսութեան և տնտեսական քաղա-  
քագիտութեան. և միակ միտքը, որ կարելի է թոյլ տալ, հետևեալն  
է. քաղաքական տնտեսութիւնը հասարակական յարաբերութիւն-  
ների մէջ եղած փոփոխութիւնների պատճառներին վերաբերեալ  
գիտութիւն է, իսկ տնտեսական քաղաքագիտութիւնը այդ յարա-  
բերութիւնների փոփոխութեան եղանակների, մեթոդների վե-  
րաբերեալ գիտութիւն է:

Տնտեսական գիտութեան մեթոյլի մասին

Տնտեսական գիտութիւնը հասարակական գիտութիւններից  
մէկն է, ուստի, նրա մեթոդի մասին հասկացողութիւն տալու  
համար, ամենից յարմարն է բացատրութեան այսպիսի հետեո-  
ղականութիւն պահպանել. նախ՝ ընդհանրապէս, գիտութեան ինչ-  
պիսի մեթոդներ գոյութիւն ունեն. երկրորդ՝ ինչով են աչքի ընկ-  
նում այդ մեթոդների մէջ հասարակական գիտութիւնների մե-  
թոդները. երրորդ՝ ինչպէս են հասարակական գիտութիւնների  
մեթոդների մասնաւոր յատկութիւնները:

Հիմնական, ընդհանուր գիտական մեթոդներն երկուս են.  
ինդուկտիւ («մակաձուլութեան եղանակ») և դեդուկտիւ («արտա-  
ծութեան եղանակ»):

Ինդուկցիան նրանումն է կայանում, որ մասնաւոր գիտու-  
թիւններից ու փորձերից արւում են եզրակացութիւններ. մի  
շարք այդպիսի եզրակացութիւններից արւում են աւելի ընդհա-  
նուր բնաւորութիւն ունեցող եզրակացութիւններ և այլն, մինչև  
գիտութեան վերջին, ամենարարձր ընդհանրացումը:

Հետախուզողին պատահել է մի քանի անգամ գիտել, որ  
կառքի առանցքը շփւելուց տաքացել է: Հետևութիւն է ծագում.  
«շփումից կառքի առանցքը տաքանում է»—մի շարք առանձին  
ֆակտերից—առաջին եզրակացութիւնը: Այս դրութիւնն ստացւել  
է «մասնորութեան» եղանակով, այսինքն՝ առանձին երևոյթները  
քննելիս՝ նրանց մէջ եղած նմանը, ընդհանուրը աչքի էր ընկնում  
գիտակցութեամբ: Եզրակացութիւնն ամրապնդւում և աներկբայ

է դառնում, երբ նրան հաստատում են ուրիշ ճանապարհներով,— «տարբերութեան» եղանակով. շփման ոյժը փոփոխում են, սրի- նակ՝ առանցքին իւր քսելով՝ շփման ոյժը պակսեցնում են. կամ փոքրացնում են այն անցքը, որի մէջ պտտւում է առանցքը և ոյժն աւելացնում. դուրս է գալիս, որ առաջին դէպքում տարբու- թիւնը պակասում է, իսկ երկրորդ դէպքում աւելանում: Ուրեմն առանցքի տաքանալու պատճառն իրօք շփումն է:

Ճիշտ այս ձևով առաջանում է նման ընդհանրացումներն մի ամբողջ շարք. մեքենաների ատամնաւոր անիւնները տաքանում են միմեանց քսելուց, սղոցը—սղոցելիս փայտին քսելուց. փայ- տի կտորներն իրար քսելուց վայրենիները կրակ են ստանում: Այստեղից դուրս է գալիս աւելի լայն բնաւորութիւն ունեցող եզրակացութիւն. «մարմինները տաքանում են շփումից»:

Այնուհետև դուրս է գալիս, որ տաքութիւն է առաջանում նաև այն ժամանակ, երբ դադարում է մի որ և է շարժողութիւն. օրինակ՝ հրացանի գնդակը պատին խփելով տաքանում է: Շփման ժամանակ շարժողութիւնն եթէ չի էլ դադարում, գոնէ դանդա- ղում, թուլանում, մի խօսքով, կորցնում է իւր էներգիայի մի մասը: Այս դէպքերի մէջ ընդհանուրն այն է, որ շարժողութիւնը չքանում է մասամբ կամ ամբողջովին: Բազմաթիւ այսպիսի ընդ- հանրումներից առաջանում է հետևեալ եզրակացութիւնը. «որտեղ անյայտանում է շարժողութիւնը, այնտեղ զարգանում է տաքու- թիւնը» կամ «շարժողութիւնը (մեքենայական) փոխւում է տա- քութեան»:

Ուրիշ հետազօտութիւններ ցոյց են տւել, որ թէ լոյսը և թէ էլեքտրականութիւնը ընդունակ են փոխելու թէ տաքու- թեան և թէ մեքենայական շարժողութեան և ընդհակառակը: Այս- տեղից դուրս է գալիս հետևեալ օրէնքը. «էներգիայի բոլոր տե- սակները (բնութեան մէջ) եղող փոփոխութիւնների բոլոր տի- պերը) ընդունակ են փոխել մէկը միւսին»:

Այսպէս, ինդուկցիան, հիմնելով դիտողութեան և փորձի վրայ, իւր եզրակացութիւններն մէջ մասնաւորից քնդհանուրին է անցնում:

Գեղուկցիան հակառակ ճանապարհով է գնում: Ունենալով ընդ- հանուր գրութիւններ, նա աւելի մասնաւոր բնոյթ կրող եզրա- կացութիւններ է անում նրանցից: Այսպէս, եթէ յայտնի է, որ էներգիայի բոլոր տեսակները մէկը միւսին են փոխւում, հետա- զօտողը, մի նոր և դու չուսումնասիրեա՞ծ էներգիայի հանդիպե- լիս, եզրակացնում է, որ այդ ևս ընդունակ է էներգիայի միւս ձևերին փոխելու:

Բայց դեղուկցիայի հիմքի մէջ միշտ ինդուկցիա կայ, որով- հետև այն ընդհանուրը, որից մասնաւոր եզրակացութիւններ են արւում, ինքը պէտք է հէնց ինդուկտիւ ճանապարհով ստացւի:

Հասարակական գիտութիւնները, ինչպէս և բոլոր միւս գի- տութիւնները, նոյն երկու մեթոդներով գործելով, սրանց միջից նրանով են աչքի ընկնում, որ երևոյթները հասարակական տե- սակիտից են ուսումնասիրում: Սխալ կը լինէր ասել, թէ հասա- րակական գիտութիւնները միայն հասարակութեամբ են զբաղ- ւում. ոչ, նրանք շատ յաճախ ընդգրկում են հասարակութիւնից

դուրս երևոյթներ, բայց նրանց հետազօտում են միայն հասա- րակութեան կեանքի տեսակէտից, միայն նրանց՝ հասարակու- թեան վրայ ունեցած ազդեցութեան նկատմամբ: Այսպէս, որ և է ժողովրդի կեանքի նկարագրութիւնը համարեա միշտ արտա- քին բնական պայմանների նկարագրութիւնից են սկսում, որոնց մէջ նա ապրում է. բայց այս պայմանները ոչ թէ լիովին են պատկերացնում, այլ այն չափով միայն, որ չափով անհրաժեշտ է իմանալու ժողովրդի կեանքի այս կամ այն առանձնայատու- թիւնների ծագումը: Աննպատակ է ուսումնասիրել Եգիպտոսի հասարակական կեանքը, առանց ուշադրութիւն դարձնելու Նե- ղոսի պարբերական վարարումների փաստի վրայ. սակայն այս ոչ հասարակական փաստը պէտք է ի նկատի ունենալ միայն հա- սարակական տեսակէտից, այն ազդեցութեան հայեցակէտից, որ ունեցել է եգիպտական հասարակական կեանքի վրայ, ամենևին չհոգալով, օրինակ, այդ փաստի աստղաբաշխական ծագման մասին:

Սակայն հասարակական գիտութիւնը բարդ է և հասարա- կական տեսակէտը հասարակութեան և արտաքին բնութեան վե- րաբերմամբ կարող է դանազան տեսակ գործադրել: Հասարակա- կան գիտութեան մի մասը—նիւթական կուլտուրայի գիտութիւ- նը—ուսումնասիրում է բոլոր փաստերը, նրանց՝ հասարակութեան՝ բնութեան դէմ վարած անմիջական կռա-ի հետ ունեցած յարաբե- րւոյթան դէմ վարած անմիջական կռա-ի հետ ունեցած յարաբե- րութիւնների հայեցակէտից. և եթէ այս գիտութեանն երբ և է վիճակում է շօշափել գաղափարների պատմութիւնը, այդ միայն այն հարցի վերաբերմամբ, թէ ինչ ազդեցութիւն են ունեցել այդ գաղափարները, քանի որ նրանք զարգացել են հասարակու- թեան՝ արտաքին աշխարհի դէմ վարած հեռաւոր կռւի յաջողու- թեամբ: Միւս մասը—տնտեսական գիտութիւնը—բոլոր փաս- տերն ուսումնասիրում է այն յարաբերութիւնների տեսակէտից, տերն ուսումնասիրում է այն յարաբերութիւնների տեսակէտից, որոնք զարգանում են մարդկանց մէջ, նրանց՝ բնութեան դէմ վարած կռւում. եթէ այս գիտութիւնը շօշափում է նիւթական կուլտուրայի հարցերը, այդ միայն պարզելու համար այն, թէ ինչ ազդեցութիւն են ունեցել տեխնիկական պայմանները մարդ- կանց փոխադարձ յարաբերութիւնների փոփոխութեան վրայ: Վերջապէս, հոգևոր կուլտուրայի գիտութիւնն ուսումնասիրում է այն բոլորը, ինչ որ վեր բերում է մտածողութեան և ըմբռնողու- թեան հասարակական եղանակին:

Այսպէս, տնտեսական գիտութեան մեթոդի առանձնայատ- կութիւնը նրանումն է կայանում, որ նա բոլոր երևոյթները միայն մի կողմով է հետաքրքրում, այն է, թէ ինչ նշանակու- թիւն ունեն նրանք մարդկանց՝ բնութեան դէմ վարած կռւի մէջ սղած յարաբերութիւնների համար: Երևոյթների այս կողմն աչքի է ընկնում գիտակցութեամբ, նրանցից զատւում է ընդ առանձնութեամբ:

Իւրաքանչիւր երևոյթի հիմնական, նախնական պատճառներն իրանից դուրս են գտնւում: Այս վերաբերում է նաև էկո- նոմիկային: Ահա թէ ինչու, ուսումնասիրելով տնտեսական փաս- տերը, անհրաժեշտ է պարզել նրանց ծագումը ոչ-տնտեսական տեղի և ահա թէ ինչու յետագայ բացատրութիւնների մէջ խօսք փաստերից և ահա թէ ինչու յետագայ բացատրութիւնների մէջ խօսք

պէտք է լինի ոչ թէ բացառապէս մարդկանց արտադրողական յարաբերութիւնների մասին: Հարկ կը լինի խօսել և՛ տեխնիկայի իբրև տնտեսական փոփոխութիւնների պատճառի մասին. նաև հարկաւոր է խօսել հոգևոր կուլտուրայի մասին, իբրև կարևոր, թէև ածանցած, պայմանի, որ դանդաղեցնում կամ արագացնում է տնտեսական փոփոխութիւնների ընթացքը դէպի այս կամ այն կողմը և որոշ չափով որոշում է այդ փոփոխութիւնների հէնց ձևը, թէև նրանց ինքնուրոյն կերպով չի առաջացնում:

Հասարակական երևոյթների ծայրայեղ բարդութիւնը յաճախ սարսափելի դժուարացնում է տնտեսական գիտութեան մէջ ինդուկաիւ մեթոդի գործադրութիւնը, որով հասարակ, պարզ փաստերի վրայ միայն կարելի է գործողութիւն կատարել: Այդ ժամանակ տնտեսագէտին շատ անգամ օգնուս է, այսպէս կոչւած, վերացական մեթոդով դեդուկցիան. հետազոտողն աշխատում է պատկերացնել հասարակական փաստերի որոշ կողմը ամենամաքուր և պարզ տեսքով և ապա, մտաւոր կերպով դանազան նոր ազդեցութիւններ մէջ բերելով, աշխատում է տրամաբանօրէն եզրակացութիւններ անել այն մասին, թէ ինչպիսի փոփոխութիւններ պէտք է տեղի ունենան: Այդպէս, քննելով ժամանակակից հասարակութիւնը, կարելի է սկսել՝ պատկերացնելով նրա սահմանների մէջ ձեռնարկութիւնների լիովին ազատ մըըցումը և պարզել, թէ փոփոխութիւններն ինչ ուղղութեամբ պէտք է տեղի ունենան, իսկ յետոյ պէտք է ի նկատի ունենալ մրցման զանազան ճնշումները և տեսնել, թէ նրանք ինչպէս պէտք է ազդեն այս փոփոխութիւնների ընթացքի վրայ:

Այնուհետև, մի քանի խօսք ևս տնտեսական գիտութեան ներկայ զարգացման աստիճանի մասին: Այդ աստիճանը խիստ բարձր չէ—արեւած են միայն առաջին, թէև, պէտք է կարծել, ամենադժուար քայլերը: Տնտեսական գիտութիւնը շատ երիտասարդ է. նա ծնւել է XVII դարուց ոչ վաղ:

Տնտեսական գիտութեան այդպիսի ուշ և համեմատօրէն աւելի թոյլ զարգացման համար երկու հիմնաւոր պատճառներ են եղել: Առաջին՝ աւելի ընդհանուր պատճառը հասարակական երևոյթների ծանօթութիւնների չափազանց բարդութիւնը և, հետևապէս, չափազանց դժուարութիւնն է:

Երկրորդն աւելի մասնաւոր է. տնտեսական գիտութեան հետաքրքրութիւնն սկսեց վերջերս միայն զարգանալ: Հետազոտող մտքի ուշադրութիւնն ամենից առաջ և մեծ ոյժով գրաւում են կեանքի այն կողմերը, որոնք աչքի են ընկնում արագ շարժողութեամբ, ձևերի յաճախակի փոփոխութեամբ և զարգացման փոթորկոտ ընթացքով: Կապիտալիստականից առաջ եղած հասարակական ձևերն աչքի էին ընկնում, ընդհակառակը, իրենց չափազանց դանդաղ շարժողութեամբ և խիստ աստիճանական զարգացմամբ: Միայն բուրժուական աշխարհը իւր կեանքի տենդային արագ ընթացքով շարունակ աւելի խստացող ներքին հակասութիւնների ահագին քանակութեամբ՝ ընդունակ էր ծնել տնտեսական երևոյթներն ուսումնասիրելու խոր և կենդանի հետաքրքրութիւն:

I ՆԱԽՆԱԿԱՆ ՑԵՂԱԿԱՆ ԿՈՄՄՈՒՆԻՉՄ

Այն փաստերը, որոնց հիման վրայ պէտք է ուսումնասիրել նախնական մարդկանց կեանքը, հարուստ չի կարելի անւանել: Նախնական մարդուն ժամանակակից ոչ մի գրականութիւն չի մնացել, որովհետև այն ժամանակ նա չէր էլ կարող լինել: Այդ շրջանի միակ յիշատակաւորաները հողի միջից գտնւած ոսկորները, գործիքները և այլն են հանդիսանում:

Կայ և մի կարևոր աղբիւր, որից կարելի է օգտւել նախնական մարդկութեան կեանքն ուսումնասիրելիս, դա—ներկայ վայրենիների կեանքը, յարաբերութիւնները, սովորութիւններն են, մասնաւորապէս վայրենիներինը, որոնք զարգացման ամենացածր աստիճանի վրայ են կանգնած:

Սակայն, այդ աղբիւրներին դիմելով, անհրաժեշտ է եզրակացութիւնների մէջ մեծ զգուշութիւն պահպանել: Այժմ արդէն չկան այնպիսի վայրենիներ, որոնք երբէք յարաբերութիւն ունեցած չլինին աւելի զարգացած ժողովուրդների հետ. և շատ հեշտ է լուրջ սխալի մէջ ընկնել, նախնական սովորութիւնների մնացորդ համարելով այն, ինչ որ իրօք փոխ է առնւած համեմատաբար ոչ վաղ ժամանակներում:

Հնարաւոր են նաև ուրիշ տեսակի սխալներ: Որ և է ցեղ, որ արդէն կուլտուրան որոշ աստիճանի զարգացրել է, շնորհիւ անյաջող դասաւորւած պատմական կեանքի, նորից կուլտուրայի վաստակի մեծ մասը վատնում է: Այդպիսի վայրենացած ցեղը նախնական վայրենի ցեղի տեղ ընդունելով, շատ սխալ եզրակացութիւններ կարելի է անել:

Յամենայն դէպս, նախնական մարդկանց կեանքի այն պաշարն էլ, ինչ որ կայ ներկայումս, բաւական է պարզելու «նախապատմական» էպոխայի հասարակական յարաբերութիւնների հիմնական դժերը:

1. ՄԱՐԴՈՒ ՆԱԽՆԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԵՊԻ ԲՆՈՒԹԻՒՆԸ

Նախնական մարդը ընտելան դէմ կուելիս վերին աստիճանի վատ է զինւած, նոյն իսկ շատ զաղաններից վատ: Նրա բնական գործիքները—ձեռները, ոտները, ատամները—շատ աւելի թոյլ են, քան մեծ գիշատիչ կենդանիներինը: Իսկ այն արհեստական գործիքները, որոնք այժմ մարդուն վճռական գերակշռութիւն են տալիս կենդանի և մեռած ընտելեան վրայ, այն ժամանակ վատ, կոպիտ էին և շատ քիչ քանակութեամբ՝ մարդու տրամադրութեան տակ, այնպէս, որ նրանք չէին կարող մարդու համար թեթևացնել գոյութեան կուրը:

Այդ ծանր կուլի մէջ հազիւ թէ մարդը ընտելեան թագաւոր է հանդիսանում: Բոլորովին հակառակը, մարդկութեան կեանքի առաջին շրջանը ճնշման, մարդու ստրկութեան շրջան է: Ոչ թէ մարդն է հարստահարող և տէր հանդիսանում, այլ միայն ընտելեանը:

Անկասկած, առաջին գործիքները քարերն ու մահակներն էին: Ուղղակի բնութիւնից վերցրած այդ գործիքները, ըստ երևոյթին, կարելի է գտնել նոյն իսկ բարձր ցեղի կապիկների մօտ:

Բայց այժմ արդէն ոչ մի տեղ չեն մնացել այնպիսի վայրենիներ, որ չճանաչեն ուրիշ գործիքներ:

Նախնական մարդու ուղեղը թոյլ է, անզարգացած: Մտաւոր աշխատանքի համար նրան ժամանակ չի մնում այդ յարատև ու քայքայելի կուրի մէջ, ուր ոչ մի բոլոր մահաւան վտանգը չի կարւում:

Այնուամենայնիւ մարդը զարգանում է: Բնութեան բուժ, հարըստահարւած ստրուկը կեանքի միջոցներ ձեռք բերելով և իւր գոյութեան համար կուելով, ծանօթանում է բնութեան իրերի և ոյժերի հետ, սերնդից սերունդ է աւանդում, հաւաքում է փորձառութիւն ու բարելաւում գործիքները:

Սարսափելի դանդաղութեամբ, մի քանի հազար տարիների ընթացքում, մէկը միւսի յետևից հնարումներ ու գիւտեր են արւում: Հնարւում են այն բոլոր իրերը, որոնք մեր ժամանակի մարդուն չափազանց հասարակ են երևում: Սակայն այդ գործիքները նախնական մարդը խիստ թանգ ձեռք բերեց:

Բարն ու փայտը միացնելու, նրանց մշակելու և դանազան նըպատակների յարմարեցնելու միջոցով այդ նախնական գործիքներից առաջացան շատ ուրիշները—քարէ կացիւններ, մուրճեր, դանակներ, նիզակներ և այլն:

Մօտաւորապէս նոյն այդ քարէ գործիքների էպոխայում գտնւեցին կրակի օգտաւէտ յատկութիւնները:

Ձկների ոսկրներից շինած ձկնորսական կարթը և լաստը, որ յետոյ զարգացաւ ու նաւակի փոխւեց, աւելի ուշ երևան եկան: Վերջապէս, նետ ու աղեղի գիւտը մարդուն ամենաուժեղ կենդանիների հետ մի մակարդակի վրայ դրեց:

Մարկութեան կեանքի այդ վաղ շրջանում այդպէս դանդաղ էր ընթանում արտադրողական աշխատանքի յառաջադիմութիւնը:

Արդիւնաբերութեան հետևանքն եղան ծառերից պտուղներ ձեռք բերելը, մանր գազաններ որսալը, ձկնորսութիւնը, քարից, փայտից և ոսկորից կոպիտ գործիքներ պատրաստելն և մորթից կոպիտ շորեր շինելը: Արտադրութեան այդ տիպը կարելի է նկատել իբրև որսորդական, որսորդութեան տակ հասկանալով արտաքին բնութեան կողմից անմիջապէս ապրուստի միջոցներ ձեռք բերելը, լինեն դրանք անտառի գազաններ, շրերի ձկներ, թէ վայրենի բոյսերի, ծառերի պտուղներ: Այդպիսի արտադրութեան գլխաւոր գիծը նրանումն է կայանում, որ նա երբէք լիովին չի ապահովում մարդկային կեանքը: Պտուղներ հաւաքելը, որսորդութիւնը, ձկնորսութիւնը, բոլորն էլ այնպիսի զբաղմունքներ են, որոց մէջ խիստ մեծ դեր է կատարում պատահակա-

նութիւնը: Դեռ չկան արտադրութեան այն ճիւղերը, որոնք մարդուն հաւաստիութիւն են տալիս վաղւան օրւայ համար.—չկան երկրագործութիւնն ու անասնապահութիւնը:

Մարդու բոլոր ոյժերը կեանքի անհրաժեշտ միջոցներ ձեռք բերելու վրայ են ծախսւում: Մարդու օրական աշխատանքը հազիւ բաւական է իրան կերակրելու: Մարդու ամբողջ բանւորական ժամանակը կուլ է գնում կեանքի կուին. չի մնում աւելորդ (յաւելեալ) բանւորական ժամանակ, որը նա կարողանար գործածել ուրիշի համար աշխատելու՝ կամ իւր կեանքի պայմանները բարելաւելու համար: Աշխատանքը չի ստեղծում աւելորդը, այսինքն՝ կեանքի համար անհրաժեշտ եղած արդիւնքից աւելին:

Եթէ այսօր վայրենի-որսորդն աւելի էլ ձեռք բերեց, քան ինչ որ այսօրւան օրը հարկաւոր է նրան, վաղը, կարող է պատահել, որ նա ոչինչ չի գտնի ու թերևս կոչնչանայ որ և է գազանի հետ անհաւասար կուրի մէջ:

Այդպիսի պայմաններում, ակներև է, որ շահագործելն անհրճաւոր է, այսինքն՝ ուրիշի յաւելեալ աշխատանքի պտուղներն անհրճաւոր է իւրացնել, որովհետև հէնց յաւելեալ աշխատանք չկայ: Այստեղ միայն հնարաւոր է ուրիշ մարդուց օգուտ քողելու ամենակոպիտ, նախնական ձևը—այդ նրան ուտելն է:

2. ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ  
ՆԱԽՆԱԿԱՆ ՅԵՂԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՄԷՋ

Ժամանակակից գիտութիւնը ոչ ներկայումս և ոչ էլ անցեալում չի ճանաչում այնպիսի մարդկանց, որոնք չապրէին հասարակութեան մէջ: Նախնական էպոխայում մարդկանց մէջ արդէն կապեր կային, թէև աւելի պակաս լայն, քան այժմ: Այն ժամանակների մարդու հաժմար գոյութեան կուում առանց ուրիշ մարդկանց օգնութեան կառամար վարելը նոյնպէս անհնարին էր, ինչպէս ներկայ մարդու համար: Առանձին մարդը, երես առ երես թշնամի բնութեան դէմ կանգնած, շուտափոյթ և անխուսափելի կորստեան դատապարտւած կը լինէր:

Բայց և հասարակական միութիւնների ոյժն էլ խիստ չնչին էր: Մրա հիմնական պատճառը, ինչպէս արդէն պարզւած է, տեխնիկայի շատ թոյլ զարգացման մէջ է կայանում. իսկ զարգացումն իր կողմից առաջացրել է ուրիշ պատճառ—հասարակական կապերի չափազանց նեղութիւն, առանձին հասարակութիւնների չափերի աննշանութիւն:

Ինչքան ցածր է տեխնիկան, ինչքան պակաս կատարեալ են գոյութեան կուր եղանակները, այնքան իւրաքանչիւր մարդու համար հողի մեծ տարածութիւն, «շահագործելու հրապարակ» է պահանջւում ապրուստի միջոցներ ձեռք բերելու: Նախնական որսորդութիւնն այնքան սակաւ արտադրող զբաղմունք է, որ մի քառակուսի մղոն հողի

վրայ, բարեխառն գօտու միջակ բնական պայմաններում, 20 հոգուց աւելի չեն կարող կերակրուել: Մարդկանց քիչ թէ շատ մի մեծ խումբ պէտք է սարածւէր այնպիսի մի հսկայական տարածութեան վրայ, որ հասարակական կապի պահպանելը վերին աստիճանի դժւարին գործ լինէր. իսկ եթէ ուշադրութեան առնենք մարդկանց հաղորդակցութեան նախնական տեխնիկան—բացակայութիւն որ և է ճանապարհի, վարժեցրած կենդանիների, որոնցով կարելի կլինէր ճանապարհորդել ամենաչնչին ճանապարհորդութեան հետ կապւած ահազին վտանգները,—այդ դէպքում պարզ կլինի, որ հասարակական միութիւնները չափերն այն ժամանակ, ամենաշատը, մի քանի տասնեակ մարդկանց էին հասնում:

Կեանքի միաբան կուրի համար այն ժամանակները հնարաւոր կլինէր միանալ այն մարդկանց միայն, որոնց հէնց ինքը բնութիւնը կապել է ծագման միութեամբ, ազգակցական յարաբերութիւններով:

Արիւնով իրար օտար մարդիկ չէին մտնում ազատ միութիւնները մէջ՝ արտադրողական գործնէութիւն ունենալու: Նախնական մարդու գործը չէր հնարել այնպիսի բարդ իրեր, ինչպիսին է դաշնագիրը. իսկ գըլխաւորը—գոյութեան կուրի սոսկալի խստութիւնը սովորեցրեց նրան թշնամաբար վերաբերել դէպի այն բոլոր մարդիկ, որոնց հետ չէին կապում նրան ցեղն ու միաբան կեանքը:

Այդ պատճառով նախնական շրջանի հասարակական կազմակերպութիւնը ցեղական միութեան կամ ցեղի ձև ունէր: Եւ այդ ձևի սահմաններով էլ սահմանափակում էին տնտեսական յարաբերութիւնները:

Յեղական խմբի արտադրական հիմնական յարաբերութիւնը հասարակ աշխատակցութիւնն է: Հասարակական աշխատանքի գործնէութիւնն այնպէս սահմանափակ ու պարզ է, որ ամեն ոք կարող է անել այն բոլորն, ինչ որ ուրիշները և ամենքն էլ, առանձին վերցրած, մօտաւորապէս նման աշխատանք են կատարում: Սա աշխատակցական կապի ամենաթոյլ ձևն է: Որոշ գէպքերում հանդէս է գալիս աւելի մաքնական բնաւորութիւն ունեցող կապ—հաւաքական կատարումն այն գործերի, որոնք առանձին մարդու համար խիստ դժւարին են. օրինակ՝ միաբան պահպանութիւն որ և է ուժեղ գազանից, նրանց որսալը և այլն:

Այնուհետև ցեղական խմբի մէջ խիստ վաղ արդէն երևաց աշխատանքի բաժանում: Սկզբնապէս նա հիմնուում է սեւի և հասակի ֆիզիօլոգիական զանազանութիւնների վրայ: Որսորդութիւնը հասակաւոր տղամարդկանց զբաղմունք էր հանդիսանում, պտուղներ հաւաքելը—կանանց ու երեխաների և այլն:

Աշխատանքն անհատների մէջ բաշխելը նրանց անձնական քմահաճոյքի գործը չէր կարող լինել. բնութեան դէմ վարած ծանր կռիւլը

չէր թոյլ տալիս այդ. անհրաժեշտ էր աշխատաւորների գործողութիւնները խստօրէն համաձայնեցնել, որպէսզի ոյժերի ապարդիւն վատնումն չլինի: Աշխատանքը կազմակերպւած էր ցեղական խմբի ընդհանուր կամքով, համաձայն նրա ընդհանուր շահերին:

Նախնական ցեղական միութեան զարգացումի ընթացքը ներկայումս մօտաւորապէս կարելի է վերականգնել և ամենաընդհանուր դրծերով:

Յեղական խումբն իւր նախնական ձևով, հաւանօրէն, բաղկացած էր կլին—մօրից և նրա երեխաներից, որոնց, փոքր հասակում, անհրաժեշտ է մօր օգնութիւնը: Ժամանակի ընթացքում աշխատակցութեան օգուտներն այդպիսի ընտանիքի կապն աւելի ամրացրին: Երեխաներն արբունքի համեմուց յետոյ էլ չէին հեռանում մօրից: Միատեղ ապրելու սովորութիւնը զարգացաւ. մարդիկ շարունակ աւելի ձգտում էին միատեղ մնալ: Յեղական խմբերն աճեցին, ի հարկէ, մինչև այն սահմանները միայն, որոնք տեխնիկայի զարգացումն են տալիս. Իւր չափերի մէջ այդ սահմաններից անցնելով՝ ցեղն անխուսափել արէն քայքայւում էր:

3. ԲԱՇԽՄԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՁԵՒԵՐԸ

Նախնական ցեղական խմբի բաշխման ձևերը լիովին համապատասխանում էին նրա արտադրական յարաբերութիւններին:

Եթէ արտադրութեան մէջ աշխատանքի բաշխումը կախւած էր ոչ թէ անհատական, այլ հաւաքական կամքից, ուրեմն այդ աշխատանքի արդիւնքի բաշխումն էլ ամբողջ խմբի գործը պէտք է լինէր: Խումբը իւրաքանչիւրին տալիս էր իւր կարիքների համաձայն: Խմբի համար անդամներից մէկն ու մէկին անհրաժեշտից պակաս տալն անհնար էր, որովհետև այդ կերպ գործնէութիւնը կորստի կըմատնէր ցեղի անդամ-խմբին և կըթուլացնէր խումբը. իսկ որ և մէկին անհրաժեշտից աւելի բաժին հանելը հնարաւոր էր գուցէ շատ հազւագիւտ դէպքերում միայն, իսկ առհասարակ այդ թոյլ չէին տալիս արտադրութեան չնչին զարգացումն ու յաւելիալ աշխատանքի բացակայութիւնը, (այսինքն՝ ապրուստի համար անհրաժեշտ միջոցներից աւելի արտադրող աշխատանքի):

Հետևապէս նախնական բաշխումը կազմակերպւած կոմունիստական բնաւորութիւն ունէր: Մասնաւոր անհատական սեփականութեան հետքն իսկ չկար: Ինչ որ ընդհանուր ոյժով արտադրւում էր, ընդհանուրի մէջ էլ բաշխւում էր և յետոյ իսկոյն գործածւում: Կուտակումն չկար:

4. ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Ցեղական խմբի մէջ անհատի դրուժիւնը շատ անգամ պատկերացել է խիստ զբաւիչ տեսքով՝ տէրերի և ստրուկների բացակայութիւն, բաշխման մէջ հաւասարութիւն, բոլոր փոխադարձ յարաբերութիւնների մէջ եղբայրութիւն: Կթւար, թէ անհա մարդկային ոյժերի արագ զարգացման, հասարակութեան կեանքի բոլոր ճիւղերի յառաջադիմութեան բոլոր պայմաններն արդէն գոյութիւն ունեն: Սակայն իրականութեան մէջ բոլորովին այդպէս չէր. գիտութեանը ծանօթ ոչ մի հասարակութիւն այժից չէր ընկնում այդպիսի լճացումով, կեանքի ձևերի այդպիսի անշարժութեամբ, որքան նախնական կոմունիստականը:

Ցեղական հասարակութիւնը չէր ճանաչում տէրեր և ստրուկներ: Բայց նա՛ չգիտէր և ազատութիւնը: Մարդը գտնուում էր ամենածանր ստրկութեան մէջ, որպիսին, ընդհանրապէս, հնարաւոր է: Նրան հարստահարում էր բնութեան դաժան իշխանութիւնը, որի առաջ նա անպաշտպան էր և որին նա չէր սովորել յաղթել: Արտաքին աշխարհի տարերային ոյժերը ծաղրում էին նրա ջանքերը, իւրաքանչիւր քայլափոխում խաղում էին նրա բազրի հետ: Նրանց կոյր քրմահաճոյքն աւելի դաժան էր, քան յետագայում երբ և իցէ մարդու գիտակցական քմահաճոյքը:

Բաշխման մէջ տիրապետում էր հաւասարութիւն: Բայց ի՞նչ կար բաշխելու: Հասարակական աշխատանքի արդիւնքներն այնքան չնչին էին, որ ամենախղճուկ, անզարգացած կարիքների դէպքում հազիւ կարող էր խումբը պահել իւր գոյութիւնը: Նախնական մարդկանց նիւթական դրութիւնն այնպէս էր, որ ժամանակակից չքաւորութիւնը նրա հետ համեմատած—հարստութիւն է:

Նախնական եղբայրութիւնը, փոխադարձ օգնութիւնն ու պաշտպանութիւնը նախնական մարդկանց մէջ իրօք բաւականն սերտ ու ամուր կապ էին հանդիսանում: Սակայն այդպիսի յարաբերութիւնները ցեղական խմբի նեղ սահմանից դուրս չէին գալիս: Որ և է ցեղին չպատկանող մարդն այդ փոքրիկ հասարակութեան անդամների կողմից ոչ մի օգնութեան վրայ չէր կարող յոյս դնել: Ընդհակառակը, աւելի շուտ նրան թշնամի էին համարում և շատ անգամ որսում էին նրան, որպէս գազանի:

Բնութեան իշխանութիւնը սարսափելի դժւարացնում էր զարգացումը, ստիպում էր մարդկանց՝ վատնել բոլոր ոյժերը կեանքի կոպիտ և անմիջական կուբի համար: Հաւասարաչափ բաշխումը, ցածր տեխնիկայի արդիւնքը և յաւելեալ աշխատանքի բացակայութիւնը թոյլ չէին տալիս, որ գոնէ աւանձին անհատներ ընդարձակէին իրանց

կարիքները և այդպիսով, մեծացնելով իրանց անհատական էներգիան, զարգանալու ընդունակութիւնը, կարողանային զարկ տալ հասարակական յառաջադիմութեանը: Յեղի անդամների սերտ փոխադարձ կապը և նրանց միջի հոգեկան տարբերութիւնների կատարեալ բացակայութիւնն այնտեղ հասցրեց, որ անհատը բոլորովին անընդունակ էր առանձնանալ իւր խմբից և նայել իւր վրայ, իբրև մի առանձին միաւորի: Մարդը չունէր իր սեփական կամքը: Գոյութիւն ունէր ցնդի կամքը. դա ոչ թէ միայն կենդանի եղածների կամքն էր, այլ և դեռ աւելին—մեռածների կամքը: Հարիւրաւոր և հազարաւոր տարիներ շարունակ, համարիտ անփոփոխ, մէկ սերնդից միւսին են փոխանցել կեանքի կուբի գործողութեան նախնական եղանակները, փոխադարձ յարաբերութիւնների ձևերը, մտածողութեան եղանակները: Անշարժ սովորութեան մէջ մարմնացած անցեալը թագաւորում էր ներկայի վրայ: Իսկ կեանքի այն մանր-մունք մասնաւորութիւնների մէջ, որոնք չէին մտնում սովորոյթի շրջանակը, անհատն ընդունակ չէր անկախ հանդէս գալու և ամբողջովին ենթարկուում էր խմբին:

Հազարաւոր սերունդների մէջ սովորոյթների անդրդուլիութիւնը քարացման աստիճանի է հասնում: Բոլոր նորութիւնները, կեանքի և գիտակցութեան սովորոյթի ձևերին հակասող ամեն ինչ երկիւղ է ներշնչում և տանջանք պատճառում: Նախնական մարդկութեան հոգեբանութիւնն ամեն մի զարգացման ամենամեծ խոչընդոտ է հանդիսանում:

Բայց այս դեռ քիչ է: Զարգանալու համար անհրաժեշտ է նիւթը: Որքան խղճուկ է մարդկային հոգեկանը, որքան պակաս գիտակցական է մարդկանց յարաբերութիւնը դէպի իրանց շրջապատը, այնքան քիչ է յառաջադիմութեան հնարաւորութիւնը. գիտակցութիւնը յառաջադիմութեան գլխաւոր գործիքն է, իսկ նախնական մարդու մէջ գիտակցութիւնը սաղմնային դրութեան մէջ էր:

Այն ժամանակների մարդու ամբողջ հոգեկան պաշարն անկապ գործնական ծանօթութիւնների մի չնչին քանակութիւն էր՝ աշխարհի մասին բազմաթիւ, կատարեալ ֆանտաստիկական երևակայութիւններ մի թանձր զանգւածի մէջ խճողւած: Հոգեկան ապարատի անկատարութիւնն այն հետևանքն է ունենում, որ զիտողութիւններից արած անճիշտ եզրակացութիւնները տիրապետում են ճիշտերի, իսկ ֆանտաստիկայի պտուղները—գիտակցութեան դրական արդիւնքների վրայ:

Բնութեան իշխանութեան տակ գտնւելով, մարդը ոչ միայն ոյժ չունէր թափանցելու նրա գաղտնիքների մէջ, այլ նոյն իսկ զրկւած էր այն հարցասիրութիւնից, որը կստիպէր մարդուն այդ բանին ձգտել: Նա չէր տարբերում արտաքին աշխարհում կենդանին ու մեռածը և հէնց իւր մէջ—անգիտակցական ու գիտակցականը: Բնութեան բոլոր առարկաներն ու բոլոր երևոյթները նրան միակերպ էին երևում:

արևը, որ նրան տաքացնում էր, քարը, որին խփելով վիրաւորում էր իւր ոտքը, գազանը, որ նրա վրայ էր յարձակւում, մարդը, որի հետ նա ընդհարւում էր, այս բոլոր փաստերի մէջ նա տեսնում էր միայն գործողութիւն, միայն ոյժ, որը նրան կամ օգտակար է կամ վնասակար: Իրերի յարաբերութիւններն ու մարդկանց յարաբերութիւնները նրան բոլորովին միասնասակ էին երևում: Հետևապէս, գիտակցութեան ծայրայեղ անբաւարարութիւնից բղխեց ընտելեան մասին այնպիսի հայեացք, որ իւր արտաքին ձևով ժամանակակից գիտական դատողութիւնն է յիշեցնում: Վայրենու համար ամեն ինչ բնական էր, որովհետև նրա թոյլ մտածողութիւնը գերբնականի մասին եղած մտքից աւելի ցածր էր:

Բիթամտութիւն, նեղ հայեացքներ, անյաղթելի զգաւնք դէպի ամեն մի նոր բան, գիտակցութեան ծայրայեղ խեղճութիւն—այսպէս են նախնական հոգեբանութեան հիմնական գծերը, որոնք, առաջին հայեացքից, նիւթական և հոգևոր կեանքի զարգացման ամեն մի հնարաւորութիւն ոչնչացնող են երևում: Սակայն, թէև անապին դանդաղութեամբ, այնուամենայնիւ, զարգացումը կատարւում էր: Ամեն մի յառաջագիմութեան առաջն եղած տարերային ընդլիմադրութիւնը, որ ներկայացնում էր նախնական հոգեբանութիւնը, տարրերային ոյժերը միայն վերացնել կարողացան:

5. ՉԱՐԳԱՅՄԱՆ ՈՅԺԵՐԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԷՉ

Ցեղական խմբի չափերը, ինչպէս արդէն պարզւած է, խիստ սահմանափակւում են աշխատանքի արտադրողականութեան մակերևոյթով: Արտադրութեան որ և է եղանակների դէպքում խումբն անհրաժեշտօրէն պէտք է քայքայւի, հէնց որ անեցողութեան ոյժը կը շատացնէ խմբի անդամների թիւը որոշ սահմանից աւելի: Մի խմբի փոխարէն հանդէս կը գան երկուսը և սրանցից իւրաքանչիւրը, շահագործութեան առանձին հրապարակ գրաւելով, կարող է դարձեալ աճել, բազմանալ մինչև նախկին սահմանը, որպէսզի նորից երկուսի բաժանւի և այլն: Այդպիսով, անեցողութիւնը ձգտում է որ և է երկրի բնակիչների թիւն անվերջ շատացնել: Բայց երկրի հրապարակը սահմանափակւած է և որոշ արտադրութեան եղանակների ժամանակ որոշ քանակի մարդկանց միայն կարող է ապրուստի միջոցներ մատակարարել: Երբ երկրի որսորդ բնակիչների խտութիւնը հասնում է, օրինակ՝ իւրաքանչիւր քառակուսի մղոնի վրայ 20 մարդու, յետագայ անեցողութիւնն արդէն չափազանց է լինում և աճող բնակչութեան մէջ կենսական միջոցների պակասութիւն է առաջանում: Այդ, այսպէս ասած, բացարձակ գերաբնակչութիւն է առաջանում: Այդ, այսպէս

Բացարձակ գերաբնակչութիւնն առաջացնում է սով, հիւանդութիւններ, սաստիկ մահացութիւն—անապին տանջանքներ: Տանջանքի

ոյժը կամաց-կամաց յաղթում է սովորոյթի բուժ անշարժութեանը և տեխնիկայի յառաջագիմութիւնը հնարաւոր է դառնում: Սովը ստիպում է դէն ձգել ամեն մի նորութեան դէմ եղած զգաւնքը և սկսում են զարգանալ կեանքի կուլի նոր եղանակների սաղմերը, ինչպէս նրանք, որոնք աւելի առաջ արդէն յայտնի էին, բայց ընդհանուրի կողմից չէին գործադրւում, այնպէս և նրանք, որոնք դեռ նոր են յայտնագործւում:

Չարգացման մի կարևոր արգելքը վերացւած է երևում: Մնում է միւս արգելքը—հոգեբանութեան աղքատութիւնը, ծանօթութիւնների թերութիւնը և ընտելեան դէմ կուելու համար գիտակցօրէն նոր եղանակներ փնտռելու անընդունակութիւնը: Սրա շնորհիւ զարգացումը գնում է անգիտակցօրէն, տարերային կերպով, այնպիսի դանդաղութեամբ, որպիսին ժամանակակից մարդը դժւարութեամբ կարող է երևակայել:

Տեխնիկայի բարելաւումը սմանակաւորապէս է թեթևացնում միայն այն տանջանքները, որոնք առաջ են գալիս բացարձակ գերաբնակչութիւնից: Հասարակական աշխատանքի նոր եղանակներն էլ իրանց հերթին թերի են երևում, երբ բնակչութիւնն աւելի ևս շատանում է, և սովի ոյժը նորից ստիպում է մարդկանց մի քայլ ևս անել զարգացման ճախարհին:

Այդպէս են նախնական հասարակութեան զարգացման պատճառները: Արտադրութեան ձևերի անշարժութիւնը, վաղ թէ ուշ, անխուսափելիօրէն տանում է բացարձակ գերաբնակչութեան և սա իւր հերթին քանդում է այդ անշարժութեան հիմքերը: Նախնական հասարակական հոգեբանութեան սոսկալի պահպանողականութեան (КОНСЕРВАТИЗМЪ) ժամանակ տեխնիկայի յառաջագիմութիւնը, ազգաբնակչութեան համեմատ, համարեա միշտ զօրեղ կերպով յետ էր մնում և կենսական միջոցների պակասութիւնը, այսպէս ասած, խրոնիկական է հանդիսանում:

Բացարձակ գերաբնակչութեան առաջին հետևանքներից մէկը հանդիսանում է, սովորաբար, ցեղական հասարակութիւնների փոխադարձ խիստ կուլի ու ամբողջ ցեղերի՝ դէպի նոր երկիրներ գաղթելը: Այդպիսի գաղթականութիւնը նախնական մարդկանց բուժ հոգեկանի համար այնքան դժւար գործ է, որքան տեխնիկայի իւրաքանչիւր փոփոխութիւնը:

## II. ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ-ՅԵՂԱ-ԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ

### 1. ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Բացարձակ գերաբնակչութեան ոյժը ստիպում էր նախնական մարդկանց սակաւ առ սակաւ կատարելագործել գործիքներն ու նախնական-որսորդական արտադրութեան գործողութեան միջոցները. և հէնց այդ ոյժը ժամանակի ընթացքում ստիպեց նրանց դուրս գալ այդ արտադրութեան սահմաններից և անցնել կեանքի կուրի նոր միջոցներին, որոնք, այդպիսով, զգալի կերպով հեռացնում են մարդկային գոյութեան կախումը արտաքին բնութեան տարերային քմահաճոյքներից:

Երկրագործութիւնն ու անասնապահութիւնն առաջացան զանազան երկրներում, ըստ երևոյթին, անկախ և, սկզբում, մէկը միւսից առանձին, ենթարկւած տեղական բնական պայմաններին:

Երկրագործութեան գիւտը, ամենայն հաւանականութեամբ, կարելի է ենթադրել իբրև մի ամբողջ շարք «պատահական» փաստերի արդիւնք, որոնք անհրաժեշտօրէն պետք է ժամանակ առ ժամանակ կրկնէին: Իբրև պաշար հաւաքած վայրերի հացարոյսերի հատիկները չգիտութեամբ ցրելով, մարդ, մի քանի ամսից յետոյ, նոյն տեղում աճած հասկեր է գտնում: Պէտք է, որ այս երևոյթը հազար անգամ անհասկանալի մնացած լինէր. սակայն, վաղ թէ ուշ, երկու երևոյթների կապը կարգաւորեց վայրենու խելքի մէջ և անհրաժեշտութիւնն այդ կապից օգտուելու միտք յղացաւ: Գիւտն ամբողջովին կարող էր կանանց միջոցով եղած լինել, որոնք երեխաների պատճառով աւելի պակաս թափառական կեանք էին վարում, քան որսորդ տղամարդը, և աւելի զբաղում էին պտուղներ ու հատիկներ հաւաքելով:

Նախնական երկրագործութիւնը, իւր կոպտութեամբ ու գործողութեան միջոցների յուսալիութեամբ, շատ քիչ նմանութիւն ունէր ներկայ երկրագործութեան հետ: Օրինակ՝ խոփը բաւականին ուշ ժամանակի հնարք է. համեմատաբար դեռ ոչ վաղ ժամանակներում վարելու գործողութիւնը ճիւղերը կտրատած ծառի բունով էր կատարում, միայն փայտի ծայրը սրացրած էր, որն և, գետնի վրայով քաշելիս, ակոս էր փորում. իսկ երկրագործութեան ամենավաղ գործիքը ծայրը սրած մահակն էր, որի օգնութեամբ հատիկների համար փոսիկներ էին փորում: «Ներկայ» նահապետական երկրագործութիւնը նոյնիսկ առանց այդպիսի յարմարութիւնների էր կառավարում:

Ինչ վերաբերում է անասնապահութեան, ամենայն հաւանականութեամբ, նա առաջացաւ գազանների զւարճութեան համար ընտելացնելուց: Դեռ այժմ էլ շատ վայրերին, թափառական որսորդներ,

որոնք զարգացման ամենացածր աստիճանի վրայ են կանգնած և ներկայ անասնապահութեան մասին ոչ մի գաղափար չունեն, սովորեցնում են շատ վայրերի կենդանիների, որոնցից ոչ մի նիւթական օգուտ չեն քաղում և որոնք նրանց համար, աւելի շուտ, նոյնիսկ ծանրութիւն են:

Երկրագործութեան նման՝ անասնապահութիւնն էլ գոյութեան որոշ ապահովումն տւեց մարդկանց և, ազատելով մարդկային ոյժերի մի մասը, թեթևացրեց, դիւրացրեց յետագայ զարգացումը:

Երկրագործութեան և անասնապահութեան նախնական ձևերը, նոյնիսկ առանձին վերցրած, 3—4 անգամ աճեցրին երկրի բնակչութեան սահմանային մեծութիւնը (բարեխառն գոտու միջին պայմաններում մէկ քառակուսի մղոնի վրայ մինչև 70 մարդ):

Երկրագործութիւնն իւր զարգացման առաջին ժամանակներում վայրերի ցեղերի կեանքի թափառական եղանակը քիչ է փոփոխում— նա որսորդութիւնը լրացնող դեր է կատարում, և ցեղական խումբը, որսորդութեան պահանջներին ենթարկելով, սովորաբար շարունակում է մի տեղից միւսն անցնել, մնալով իւրաքանչիւր տեղում այնքան, որքան կարևոր է ցանքի, ցորենի հասնելու և հունձի համար: Ինչ վերաբերում է անասնապահութեանը, նա սկզբում, նոյնիսկ անհրաժեշտօրէն, տանում է դէպի թափառաշրջիկ կեանքը. անասունի համար հարկաւոր է արօտ և երբ արօտն ուժասպառ է լինում, մարդիկ պէտք է տեղերը փոխեն:

Ժամանակի ընթացքում բնակչութեան աճումն ստիպում է մարդկանց միացնել իրար հետ երկրագործութիւնն ու անասնապահութիւնը և անցնել նստակեաց կեանքի: Սա հնարաւորութիւն է տալիս կատաւաճեցնել երկրագործական գործիքները և երկրագործութեան մէջ բերագործել երկրագործական գործիքները: Աշխատանքի արտադրողականութեան գործադրել կենդանիների ոյժը: Աշխատանքի արտադրողականութեան աճեցողութիւնը մի երեք անգամ էլ բարձրացնում է բնակչութեան ամենամեծ խտութիւնը (միջակ կլիմայում մի քառակուսի մղոնի վրայ ամենամեծ խտութիւնը (միջակ կլիմայում մի քառակուսի մղոնի վրայ մինչև 200 մարդ): Այդ ժամանակահատից մարդու գոյութիւնը համեմատաբար աւելի ապահովւած է հանդիսանում և յաւելեալ աշխատանքը մշտական երևոյթ է դառնում:

### 2. ՅԵՂԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Հասարակական աշխատանքի արտադրողականութեան բարձրացումը հնարաւոր դարձրեց ցեղական խմբի զգալի աճեցողութիւնը. իսկ անասնապահութիւնը, մասնաւորապէս ստեղծելով տեղափոխութեան աւելի կատարեալ եղանակներ (ուղտերի, ձիերի և եղջերուների վրայ նստելով գնալ) և, հետևապէս, հասարակութեան կապերն աւելի

մեծ տարածութիւնները վրայ պահպանելով, աւելի ևս նպաստեց ցեղի սահմանները ընդարձակմանը: Այդպիսով, հասարակութեան քանակն սկսեց չափւել յաճախ արդէն ոչ թէ տանտեակ, այլ հարիւրաւոր մարդկանցով և, օրինակ՝ Արրահամ նահապետն իւր թափառական խմբի մէջ 417 զէնք կրելու ընդունակ մարդ կարող էր հաշւել:

Արտադրութեան քանիցս անգամ աճող ընդարձակութիւնն ու բարդութիւնը աշխատանքի բաժանման նոր ձևեր առաջացրեց: Սրանցից մէկն ապագայ զարգացման համար ամենամեծ նշանակութիւն ունի. դա աշխատանքի բաժանումն է, որ կազմակերպում է արտադրութիւնը:

Երբ խմբական արտադրութիւնը չնչին քանակութեամբ էր, վերին աստիճանի պարզ և միմիայն ամենամօտիկ ապագայի անմիջական կարիքների համեմատ հաշւը և՛, այն ժամանակ կազմակերպչական աշխատանքը դեռ կարող էր ընդհանուրի գործը լինել, դեռ կարող էր կատարողական աշխատանքի հետ միասին կատարել, որովհետև նա խմբի անդամների միջակ հասկացողութեան չափին չէր գերազանցում: Բայց երբ հարցը գալիս է նրան, որ հարիւրաւոր տարբեր աշխատանքներ նպատակայարմար կերպով պէտք է բաշխել առանձին աշխատաւորների մէջ, առաջուց հաշւել խմբի մի քանի ամուսն կարիքները, նրանց հետ հոգատարութեամբ համաչափ դարձնել հասարակական-աշխատանքի էներգիայի վատնումը, ուշադրութեամբ վերահսկել այդ վատնումների վրայ, այն ժամանակ կազմակերպչական գործնէութիւնն անհրաժեշտօրէն բաժանում է կատարողական աշխատանքից, իւրաքանչիւր առանձին անհատի համար վերոյիշեալ երկուսի միատեղ կատարելն անհնարին է դառնում. սա այն ժամանակւայ մարդկանց մտաւոր ոյժի միջակ չափին բաւականին գերազանցում է. կազմակերպչական աշխատանքը դառնում է ամենափորձառու, ամենագիտուն մարդկանց մասնագիտութիւն: Ամեն մի առանձին խմբի մէջ նա, վերջապէս, կենտրոնանում է մի մարդու, սովորաբար, ցեղի գլխաւորի, նահապետի ձեռքը:

Կազմակերպողին հնազանդում են, մի բան, որ նրա դերի հէնց էութիւնից է բղխում: Այդպիսով, արտադրութեան շրջանում առաջանում են անհատական իշխանութիւնն ու հպատակութիւնը—աշխատանքի բաժանման մի առանձին ձևը, որ հասարակութեան ապագայ զարգացման համար անագին նշանակութիւն ունի:

Առանձին խմբերի հայեցակէտով, պատերազմի վրայ պէտք է նայել, որպէս արտադրութեան՝ արտաքին ընութեան դէմ վարած հասարակական-աշխատանքի կուր մի առանձին ճիւղի, որովհետև թշնամի մարդիկ հասարակութեան համար արտաքին ընութեան տարբերն են հանդիսանում ճիշտ այնպէս, ինչպէս գայլերը կամ վագրերը: Նահապետական-ցեղական էպոխայում արտադրութեան այդ ճիւղը կարևոր նը-

շանակութիւն է ստանում, որովհետև ընակչութեան առաջանից աւելի մեծ խտութիւնը մարդկանց ընդհարումներն աւելի յաճախակի դարձրեց. մանաւանդ թափառական-անասնապահներն արօտի համար շարունակ իրար հետ կուռում են: Պատերազմները խիստ օժանդակում են կազմակերպողի իշխանութեան զօրեղանալուն ու ամրապնդելուն: Կատերազմները պահանջում են համախմբւած կազմակերպութիւն, խիստ կարգապահութիւն. կուր ժամանակ առաջնորդին անպայման հնազանդելիլը կամաց-կամաց փոխանցում է նաև խաղաղ ժամանակը: Շատ հաւանական է, որ հէնց պատերազմների ու որսորդութիւնների շրջանում առաջացաւ նախնական կազմակերպչական իշխանութիւնը, որը յետոյ աստիճանաբար տարածւեց արտադրութեան միւս ճիւղերի վրայ այն չափով, ինչ չափով որ աճում էր արտադրութիւնը: Կազմակերպչական իշխանութեան շրջանի այդպիսի ընդարձակմանը պէտք է որ օժանդակւած լինի, մանաւանդ, այն փաստը, որ այս կամ այն ցեղի ձեռնարկութիւնից ստացւած աւարի բաժանումը պատերազմներն ու որսորդութիւնները կազմակերպողից էր կախւած. իսկ սա, ինքն ըստ ինքեան, զօրեղ անտեսական ոյժ և խմբի մէջ հեղինակութիւն էր տալիս նրան:

Ըստ երևոյթին, կազմակերպչական աշխատանքը ներկայանում է, ընդհանրապէս, բարդ (ըստ որակի) աշխատանքի պատմականապէս ամենավաղ ձևը: Նախնական-կոմունիստական խմբի մէջ, ուր իւրաքանչիւրը կարող էր անել ամեն գործ, ինչ որ ուրիշները, իւրաքանչիւրի աշխատանքին կարելի է նայել, որպէս ներկայ հասարակ աշխատանք. ճիշտ այդպէս էլ նահապետական-ցեղական խմբի մէջ ներկայանում է մեծամասնութեան կատարողական աշխատանքը: Միայն կազմակերպչի դերը չի կարող կատարել անխտիր այս կամ այն անձնաւորութիւնը. նա տարբեր, թերևս մասամբ ոչ բոլորովին սովորական, փորձառութիւն է պահանջում:

Կազմակերպչը, գոնէ սկզբում, իւր գործնէութեան մէջ ամբողջովին ցեղի ընդհանուր շահերով է առաջնորդւում: Հիմնւելով՝ մի կողմից խմբի կարիքների ընհանուր գումարի և միւս կողմից խմբի կոլեկտիվութեան տակ գտնւած աշխատանքի ընդհանուր գումարի վերայ, նա բաշխում է գործերը, կարգադրում է աշխատակցութեան ձեւերն ու աշխատանքի բաժանումը: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այդ ամբողջ բարդ գործնէութիւնը մեծամասնութեամբ նա բոլորովին տարբերային կերպով է կատարում, հետեւելով հաստատւած սովորութեանը, նախնիների օրինակին. միայն արտադրութեան համեմատաբար աւելի մանր մասնաւորութիւնների մէջ, որոնց նկատմամբ սովորութիւնն ուղիղ ցուցմունքներ չի տալիս, կազմակերպչն ստիպւած է գործել անկախ, սեփական հասկացողութեամբ:

Կազմակերպչական գործնէութեան ողջ բարդութիւնը ժամա-

նակի ընթացքում ցեղական խմբի կազմի մէջ նոր փոփոխութիւններ առաջ բերեց: Խմբի և նրա արտադրութեան ընդարձակումը կազմակերպչական գործն ամբողջութեամբ մի մարդու կատարելն անհնար դարձրեց. նրա մի մասը, անհրաժեշտօրէն, կամուսց-կամաց անցաւ խմբի միւս անդամներին, սովորաբար, հասակաւոր և փորձառու մարդկանց: Իրանցից իւրաքանչիւրը թէև երկրորդական և ստորադասեալ կազմակերպիչ էր հանդիսանում ցեղական խմբի մի մասի համար և, հասկանալի պատճառներով, հէնց այն մասի համար, որի հետ կապում էին նրան ցեղական ամենասիրտ յարաբերութիւնները: Այդպիսով, ցեղի սահմաններում սկսեցին քիչ-քիչ առանձնանալ մասնաւոր կազմակերպիչների շուրջը համախմբւած քնտանիքներ, որոնց գլուխը կանգնած էր նահապետը: Բայց նահապետական էպոխայում այդ առանձնացումը բարձր աստիճանի չհասաւ. խմբերի միաբանութիւնը գերակշռում էր նրա մասերի առանձնութեանը:

Յատուկ նշանակութիւն ձեռք բերեց աստիճանաբար նահապետի ընտանիքը: Այդ ընտանիքի անդամներն ամենից մօտիկ էին կանգնած ընդհանուր կազմակերպչական գործնէութեանը և ամենքից հեշտ կարող էին դաստիարակել նրան պէտքական լինելու համար: Ուստի ցեղի նոր կազմակերպիչը ամենից յաճախ նրանց մէջէն էր ընտրուում, երբ հինը մեռնում կամ անպէտքանում էր: Բնական է, որ նահապետները ձգտում էին ամրապնդել իրերի այդպիսի դրութիւնը և, առաջուց, կազմակերպչական դերի համար պատրաստում էին իրանց ամենամօտիկ ազգականներին, իսկ խմբի միւս անդամներին—այդ դերի համար իրանց պատրաստածներին ընտրելու: Այդ ջանքերի յաջողութիւնը զնալով աւելի մեծանում էր. նոր կազմակերպչի ընտրութիւնը քիչ-քիչ դատարկ ձևականութիւն դարձաւ և նահապետը փաստօրէն սկսեց ինքը նշանակել իւր յաջորդին—ընտանիքի մէջ կազմակերպչական դերը ժառանգական դարձաւ:

Այդպէս են նահապետական ցեղի ներքին արտադրական յարաբերութիւնները: Նահապետական շրջանում սրանցից բացի, քիչ նշանակութիւն չեն ձեռք բերում նաև մարդկային աշխատանքի ցեղամիջեան կապերը:

Ցեղի բաժան-բաժան լինելով՝ նորից կազմակերպւող խմբերի միջի կապը, սովորաբար, համարեա լիովին կտրւում է: Որոշ դէպքերում, երբ առանձին խմբի ոյժերը կարող էին անբաւարար դուրս գալ, նոյնացեղ խմբերը միանում էին միաբան գործնէութեան համար—ներս խուժող օտարացեղերի դէմ պահպանելու, մեծերամ կենդանիների որսորդութեան և այլն: Այդօրինակ ձեռնարկութիւնների գլուխն է անցնում կամ աւագ-կազմակերպիչների խորհուրդը և կամ սրանցից ընտրւած մի ուրիշ առաջնորդ:

Ի շարս այդպիսի կազմակերպւած աշխատակցութեան, քիչ-քիչ

խմբերի մէջ երևան է գալիս արտադրական կապի մի ուրիշ ձև—աշխատանքի անկազմակերպ հասարակական բաժանումն: Որովհետև յաւելեալ աշխատանքը բաւականին սովորական է դառնում, իսկ երկրամշտական երևոյթ, ուստի ծագում է արտադրութեան աւելորդը, պահեստները: Շնորհիւ ընական տարբեր պայմանների, որոնց մէջ ապահեստները: Շնորհիւ ընական տարբեր պայմանների հանգամանքների, բուն առանձին խմբեր, կամ շնորհիւ պատահական հանգամանքների, կայդ պահեստները տարբեր խմբերի մէջ տարբեր են լինում: Շաա կարելի է, որ փոխարդարձաբար ազգական խմբերի՝ այդ աւելորդները մէկը միւսին զիջելու սովորութիւնից առաջանում է սկզբնական փոխանակութիւնը: Փոխանակութեան մէջ խմբերի միջև անկազմակերպ արտադրական կապ է արտայայտուում. փաստացի կերպով մի խումբ արտադրում է արդիւնքը ո՛չ թէ մենակ իւր համար, այլ մասամբ նաև արտադրում է արդիւնքը ո՛չ թէ մենակ իւր համար. արտադրութիւնը խմբերի, իսկ նրանք նոյնպէս մասամբ սրա համար. արտադրութիւնը նրանց մէջ որոշ չափով ընդհանուր է ներկայանում, բայց այդ ընդհանուր արտադրութեան համար կազմակերպութիւն չկայ—իւրաքանչիւր խմբի աշխատանքը լիովին ինքնուրոյն է կազմակերպւած:

Աշխատանքի հասարակական բաժանման այս ձևը նահապետական-ցեղական յարաբերութիւնների էպոխայում առանձին համայնքների կեանքի մէջ մեծ դեր չէր խաղում. անհրաժեշտ արդիւնքների ամենամեծ մասը իւրաքանչիւր ցեղական տնտեսութիւն անկախ արտադրում է իւր համար:

Այդպիսով, արտադրական յարաբերութիւնների հիմնական դժերը, որ տարբերում են նահապետական ցեղը նախնական-կոմմունիստականից, հետեւեալ հետեւանքն են ունենում. կազմակերպչական աշխատանքն անջատուում է կատարողականից, աշխատակցութիւնն ընդլայնուում է և առաջանում է աշխատանքի բաժանում ինչպէս խմբի ներսում, այնպէս էլ, աւելի փոքր չափով, խմբերի միջև, ըստ որում, շնորհիւ յաւելեալ աշխատանքի պատրաստի լինելուն, ըսկզբում սկսում է մի քիչ նկատելի դեր խաղալ աշխատանքի բաժանման այն ձևը, որ արտայայտուում է փոխանակութեամբ:

Այդ բոլոր ձևերը շատ դանդաղ են դասաւորուում և նրանց լրիւ զարգացումը հանդէս է գալիս միայն հաստատարնակ կեանքի էպոխայում, որ հիմնւած է երկրագործութեան և անասնապահութեան միացման վրայ: Այնտեղ, ուր այդպիսի կապակցութիւն չկայ, այդ դժերն աւելի աղօտ են հանդէս գալիս: Մասամբ թափառաշրջիկ-անասնապահները կեանքի նոր ձևերն աւելի արագ են զարգացնում, քան զուտ երկրագործները. այս երևոյթը կախւած է նախ՝ անասնապահութեան աւելի շատ արտադրողականութիւնից, համեմատած նախնական երկրագործութեան հետ. երկրորդ՝ թափառականների աւելի շարժական կեանքից, որ առաջ է բերում մարդկանց մէջ յաճախակի ընդհարումներ, ու յարաբերութիւններ:

3. ԲԱՇԽՄԱՆ ՁԵՒԵՐԸ ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ-ՅԵՂԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ա. Կազմակերպւած բաշխումն

Ինչ չափով որ արտադրութեան մէջ կազմակերպչական գործու- նէութիւնը խմբից անցաւ իւր ամբողջութեամբ առանձին անձի—նա- հապետին, նոյնքան էլ, անհրաժեշտաբար, նրա ձեռքն անցաւ բաշխումը կազմակերպող իշխանութիւնը: Միայն կազմակերպիչն էր ընդունակ անսխալ և ընդհանուրի շահերին համաձայն վճռել հետևեալ հարցերը. հասարակական աշխատանքի ո՞ր մասը կարելի է անմիջապէս գործածել, ո՞րը ծախսել ապագայ արտադրութեան վրայ և ո՞րը պահել ապագայի համար իբրև պահեստ. միայն նա, ի նկատի ունենալով խմբի առան- ձին անդամների դերը ընդհանուր արտադրութեան մէջ, կարող էր մաս հանել իւրաքանչիւրին իսկապէս այնքան, որքան անհրաժեշտ էր այդ դերը յաջող կատարելու համար:

Յեղական խմբի մեծամասնութիւնը որքան աւելի էր ձեռք վեր- ցնում կազմակերպչական գործնէութեան մէջ մասնակցութիւն ունե- նալուց և բաշխման վերահսկողութիւնից, այնքան նահապետի՝ յաւե- լեալ արդիւնքը տնօրինելու իրաւունքն աւելի անպայման էր դառնում: Որքան յաւելեալ աշխատանքի ընդհանուր՝ գումարն աճում էր, այնքան աւելի նկատելի էր դառնում արդիւնքի այն բաժինը, որ կազմակեր- պիչն էր գործածում իր անձնական գործածութեան համար— հետևապէս աճում էր նաև վերջինիս և խմբի մնացած անդամների մէջ բաշխման անհաւասարութիւնը: Այդ արդէն շահագործութեան սաղմն է, բայց մի- այն սաղմը. կազմակերպչական աշխատանքի պէս ծանր գործ կատարող մարդու վրայ էապէս շատ աւելի ծանր աշխատանք էր դրւած, քան որ և է ուրիշ մէկի և, անհրաժեշտօրէն, նա զարգացրեց աւելի լայն կա- րիքներ: Շահագործութեան չափերն արդէն խիստ սահմանափակւած էին՝ շնորհիւ ընդհանուր աննշան արտադրութեան և արդիւնքների պա- կաս զանազանատեսակութեան: Ինքը կազմակերպիչը պէտք է բաւակա- նանար սպասման նոյնպիսի միջոցներով, ինչպէս ուրիշները. իսկ եթէ նա արտադրութեան միջից իւր համար լաւն էր ջոկում, յամենայն դէպս, չէր կարող խմբի որ և է անդամից տասն անգամ շատ միս կամ հաց ուտել: Ծշմարիտ է, նա կարող էր ընդհանուր յաւելեալ արդիւնքի մի մասը ուրիշ խմբի հետ փոխել սպասման որ և է ուրիշ միջոցներով, բայց սա, շնորհիւ փոխանակութեան չնչին զարգացման, համեմա- տաբար աւելի քիչ էր պատահում:

Այնուհետև, այն դէպքերում, երբ առանձին ցեղական խմբերը միանում էին մի ընդհանուր ցեղական կազմակերպութեան մէջ՝ ուրիշ զանազան ընդարձակ ձեռնարկութիւնների համար, ընդհանուր աշխա- տանքի արդիւնքը (ընդհանուր որսորդութիւններ և պատերազմական աւար) բաշխւում է այն անձերի ձեռքով, որոնք կազմակերպել են այդ

իսկ ձեռնարկութիւնները—սովորաբար՝ մեծաւորների խորհրդի միջո- ցով: Խմբերի մէջ, այն ժամանակ, բաշխումը իւրաքանչիւր խմբի՝ ընդ- հանուր աշխատանքի մէջ մասնակցելու աստիճանի համապատասխան էր կատարւում:

Ընդհանրապէս բաշխման կազմակերպւած ձևերը այս էպոխա- յում տարբերւում էին աւելի նախնական ձևերից ոչ այնքան բաշխման և շահագործութեան անհաւասարաչափութեամբ, որքան բաշխումը կազմակերպող գործնէութեան առանձին մարդկանց ձեռքն անցնելով:

բ) Անկազմակերպ բաշխումն—փոխանակութեան զարգացումը

Երբ ցեղական խմբի մէջ աւելորդի արտադրութիւնը սովորական երևոյթ դարձաւ, այն ժամանակ երկու ցեղական համայնքների մէջ այդ աւելորդների աճեցողութեան համար բաւական եղաւ հետևեալ երկու պայմանների գոյութիւնը. տարբերութիւն նրանց արտադրած արդիւնքների մէջ և նրանց միջև բարեկամական յարաբերութիւններ (հասարակական կապ): Առաջին պայմանը սկզբում իրագործւում էր դիւաւորապէս արտադրութեան միջոցների տարբերութեան շնորհիւ. այդ միջոցները տրւում էին զանազան համայնքներին արտաքին բը- նութիւնից: Երկրագործական համայնքը, որի հողը ցորեն լաւ էր արտադրում, իսկ վուշ՝ վատ, փոխանակութեան էր մտնում ուրիշ հա- մայնքի հետ, որի հողը վուշ ցանելու համար աւելի յարմար էր, իսկ ցորենի համար՝ անպտղաբեր. թափառական-անասնապահ խումբը միս էր տալիս երկրագործների հացի փոխարէն և այլն: Երկրորդ պայ- մանն իրագործւում էր տարբեր համայնքների ցեղական տոհմական կապի մէջ, կապ, որ պահպանւում էր նրանց հաւաքական ձեռնարկու- թիւններով: Վերջերք, երբ փոխանակութիւնն աւելի զարգացաւ, ար- տադրութեան տարբերութիւններն սկսեցին հետզհետէ աւելի խիստ որոշւել ոչ միայն անմիջապէս տրւած բնական պայմաններով, այլ և արդէն կազմւած տեխնիկական ունակութեան անմիտեսակութեամբ. իսկ բարեկամական յարաբերութիւնները շատ անգամ կապւում էին և առանց տոհմական ցեղակցութեան գիտութեանը:

Փոխանակութիւնը իւր պատմական զարգացման մէջ կրեք ֆա- ղեր է անցնում, երեք տարբեր ձևեր է ընդունում:

Փոխանակութեան առաջին կամ հասարակ ձևը վերաբերում է այն շրջանին, երբ փոխանակութիւնը դեռ խիստ հազւագիւտ երևոյթ էր, գուցէ և հէնց նախնական կոմմունիզմի էպոխային: Պատահաբար իրար են հանդիպում երկու մարդիկ, սովորաբար, երկու ցեղական համայնքների ներկայացուցիչներ. նրանցից իւրաքանչիւրը փոխանա- կութեան համար ունի արդիւնք, որը, պատահաբար, հարկաւոր է լի- նում միւսին: Հրապարակի վրայ ընդամենը երկու արդիւնք կայ, օրի- նակ՝ կացին և ցորեն: Այդպիսի փոխանակութիւնը կարելի է հետևեալ կերպով պատկերացնել:

Մէկ կացինը հաւասար է երկու չափ հացահատիկի. կամ ուրիշ կերպ.

Մէկ կացնի փոխանակական արժէքը 2 չափ ցորեն է (մի արդիւնքի փոխանակական արժէք է կոչուում սովորաբար միւս արդիւնքի այն քանակութիւնը, որ տալիս են նրա փոխարէն):

Առաջին անգամ այստեղ արդիւնքներն ապրանք են դառնում, այսինքն՝ փոխանակութեան առարկաներ: Բայց այս էպոխայում նրանց ապրանքային դերը պատահաբար է երևան գալիս և արտադրողը, փոխանակութեան մէջ մտնելով, դեռ ընտրութիւն չի անում զանազան առարկաների միջև, որոնք կարող էր ձեռք բերել:

Փոխանակութեան երկրորդ, բարգաւաճ ձևը վերաբերում է յաջորդ շրջանին, երբ փոխանակութիւնը աւելի սովորական երևոյթ էր դարձել և մարդկանց միջի կապերը ընդարձակել էին: Միաժամանակ հանդիպում են ոչ թէ երկու, այլ աւելի շատ ապրանքներ: Վաճառողը գալիս է կացինով. նրան մի կողմից առաջարկում են երկու չափ հացահատիկ, միւս կողմից մի ոչխար, երրորդ կողմից 8 նետ և այլն: Նա կարող է ընտրութիւն անել զանազան ապրանքների մէջ. նրա առաջը շուկան է: Փոխանակութեան ձեռն արդէն այսպէս է.

Մի կացինը հաւասար է 2 չափ հացահատիկի

կամ 1 ոչխարի

կամ 8 նետի և այլն:

Փոխանակութեան երկրորդ ձևը ընդունակ չէ երկար ապրելու կեանքի մէջ և շուտով անցնում է երրորդ—զարգացած կամ փողային ձևին:

Կացին արտադրողը գնում է շուկայ և ուզում է իւր կացինը նետի փոխել: Սակայն շատ քիչ անգամ է այնպիսի զուգահիշումներ լինում, որ նետ ծախողին պէտք լինի հէնց կացինը, նոյնիսկ կարող է պատահել, որ այդ ժամանակ շուկայում նետ ամենևին չի լինի:

Կացին ծախողին ամեն կողմից առաջարկում են այնպիսի ապրանքներ, որ նրան հարկաւոր չեն. այստեղ 2 դանակ, այստեղ 1 ոչխար, մի ուրիշ տեղ 2 սպանած նապաստակ և այլն: Ի՞նչ անէ: Մտածում է, մտածում և առնում է ոչխարը: Նրա դատողութիւնը մտաւորապէս այսպէս է. «Թէև առայժմ բաւականին միս ունեմ, բայց ոչխարը կարող է ինձ մօտ մնալ մինչև այն ժամանակ, երբ պաշարս կվերջանայ. իսկ եթէ հանդիպեմ նետ ծախող մարդու, նա իւր նետերն աւելի շուտ ոչխարի հետ կփոխէ, քան կացնի. շատ հաւանական է, որ կացինը նրան հարկաւոր չի լինի, մինչդեռ ոչխարն ամեն մէկին պէտք է գալիս և առհասարակ տաւարը շուկայում ամենքն էլ մեծ ութխութեամբ կառնեն»: Հաշիւն արգարանում է. նետ ծախողն էլ, թերևս ճիշտ նոյնպիսի նկատումով, տալիս է նետերը ոչխարի փոխարէն: Որովհետև տաւարը ընդհանուրի կողմից խիստ պահանջուում է,

ուստի կամաց-կամաց շուկայում սովորութիւն է լինում տաւարի հետ փոխել ամեն տեսակ ապրանք, եթէ չի պատահում այն իսկ ապրանքը, որ հարկաւոր է գնողին: Նոյն իսկ սովորութիւն է լինում առիթ որոնել ուղղակի իւր ապրանքը տաւարի հետ փոխել և արդէն տաւարով գնել հարկաւոր արդիւնքը:

Տաւար-ապրանքը կատարեալ մի առանձին ապրանք է հանդիսանում, որը բոլորն էլ մեծ ուրախութեամբ են առնում և բոլորն էլ ձգտում են նրան: Ուղղակի փոխանակութիւնը չքանում է: Եթէ ամեն մի ապրանք պէտք է նախ տաւարի հետ փոխած լինի, որպէսզի յետոյ տաւարով կարելի լինի ուրիշ հարկաւոր ապրանք գնել, ուրեմն ակնհերև է, որ այդ ուրոյն ապրանքը—տաւարը—փոխանակութեան գործիք, ապրանքների շրջանառութեան գործիք է հանդիսանում:

Փոխանակութեան երրորդ ձևն ստացւում է այսպէս.

1 կացին	}	հաւասար են մէկ ոչխարի:
կամ 2 դանակ		
կամ 8 նետ		
կամ 2 չափ ցորեն		

Այդպիսի ուրոյն ապրանքը, որ փոխանակութեան գործիքն է հանդիսանում, կոչւում է փող: Ապրանքի փոխանակական փողային արժէքը գին տերմինով է նշանակւում:

Փողի գործածութիւնը չափազանց հեշտացնում է փոխանակութեան ապագայ զարգացումը: Փողը խմբերի մէջ փոխանակական կապերի մշտական բնաւորութիւն է հաստատում:

Յամենայն դէպս, մեր ուսումնասիրած շրջանը—նահապետական-ցեղական կազմակերպութեան էպոխան—բնորոշւում է փոխանակութեան համեմատաբար աւելի թոյլ զարգացմամբ և տնտեսութեան սխառեմի մէջ նրա աննշան դերով: Առանձին ցեղական խմբի արդիւնքների չնչին մասն է միայն շուկայ գնում և նրա կարիքների չնչին մասն է բաւարարութիւն ստանում, այն էլ ոչ իւր սեփական արտադրութեամբ: Այս ամեններն չի հակասում նրան, որ յիշեալ շրջանի արտադրութեան փողային ձև ստեղծելու համար:

Փոփանակութեան փողային ձևի պատմութիւնը փողի դեր կատարող զանազան ապրանքների յաջորդական փոխարինումն է հանդիսանում:

Սկզբում ամեն տեղ ձեռք էր բերում այդ դերը այն ապրանքը, որ, այս կամ այն պատճառով, տարածւած է. լինի դա կաշի, աղ, բակլա, կակաօ, զանազան խեցիներ և այլն: Ներկայումս էլ զանազան վայրերի ցեղերի մէջ շատ յաճախ տեսնում ենք իբրև փող գործածելիս այն ապրանքները, որոնք որ և է տեղում ներմուծման կամ արտահանութեան ամենամշտական առարկաներն են հանդիսանում, ուստի

շատ անգամ երկու հարևան զիւղերի մէջ տարբեր փողային ապրանքներ են երևան գալիս: Թափառաշրջիկ կենցաղի երկրներում ամենից յաճախ տաւարն էր փող: Հարաւային Եւրոպայում, Քրիստոսի Ծնունդից 10 դար առաջ դեռ այդպէս էր. Հոմերոսի յոյն ժողովրդական պոէմաներում կարելի է գտնել պղնձէ եռոտանու գնահատութիւնը՝ 12 եզով, ոսկեայ սպառազինութեանը—100 եզ և այլն:

Բայց տակաւ առ տակաւ փող-տաւարը ամեն տեղ հալածուում էր մետաղեայ փողերից: Սկզբում հրապարակ դուրս եկան երկաթեայ և պղնձեայ փողերը: Ակներև է, որ այդ մետաղները պակաս ուրախութեամբ չէին գնուում, քան տաւարը, որովհետև մետաղեայ գործիքներն ու զէնքը իւրաքանչիւր տնտեսութեան մէջ առաջնակարգ անհրաժեշտ առարակներ էին հանդիսանում: Միևնոյն ժամանակ մետաղները շատ առաւելութիւններ ունէին, որոնց շնորհիւ նրանք փողի դերը կատարելու համար աւելի պէտքական էին. նախ՝ նրանք աւելի հեշտութեամբ են փոքր արժողութեան կտորների բաժանում, քան տաւարը, որ առանց մորթելու չի կարելի մասերի բաժանել. երկրորդ՝ մետաղների նիւթը միատեսակ է և նրա առանձին կտորները միևնոյն յատկութիւններն ունեն. մինչդեռ միւս ապրանքները, ի թիււրս որոց և տաւարը, չունին այս արժանաւորութիւնը. մի ոչխար չի կարող բոլորովին հաւասար լինել մի ուրիշին. երրորդ՝ մետաղներն աւելի լաւ են մնում, —նոյնիսկ պղինձն ու երկաթը, որոնք ուղի ու խոնաւութեան ներգործութեան տակ սակաւ առ սակաւ են փշանում. չորրորդ՝ մետաղները, ուրիշ ապրանքների հետ միատեսակ փոխանակական արժէքի ժամանակ, քիչ ծաւալ և կշիռ են ունենում (վերջինս, ինչպէս յետոյ կը պարզւի, մետաղների՝ համեմատաբար աւելի սեծ աշխատանքային արժողութիւնից է կախած):

Վերջերը երկաթն ու պղինձը փոխարինուում են արծաթով ու ոսկով: Ազնիւ մետաղների մէջ վերոյիշեալ բոլոր տեխնիկական առաւելութիւններն աւելի զօրեղ են: Առաջին հայեացքից դժարութիւն է ներկայացնում այն հարցը, թէ ինչ կերպով այդ՝ արտադրութեան մէջ համարեա անօգուտ մետաղները կարող էին այնպէս ուրախութեամբ գնել, ինչպէս տաւարը, երկաթը և այլն: Խնդիրն այսպէս է պարզուում. արծաթն ու ոսկին զխաւորապէս զարդերի համար են գործածուում. նոյնիսկ ներկայ ժամանակներումս էլ զարդերը դիւրութեամբ են ծախւում. անզարգացած մարդիկ, մանաւանդ սակաւակիր լիւրջ, յաճախ պատրաստ են զրկւել կարեւորից, որպէսզի որ և է դատարկ բան կախեն իրանց վրայ: Իսկ անկիրթ ու կիսակիրթ ժողովուրդները յատկապէս սիրում են զարդարանքները և թանկ են գնահատում. կրօնպաշտի վաճառականները մի շարան ուլունքով վայրենիներից մեծ արժէք ունեցող ապրանքներ էին գնում. օրինակ՝ ահագին քանակութեամբ ձկնեղէն, որսենի, պտուղներ և այլն: Այդպիսով, զարդարանք-

ների պահանջը հնարաւորութիւն ստեղծեց երկաթէ ու պղնձէ փողերից՝ անցնել արծաթէ և ոսկէ փողերին:

Սկզբում փողը քաշով էր գնահատուում. առևտուրի ժամանակ հաշիւները մետաղները կշռելով էին անում:

Փոխանակութեան հետ սերտ կապւած է բաշխման միւս հասարակական ձևը—կրեդիտը:

Երբ փոխանակութիւնն ընդարձակուում է, պէտք է յաճախակի դառնան այն դէպքերը, որ փոխանակական գործողութիւնը, շնորհիւ գնողի միջոցների ժամանակաւոր կարօտութեան, դժւարութիւնների է հանդիպում: Անյապաղ հարկաւոր է ուրիշ ապրանք, իսկ անյապաղ վճարման համար փող չկայ կամ չի բաւականանում, թէև հաստատապէս յայտնի է, որ մի քանի ժամանակից յետոյ գնողը վճարելու փող կունենայ: Այդպիսի հանգամանքներում ծախողը շատ անգամ համաձայնուում է ապրանքը պարտքով—կրեդիտով տալ: «Կրեդիտ» խօսքը «վստահութիւն» է ցոյց տալիս, ակներև է, որ կրեդիտային գործողութիւնը վստահութիւն է ենթադրում նախ՝ պարտապանի ազնւութեան և երկրորդ՝ նրա կարողութեան վրայ:

Որոշւած ժամանակամիջոցում պարտապանը տալիս է փողը, որն այստեղ նոր դեր—վճարման միջոցի դեր է կատարում:

Սովորաբար ձրի վստահութիւն ցոյց տալիս՝ պարտքը տրւում է որոշ յաւելումով—տոկոսով, շահով:

Զուտ ապրանքային կրեդիտի հետ սերտ կապակցութեամբ և նըրա հետ մօտաւորապէս միաժամանակ զարգանում է կրեդիտի միւս ձևը, որ սովորաբար վաշխատութիւն տերմինով են նշանակում, այսինքն՝ տոկոսով փող պարտք տալ:

Վերացականօրէն դատելով, դժուար չէր լինի երևակայել կրեդիտի երևան գալը՝ փոխանակութիւնից անկախ և նրանից աւելի առաջ. օրինակ՝ մի համայնք միւսին ժամանակաւորապէս փոխ է տալիս զանազան գործիքներ, որոնք վերջինս չունի: Սա կայն եթէ նման դէպքեր էլ եղել են, նրանց մէջ դեռ «կրեդիտ» կայն եթէ նման գնահատութիւններ օգտուելու համար վերցնի կարելի տեսնել. ժամանակաւորապէս օգտուելու համար վերցնած գործիքները վերադարձուում են իրանց տէրերին և ոչ թէ նրանց գինն է «վճարուում»: Կրեդիտը ոչ միայն փոխանակութեան, այլ և փողի գոյութիւն է առաջադրում:

4. ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ-ՅԵՂԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՍՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Կազմակերպչի՝ ցեղական խմբի արտադրութեան բաժանելը աստիճանաբար փոփոխում է մարդու վերաբերմունքը դէպի խումբը և դէպի նրա հոգեբանութիւնը:

Եթէ բնութեան իշխանութիւնը մարդու վրայ պակասեց, դրա փոխարէն նոր իշխանութիւն ծագեց—մի մարդու իշխանութիւնը միւս-

ների վրայ: Դա, էպպէս, խմբի նախկին իշխանութիւնն էր իւր առանձին անդամների վրայ, միայն տեղափոխւած մի առանձին անձնաւորութեան—նահապետի մէջ:

Բաշխման մէջ հաւասարութիւնը վերացաւ. յաւելեալ աշխատանքի ամբողջ արդիւնքը կազմակերպչի տրամադրութեան տակ է ընկնում: Սակայն անհաւասարութիւնը դեռ խիստ բնաւորութիւն չուներ. կազմակերպչի շարունակում է, ինչպէս առաջ խումբն էր անում, մաս հանել իւրաքանչիւրին անհրաժեշտ միջոցներ նրա կեանքի պահպանութեան և արտադրութեան մէջ ունեցած դերի կատարման համար: Ինքը կազմակերպչի իւր կարիքների զարգացման մէջ խմբի միւս անդամներից հեռու չգնաց:

Փոխադարձ օգնութեան կապը, արտաքին աշխարհի դէմ վարած կռուի մէջ համախմբւած լինելը, նախընթաց շրջանի հետ համեմատած, դեռ աճում է: Նախ՝ աշխատակցութեան և խմբի ներսում աշխատանքի բաժանման աւելի կատարեալ ձևերը աւելի սերտ են մտնոցնում իբրև խմբի անդամներին, քան առաջ, երբ ամեն մէկն էլ, անկախ ուրիշից, կարող էր կատարել սովորական գործերի ամենամեծ մասը, երբ գերակշռում էր հասարակ «աշխատանքի միաբանութիւնը». երկրորդ՝ ցեղի միութիւնը շահում է մասամբ այն շնորհիւ, որ, յանձին նահապետի, ինքը մի թանձրացեալ, կենդանի մարմնացումն է դառնում:

Միևնոյն ժամանակ, նոյն պայմանների շնորհիւ, ցեղական խմբի մէջ յայտնւում են անհատականութեան ստղմերը, որի էութիւնը կայանում է նրանում, որ մարդը իւր գիտակցութեան մէջ իրան ու իրենը անջատում է խմբից, որ երևան են գալիս անձնական շահեր, մինչդեռ առաջ գոյութիւն ունէին միայն համայնական շահերը:

Կազմակերպչի դերը արտադրութեան մէջ մի առանձին դեր էր և նրան էր միայն պատկանում. այսպէս է այն հիմնական պատճառը, որ նրա հոգեկանի մէջ անհատական զգացմունքներ ու պատկերացումներ է ծնեցրել: Այս հիմնական պատճառներից բղխեցին ուրիշները, որոնք նոյն ուղղութեամբ էին գործում:

Կազմակերպչին էր կարգադրում բոլոր հասարակական պահեստները, յաւելեալ արդիւնքի անբողջ գումարը, մի բան, որ նրան հընարաւորութիւն էր տալիս ընդարձակել իւր կարիքները և դրանով աւելի ևս աչքի ընկնել իւր խմբի մէջ: Փոխանակութեան ժամանակ նա հանդէս եկաւ իբրև իւր համայնքի ամբողջ կարողութեան իսկական տէրը և, այս դէպքում, գործ ունենալով ուրիշ նոյնպիսի կազմակերպչի հետ, նա սովորեց նայել այս վերջինիս, իսկ յետոյ հէնց իւր վրայ, իբրև փոխանակող ապրանքների սեփականատիրոջ վրայ: Այդպէս աստիճանաբար զարգանում էր մասնաւոր սեփականութիւնը. սկզբում այն խմբերի մէջ եղած փոխանակութիւնը, որտեղ նրանք հանդէս են գալիս իբրև իրանց ապրանքների տէրեր, պէտք է ծնէր ցեղական մաս-

նաւոր սեփականութեան գաղափարը, իսկ յետոյ, կազմակերպչին՝ փոխանակութեան մէջ ունեցած առանձին դերը շարունակելով մարդկանց հոգեկանը կերպարանափոխել, անհատական մասնաւոր սեփականութեան գաղափարն է ծնում:

Սակայն կազմակերպչի գլխում անհատական մասնաւոր սեփականութեան գաղափարը քիչ թէ շատ հաստատապէս այն ժամանակ կարող եղաւ ամբանալ միայն, երբ նրա դերը ժառանգական դարձաւ, երբ խումբը դադարեց ընտրել իւր նահապետին, երբ, հետևապէս, կորան այն հետքերը, որոնք ցոյց էին տալիս, որ նրա իշխանութիւնը ցեղի ընդհանուր կամքից է ծագում: Կազմակերպչի գլխում շարունակ աւելի ևս հաստատուում էր իւր վերաբերմունքը դէպի ցեղական ունեցաւածքը, իբրև իւր անհատական սեփականութիւնը և գնալով աւելի նըւազում էր հին մտապատկերը, երբ նա այդ ունեցաւածքի՝ հասարակական վերահսկողութեան ենթարկւած կարգադրին էր միայն: Սրա հետ միասին ինչքան անհետանում էին խմբի բոլոր փաստացի վերահսկողութիւններն իւր գլխաւորի կազմակերպչական գործնէութեան վրայ, այնքան այս վերջինս անպայման հնազանդութիւն էր պահանջում և ախքան այս վերջինս անպայման հնազանդութիւն անհատական իշխանութիւն լինում այն մտքին, թէ ինքն անպայման անհատական իշխանութիւն ունի ցեղականների վրայ: Այս հայեացքներն իրանց զարգացման ընթացքում չէին կարող հակասութեան չհանդիպել խմբի միւս անդամների կողմից. հաւանօրէն, ցեղական համայնքները շատ անգամ են ծանր ներքին կռիւներ անցկացրել. սակայն, վաղ թէ ուշ, կազմակերպչի ծանր ներքին կռիւներ անցկացրել. սակայն, վաղ թէ ուշ, կազմակերպչի ձգտումները յաղթեցին, որովհետև նրանք համապատասխանում էին իրական յարաբերութիւններին. կազմակերպչին ունեցաւ իրական իշխանութիւն արդիւնքների ու մարդկանց վրայ և այդ իշխանութիւնն անհրաժեշտ էր խմբի համար: Այսպէս, նահապետն իր խմբի միակ սեփականատէրն ու լիակատար տէրը դարձաւ:

էպպէս, կազմակերպչի ու ցեղի միւս անդամների միջև առաջացած հոգեբանական տարբերութիւնները դեռ խիստ մեծ չէին, որովհետև հոգեկան կազմի հիմքերը ընդհանուր մնացին. — լիակատար և հետև հոգեկան կազմի հիմքերը ընդհանուր մնացին. — լիակատար և անպայման ենթարկումն սովորութեանը և պատկերացում խմբի մասին, իբրև միակ, անքակտելի ամբողջութեան, որից դուրս ամեն մի անհատական գոյութիւն անմիտ է: Ինքը նահապետն իսկ, չնայեա՞ծ անհատական գոյութիւն անմիտ է: Ինքը նահապետն իսկ, չկարողացաւ իւր համեմատաբար աւելի մեծ հոգեկան հարստութեան, չկարողացաւ իւր գիտակցօրէն բարձրանալ ցեղական կեանքի դարաւոր կարգերից վեր և ոչ մի դրդումն չունէր հակասելու նրանց: Կազմակերպչի հանձար և ոչ մի դրդումն չունէր հակասելու ընդունակութիւնների տէր մարդ, այլ ցեղի մէջ չէր և ոչ էլ բացառիկ ընդունակութիւնների տէր մարդ, այլ ցեղի մէջ չէր և ոչ էլ բացառիկ ընդունակութիւնների փորձառութեամբ մի մարդ: Նրա ամենածերը, բազմաթիւ տարիների փորձառութեամբ էր նախ՝ և գլխաւորապէս կազմակերպչական գործնէութիւնը հիմնում էր նախ՝ և գլխաւորապէս, այն յիշողութիւնների վրայ, ինչ որ արել էին նրա նախորդները և միայն չնչին չափով — իւր անհատական ստեղծագործութեան,

հասկացողութեան վրայ: Սովորութիւնը նրա հոգու մէջ թագաւորում էր համարեա այնպէս, ինչպէս նրա հեռաւոր նախորդի—հախնական կոմմունիստի մէջ: Խմբի անբաժանելիութեան մտապատկերը ճիշտ այնպէս էր տիրապետում կազմակերպչի հոգեբանութեան մէջ, որովհետեւ նա էլ ոչ մի պայմանում հնարաւորութիւն չունէր իւր ցեղից դուրս—մենակ ապրել, որովհետեւ, բացի ցեղական կապերից, ուրիշ հասարակական կապեր նա չէր ճանաչում. իսկ հասարակական կեանքից դուրս ապրելը մահ էր նշանակում. Խմբի մնացած անդամները վերաբերմամբ նոյն հասկացողութիւնները աւելի մեծ չափով են գործադրւած: Ընդհանրապէս սովորոյթի պահպանողականութիւնը դեռ չէր սասանել նոր յարաբերութիւններից, իսկ անհատական գիտակցութիւնը դեռ նոր էր սկսել բաժանւել խմբականից: Անյայտացաւ միայն խմբի միացեղութեան պատկերացումը:

Այսպէս, նահապետական խմբի հոգեբանութիւնը ընդհանուր կազմով նախնական-ցեղականից համարեա չի տարբերւում: Հետևապէս, ամեն մի գարգացման ճանապարհի վրայ կանգնած նախկին արգելքները համարեա իրանց ամբողջ ուժով մնացին: Ստիպւած ենք ասել «համարեա», որովհետեւ, յամենայն դէպս, առաջանում էին այնպիսի ոյժեր, որոնք, թէև չնչին չափով, բայց դարձեալ պակասեցնում էին այդ արգելքները. խմբերի միջի թոյլ և ոչ մշտական յարաբերութիւններն ու կապերը, յամենայն դէպս, ընդարձակում էին անհատի հորիզոնը նրա ցեղի սահմաններից դուրս, իսկ սովորութեան տարբեր ձևերի ընդհարումը թուլացնում էր նրա պահպանողականութիւնը:

Այժմ մի ուրիշ հարց. այս էպոխայի մարդու գիտակցութիւնը ռըքան հարուստ և յարմար նիւթ էր ներկայացնում զարգացման համար:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ցեղական հասարակութիւնների կեանքի շատ տասնեակ դարերն իզուր չանցան, որ մարդկանց մտաւոր պաշարն աւելի ընդարձակ և դանազանակերպ դարձաւ: Գործնական ծանօթութիւններն սկսեցին համեմատաբար աւելի մեծ տեղ բռնել հոգեկանի մէջ, իսկ ֆանտաստիկական մտապատկերները—համեմատաբար աւելի փոքր տեղ: Արտադրութեան շրջանի ընդարձակումը անխուսափելիօրէն առաջ բերեց գիտութեան շրջանի ընդարձակումն. որքան տարեբային ոյժերի առաջ վախը քչացաւ, այնքան հետաքրքրութիւնն աճեց:

Հաղիւ թէ սխալ կըլինի ընդունել, որ հէնց մեր ուսումնասիրած շրջանում մարդն առաջին անգամ սկսեց պարզել իրեն՝ բնութիւնը, փնտռել երևոյթների կապերը. և առաջին անգամ առաջ եկաւ այն, ինչ որ քիչ թէ շատ սաղում է «աշխարհայեցողութիւն» տերմինին: Այս աշխարհայեցողութեան էութիւնը կազմում էր բնական ֆետիշիզմը (իրավաշտութիւն):

Ամեն ժամանակ մարդու մտածողութիւնը ձգտում էր պարզել

իւր համար հեռաւորը—ամենամօտիկով, անսովորը—սովորականով, տարօրինակը—հասկանալիով: Նոր երևոյթը պարզւած երևաց այն ժամանակ, երբ յաջողեց ամփոփել նրան հին դիտողութիւնների շրջանակի մէջ: Մարդու համար ամենից մօտը, ամենից սովորականը՝ շրջապատող մարդկանց հետ ունեցած յարաբերութիւնն է: Սրա շնորհիւ բոլոր էպոխաներում մարդկանց աշխարհայեցողութեան ընդհանուր կազմը իւր վրայ կրում էր նրանց հասարակական յարաբերութիւնների դրոշմը, որը մի քանի դէպքերում աւելի պարզ է և՛ ակնյայտնի, մի քանի դէպքերում՝ պակաս: Նոյնն էլ պէտք է ասել նահապետական-ցեղական շրջանի մասին. բնական ֆետիշիզմը ներկայացնում էր բնութեան վրայ մի այնպիսի հայեացք, որի համար իրերի յարաբերութիւնները ներկայանում էին իբրև. մարդկանց յարաբերութիւններ:

Կազմակերպչական աշխատանքի կատարողականից բաժանւելը ցեղական հասարակութեան ներքին յարաբերութիւնների մէջ ինքնօրինակ երկուութիւն ստեղծեց. մտաւոր ոյժը կարծես թէ բաժանւեց կոպիտ ֆիզիկականից, գիտակցական սկզբունքը—տարեբայինից. առաջինն ստացաւ իշխանութեան ձև, երկրորդը—հպատակութեան. առաջինը մարմնացաւ յանձին նահապետի, երկրորդը—յանձին խմբի մնացած անդամների: Միևնոյն ժամանակ այս երկու տարբեր կատարելապէս անբաժան էին և մէկն առանց միւսի՝ անմիտ. կատարողաբերական անբաժան էին և մէկն առանց միւսի՝ անմիտ. կատարողական գործնէութիւնը, առանց կազմակերպիչ կամքի, կորցնում է իւր նպատակայարմարութիւնը, իսկ կամքն անօգուտ է այնտեղ, ուր չըկայ առաջինը:

Մարդը իւր շրջապատողների գործողութիւնների մէջ կազմակերպող կամքի ազդեցութիւնը աւելի կոպիտ ոյժի—կատարողականի վրայ սովորեց տեսնել: Ընդ այս տիպով էլ նա բացատրում էր իրեն միևս գործողութիւնները, որ դիտում էր արտաքին աշխարհում: Ամեն տեղի կապակցման, կամքի, որ հրամայում է, և նիւթական ոյժի, որ տեղի կապակցման, կամքի, որ հրամայում է, և նիւթական ոյժի, որ հպատակում է: Թող նա միայն երկրորդը նկատէ, միևնոյնն է, նրան հպատակում է: Թող նա միայն առաջինի և կազմակերպող սկզբունք է չի կարող հասկանալ առանց միւսի: Այսպէս են առաջանում «առարկա-ներաղբում այնտեղ, ուր նա չկայ: Այսպէս են առաջանում «առարկաների հոգիներ»-ը: Նրանք փոխարինում էին երևոյթների պատճառներով, նրանց վրայ հասկացողութիւնը կարող էր ժամանակաւորապէս բռնի և բոյսի, զազանի և մարդու, կրակի և ջրի մէջ: Բնութիւնն իւր բոլոր երևոյթներով նրան միակերպ-երկուութեամբ էր պատկերանում:

Սովորաբար բնական ֆետիշիզմի կամ անիմիզմի ծագումը հետևեալ կերպով են բացատրում: Որեւէ առարկայի ոչնչանալուց, կենդանու կամ մարդու մահանից յետոյ մարդկանց յիշողութեան մէջ որոշ ժամանակ ընդհանրապէս զեռ պահւում է անյայտացող





գիշատիչ գազանի ոյժը: Այսպիսով իրաւական կեանքը բնութեան դէմ վարած հասարակական կուռի մի որոշ շրջանն է. կուռի այս առանձին ձևը պէտք է ուսումնասիրել թէ նրա տեխնիկական կողմից (յանցաւորի՝ իբրև արտաքին բնութեան տարրի վերայ ներգործելու եղանակները), թէ տնտեսական կողմից (ներգործութեան այս պրօցեսսների մէջ հասարակութեան անդամների միջի փոխադարձ յարաբերութիւնները) և թէ իդիօլօգիական կողմից (մարդկանց հայեացքները, իրաւունքի և նրա խախտման վրայ): Այսպիսով, իրաւական շրջանը արտադրութեան շրջանի մեջն է և ոչ նրանից դուրս:

Արտադրական յարաբերութիւնների մասին եղած գլխում արդէն նշանակւած էր իրար ազդական խմբերի մէջ կազմակերպւած արտադրական յարաբերութիւնների առաջնալը—միասին արած մեծ որսորդութիւնները, պատերազմի ցեղական կազմակերպութիւնը: Ժամանակի ընթացքում այսօրինակ հաւաքական ձեռնարկութիւնները երբեմն ի մի են կապում նոյնպէս ոչ ազդական, սակայն փոխանակութեամբ և ընդհանրապէս իրար հետ խաղաղ յարաբերութիւններով կապւած խմբերին: Սովորաբար այդպիսի միութիւնների գլուխ է կանգնում աւագ-կազմակերպիչների խորհուրդը կամ սրանցից ընտրւած առաջնորդը: Այս միութիւնների մէջ պէտք է տեսնել պետական, քաղաքական կազմակերպութիւնների սաղմերը, որոնց մէջ նրանք մտնում են այն չափով, ինչ չափով որ սրանք ժամանակաւոր լինելուց դադարում, հետզհետէ մշտական են դառնում. իսկ ինքը հասարակութիւնը բաժանւում է տիրապետող և հպատակող դասակարգերի:

Ընդհանրապէս իւրաքանչիւր քաղաքական կազմակերպութիւն իւր էութեամբ տնտեսական կազմակերպութիւն է, քիչ թէ շատ հաւաքական կեանքի միահամուռ կուռի կազմակերպութիւն: Իսկ մասնաւորապէս՝ պետութիւնը դասակարգային տիրապետութեան, միջանի դասակարգերի՝ միւսներին տիրապետելու կազմակերպութիւնն է:

### ՀԻՆ ԱՏՐԿՈՒԹԻՒՆԸ

Մի քանի նկատումներով ինքնայատուկ է հանդիսանում հասարակական զարգացման այն տիպը, որ ստեղծել է հին աշխարհի կուլտուրան և հիմնւած է արտադրող բանուորին արտադրութեան գործիք դարձնելու վրայ:

#### 1. ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՔԵՐՄՈՒՆՔԸ ԴԵՊՐԱՐՍԱՐԻՆ ԲՆՈՒԹԻՒՆԸ

Ստրկութեան սիստեմը զարգացաւ նահապետական-ցեղական յարաբերութիւններից՝ շնորհիւ երկու հիմնական պայմանների կապակցւելուն.—յաւելեալ աշխատանքի անընդհատ աճեցման և զարգացման դանազան աստիճանների վրայ կանգնած մարդկային հասարակութիւնների մէջ եղած կուռի:

Հաստատարնակ կեանքում երկրագործութեան և անասնապահութեան միանալն արդէն յաւելեալ աշխատանքը մշտական երևոյթ էր դարձրել: Համայնքների մէջ աստիճանաբար զարգացող աշխատանքի բաժանումը քանի գնում շատացնում էր աշխատանքի արտադրողականութիւնը: Փոխանակական կապերը թոյլ էին տալիս առանձին խմբերին դադարեցնել արտադրութիւնը սրա այն ճիւղերում, որտեղ աշխատանքն աւելի քիչ արտադրող էր, և ընդարձակել այն ճիւղերում, ուր նա աւելի շատ արտադրող էր: Մետաղների, գործիքների և զէնքերի արտադրութիւնը կատարելագործւում և ընդարձակւում էր. արտադրութեան աշխատանքի նոր ու նոր ճիւղեր էին առաջ գալիս: Արտադրական համայնքների սովորական չափը մի քանի հարիւր մարդու էր հասնում. երբեմն մի նահապետ-կազմահարիւր իշխանութեան տակ հազարաւոր մարդիկ էին միանում: Սրա համապատասխան համայնքի ձեռք բերած յաւելեալ արդիւնքի գումարն անագին էր:

Այսպէս, առանձին մարդկային հասարակութիւնները, շարունակ նոր ու նոր յաղթանակներ տանելով արտաքին բնութեան վրայ, համեմատաբար բարձր զարգացման հասան: Իւրաքանչիւր արտադրական կազմակերպութեան համար արտաքին բնութեան տարրերից մեկը հանդիսանում է նրան քննադատ կազմակերպութիւնները, որոնց հետ նա հարկադրաւորաբար մտնում է յարաբերութիւն: Այս վերաբերում է ութեան էական մասն է հանդիսանում: Այս վերաբերում է յարաբերութիւն, որոնք միւս շատ ցեղերի միջից առաջընկալեալ այն ցեղերին, որոնք միւս շատ ցեղերի միջից առաջընկալեալ մտան զարգացման ճանապարհը և այդպիսով աղքատների նը մտան զարգացման ճանապարհը: Առաջ էին գալիս մշտական ընդհանրութեան, անընդհատ թշնամութիւն: Գերաբնակչութեան ճնշումը ստիպում էր յետ մնացած ցեղերին պատերազմել նոր հողերի համար, և, իհարկէ, առանձին ուրախութեամբ յարձակւում էին ամենաքաղաքակիրթ հարևանների վրայ, որոնք ունէին ապրուստի միջոցներ: Քիչ անգամ չի եղել, որ թափառականները յաղթում էին իրանցից շատ աւելի բարձր կանգնած հասարակութիւններին և մասամբ ոչնչացնում ու մասամբ ընդօրինակում էին նրանց քաղաքակրթութիւնը: Բայց մի քանի՝ համեմատաբար բանց քաղաքակրթութիւնը հասարակութիւններին յաջողութեամբ վաղ զարգացում ունեցող կանգնած ցեղերի կուռի ցածր ցեղերի տարրերի տարբերութեան ամենավտանգաւոր տարրերի տարբերութեան ճնշումների դէմ: Այդպիսի կուռի կուլտուրական հասարակութիւնների համար արտադրող, հանրօգուտ էր ներկայանում ոչ միայն այն մտքով, որ նա անհրաժեշտ էր բոլոր արտադրութիւնը պահպանելու իւր ամբողջութեան, որ յաւելեալ աշխատանքը հընամտքով, այն ժամանակահատիկը, յաղթութեան հետևանքն էր բաւոր դարձրեց շահագործութիւնը, յաղթութեան հետևանքն էր լինում սովորաբար յաղթող հասարակութեան արտադրող ոյժերի մեծանալը, իւր հետ միացնելով այն դերիններին, որոնց ստրուկ էին դարձնում:

Պատերազմի առանձին դերը վաղ քաղաքակրթւած հասարակութեան համար:





յարմարութիւններով, ինչպէս մեր ժամանակները (թղթագրամներէի, բանկային տոմսակներէի և չէքերի սիստեմի շրջանառութեամբ):

Կրեդիտային գործը, կամ, աւելի ճիշտ, նրա սաղմը—վաշխառութիւնը—մեր ուսումնասիրած շրջանում աստիճանաբար զարգացաւ և հսկայական չափերի հասաւ: Նա մեծ դեր խաղաց յունական և աւելի ուշ—հռովմէական արխիտոկրատիայի հսկայական հարստութիւնների առաջանալու մէջ:

Հին աշխարհում, անկազմակերպ անտեսական յարաբերութիւնների համեմատ, զգալի յառաջադիմութիւն կատարեց նաև կազմակերպւած կապերի մէջ:

Պետականութեան այն սաղմերը, որ նահապետական աշխարհում նկատուում էին ցեղական հաւաքական ձեւերակութիւնների ձևով—որսորդական և պատերազմական,—արագ զարգանում էին և փոխուում ընդարձակ քաղաքական միութիւնների, որոնք երբեմն տասնեակ միլիոն մարդիկ էին ընդգրկում իրանց մէջ: Աշխատանքի հասարակական բաժանման յառաջադիմութիւնը, որ արտայայտուում էր փոխանակութեան չափով, անտեսական միացման պահանջ էր ստեղծել, պահպանելու և թեթևացնելու փոխանակական յարաբերութիւնները.—ընդհանուր փողերի, ընդհանուր ապրանքային չափերի սահմանումը, հաղորդակցութեան ճանապարհների կառուցումն և նրանց զինւորական պահպանութիւնը, շուկաները, պարտքերի վճարման վերահսկումը, օտարութեան մէջ ապրող վաճառականների աւճի և ունեցւածքի պաշտպանութիւնը և այլն: Պատերազմի հսկայական դերը, իբրև միջոց ստրուկներ և նոր սահմաններ ձեռք բերելու, ամուր և ընդարձակ զինւորական կազմակերպութիւն էր պահանջում: Հին հասարակութեան կրթուող կերպով երկու դասակարգի՝ հարստահարող և հարստահարուող դասակարգի բաժանելը, որոնցից երկրորդը շատ աւելի բազմաթիւ էր, և յետոյ այս երկու դասակարգերից առաջինի՝ փոխադարձ-թշնամական շահեր ունեցող երկու առանձին համախմբութիւնների բաժանելը յամենայն դէպս կենտրոնացած զինւորական ոյժի ստիպողական անհրաժեշտութիւնը առաջ բերեց: Այս բոլոր պահանջներին բաւարարութիւն էր տալիս հին պետութիւնը:

Հին պետութեան զարգացումը երկու տարբեր ճանապարհներով էր առաջ գնում և հասցրեց կազմակերպութեան երկու խիստ ոչ նման տիպերի:

Մի քանի դէպքում ընդարձակ քաղաքական ամբողջութիւնը գլխաւորապէս պատերազմների միջոցով էր կազմուում: Մտտեղի էր ունենում երկու պայմանների ժամանակ. նախ՝ եթէ հէնց արտաքին բնութեան պայմաններն էին առաջացնում ընդարձակ հասարակական կազմակերպութեան կարիք, օր. երբ արտադրութեան բազմը մեծ գետերի ջրի մակերևոյթի յաջող կանոնաւորելուց էր կախւած (Նեղոսի, Տիգրիսի, Եփրատի և այլն պտղաւէտ հովիտները առաջին բնապետական միապետութիւնների կազմելու տեղերն էին) կամ երբ անհրաժեշտ էր միանալ զօրեղ թշնամի ցեղերի մշտական յարձակումների դէմ կուելու համար, երկրորդ՝ եթէ փոխանակական կապերը դեռ

բաւականին զարգացած, ընդարձակ և ամուր չէին զօրեղ քաղաքական միութիւն ստեղծելու համար: Նահապետական շրջանի վերջում անթիւ պատերազմների մէջ մի առանձին ցեղական խմբի յաջողում էր մի շարք յաղթութիւններով իրան ենթարկել շատ հարևան խմբերի: Սկզբում յաղթողներն ուղղակի մտնում էին յաղթողների համայնքի կազմի մէջ և ստրուկ դառնում: Բայց որոշ սահմաններից դուրս այդպէս մեծ չափով ներս մտնելն անհնար է դառնում.—կատարել էր չափազանց ընդարձակ անտեսութիւն, որին մի տիրոջ վարելը անմիտ կը լինէր և ստրուկ խումբը կսկսէր բաւականանալ նրանով, որ կատարէր յաղթող խումբը կսկսէր բաւականանալ նրանով, որ կատարէր յաղթուածին քաղաքականապէս հպատակելը, այսինքն յաղթողի վերին իշխանութիւնը ճանաչել ու հարկ տալ. իսկ իւր ներքին գործերի մէջ հպատակող խումբը անկախութեան զգալի մասը դեռ կրպահէր:

Հետզհետէ աճելով առանձին խումբը այդպիսով դարձաւ հին աշխարհի հսկայական բռնապետական պետութիւնը: Այդպէս էին եւ պարսկական, ասորական, բաբելական և այլն թագաւորութիւնները: Նրանց մէջ բռնապետի իշխանութիւն մնում էր նախապետի, ստրկատիրոջ անսահման իշխանութիւն բռնապետի և ստրկատիրական ընտանիքի հասարակ գլխաւորի մէջ գոյութիւն ստրկատիրական ընտանիքի աստիճաններ.—սատրապներ, շրբունէին բազմաթիւ միջանկեալ աստիճաններ.—սատրապներ, շրբունէին կառավարիչներ կայլն, և իւրաքանչիւր կառավարիչ իւր ջանային կառավարիչներ կայլն, և իւրաքանչիւր կառավարիչ իւր հպատակների վերաբերմամբ, որոնց գործողութիւնը նա պէտք էր կազմակերպէր, անագին նահապետական իշխանութիւն ունէր: Ե կազմակերպէր, անագին նահապետական իշխանութիւն ունէր: Այդպիսի պետութիւնների մէջ կազմակերպութեան տիպն ամեն տեղ միևնոյնն էր:

Բոլորովին ուրիշ բնաւորութիւն ունէին զանազան խմբերի մէջ ամուր և ընդարձակ փոխանակական կապերի հողի վրայ կազմուած հին պետութիւնները: Նրանք համայնեղ, նոյն իրաւունքներն ունեցող համայնքների ազատ միութիւններ էին, որոնց սկզբնական նպատակը միաբան պատերազմական ձեւերակութեան պաշտպանելու և փոխանակութեան ու մասնաւոր սեփականութեան պաշտպանութեան մէջ էր կայանում:

Ծնորհիւ մշտական յարաբերութիւնների և աշխատանքի հասարակական բաժանման զարգանալուն, այդպիսի միութեան առանձին խմբերի մէջ ընդհանուր գործերը ժամանակի ընթացքում հետզհետէ աւելի ու աւելի շատանում էին—կապն աւելի սերտ և հաստատուն էր դառնում:

Ընդհանուր գործերը վճուում էին պետերի խորհրդով, իսկ յետոյ նրանց բնորոշներով, որոնք սակայն մնում էին խորհրդի վերահսկողութեան տակ: Իրանց խմբի ներքին գործերի մէջ ընտանիքի իւրաքանչիւր ազատ գլխաւորը առաջայ պէս լիակատար պետ էր մնում: Ինչ վերաբերում է ստրուկներին, ինքն ըստ ինտիպետ էր մնում: Ինչ վերաբերում է ստրուկներին, ինքն ըստ ինտիպետ էր մնում: Ինչ վերաբերում է ստրուկներին, ինքն ըստ ինտիպետ էր մնում: Ինչ վերաբերում է ստրուկներին, ինքն ըստ ինտիպետ էր մնում:

Ծնորհիւ հին աշխարհի ահագին քանակութեամբ պատերազմների, երկրորդ տիպի կազմակերպութիւններն այնքան էլ հաստատուն չէին դուրս գալիս և ստեպ փոխուում էին առաջին տիպի ստուն չէին դուրս գալիս:

կազմակերպութեան. պատերազմը պահանջում է իշխանութեան խիստ մէջ լինելը, որին հասնելն արխատկրատական հասարակապետութիւնների մէջ խիստ դժուար էր: Այդպիսով բազմաթիւ պատերազմների հետեանքն այն եղաւ, որ հասարակապետական Հոռովը կեսարների Հոռով գարձաւ: Բացի այդ, շնորհիւ հասարակապետութիւնների մէջ եղած ներքին երկպառակութիւնների, շատ անգամ տնտեսական շահերի ներքին կռիւը փոխանակութեան նոյն ձևին էր յանգում. շատ յունական հասարակապետութիւններ բռնակալութեան էին փոխուում. երբ մանր ստրկատէրերը, գերազացիք, արհեստաւորներն ու վաճառականները սերտ միաւորւած խոշոր-ստրկատիրական արխատկրատիայի դէմ էին դուրս գալիս, նրանք գլխաւորապէս կայսեր կամ բռնակալի դրօշակի տակ էին կանգնում, որովհետեւ ոյժերի խիստ կենդրոնացումը միայն կարող էր նրանց յաղթանակ տալ:

Ընդհանուր առմամբ, հին աշխարհի պետութիւնը բարդուող տնտեսական-յարաբերութիւնների արտաքին և ներքին պաշտպանութեան կազմակերպութիւն, ստրկատիրական շահերի կազմակերպութիւն էր հանդիսանում:

3. Հին ԱՇԽԱՐՀԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՈՐԳԵՐՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

ա) Անճի դրոսթիւնը խմբի եւ հասարակութեան մէջ

Նահապետի՝ աստիճանաբար ստրկատէր և ստրկատիրոջ՝ արտադրութեան կազմակերպչից—պարագիտ դառնալը արտադրողի և արտադրական աշխատանքի մասին եղած հայեացքների մէջ համապատասխան փոփոխութիւններ մտցրեց իւր հետ: Արտադրական աշխատանքի վերաբերմամբ յարգանքն ու շահը անյայտանում և փոխարէնը հակադիր յարաբերութիւններ էին հաստատուում: Այստեղ յարմար կլինի բնորոշել հասարակական մտածողութեան այս կողմը՝ նրա լիակատար զարգացման, ստրկատիրական սիստեմի ծաղկած էպոխայի մէջ:

Այդ ժամանակներն արտադրութեան գործիքների այսպիսի դասաւորումն էր կազմւել. 1) instrumenta mut.—համր, անկենդան գործիքներ. օրինակ՝ կացին, գազգահ. 2) instrumenta semi-vocalia—կենդանի գործիքներ, բայց այնպիսիներ, որոնք կիսով չափ, այսինքն՝ ձայնով շատ անկատար են արտայայտում իրանց զգացումները—սրանք ընտանի կենդանիներն են. և 3) instrumenta vocalia—խօսելու ընդունակ գործիքներ, այսինքն՝ մարդիկ—ստրուկներ:

Այդպիսի հայեացքն անխուսափելիորէն կապւում էր այն ժամանակւայ հին հասարակական-տնտեսական կազմի մտքի հետ-արտադրութեան սիստեմը հիմնւում էր մարդու գէպի մարդը, իբրև ուղղակի գործիքը, ունեցած փաստացի յարաբերութեան վրայ, ուրիշ բանւորական ոյժից օգտւելու նպատակով նրա անձնաւորութիւնը իւրացնելու վրայ:

Հնեբը, ուրիշ հասարակական կազմի մասին գաղափար չունենալով, ստրկութիւնը բնութեան բնական եւ անփոփոխ օրէնք էին համարում: Այդպիսի հայեացքից անընդունակ էին հետու մնալ և ամենախնամելի գեներացիները, նոյն իսկ այն ժամանակների

հանճարաւոր մարդիկ: «Բնութիւնը ոմանց աղատութեան համար է ստեղծում, իսկ ոմանց—ստրկութեան» (Արխատուէլ, «Քաղաքականութիւն»): Պղատոնը, հին ժամանակների ամենաազնիւ մտաւորութիւնը, իւր գաղափարապէս-կատարեալ պետութեան ծրագիրը կազմելիս, հնարաւորութիւն չէր գտնում առանց ստրուկների կառավարելու: (Վերջինս նրանով աւելի հասկանալի է, որ Պղատոնի «Հասարակապետութիւն»-ը իւր էութեամբ սպարտական հասարակութեան գաղափարը կանացումն էր ներկայացնում միայն):

Եթէ ստրուկների հետ ամեն ժամանակ դաժան չէին վարւում, գոնէ նրանց ընդհանրապէս մարդ չէին համարում կամ չէին կարողանում համարել: Ասենք դաժանութիւնն էլ յառաջագիմում էր այն չափով, ինչ չափով որ փոխանակութեան վարչացումը նրանից բղխած շահի ծարաւով զրգում էր շարունակ աւելի ևս սաստիկ շահագործել ստրուկներին:

Ստրուկների փոխադարձ յարաբերութիւնների մէջ հաւասարութիւն էր տիրապետում, — ի հարկէ, իրաւազրկութեան հասարութիւն էր տիրապետում, — ի հարկէ, իրաւազրկութեան հասարութիւն: Սակայն, ինչքան որ տէրերն իրանց կազմակերպւած ստրուկներին: Սակայն, ինչքան որ տէրերն իրանց կազմակերպւած ստրուկներին:

Ստրուկների ընտանեկան կապերը տէրերի հաշի համաձայն էին ստեղծուած և քանդուած:

Տէրերի շահն էր որոշում նոյնպէս կենսական միջոցների մասին քանակութիւնը, որ պէտք է ստրուկին բաժին հասնէր: Ըստրուկների սիստեմատիկական վաճառման լայն զարգացմամբ շահաւէտ եղաւ չհոգալ ստրուկի հիմնական կարիքներին լիովին բաւարարութիւն տալու մասին, այլ հող տանել գլխաւորապէս նրա աշխատանքի լարւածութեան վրայ. այդպիսով ստրուկը շուտով «մաշուած էր» և փոխանակւում մի ուրիշ թարմով, որը համեմատաբար աւելի էժան արժէր: Հետեապէս, տիրական հաշուով էր կանոնաւորւում ստրուկների կեանքի երկարատևութիւնը, ինչպէս և նրանց բազմանալը:

Նւաստացումն, ճնշւածութիւն, անմիտ խոնարհութիւն—անստրկական հոգեբանութեան զլիսուոր գծերը, որ ըզխում են նման յարաբերութիւններից: Չկար զարգացման հնարաւորութիւն, բացակայում էր կուրի գաղափարը: Միայն բացառիկ գէպերում էին տրուելու ունենում երբեմն ստրուկների խտովութիւններ, այս՝ ստեղծելու անհնար էր լինում, ուր հէնց զբաղմունքի ընտելորաբար այն գէպերում էր լինում, ուր հէնց զբաղմունքի ընտելորութիւնն էր ստեղծում կամ ստրուկների մասայի անսովոր սերտ կապակցութիւն (Սիկիլիայի երկրագործ ստրուկները մի քանի հարիւրներով շղթայւած աշխատում էին մի դաշտի վրայ), և կամ անսովոր եռանդ ու պատերազմական ոգի (Հոռովի գլադիատորները: Սակայն այստեղ նշանակութիւն ունէր և այն փաստը, որ գլադիատորները գլխաւորապէս առաջին սերունդի ստրուկներ էին և ոչ թէ ստրուկների յաջորդներ, որոնք աղատութիւնն ամենակին չէին հասկանում): Այդպիսի խտովութիւնները ճնշւում էին նկին չէին հասկանում): Այդպիսի խտովութիւնները ճնշւում էին անխնայ դաժանութեամբ, աշխատելով, որքան կարելի է, շատ ապստամբներ ջնջել: Բայց ստրուկների յաջողութեան գէպում էլ յարաբերութիւնների սիստեմը չէր կարող փոխւել—ստրուկները







Աշխատանքի բաժանումը հնարը գնահատում էին ոչ թէ արտադրական, այլ սպառողական տեսակէտից: Նրանք ուշադրութիւն չէին դարձնում աշխատանքի բաժանման այն էական օգտի վրայ, որ նա արդիւնքների բանակութիւնը միացնում և նրանց արժողութիւնը պակսեցնում է: Նրանք միայն այն բանին էին նշանակութիւն տալիս, որ աշխատանքի բաժանումը բարելաւում է արդիւնքների յատկութիւնը, բարձրացնում է նրանց սպառման բաւականութիւնը: Այսպիսի հայեցակէտը, կարելի եղածին չափ համապատասխանում է ստրկատէրերի՝ հին զարգացած հասարակութեան մէջ ունեցած սպառողական դերին:

Աշխատանքի հասարակական բաժանումն ու փոխանակութիւնը, որի մէջ նա արտադրւում է, հին աշխարհի մեծ յառաջագիժական ոյժերն էին: Նրանք այն ժամանակւայ արտադրութիւնը միացնող հիմնական կապն էին ներկայացնում: Եւ անա այս երևոյթներին էլ հասարակական հոգեբանութիւնը վերաբերւում էր մասամբ ուղղակի բացասապէս, մասամբ ոչինչ էր համարում նրանց ամենաէական նշանակութիւնը—նրանց դերը բնութեան վրայ հասարակական իշխանութիւն ձեռք բերելու մէջ: Հետաքրքիր է, որ վաշխատութիւնն աւելի յարգւած զբաղմունք էր, քան առևտուրը: Ճշմարիտ է, զրականութեան մէջ նրա վրայ էլ պատահում են յարձակումներ,—օրինակ Արիստոտէլն առևտուրը դատապարտում է այն հիմամբ, որ «փողերից փող ծնելը վերին աստիճանի հակառակ է բնութեանը»: Բայց այսպիսի յարձակումները համեմատաբար քիչ են: Մինչդեռ վաշխատի և նրա պարտապանների շահերի հակադրութիւնը պակաս ակներև ու պակաս զգալի չէր, քան առևտրականի և արտադրողի ու սպառողի շահերի հակադրութիւնը: Վաշխատութիւնը մեծ յարգանք էր վայելում, քան առևտուրը, սրովհետև այն դասակարգը, որ վաշխատութեամբ էր զբաղւում, առևտրականների դասակարգից շատ աւելի ուժեղ և ազդեցիկ էր:

Առևտուրն այն ժամանակները մեծ ձեռներեցութիւն, աշխատանք էր պահանջում և մեծ ըրիսկի հետ էր կապւած: Անգործութեան սովորած ակնաւոր ստրկատէրերը ընդհանրապէս այդպիսի գործի համար անհրաժեշտ եռանդ չունէին: Վաշխատութիւնը շատ աւելի թեթև պարապմունք էր և պակաս օգուտ էլ չունէր: Արիստոկրատները վաշխատութեան գէժ ոչինչ չունէին և ուրախութեամբ պարապում էին նրանով: Աթէնքում, ծագկման շրջանում, վաշխ սովորական բարձրութիւնը մի տարում 18% էր: Հռոմում այնպիսի մարդիկ, ինչպէս Պոմպէոսը, Միլան, Անտոնիոսը, նոյնիսկ հայրենասէր-իզէալիստ Բրուտոսն ու Կասսիոսը, չէին քաշւում փոխառութիւն տալ անազին տոկոսներով—48—70% մի տարւայ մէջ: Բնական է և այն, որ պետութիւնը եռանդուն կերպով հովանաւորում էր վաշխաւական գործը և ուշագրաւ ջերմեռանդութեամբ պաշտպանում փոխատուների շահերը: Պետութիւնն ի նկատի չէր առնում վճարելի չկամեանալու և վճարելի հնարաւորութիւն չունենալու տարբերութիւնը: Մանկ պարտապանին փոխատուն իրաւունք ունէր որպէս ստրուկ ծախելու: Իսկ հռոմէական օրէնքների 12-րդ աղիւտակի համաձայն (կազմւած արիստոկրատների ձեռքով 451 թւին Քրիս. աստջ) փոխատուներին,

լատ երևոյթին, առաջարկւում էր պարտքերը վճարելու միջոցներ չունենցողների մարմինը մասերի կտրատելը:

Այսպէս էր հասարակութեան և պետութեան վերաբերմունքը դէպի վաշխաւական գործը: Մինչդեռ հին աշխարհի կործանման պատմութեան մէջ վաշխառութեան վարգացումը, ինչպէս յետոյ կպարզւի, խիստ տխուր դեր էր խաղում:

Յոյն հռոմէական աշխարհում քաղաքականութեան գերիշխանութիւնը կեանքի միւս կողմերի վրայ խիստ կերպով աչքի է դարնւում: Այս տեսակ հասարակական գործերը քաղաքացիների կեանքի մէջ այնքան կարևոր դեր էին խաղում, որ Արիստոտէլը քաղաքական գործնէութեան ձգտումը նոյնիսկ մարդու յատկանիշ քաղաքական գործնէութեան ձգտում էր նա,—հէնց իւր բնուգիծն էր համարում: «Մարդը, — ասում է նա,— հէնց իւր բնութեամբ քաղաքական կենդանի է» (այսինքն՝ քաղաքացի): Արհամարանքը դէպի Ֆիդիկական աշխատանքը դիտաւորապէս պատմարանքը դէպի Ֆիդիկական աշխատանքը գլխաւորապէս պատմաբանւում է նրանով, որ նա հասարակական գործերով զբաղձաւաբանւում է նրանով, որ նա ժամանակ չի թողնում (Քսենոֆոն): Մինչաելու համար ազատ ժամանակ չի թողնում (Քսենոֆոն): Մինչդեռ, եթէ հետախուզենք այն շահերը, որ կային այս ընդարձակ դեռ, եթէ հետախուզենք կեանքի հիմքում և առաջ էին բերում կուսակքաղաքացիական կեանքի հիմքում և առաջ էին բերում կուսակքաղաքացիների կոիւր, գուրս կոյայ, որ վերջ ի վերջոյ նրանք շահագործութեան, նաւճման, կողոպուտի և աւարը բաժանելու շահերին էին յանգում: Եւ աշխատանքի քաղաքական շրջանը, որ պատ քաղաքացիների համար ամենաօգտակարն ու ամենաարտադրողականն էր, քանի զնում, այնքան աւելի փաստօրէն անարտադրողական, այսինքն՝ ոչ-հանրօգուտ էր դառնում:

4. ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԴԵԳՐԱԴԱՑԻԱՅԻ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ԸՆԹԱՅԻՐ

Տեխնիկական յառաջագիժութիւնը—հասարակութեան ամեն մի զարգացման հիմքը—սկսեց հետզհետէ աւելի սաստիկ դանդադեցնել իւր ընթացքն այն ժամանակւանից, երբ տէրերի դասը փաստացի կերպով հրաժարեց արտադրութեան մէջ ունեցած իւր կազմակերպչական դերից: Իսկապէս, դա հասարակութեան միակ պատակարարն էր, որ հնարաւորութիւն ունէր իւր կեանքի պայմաններով զարգանալ. ինչ չափով որ նա հասարակական պարամաններով զարգանալ էր դառնում, նրա զարգացում էլ նոյնքան փոգիտային խումբ էր դառնում, նրա զարգացում էլ սարգիտական, խումբ էր իւր բնաւորութիւնը և արդէն զնում պարագիտական, սպառողական և ոչ-արտադրողական ուղղութեամբ: Իսկ ստրուկէսպառողական և ոչ-արտադրողական ուղղութեանների, համարեա ներք, շնորհիւ իրենց կեանքի հիմնական պայմանների, համարեա չէին կարողանում զարգացնել հասարակութեան ոյժերը բնութեան գէժ կուելու համար:

Բայց այս դեռ քիչ է. ստրուկները փաստօրէն ստորացւում և մտաւորապէս ու Ֆիդիկապէս դեգրադացիայի էին ենթարկւում: Արտադրութեան գործիք դարձած մարդն արագ կերպով կորցնում էր իւր կենսական եռանդը: Անխնայ շահագործութիւնը կրճատում էր նրա գոյութիւնը և արագ այլասերման ու կորստեան մասնում էր նրա գոյութիւնը: Ստրուկների մշտական, սիստեմատիկ նրա ապագայ սերնդին: Ստրուկների մշտական, սիստեմատիկ առևտրի դէպքում տէրերի համար շահաւէտ էր իրանց ստրուկներին գործի մէջ հնարաւոր եղած ամենամեծ լարւածութիւն

պահանջել, առանց մտածելու իրավիճակներ անգնել նրանց քամ-  
ւած ոյժերը հանգստով, սնունդով և առհասարակ նրանց կա-  
րիքներին բաւական չափով բաւարութիւն տալով: Ընթացքում է,  
կենդանի գործիքը շուտ էր մաշուում, բայց նրանից դուրս քաշած  
շահն այդպիսի մի նոր գործիք գնելու ծախսերը լի ու լի ծած-  
կում էր:

Հետեանքն այն էր լինում, որ ստրուկներն անհրաժեշտորէն  
անժառանգ էին լինում, նրանց թիւը փոքրանում էր և մահա-  
ցութիւնը գերիշխում էր անեցողութեան վրայ: Բայց շատ դա-  
րերի ընթացքում այս անժառանգ լինելը լի ու լի ծածկում էր  
նոր գերիների հոսանքով, որոնք ձեռք էին բերում կուլտուրա-  
կան ստրկատիրական հասարակութեան հարեան վայրենիների  
հետ պատերազմներ մղելով: Քանի դեռ ստրուկների աղբիւրը չէր  
կտրուել, ստրկատիրական հասարակութիւնը գոնէ դեպքադացիա  
չէր անում, այլ մի մակերևութի վրայ էր կանգնած. արտադրու-  
թեան չափերը չէին պակասում, որովհետև բաւականաչափ բան-  
ւորական ոյժ կար:

Սակայն իրերի այդպիսի դրութիւնն անվերջ շարունակել  
չէր կարող: Եկաւ ժամանակը, երբ վայրենիների հետ պատերազմ-  
ների յաջողութիւնն սկսեց արագ կերպով իջնել և ստրուկներ ձեռք  
բերելը բաւականաչափ դժուարացաւ, իսկ յետոյ—նոյն իսկ բոլո-  
րովին անհնար դարձաւ: Վայրենիների վրայ տարած յաղթանակ-  
ները փոխանակուում էին պարտութիւնների մի ամբողջ շարքով,  
պատերազմները յարձակողականից սկսեցին պաշտպանողական  
դառնալ, բանւորական ոյժի աղբիւրը կտրուեց: Այդ պատճառները  
պատերազմական բաղդն այդպէս շուտ տւին:

Այդ պատճառները ստրկատիրական հասարակութեան պա-  
տերազմական ոյժի արագ անկմանն են յանգում:

Պատերազմը ստրուկների արտադրութիւնը—մնաց արտա-  
դրութեան միակ ճիւղը, որ ոչ մի կերպ չէր կարելի յանձնել  
ստրուկներին, և որը, այդ պատճառով, ազատ մարդկանց գործը  
մնաց: Զօրքը կարող էր բազմանալ միայն ազատ դասի մարդկան-  
ցից, ուստի և այս դասի անկումը նշանակում էր զօրքի անկում,  
ստրուկներ արտադրելու անկում, ստրկատիրական տնտեսութեան  
դեպքադացիա: Մինչդեռ հին աշխարհի ներքին տնտեսական պայ-  
մանները արմատից քանդում էին ազատ դասի ոյժը:

Ազատ դասը կազմած էր նախ՝ տփայիկական բոլոր ստրու-  
կատէրերից, որոնք փոքրամասնութիւն էին կազմում, և երկրորդ՝  
մանր սեփականատէրերից, որոնց տնտեսութիւնը յաճախ զուտ  
ընտանեկան բնաւորութիւն ունէր, այսինքն առանց ստրուկների  
էր կառավարում և միշտ կալւածատէրերի ու նրանց ընտանիքների  
մասնաւոր աշխատանքի առաւելութեամբ էր պահպանւում. այդ-  
պիսի տնտեսութիւնների ամենամեծ մասը կազմում էին երկրա-  
գործականները, իսկ ամենաքիչը—արհեստատրականները:

Այդպիսով, հին աշխարհի պատերազմական ոյժի հիմնական  
մասը մանր սեփականատէր-երկրագործներն էին կազմում, ուրիշ  
կերպ սասած,—գիւղացիութիւնը: Հոռմը, որ իւր իշխանութեան տակ  
միացրել էր բոլոր հին հասարակութիւնները, իւր աշխարհակա-  
լական քաղաքականութեան ծաղկած շրջանում առաւելապէս գիւ-

ղացիական պետութիւն էր հանդիսանում: Քանի դեռ պահ-  
պանւում էր ուժեղ, բազմանդամ, ազատ գիւղացիութիւնը, հին  
աշխարհը, օգտելի իւր բարձր պատերազմական տեխնիկայից,  
առանց դժուարութեան կարող էր յաղթանակներ տանել քաջ, միա-  
բանւած, բայց պատերազմական արեւստին քիչ ծանօթ բարբա-  
րոս ցեղերի վրայ:

Գիւղացիութիւնն ամբողջ պատերազմի ծանրութիւնը իւր  
վրայ էր կրում ոչ թէ միայն այն մտքով, որ զոհում էր նրան  
իւր արեւնը, այլ նաև այն մտքով, որ նրա վրայ էին դրւած հա-  
մարեա բոլոր պետական հարկերն ու տուրքերը, ի հաշիւ որոց,  
մղւում էին այդ պատերազմները: Բարձր դասակարգերը—խոշոր  
ստրկատէրերը—կարող էին դէն ձգել իրանցից այդ ծանրութիւնը,  
որովհետև հարստութեան հետ նրանց էր պատկանում նաև քա-  
ղաքական ոյժը: Ընդհակառակը, պատերազմների օգուտից գիւ-  
ղացիութիւնը չնչին չափով էր օգտւում միայն—ամենամեծ մասը  
դարձեալ հասնում էր հարուստ ստրկատէրերին և հէնց այդ պատ-  
ճառով էլ նրանք էին բռնում զօրքի մէջ բոլոր կարեւոր և ազդե-  
ցիկ պաշտօնները, նրանք էին տնօրինում աւարի բաժանումը  
(գլխաւորապէս հողի, ու ստրուկների), նրանք էին դառնում տի-  
րապետած նահանգների կառավարիչներն և այլն:

Պատերազմին ահագին ժամանակ ու միջոցներ տալով, մանր  
ազատ-երկրագործները քիչ-քիչ բարձ ի թողի էին անում և խան-  
գարում էին իրանց տնտեսութիւնները:

Վաշխատութիւնը, որին այդպիսի պարագաներում դիմում  
էր երկրագործը, թեթևացնում ու շատ անգամ լրացնում էր նրա  
տնտեսութիւնը. ահագին տոկոսների օգնութեամբ վաշխատուն—  
սովորաբար հարուստ ստրկատէր, արխատոկրատ—շուտով գիւղա-  
ցուն լիակատար քայքայման էր հասցնում:

Գիւղացիութեան քայքայումը կանխում էր, վերջապէս, խո-  
շոր գիւղատնտեսութեան զարգացմամբ: Միկիլիայի կամ հարա-  
ւային Իտալիայի խոշոր ստրկատէր-կալւածատէրը երկրագործու-  
թեան համար հարիւրաւոր ստրուկներ գործադրելով ահագին քա-  
նակութեամբ էժան հաց էր շուկայ ուղարկում. շատ անգամ յաղ-  
թւած ժողովուրդները, իբրև պատերազմական տուգանք, ահագին  
քանակութեամբ հացահատիկ էին ուղարկում Հոռմ բոլորովին ձրի:  
Մանր երկրագործի համար ծախու հացահատիկի արտադրութիւնն  
ուղղակի անշահաւէտ գործ դարձաւ:

Այդպիսով ամեն ինչ միացաւ մանր երկրագործի դէմ.—  
ահագին հարկերի և մշտական պատերազմների ծանրութիւնը, և  
վաշխատական կապիտալի ու խոշոր ստրկատիրական երկրագոր-  
ծութեան մրցման ոյժը իւր աւելի բարձր տեխնիկայով: Գիւղա-  
ցիութեան քայքայումը արագ էր ընթանում. մանր երկրագործը  
կորցնում էր իւր հողը պարտքերի պատճառով, իսկ շատ անգամ  
նոյն իսկ ինքն էր թողնում հողը, իբրև մի անշահաբեր տնտե-  
սութիւն: Նրա հողամասն անցնում էր խոշոր երկրագործին: Այս-  
պէս, հողային սեփականութիւնը հարուստների ձեռքերում էր  
կենդրոնանում: Արդէն Քրիստոսի ծննդեպն մօտերը Իտալիան  
փոքրաթիւ ահագին կալւածքներ—լատիֆունդիաներ էր ներկա-  
յացնում:

Մանր սեփականատերերը քննարկով «պրօլետարներ» — այսինքն՝ արտադրութեան միջոցներից գրկեած ազատ մարդիկ էին դառնում: Գիւղում, ուր հարուստներն էին տիրապետում և արտադրութիւնը ստրուկների աշխատանքով էր լինում, պրօլետատարին անելու բան չէր մնում: Նա վաղում էր քաղաք ապրուստի միջոցներ փնտրելու: Բաղաքներում դիզուում էին հարիւր հազարաւոր այդօրինակ անտուն մարդիկ, որոնց համար այնտեղ էլ արտադրողական ղրազմունքներ չէին լինում: Պետութիւնը պէտք է պահպանէր նրանց: Բաղաքական կուսակցութիւններն ոգտում էին նրանցից, իբրև իրար դէմ կռիւ մղելու միջոցներ: Պրօլետարների համար գոյութեան հիմնական միջոցներ էին հանդիսանում հարուստների կողմից շնորհածները, պետական օժանդակութիւնը և քաղաքական կուսակցութիւններին իրանց ձայները ծախելը: Այս յատկապէս վերաբերում է այն պրօլետարներին, որոնք Հոովմունքն էին ապրում: Նրանք միշտ ծառայում էին նրան, ով աւելի շատ էր տալիս նրանց: Այդ կատարեալ «պարագիտների պրօլետարիատն» էր, որ գերիշխող քաղաքական ոյժի և ասանձին, անտեսապէս զօրեղ, անձերի ծառայների ու շողջորթների դերի մէջ էին հանդէս գալիս: Նա լըցում էր նաև ազատ-թողնուածներով — այն ստրուկներով, որոնց անտանձին ծառայութեան կամ տւած փրկանքի համար տէրերը ազատ էին թողնում: Պրօլետարիատի այս ցածր տարրերը փութացնում էին նրա բարոյական քայքայումը, միացնելով այն ժամանակւայ ազատ մարդկանց մոլութիւններին ստրկական հոգեբանութեան ամբողջ ստոր դիրքը:

Եւ այդպէս, գիւղացիութիւնը քայքայւում, կորցնում էր նախկին հասարակական դերը և անբարոյականանում՝ պրօլետարիատ պարագիտներ դառնալով: Սրա հետ միասին հալւում, մաշւում էր ստրկատիրական հասարակութեան ոյժը. պարագիտ պրօլետարը ընդունակ չէ գինւորութեան մէջ եռանդուն, առնական գիւղացուն փոխարինել. պարագիտը չի կարող տանել պատերազմի ծանր գործերը, նրա խիստ կարգապահութիւնը, նա ոչ մի տեղ չի ուզում գուրս գալ քաղաքից, ուր առանց աշխատելու ձեռք է բերում ապրուստի միջոցներ: Այս նկատմամբ հին աշխարհի պրօլետարը իւր հակադրութեամբ բոլորովին նման է քնքաջամ խոշոր ստրկատէրերին:

Իսկ ցեղական կապերով ամուր զպւլած, ազատ ու հպարտ վայրենիներն անխոնջ շարունակում էին իրանց կռիւը ստրկատիրական աշխարհի, նրա գինւորական կազմակերպութեան — ինքնօրմէական զօրքի դէմ: Եւ այս, երբեմն անընկճելի, հին կուլտուրայի պատւարը վայրենիների մակընթացութեան նոր և նոր ալիքների գրոհի տակ քիչ-քիչ սկսում է անձնատար լինել: Հոովմութեան համար պատերազմը յարձակողականից պաշտպանողական է դառնում, յաղթանակները փոխարինւում են պարտութիւններով: Ստրկական բանւորական ոյժի գինւորական արտադրութիւնը չափազանց պակասում, նւազում է և միևնոյն ժամանակ փորւում, քանդում է հին քաղաքակրթութեան հիմքը:

Սկսւում է արտադրութեան ընդհանուր անկումն — բանւորական ոյժի պակասութեան արդիւնքը: Առաջինը տուժում է ագ-

գարնակչութիւնը: Առաջ լատիֆունդիաներում նկատւում է երկրագործութեան փոխարինումն անասնապահութեամբ, որն աւելի քիչ բանւոր ձեւքեր է պահանջում. բայց սրա վրայ գործը կանգ չի առնում. գիւղը դատարկւում է և առաջւայ արտերի տեղ երեւան եկած արօտավայրերը իրանց կարգին ամայանում են: Գիւղաանտեսութեան թուլութիւնն ինք ըստ ինքեան տակից քանդում է արդիւնաբերութեան միւս շրջանները, որոնց համար գիւղը մասամբ հում նիւթի և կենսական միջոցների արիւր և մասամբ շուկայ էր: Սակայն, բացի այդ, անմիջականապէս արդիւնագործութեան անկման է տանում նոյն թարմ ստրուկների պակասութիւնը, որն և քայքայեց գիւղատնտեսութիւնը: Հին աշխարհը քայլ առ քայլ շարժւում էր դէպի լիակատար խորտակում: Բայց նա դեռ կուում էր իւր կեանքի ու քաղաքակրթութեան համար, յարմարւել էր ջանում փոխւած պայմաններին:

Արտադրութեան հիմնական ճիւղերի — պատերազմական և գիւղական տնտեսութեան մէջ բանւորական ոյժի պակասութիւնը Հոովմէական կայսրութիւնն աշխատում էր ազատ վայրենիներով լրացնել:

Հոովմէական լէգէօնների կազմը փոփոխւում է. այնտեղ հետգհետէ աւելի շատ գալլերին ու գերմանացիներին են հաւաքում. ժամանակի ընթացքում սահմանների պահպանութեան համար սկսում են վարձել նոյն իսկ ամբողջ բարբարոսական ուղամիկ խմբեր: Սրա շնորհիւ Հոովմը դեռ կարողացաւ մի քանի ժամանակ յետ պահել բարբարոսներին, հակադրելով նրանց՝ վայրենիներին. բայց հոովմէական զօրաբանակն իւր կազմով դադարեց հոովմէական լինելուց և նոյն իսկ հոովմէացի-գնդապետները քիչ-քիչ դուրս էին քշւում գերմանացիներից — գերմանական ռազմիկների առաջնորդներից: Եւ երբ 476 թւին բարբարոս Օթօակըը հոովմէական կայսր Բոմբուլ-Աւգուստուլին տապալեց — այս՝ հոովմէական զօրքի՝ արդէն գերմանականի փոխւած լինելու արտաքին արտայայտութիւնն էր:

Նման երևոյթ էր կատարւում և գիւղատնտեսութեան մէջ: Կայսրութեան կառավարութիւնն աշխատում էր ամայացած հողերի վրայ գաղթականներ հրաւիրել, գիջանելով նրանց հողամասեր արտօնաւոր պայմաններով և որոշ հարկ կամ տուրք առնելով: Այդպիսի եղանակով էին վարւում և մասնաւոր կրկրագործները, կապալով տալով հողը ցանկացողներին որոշ հողային հարկերով: Այդպէս առաջ եկաւ ազատ կոլոնատը — մանր հողահարկերի դասը, որոնք իրանց անկախ տնտեսութիւնն առաջ էին տանում թագաւորական կամ տիրական հողերում, որոշւած չափով տուրք վճարելով: Ազատ գաղութների մեծ մասը կազմում էին Հոովմէական կայսրութիւնը գաղթած բարբարոսները, որոնցից հետևապէս ծնւեց նոր գիւղացիութեան հիմնական միջուկը:

Խոշոր երկրագործութեան անկումն ազատ կոլոնատի հետ միաժամանակ ստեղծեց և անազատ կոլոնատը. շատ դէպքերում ստրուկները կապալառու-երկրագործներ էին դառնում. երբ հողի շուկայի պայմաններն զգալի կերպով վատթարացան, լատիֆունդիաներում նախկին մասսային արտադրութիւնը չէր կարողանում շարունակել, շնորհիւ վատ վաճառքի նոյն իսկ այնտեղ, ուր ըստրուկների պակասութիւնն չկար. իսկ փոքր չափերով արտադրու-

թիւնն աւելի յարմար էր կապալառուների միջոցով անել, որոնք իրանց վրայ էին վերցնում բոլոր հոգսերը և հողային տուրքը վճարում: Այդպիսով տէրերի համար սկսեց աւելի շահաւէտ լինել թողնելու ստրուկներին անկախ տնտեսութիւն առաջ տանել, փոխարէնը՝ հողային տուրք վճարելով, քան անմիջականապէս շահագործել նրանց իրանց տնտեսութեան մէջ. աշխատանքի ազատութեան համեմատական բարձրացումը, բաղադատելով սովորական ստրկային աշխատանքի հետ, սաստկացնում էր նրա լարւածութիւնն ու արտադրողականութիւնը, այնպէս, որ սաստկացած շահագործութեան հնարաւորութիւն էր հանդէս գալիս:

Կոլոնատը իւր էութեամբ ներկայացնում էր ոչ այնքան մի հոովմէական հիմնարկութիւն, որքան գերմանական. նա կեանքի գերման-օֆէրալական ձևերի արմատացումն էր հոմմէական-կալւածատիրական հասարակութեան մէջ: Բարբարոս-գաղթականներին ընդունելով իւր հողերի վրայ, կայսրութիւնը նրանց հետ պէտք է ընդունէր նրանց կարգերը, որովհետև ուրիշ կարգերի նրանք չէին ուզում և ընդունակ չէին հպատակել:

Կլասիկ աշխարհը իւր բարբարոս միջավայրում կարճեւ լուծւում էր. նրա զօրքը, նրա գիւղացիութիւնը և ներքին յարաբերութիւններն աստիճանաբար գերմանանում էին: Գերմանացիները՝ կայսրութեան տիրապետելը լրացրեց միայն հին հասարակութիւնից՝ ֆէոդալական — միջնադարեանն անցնելու պրոցեսը:

Այդպիսով, հին կուլտուրայի դեգրադացիայի պատճառներն այն հետեանքն եք ունենում, որ այս կուլտուրայի հիմքը կազմում է բարբարոս ցեղերի պատերազմական շահագործութիւնը, որոնք արտադրութեան կենդանի գործիքների — ստրուկների համար մի տեսակ հում նիւթ էին հանդիսանում: Պրոցեսսի հետևողական ընթացքն այս տեսակ կարելի է նկարագրել ստրուկներին զեզրագացիա — ծայրայեղ շահագործութեան ոյժով, ազատ մարդկանց զեզրագացիա — սրանց՝ հասարակութեան պարագիտային տարրեր զարձակելով, պատերազմական զօրութեան և պատերազմական արտադրութեան անկումն, ընդհանրապէս արտադրութեան անկում՝ շնորհիւ բանւորական ոյժի պակասութեան, բարբարոս տարրերին հին կազմալուծւած հասարակութեան մէջ արմատացնելը և այս տարրերի վերջնական յաղթանակը նրա մընացորդների վրայ:

Ստրկատիրական շրջանի բնոյթանոսք բնութագրիքը

1) Մեր ուսումնասիրած շրջանը տեխնիկական կողմից բնորոշւում է. նախ՝ աշխատանքի համեմատաբար մեծ արտադրողականութեամբ, երբ յաւելեալ աշխատանքը մշտական երևոյթ է ներկայացնում, և հասարակականապէս-բաժանւած աշխատանքի համեմատաբար աւելի շատ զանազանակերպութեամբ. երկրորդ՝ նա բնորոշւում է իւր զգալի դերով ու արտադրութեան այն ճիւղի ընդհանուր սիստեմի զարգացմամբ, որ պատերազմ է կոչւում և որի բովանդակութիւնն է հասարակութեան կոիւր իւր շրջապատող թշնամի հասարակութիւնների դէմ:

2) Ստրկատիրական խումբը նահապետական ցեղից հետե-

ւեալ կերպով էր զարգանում: Արտադրութեան անելովն ու բարգանալովը կազմակերպչի արտադրական դերը գնալով աւելի սակաւ էր առանձնանում կատարողական գործունէութիւնից: Կազմակերպչական դերի ժառանգական բնաւորութեան դէպքում սակազմակերպչի ընտանիքը կտրուկ կերպով բաժանում էր խումբից: Այս ընտանիքը գնալով սկսում էր աւելի մեծ չափով ապրել յաւելեալ արդիւնքի հաշին, որն և հնարաւոր է դառնում միայն շնորհիւ նրա ընդհանուր գումարի նկատելի աճելուն: Կազմակերպչի ընտանիքի ու ֆինացած խմբի յարաբերութիւնների ցեղակցական բնաւորութիւնը չքանում է երկու պայմանների զօրակցական բնաւորութեանը չքանում է, միւս կողմից — շնորհիւ կազմակերպչի մեմատական թիւն աճում է, միւս կողմից — շնորհիւ կազմակերպչի մեմատական թիւն աճում է, միւս կողմից — շնորհիւ կազմակերպչի արդիւնքի համար հանդէս են գալիս իբրև շահագործութեան հասարակ չի համար հանդէս են գալիս իբրև շահագործութեան հասարակ գործիքներ և, ստրուկների սիստեմատիկ աւետրի զարգանալով, այս գործիքը կազմակերպչի աչքին գնալով աւելի կորցնում է իւր արժէքը: Արտադրողն արտադրութեան գործիք և ապրանք է դառնում:

Ժամանակի ընթացքում կազմակերպչական գործնէութիւնը քիչ-քիչ ամենաընդունակ ու տիրոջ վստահութիւնը վայելող առանձին ստրուկների վրայ է դրւում: Այս պրոցեսն սկսւում է խմբի խիստ աճած արտադրութիւնը մի անձնաւորութեան կառնաւորելու անհնարաւորութեան շնորհիւ, իսկ շարունակւում ու վերջանում է տէրերի ձգտումների ազդեցութեան տակ՝ ազատելու իրան առհասարակ աշխատանքից:

Միջ-լսմբական արտադրական կապերը ստրուկութեան էպիտալում մի նշանաւոր քայլ են անում առաջ, մի կողմից՝ աշխատանքի բաժանման անկազմակերպ ձևի, որի արտայայտութիւնը փոխանակութիւնն է հանդիսանում, միւս կողմից — պետական միութիւնների կազմակերպւած ձևի մէջ:

Չգալի կերպով զարգացած փոխանակութեան ազդեցութեան տակ կազմւած պետական միութիւնները գլխաւորապէս արեստիկրատական հասարակապետութեան ձև ունէին. այնտեղ, ուր փոխանակական յարաբերութիւնները կեանքի մէջ աւելի պատկասարակական լայն միութիւն էին պահանջում, պետութիւնները կազմւում էին գլխաւորապէս նւաճման ընթացքով և արեւելեան բռնապետական միապետութեան ձև ստանում:

3) Ստրկութեան հասարակական յարաբերութիւնների սիստեմը վերացնում էր ստրուկ դասակարգի զարգանալու ամեն մի հնարաւորութիւնը: Տէրերի դասակարգի համար պայմաններն արեւելեան-բռնապետական և արեւմտեան-բռնապետական հասարակութիւններին մէջ միատեսակ չէին. նախ բիւրոկրատական բակութիւններին մէջ միատեսակ չէին ջլատում էր ամեն մի զարգամբխանիզմի հարստահարութիւնը ջլատում էր ամեն մի զարգացում և հէնց ստրկատէրերի մէջ ստեղծում է լիովին լճացած ան-

տարբեր ու ճակատագրական հոգեբանութիւն: Հասարակութիւններէ երկրորդ խմբում գոյութիւն ունէին ազատ մարդկանց դասակարգի զարգացման բոլոր պայմանները:

Բայց կլասիկ աշխարհի հասարակութիւնների մէջ բարձր դասակարգի հոգեկանի զարգացումը դէպի տեխնիկական ու անտեսական յառաջդիմութեան կողմն էր դիմում մինչև այն ժամանակ միայն, քանի դեռ տէրերը փաստացի կերպով ծախել մի կողմ չէին դրել իրանց արտադրական դերը. իսկ երբ այդ տեղի ունեցաւ, նրանց հոգեբանութիւնն սկսեց զարգանալ ոչ թէ արտադրական, այլ սպառողական, պարազիտային ուղղութեամբ: Այդ ժամանակահատից տեխնիկական յառաջդիմութիւնը համարեա զազարեց և միայն գեղարվեստներն էին զարգանում, որոնք գիտութիւնների ու փիլիսոփայութեան մէջ ամենավերացականներն են:

4) Հին աշխարհի արտադրական կեանքի հիմքը կազմում էր պատերազմը—ստրուկների արտադրութիւնը: Իսկ սարկատիրական հասարակութեան պատերազմական ոյժը ոչ թէ խոշոր ստրուկատէրերից այլ մանր սեփականատէր երկրագործների մէջ էր կայանում: Երբ պատերազմները, վաշխառութիւնը և ընդարձակ կալածների խոշոր արտադրութեան մրցումը քանդեցին գիւղացիութիւնը և նրան, մեծամասնութեամբ, պարագիտ պրօլետարներ դարձրին, այն ժամանակ ստրկատիրական հասարակութեան պատադրութիւնը, ընկաւ: Ուժասպառ եղած ու դառամած կլասիկ աշխարհն այն ժամանակ փուլ եկաւ իրան շրջապատող բարբարոս աշխարհում, որ կուլտուրայով աւելի ստոր, բայց առողջ և ուժալից էր յետագայ զարգացման համար:

5) Կլասիկ հասարակութիւնը միջին դարերի գերման-ռոմանական աշխարհին ժառանգութիւն թողեց ահագին քանակութեամբ բարձր կատարելութեան հասած իդիօլօգիական նիւթ.—հովմէական իրաւունքը, յունական գեղարվեստը, գեղեցիկ զրականութիւնը, գիտութիւնն ու փիլիսոփայութիւնը: Գերման-ռոմանական աշխարհն այս պատրաստի նիւթից այն ժամանակ օգտւեց միայն, երբ զարգացման համապատասխան աստիճանին հասաւ, երբ հին իդիօլօգիական ձևերը յարմար դուրս եկան նրա նոր յարակրութիւններին:

### III. ՅԷՕԴԱԼԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ

#### 1. ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԵՊԻ ԲՆՈՒԹԻՒՆԸ

Եթէ նահապետական-ցեղական հասարակութիւնը կազմեց արտադրութեան մարդկային կեանքն ապահովող նոր եղանակների երեսան գալու ազդեցութեամբ, Ֆէօդալական հասարակութեան հիմքը այս միջոցների յետագայ զարգացումն էր:

Երկրագործութեան գեռակշտող նշանակութիւն արտադրութեան մէջ, որի միջոցին հպատակի դերն անասնապահութիւնն է կատարում, և

լիակատար հաստատարնակ կեանք սահմանափակ հողային ասպարիզում —այսպէս են ահա Ֆէօդալական աշխարհի տեխնիկական պայմանները:

Երբ անասնապահների թափառական ցեղերն սկսում են երկրագործութեամբ պարապել, սկզբում այդ նրանց մէջ արտադրութեան ստորադրւած, օժանդակ մի ճիւղ է հանդիսանում. նա յարմարում է անասնապահութեան պայմաններին, այնպէս որ ցանքսի տեղերը շատ յաճախ փոխւում են: Մակայն, ինչքան որ աղգաբնակչութեան խտութիւնն աւելանում է, հողային տարածութիւնը փոքրանում և թափառական կեանքի ճիւղը սեղմւում, ինչքան որ, արօտատեղիների պառական կատճառով, անասնապահութեան զարգացումը սահմանափակում է, այնքան էլ երկրագործութիւնը հետզհետէ կեանքի կուլի փակւում է, այնքան էլ երկրագործութիւնը հետզհետէ կեանքի կուլի արևոր տարրն է դառնում: Լիովին հաստատարնակ գոյութեան ժամանակ արդէն երկրագործութիւնը կեանքի կուլի հիմնաւոր շրջաններէ մէկն է հանդիսանում, իսկ անասնապահութիւնը, թափառական կեանքի հետ ունեցած կապը կորցնելով, յարմարում է երկրագործութեան պայմաններին և դառնում, մի տեսակ, նրա ճիւղը: Ինչ վերաբերում է ամենասկզբից հէնց զուտ երկրագործական ու հաստատարնակ բերում է ամենասկզբից հէնց զուտ երկրագործական աստիճանական ցեղերին, նրանց բանը հետզհետէ երկրագործութեան աստիճանական զարգացմանն է յանգում. իսկ երկրագործութիւնը քիչ-քիչ ամփոփում է իւր մէջ հաստատարնակ անասնապահութիւնը:

Ֆէօդալական շրջանում արդիւնաբերութեան միւս ճիւղերը (որսորդութիւն, լեռնային աշխատանք) և արդիւնագործութիւնը խիստ անզարդացած և մասամբ սաղմնային դրութեան մէջ են գտնւում: Իւրաքանչիւր հասարակութեան կեանքի մէջ պատերազմը, իբրև ամբողջ արտադրութեան պահպանութեան անհրաժեշտ եղանակ և հասարակութեան տեղիտորիան ընդարձակելու միակ միջոց, պակաս նշանակութիւն չունի:

Ընդհանուր առմամբ՝ արդիւնքների զանազանակերպութիւնը դեռ աննշան է (մի պայման, որ փոխանակութեան զարգացման համար այնքան նպաստաւոր չէ), բայց յաւելեալ աշխատանքը համեմատաբար արդէն արտադրութեան քիչ մասը չի ներկայացնում (մի պայման, որ շահագործութեան աճման համար բարենպաստ է :

#### 2. ՅԷՕԴԱԼԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՇԽՈՂԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Աշխատանքի արտադրողականութեան բարձրանալը հասարակական կազմակերպութեան չափերն այնպիսի աճման հասցրեց, որ միջնադարեան համայնքը շատ անգամ չափւում էր արդէն ոչ թէ հարիւրաւոր, այլ հազարաւոր մարդկանցով: Միևնոյն ժամանակ երկրագործական տեխնիկայի պայմաններն այդպիսի խմբի սահմաններում մի քիչ արտադրութեան բաժանում յառաջ բերին:

Այդքէն խոշոր նահապետական-ցեղական խմբի մէջ մաս-մաս ըն-  
տանիքների բաժանել էր նկատուում. այդ բաժանումը շարունակեց,  
ինչպէս վերևը ցոյց է տրւած, շնորհիւ նահապետի համար միայնակ  
իւր կազմակերպչական աշխատանքը կատարելու անհնարաւորութեան,  
շնորհիւ այդ աշխատանքի մի մասը ուրիշ աւելի մանր կազմակերպիչ-  
ների վրայ դնելու անհրաժեշտութեան. սակայն, այդ մանր կազ-  
մակերպիչները շատ չնչին ակախութիւն ունէին, իսկ ամբողջ  
համայնքի արտադրութիւնը բնորոշուում էր զգալի ամբողջութեամբ:  
Հաստատարնակ երկրագործական արտադրութեան տիրապետու-  
թեան ժամանակ տնտեսական մանր միաւորները — ընտանիք-  
ները — տնտեսական կեանքի մէջ աւելի մեծ անկախութիւն են ձեռք  
բերում: Սովորաբար երկրագործական գործերը կատարելու համար  
լիովին բաւական են առանձին ընտանեկան խմբի ոյժերը — ամբողջ  
խմբի ընդհանուր կօօպերացիայի կարիք չկայ. բացի այդ, մանր ըն-  
տանեկան արտադրութիւնն այս դէպքում արտադրող է, որով-  
հետև, երկրագործութեան խոշոր եղանակների դէպքում, իւր ուշադրու-  
թիւնն ու բանւորական ոյժի աշխատասիրութիւնը մի փոքր հողաբաժ-  
նի վրայ կենդրոնացրած փոքրիկ խումբ ընդունակ է աւելի առատօ-  
րէն շահեցնելու նրա բնական յատկութիւնները, քան բաղմանդամ և  
իւր հաւաքական գործունէութիւնը մի ընդարձակ տարածութեան վը-  
րայ վատնող խումբ:

Այդպիսով, երկրագործական համայնքը ֆէօդալական շրջանի սահ-  
մանագծի վրայ բաղկացած էր ծագումով իրար ազգական բաղմաթիւ  
ընտանեկան խմբերից, որոնցից իւրաքանչիւրը որոշ աստիճանի առան-  
ձին երկրագործական տնտեսութիւնն էր առաջ տանում: Ըստ իրանց  
քանակութեան, այս խմբերը հին նահապետական ցեղի և ժամանակակից  
ընտանիքների միջին տեղն էին բռնում. նրանք մօտաւորապէս համա-  
պատասխանում էին մի քանի հարիւր մարդկանցից բաղկացած սլաւո-  
նական «մեծ ընտանիքներին», որոնք մինչև այժմ էլ մի քանի տեղե-  
րում պահպանւած են:

Սակայն ընտանեկան խմբերի մէջ դեռ բաւականին նշանաւոր  
կապեր մնացին: Շատ դէպքերում, երբ առանձին ընտանիքի ոյժերն  
անբաւարար էին դուրս գալիս, նրան ժրջան կերպով օգնում էին  
հարեան ընտանիքները և երբեմն ամբողջ համայնքը: Այդպէս էր լի-  
նում շատ անգամ բնակարան շինելիս, ցանքսի համար անտառը կտրա-  
տելիս ու նոր հողաբաժին կազմելիս և այլն: Անասնապահութեան մէջ  
միաբան գործելու օգուտներն այնքան զգալի էին դուրս գալիս, որ հա-  
մայնքի տաւարը զարնանից մինչև աշուն համարեա միշտ միացած մի  
հօտ էր կազմում, որն արածում էր համայնական անբաժան արօտա-  
տեղիներում, համայնական հովիւների հսկողութեան տակ. անբաժան  
արօտատեղիների թւին էին պատկանում, ի միջի այլոց, բոլոր հան-  
գասեան թողած վարելահողերն ու արդէն հնձած վարելահողերը, այն-  
պէս որ վարելահողի իւրաքանչիւր բաժինը ծառայում էր ընտանեկան

խմբի առանձին արտադրութեանը՝ զուտ երկրագործական աշխատանք-  
ների ընթացքում: Համայնական մարդագետիկներին քաղը մեծամաս-  
նութեամբ հաւաքական կերպով էր կատարուում, իսկ յետոյ խոտը բա-  
ժանուում էր ընտանիքների մէջ՝ համապատասխան իրանց հողաբաժին-  
ներին:

Բացի այդ, նոյն իսկ հերկելու հողերից օգտւելը, որոշ սահման-  
ներում, սովորաբար, համայնքն էր կարգաւորում. ընտանեկան արտա-  
դրութիւնը որոշ հողաբաժնի հետ կապւած չէր մնում. ժամանակ առ  
գրութիւնը որոշ հողաբաժնի հետ կապւած չէր տեղի ունենում ընտանիքների  
ժամանակ հողի հաւասար բաժանում էր տեղի ունենում ընտանիքների  
մէջ. այս դէպքում իւրաքանչիւր տնտեսութիւն կամ նախկին մեծու-  
թեամբ հողաբաժին էր ստանում, միայն համայնական վարելահողի մի  
ուրիշ տեղում և կամ հողաբաժինները փոխուում էին ընտանիքների մե-  
ծութեան և նրանց բանւորական ոյժի համաձայն և այլն: Սկզբում, այս-  
պիսի դասաւորումներ ու սահմաններ տեղի էին ունենում թերևս ամեն  
պիսի դասաւորումներ ու սահմաններ տեղի էին ունենում թերևս ամեն  
տարի, յետոյ — մի քանի տարին մի անգամ: Նրանք այն նշանակու-  
թիւնն ունէին, որ նրանցով հաւասարում էին տարբեր հողաբաժին-  
ների անմիատեսակ պտղաբերութեան օգուտն ու անօգտակարութիւնը:  
Ասենք, արդէն բաւական վաղ ժամանակներից սկսած համայնքները դա-  
դարում են սահմանի մէջ թողնել այն հողերը, որոնք մաքրւած էին  
անտառներից ու անմշակ հողերից բացառապէս առանձին ընտանիքի  
աշխատանքով: Հետևապէս համայնական սահմաններում արտայայտուում  
է այն փաստը, որ համայնական հողի սկզբնական զբաւումը ամբողջ  
համայնքի միաբան աշխատանքով էր կատարւել, լինէր այդ նոր, ան-  
մշակ հողերի մշակումն, թէ ուղղակի նւաճելու աշխատանք:

Պէտք է աւելացնել, որ առանձին ընտանիքների աշխատանքային  
միաբանութիւնը տարբեր դէպքերում միատեսակ ձևերի և միատեսակ  
աստիճանի մէջ չէր պահպանուում, նայեա՞ծ տեղական բնական և պատ-  
մական պայմաններին:

Մինչև նոր ժամանակներս Շվեյցարիայի, հարաւային Գերմա-  
նիայի, Պերինեան թերակղզու մի քանի տեղերում և հարաւային  
Սլաւօնների մէջ և այլն, «համայնական հողատիրութեան» ձևով  
երկրագործական կոմունիզմի հետքերը պահել էին:

Երկրագործական կոմունիզմն ամենամեծ չափով պահեց  
այնտեղ, որտեղ, գոյութիւն ունէին որ և է առանձին պայման-  
ներ, որ երկրագործութիւնը հաւաքական աշխատանքին էին են-  
թարկում: Այսպէս, Արևելեան-Հնդկաստանի մի քանի շրջաննե-  
թարկում: Այսպէս, Արևելեան-Հնդկաստանի մի քանի շրջաննե-  
րում ամբողջ երկրագործութիւնը հիմնւած է արհեստական ոտոզ-  
ման, բարդ շրանքների վրայ, որը, անհրաժեշտօրէն, ընդարձակ  
խմբի գործ է և ոչ առանձին ընտանիքի. հէնց այնտեղ, դեռ  
վերջին ժամանակներում, կարելի էր գտնել երկրագործական  
կոմունիզմը իւր ամենամաքուր ձևերով: Այս համայնքների մէջ  
ամբողջ հողի մշակումը միաբան աշխատանքով է կատարուում և  
այնտոյ ընդհանուր արդիւնքը բաժանուում է ընտանիքների մէջ: Սա-  
կայն մասնաձևը, գործւածքը և ուրիշ աշխատանքները կատարում է  
կայն մասնաձևը, գործւածքը և ուրիշ աշխատանքները կատարում է

արդէն իւրաքանչիւր ընտանիք առանձին, իրրև տնային կողմնակի գրադմունքներ: Համայնքն ունենում է իւր արհեստաւորը (գարբին, ատաղձագործ, բրտւ վարսավեր, բացարար և այլն) ու պաշտօնական անձերը (աւագ, հաշւապահ, ջրամբարների վերակացու, քուրմեր և այլն): Թէ առաջինները և թէ երկրորդները նշանակուում են համայնքից և, առանց երկրագործութեամբ զբաղւելու, հասարակական հաշուով են ապրում: Կազմակերպչական աշխատանքը (պաշտօնական անձի) ոչ միայն բաժանւած է կատարողական աշխատանքից, այլև բաժանւած է մի քանի մարդկանց վրայ, — սակայն դեռ ամբողջ համայնքի վերահսկողութեան տակ է գտնւում, որը դարձեալ երկրագործական անսովոր համախմբումից է կախւած: Շնորհիւ այս համախմբման, խումբը պարզ արտայայտւած գեղական բնաւորութիւնը դեռ պահպանում է ծագման միութիւնը շարունակում է որոշել իրանով տնտեսական միութիւնների շրջանակները:

Միջին դարերի սկզբում երկրագործական համայնքի մէջ կան և արհեստաւորներ, բայց նրանք մեծամասնութեամբ մասնագէտ չեն դառնում իրանց արհեստի մէջ, այլ միացնում են նրան երկրագործութեան հետ: Եւ իւրաքանչիւր ընտանեկան տնտեսութիւն սեփական աշխատանքով արհեստի բնաւորութիւն ունեցող մի քանի աշխատանքներ է կատարում, գլխաւորապէս — մանած, գործւածք, հագուստներ պատրաստել: Այնտեղ, ուր ընտանիքն անկարող է սեփական ոյժերով իւր գործը տեսնել, նա պատւէր է տալիս արհեստաւորին, ըստ որում նրան հում նիւթ է տալիս միայն. շատ անգամ արհեստաւորն աշխատում է պատւէր տւողի տանը: Աշխատանքի հասարակական բաժանումն ընդհանրապէս թոյլ է զարգացած և արտայայտւում է համարեա բացառապէս դրացիական փոխանակութեամբ եւ արճատւարներին պատւէր վերցրած աշխատակրով: Հէնց սրան են համապատասխանում կրեզիտի անզարգացած ձևերը. փողային կրեզիտը համարեա բացառութիւն է ներկայացնում:

Ժամանակի ընթացքում աշխատանքի հասարակական բաժանումն աւելի կտրուկ բնաւորութիւն էր ստանում, արհեստը զատւում էր երկրագործութիւնից: Ամենից առաջ արհեստաւորներից առանձնացան զարբիները և մի քանի տեղերում — ջրապացպանները: Արդէն մեր ուսումնասիրած ժամանակաշրջանի շատ վաղ էպոխայում զարբիներն ու ջրապացպանը մի քանի դրացի համայնքների համար ստեղծ ընդհանուր են հանդիսանում, որով համայնքների մէջ առաջանում են արտարական կապեր, թէև թոյլ:

Համայնքի քանակութեան աճումը և ընտանեկան խմբերի զգալի առանձնանալն այնտեղ հասաւ, որ քիչ-քիչ չքայաւ ու մոռացւեց առանձին տնտեսութիւնների մէջ եղած նախնական կապերի ցեղական բնաւորութիւնը. զուտ արտարական կապը և սրանից բխած քաղաքական կապը արդէն համայնական ամբողջութիւնն ամրապնդող հիմնական ցիմենտն է հանդիսանում:

Այնտեղ, ուր երկրագործական համայնքից ֆէոդալական խմբեր գարգացումն ամենաաստիճանական և ամենատիպիկական կերպով էր դնում, այդ գարգացման հետևողականութիւնն այսպիսի ձևով է ներկայանում:

Սկզբում համայնքի կազմը զանազանում է իւր համեմատաբար աւելի մեծ միատեսակութեամբ — առանձին տնտեսութիւնների չափերի մէջ տարբերութիւնն այնքան մեծ չէր, որ ապահովէր նրանցից ամենամեծի վճռական տնտեսական գերակշռութիւնը՝ մնացածների վրայ: Ամբողջ համայնքին վերաբերող գործերն աւագների — տէրերի խորճը: Ամբողջ էին վճռում. հաւաքական ձեռնարկութիւնների համար, որոնք մի գով էին վճռում. հաւաքական ձեռնարկութիւնների համար, որոնք մի կազմակերպիչ էին պահանջում (գլխաւորապէս — պատերազմի դէպքում), աւագների խորհուրդն իր միջից ընտրում էր մի առաջնորդ, որն այդ դերը կատարում էր ժամանակաւորապէս միայն, քանի կարիք կար: Երբ պատերազմները սովորականի պէս էին առաջ տարւում և այդ լինում էր ոչ թէ մի համայնքի, այլ ցեղական միութեան միջոցով, այն ժամանակ ռազմիկների երկրորդական առաջնորդներն էլ իրանց միջից ընդհանուր ժամանակաւոր առաջնորդ էին ընտրում:

Սակայն տնտեսական անհաւասարութեան սաղմերն արդէն գոյութիւն ունեն: Այդ սաղմերից մէկը կազմակերպչի ընդհանուր ձեռնարկութիւններից բաժանւելն է, լինի այդ թէկուզ ժամանակաւոր. միւս սաղմը նրանումն է կայանում, որ բացի հողի համայնական սեփականութիւնից, գոյութիւն ունի և մասնաւորը: Առանձին ընտանիքի սեփական աշխատանքով մաքրած հողերը նրա լիակատար սեփականութիւնն են ներկայացնում. այդպէս էլ պատերազմական ճանապարհով ձեռք բերւած հողերը, մի անգամ որ պատերազմին մասնակցող հող տեսնւում էր բաժանւած, սովորաբար այլևս նորից չեն բաժանւում:

Աւելի քան հասկանալի է, որ մնացածների մէջ մի քիչ աւելի մեծ տնտեսական ոյժով աչքի ընկնող տնտեսութիւնները պէտք է այդպիսի դէպքերում այդ ոյժը միւսներից աւելի արագ զարգացնէին: Նախ՝ այդպիսի տնտեսութեամբ աւելի հեշտ էր նոր, չզբաււած հողերը մաքրելու միջոցով ընդարձակել նրանց մասնաւոր հողաբաժինները հրապարակը. երկրորդ՝ այդ, աւելի խոշոր տնտեսութիւններին ներք կազմակերպութեան մէջ աւելի նշանաւոր դիրք էին բռնում և, ներք կազմակերպութեան մէջ աւելի նշանաւոր մասն էին ստանում հետևապէս, պատերազմի աւարից աւելի նշանաւոր մասն էին ստանում — շարժական և անշարժ: Չի խանգարում յիշել, որ շարժական աւարի մէջ էին մտնում և ստրուկները, որորհետև երկրագործական համայնքը ժառանգից նահապետական խմբից, ի միջի այլոց, և ստրուկների վերաբերմունքը դէպի ստրկութեան մեղմ ձևը:

Այդպիսով տնտեսական միաւորների անհաւասարութիւնը գնալով աճում էր և քիչ-քիչ քանդում համայնքի նախկին միատեսակու-

թիւնը: Ամենահարուստ ընտանիքների ազդեցութիւնը համայնական կեանքի ընթացքի վրայ հետզհետէ այն պատճառով էր աւելի մեծանում ու հաստատուում, որ տնտեսական գերազանցութիւնը թոյլ էր տալիս նրանց միւս մնացած բոլոր տնտեսութիւնները մի քիչ նիւթականապէս իրանց ենթարկել: Խոշոր տնտեսութիւններն իրանց վրայ էին վերցնում այնպիսի ձեռնարկութիւններ, որոնք մնացածների ուժերին համապատասխան չէին, օրինակ՝ մեծ ջրադաշններ, փուռներ հիմնել և այլն: Մեծ տնտեսութիւնները, աւելի հաստատական լինելով, շատ աւելի քիչ էին փախուում տնտեսական խախտումներից, սովորից և ուրիշ տարերային դժբախտութիւններից, որոնք այնքան ստէպ էին պատահում անդարգացած տեխնիկայի ժամանակ. այս պատճառով մեծ տնտեսութիւնները իրանց պաշարներից շատ անգամ օժանդակութիւն էին ցոյց տալիս փոքրերին, իսկ այդ օժանդակութեան փոխարէնը աշխատելով էին հատուցանում, մի բան, որ հարուստներին թոյլ էր տալիս խիստ ընդարձակել իրանց վարելահողերն ու, ընդհանրապէս, իրանց ամբողջ արտադրութիւնը:

Ժամանակի ընթացքում ամենահարուստ ընտանիքների փաստացի ոյժն այն աստիճանի հասաւ, որ պատերազմական սահմանների կազմակերպիչները միայն նրանց շրջանից էին ընտրուում. և բնական է, որ այս ընտանիքներն օգտուում էին համայնքի վրայ ունեցած իրանց տնտեսական ազդեցութիւնից, որպէսզի իրերի այդ դրութիւնն ամրապնդեն. նրանք եռանդով կուռում էին այդ սխտեմը փոխել աշխատող առանձին փորձերի դէմ և մինչև այնտեղ հասաւ, որ սովորական փաստը փոխեց իրաւունքի—առաջնորդի իշխանութիւնը ժառանգական դարձաւ իւր ընտանիքի մէջ և պատերազմի ժամանակաւոր կազմակերպիչը մշտական դարձաւ:

Այդ ժամանակից կարելի է հաշել իսկապէս ֆեոդալական շրջանի սկիզբը: Համայնքից բաժանւած խոշոր երկրագործը, որ ամրապէս իրան է իւրացրել զինւորական-կազմակերպչական դերը և համայնքը ուրիշ միջոցներով տնտեսապէս իրան ենթարկել, արդէն տիպիկական ֆեոդալ է:

Ուրիշ դէպքերում, ֆեոդալի՝ համայնքից բաժանելը դեռ նահապետական թափառական համայնքի հաստատարնակ երկրագործական զանալու էպոխայում շատ աւելի արագ էր կատարուում. այս լինում էր այնտեղ, ուր հաստատարնակութեան հող ձեռք բերելու համար առանձին երկարատե ու յամառ կռիւ էր հարկաւոր, այնպէս որ պատերազմը շատ վաղ դրեց համայնքի կազմի վրայ իւր զօրեղ կնիքը:

Ֆեոդալական յարաբերութիւններն սկսեցին արագ զարգանալ ու հաստատուիլ. աճեց ու աւելի մշտական դարձաւ մի կողմից ֆեոդալի զբաղական, հանրօգուտ դերը գիւղացիական համայնքի կեանքի մէջ, միւս

կողմից—գիւղացիների տնտեսապէս ու իրաւարանօրէն նրան ենթարկելը:

Ֆեոդալը հիմնում է ամրակուս բերդեր, որտեղ իւր հովանաւորութեան տակ գտնւող գիւղացիք թշնամիների յարձակումների դէպքում ապաւինում են: Ֆեոդալը հողում է իւր համայնքի մէջ ճանապարհներ շինել, կամուրջներ կառուցել և այլն: Ամեն դէպքերում, երբ գիւղացիական տնտեսութիւնները չեն կարողանում իրանց միջոցներով կառավարել, ֆեոդալը նրան օգնութեան է հասնում. նա անբերրիութեան, պատերազմների, աւերումների և այլն դէպքում սխտեմատիկական պաշտպանութիւն է կազմակերպում նրանց համար: Այս բոլորի համար անպանութիւն է կազմակերպում նրանց համար: Այս բոլորի համար անհրաժեշտ էին միջոցներ. և, ի հարկէ, ֆեոդալը յակում չունէր իւր գիւղացիների համար ձրի զոհել սեփական տնտեսութեան եկամուտները: Ֆեոդալի բոլոր հոգսերի փոխարէն գիւղացիք առատօրէն հատուցանում էին իրանց աշխատանքով:

Ֆեոդալական շահագործութիւնը երկու գլխաւոր ձև ունէր. առաջին՝ հիմնական և աւելի վաղ ձևը—պարտքի՝ աշխատանքով հատուցում (отработка). երկրորդ՝ փոխած ձևը—հողային տուրք (оброк): Երբ ֆեոդալը հպմարեա հարուստ գիւղացի էր միմիայն, այն ժամանակ պարտքի աշխատանքով հատուցումները գոյութիւն ունէին իբրև պարտքի սովորական վճարում. երբ ֆեոդալի իշխանութիւնն ամրապնդեց, պարտքի աշխատանքով հատուցումները գիւղացիների մշտական տուրքերը դարձան, այսպէս ասած, ճորտական աշխատանքի (барщина) փոխեցին. տարւայ մէջ որոշ թւով օրեր գիւղացին պարտաւոր էր իր ֆեոդալական սենեօրի համար նրա տնտեսութեան մէջ աշխատել: Ուրիշ դէպքերում ֆեոդալի համար աւելի յարմար էր թուում տուրք ստանալ թէ աշխատանքի ձևով, այլ պատրաստի արդիւնքի ձևով,—սա, այսօր թէ աշխատանքի ձևով, հողային տուրքին է վերաբերում պէս ասած, հողային տուրքն էր: Հողային տուրքին է վերաբերում գլխաւորապէս, և այն էլ գնալով աւելի մեծ չափով, գիւղացիական արհեստաւորական աշխատանքը: Ինչպէս հողային տուրքի, այնպէս և ճորտական աշխատանքի արդէն մի անգամ հաստատուած չափերը պանուում էին սովորական իրաւունքով: Հասկանալի է, որ, կարիքի դէպքում, սենեօրը հեշտութեամբ մեծացնում էր տուրքերը:

Ճորտական աշխատանքի և հողային տուրքի ձևերում շահագործութիւնն ամենահասարակ և բաց ձևով է հանդիսանում. ճորտական աշխատանք —սա յաւելեալ աշխատանքի ուղղակի և ակնյայտ իւրաւորումն է, իսկ հողային տուրք—յաւելեալ արդիւնքի իւրացումը:

Հիմնւելով ճորտական աշխատանքի ու հողային տուրքի վրայ, սենեօրի տնտեսութիւնը, մանր գիւղացիութեան տնտեսութեան նման, համարեալ էր ի հարկէ, ֆեոդալը աւելի մեծ չափով, քան բացառապէս բնական էր: Ի հարկէ, ֆեոդալը աւելի մեծ չափով, քան գիւղացին, կարող էր օգտուել փոխանակութիւնից իւր նրբացած կարիքների բաւարարութիւն տալու համար. սակայն, այնուամենայնիւ,



տիրած երկրի մէջ ֆէօդալական կարգեր ստեղծելու համար յաղթողները պէտք է այդ առաջուց ունենային, ինչպէս այդ լինում էր բոլոր նման դէպքերում:

բ) Ֆեօդալական հասարակութեան միջ-խմբական յարաբերութիւնները  
Ֆէօդալական կալւածքի տնտեսական ինքնուրոյնութիւնը խիստ մեծ էր, բայց անպայման չէր: Ամենից առաջ գինւորական շրջանում առանձին խմբի ոյժերը, մեծամասնութեամբ, անբաւարար էին պաշտպանելու շրջապատող թշնամիներից, օրինակ՝ թափառական ցեղերից, որոնք շատ անգամ արշաւանքներ էին կատարում ֆէօդալական Եւրոպայի վրայ. կամ ուղղակի աւելի ուժեղ ֆէօդալ-հարկաններից:

Այդ հողի վրայ ֆէօդալների մէջ այնպիսի յարաբերութիւններ էին ստեղծւում, ինչպիսիք գոյութիւն ունէին կալւածքում՝ ֆէօդալի և նրա գիւղացիների մէջ: Եթէ գինւորական պաշտպանութեան կարիքը գիւղացիներին ֆէօդալի իշխանութեան տակ գրեց, հէնց այդ կարիքն էլ թոյլ ֆէօդալներին հարկադրում էր ենթարկւել աւելի ուժեղներին: Ինքնակամ կերպով, կամ թէ մի անյաջող պատերազմից յետոյ, սենեօրը մի ուրիշ աւելի կարող սենեօրի իւր տէրն ու հովանաւորը — գերիշխանն էր ընդունում: Իւր ռազմիկների հետ միասին նա մարտնչում էր պատերազմի մէջ մեծ սենեօրի առաջնորդութեամբ (իւր տեսակի «ձորտական աշխատանք»): Իսկ երբեմն նոյն իսկ որոշ հարկ—հողային տուրք էր վճարում: Որոշ դէպքերում նա ենթարկւում էր գերիշխանի դատաստանին: Գերիշխանը, ընդհանրապէս, չէր խառնւում իւր հարկատւի (վասալի) կալւածային ներքին գործերում:

Գերիշխանն էլ իւր կողմից սովորաբար մի ուրիշ, աւելի մեծ գոթութեան տէր սենեօրի վասալն էր կազմում և այլն, մինչև թագաւորը: Վերջինս էլ, ինչպէս յետոյ ցոյց կը տրւի, այն ժամանակների ամենաուժեղ ֆէօդալի—կաթոլիկական եկեղեցու հետ վասսալական յարաբերութիւնների մէջ էր գտնւում:

Թագաւորը գերիշխանների շղթայի մէջ վերջնիւնն օղակն էր միայն: Նա վասսալական պետութիւնների ներքին գործերի մէջ չէր կարող խառնւել և արտաքինների մէջ էլ նրա ազդեցութիւնը մեծ չէր: Ֆէօդալները թագաւորից բոլորովին անկախ պատերազմներ էին անում իրար դէմ, դաշինքներ կոում: Յաճախ թագաւորների և ընդհանրապէս գերիշխանների իշխանութիւնը անուժով միայն գոյութիւն ունէր: Հասարակական կազմակերպութեան մասերի այդպիսի բաժան-բաժան ու թոյլ կապակցութեան դէպքում, բայց զլիաւորապէս անդարգացած տեխնիկայի դէպքում, որը շարունակ «բացարձակ գերարնակչութիւն» էր առաջացնում, ֆէօդալական աշխարհը նւիրեց մշտական պատերազմների: Պատերազմը, երկրագործութիւնից յետոյ, անկասկած, մարդկային գործունէութեան ամենախոշոր ճիւղն էր հանդիսանում:

Ստանդով ֆէօդալական շրջանի «բացարձակ գերարնակչութեան» մասին, պէտք է նկատել, որ այս հասկացողութեան բովանդակութիւնը այստեղ արդէն մի քիչ փոփոխւած է ներկայանում: Ֆէօդալական շրջանի գերարնակչութիւնը ոչ միայն նրանով է արտայայտւում, որ հասարակութեան մի մասը չունի կեանքի հիմնական անհրաժեշտ միջոցներ և չի ընդգրկում միայն հասարակութեան ստոր խաւերը, սա նաև ֆէօդալների գերարնակչութիւն է: Նոյնիսկ եթէ ֆէօդալի ընտանիքը չբազմանար, այնուամենայնիւ, շնորհիւ կանգնած տեխնիկայի և գիւղացիութեան աճեցման, ֆէօդալի համար դարձեալ դժուար կը լինէր գիւղացիների սեփական կալւածքներից հողացում տալու համար: Եւ իրանց ընդարձակ պահանջներին գոհացում տալու համար. մանաւանդ դժուարութիւններն աւելի շատանում են, եթէ իրանք ֆէօդալներն աճում են: Ըստ էութեան, այստեղ ինդիւրն առաջւայ պէս սպառողական միջոցների քանակութեան, որպիսին որ և է տեխնիկայի մէջ կարելի է ստանալ հողի որ և է տարածութիւնից, և բազմացող ազգաբնակչութեան կարիքների չափի մէջ եղած անհասկատասխանութեան մէջն է. միայն պէտք է ուշագրութեան աննել ոչ միայն ազգաբնակչութեան մասսայի ապրուստի անհրաժեշտ պահանջները, այլ և ֆէօդալների դասակարգի բարձր զարգացման հասած կարիքները: Որովհետև ֆէօդալների բարձր պահանջները որոշւում են յատկապէս որ և է կազմում մի հասարակական յարաբերութիւններով, գերարնակչութիւնը ծագած կարելի է համարել արդէն ոչ միմիայն մարդու՝ բնութեան հետ ունեցած յարաբերութիւնների անարժեքից, այլ և մասամբ մարդկանց մէջ եղած յարաբերութիւններից կազմւած և մասամբ մարդկանց մէջ եղած յարաբերութիւններից «համեմատաբնաւորութիւնից (անցումն դէպի յաջորդ շրջանների «համեմատական» գերարնակչութիւնը, որը համարեա բացառապէս երկրորդ պատճառից է կախւած):

Այսպիսով գինւորական-ֆէօդալական կազմակերպութիւնը ոչ միայն Եւրոպայի ազգաբնակչութեան համար չէր կարող թեթևացնել մշտական պատերազմների աղէտները, որոնք սոսկալի ճնշւումով ծանրացել էին գիւղացիական ազգաբնակչութեան վրայ, այլ նոյն իսկ որոշ բացել էին գիւղացիական ազգաբնակչութեան վրայ, այլ նոյն իսկ անաստիճանի ինքն էր հանդիսանում այս աղէտների աղբիւրը: Նա անաստիճանի ինքն էր անդառնալով պահանջներին պէտք էր և ֆէօդալական աշխարհի ուրիշ ընդհանուր պահանջներին պէտք էր և ֆէօդալական աշխարհի ուրիշ ընդհանուր պահանջներին պէտք էր: Առանձին տեղերում բացարձակ գերարնակչութիւնը և նոյնպէս անհամար պատերազմները անապիտկութեամբ անապիտկ ժողովուրդ էր առաջացնում, որը ապրուստից դուրկ էր, որովհետև հետև գործ չկար: Ֆէօդալների համար շատ դէպքերում այս թշուառների մասին հոգալը հաշիւ չէր, որովհետև նրանցից ոչ մի անմիջական օգուտ չէին կարող կորզել: Իսկ հաշմանդամների, հիւանդների և այլն մասին հոգալը գինւորական ֆէօդալների ծրագրի մէջ ամենին չէր մըտնում: Այնուհետև, նրանք անկարող էին գոնէ մի քիչ ապահովել փոխանական և ուրիշ ամեն տեսակ յարաբերութիւններ զանազան խանակական և ուրիշ ամեն տեսակ յարաբերութիւնները ճիւղերի ու զանազան երկրների մէջ. իսկ այս յարաբերութիւնները թէև թոյլ էին զարգացած, բայց, այնուամենայնիւ, գոյութիւն ունէին և Գ



Արդէն միջին դարերի սկզբում եկեղեցին ահազին հարստութիւններ ունէր, որոնք կայանում էին, ամենից առաջ, հողային սեփականութեան մէջ. եկեղեցին այն ժամանակեայ ամենախոշոր ու ամենահաստատա ֆէօդալն էր հանդիսանում— ֆէօդալ, որի տիրապետութիւնը տարածւած էր ամեն տեղ, բայց կենդրոնացած վարչութեամբ միացած: Սրանով ստեղծւում էին հոգևորականութեան ընդհանուր կազմակերպչական գործունէութեան ապագայ ընդարձակման բոլոր պայմանները:

Եկեղեցական կալւածքներից անհամեմատ աւելի մեծ արդիւնք էր ստացւում այն քանակութիւնից, ինչքան որ կարող էր ծախսել ինքը հոգևորականութիւնը: Բնական տնտեսութեան տիրապետութեան ժամանակ ահազին աւելորդները չէր կարելի փողի վերածել և այդ ձևով պահել: Կաթոլիկ եկեղեցու համար ամենից շահաւէտն էր ծախսել այդ փողերը աղքատների, հիւանդների ու ծերերի ամենաընդարձակ օգնութեան համար, այսինքն՝ շարունակել այն, ինչ որ նա անում էր կայսրութեան շրջանում, միայն աւելի մեծ չափերով:

Այնուհետև, եկեղեցին պէտք է կուէր տնտեսական կեանքի այն խոր անկման դէմ, որ առաջ բերին անցողական շրջանի խառնակութիւններն ու յուզմունքները: Այդտեղ էլ բարբարոսներն սկզբում այնպէս անզօր դուրս եկան, ինչպէս պետական կարգաւորման գործի մէջ արտադրական աշխատանքի վարդացմամբ: Նրանք անչափ ցածր էին հռովմայեցիներից: Վանքերն սկսում են նրանց երկրագործութիւն և արհեստներ սովորեցնել, տեխնիկական գիտութիւնների և նիւթական կուլտուրայի ուսումնարաններ դասնալ:

Ֆէօդալական աշխարհի մէջ անվերջ կռիւները, եկեղեցու տեսակէտից, մեծ անշահաւէտութիւն էին ներկայացնում, դեռ չխօսելով այն մասին, որ եկեղեցու կալւածքներն ու գանձերը շատ անգամ ուղղիշտ սուժում էին պատերազմական թալանից ու կողոպուտից: Ֆէօդալների պատերազմները, թէև կողմնակի կերպով, աւելի խիստ էին դիպչում եկեղեցու շահերին, քանզելով ժողովրդի բարեկեցութիւնն, ու թուլացնելով եկեղեցու եկամուտների աղբւրը. մինչդեռ ֆէօդալական աշխարհի լնդիսանուր կազմակերպութեան յատկութեամբ եկեղեցին կարող էր գերիվերոյ լինել առանձին ֆէօդալների նեղ հայեցակէտներից և հասարակական կարգի գործը պահպանել նոյնիսկ այնտեղ, ուր անմիջականապէս նրա շահերին ձեռք էլ չէր տրուում: Ուստի եկեղեցին իւր ամբողջ ազդեցութիւնը գործ էր դնում այն բանի համար, որ գոնէ միքանի սահմաններ դնէ ֆէօդալների սանձարձակ պատերազմասիրութեանը: Զանազան ներքին երկպառակութիւնների ժամանակ եկեղեցին շատ անգամ միջնորդի դերի մէջ էր հանդէս գալիս և այդ դերը, մեծ մասամբ, նոյնիսկ ուղղակի նիւթական օգուտ էր բերում իրան, որովհետև ընդհարումները վերացնելու ծառայութեան համար եկեղեցին

առանց վարձատրութեան չէր մնում: Այնուհետև, եկեղեցին սահմանել էր «Աստուծոյ աշխարհի» օրերը, որոնք ընդհանրապէս վատ էին պահուում, բայց յամենայն դէպս որոշ չափով պահուում էին և գոնէ համեմատական հանգիստ էին տալիս տանջւած ազգաբնակչութեանը. եկեղեցին հասաւ և եկեղեցիների, վանքերի ու վանքական կալւածների ձևական և գործնական անձեռնմխելիութեանը: Այդ բոլորը ոչ միայն պակասեցնում էին ֆէօդալական ներքին երկպառակութիւնների սարսափները, այլ և ֆէօդալական աշխարհում գոնէ մի որ և է պաշտպանութիւն էին ստեղծում փոխանակական յարաբերութիւնների համար. վանքերը դարձան փոխանակութեան կենդրոններ, «Աստուծոյ աշխարհի» օրերը—առևտուրի օրեր:

Եկեղեցու հասարակական-տնտեսական դերը իւր համար չտեսնւած մի իշխանութիւն ստեղծեց ժողովրդական մասսաների մտքերի վրայ: Այդ իշխանութիւնն իւր կողմից եկեղեցու ոյժերի ու հարստութեան յետագայ աւելացման մի միջոց էր: Հոգևորականութիւնը իւր օգտին երկրագործութեան վրայ ընդհանուր հարկ—«եկեղեցական տասանորդ» սահմանեց: Նա կազմակերպեց ամեն տեսակ տուրքերի ընդարձակ սիստեմ բարեպաշտ նպատակների համար—տուրքեր, որոնք ժամանակի ընթացքում գնալով շարունակ բազմանում էին: Տուրքերը ժամանակի ընթացքում հաւաքւում էին հոգևորականութեան ձեռքը. ահազին քանակութեամբ հաւաքւում էին հոգևորականութեան ձեռքը. նրանցից ամենակարևորները հողային նւիրատուութիւններն էին, որոնք միջին դարերի վերջում կենդրոնացան հոգևորականութեան ձեռքերում, ոչ պակաս, քան ամբողջ երկրի երրորդ մասը. և դա իւրոտ երրորդ մասն էր:

Միայն եկեղեցին, ամբողջով իւր հեղինակութիւնը բազմադարեան գործունէութեամբ, կարող էր միացնել ամբողջ ֆէօդալական աշխարհը՝ կուելու ընդհանուր թշնամու—Արևելքի ժողովուրդների դէմ (խաչակրաց արշաւանքները): Ընդհանրապէս, բոլոր դէպքերում, երբ (խաչակրաց արշաւանքները) և նրանց համար սովորականից աւելի լայն կօօպերացիա կազմակերպելու էր առաջ գալիս կօօպերացիա կազմակերպելու էր առաջ գալիս կաթոլիկ եկեղեցին—միջնադարեան Եւրոպայի ընդհանուր քաղաքական կազմակերպութիւնը:

Ընդհանուր առմամբ, ֆէօդալական Եւրոպայի տնտեսական կազմը հետևեալ կերպով պէտք է ներկայացնել: Մանր, տեխնիկապէս մը հետևեալ կերպով պէտք է ներկայացնել հողի վրայ, որից դեռ չէր թոյլ երկրագործական արտադրութեան հողի վրայ, որից դեռ չէր անջատւել արդիւնագործութիւնը, առաջ եկաւ ոչ այնքան մեծ, անջատւել արդիւնագործութիւնը, առաջ եկաւ ընդհանուր-տնտեսական կազմակերպութիւն—բայց բաւականին խիտ բնական-տնտեսական կազմակերպութիւն—բայց բաւականին համայնքներ: Համայնական արտադրութեան այն երկրագործական համայնքներ: Համայնական արտադրութեան այն շրջաններում, ուր մի կազմակերպչական կամքի կարիք կար, առաջ էր մղւում ֆէօդալների իշխանութիւնը, որոնք արտադրական կազ-



տե նրանց սպառման աւելի կատարեալ առարկարեր էր տալիս: Ծնոր-  
հիւ այդ հանդամանքների, արհեստաւորների ամբողջ հոգեկան կազմը  
զարգացման համար շատ աւելի պակաս արգելքներ էր ներկայացնում,  
քան գիւղացու—երկաւորօրի հոգեկան կազմը:

Ինչ վերաբերում է այն ճանաչողական նիւթի քանակութեանն ու  
յատկութեանը, որի վրայ յենել էր հասարակական զարգացումը, այս-  
տեղ էլ պէտք է մեծ նմանութիւն նկատել նահապետական-ցեղական  
ընթացի հետ: Աշխարհայեցողութեան ընդհանուր տիպը յանգեց բնա-  
կան ֆետիշիզմի մի քիչ փոփոխւած ձևին. այդ դէպքում պատճառների  
ճանաչողութիւնն էլ կանգ է առնում իրական փաստի յետեւ ծածկեող  
և էպպէս անձնագուրկ «երևոյթի հոգին» պատկերացնող խորհրդաւոր  
«ոյժի» վրայ:

Մտածողութեան այս ձևերը տիրապետում էին գեւ աւելի նախ-  
նական ձևերի մնացորդների հետ միասին ուրիշ հասարակական դա-  
սակարգերի մէջ: ասանձին խմբերի հոգեկան կազմացումների տարբե-  
րութիւնը, համարեա բացառապէս, քանակական էր:

Բնական տնտեսութեան ժամանակ գիւղացու ամբողջ աշխարհը  
միանում է նրա համայնքին, այնտեղ է նա ծնւում, այնտեղ է անցնում  
նրա ամբողջ միօրինակ կեանքը, այնտեղ է նա մեռնում. ուրիշ պայ-  
մաններ, ուրիշ կեանք նա համարեա չի տեսնում, համարեա չի պատ-  
կերացնում: Այստեղից է առաջանում հոգեկան նիւթի ամենամեծ խղ-  
ճութիւնը, հոգեկան կեանքի խորը դատարկութիւնը: Այս նկատմամբ  
միջին դարու գիւղացին հազիւ թէ ցածր չէ նահապետական ժամա-  
նակների իւր թափառաշրջիկ նախորդից:

Եւ այնուամենայնիւ, արհեստաւորը հոգեկանի հարստութեամբ  
բարձր է միջին գիւղացուց. նրա զբաղմունքները երբեմն ստիպում են  
նրան դուրս գալ համայնքի սահմաններից, մանաւանդ այն դէպքերում,  
երբ ոչ թէ մի, այլ մի քանի գիւղերի համար մենակ նա է աշխատում,  
կամ երբ նա կարիք ունի այնպիսի նիւթի կամ գործիքների, որոնց  
նրա համայնքը չի արտադրում: Ընդհանրապէս, նա աւելի քիչ է կապ-  
ւած հողաբաժնին, աւելի հեշտութեամբ է անցնում մի տեղից մի ու-  
րիշը և դիմում այնտեղ, ուր նրա աշխատանքի պահանջն աւելի  
շատ է: փոքրիկ համայնքից անցնում է մեծը, աղքատից՝ հարուստը,  
գիւղից՝ քաղաք: Ծնորհիւ այս բոլորի, նրա հոգեկանի սահմանափա-  
կութիւնն այն աստիճանի չի հասնում, ինչպէս դուռ հողագործինը:

Աշխարհական և հոգեորական ֆէօդալներն աւելի շահաւէտ պայ-  
մանների մէջ էին գտնւում. նրանց կեանքն աւելի լայն զանազանա-  
կերպութիւն ունէր և գիտակցութեան նիւթը քանակութեամբ շատ աւելի  
մեծ էր: Այս դէպքում աշխարհական ֆէօդալները շնորհիւ իրանց կենսական  
շահերի աւելի խիստ նեղ լինելուն, գործունէութեան աւելի սահմանափակ  
ընթացին, իրանց ինտելիգենտութեամբ հոգեորական ֆէօդալներից շատ

աւելի ցածր էին կանգնած: Կարելի է ասել, որ մի քանի դարերի ըն-  
թացքում, երբ զարգացաւ յարաբերութիւնների ֆէօդալական սիտեմը,  
համարեա ամբողջ մտաւոր կեանքը կենդրոնացած էր հոգեորական դա-  
սերի մէջ, միմիայն նրանցից էր դուրս գալիս ամեն մի լուսաւորու-  
թիւն: Գիտութիւնը, մտաւոր զարգացումը հարկաւոր էին հոգեորա-  
կանութեանը իւր բարդ, դժւարին հասարակական-կազմակերպչական  
գերի համար. անա թէ ինչու հոգեորականութիւնը հին աշխարհի հո-  
գեոր կուլտուրայի մնացորդների պահպանն էր ներկայանում: Միև-  
նոյն ժամանակ, հոգեորականութեան կազմակերպութեան էութեան հա-  
մաձայն, նրա համար առաջին տեղը բռնում էր ոչ թէ գիտութիւնը,  
ուսումը, այլ այն ուսմունքը, որը եկեղեցու համար հրապուրում էր  
մասսայի համակրութիւնը, որը գաղափարապէս միացնում էր եկեղե-  
ցին: Գիտութիւնը կրօնի բնական ծառան էր հանդիսանում, մի պարզ  
գործիք՝ հասնելու նրա դրած նպատակներին: Իրերի վրայ այսպէս էր  
նայում ոչ թէ միայն հոգեորականութիւնը, այլ և ամբողջ հասարակու-  
թիւնը, որի համար եկեղեցու բարեգործական դերը նրա քարոզած ուս-  
մունքի բացարձակ ճշմարտութեան համար անհերքելի արպարաց էր  
հանդիսանում:

Բայց եթէ բացարձակ ճշմարտութիւնը տրւած է, կարիք չկայ  
նոր ճշմարտութեան դիմել. պէտք է միայն ջանալ, որ աւելի լիովին  
բաց անել այն, ինչ որ տրւած է: Հէնց այս պատճառով, ֆէօդալական  
աշխարհի մտածողութիւնն ամենեին չի ձգտում ձեռք բերելու նոր գի-  
տական ծանօթութիւններ, պարզելու բնական օրէնքները, համարելով  
տական ծանօթութիւններ, ունայնութիւն ունայնութեան: Սակայն ձևական տրամա-  
բանութիւնը ծաղկում է, որովհետև նա ճշգրիտ մեթոդ է հանդիսա-  
ւում այն ճշմարտութեան լիակատար ու մանրամասն մերկացմանը, որն  
արդէն ընդհանուր ձևով տրւած է և որին մնում է միայն մասնաւորա-  
պէս զարգացնել: Այստեղից առաջանում են գիտնական վարդապետնե-  
րի և, ընդհանրապէս, ֆէօդալական աշխարհի գիտնականութեան բոլոր  
ներկայացուցիչների սխալաստիկական անվերջ վարժութիւնները. այս-  
տեղից է առաջանում հոգեորականութեան ուսումնական հիմնարկու-  
թիւններում աւանդելու ինքնօրինակ ծրագիրը, որ յանգում է ասուա-  
ծարանութեանը, ձևական տրամաբանութեանը և եկեղեցական լատինային.  
այստեղից է, վերջապէս, այն անսովոր նշանակութիւնը, որ տրւում էր  
Արիստոտէլի—ձևական տրամաբանութեան ստեղծողի—գրւածքներին,  
եկեղեցական հայրերի գրւածքների հետ միասին:

Ճանաչողական միտքն ամբողջապէս ու յօժարակամ ենթարկւում  
էր բարձրագոյն հեղինակութեանը: Եթէ որեւէ տեղում առանձին պայ-  
էր մանները քննադատական մտածողութեան համար հող էին ստեղծում և  
ձգտումն առաջացնում դուրս գալու կաթոլիկական վարդապետութեան  
ընթացին, այն ժամանակ ամբողջ հասարակութիւնը ամենամեծ միա-

բանութեամբ կանգնում էր «հերետիկոսութեան» դէմ և ճգնում նրան: Բոլորը միասին առաջ բերելով, պէտք է ասել, որ հասարակական զարգացման համար ֆէօդալական շրջանի հոգեբանութիւնը ներկայացնում էր. առաջին՝ խիստ աղքատ և որակով անյարմար նիւթերկրորդ՝ սովորութեան՝ կեանքի վրայ տիրապետելու ձևի մէջ տարերային խոչընդոտներ: Այդպիսի հանգամանքներում զարգացումը կարող էր կատարել միայն տարերային ոյժերի գործողութեամբ, նրան առանձնայատուկ դանդաղութիւնով:

Ինչ վերաբերում է առանձին հասարակական խմբերին, զարգացման համար համեմատաբար ամենաբարենպաստ պայմանները արհեստաւորների դասակարգն էր ներկայացնում:

4. ԶԱՐԳԱՅՄԱՆ ՈՅԺԵՐՆ ՈՒ ՆՐԱ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ ՖԵՕԴԱԼԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ֆէօդալական շրջանի հոգեբանութեան տարերային պահպանողականութիւնը, որ նման է ցեղական խմբի պահպանողականութեանը, բայց այնուհանդերձ աւելի պակաս դիմացկուն և պակաս հաստատուն է, կարող էր յետ քաշել և տեղ տալ զարգացմանը միմիայն տարերային բնաւորութիւն ունեցող ոյժերի գործունէութեամբ: Այսպէս է բացարձակ գերաբնակչութեան ոյժը, գերաբնակչութիւն, որ առաջ է գալիս տեխնիկայի անշարժութիւնից և հասարակութեան կարիքներին բաւարարութիւն տալու միջոցների պակասութիւնից:

Բացարձակ գերաբնակչութեան նախնական ազդեցութիւնն արտայայտեց ֆէօդալական աշխարհի անթիւ պատերազմներով: Ինչպէս պարզւած է, երկրագործական ազատ համայնքներին գլխաւորապէս այդ պատերազմները դարձրին ֆէօդալական խմբեր և ստեղծեցին ֆէօդալական հասարակութեան կազմակերպութեան տիպը:

Յամենայն դէպս, ներքին պատերազմները ֆէօդալական աշխարհի համար ամենապակաս շահաւէտ միջոցն էին ներկայանում՝ ապաւելելու առատ ազգաբնակչութիւնից, որովհետև, քանզի ֆէօդալական հասարակութեան արտադրողական ոյժերը, նրանք զրանով, եթէ ոչ յաղթողների, ապա յաղթւածների շրջանում նոր առատ ազգաբնակչութիւն էին առաջ բերում: Այդ պատճառով, ֆէօդալական հասարակութեան՝ կաթոլիկ կազմակերպութեան հետ միանալուց անմիջապէս յետոյ սկսւում են արտաքին պատերազմները, որոնց մէջ ֆէօդալական ոյժերը կաթոլիկական դրօշակի տակ հանդէս են գալիս ոչ-կաթոլիկ հարևանների դէմ: Խաչակրաց արշաւանքներն արտայայտում էին ձրգուտում ընդարձակելու ֆէօդալական տերրիտորիան և այս միջոցով հեռացնելու հողային նեղւածքը—գիւղատնտեսական գերաբնակչութիւնը: Տիրապետած հողերի վրայ ֆէօդալական թագաւորութիւններ էին հիմնւում:

Միևնոյն ժամանակ, թէև շատ դանդաղ, կատարւում էր և սեփական-տեխնիկական առաջադիմութիւնը: Երկրագործութեան մէջ նամինչև միջին դարերի վերջը, ընդհանուր առմամբ, աննշան էր,—այնտեղ հասարակական հոգեբանութիւնը զարգացմանը ամենամեծ արգելքներ էր ներկայացնում: Ուրիշ բան է արդիւնագործութիւնը, որտեղ պայմանները զարգացման համար բարենպաստ էին: Այնտեղ յառաջադիմութիւնն աւելի արագ էր գնում. մշակւում էին տեխնիկապէս արտադրութեան լաւագոյն միջոցներ, որպիսիք հնարաւոր են նըրա մանր արհեստաւորական բնաւորութեան միջոցին. արհեստը քիչ-քիչ անջատւում էր երկրագործութիւնից և մասնագիտական հմտութիւն ձեռք բերում: Այդպիսով գորեղանում էր աշխատանքի հասարակական բաժանումը, ուժեղանում էր, հետևապէս, փոխանակութիւնը: Արհեստաւորը ձգտում էր մօտիկ լինել իւր արդիւնքի պահանջն ունեցող տեղերին և քիչ-քիչ գիւղից հեռանում էր դնպի փոխանակութեան առաջացրած կենդրոնները—քաղաքները: Սրանից առաջացան վերին աստիճանի կարևոր տնտեսական փոփոխութիւններ, որոնց մասին խօսք կը լինի յաջորդ պարզաբանութեան մէջ:

Համառօտ որոշելով ֆէօդալական կեանքի մէջ կատարուող փոփոխութիւնների ընդհանուր ուղղութիւնը, պէտք է ասել, որ բացարձակ գերաբնակչութիւնը, զանազան եղանակներով գործելով, միջնադարեան աշխարհին դէպի մի նպատակ էր տանում—դէպի աշխատանքի անկազմակերպ բաժանումը, որն արտայայտւում էր փոխանակութեան մէջ:

Նոյնիսկ ֆէօդալական հասարակութեան ներքին կռիւների հետևանքը յարաբերութիւնների աճումն էր լինում, հետևապէս և արտադրական կապերի և ֆէօդալական խմբերի մէջ եղած փոխանակութեան աճումն: Նոյն մտքով էին գործում և արտաքին պատերազմները: Արաբների, ապա սարակինոսների, թուրքերի, որ արևելքի կուլտուրական ժողովուրդներն էին, նոյնպէս խաչակրաց արշաւանքների ճանապարհի վրայ գտնուող Բիւզանդական կայսրութեան հետ ծանօթութիւնը ուժեղ զարկ տւեց աշխատանքի հասարակական բաժանմանը, նախ անմիջանակապէս ընդարձակելով փոխանակական յարաբերութիւնների շրջանը, երկրորդ՝ անուղղակի կերպով թոյլ տալով ևրոպայիների փոխ առնել տեխնիկական մի քանի նոր եղանակներ և կատարելագործումներ, որոնք այն ժամանակներն անհրաժեշտօրէն առաջընթացում էին դէպի փոխանակութեան յառաջադիմութիւնը, որովհետև աւելի շատ կատարելագործւած տեխնիկական աւելի մեծ աշխատանքի բաժանումն և մասնագիտական հմտութիւն է պահանջում:

Այսպէս, արաբներից փոխ էին առնւած շատ բարելաւումներ երկրագործական տեխնիկայի ճիւղի մէջ. այդգործութեան, բանջարապահութեան, դաշտերն արհեստական կերպով ոռոգելու մէջ և այլն. այնուհետև, բաւական բան—ճարտարապետական ար-



մի ամբողջ հասարակական դասակարգ, որ բացառապէս զբաղւած էր արդիւնքների փոխադրելով և նրանց բաշխելով տնտեսութիւնների մէջ — առևտրականների դասակարգը: Հէնց ինքը արդիւնքների փոխադրութեան և ընդհանրապէս մարդկանց միջի յարաբերութիւնների տեխնիկական քիչ-քիչ բարելաւում էր. ճանապարհներ էին ձգւում, գետերի վրայ կամուրջներ կառուցւում, աւելի ընդարձակ և ամուր ու հեռաւոր նաւորդութիւնների համար պիտանի նաւեր էին շինւում, ճանապարհորդների և փոխադրական արդիւնաբերութեան պահեստի տեղերի պաշտպանութեան համար զինւորական ոյժեր էին գործ դրւում և այլն:

Հասարակական արտադրութեան չափերի ու բազմատեսակութեան աճման, փոխադրական արդիւնաբերութեան զարգացման և մարդկանց միջի յարաբերութիւնների տեխնիկայի բարելաւման հետ ընթացման իշխանութիւնն էլ հասարակական մարդու վրայ գնալով թուլանում էր: Մարդկանց հասարակական կեանքի նիւթական միջավայրը դադարում էր ամբողջապէս կախում ունենալ որ և է տեղի նեղ բնական սլայմաններից. եթէ մի երկրի բնութիւնն իրան յաղթելու համար բաւական միջոցներ չէր տալիս մարդուն, այն ժամանակ այդ միջոցներն ուրիշ մարդկանց միջնորդութեամբ կարող էր տալ նրան մի ուրիշ երկրի բնութիւն և ընդհակառակը: Բնութեան դէմ կռոււմ ամեն մի նոր տիրապետութիւն հասարակական միջավայրի մէջ շատ աւելի ընդարձակօրէն էր տարածւում, քան առաջ և արտաքին աշխարհի տարերային ոյժերի տիրապետութիւնը քանդում ամեն տեղ, ուր տարածւել էր մարդկանց փոխադարձ յարաբերութիւնների հասարակական-տնտեսական կապը: Ընդարձակեող հասարակական միութեան առաջ, որը թէպէտ այս շրջանում ամուր, սերտ համախմբւած չէ, քիչ-քիչ տեղի էր տալիս բնութեան կոպիտ իշխանութիւնը:

2. ՄԱՐԴԿԱՆՅ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՇԽՈՂԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԱՆՐ-ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԷՁ

ա) Անկազմակերպ կապեր տնտեսութիւնների միջեւ

Որովհետև մանր-բուրժուական հասարակութեան համար խիստ կարևոր ու բնորոշ են ներկայանում առանձին ձեռնարկութիւնների անկազմակերպ (փոխանակական) կապերը, ուստի, ուսումնասիրով նրա կազմը, աւելի յարմար է հէնց այս կապերից սկսել և ոչ թէ ձեռնարկութիւնների ներքին յարաբերութիւններից:

Տնտեսութիւնների մէջ փոխանակական յարաբերութիւններ, ինչպէս սլարգւած է, բնական հասարակութեան կեանքի բաւականին վաղ շրջաններում արդէն գոյութիւն ունէին: Բայց տիրապետող դերն այն ժամանակ փոխանակական կապերին չէր պատկանում. նրանք արտադրութեան աննշան մասն էին միայն ընդգրկւում, — գլխաւորապէս աւե-

լորդների արտադրութիւնը. իսկ կեանքի հիմնական, անհրաժեշտ միջոցների արտադրութիւնը, այսինքն՝ արտադրութեան ամենաէական մասը, համարեա ամբողջովին կազմակերպւած էր առանձին խմբի սահմաններում: Խումբը կարող էր իւր գոյութիւնը շարունակել նոյն իսկ այն դէպքում, երբ ուրիշ խմբերի հետ ունեցած իւր փոխանակական յարաբերութիւնները կտրւէին. նա արտադրական կեանքի մէջ իրական անկախութիւն ունէր: Այդ պատճառով, իւրաքանչիւր այդպիսի մի խումբ ինքն իրան մի իսկական «հասարակութիւն» էր ներկայանում:

Աշխատանքի հասարակական բաժանման զարգանալու չափով խմբի նիւթական անկախութիւնն էլ ծախսւում է. փոխանակութեան շրջանում ներս է մտնում արտադրութեան աւելորդների յետևից և նրա հիմնական մասը. խումբը կամաց-կամաց դադարում է բոլոր անհրաժեշտ բաներն իւր համար անմիջականապէս արտադրելուց և սկսում է իւր ամենաէական կարիքներին իսկ փոխանակութեան օգնութեամբ բաւարարութիւն տալ: Առանձին տնտեսութիւնը գնալով աւելի մեծ ջաւաբարութիւն է յատկապէս իւր համար արտադրելուց: Արհեստաւորը, երկրագործութեան հետ նախկին կապը կտրելով, իւր աշխատանքի արդիւնքների միայն ամենաչնչին մասն է կարողանում յատկացնել իւր ընտանիքին. օրինակ կօշկակարը — մի հարիւրերորդական մասը. իսկ մետաքսագործը — բոլորովին ոչինչ: Ծիշտ այդպէս էլ փոխանակական կեանքի մէջ ընկած ֆէօդալական տնտեսութիւնը գնալով աւելի կան կեանքի մէջ ընկած ֆէօդալական տնտեսութիւնը գնալով աւելի քիչ մասն է ծախսում այն հացի, մսի և այլն, որոնք նրա մէջ են արտադրւած:

Այդպիսով, իւրաքանչիւր տնտեսութեան՝ բոլոր միւսներէից ունեցած նիւթական կախումը անդադար մեծանում է: Մինչդեռ, ձեռակազմակերպ նա անկախ է, այսինքն՝ նրան կազմակերպում է առանձին: անձնական կամք, իւրաքանչիւր ձեռնարկութեան համար առանձին: նրա ներքին յարաբերութիւնները լիովին այս կամքով են կազմակերպւած, պեւում, իսկ նրա արտաքին յարաբերութիւնները կազմակերպւած չեն, պեւում, իսկ նրա արտաքին յարաբերութիւնները կազմակերպւած չեն, ոչ մէկի կամքին չեն ենթարկւած: Այդպէս է ամեն մի փոխանակական հասարակութեան կազմը և, ամենից առաջ, մանր-բուրժուականինը: Պատմութիւնը մանր-բուրժուական զուտ, կատարեալ տիպ. ինչպէս և ընդհանրապէս յարաբերութիւնների ոչ մի բոլորովին միատեսակ սիստեմ չի ձանաչում: Իւրաքանչիւր հասարակութիւն, բացի իւր հիմնական, ամենաբնորոշ էլեմենտներից, ամփոփում է անցեալ հոտահիմնական, ամենաբնորոշ էլեմենտներից, ամփոփում է անցեալ հոտահիմնական ֆորմացիաների մնացորդները և ապագայ ֆորմացիաների բաւական ֆորմացիաները հասարակութեանը այս բոլորը յատկապէս մեծ չափով է վերաբերում. նա երեսց իբրև շատ կարճատև անպէս մեծ չափով է վերաբերում. նա երեսց իբրև շատ կարճատև անպէս մեծ չափով է վերաբերում. նա երեսց իբրև շատ կարճատև անպէս մեծ չափով է վերաբերում: Մանր-բուրժուական հասարակութիւնից դէպի կապիտալիստականը: Գոյական շրջան ֆէօդալ հասարակութիւնից դէպի կապիտալիստականը: Այդ պատճառով հասարակական յարաբերութիւնների մի քանի գծերը, Այդ պատճառով հասարակական յարաբերութիւնների մի քանի գծերը, Այդ պատճառով հասարակական յարաբերութիւնների մի քանի գծերը, յորոնց նա ինքն ըստ ինքեան ձգտում էր զարգացնել, միայն յաջորդ



րանք է և առայժմ նրա մասին առանձին խօսելու կարիք չկայ: Իսկ արտադրողն ի՞նչ քանակութեամբ ուրիշ ապրանքներ է ստանում իւր ապրանքների փոխարէն: Ուրիշ խօսքով. ո՞րքան է մեծ դուրս գալիս նրա ապրանքների փոխանակական արժէքը:

Ենթադրենք, որ հասարակութիւնը բոլորովին միակերպ է, որ տարբեր տնտեսութիւններ իրար նման են կարիքի մեծութեամբ և աշխատանքի էներգիայի քանակով, որը նրանցից իւրաքանչիւրի մէջ էլ ծախսուում է արտադրութեան վրայ: Եթէ մի միլիոն այդպիսի տնտեսութիւններ կան, այն ժամանակ նրանցից իւրաքանչիւրի կարիքները կազմում են հասարակութեան կարիքների մի միլիոներորդականը և նրանցից իւրաքանչիւրի աշխատանքը կազմում է աշխատանքի էներգիայի հասարակական ծախսման մի միլիոներորդականը: Եթէ այս դէպքում ամբողջ հասարակական արտադրութիւնը լիովին բաւարարութիւն է տալիս հասարակական կարիքների ամբողջ գումարին, ուրեմն ամեն մի տնտեսութեան, իւր կարիքների լիակատար բաւարարացման համար, անհրաժեշտ է ստանալ իւր ապրանքների փոխարէն ամբողջ հասարակական արդիւնքի մի միլիոներորդական մասը: Եթէ առանձին տնտեսութիւնները սրանից պակաս ստանան, նրանք կըսկսեն թուլանալ ու քանգել և ոյժ չեն ունենայ կատարելու առաջւայ հասարակական դերը և մատակարարելու հասարակութեանը բնութեան դէմ կուր ամբողջ աշխատանքի էներգիայի մի միլիոներորդական բաժինը: Եթէ միքանի տնտեսութիւններ հասարակական աշխատանքի ամբողջ արդիւնքի մի միլիոներորդականից աւելի ստանան, այն ժամանակ կիլասուին և կսկսեն թուլացնել այն տնտեսութիւնները, որոնց աւելի պակաս կհասնի:

Աշխատանքի էներգիայի այն քանակութիւնը, որը անհրաժեշտ է հասարակութեանը՝ որոշ արդիւնք արտադրելու համար, կոչուում է հասարակական արժողութիւն կամ ուղղակի այդ արդիւնքի արժողութիւնը: Օգտուելով այս տերմինից, նախընթաց դատողութիւնները այս ձևով կարելի է պատկերացնել:

Որպէսզի աշխատանքի բաժանումն ունեցող միատեսակ հասարակութեան մէջ արտադրական կեանքը լիովին նախկին ձևով պահպանւի, անհրաժեշտ է, որ իւրաքանչիւր տնտեսութիւն փոխանակութեան ժամանակ իւր ապրանքների փոխարէն իւր բոլոր գործածութեան համար ստանար այդ արդիւնքներից իւր ապրանքների հաւասար արժողութիւն ունեցող մի քանակութիւն: Յիշեալ օրինակի մէջ որ և է տնտեսութեան ապրանքների արժողութիւնը հաւասար է հասարակական արդիւնքի ամբողջ արժողութեան մի միլիոներորդականին և տնտեսութեան համար գործածութեան անհրաժեշտ առարկաների արժողութիւնը հաւասար է ամբողջ հասարակական-աշխատանքային էներգիայի նոյնպէս մի միլիոներորդական մասին:

Ինչպէս ներածութեան մէջ ցոյց է տրւած, իբրև հասարակական-աշխատանքային էներգիայի չափելու միակերպ պէտք է ընդունել միջին լարածութեամբ մի ժամւայ հասարակ աշխատանքը: Եթէ ապրանքը 12 այդպիսի «ժամ» արժէ, ուրեմն նա պէտք է փոխանակւի նոյնպէս 12 «ժամ» արժող մի ուրիշ ապրանքի հետ, օրինակ՝ փողի մետաղի համապատասխան քանակութեան հետ: Իսկ եթէ փոխանակութիւնն ուրիշ կերպ է կատարուում, ուրեմն մի քանի տնտեսութիւններ պէտք է լուծւին և կործանւին: Շուկայում պէտք է հաստատուին ապրանքների գները, որոնք, ընդհանուր առմամբ, միջին կերպով համապատասխան են նրանց արժողութեանը, հակառակ դէպքում ամբողջ հասարակութեան գոյութիւնը խիստ խախտու կդառնայ:

Սակայն, այնուամենայնիւ, իսկական փոխանակական հասարակութիւնը քիչ թէ շատ հաստատուում լինելուց զուրկ չէ: Ապրանքների գները շարունակ, մեծ կամ փոքր չափով, շեղւում են իրանց արժողութիւնից, որովհետև ոչ մի կազմակերպող կամք չի կառավարում փոխանակութիւնը. բայց հէնց հասարակութեան կազմի մէջ կայ մի ինքնուրինակ մեխանիզմ, որի գործունէութիւնը վարում է արժէքների տատանմունքներն այն ձևով, որ մի կողմի շեղումները փոխարինւում են միւս կողմի շեղումներով և միջին հաշուով հաւասարակըւում են: Այս մեխանիզմը հսկայական, կոպիտ, տարբերային ոյժ ունի. նա կոչւում է շուկայի մրցումն (конкуренция):

Եթէ արտադրողը համաձայնուում է իւր ապրանքը արժէքից պակաս ծախել, նրա տնտեսութիւնը քայքայուում է. եթէ ուրիշ արտադրողներ նրա ապրանքը արժողութիւնից թանկ են գնում, նրանց սիւթական գրութիւնը վատանում է: Առաջ է գալիս ծախողի ու գնողի շահերի կռիւ. այդ կուր հետևանքն այն է լինում, որ նրանցից իւրաքանչիւրը սովորում է իւր արդիւնքը արժողութիւնից ոչ մի կերպ պակաս չծախել և ուրիշի արդիւնքին արժողութիւնից աւելի չտալ. այդպիսով հասարակութեան մէջ ապրանքների այնպիսի «արժէքի» մասին պահպանուած գաղափար է կազմուում, որն իրականութեան մէջ համապատասխանում է (մտաւորապէս) նրանց արժողութեանը:

Բայց ամեն անգամ արտադրողին չի յաջողւում իւր ապրանքն իր արժէքով ծախել. երբեմն նա ստիպւած է ապրանքն աւելի արժան տալ: Առաջւայ օրինակում, երբ 1000 կոշկակար շուկայ հանեցին 200,000 տղայ կոշիկ, իսկ հասարակութիւնը միայն 150,000 տղայ կարող էր գրահել, կոշկակարները խիստ դժւար գրութեան մէջ են լինում: Նրանց ապրանքի առաջարկութիւնը նրա պահանջին գերազանցում է. ամբողջ ապրանքը չի կարող ծախւած լինել և վաճառողներից ամեն մէկը ապրանքը չի կարող ծախւած լինել և վաճառողներից ամեն մէկը իրակ է անում բոլորովին առանց գնողի մնալ: Այն ժամանակ վաճառողների մէջ անողոք կռիւ է սկսւում. նրանցից իւրաքանչիւրը պատուողների մէջ անողոք կռիւ է սկսւում. նրանցից իւրաքանչիւրը պատուողների մէջ զոհել իւր ապրանքի արժողութեան մի մասը, միայն թէ՛ գըր-



այլ մի ուրիշ բան, որ մենք նոյն իսկ գուցէ չենք էլ ճանաչում: Թող մի կացնի ու մի զոյգ կօշիկ մէջ այդ անյայտ «մի ինչ որ բանը» հաւասար քանակութեամբ պարունակելի, այնպէս որ երկու ապրանքներն էլ պէտք է միեւնոյն գնով ծախուին: Միեւնոյն ժամանակ այս ապրանքների աշխատանքային արժողութիւնը միեւնոյնը չէ. կացինն արժէ 8 «ժամուայ հասարակ աշխատանք», իսկ կօշիկը—12: Այդպիսի դէպքում ո՞վ կըրարէր կօշիկ գործով, երբ նա պարզապէս անշահաւէտ է: Բոլորը կացին շինելը կզերպագուան: Ուրեմն աշխատանքի հասարակական բաժանման զարգացումն անհնարին կըրգառնար, անհնարին կըրգառնար և հէնց ինքը տեղացի հասարակութիւնը: Այդպիսով, բացի արժողութիւնից, փոխանակութեան բոլոր միւս հիմքերի հնարաւորութիւնը արտուրդ է դառնում:

Թէև գինը ընդհանուր կերպով արժողութեամբ է որոշւում, սակայն իւրաքանչիւր մասնաւոր դէպքում առաջինը կարող է չհամապատասխանել երկրորդին: Միայն այնտեղ, որտեղ մրցումն ազատ գործում է, որտեղ ապրանքների արտադրութիւնը ընդունակ է շուկայի պահանջի ազդեցութեան տակ ընդարձակել կամ սեղմել, այնտեղ գներն իրօք գիմում են դէպի արժողութեան մակերևոյթը: Այս ամենից շատ վերաբերում է արդիւնագործութեանը: Որտեղ արտադրութիւնը այնքան էլ առածպական չէ, այնտեղ աշխատանքային արժողութեան օրէնքն աւելի պակաս մաքուր տեսքով է յայտնւում:

Այսպէս է հողագործութիւնը և, աւելի պակաս չափով, հանքային արդիւնաբերութեան միւս ճիւղերը: Որ և է հողաբաժնում դժւար է քիչ թէ շատ զգալի կերպով մեծացնել ցորենի արտադրութիւնը, եթէ ամբողջ հողաբաժնին արդէն հողագործութիւնը շահագործում է: Ուստի, փոխանակական հասարակութեան շափերի բազմանալու, հացի պահանջի աճելու հետ միասին հացի գինը կարող է յամառօրէն իւր արժողութիւնից աւելի բարձր պահել, որովհետև առաջարկութիւնը պահանջի յետևից չի կարողանում հասնել:

Այնուհետև, մրցման ազատ գործունէութեանը զօրեղ խոչընդոտ են դառնում յաճախ մարդկանց մէջ կազմակերպւած դանազան յարաբերութիւնները. այդպէս էր նաև պատմականապէս յայտնի մանրբուրժուական հասարակութիւնների մէջ (համքարական, Ֆէօդալական կապեր, որոնց՝ փոխանակութեան և մրցման վրայ ունեցած ազդեցութիւնները մանրամասնօրէն կ'արդարենք յետագայում):

Վերջապէս, ուրիշ դէպքերում, յաճախ քիչ առաջ մատնացոյց արած պայմանների հետ կապւած, մանաւանդ վերջինի հետ, հանդէս է գալիս մեկնամասնութիւնը (μονοποлия): Մենավաճառութիւն է կոչւում ոչ թէ մրցման հասարակ պակասութիւնը, այլ նրա լիովին բացակայութիւնը: Եթէ որոշ հասարակական անհրաժեշտ արդիւնքի արտադրութեամբ միայն մի ձեռնարկութիւն կամ ձեռնարկութիւնների միութեան մէջ փոքր թիւով գործողներ են գրաւուած, այն ժամանակ գնողները

կարող են հարկադրւած լինել արդիւնքին անհամեմատ աւելի բարձր գներ վճարել: Այն ժամանակ դուրս կգայ, որ առանձին խումբը, օգտուելով իւր բացառիկ դիրքից, շահագործում է փնայած հասարակութեանը:

Մենավաճառութեամբ է բացատրւում այն փաստը, որ փոխանակական հասարակութեան մէջ գին ունեն, ի միջի այլոց և մի քանի առարկաներ, որոնք աշխատանքով չեն ստեղծւած, աշխատանքի արժողութիւն չունեն. օրինակ՝ անմշակ հողը, ջրի հոսանքի ոյժը (երբ գետը կապալով է տրւում ջրադացապանին), տիտղոս, աշխատանքի վրայ գերակշիռ, մեղքերի թողութիւն (կաթոլիկ վարդապետների առևտրի առարկան) և այլն:

Այս լինում է այն դէպքում, երբ աշխատանքով չստեղծւած, լայց օգտակարութիւն ունեցող և միեւնոյն ժամանակ սահմանափակ քանակութեամբ առարկաները ընկնում են մասնաւոր սեփականութեան մէջ յափշտակուած են առանձին մարդկանցից. այն ժամանակ տէրերը ուրիշ կերպ չեն համաձայնում զիջանել այս առարկաներից ուրիշ մարդկանց օգտուելու, եթէ ոչ միմիայն վարձատրութեամբ, որոշ արժողութեամբ, օրինակ՝ փողի որոշ գումարով: Այդպիսի առարկաների գինը չի կարող որոշել նրանց արժողութեամբ, որն ամենևին չկայ: Ինչպէս չի կարող որոշել Նրանց արժողութիւն, այս գինն էլ անմիջականապէս որո՛ւրեքանչիւր շահագործութիւն, այս գինն էլ անմիջականապէս որոշւում է հասարակական դասակարգերի ոյժերի յարաբերութեամբ— չէ և հասարակական դասակարգերի ոյժերի յարաբերութեամբ— յիշեալ դէպքում՝ այդպիսի ապրանքներ ծախողների ու գնողների յարաբերութեամբ: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ոյժերի այդ յարաբերութիւնն էլ ենթակայ է պատմական հիմնաւոր պայմաններին, վերջին հաշւով, մարդու՝ ընտրութեան հետ ունեցած յարաբերութեան զարգացման բացատրութեանը:

Մանր-բուրժուական փոխանակական հասարակութիւնն արդէն փոխանակութեան դրամական զարգացած ձևն առաջադրում է: Այն փոխանակութեան դրամական զարգացած ձևն առաջադրում է: Առանց փողի ապրանքների ընդարձակ շրջանառութիւնն անհնարին է. փողը նրա գործիքն է ներկայանում: Փոխանակական հասարակութիւն կենքի մէջ փողը հսկայական ու զանազանակերպ գեր է խաթեան կենքի մէջ փողը հսկայական ու զանազանակերպ գեր է խաթեան զում: Որովհետև փոխանակական հասարակութիւնը միայն փողային փոխանակութիւն է ճանաչում և որովհետև փողն է իւրաքանչիւր փոխանակութիւնը և համարում և որովհետև փողն էլ ապրանքների արժուապարանքի գիւնը հանդիսանում, ուրեմն փողն էլ ապրանքների արժուապարանքը ձգտում է կազմում իւր ապրանքների համար նրանց արտադրողը ձգտում է կազմում իւր ապրանքների համար նրանց արտադրողը հուսար չափից պակաս չվերցնել, բայց այս արժողութիւնն է, ի հարկէ, նրան ներկայանում է ոչ թէ իւրև հասարակական-աշխատանքային էներգիայի որոշ քանակութեան, այլ իւրև փողի որոշ գումար:

Այնուհետև, բոլոր կրեդիտային գործողութիւններում, որոնք փոխանակական հասարակութեան մէջ սովորական են դառնում, փողը

հանդէս է գալիս իբրև օրինական վճարման գործիք: Ապրանքային շուկայի հետ անքակտելի կիրպնով կապւած է կրեդիտայինը: Սրանց գումարը կազմում է ընդհանրապէս շուկան:

Փոխանակական հասարակութեան կեանքի կանոնաւոր ընթացքի համար լիովին անհրաժեշտ է, որ շուկայում փոխանակութեան ու վըճարման գործիքը բաւականաչափ քանակութեամբ գտնուի: Բնենք, թէ որքան է մեծ այս բաւականաչափ քանակութիւնը:

Միաժամանակ կանխիկ վաճառման դէպքում, ակներև է, այնքան փող է պահանջուած, ինչքան արժեն շուկայի ծախս ապրանքները: Բայց ժամանակի որոշ շրջանի և ամբողջ շարք առևտրական գործողութիւնների համար փողի գումարը կարող է ապրանքների գների գումարից պակաս լինել:

Արհեստաւորը գիւղացուց 10 բուբլու ցորեն գնեց: Գիւղացին դարձնից այդ 10 բուբլիով խոփ գնեց. դարբինը ստացած փողերով ատաղձ գործից սեղան գնեց: Այդ բոլոր գործողութիւնները կատարւեցին մի շարաթևայ ընթացքում. նրանց համար ընդամենը 10 բուբլու կարիք եղաւ, թէպէտ այդ ապրանքների փողը հաւասար է 30 բուբլու. պատճառն այն է, որ այս շարաթևայ մէջ փողի յիշեալ գումարը երեք շրջանառութիւն կատարեց: Ընդհանրապէս կանխիկ ծախելու ժամանակ շուկայի ապրանքի համար անհրաժեշտ փողի գումարն այսպէս է որոշուած. ծախու ապրանքների գների գումարը բաժանում են այդ ապրանքները վաճառելու ժամանակ դրամի արած շրջանառութիւնների թւի վրայ:

Կրեդիտով ծախուղ ապրանքներն անմիջականապէս ձեռքից ձեռք են անցնում, առանց փողի օգնութեան: Բայց, վերջի վերջոյ, այս ապրանքներին էլ պէտք է վճարել: Որպէսզի պարզենք այն փողի քանակութիւնը, որ անհրաժեշտ է կրեդիտային շուկայի համար, պէտք է ուշադրութեան առնենք ոչ միայն շրջանառութեան արագութիւնը, ինչպէս նախընթաց դէպքում, այլև միւս պայմանները:

Ատաղձագործը գիւղացուց պարտքով 10 բուբլու ցորեն գնեց, իսկ սա առաջինից—նոյնպէս պարտքով—9 բուբլու սեղան գնեց: Հաշիւները վերջացնելով՝ ատաղձագործը գիւղացուն մի բուբլի է միայն վճարում, թէպէտ պարտքերի գումարն ամբողջ 19 բուբլի էր:—A. պարտք է B-ին 100 բուբ. B. պարտք է C-ին նոյնպէս 100 բուբ. վերջապէս C ապրանք գնեց A-ից նոյնպէս 100 բուբլու. հաշիւները տեսնելով երեքն էլ իրար փողով ոչինչ չեն վճարում: Այդպիսով, պարտքերը վճարելիս, վճարման անհրաժեշտ գործիքների քանակութիւնը քչանում է վճարումների ամբողջ գումարով, որոնք փոխադարձաբար ոչնչանում են: Մնացածը հատուցանում է փողի այնպիսի քանակութեամբ, որքան որ պահանջում է, նայեած փողի շրջանառութեան արագութեանը:

Ընդհանուր առմամբ, շուկայի համար որոշ ժամանակամիջոցին անհրաժեշտ փողի գումարը,—փողի պահանջը—այսպէս է որոշուած. ապրանքների գների գումարին, բացի կրեդիտով ծախւածներից, առևտրական շուկայում վճարումների գումարը, առանց նրանց, չափուած է պայմանաժամով վճարումների գումարը, առանց նրանց, որոնք փոխադարձաբար ոչնչանում են, և գումարման արդիւնքը բաժանում է դրամի այդ ժամանակում արած շրջանառութիւնների միջին թւի վրայ:

Փոխանակական հասարակութեան մէջ փողի իսկական քանակութիւնը, ընդհանրապէս ասած, շուկայի «փողի պահանջի» չափերից պակաս չի լինում. ընդհակառակը, բացի շուկայում շրջանառու փողերից, լինում է և մի քիչ աւելի, որն իբրև «զանձ», փողի պահեստ, հանգիստ պահած է նրա տիրոջների գրպաններում ու նկուղներում, որպէստ պակած է նրա տիրոջների գրպաններում կամ նկուղներում, որպէսզի դուրս գայ այնտեղից այն ժամանակ, երբ գորեզ փողի պահանջ է ներկայանում ապրանքներ գնելու կամ պարտքեր հատուցանելու համար:

Փողի ահագին հասարակական դերին, իբրև ապրանքների շրջանառութեան գործիքի, համապատասխանում է մարդկանց առանձին դասակարգի շուկայում, առևտրականների դասակարգի շուկայում, որոնց համար ապրանքների շրջանառութիւնը մասնագիտութիւն է դառնում: Ասենք նրանց գործուղութիւնն ամենեւին չի յանգում միմիջանցիկ ապրանքների առևտրութեանը, նրանց արտադրութեան տեղից՝ շուկայի տեղափոխութիւնը, նրանց արտադրութեան տեղից՝ շուկայի տեղափոխութիւնը, երբեմն նաև—շուկայից դէպի սպառման տեղը: Ապրանքուղարկելը, երբեմն նաև—շուկայից դէպի սպառման տեղը: Ապրանքների այդ տեղափոխութիւնը, ճիշտն ասած, պէտք է քննել իբրև նրանց արտադրութեան վերջին գործողութիւնը. եթէ արդիւնքը որևէ տեղում չի կարողանում հասարակական պահանջներին բաւարարուելու տալ, նա դեռ կատարեալ արդիւնք չէ, դեռ սպառման իսկական առարկայ չէ. նրա արտադրութիւնն աւարտուած է նրան փոխադրելով այնտեղ, ուր նա պէտքական է հանգիստանում սպառման համար, ուր նա ստանում է իւր հասարակական օգտակարութիւնը:

Փողային կրեդիտն առաջ է բերում նոյնպէս մարդկանց առանձին դասակարգ, որ նրան իւր մասնագիտութիւնն է դարձնում. այդ վաշխառուների դասակարգն է:

Մանր-բուբլուական հասարակութեան ապրանքարտադրողների մընացած մասսան նոյնպէս լիովին միատեսակ չէ. նա բաժանուած է հասարակութեան արտադրութեան մէջ նրա առանձին խմբերի տարբեր դերի համապատասխան դասակարգերի.—հողագործների, զանազան արհեստաւորների, կոշկակարների, դարբինների և այլն:

Այստեղ յարմար է պարզել դաս և դասակարգ հասկացողութիւնների տարբերութիւնը: Դասակարգ է կոչուած մարդկանց այն խումբը, որոնք արտադրութեան մէջ նման դրութեամբ են

միացած և, այդ պատճառով, նման տնտեսական շահեր ունենա-  
տուտակահաններ, արհեստաւորներ, հողագործներ, մի կողմից կազ-  
մակերպիչները, միւս կողմից կազմակերպուողները և այլն: Դաս  
կոչուում է մարդկանց այն խումբը, որոնք նման իրաւական դրու-  
թեան մէջ են գտնուում. մի կողմից ֆէօդալները, միւս կողմից—  
ենթարկւած գիւղացիները.— սրանք իրանց իրաւունքներով տարբեր  
երկու դասեր են: Որովհետեւ իրաւական տարբերութիւնները զուտ  
տնտեսականներից են բղխում, դասերն էլ, սովորաբար, միևնույն  
ժամանակ հանդիսանում են դասակարգեր. բայց դասակարգերը  
կարող են ամենեին դաս չլինել, այսինքն՝ իրաւական դրութեամբ  
կարող են չտարբերել:

բ. Մանր-բուրժուական հասարակութեան առանձին տնտեսութիւնների  
ներքին յարաբերութիւններ

Ամենատիպիկական մանր-բուրժուական խումբը պէտք է համա-  
րել միջին դարերի երկրորդ կիսի քաղաքային արհեստաւորի տնտե-  
սութիւնը թողնելով մինչև յաջորդ գլուխը այն հարցը, թէ ինչպէս  
կատարւեց քաղաքների կազմելն ու արհեստաւորական-աւետարական  
դասակարգերի ազատումը, առայժմ ի նկատի պիտի ունենանք, որ  
ողպիսի արհեստաւորն ազատ ապրանք արտադրող է ներկայանում:

Արհեստաւորի տնտեսութիւնը իւր զուտ ձևով ներկայացնում է  
մի ոչ մեծ ընտանիք—վաղ ֆէօդալական շրջանի մեծ ընտանիքների  
բաժանման արդիւնքը, որոնք իրանց հերթին նախկիննահասակական-  
ցեղական կազմակերպութիւնների մնացորդն են ներկայացնում: Ար-  
հեստաւորի ընտանիքի փոքրութիւնը որոշուում է հէնց նախնական ար-  
հեստային արտադրութեան բնաւորութեամբ, որի գործիքները շատ  
բանւորների աշխատանքի միացումն չեն պահանջում, այնպէս որ մի  
երկու մարդ կարող են ազատ կերպով կառավարել նրանց հետ:

Նահապետական-ցեղական յարաբերութիւնների թոյլ մնացորդը  
հանդիսանալով, մանր-բուրժուական ընտանիքը փոքր չափով վերաբ-  
տադրում է նրանց իւր ներքին կազմի մէջ: Ընտանիքի հայրը ներկա-  
յանում է ոչ միայն տնտեսութեան գլխաւոր բանւորական ոյժը, այլև  
նրա արտադրական և բաշխողական յարաբերութիւնների իրաւագոր  
կազմակերպիչը: Մնացած ընտանիքն ամենալիակատար ենթարկման  
մէջ է գտնուում արդէն շնորհիւ այն փաստի, որ կեանքի միջոցներ  
գտնելու աշխատանքի ամենամեծ ու գլխաւոր բաժինը հօր ուսերի վրայ է  
գրւած: Պատանի որդիների, յաճախ նաև սովորեցնելու համար ընդու-  
նած կողմնակի երիտասարդ մարդկանց օգնութեամբ տէրն առաջ է տա-  
նում արհեստաւորական արտադրութիւնը և ծախում նրա արդիւնքը:  
Հէնց նա էլ կառավարում է ստացւած փողերով սպառման անհրաժեշտ  
առարկաներ գնելը:

Սովորաբար կենսական տարբեր միջոցները այնպիսի վերջնական

կերպարանքով ձեռք չեն բերում, որ նրանք արդէն կարողանային  
ծառայել շուտափոյթ սպառման համար: Արտադրութեան վերջին պրո-  
ցեսաները անցնում են արդէն հէնց սպառող տնտեսութեան մէջ (գնւած  
մթերքներից կերակուր պատրաստելը, գնւած գործւածքներից շորեր  
կարել և այլն): Այս բոլորն ի կատար են ածում, գլխաւորապէս, ըն-  
տանիքի կին անդամները:

Այդպիսով, կանայք ներկայացնում են ընտանիքի «բնական-  
տնտեսական» մասը: Նրանք վարում են տնային արտադրութիւնն ան-  
միջական սպառման համար, ըստ որում այդ արտադրութեան միջոց-  
ները ընտանիքի պետն է նրանց մատակարարում: Հետևապէս, կնոջ  
համար գծագրուում է գործունէութեան չափազանց նեղ, մեկուսացած  
շրջան, աւելացնենք սրան և այն, որ այդ գործունէութիւնը վերին աս-  
տիճանի ենթարկւած է և որի համար նիւթական պայմաններն իւր  
տիրոջից են արւում կնոջը—տղամարդուց: Դժւար չէ սրանից հասկա-  
նալ, թէ կինն ընտանիքի մէջ որչափ նւաստացած դեր է բռնում:

Կնոջ պատմական ճակատագիրը վերջին դարերում որոշուում  
է հէնց այն փաստով, որ դարգացած փոխանակական հասարա-  
կութեան մէջ կինը պէտք է կատարէր համարեա նոյն անփոփոխ  
կուլթեան մէջ կինը պէտք է կատարէր համարեա նոյն անփոփոխ  
ընական-տնտեսական և դերը տիպով աւելի բարձր յարաբերու-  
թիւնների սիստեմի մէջ արտադրական աւելի ցածր ձևակերպութեան  
մնացորդ հանդիսանալ: Խոհանոցի ու մանկանոցի մեկուսացա-  
ցումնային տնտեսութիւնը ցոյց է տալիս կնոջ հպատակութիւնը:

Այն կողմնակի մարդու դրութիւնը, որին ընդունում է ար-  
հեստաւոր-վարպետը սովորեցնելու և որը աշկերտ և յետոյ քարգահ  
կոչուում, սկզբում հաղիւ թէ տարբերում է ընտանիքի անդամներով  
դրութիւնից: Նա ապրում է տիրական ընտանիքի հետ միասին, խմուէ  
և ուտում է նրա հետ և, ընդհանրապէս, իբրև ընտանիքի անդամ,  
օգտուում է կենսական պատրաստի միջոցներից: Բացի այդ, որովհետեւ  
նա իր ժամանակին անկախ արհեստաւոր պիտի դառնայ, տիրոջից  
ստանում է թոշակ, թէև փոքրիկ, որից պէտք է միջոցներ հաւաքէ սե-  
փական արհեստանոց կարգի զցելու համար: Նա գործում է տիրոջ  
հետ, աշխատանքն սկսում ու վերջացնում է նրա հետ միաժամանակ  
տէրը նայում է նրա վրայ, իբրև արտադրութեան մէջ իւր օգնականի  
և ոչ թէ շահագործութեան առարկայի վրայ: Ընդհանրապէս, փոխա-  
նակական տնտեսութեան վաղ շրջանում, աշկերտների ու քարգահ-  
ների դրութիւնը եթէ տարբերում էլ է ցեղական-տնտեսականների  
դրութիւնից, այդ շահաւէտ է աւելի մեծ անկախութեան մտքով:

Ինչ վերաբերում է գիւղացիական ընտանիքին, նա, ինչքան որ  
նրան ընդգրկում է փոխանակական տնտեսութեան շրջանաւորութիւնը,  
նահապետական նախկին «մեծ ընտանիքից» քիչ-քիչ փոխում է մանր-  
նահապետական տիպի ընտանիքին: Սակայն միջին դարերի  
բուրժուական սովորական ղեռ չի վերջանում, թէև այդ ժամանակայ  
ընթացքում այս անցումը դեռ չի վերջանում:





կարծի է, օրինակ, այն փաստով դատել, որ դեռ 1589 թ. ին Միւնխէնի քա-  
ղաքացիք, բաւարական հերցոգի խօսքերով, առանց վարելահոյերի ու  
արօտավայրերի չէին կարող գոյութիւն ունենալ:

Բարձրանալով մարդկանց միջև կազմակերպւած փոխանակական  
յարաբերութիւնների հողի վրայ, քաղաքը, ինքն ըստ ինքեան, արդէն  
մի քիչ կազմակերպւած կապ է ցոյց տալիս նրանց մէջ: Նա իւր բը-  
նակիչները համար ընդհանուր գինւորական պաշտպանութեան կազմա-  
կերպութիւն և իրաւական կեանքի ընդհանուր կազմակերպութիւն է  
առաջադրում: Միայն այս պայմաններում է նա ընդունակ արհեստի ու  
փոխանակութեան իսկական կենդրոն հանդիսանալ:

Շնորհիւ անտեսութեան հակասութիւնների թոյլ զարգացման և հա-  
րստութեան անհաւասարութեան, քաղաքացիների հասարակական գործե-  
րի կազմակերպութիւնը կազմուած էր հասարակապետական տիպով, որ  
մօտենում է նոր ժամանակայ հասարակապետութեան կազմութեանը:  
Ասենք, արխիտոկրատական նրբութիւնը—մի քանի ամենանշանաւոր և  
հարուստ ընտանիքների հարստութեան գերազանցութիւնը—հէնց ամե-  
նակզբից արդէն նկատուած է բոլոր քաղաքային հասարակապետու-  
թիւնների մէջ: Այդ նորութիւնն այնքան զօրեղ է, որքան աւելի շատ  
է զարգացած փաստացի անհաւասարութիւնը—հարստութիւնն ու աղ-  
քատութիւնը. իսկ անհաւասարութիւնը, ինչպէս յետոյ ցոյց կտրւի,  
անտեսական զարգացման ընթացքի հետ աստիճանաբար զօրեղանում  
էր, այնպէս որ այս մտքով Իտալիայի ամենաառաջնակարգ հանրապե-  
տութիւնները միևնոյն ժամանակ ամենաարիստոկրատն էին:

Քաղաքային բնակչութեան նիւթական ոյժի աճելու չափով թուլա-  
նում է քաղաքի փաստացի կախումը ֆէօդալական սենեօրից, որի  
հողի վրայ է նա գտնուում: Մասամբ փողով գնելով, մասամբ ուղղակի  
կուլի միջոցով քաղաքացիք ներքին գործերի մէջ գնալով աւելի մեծ  
անկախութիւն ձեռք բերին: Ֆէօդալների միջև մշտական ընդհարում-  
ները թուլացնելով նրանց կարողութիւնը, յաճախ յարմար գէպքեր  
էին տալիս քաղաքացիներին՝ կարգի գնելու իրանց գործերը. քաղաքը, յին-  
ւելով իւր գինւորական ոյժի և ամուր պարիսպների վրայ, շատ գէպ-  
քերում վճռողական դեր կարող էր խաղալ կուլի մէջ և, ի հարկէ, իւր աջակ-  
ցութիւնը ձրի չէր տալիս, այլ որ և է նոր կանոնի ու մենաշնորհում-  
ների համար: Խաչակրաց արշաւանքների էպոխայում, երբ ա՛պօրին  
քանակութեամբ ֆէօդալներ զրամական մեծ դժուարութիւնների մէջ  
ընկան, շատ քաղաքներ յաջողեցան յետ գնել սենեօրներից իրանց հողն  
ու ինքնուրոյնութիւնը, վերջնականապէս ազատելով ամեն տեսակ ճոր-  
տական աշխատանքներից, տուրքերից և սինեօրի՝ ներքին քաղաքական  
գործերի մէջ միջամտելուց:

Քաղաքների կոիւր ֆէօդալական սենեօրների գէմ, որոնք ցան-  
կանում էին պահել նրանց վրայ իրանց իրաւունքները, շարունակուած

է միջին դարերի ամբողջ երկրորդ կիսի ընթացքում: Իրրև քաղաքա-  
ցիների առաջապահ խումբ, այս կուլի մէջ հանդէս է դուրս գալիս ըս-  
կզրում առևտրականների դասակարգը, որոնց զբաղմունքը հէնց այն  
ժամանակները մեծ եռանդ, պատերազմական ոգի և կազմակերպչական  
ընդունակութիւն էր զարգացնում: Աւելի ունեւոր քաղաքացիք համա-  
խմբելով ամենահին, հարուստ և կարողութեան տէր վաճառականական  
ընտանիքների շուրջը, կազմակերպուած էին, այսպէս կոչւած, գիրլիա-  
ների—ընկերութիւնների, որոնք, ըստ ձևի, սովորաբար կրօնական բը-  
նաւորութիւն ունէին, իսկ ըստ էութեան՝ ընդհանուր անտեսական շա-  
հերք միաբան պաշտպանելու կոչում: Երկար ժամանակ քաղաքների  
ինքնուրոյնութեան կոիւր մղում էր գիրլիանների գրօշակների տակ:  
Գիրլիանների կազմի մէջ նրանց գլուխն անցած հարուստ ընտանիքների  
և կազմակերպութեան մնացած անդամների փոխադարձ յարաբերու-  
թիւնները դեռ բաւական զօրեղ կերպով յիշեցնում էին սենեօրների  
յարաբերութիւնները գէպի իրանց վաստակները:

Ժամանակի ընթացքում արհեստի յետագայ զարգացումն ու արհես-  
տաւորների դասակարգի ոյժի աճումը տանում է քաղաքական դասի ու-  
րիշ համախմբման—նամքարակաւ կազմակերպութիւնների առաջացման:

Համքարական կազմակերպութիւններն իրանց էութեամբ ներ-  
կայացնում են այն նահապետական յարաբերութիւնների, անձի ու  
առանձին անտեսութեան վրայ եղած այն համայնական ինամակալու-  
թեան մնացորդը, որպիսին գոյութիւն ունէր, օրինակ՝ ֆէօդալական  
ժամանակների երկրագործական համայնքում: Սակայն ինչպիսի պատ-  
ճառների զօրութեամբ առաջւայ յարաբերութիւնների այդպիսի մնա-  
ցորդը պահպանւեց նոր հասարակական ձևակերպութեան մէջ:

Մանր արհեստաւորական արտադրութեան գէպքում արտադրող-  
ների փոխադարձ օգնութիւնն ու աջակցութիւնը անպայման անհրա-  
ժեշտ են նրա համար, որպէս ղի նրանց զրութիւնն ամուր ու սպա-  
հով դառնար: Առանց այդպիսի օգնութեան մանր արտադրողը, իւր  
անտեսական թուլութեամբ, շարունակ վտանգի է ենթարկւում ամեն  
ինչ կորցնելու առաջին իսկ անբարեյաջող պատահականութիւնից.—  
ժամանակաւորապէս ապրանքների գների ընկնելուց, գործիքների կո-  
տրելուց, հրդեհից, գողութիւնից և այլն:

Արհեստաւորների գրութիւնը անհաստատ է դառնում մանաւանդ  
նրանց միջև ազատ մրցման ժամանակ: Կուլն անխուսափելիօրէն կո-  
րստաբեր է աւելի թոյլ արտադրողները համար, այսինքն՝ իսկապէս  
մեծամասնութեան համար: Մրցումը վերացնելու համար անհրաժեշտ  
է, որ միևնոյն մասնագիտութեան արտադրողները միանան:

Շատ հաւանական է, որ համքարական կազմակերպութիւնների  
սկիզբը պէտք է ֆէօդալ-երկրագործական աշխարհի համայնական յա-  
րաբերութիւնների մէջ փնտուել: Իսկ համքարութիւնների երևան գա-  
նումը 9

լու մասին պատմական փաստերը կարելի է XI, XII դարերի մէջ գըտ-  
 նել: Երբեմն համըարութիւններն առաջանում էին այնպիսի ժամա-  
 նակաւոր միութիւնների ձևով, որոնք ընդգրկում էին իրանց մէջ մի  
 քաղաքում ապրող մի արհեստի կամ մի քանի իրար մօտիկ արհեստ-  
 ների վարպետներին. այդպիսի ժամանակաւոր միութիւնները, շնորհիւ  
 իրանց մէջ մասնակցողների բերած օգուտներին, նորոգելով ու աւելի  
 ամրապնդելով, դառնում էին այնուհետև մշտական միութիւններ:

Համըարների հաստատուն կազմակերպութիւնը կուրի մէջ է զար-  
 գանում ոչ միայն այն մտքով, որ քաղաքների՝ Ֆէօդալական հարստա-  
 հարութիւնից ազատելու կուրի մէջ համըարները պէտք է ղեկավարող  
 կազմակերպչական դեր կատարէին, այլև այն մտքով, որ քաղաքային  
 դասի հին արիստոկրատիան նշտութեամբ չհրաժարւեց քաղաքական  
 կեանքի մէջ ունեցած նախկին տիրապետող դրութիւնից և համըար-  
 ներին քիչ ջանք հարկակաւոր չեղաւ նրա յամառութիւնը կոտրելու:

Մօտաւորապէս համանման հասարակական պայմանների մէջ զար-  
 գանալով, համըարներն իրանց կազմութեան հիմնական կէտերում  
 ներկայացնում էին միևնոյն տիպը, թէև թւում է, թէ մասնաւորու-  
 թիւնների մէջ քիչ տարբերութիւններ չկային:

Իւրաքանչիւր համըարութիւն ունէր իւր ընտրւած վարչութիւնը  
 և իւր կանոնադրութիւնները: Համըարութիւնների կանոնադրութիւն-  
 ները բաւականին զանազանակերպ և, ընդհանուր բնաւորութեամբ,  
 բաւականին դէմօկրատական էին,—միքիչ միայն արիստոկրատական  
 գոյնով խառնւած. այդ խառնուրդն սկզբում, համըարութիւնների՝ հին  
 քաղաքային արիստոկրատիայի և Ֆէօդալների դէմ վարած կռիւների  
 շրջանում աննշան էր, համարեա աննկատելի. իրաւատէր քաղաքացի  
 էր դառնում, օրինակ, նոյնիսկ Ֆէօդալ անազատ մարդը, եթէ նրան  
 յաջողում էր մի տարի ու մի օր ապրել քաղաքում: Ժամանակի ըն-  
 թացքում, ինչ չափով որ համըարութիւնները հասարակական գործե-  
 րի մէջ գրաւում են իսկական տիրապետութիւնը և հնարաւորութիւն  
 ստանում իրանք էլ արիստոկրատական քաղաքներ դառնալու, նոյն  
 չափով էլ նրանց դէմօկրատականութիւնը պակասում է: Համըարու-  
 թիւններն առաջացնում են իրանց միջից արհեստաւորների ոչ իրաւա-  
 տէր խմբեր. այս նրանք են, որոնք դեռ սեփական տնտեսութիւն չու-  
 նեն կամ դեռ իրանց պրօֆէսիօնալ ուսմունքը չեն վերջացրել.—առա-  
 ջին՝ քարգահները (երևան են գալիս Գերմանիայում՝ XIII դարում),  
 երկրորդ՝ աշկերտները (Գերմանիայում XIV դարում):

Այդ ժամանակներից համըարութիւնների իրաւատէր անդամներ  
 են հանդիսանում միայն «վարպետները»—արհեստաւորներ, որոնք ինք-  
 նուրոյն կերպով են կատարում իրանց արտադրութիւնը: Այս արհես-  
 տի ինքնօրինակ արիստոկրատիա է. բայց սկզբում նա յինում է ոչ  
 թէ ծագումի, նոյնիսկ ոչ թէ հարստութեան, այլ արհեստաւորական

արհեստի վրայ: Որոշ չափի եռանդով ու ընդունակութիւններով իւրա-  
 քանչիւր արհեստաւոր կարող է հասնել վարպետի աստիճանին: Այս  
 բանի համար նա պէտք է որևիցէ վարպետի մօտ միքանի տարի աշ-  
 քանի համար նա պէտք է որևիցէ վարպետի մօտ միքանի տարի աշ-  
 կերտութեան մտնէ: Յետոյ նա իւր արհեստից քարգահութեան աս-  
 տիճանի քննութիւն կտայ: Այս դեռ իրաւունք չի տալիս նրան սեփա-  
 կան արհեստանոց բաց անել. նա պարտաւոր է որոշ տարիներ վար-  
 ձով ծառայել: Միայն այդ ժամանակ է նա վարպետութեան համար  
 քննութիւն տալիս և եթէ յաջողում է, ստանում է անկախօրէն գործե-  
 առաջ տանելու իրաւունք: Նրա իրաւունքները հասարակական գործե-  
 րի շրջանում նրա տնտեսական դրութեան բարձրանալու հետ միասին  
 աճում են:

Այս սխտեմի էութիւնը, ակներև է, նրա մէջն է կայանում, որ  
 նա արհեստաւորների մէջ եղած ծայրայեղ մրցումը մեկուսացնում է  
 ձեռնարկութիւնների թւի չափազանց արագ աճումից:

Վարպետների մէջ եղած մրցման թուլացմանն են ուղղւած նաև  
 համըարական կանոններից շատերը: Այսպէս՝ վարձու բանւորները—  
 քարգահների ու աշկերտների—թիւը սովորաբար սահմանափակում է  
 2,3,4,5 մարդկանցով, շատ քիչ անգամ—աւելի: Հետևապէս, արհես-  
 շտաւորը չի կարող ուղածին չափ ընդարձակել իւր ձեռնարկութիւնը,  
 փաւորը չի կարող ուղածին չափ ընդարձակել իւր ձեռնարկութիւնը.  
 ման միջոցով խիստ շատացնել աշխատանքի արտադրողականութիւնը.  
 նա այս եղանակով չի կարող միւս արհեստաւորներին ճնշել, դուրս  
 նա այս եղանակով չի կարող միւս արհեստաւորներին ճնշել, դուրս  
 զցել ու առանց հացի թողնել: Նրա ձեռնարկութիւնը դատապարտւած  
 է մանր մնալու: Այս բանի շնորհիւ շուկան բոլորին բաւականանում է:  
 Վարձու բանւորների թւի քշութեան պատճառով վարպետի՝ նը-

բանցից ստացած օգուտը բաւական չէ, որ նա կարողանայ բարեկեցիկ  
 կարողանալ, սահմանափակելով միայն կազմակերպչական դերի մէջ: Վար-  
 պետը հարկադրւած է քարգահներին հաւասար աշխատել, որի շնոր-  
 պետը հարկադրւած է քարգահներին հաւասար աշխատել, որի շնոր-  
 պետը հարկադրւած է քարգահներին հաւասար աշխատել, որի շնոր-  
 հիւ համըարների կեանքի առաջին շրջանի ընթացքում, նախ քան  
 հիւ ձեռքը փշրող նոր ոյժերի հանդէս գալը, վարպետի ու նրա բան-  
 ւորների յարաբերութիւնները զգալի չափով ընկերական ու ընտանե-  
 կան մնացին:

Այնուհետև, մրցման մէջ անհաւասարութիւնից խուսափելու հա-  
 մար, կանոնադրութիւններով խիստ որոշւած են բանւորական օրւայ եր-  
 կարութիւնը և բանւորական օրերի թիւը տարւայ մէջ: Այս դէպ-  
 քում վարպետի ու նրա ստորադասեալների համար եղած բանւորական  
 ժամանակի մեծութեան մէջ ոչ մի տարբերութիւն չի արւում, որով-  
 հետև առաջինն ու վերջինները շարունակ միասին են աշխատում:  
 Գործը կատարւում է մի քանի օրով, որի ընթացքում, նախ քան  
 ժուլութիւնը տարբեր է, մօտաւորապէս շաժաթւայ մէջ 50—60 ժամ  
 (Անգլիայում XV դարում—օրւայ մէջ 8 ժամ): Այս դէպքում բազմա-



նիւթական շահերի ոյժը զարգացող մտածողութեանն ուղղել էր կաթոլիկականութեան դէմ:

Միջին դարերի ամբողջ երկրորդ կիսում հերետիկոսներն ընթացում են անընդհատ շարքերով և պապականութիւնը կատաղի կոիւ է մղում նրանց դէմ, սպանելով իւր գլխաւոր ոյժը — ժողովրդական մասսաների համակրութիւնը:

Քաղաքային հասարակապետութիւններն անընդունակ դուրս եկան բաւարար քաղաքական կազմակերպութիւնների ելակէտը լինելու: Ծըշմարիտ է, մի քանի քաղաքներ ջանում էին փոխանակութեան պաշտպանութեան և սեփականութեան փոխադարձ պահպանութեան այդպիսի կազմակերպութիւններ ստեղծել (առևտրական քաղաքների միութիւններ, օրինակ, Հայդէնեանները), սակայն ժամանակի ընթացքում իրանց մէջ ոյժի ու հաստատականութեան պակասութիւն, ներքին միութեան պակասութիւն էր երևան գալիս: Առանձին քաղաքներն անկարող էին բարձրանալ իրանց տեղական շահերից և ձգտում էին շահագործել դաշնակիցներին, իսկ սրանք, բնականաբար, պաշտպանում էին իրանց տնտեսական և քաղաքական ինքնուրոյնութիւնը: Քաղաքային կազմակերպութիւնների կազմն անբարեյաջող էր կատարելու այնպիսի գործեր, ինչպիսին է «հող հաւաքելը» նրանց մէջ իշխանութիւնն անբաւարար չափով էր կենդրոնացրած, ուստի և այնքան ուժեղ չէր, որքան անհրաժեշտ կլինէր յիշեալ նպատակի համար:

Այդպիսով, իրերի ընթացքը զինուորական-ֆէօդալական սիստեմին «պատմական միսսիս» յանձնեց իրանից նոր ոյժ զարգացնելու, որն ընդունակ լինէր կարգ հաստատել «մեծ և բերրի» հողերի վրայ: Եւ այնտեղ գտնւեցան յարմար տարրեր:

Մանր ֆէօդալների և սրանց ու քաղաքների վէճերն ու երկպառակութիւնները խոշոր ֆէօդալների—իշխանների և մանաւանդ թագաւորների ձեռքին էր: Նրանք սկսեցին կամաց-կամաց «հողը ժողովել» իրանց ձեռքերը, յաղթելով մանր ֆէօդալներին և կցելով նրանց հողերը իրանց հողերին:

Ֆէօդալները եռանդով կուռում էին իրանց բարձր գերիշխանների յափշտակութիւնների դէմ: Բայց այս վերջինները, յանձին ֆէօդալներին թշնամի քաղաքային դասերի, իրանց համար եռանդուն և վստահելի դաշնակից գտան: Քաղաքների հետ ունեցած դաշնակցութիւնը թագաւորին այնպիսի նիւթական միջոցներ էր մատակարարում, որպիսիք չէին կարող ունենալ նրանց հակառակորդները: Թագաւորները կազմակերպում էին մշտական զօրքեր, որոնք հնարաւորութիւն էին տալիս նրանց ամեն ժամանակ կոիւ սկսել, մի բան, որ անկարող էին անել ֆէօդալները:

Զինուորական կազմակերպութեան յառաջադիմութիւնն այս դէպքում մեծ ծառայութիւններ արեց թագաւորների գործին, փութացնե-

լով նրանց յաղթութիւնն անհնազանդների վրայ. վառօդը կուի ժամանակ ֆէօդալների համար անօգուտ դարձրեց իրանց առաջւայ անառիկ բերդերն ու երկաթէ զինավառութիւնը: Երբ ֆէօդալը դադարեց հասարակական-անհրաժեշտ լինելուց, դադարեց և անպարտելի լինելուց: Յաղթած ֆէօդալները ծառայութեան էին մտնում թագաւորների մօտ կամ հասարակ կալւածատէրեր դառնում:

Կաթոլիկ եկեղեցին, միւս ֆէօդալների նման, շատ տհաճ կերպով և եռանդուն կուռով զիջեց նոր ոյժին իւր կազմակերպչական առաջնութեան դերը հասարակական կեանքում: Երբեմն հոգևորականներն յաջողում էին նոյնիսկ լուրջ յաղթանակներ տանել միապետների վրայ:

Միջին դարերի վախճանին կուրը վերջացաւ թագաւորների յաղթութեամբ: Այսպէս կազմեցին հետզհետէ ընդարձակ բացարձակ միապետական կազմակերպութիւններ, որոնք ընդունակ էին միառժամանակ ապահովել զարգացող փոխանակական կեանքի խաղաղ ընթացքը:

3. ՄԱՆՐ-ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՍՈՐԱԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ

Անհատի զարգացման համար մանր-բուրժուական հասարակութիւնը շատ աւելի լայն ասպարէզ է ներկայացնում, քան ընտան հասարակութիւններից որ և է մէկը: Սակայն զարգացման պայմաններն սարակութիւններից համար միատեսակ չեն—այս հասարակութեան տարրեր դասակարգերի համար միատեսակ չեն— ոմանց համար աւելի բարեյաջող են, ուրիշների համար՝ պակաս:

Երկրագործական աշխարհում, որտեղ փոխանակական ամենանեղ թիւնը ֆէօդալական քողի տակ հանդէս եկաւ, զարգացումն ամենանեղ շրջանակների մէջ էր դրւած: Փոխանակական ֆէօդալականութեան ճորտական ձևը, որ շատ բանում նման է զուտ «ստրկութեան», խիստ հարստահարում էր արտադրողին և, մինչև ծայրը քամելով նրա կենսարտահարում էր արտադրողին և, մինչև ծայրը քամելով նրա կենսական եռանդը, զարգացման համար ազատ ոյժ չէր թողնում: Ինչ սակայն եռանդը, զարգացման համար այդպիսի հարստահարութեան տակ վերաբերում է ֆէօդալներին, որոնք այդպիսի հարստահարութեան տակ չէին գտնւում, նրանց համար զարգացման հնարաւորութիւնն ուրիշ չէին գտնւում, նրանց համար զարգացման հնարաւորութեան ամենանեղ պատճառի ազդեցութեան տակ էր: Ինչ չափով որ նրանք ծախսում էին իրանց նախկին հասարակական-արտադրողական դերը և կենդրոնէին իրանց նախկին հասարակական-արտադրողական և սպառման վրայ, նրանցում իրանց գործունէութիւնը «բաշխման» և սպառման վրայ, նրանց զարգացողութիւնն էլ, սրան համապատասխան, ոչ-արտադրողական, պարագլխային ուղղութեամբ էր կատարւում:

Այդպիսով, երկրագործական դասակարգերը չէին կարող առաջինը հանդէս գալ իրրև այնպիսի ոյժ, որ մանր-բուրժուական կազմակերպութեան ներքին յարաբերութիւնները վերանորոգէր:

Քաղաքների արդիւնաբերական ազատ դասակարգերը շատ աւելի բարեյաջող պայմանների մէջ էին գտնւում: Արտաքին հարստահարարեյաջող պայմանների մէջ էին գտնւում:



մը մարդկանց միջև: Բայց այս աշխատանքի անկազմակերպ բաժանու-  
մըն է: Հէնց նրա բնաւորութիւնից բխում է արտադրողներէ յար-  
մարեցած չլինելը նրանց փոխադարձ յարաբերութիւններին, որին  
իրրև այս յարաբերութիւններէ «իշխանութիւն» են մատնացոյց անում:

Ապրանքների գներն, ինչպէս պարզած է, ենթարկուած են ար-  
ժողութեան օրէնքին, այսինքն՝ իրանց մշտական տատանումների մէջ  
արժողութեանը համապատասխան լինելուն են ձգտում: Սակայն իւրա-  
քանչիւր որ և է մոմէնտում նրանք շեղուած են իրանց նորմայից, որով-  
հետև արժողութեան օրէնքը ոչ թէ գիտակից, կազմակերպիչ կամ-  
քով է կեանքի մէջ մտցուած, այլ մրցումի տարերային մեխա-  
նիզմով: Իւրաքանչիւր որ և է մոմէնտում ապրանք արտադրողը բխկ  
է անում չյարմարած լինել շուկայի պայմաններին, նրա աշխատանքի  
եռանդը, մասամբ կամ լիովին, անօգուտ է ծախսուած, հասարակական  
բաշխման մէջ ունեցած մասնակցութիւնը պակասուած և նրա սպառումը  
նւազում է:

Այս բոլորի շնորհիւ շուկան արտադրողի համար հանդիսանում է  
մի արտաքին ոյժ, որին նա պէտք է յարմարի. բայց թէ կյաջողութիւն—  
այդ նրանից չի կախած. արտաքին բնութիւնն էլ իւր հազարաւոր  
անսպասելի վտանգներով ճիշտ այդպէս է հանդիսանում վայրենու գի-  
տակցութեան առաջ: Այստեղից են առաջանում ֆետիշիզմի երկու  
տարբեր տեսակները:

Շուկան իւր մրցումով, իւր յաճախ կատարի կուով արտադրո-  
ղի աչքից ծածկուած է հասարակական միութեան՝ բնութեան դէմ կուած  
հասարակական միաբանութեան փաստը: Գնողն ու վաճառողը, ո-  
րոնք իրականութեան մէջ աշխատել են հասարակութեան համար, շու-  
կայում հանդիպում են ոչ իրրև մի հասարակական միութեան երկու  
անդամներ, այլ իրրև երկու հակառակորդներ: Արտադրողը հնարաւո-  
րութիւն չունի հասկանալու, որ իւր, ինչպէս և միւս արտադրողների  
աշխատանքը հասարակական աշխատանքի էներգիայի ծախսումն է:

Արտադրողն ապրանքների հասարակական արժողութեան մասին  
ոչինչ չի կարող իմանալ, որովհետև նա սովոր չէ նայել ապրանքի վը-  
բայ, իրրև հասարակական արդիւնքի: Դիտելով փոխանակութեան շատ  
գէպքեր, նա արժողութեան, այսինքն՝ իսկապէս ապրանքների սովո-  
րական գնի մասին գաղափար է կազմում իւր համար. բայց արժէքը  
նրա համար անբացատրելի երևոյթ է: Նմանեցնել արժէքը հասարա-  
կական աշխատանքի եռանդի ծախսումին՝ նրա համար անհնարին է  
նայի այն պատճառով, որ նա գաղափար չունի աշխատանքի հասարա-  
կական բնաւորութեան մասին, որով արտադրած է արդիւնքը, և յե-  
տոյ այն պատճառով, որ արժէքը անպայման նրան ներկայանում է  
իրրև փողի և ոչ թէ իրրև աշխատանքի որոշ քանակութիւն: Սակայն  
եթէ ապրանք արտադրողի գիտակցութիւնն անկարող է կապել արժէքը

մարդկանց հասարակական աշխատանքի յարաբերութիւնների հետ, նա  
կարող է կապել այն միմիայն ապրանքի հետ: Եւ թուցիկ հայեացքի  
համար այս բոլորովին բնական է. ապրանքն ում մօտ էլ որ գտնւի,  
նրան արտադրողի, թէ մի ուրիշ մարդու մօտ, միևնոյնն է, ապրանքը  
ծախսում է իրան յատուկ արժէքով: Այստեղից կարելի է շատ դիւ-  
րութեամբ անել այն եզրակացութիւնը, որ արժէքը—փողի որոշ գու-  
րութեամբ անել այն եզրակացութիւնը—ապրանքի իրան յատուկութիւնն է,  
մարով ծախսելու ընդունակութիւնը—ապրանքի իրան յատուկութիւնն է,  
յատուկութիւն, որ կախում չունի մարդկանցից կամ հասարակութիւնից—  
ընդհանրապէս՝ ապրանքի բնական յատկութիւնն է: Որտեղից է վերց-  
—ընդհանրապէս՝ ապրանքի բնական յատկութիւնն է: Որտեղից է վերց-  
լում այդ յատուկութիւնը, ինչով են որոշուած նրա սահմանները, ապ-  
ւում արտադրողն այս չի հետադատում: Նրա համար կացնի փոխա-  
բանքն արտադրողն այս չի հետադատում: Նրա համար կացնի փոխա-  
նակական արժէքը երկու բուլլի է և այսքանը միայն. արժէքը ոչ մի  
բանից կախում չունի. նա ինքն իրան գոյութիւն ունի կացնի մէջ,  
ինչպէս որ բնական ֆետիշիզմի համար կացնի հողին միայն կացնի  
հողի է և ուրիշ ոչինչ: Սրա մէջ էլ կայանում է ապրանքային ֆէտի-  
շիզմի էութիւնը: Ապրանքային ֆէտիշիզմը, հնարաւորութիւն չունե-  
նալով հասկանալ, որ փոխանակութեան մէջ արտայայտուած է մարդ-  
կանց՝ բնութեան դէմ ունեցած կուած աշխատանքային համերաշխու-  
կանց՝ բնութեան դէմ ունեցած կուած աշխատանքային համերաշխու-  
թիւնը, այսինքն՝ մարդկանց հասարակական յարաբերութիւնը, ապ-  
րանքների փոխանակելու ընդունակութիւնը համարում է հէնց ապ-  
րանքների ներքին, բնական յատուկութիւնը: Այդպիսով, այն, ինչ որ ի-  
րականութեան մէջ ներկայանում է մարդկանց յարաբերութիւնը, նրան  
առարկաների յարաբերութիւնն է երևում: Հետևապէս, փոխանակական  
առարկաների յարաբերութիւնն է հանդիսանում, որը ա-  
ֆէտիշիզմը բնական ֆետիշիզմի հակառակն է հանդիսանում, որը ա-  
ռարկաների յարաբերութիւնները պատկերացնում էր իրրև մարդկանց  
յարաբերութիւններ:

Փոխանակական ֆետիշիզմի մէջ մարդկանց վրայ իրանց սեփա-  
կան յարաբերութիւնների տիրապետութիւն է արտայայտուած, մինչ  
բնական ֆետիշիզմի մէջ—արտաքին բնութեան տիրապետութիւնը:  
Որտեղ հասարակական մարդը ընդարհուած է տարերային ոյժի  
հետ, որին նա անկարող է իրան հպատակեցնել և որին չի կարող  
յարմարել իւր գիտակցութեան օգնութեամբ, այնտեղ էլ նա իւր համար  
անխուսափելիօրէն ֆետիշիզմ է ստեղծում:

Բայց սրանից ինչ է դուրս գալիս: Ֆետիշիզմը ոչ միայն ար-  
տայայտութիւն է ճանաչողական ընդունակութեան թուլութեանը, այլ  
և միևնոյն ժամանակ նրա՝ յետագայ կուից հրաժարելուն: Ֆետիշի-  
զմի հանդէպ ճանաչողութիւնը կանգ է առնում: Ուստի մարդկային յարա-  
բերութիւնների զարգացումը չի կարող գիտակցօրէն կատարել այն-  
տեղ, որտեղ այս յարաբերութիւնները ֆետիշիստական են ճանաչում-  
անաչողութիւնը միայն տարերապէս չի կարող առաջ գնալ, ինչպէս  
ճանաչողութիւնը միայն տարերապէս չի կարող առաջ գնալ, ինչպէս  
տեսնելու զարգացումը բնական ֆետիշիզմի տիրապետութեան ժա-











ոյժի վրայ, մեծաքանակ գնողը խառնուում է մանր արտադրողի արտադրական գործունէութեան մէջ.—վերահսկում է նրան և արտադրութեան բարձագոյն կազմակերպիչն է անդիսանում: Իւր հաշիւների համեմատ առևտրականը ցոյց է տալիս, թէ ինչ քանակութեամբ, ինչ որակի և ինչ ժամանակ պէտք է պատրաստուած լինի արդիւնքը և նշանակում է նրա գինը: Արտադրողն ստիպւած է ամեն բանի համաձայնել, որովհետև, հակառակ դէպքում, նա հնարաւորութիւն չի ունենայ վաճառելու իւր արդիւնքը: Իւր հաշիւների համաձայն, մեծաքանակ գնողը հարկադրում է արտադրողին կրճատել արտադրութիւնը կամ օգնում է ընդարձակելու նրան: Այս դէպքում մեծաքանակ գնողը կողմնակի կերպով ազդում է և արտադրութեան տեխնիկայի վրայ, պահանջելով որոշ յատկութեան արդիւնքներ: Ընդհանրապէս մեծաքանակ գնողը կապիտալի ցաւով արդէն մանր տնտեսութիւնների, երբ ոչ մեռական, գոնէ փաստացի կազմակերպիչն է հանդիսանում:

Այսպէս է առաջ գալիս մանր տնտեսութիւնների փաստացի միացումը մի կազմակերպչի իշխանութեան ներքոյ. այս միացումը մասնաւոր է, հազիւ թէ լրիւ և մանր արտադրողի կողմը բաւականաչափ անկախութիւն է պահում իւր ձեռնարկութեան ներքին յարաբերութիւնների մէջ: Այսպէս է արտադրութեան առևտրական-կապիտալիստական կազմակերպութիւնը:

Առևտրա-կապիտալիստական արտադրութիւնն արդէն չի կարելի տիպիկ մանր արտադրութիւն համարել: Սա շուկայի համար խոշոր արտադրութիւն է, թէև ապրանքը արտադրական պրոցեսսի աւելի մեծ մասը անցնում է մանր, ֆէօդալապէս առանձնացած ձեռնարկութիւնների մէջ:

Առևտրական կապիտալը զարգանալով, հետզհետէ արտադրութեան վրայ աւելի մեծ իշխանութիւն է ձեռք բերում և հետզհետէ տնտեսութիւնների ներքին կազմակերպութեան մէջ իւր միջամտութիւնն աւելի է ընդարձակում: Այս դէպքում պէտք է հիշատել, որ ֆէօդալական յարաբերութիւնների մնացորդներն ամենևին չեն խանգարում առևտրական կապիտալին իւր ձեռքն առնելու կազմակերպչական և սրա հետ միասին շահագործողական իշխանութիւնը գիւղացիական տնտեսութիւնների վրայ. ճորտ գիւղացու բարեկեցութիւնը քանդելով, ֆէօդալը պակասեցնում է միայն նրա՝ առևտրական կապիտալին դիմադրելու ոյժը. գիւղացիներին զրամական տուրքի ենթարկելով, ֆէօդալը հարկադրում է նրանց ծախել իրանց արդիւնքները և, հետևապէս, ուղղակի առևտրական կապիտալի ձեռքն է գցում նրանց. վերջապէս, շատ անգամ ինքը փոխանակող ֆէօդալն առևտրական մեծաքանակ գնող կապիտալիստի կամ վաշխաւի դերի մէջ է հանդէս գալիս:

Խիստ յաճախ մեծաքանակ գնողն իւր վրայ է առնում արտադրողական նիւթերի հայթայթելը, որոնք մանր արտադրողները նրանից

են գնում: Որովհետև արտադրողները հետզհետէ յաճախակի պէտք է պարտքով առնեն այս նիւթերը, ուրեմն, ժամանակի ընթացքում, գործը աւելի պարզ ընթացք է ստանում. մեծաքանակ գնողն սկսում է մանր արտադրողին ուղղակի նիւթեր տալ, որոնցից վերջինս պէտք է նա արտադրողին ուղղակի նիւթեր տալ, որոնցից պատրաստէ նրա համար: Խապէս պայմանաւորուած գնով արդիւնք պատրաստէ նրա համար: Մանր արտադրողն այս դէպքում աւելի մեծ չափով է կորցնում իւր ինքնուրոյնութիւնը: Ճիշտն ասած, նրա մասին նոյնիսկ չի կարելի ասել, որ նա ծախում է իւր արդիւնքը մեծաքանակ գնողին. նա աւելի, որ նա ծախում է իւր արդիւնքը մեծաքանակ գնողին. նա առևտրական կապիտալիստից վարձատրութիւն է ստանում միայն կապիտալիստի նիւթերի վրայ թափած աշխատութեան և այս աշխատանքի ժամանակ իւր գործիքների մաշելու փոխարէն: Եթէ վարձատրութեան երկրորդ մասը վերցնէինք, այն ժամանակ մեր առաջը տրութեան երկրորդ մասը վերցնէինք, Սա խոշոր կապիտալիստ էր այն, ինչ որ կոչւում է աշխատավարձ: Սա խոշոր կապիտալիստական արտադրութեան տնային սխտեմն է, առևտրական կապիտալիզմի զարգացման երկրորդ շրջանը:

Տեսային կապիտալիստական արտադրութեան խոշոր բնաւորութիւնը արդէն պարզ հանդէս է գալիս ոչ միայն այն փաստի մէջ, որ պատրաստի արդիւնքների շուկայ տեղափոխելը մեծ չափերով է կատարւում, այլ և նիւթերի ահագին քանակութեամբ հայթայթելու մէջ, որոնք յետոյ բաշխւում են առանձին մանր արտադրողների վրայ:

Հասկանալի է, որ ինչքան մանր արտադրողի՝ մեծաքանակ գնող առևտրականից ունեցած փաստացի կախումը խիստ է, այնքան աւելի հեշտութեամբ է կորցնում նա իւր ինքնուրոյնութեան մնացորդները, այնքան աւելի անկարող է լինում ընդդիմադրել առևտրական կապիտալի կողմից յետագայում արած յափշտակութիւններին:

Երբեմն, ապրանք արտադրողի կատարելալ քայքայումից յետոյ, առևտրական կապիտալիստը շահաւէտ է համարում մատակարարել նրան ոչ միայն նիւթեր, այլ և գործիքներ. յետագայ արտադրութեան համար, այնպէս, որ մանր տնտեսութեան ինքնուրոյնութեան վերջին ստեղծումը համարեա չքանում է: Այս, իսկապէս, առևտրական կապիտալի գարգացման ծայրահեղ մոմէնտն է, այն սահմանը, որից յետոյ նա անցնում է արդիւնքների կապիտալին:

բ) Ձեռնարկութիւնների ներքին յարաբերութիւններ առևտրական կապիտալի շրջանում.

Առևտրական կապիտալն առանձին մանր-բուրժուական տնտեսութեան կազմակերպութեան մէջ արտաքին կողմից շատ քիչ բան է փոփոխում: Բայց այդպիսի խմբի անդամների փոխադարձ յարաբերութիւնների մէջ, ըստ էութեան, նշանաւոր փոփոխութիւններ են տեղի ունենում:

Սկզբում առևտրական կապիտալի՝ մանր տնտեսութեան կիսանքի

մէջ ներս խուժելը շահաւէտ է լինում արտադրողի համար. մեծաքանակ գնողը, որ հարկադրւած է տեղացի գնողներէ հետ մրցել, արտադրողին բաւականին լաւ գին է տալիս և, որ գլխաւորն է, մեծ պատէշներ է տալիս հեռաւոր շուկաների համար: Սակայն, որքան արտադրողը նիւթակա- նի կողմից ենթարկուած է մեծաքանակ գնողին, այնքան էլ գործը փոխ- ւում է: Առևտրական կապիտալի լուծը սկսում է հետզհետէ աւելի աճող և յաճախ անհնարին ծանրութեամբ ճնշել արտադրողին: Տնտեսութեան բարեկեցութիւնը հետզհետէ այն ցածրագոյն սահմանին է հասնում, որից այն կողմ առևտրական կապիտալին արդէն օգտւելու ոչինչ չի մնում: Մանր արտադրողը կաշուց դուրս է գալիս վերականգնելու իւր նախկին վիճակը կամ գոնէ մի մակերևոյթի վրայ կանգնելու: Այս ջանքերի մէջ նա վատնում է իւր եռանդը և ոչ միայն իւրը, այլ և տնտեսութեան մնացած անդամներինը: Նա հարկադրուած է խիստ աշխատել իւր կնոջն ու որդոցը: Երեխայքը դժւարին աշխատանքի մէջ են ընկնում այնպիսի վաղ հասակում, որն առաջ նրանց համար անարգել զարգացման ժամանակ էր: Ընտանիքի կանացի տարրերն արդէն չեն սահմանափակուած դուրս տնային տնտեսութեամբ, ինչպէս մեծ մասամբ առաջ էր, այլ գործունեայ մասնակցութիւն են ունենում շուկա- յի արտադրութեան մէջ այն սահմաններում, որպիսիք միայն թոյլ է տալիս արտադրութեան տեխնիկան: Մանր տնտեսութեան գլխաւորը իւր ընտանիքի շահագործողն է դառնում այն չափով, ինչ չափով որ հէնց նրան շահագործում է առևտրական կապիտալը:

Այս երևոյթներն առանձնապէս պարզօրէն հանդէս են գալիս, այսպէս կոչւած, տնայնագործների, գիւղական արհեստաւորների տնտեսութեան մէջ, որոնք արհեստի հետ միացնում են օժանդակող երկրագործութիւնը: Նրանք իրանց պաշտպանութեան համար չունեն այնպիսի ամուր կազմակերպութիւններ, ինչպէս քաղաքային արհեստաւորների համաբարութիւնը. այդ պատճառով էլ աւելի հեշտ են առևտրական կապիտալի իշխանութեան տակ ընկնում: Տնայնագործական արդիւնքների գները որոշելիս մեծաքանակ գնողն ուշադրութեան է առնում այն օժանդակութիւնը, որ նա ստանում է երկրագործութիւնից և գները մինչ այն սատիճանի է ցածրացնում, որ տնայնագործի ամբողջ երկու տնտեսութիւնը հազիւ է նրան ապրուստի անհրաժեշտ միջոցներ տալիս: Այս դէպքում տնայնագործի ընտանիքի բանւորական ոյժերի շահագործումը հասնում է աշխատողների այլասերումը պայմանաւորող աստիճանին:

Այսպէս է և օժանդակող տնային արհեստագործութիւն ունեցող երկրագործական տնտեսութիւնների և առհասարակ գիւղացիական տնտեսութիւնների վիճակը:

Չի կարելի չնկատել, որ կապիտալն արդէն իւր զարգացման վաղ շրջանում, առևտրական կապիտալի ձևի մէջ, ձգտում էր

հօր անպայման իշխանութիւնն ունեցող ընտանիքի նահապետա- կան կազմը քայքայել: Կինը շուկայի համար արտադրութեանը մասնակցելով և դուրս գալով դուրս տնային տնտեսութեան շրջա- նակից, ընտանիքի կեանքում տնտեսական մեծ նշանակութիւն է ձեռք բերում. սրանով քանդուած է կնոջ ենթարկման նիւթական հիմքը: Բայց անցած սովորութիւնների ամբողջութիւնն այնքան մեծ է, որ նախ քան առևտրական կապիտալի այս ազդեցութեան պարզ երևան գալը, շատ ժամանակ է անցնում:

Քաղաքային արհեստաւորների տնտեսութիւնը, շնորհիւ համա- քարական կազմակերպութիւնների ոյժին, աւելի յամառ ու աւելի երկար էր դիմադրել առևտրական կապիտալի կարողութեանը. սակայն, այնուամենայնիւ, հետզհետէ աւելի մեծ չափով էր ենթարկուած նրա ազդեցութեանը: Այս դէպքում ընտանիքի ներքին յարաբերութիւնները, ի հարկէ, փոխւում էին միևնոյն ուղղութեամբ, ինչ որ գիւղական աւելի թիւ թոյլ տնտեսութիւնները, միայն աւելի քիչ չափով. բայց, դրա վրայ թէն, տիրոջ յարաբերութիւնները խիստ փոխւում էին դէպի իւր վարձու բանւորները — քարգահները և աշկերտները:

Տիրոջ և նրա բանւորների շահերի այն հակասութիւնը, որ առաջ էր գալիս և մթազնում աշխատանքի ընդհանրութեամբ, յարաբերու- թիւնների ընտանեկան-ընկերական բնաւորութեամբ, այժմ հետզհետէ աւելի պարզ և աւելի կտրուկ է հանդէս գալիս: Կապիտալի իշխանու- թիւնից հարստահարւած վարպետը, որպէսզի քիչ թէ շատ պահպանէ թիւնից հարստահարւած վարպետը, հարկադրուած է ճնշել քարգահներին ու իւր տատանող դրութիւնը, հարկադրուած է նրանցից աւելի երկարատև և աւելի աշկերտներին, հարկադրուած է նրանցից աւելի յաւանքել ու աւելի վատ լարւած աշխատանք պահանջել, աւելի պակաս վճարել ու աւելի վատ պահել նրանց: Քարգահներն ու աշկերտներն էլ իրանց կողմից բոլոր պահել հակառակուած են այդպիսի փոփոխութիւններին: Արհեստաւոր- ոյժով հակառակուած են այդպիսի փոփոխութիւններին: Արհեստաւոր- ական տնտեսութեան ներքին ամբողջութիւնն այսպատանում է և փոխ- ւում կուր յարաբերութիւնների:

Մէկ խօսքով, կարելի է ասել, որ առևտրական կապիտալի ոյժը կերպարանափոխում է մանր-բուրժուական տնտեսութիւնների ներքին կերպարանափոխումը, մտցնելով նրանց մէջ շահագործութեան ուղին. յարաբերութիւնները, մտցնելով նրանց մէջ շահագործութեան ուղին, ընտանիքի գլուխն ակամայից միւս անդամներէ շահագործողն է հան- ընտանիքի գլուխն ակամայից միւս անդամներէ շահագործողը:

դիսանում, վարպետը — իւր վարձու բանւորների շահագործողը:

գ) Կալմալերպատ յարաբերութիւններ տնտեսութիւնների մեջ

Համաքարական վարպետի ու իւր հպատակախների յարաբերու- թեան փոփոխելու համապատասխան, փոխւում էր և հէնց համաքարա- թեան փոփոխելու համապատասխան, փոխւում էր և հէնց համաքարա- կան կազմակերպութիւնների բնաւորութիւնը. նրանք հետզհետէ աւելի են մեծ չափով դառնում էին այն կուր կազմակերպութիւնը, որ մղում էին վարպետները մի կողմից առևտրական կապիտալի և միւս կողմից քար- գահների դէմ:





ները անխուսափելի կերպով գիւղացիների պարտութեամբ պէտք է վերջանային: Կռիւր միայն ժամանակաւոր կերպով կարող էր միացնել նրանց մասսաներին. գիւղացիութիւնը գնալով աւելի շատ էր երեւան հանում իւր համախմբւած լինելու թերութիւնները: Այս բանում փոխանակական հասարակութեան ժամանակէն գիւղացիական հոգեբանութեան բնաւորութիւնը պարզ արտայայտուում էր—մի նեղ-անհատական բնաւորութիւն: Իսկապէս գիւղացիական տնտեսութիւնը մանր տնտեսութիւն է. նրա մէջ չկայ ընդարձակ աշխատակցութիւն, նա միւս տնտեսութիւնների հետ սերտ և մշտական կապ չունի, չըկան հետևապէս և հասարակական կուրի մէջ համերաշխութեան հիմնական պայմանները:

Բացարձակ պետութեան երրորդ խնդիրը մեր ուսումնասիրած շրջանում գիւղացիների ճորտական յարաբերութիւններից ազատումն էր հանդիսանում:

Միայն, գիւղացիական ապստամբութիւնները չէին խախտում ճորտական իրաւունքի հիմքերը, երևան հանելով նախկին յարաբերութիւնների այն վտանգը, որ վերաբերում էր թէ հասարակութեանը և թէ հէնց ֆէօդալներին: Առևտրա-կապիտալիստական դասակարգի համար ճորտական իրաւունքը զարգացման ճանապարհի վրայ խոչընդոտ էր, որ զգալի չափով խանգարում էր առևտրական կապիտալին վերջնականապէս իւր ձեռքն առնելու գիւղացիական տնտեսութիւնների կազմակերպչական իշխանութիւնը: Այնուհետև, իրանց արդիւնքների խիստ նշանաւոր մասը ֆէօդալներին գիջելու հարկադրւած լինելու և իրանց զբաղմունքների մէջ հողին ամուր կպչելու պատճառով, ճշշւած գիւղացիական մասնան յաճախակի փողի կարիք ունեցող պետութեան համար հարկեր նշանակելու չափազանց վատ աղբիւր դարձաւ: Վերջապէս, հէնց ֆէօդալների մի մասն աւելի շահաւէտ էր համարում իրենց կալաւորները շահագործել ազատ կապալաւորների միջոցով, քան գործ ունենալ ճորտերի ստիպողական, ուստի և քիչ արտադրող աշխատանքի հետ. այս ֆէօդալները, իրանց գիւղացիներին հողից քշելով, իրանք էին ազատում նրանց:

Մի քանի դէպքերում գիւղացիների ազատութիւնը մեծ աստիճանականութեամբ, համարեա ինքն իրան կատարուեց (Անգլիա), մի քանի դէպքերում էլ նա առանձին օրէնսդրական ակտի ձև ընդունեց: Եւրոպայի երկրների մեծամասնութեան մէջ նա արդէն արդիւնաբերական կապիտալիզմի շրջանի սկզբում կատարուեց, բայց ազատութիւնն առաջ բերող ոյժերը գլխաւորապէս առևտրական կապիտալի հողի վրայ բարդւեցան:

Գիւղացիների ազատութեան ժամանակ հասարակական ոյժերի փաստացի յարաբերութիւնն այն հանգամանքի մէջ երևաց, որ գիւղացիները երբեմն զրկուում էին ամբողջ հողից, որից նրանք օգտուում էին,

շատ անգամ նրա մի մասից, ըստ որում մնացած մասի համար էլ դեռ նրանք վճարում էին (այսինքն էապէս գնում էին հողը):

Բացարձակ պետութեան ծաղկման հետ միաժամանակ ֆէօդալական պետութեան նախկին կազմակերպութիւնը—կաթոլիկ եկեղեցին—սկսեց վերջնականապէս ընկնել:

Կորցնելով հասարակական արտադրութեան մէջ իւր նշանակութեան ամենամեծ մասը, ինչպէս առաջ բացատրուեց, կաթոլիկ եկեղեցին երկար ժամանակ պահում և աշխատում էր մեծացնել հասարակական բաշխման մէջ իւր ունեցած բաժինը: Սա հոգևորականութեան համար միւս հասարակական դասակարգերի մէջ ուժեղ թշնամիներ ստեղծեց: Միւս հասարակական դասակարգերի մէջ ուժեղ թշնամիներ ստեղծեց: Նրա դէմ էին տրամադրւած և գիւղացիական մասսաները, որոնք ամենից շատ էին տանջւած տասանորդներից և ուրիշ տուրքերից, և արհեստաւորա-առևտրական խմբերը, որոնք թշնամի էին առհասարակ բոհեստաւորա-առևտրական խմբերը, որոնք թշնամի էին առհասարակ բոհական աշխարհական ֆէօդալներն ու թագաւորները խիստ շահաւէտ էին իսկ աշխարհական ֆէօդալների կազմակերպչութեան ընդարձակ կալաւորները:

Հոգևորականութեան իշխանութեանը ամեն տեսակ թշնամի մղութեան իրանց համար հետզհետէ աւելի բարենպաստ հող էին գտնում հասարակական զանազան խաւերի տրամադրութեան մէջ: Հերետիկոսները զարգանում էին այնպիսի ուժով ու արագութեամբ, որի նման ևս ոչ ոք չէր զարգանում: Եին այնպիսի ուժով ու արագութեամբ, որի նման ևս ոչ ոք չէր զարգանում: Եին այնպիսի ուժով ու արագութեամբ, որի նման ևս ոչ ոք չէր զարգանում: Եին այնպիսի ուժով ու արագութեամբ, որի նման ևս ոչ ոք չէր զարգանում:

—սկսեց կրօնական բեֆօրմացիայի ժամանակը: Երևան եկան անազին քանակութեամբ հերձաւորներ, որոնք հանդէս էին բերում ամենազանազան տեսակի կրօնական ուսմունքներ, դիմելով Սուրբ գրքի ամենատարբեր բնագիւղներին: Բայց գործի էութիւնը մի բանի էր յանգում—կորչին հոգևոր ֆէօդալները: Գուցէ բնագիւղները մի բանի էր յանգում—կորչին հոգևոր ֆէօդալները: Գուցէ բնագիւղները մի բանի էր յանգում—կորչին հոգևոր ֆէօդալները: Գուցէ բնագիւղները մի բանի էր յանգում—կորչին հոգևոր ֆէօդալները:

Շահագործման իրաւունքը պահելու կռիւր կաթոլիկ հոգևորականութեան կողմից յաւերժացել է չլսւած ու չտեսնւած խստութիւններով: Այս կուում հոգևորականութիւնն իրանից արտադրեց սոսկալի ներով: Այս կուում հոգևորականութիւնն իրանից արտադրեց սոսկալի ներով: Այս կուում հոգևորականութիւնն իրանից արտադրեց սոսկալի ներով: Այս կուում հոգևորականութիւնն իրանից արտադրեց սոսկալի ներով:

Սա բոլոր հսկայական ջանքերը միայն առժամանակ կարող էին պահել յաղթական բեֆօրմացիայի ընթացքը: Առաջին վերանորոգիչ-

ները խորտակեցան անհաւասար կուր մէջ: Լուտերն ու Կալվինն արգէն յաղթողներն էին:

Կաթոլիկականութիւնը իւր նախկին ոյժը պահեց Իտալիայում և Պիրինեան թերակղզում. Իտալիայի համար նա շահաւէտ էր, որովհետև նրա օգտին էր պապականութիւնը շահագործում ամբողջ աշխարհը: Սպանիայում և Փորթուգալիայում նա պահելեց այն պատճառով, որ XVI—XVIII դարերում այս երկրների տնտեսական զարգացումն առանձին պատճառներով խիստ յետ մընաց, աւելի ճիշտ - նոյնիսկ փոխարինեց բաւականին խորը դեգրացիայով:

Պետութիւնը յարջունիս էր գրաւում հոգևորականութեան հողերը, որին ուղեկցում էր գիւղացիութեան նշանաւոր մասի հողագրկութիւնը. յարջունիս գրաւելը նրանով էին արգարացնում, որ սա՛ կաթոլիկ եկեղեցու պահպանած անհաւատութեան դէմ կուելու անհրաժեշտ միջոց է: (Սա օրինակ է այն երևոյթի, թէ մարդկանց մտքերը մինչև որ աստիճանի ենթարկւած են նրանց շահերին, թէև այս ենթարկումն առհասարակ չի գիտակցւում):

Համբարական ընկերութիւնների առևտրական կապիտալիզմի ազդեցութեամբ քայքայելին ու անկումը շատ գէպքերում ճիշտ նոյնպէս բերին հասցրին մինչև Խոյսեղը, որ պետութիւնը այս ընկերութիւնների ունեցւածքը յարջունիս գրաւեց:

Եւ գիւղացիների ազատագրութիւնը, որին ուղեկցում է նրանց լիովին կամ մասնակի հողագրկութիւնը, և՛ իշխանների ու թագաւորների կողմից հոգևորականութեան և արհեստաւորական կազմակերպութիւնների ունեցւածքի յարջունիս գրաւելը, անխնամ թողնելով բազմաթիւ աղքատներին, որոնք սկզբում կերակրւում էին այս հիմնարկութիւնների հաշուով—այս բոլորն առաջ էր բերում անանկ մարդկանց մասսաներ, որոնք հասարակական արտադրութեան մէջ ամեն մի դերից զրկւած են, այսպէս կոչւած «պարագիտ պրօլետարիատի» մասսաներ, որ հասարակական ապահովութեան մշտական սպասուլիքն են է հանդիսացել: Այս պրօլետարիատի պատմական վիճակը կը պարզւի արդիւնաբերական կապիտալի պատմութեան հետ ունեցած առնչութեան մէջ:

3. ՀԱՍԱՐԱԿԱՅԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻԻՆԸ ԵՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՅԺԵՐԸ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Առևտրական կապիտալիզմը ներկայացնում է փոխանակական հասարակութեան զարգացման երկրորդ շրջանը—շրջան, որ սերտ կերպով հիււսում է առաջինի հետ և ուսումնասիրելու յարմարութեան համար է միայն այստեղ առանձին քննուում: Հասարակութեան հոգեբանութիւնը բոլոր ամենաէական գծերում շարունակում է անյողողող կերպով զարգանալ նոյն այն ուղղութեամբ, որը դրեց դեռ բնական

հասարակութիւնից դէպի մանր-բուրժուականն անցնելու շրջանում. տիրապետող հոգեբանական տիպը դեռ ևս մանր-բուրժուական է:

Մանր-բուրժուական հասարակութիւնը հաստատուն արդիւնաբերական ընկերութիւնների և ֆէօդալա-ճորտական յարաբերութիւնների մէջ դեռ պահեց անձնաւորութեան նախկին նահապետական ենթարկման մի քանի պայմաններ, որոնք արգելք էին հանդիսանում անձի զարգացմանը: Նահապետական յարաբերութիւնները մնում են նախկին ոյժով հասարակական միութեան երկու բեկներէ վրայ.—բացարձակ միապետութեան քաղաքական ձևերում և մասնաւոր տնտեսութեան ընտանեկան ձևերում: Այստեղ, ասենք, դարձեալ նկատւում են մի քանի փոփոխութիւններ:

Մարդկանց մտաւոր պաշարը լայնանում է այն չափով, ինչ չափով որ առևտրական յարաբերութիւնները հետզհետէ աւելի ամուր կապերով միացնում են զանազան իրարից հետու շրջաններ ու ամբողջ երկրներ: Գիտութեան զարգացման անհրաժեշտութիւնը գնալով աւելի զօրեղ է զգացւում. և այս բանի մէջ առևտրական դասակարգը իւր վարձու բանւորներով (գործակատարներ, հաշւապահներ, առևտրական գործակալներ և այլն) առաջ է անցնում մնացած հասարակութիւնից. փոխանակութիւնն այս դասակարգերից պահանջում է առևտրական տեսրակներ պահել, գնման և պահանջի համար ամենաշահաւէտ շուկաներ փնտտել, իրանց երկրի տնտեսական և իրաւաբանական պայմանները, նոյնպէս ուրիշ երկրների հիմնարկութիւններն ու բարքերը ուսումնասիրել, օտար լեզուներով խօսել և այլն: Հոգևորականութեան նախկին սիրելի, օտար լեզուներով խօսել և այլն: Հոգևորականութեան նախկին սիրելի, օտար լեզուներով խօսել և այլն: ինչպէս և քաղաքացիք, գիւնենում աշխարհական ֆէօդալները, որոնք, ինչպէս և քաղաքացիք, գիտութեան մէջ հոգևորական ֆէօդալիզմի դէմ կուելու միջոց են տեսուում: Սակայն ժողովրդական մասսաների ստորին խաւերի մէջ էլ է նուա՛: Սակայն ժողովրդական մասսաների ստորին խաւերի մէջ էլ է նուա՛: Մարդէն այն փաստը, որ առևտրատարածւում կրթութեան ձգտումը. արդէն այն փաստը, որ առևտրավաշխառական կապիտալն անխնայ շահագործում է մասսաների մէջ այս վրդակական տնտեսութիւնը, խիստ նպաստում է մասսաների մէջ այս ձգտումի զարթնելուն: Եւ հէնց առևտրավաշխառական շահագործութիւնն ինքն ըստ ինքեան գրագիտութիւն է առաջադրում գոնէ մեծաքանակ գնողներին և վաշխատուներին: Իսկ գլխաւորն այն է, որ գիւղացին գրագիտութեան, կրթութեան մէջ սկսւում է տեսնել իւր ծանր ղրութիւնից մի կերպ ազատելու և հասարակական սանդուխքի աւելի բարձր աստիճանը բարձրանալու միակ միջոցը:

Միևնոյն ժամանակ ժողովրդական կրթութեան զարգացմանը խանգարող մի բանի լուրջ արգելքներ վերանում են. այս մտքով առանձին կարևորութիւն ունի ճորտական իրաւունքի անկումը, ճորտական, ինչ-



դարու սկզբին, երբ սկսել էին երևան գալ մանուֆակտուրաները. բայց առևտրական կապիտալի զարգացումը, նրա հասարակական դերի աճելը ահռուհետե էլ արդիւնաբերական կապիտալի յառաջադիմութեան հետ շարունակուում էր:

Իտալիայի հասարակապետութիւնների մէջ (Վենետիկ, Գէնուա և ուրիշները) առևտրական կապիտալի նախնական զարգացումը հետեւանք էր Արեւմտեան Եւրոպայի և ասիական երկրների մէջ իրանց ունեցած միջնորդական գործունէութեանը: Այս միջնորդութիւնը, որին կանչւած էին իտալական հասարակապետութիւնները շնորհիւ իրանց աշխարհագրական դիրքի, թոյլ էր տալիս նրանց հարստանալ արտադրութեան երկու ճիւղերի առևտրական շահագործման միջոցով, որոնց մէջ նրանք փոխանակական կապեր էին պահպանում:

Առևտրական կապիտալի և շուկաներին հետամուտ լինելու յետագայ զարգացումն առաջ բերեց նոր երկրների՝ Ամերիկայի և Աֆրիկայի ակերի գիւտը.— գտնւեցան Արևելեան Հնդկաստանի և Չինաստանի ծովային ճանապարհները: Առևտրական կապիտալն սկսեց արագ զարգանալ այն երկրներում, որոնք, ովկիանոսին մօտիկ լինելու շնորհիւ, ուրիշներից աւելի լաւ կարող էին օգտուիլ նոր շուկաներից, — ամենից առաջ Փորթուգալիայում և Սպանիայում: Արևելեան Ասիայի հետ հին ցամաքային ճանապարհի առևտուրը համարեա դադարեց. այս առևտրի միջնորդները — իտալական հասարակապետութիւնները — սկսեցին արագ կերպով ընկնել:

Սպանիան, որ այնուհետև նոր բացւած երկրների շահագործումն իւր մենավաճառութեան մէջ էր գցել, արագ կերպով վերին աստիճանի հարստութեան և կարողութեան հասաւ: Ամերիկայի ազնիւ մետաղներն այս հարստանալու մէջ մեծ դեր էին խաղում: Եւ հէնց ամբողջ կրօպական առևտուրն այս յորդ մակընթացութեան ազդեցութեան տակ սկսեց շուտափոյթ զարգանալ:

Սակայն Սպանիայի առևտրական կապիտալի զարգացումն էլ անհաստատ ու անյարատև դուրս եկաւ, որովհետև նա Սպանիայի մէջ եղած արտադրութեան համապատասխան զարգացման վրայ չէր յենում: Առևտուրն ու տնտեսական տիրապետութիւնն անցան Հոլանդիային, որն արդիւնաբերութեան վերաբերմամբ անհամեմատ աւելի արագ էր զարգանում (իսկ Հոլանդիային յետոյ փոխարինեց, ինչպէս յայտնի է Անգլիան):

Առևտրի մի երկրից միւսն անցնելու հետ միաժամանակ նաև արտադրութեան շրջանում առևտրական կապիտալի կազմակերպչական դերի աստիճանական ընդարձակումն է կատարում. առևտրական կապիտալը մեծացնելով արտադրութեան ընթացքի վրայ իւր ազդեցութիւնը, հետզհետեւ աւելի արդիւնաբերակամի գոյն է ընդունում:

## VI ԱՐԴԻԻՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄ

### ՄԱՆՈՒՖԱԿՏՈՒՐԱՅԻ ՇՐՋԱՆ

#### 1. ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԱՐՏԱՔԻՆ ԲՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Համարեա մանր-բուրժուական հասարակութեան զարգացման ամենասկզբից արդիւնաբերութեան բոլոր ճիւղերից ամենից արագը առևտուրն էր զարգացնում (շուկաներ փնտռելը, ապրանքների փոխադրութիւնը, պահեստարաններ շինելը, մեծ քանակութեամբ ծախելու և գնելու կազմակերպութիւնը և այլն): Ինչպէս ցոյց տուեց, սրանով է բացատրւում «առևտրական կապիտալի», այսինքն՝ հասարակական արբացատրւում «առևտրական կապիտալի», այսինքն՝ հասարակական արտադրութեան կազմակերպչական դերի մասնակի կերպով առևտրական դասակարգի ձեռքն անցնելու առաջնալը: Առևտրական կապիտալիզմի շրջանում էլ շարունակուում էր միևնոյն բանը և վերջապէս արդիւնքն այն ստացւեց, որ արտադրութեան բոլոր ճիւղերը՝ համեմատած առևտրական կապիտալի միջոցների ու պահանջների հետ, խիստ յետ մնացին:

Յետամնացութեամբ, ի հարկէ, ամենից շատ երկրագործութիւնն էր աչքի ընկնում: Բայց երկրագործական տեխնիկայի ու գիւղատնտեսութեան բոլոր պատմականապէս բարդւած էկոնոմիկայի պայմաններն սուլթեան բոլոր պատմականապէս յառաջադիմութիւն չէին թոյլ տալն ժամանակ քիչ թէ շատ արագ յառաջադիմութիւններն աչքի են լիս. ինչպէս տեսանք, Ֆէօդալական յարաբերութիւններն աչքի են ընկնում խիստ պահպանողականութեամբ, իսկ ճորտականները՝ դրանից բացի և աշխատաւորների սոսկալի հարստահարութեամբ, որ խեղդում է ամեն մի զարգացում: Ուստի և երկրագործութեան մասին առանձին էլ ամեն մի զարգացում: Ուստի և երկրագործութեան ճիւղի մէջ տեղի չունեցան: Ընդ վերանորոգումներ երկրագործութեան համար շուկաներ գտնելու ձրգ-

Քաղաքային արդիւնաբերութեան համար շուկաներ գտնելու ձրգ-տումը, ինչպէս յայտնի է, առաջ բերեց բազմաթիւ հեռաւոր ճանապարհորդութիւններ, որոնք պսակեցան առաջ կրօպացիներին անյայտ պարհորդութիւններ, որոնք պսակեցան առաջ կրօպացիներին անյայտ պարհորդութիւններով անբաւ երկրների.— ամբողջ Ամերիկա- և բնական հարստութիւններով անբաւ երկրների. — ամբողջ Ամերիկայի, Աֆրիկայի նշանաւոր մասի, հարաւարևելեան Ասիայի, հարիւրաւոր մեծ ու փոքր կղզիների գիւտով: Նոր գտնւած երկրների կողմու-տից յետոյ, կամ նրա հետ միասին սկսեց Եւրոպայի աւելորդ բնակչու-թեան գաղթականութիւնը և նրանց բնական հարստութիւնների արբացատր շահագործութիւնը մասամբ ազատ, մասամբ ճորտական և ստրկական աշխատանքով...

Նոր գտնւած երկրների արտադրութիւնը մտաւ առևտրական կապիտալի գործունէութեան շրջանը: Նրանց շուկաները արդիւնաբերութեանը այնպէս զօրեղ և այնպէս արագ աճող պահանջ են ներկայաց-







զի օրինաւոր պնակալիզութեան միջոցով հողատիրութիւնը և կապիտալը քիչ թէ շատ ապահովեցնէ ապօրինի պնակալիզութեան կոպիտ ձեերի, թալանի, դողութեան և այլն վտանգից, և նոյնպէս նրա համար, որ բանւորների մահացութեան առաջն առնէ, որոնք միշտ կարող են պէտք գալ կապիտալին:

Այն սակաւաթիւ երկրներում, որտեղ ճորտական իրաւունքը խիստ երկար ժամանակ պահւեց, արդիւնաբերական կապիտալն իր առաջանալու ժամանակ, ընդհակառակը, ազատ բանւորական ոյժի պակասութիւն էր կրում: Պայմաններին յարմարելով, արդիւնաբերական կապիտալն այնտեղ ճորտական աշխատանքով մանուֆակտուրաներ կազմակերպեց. բայց այս դէպքում ճորտական աշխատանքի պակասութիւնն այնքան աչքի ընկնող դուրս եկաւ, նրա արտադրողականութիւնն՝ այնքան թոյլ, որ իրանք կապիտալիստները հարկադրւած էին լինում պետիցիաներով դիմել պետութեանը՝ ազատելու իրանց գիւղացիներին:

Պատրաստւած կազմակերպիչների ներկայութիւն, կապիտալների և վարձու բանւորական ոյժի սկզբնական կուտակումն — ահա այն պայմանների ամբողջութիւնը, որոնցով հնարաւոր է արդիւնաբերական կապիտալիզմը:

բ) Արդիւնաբերական-կապիտալիստական մեռնարկութիւնների ծագումը եւ նրանց ներքին յարաբերութիւնները

Տեսային կապիտալիստական արտադրութիւնը մի բնական անցումն էր ներկայացնում անկախ մասն արտադրութիւնից դէպի արդիւնաբերական կապիտալիզմը: Իւր անկախութեան մեծ մասն արդէն կորցրած, արդէն առևտրական կապիտալի կազմակերպչական կոնտրոլին փաստօրէն ենթարկւած և արդէն այս վերջինից շահագործւած արհեստաւորը կամ գիւղացին աւելի դիւրութեամբ է կորցնում իւր անկախութեան մնացորդները և ուղղակի կատարող բանւոր է դառնում արդիւնաբերական-կապիտալիստական ձեռնարկութեան մէջ:

Առևտրական կապիտալիստը իւր ձեռքին է պահում բազմաթիւ մանր տնտեսութիւնների բաղադր, որոնց նա հում նիւթեր է մատակարարում (երբեմն նոյնիսկ գործիքներ, իսկ նրանց արդիւնքները գրնում: Նրանից է կախւած վերջնականապէս ոչնչացնել այս տնտեսութիւնների արտաքին անկախութիւնը, եթէ այդ կրպահանջն նրա շահերը: Իր արդիւնքների պահանջը ծաւալում է, առևտրական կապիտալիստը կրցանկանար համապատասխանօրէն լայնացնել և արտադրութիւնը. բայց նրան ենթարկւած ձեռնարկութիւնների մանր բրնաւորութիւնը այս բանը թոյլ չի տալիս, մանաւանդ նրանց արտաքին անկախութիւնը, որի շնորհիւ կապիտալիստը, գլխաւորապէս կողմնակի կերպով—նիւթերի և արդիւնքների գները փոխելով—ազդում է նրանց արտադրութեան ընթացքի վրայ: Այն ժամանակ կապիտալիստը դադարում է բաւականանալ առաջւայ սխտեմով:

Կապիտալիստին ենթարկւած արտադրողները համախմբւում են նրան պատկանող մի արհեստանոցում. այնտեղ նրանք աշխատում են նրա սեփականութիւնը կազմող արտադրութեան գործիքներով, աշխատում են իբրև հասարակ կատարողներ, ամբողջովին ենթարկելով նրա կազմակերպչական իշխանութեանը: Այսպէս են արդիւնաբերական-կապիտալիստական ձեռնարկութիւնների հիմնական գծերը, որոնք ամենից առաջ մանուֆակտուրաների ձևով երևան եկան: Զննելով այս գծերը՝ դժւար չէ նկատել, որ նրանք երևում էին դեռ միջին դարերի համբարական արհեստաւորի տնտեսութեան մէջ, ուր քարգահներն ու աշկերտները վարպետի հետ այնպիսի յարաբերութեան մէջ էին, ինչպէս ամենավերջին վարձու բանւորները՝ կապիտալիստի հետ. գըլխաւոր տարբերութիւնը ձեռնարկութեան չափերի և այն բանի մէջն է, որ արհեստաւորական վարպետը, չափամանափակելով կազմակերպչական աշխատանքով, հարկադրւած է պարապել նաև կատարողական աշխատանքով. մինչդեռ կապիտալիստը բացառապէս միշտ կազմակերպիչ է:

Նոր սխտեմին անցնելը կապիտալիստի համար շահաւէտ է ոչ միայն այն մտքով, որ նրան արտադրութեան իրաւագօր, անմիջական կազմակերպող է դարձնում—այլ և այն մտքով, որ արտադրութեան ծախսերը—արհեստանոցի, նրան լուսաւորելու, վառելիքի և գործիքների համար արած ծախսերը զգալի կերպով քչանում են: 20 բանւորանոց մի մեծ արհեստանոցը շատ աւելի պակաս է նստում, քան 20 մի բանւորանոց փոքրիկ արհեստանոցները. և եթէ նոյնիսկ նրա մէջ աշխատանքի տեխնիկական բաժանումը դեռ չի էլ կազմակերպւած, յամենայն դէպս իւրաքանչիւրի համար գործիքների լիակատար կազմ չի պահանջւում, ինչպէս առանձին արհեստանոցներում աշխատելիս,— աշխատանքի ժամանակը հեշտութեամբ այնպէս է բաշխւում, որ երբ մի բանւոր աշխատում է մի գործիքով, միւսը մի ուրիշով է աշխատում, իսկ յետոյ ընդհակառակը, և գործիքներն անգործ չեն մնում: Նիւթերի մէջ էլ շահ կայ.—նրանց մեծ քանակութեամբ արհեստանոց ուղարկելու աւելի պակաս արժողութիւնը, մեծ քանակութեամբ կուտակւած մնացորդներն ու կտորտանքը հեշտութեամբ և օգուտով գործածելը և այլն:

Մանուֆակտուրաների առաջանալուն ծանր արգելք էին հանդիսանում արհեստաւորական համբարութիւնների առանձնաշնորհութիւնները: Ինչպէս ցոյց տրւեց, համբարութիւններին էր պատկանում քաղաքներում արտադրութեան մենավաճառութիւնը. իսկ համբարային կանոնադրութիւնները առանձին ձեռնարկութեան մէջ վարձու բանւորների—քարգահների և աշկերտների թիւը սովորաբար խիստ սահմանափակում էին և ծայրայեղ չափով բանւորների շատ փոքր քանակութիւն էին սահմանում: Բայց արդիւնաբերական կապիտալը կարողացաւ մասամբ յարմարել այս արգելքի հետ և մասամբ ուշադրութիւն չդարձնել նրա վրայ:

Նախ՝ մանուֆակտուրաներն ամենից շատ հաստատուում էին այնպիսի տեղերում, որտեղ համքարութիւնների առանձնաշնորհութիւններ գոյութիւն չունէին, այսինքն՝ գիւղերում, նաև նոր հիմնած քաղաքներում, որոնց մէջ մտցրած էր համքարական կազմը, և հին քաղաքների արւարձաններում, որոնց վրայ համքարական կանոնների ազդեցութիւնը չէր տարածուում:

Այնուհետև, համքարութիւնների առանձնաշնորհութիւնները սակաւ առ սակաւ մտան և համքարական քաղաքները: Առևտրական և արդիւնաբերական կապիտալի թշնամութիւնը դէպի համքարութիւնները արտացոլեց պետութեան քաղաքականութեան վրայ: Թագաւորները, մանուֆակտուրաների մէջ պետական եկամուտների հարուստ աղբիւր տեսնելով, հովանաւորում էին նրանց: Ուստի նրանք ստէպթոյլ էին տալիս մանուֆակտուրաներ հիմնել նաև համքարային քաղաքներում, խլելով համքարութիւններից, այդպիսով, նրանց արտադրութեան մենավաճառը:

Վերջապէս, մանուֆակտուրաների զարգացման հետ հէնց համքարական վարպետների մէջ արհեստաւորական արհեստանոցը մանուֆակտուրայի կերպարանափոխելու ձգտումն է նկատուում: Համքարական վարպետներն արդիւնաբերական կապիտալի հետ ունեցած դժւարին մրցման մէջ ամենից խիստ շղթայւած էին իրանց կանոնադրութիւնների այն յօդւածներով, որոնք սահմանափակում էին քարգահների և աշկերտների թիւը: Աւելի հարուստ արհեստաւորները գնալով աւելի մեծ շանքեր էին գործ դնում անուշադիր թողնելու կամ նոյն իսկ վերացնելու այդ կանոնադրութիւնները: Երբ շանքերը յաջողութեամբ էին պսակւում և վարձու բանւորների թիւն առանձին արհեստանոցներում խիստ աճում էր, այն ժամանակ արհեստի անցումը մանուֆակտուրայի՝ չափազանց թեթև ու բնական էր լինում:

Եութեամբ ճիշտ արդիւնագործութեան մէջ կատարւած արտադրութեան ձևերի վերակազմութեան նման վերակազմութիւն է կատարուում գիւղատնտեսութեան մէջ այն ժամանակ, երբ կապիտալիստը, փոխանակ գիւղացիութեանը շահագործելու, իբրև մեծաքանակ գնողի կամ վաշխաուի, սկսում է ինքը՝ վարձու բանւորների օգնութեամբ՝ իւր հողի կամ կապալով վերցրած հողի վրայ երկրագործական խոշոր ձեռնարկութիւն առաջ տանել: Այս վերակազմութիւնը միայն երկրագործութեան մէջ է, շնորհիւ առանձին պայմանների, աւելի ուշ և դանդաղ կատարւում, իսկ աշխատանքի բաժանման՝ մանուֆակտուրա երբն բնորոշ ձևը խիստ թոյլ չափով է միայն զարգանում. այդ պատճառով կապիտալիստական երկրագործութեան մասին առանձին պէտք է խօսել:

Մանուֆակտուրայի առաջին աստիճանի վրայ կապիտալիստի բոլոր բանւորներն առաջւան պէս իսկական արհեստաւորներ էին հան-

գիսանում. իւրաքանչիւրն ի կատար էր ածում ամբողջապէս այն միևնոյն գործը, ինչ որ առաջ անկախ մանր արտադրողն էր կատարում: Բայց իւր յետագայ զարգացման մէջ մանուֆակտուրան ձեռքի աշխատանքի տեխնիկայի ուրիշ, բարձրագոյն և ամենակատարեալ ձևի է հասնում—աշխատանքի մանուֆակտուրային բաժանմանը: Տարբեր դէպքերում այս բաժանումը երկու տարբեր եղանակներով էր զարգանում:

Կապիտալիստի՝ միևնոյն աշխատանքը կատարող բանւորներից մէկին ամենից լաւ այդ աշխատանքի մի մասն է յաջողւում, միւսին— միւս մասը և այլն: Վաղ թէ ուշ, ձեռնարկողը գալիս է այն մտքին, որ աւելի շահաւէտ է իւրաքանչիւր բանւորին յանձնել աշխատանքի՝ այն մասը, որի մէջ նա առանձնապէս հմուտ է: Սկզբում առանձին բանւորն այնուամենայնիւ աշխատանքային գործողութիւնների մի բաւակահանաչով բարձր շարք է կատարում, բայց յետոյ, բանւորների թիւն աւելացնելով, հնարաւոր եղաւ իւրաքանչիւրին աւելի ու աւելի պարզ մանր աշխատանք տալ: Այսպէս, աշխատանքի բաժանումը հասնում է մինչև այն աստիճանին, ինչպիսին կարելի է տեսնել օրինակ՝ ասեղի մանուֆակտուրայի մէջ, ուր իւրաքանչիւր ասեղ 72 բանւորի ձեռքով է անցնում:

Այստեղ աշխատանքի մանուֆակտուրային բաժանումը հանդէս է գալիս իբրև աշխատանքի հասարակական բաժանման շարունակութիւն, իբրև այն աշխատանքների յետագայ զատումը, որոնք առաջ հասարակութեան մէջ առանձին արհեստաւորների վրայ էին բաժանւած:

Ուրիշ դէպքերում աշխատանքի մանուֆակտուրային բաժանումն ուրիշ ընթացքով էր գնում: Կան արտադրութիւններ, որոնք հէնց սկզբից միջանկի տարբեր արհեստաւորների մասնակցութիւն են պահանջում: Այդպէս է օրինակ՝ կոճրի գործը: Միևնոյն կոճրը շինելուն մասնակցում են ատաղձագործը, հիւսնը, դարբինը, փականագործը, կաշեայ մասերը շինողը, պաստառողը, ապակեգործը և այլն: Կոճրի վարպետն աշխատանքի զանազան մասերը պէտք է պատւիրէր այս արհեստաւորներին, իսկ ինքը զբաղէր մասերի փոխադարձ յարմարեցումով և ամբողջութեան վերջնական պատրաստութեամբ: Այդպիսի գործը վարելու համար համեմատաբար աւելի մեծ միջոցներ էին պահանջւում: Ուստի համար համեմատաբար աւելի մեծ միջոցներ գնող վարպետները ժաւ գարձանալի չէ, որ այդպիսի մեծաքանակ գնող վարպետները ժամանակի ընթացքում, մտնելով առևտրական կապիտալիստների դերի մէջ, իրանց են ենթարկում մնացած վարպետներին. իսկ յետոյ, արդէն արդիւնաբերական կապիտալիստներ դառնալով, նրանց ժողովում են իրանց մանուֆակտուրայի մէջ, իբրև վարձու բանւորներ:

Այստեղ, հետևապէս, կապիտալիստը իւր մանուֆակտուրայի մէջ է տեղափոխում աշխատանքի պատրաստի հասարակական բաժանումը, միացնելով մի արհեստանոցում նրա զատւած տարրերը. այս դէպքում

իւրաքանչիւր բանւորի գործունէութեան շրջանը նեղանում է. փականագործը, դարբինը, հիւսնը հարկադրւում են սահմանափակել իրանց արհեստի այն գործողութիւններով, որոնք առնչութիւն ունեն կառքի գործի հետ, և հրաժարել այն միւս արհեստաւորական աշխատանքներից, որոնցով առաջ պարապում էին:

Այսպէս է առաջ գալիս կատարողական աշխատանքի բաժանումը: Իսկ ինչ վերաբերում է աշխատանքի այն բաժանմանը, որ գոյութիւն ունի կազմակերպողի և կատարողների մէջ—մինչև «մտաւոր» աշխատանքի և «Ֆիզիկական» աշխատանքի բաժանումը—նա էլ նոյնպէս ներկայացնում է մանուֆակտուրայի մէջ իւր առանձնայատկութիւնները և ունի իւր զարգացման պատմութիւնը:

Ձեռնարկողը վարձում է բանւորներ, այսինքն՝ որոշ ժամանակով և որոշ պայմաններով գնում է նրանց բանւորական ոյժը: Նա նրանց տալիս է արտադրութեան միջոցներ և նրանք աշխատում են, հպատակելով նրա հարգադրութիւններին: Այդպիսով բանւոր կատարողների ենթարկումն այստեղ սահմանափակւած է այն պայմանադրութեան սահմաններով, որ կապւած է վարձելիս:

Ձեռնարկողն աշխատանքի բաժանումն ու աշխատակցութիւնն այնպիսի ձևով և այնպիսի չափերով է կազմակերպում, որ նրան ամենից շահւէտ է ներկայանում: Այս դէպքում նա լիովին սահմանափակւում է կազմակերպչի դերով, չաշխատելով արհեստանոցում ինչպէս բանւոր: Բացի այդ, կապիտալիստական ձեռնարկութիւնների յետագայ զարգացման հետ կազմակերպչական գործունէութիւնն էլ կամացկամաց առանձին վարձու բանւորներին է անցնում: Սկզբում կապիտալիստին այս բանը հարկադրւում է հէնց նրա ձեռնարկութիւնների աճումը, որ այնպիսի չափերի է հասնում, որ մի անձի համար չափազանց դժուարին, իսկ յետոյ նոյն իսկ անհնարին են լինում ի կատարածել կազմակերպողի բոլոր պարտականութիւնները: Կապիտալիստը կարիքի չափով աշխատանքի վրայ հսկողներ է վարձում—գրասենեակում ծառայողներ, հաշւապահներ, վերատեսուչներ և այլն: Ժամանակի ընթացքում կապիտալիստին միայն վարձու կազմակերպչների գործունէութեան վրայ բարձրագոյն կոնտրոլն է մնում և նոյն իսկ, ինչպէս յետոյ ցոյց կտրւի, սրա վրայ էլ գործը կանգ չի առնում:

Եւ այսպէս, մանուֆակտուրայի մէջ կազմակերպչական աշխատանքը, կատարողականի նման, գնալով հետզհետէ աւելի մեծ չափով տեխնիկայէս բաժանւած է դուրս գալիս:

Աշխատանքի տեխնիկական բաժանումը՝ կապակցւած բանւորների միջև եղած հասարակ աշխատակցութեան հետ, զարգացած մանուֆակտուրայի մէջ ձուլւում է մի առանձին ձևի, որին կարելի է անւանել «մանուֆակտուրային խումբ»:

Դանակների մանուֆակտուրային արտադրութեան մէջ զանազան

տեսակ բանւորներ են մասնակցում.— ձուլողներ, դարբիններ, յղկիչներ, սրողներ և այլն: Թէ քանի հոգու վարձել առաջիններից, երկրորդներից կամ երրորդներից, ակներև է, որ կապիտալիստի համար միևնոյն բանը չէ: Եթէ նա խիստ շատ վարձէ միևնոյն տեսակի բանւորներ, նրանք հարկադրւած կլինեն բաւական ժամանակ անգործ մընալ, այսպէս, միւսները չեն հասցնի իրանց տրւած նիւթը մշակել:

Կապիտալիստը վորձի միջոցով հասնում է զանազան տեսակի բանւորների թւի միջև որոշ նորմալ առնչութեան: Դուրս է գալիս, օրինակ՝ որ 2 ձուլողի համար հարկաւոր է ունենալ 1 դարբին, 3 յղկիչների համար մի սրող, այնուհետև, գուցէ մի վերակացու և այլն: Եթէ ձեռնարկողը մտադիր է մի քիչ ընդարձակել իւր ձեռնարկութիւնը, նրա համար միտք չունի 2—3 առանձին բանւորներ վարձել. տեղ չէր լինիլ նրանց համար: Նա պէտք է միանգամից մի ամբողջ խումբ վարձէ, այսինքն՝ մեր օրինակով—2 ձուլող, մի դարբին, 3 յղկիչ և այլն:

Միևնոյն ձեռնարկութեան առանձին մանուֆակտուրային խմբերի մէջ գոյութիւն ունի միայն պարզ աշխատակցութիւն:

գ) Կապիտալիստական մեռնարկութեան եռութիւնը.  
(բանւորական ոյժն իբրև ապրանք)

Կապիտալիստական տնտեսութեան հիմնական առանձնայատկութիւնը նրանումն է կայանում, որ նա վարձու աշխատանքով է կատարում, որ բանւորը ծախում է իւր բանւորական ոյժը և որ բանւորական ոյժը ապրանք է հանդիսանում:

Այս առաջանում է, ինչպէս ցոյց տրւեց, շնորհիւ երկու պայմանների. առաջինը նրանումն է կայանում, որ բանւորն ազատ է—նա ստրուկ չէ, ճորտ չէ և իւր բանւորական ոյժը ում և որքանով ուզենայ՝ կարող է ծախել. երկրորդը—նրանում, որ նա «ազատ» է նաև արտադրութեան միջոցներից, ուստի և ապրուստի միջոցներ չունի և հարկադրւած է ծախել իւր բանւորական ոյժը:

Բանւորական ոյժի գնողը կապիտալիստն է հանդիսանում, այսինքն՝ այն անձը, որ կապիտալի տէր է: Իսկ կապիտալ է կոչւում իւրաքանչիւր կարողութիւն, որի միջոցով ուրիշի աշխատանքից օգուտ են դուրս բերում, այն է՝ գործիքներ, արտադրութեան նիւթեր, փող: (Այս որոշումը հաւասարապէս վերաբերում է և՛ առևտրական, և՛ վաշխառական, և՛ արդիւնաբերական կապիտալին. տարբերութիւնը միայն ձեռնարկութիւնների ձևի մէջ է.— առևտրականը միայն այն չափով է կապիտալիստ հանդիսանում, ինչ չափով որ նրա կարողութիւնը մասն արտադրողների աշխատանքը շահագործելու միջոց է դառնում,

ինչպէս այդ նկատում է մանաւանդ կապիտալիստական արտադրութեան տնային եղանակի մէջ):

Ապրանք դարձած բանորական ոյժը որոշեալ գնով է ծախուում. իսկ ապրանքի գինը որոշուում է նրա արժողութեամբ: Հետևապէս, կապիտալիստը պէտք է բանւորական ոյժը, ընդհանրապէս, իւր արժողութեամբ գնէ: Իսկ ի՞նչ է այս արժողութիւնը: Համաձայն ընդհանուր որոշման, որ տրւեց առաջ, արժողութիւնը հասարակական-աշխատանքային եռանդի այն քանակութիւնն է, որ անհրաժեշտ է բանւորական ոյժի արտադրութեան համար: Իսկ հասարակական աշխատանքային եռանդի ի՞նչ քանակութիւն է ծախսուում բանւորական ոյժի արտադրութեան համար:

Բանւորական ոյժը աշխատանքի հնարաւորութիւնն է, մարդու աշխատելու ընդունակութիւնը: Իսկ մարդն աշխատանքի ընդունակ է լինում միայն այն դէպքում, երբ նրա կենսական պահանջները բաւարարութիւն են ստանում: Եթէ մարդս ուտելու, խմելու, հագնւելու հնարաւորութիւն չունի, նա չի էլ կարող աշխատել, այսինքն՝ չի ունենայ բանւորական ոյժ: Եթէ պահանջներին լիովին բաւարարութիւն չեն տրւում, բանւորական ոյժը պակասում է:

Հետևապէս, բանւորական ոյժը ստեղծւում, արտադրւում է բանւորի կենսական, անհրաժեշտ կարիքներին բաւարարութիւն տրւելու դէպքում: Բանւորական ոյժի արժողութիւնը այս պահանջներին բաւարարութիւն տալու արժողութիւնն է, այսինքն, ակնբեր է, որ այն կենսական անհրաժեշտ միջոցների արժողութիւնը, որոնցով նրանք բաւարարութիւն են ստանում:

Բանւորն օրական ուտում է որոշ չափով հաց, որոշ չափով միս, մաշում է որոշ չափով շոր և այլն: Աշխատանքային եռանդի այն քանակութիւնը, որ հասարակութիւնը՝ նրան այս բոլորը տալու համար ծախսում է, հէնց նրա բանւորական ոյժի հասարակական արժողութիւնն է: Աշխատանքային եռանդի միւսը է ընդունւում, ինչպէս ցոյց տրւեց, միջին լարւածութեան «հասարակ» աշխատանքի մի ժամը: Եթէ բանւորի 24 ժամւայ համար անհրաժեշտ կենսական կարիքների արժողութիւնը հաւասար է 5 այդպիսի «ժամերի», ուրեմն բանւորական ոյժի արժողութիւնը 5 «ժամ» է: Բանւորական ոյժի գինը ընդհանուր առմամբ և միջին հաշուով, այս արժողութեանը պէտք է համապատասխանէ, այսինքն՝ բանւորը պէտք է իւր և աշխատանքի վարձ ստանայ փողի մի այնպիսի գումար, որի արտադրութիւնը նոյնպէս միջին լարւածութեան հասարակ աշխատանքի 5 ժամ է նստում: Ենթադրենք, այդ գումարը հաւասար է 50 կոպէկի. այն ժամանակ բանւորական ոյժի գինը իւր փոփոխութիւնների մէջ այս նորմայի— 50 կոպէկի մօտերը պէտք է տարուբերի:

«Կենսական պահանջների» տակ, որոնցով որոշուում է բանւորա-

կան ոյժի արժողութիւնը, պէտք է հասկանալ ոչ միայն բնական, հիմնական պահանջները, այլ և այնպիսի արհեստական պահանջներ, որոնք բանւորի համար սովորական են դարձել և առանց նրանց բաւարարութիւն տալու չի կարող կառավարել: Եթէ բանւորները սովորել են ծխել, լրագիր կարդալ, թատրոն գնալ, այն ժամանակ ծխախոտից, լրագրներից ու թատրոնից օգտւելու արժողութիւնները մտնում են բանւորական ոյժի ընդհանուր արժողութեան մէջ,— որովհետև, եթէ այս պահանջներին բաւարարութիւն չի տրւում, բանւորական ոյժն իր նորմալ չափերին չի հասնում:

Բանւորի սերունդը շարունակելու պահանջը նրա հիմնական էական կարիքների շարքին է պատկանում: Ուստի և բանւորի ընտանիքի պահելն էլ մտնում է բանւորական ոյժի արժողութեան մէջ:

Բանւորական ոյժի շուկայի փաստացի գինը, սովորաբար, լիովին չի համապատասխանում նրա արժողութեանը. երբեմն նրանից բարձր է լինում, երբեմն՝ ցածր: Բայց այստեղ էլ ինչպէս ուրիշ իւրաքանչիւր ապրանքի համար, մրցումը ձգտում է գինը հասարակական արժողութեանը համապատասխանեցնել: Եթէ գինը նորմայից իջնում է, բանւորները, որոնց պահանջները լրիւ բաւարարութիւն չեն ստանում, սովորականից աւելի վատ և պակաս են աշխատում. երբեմն աշխատելուց բոլորովին հրաժարւում են, այնպէս, որ այս կամ այն պատճառով բանւորական ոյժի առաջարկութիւնն իջնում է պահանջի համեմատութեամբ և նրա գինը բարձրանում է: Ընդհանրապէս կապիտալիստի համար սովորական պայմաններում, ի սէր լաւ աշխատութեան և գործերի խողաղ ընթացքի, բանւորական ոյժին իւր արժողութիւնից պակաս չվճարելն ուղղակի աւելի շահաւէտ է: Մրանից աւելի վճարելը նրան շահաւէտ չէ. բայց, սովորաբար, նա լիակատար հնարաւորութիւն ունի և աւել չվճարելու, որովհետև նա շուկայում ընդհանրապէս աւելի բարենպաստ պայմանների մէջ է գտնւում, քան բանւորական ոյժ ծախողը: Այս վերջինը գնում է իւր բանւորական ոյժը ծախելու այն ժամանակ, երբ նա ապրուստի ոչ մի միջոց չունի իսկ ձեռնարկողը, ըստ մեծի մասին, ոչ մի ծայրայեղ հարկ չունի վարձելու յիշեալ անձին—մի բանւորի տեղը հեշտութեամբ է գտնւում մի ուրիշը. իսկ քիչ թէ շատ զարգացած կապիտալիստական կազմի մէջ բանւորական ոյժը շուկայում ձեռնարկողների պահանջից համապատասխան է (Առաջ ընկնելով՝ պէտք է նկատել, որ հէնց կապիտալիստական յարաբերութիւնների ոյժով ստեղծւում է վարձու բանւորական ոյժի մշտական աւելորդը, այսպէս կոչւած, «արդիւնաբերութեան պահեստի բանակը»): Ասենք, Եւրոպայում վարձու բանւորական ոյժի սկզբնական կուտակումը հէնց մասնաֆակտուրային շրջանի սկզբին արդէն կարողացաւ առաջացնել բանւորական ոյժի աչքի ընկնող չափով աւելորդը):

Եթէ աշխատավարձը բանւորին տալիս էլ է ապրուստի միջոց» կապիտալիստը յատկապէս այս մասին չի մտածում, այլ մտածում է այն մասին, որ վարձած բանւորի աշխատանքից շահ ստանայ: Որպէսզի այս շահի գոյանալը հասկանանք, անհրաժեշտ է պարզել, թէ ինչքան մեծ է բանւորի արտադրած ապրանքի արժողութիւնը և ինչ մասերից է նա կազմուած. և որովհետև ապրանքի արժողութիւնը նրա աշխատանքային արժողութեամբ է որոշուած, ուստի պէտք է հէնց արժողութիւնից սկսել:

Արդիւնքի հասարակական արժողութիւնը հասարակական-աշխատանքային եռանդի այն ամբողջ գումարն է, որ ծախսուած է նրա արտադրութեան վրայ: Ակնհերև է, որ աւարտուած արդիւնքի արժողութեան մէջ պարունակուած է աշխատանքի եռանդի ծախսուածների մի ամբողջ շարք, սկսելով ամենասկզբնական հում նիւթերի արտաքին բնութիւնից անմիջականապէս ձեռք բերելուց և վերջացնելով պատրաստի արդիւնքի՝ արտադրութեան տեղից սպառման տեղը տեղափոխելով: Ամենից յարմարն է այս բանը մի կոնկրետ դէպքի մէջ տեսնել, ըստ որում աշխատանքային եռանդի միաւորը կնշանակենք «ժամ» խօսքով, հասկանալով սրա տակ միջին լարածութեան հասարակ աշխատանքի մի ժամը:

Բանւորը հրացան է շինում: Պարզ է, որ հրացանի արժողութեան մէջ է մտնում ամենից առաջ այն նիւթերի արժողութիւնը, որոնք նրա համար են գործածուած.— երկաթ, փայտ, լաք և այլն, թող այս բոլորը ընդհանուր գումարի մէջ 100 ժամ կազմէ: Այնուհետև, հրացանը շինուած է գործիքների—զանազան յարմարութիւններով դազգահի, մուրճերի, սղոցների, խարտոցների և այլն օգնութեամբ: Բայց սրանց արժողութիւնն ամբողջապէս չի մտնում հրացանի արժողութեան մէջ. իւրաքանչիւր գործիք բաւական է ոչ թէ մի, այլ մի քանի հրացանների համար և, հետևապէս, իւրաքանչիւր հրացանի արժողութեան մէջ գործիքի արժողութեան մի որոշ մասն է մտնում միայն. եթէ գործիքը բաւական է 100 հրացանի համար, ուրեմն  $\frac{1}{100}$ -երրորդը, եթէ 10-ի համար, ուրեմն  $\frac{1}{10}$ -ը,—ընդհանրապէս, իւրաքանչիւր հրացանը շինելիս գործիքի մատչելու մեծութեան համապատասխանող մասը: Եթէ դազգահն արժէ 50,000 ժամ և բաւական է 5,000 հրացանի համար, ուրեմն նրա արժողութիւնից 10 ժամ է մտնում հրացանի արժողութեան մէջ. եթէ արհեստանոցն արժէ 1,000,000 ժամ և բաւական է 200,000 հրացանի համար, ուրեմն նրա արժողութիւնից իւրաքանչիւր հրացանին ընկնում է 5 ժամ և այլն: Թող գործիքների մաշած մասի արժողութիւնը հաւասար լինի 400 ժամի. նախընթացի հետ այս անում է 500 ժամ:

Այնուհետև, ինքը վարպետն աշխատում է հրացանի վրայ և այս «կենդանի» աշխատանքը (այսպէս է կոչուած՝ զանազանելու «մեռածից»),

որ արդէն առաջ մարմնացել է գործիքների ու նիւթերի մէջ), պարզ է, որ արդիւնքի հասարակական արժողութեան մէջ է մտնում: Ինչպէս յայտնի է, հրացանի արտադրութիւնը միայն վարպետը չէ ի կատար ածում, այլ բազմաթիւ բանւորներ, որոնց միջև բաժանուած է աշխատանքը. այս՝ գործը չի փոխում, հարկաւոր է միայն հաշուել կենդանի աշխատանքի ամբողջ գումարը: Թող այդ գումարը հաւասար լինի աշխատանքային եռանդի 250 միաւորի, 250 «ժամի». հրացանի արժողութեան գումարը կլինի 750 ժամ:

Փոխանակութեան օրէնքի համաձայն՝ այդպիսի հրացանի դինը համապատասխանում է փողի այնպիսի բանակութեան, որն ինքը 750 ժամ «արժէ», ենթանդրենք—75 ըուբլու: Շատ դէպքերում կապիտալիստն աւելի թանկ կամ աւելի արժան է ծախում, բայց շուկայի դինը, այնուամենայնիւ, ձգտում է արժողութեան մակերևոյթին և միջին հարաւոր նրան մօտ է լինում: Ընդհանրապէս հաշիւների հաստատութեան համար յետագայում ամենուրեք պիտի ընդունելի, որ բանւորների աշխատանքը հասարակ է, միջակ լարածութիւն ունի և որ այս աշխատանքի մի ժամը համապատասխանում է 10 կոպէկի—մի կամաւոր թիւ:

Կապիտալիստը բանւորական ոյժն օրական 50 կոպէկով է գրնում, համաձայն նրա արժողութեան, որ հաւասար է 5 «ժամի»: Եթէ բանւորի աշխատանքային եռանդի օրական ծախսումն էլ ընդամենը 5 ժամ կազմէր, ինչ արդիւնք կըստացւէր կապիտալիստի համար:

Հրացանի վրայ նրա արած ծախսերն են. նիւթերի և գործիքների համար—50 ըուբլի (համապատասխան 500 ժամի), բանւորական ոյժի համար, որ նա պէտք է գնէ 50 օր շարունակ (հաշուելով կենդանի աշխատանքի 250 ժամ,—օրական 5 ժամ)—25 ըուբլի: Ընհանուր գումարը 75 է: Բայց հրացանն էլ ծախուած է 75 ըուբլով, որովհետև նրա արժողութիւնը 750 ժամ է. կապիտալիստը ոչ օգտուած է և ոչ վնասուած. ձեռնարկութիւնն այսպէս վարել անհնար է:

Պատճառը նրանումն է կայանում, որ բանւորն օրական հէնց «այնքան աշխատանքային եռանդ է ծախսում, ինչքան բանւորական ոյժի արտադրութիւնն է նստում,—5 ժամ. այսպիսով նա կապիտալիստից ստանում է 50 կոպէկ և արդիւնքի արժէքի մէջ մտցնում է 50 կոպ: Այսպիսի պայմաններում բանւորի կենդանի աշխատանքն օգուտ չի տալիս, իսկ մեռած աշխատանքից սպասել էլ պէտք չէ. այն 500 ժամը, որ ծախսուած է գործիքների ու նիւթերի վրայ, նոյն 500 ժամն էլ մնում է. նրանց արտադրութեան նախկին աշխատանքային եռանդը միայն մտնում է արդիւնքի արժողութեան մէջ, բայց ինքն անփոփոխ է մնում և արդիւնքի արժէքի մէջ մտցնում է այն 50 ըուբլին, որ կապիտալիստը ծախսել էր արտադրութեան միջոցների վրայ: Բայց կապիտալիստը գնել է բանւորական ոյժը և իրաւունք ունի

նրան տնօրինել. նրան հարկաւոր է դուրս քաշել այդ ոյժից ամբողջ-հնարաւոր օգուտը: Բանւորական ոյժը մի օրում բաւում է ոչ միայն 5, այլև 10, 12, երբեմն և 15 ժամի համար: Եւ կապիտալիստը ստիպում է բանւորին օրական ծախսել ոչ թէ 5, այլ, ենթադրենք, 10 ժամի աշխատանք: Բանւորը ենթարկւում է, որովհետև նա ծախել է իւր բանւորական ոյժը և օրէնքով նրան գործադրում է նա, ով որ գնել է: Այն ժամանակ մի հրացան շինելու համար կգնայ արդէն ոչ թէ 50, այլ 25 բանւորական օր (250:10):

Կապիտալիստի ծախսերն են. 50 բուրլի—արտադրութեան միջոցները, 50 կոպ.  $\times$  25, այսինքն՝ 12  $\frac{1}{2}$  բուրլի—բանւորական ոյժի գումարն է 62  $\frac{1}{2}$  բուրլի: Հրացանի արժողութիւնը հաւասար է 750 ժամի, իսկ արժէքը հաւասար է 75 բուրլու. հետևանքը լինում է 12  $\frac{1}{2}$  բուրլի շահ:

Շահի աղբիւրն այսպէս է. մի օրւայ բանւորական ոյժի արտադրութիւնը արժէ 5 ժամ, նրա արժողութիւնը 5 ժամ է, իսկ վարձու բանւորի օրական աշխատանքը—10 ժամ. նա օրական ստանում է 50 կոպ., իսկ նրա աշխատանքը արդիւնքի արժէքի մէջ մտցնում է մի ամբողջ բուրլի: Այն 10  $\frac{1}{2}$  բուրլին, որ կապիտալիստը գործածել է բանւորական ոյժ գնելու, ներկայացնում է 125 ժամ, իսկ 25 օրւայ մէջ ծախսած կենդանի աշխատանքի գումարը—250 ժամ: Բանւորը ոչ միայն աշխատեց պրծաւ այն, ինչ որ նստում է նրա սպորուստը, այլ և նոր արժողութեան 125 ժամ առաջացրեց, օրական 5 ժամ: Այս նոր արժողութիւնը կոչւում է «յաւելեալ արժէք», հէնց սա է կապիտալիստի օգուտի պատճառը:

Բանւորի եռանդի ամենօրեայ ծախսման առաջին 5 ժամերը, այսպէս կոչւած, անհրաժեշտ բանւորական ժամանակ են ներկայացնում—ժամանակ, երբ բանւորն աշխատում վերջացնում է իւր բանւորական ոյժի արժողութիւնը: Մնացած ժամերը յաւելեալ բանւորական ժամանակ—յաւելեալ աշխատանքի ժամանակ են ներկայացնում:

Եւ այսպէս, թէպէտ բանւորական ոյժն սպաւանք է, սակայն բոլորովին առանձին յատկութիւն ունի. նրա սպաւումը իւր արժողութիւնից աւելի մեծ արժողութիւն է առաջ բերում: Կապիտալիստի համար արտադրութեան ամբողջ նպատակն ու միտքը նրանումն է կայանում, որ վարձւած բանւորների բանւորական ոյժի ծախսումները կցելով նրան պատկանող որևէ արժողութեան հետ, որ մարմնացած է արտադրութեան միջոցների մէջ, արտադրէ իւր օգուտն յաւելեալ արժէք, որը, արդիւնքները ծախելիս, շահի փողային ձև է ստանում: Կապիտալիստի համար իւր կապիտալն «ինքն իրան աճող մի արժէք» է:

Բերւած օրինակում կապիտալիստի իւր ձեռնարկութեան մէջ դրած կապիտալը—հրացան շինելը—փողի ձևով 62  $\frac{1}{2}$  բուրլի է կազմում, որ համապատասխանում է «մեռած աշխատանքի» 625 ժամին:

Սրանից այն 500 ժամը, որ մարմնացել է նիւթերի և արտադրութեան գործիքների մէջ, անփոփոխ մտաւ միայն արդիւնքի ընդհանուր արժողութեան մէջ, միայն արտադրութեան պրոցեսսի մէջ «պահանջ», իսկ յաւելեալ արժէք ստեղծելու մէջ ոչ մի մասնացկութիւն չունեցաւ: Սա, այսպէս կոչւած, «կապիտալի մշտական մասը», կամ աւելի կարճ—մշտական կապիտալն է: Մնացած 125 ժամը, որ կապիտալիստի ձեռք բերած բանւորական ոյժի արժողութիւնն է ներկայացնում, ուրիշ յատկութիւններ ունի. նա ոչ միայն «պահպանւում է» աշխատանքի պրոցեսսի, բանւորական ոյժի սպաւման պրոցեսսի մէջ, այլ և արդիւնքի ընդհանուր արժողութեան մէջ փոխարինւում է «կենդանի» աշխատանքի ամբողջ 250 ժամով, հետևապէս, յաւելեալ արժէքի 125 ժամով աւելանալով, քանակական փոփոխութիւն է կրում: Սա «կապիտալի փոխող մասն» է կամ փոփոխական կապիտալը:

Եւ այսպէս, միայն փոփոխական կապիտալը, որով ձեռք է բերւում բանւորական ոյժ, իրօք ստեղծում է յաւելեալ արժէք. մշտական կապիտալը—արտադրութեան միջոցների արժողութիւնը—գուրկ է այս ընդունակութիւնից:

Յաւելեալ արժէքի յարաբերութիւնը փոփոխական կապիտալի հետ կամ, որ միևնոյնն է—յաւելեալ բանւորական ժամանակի յարաբերութիւնը անհրաժեշտ ժամանակի հետ—կոչւում է յաւելեալ արժէքի նորմա: Բերւած օրինակում փոփոխական կապիտալի օրական 50 կոպ. ծախսին պէտք է դալիս 5 ժամ յաւելեալ աշխատանք, որ համապատասխանում է նոյնպէս 50 կոպէկի, իսկ յաւելեալ արժէքի նորման—100%: Ակներև է, որ յաւելեալ արժէքի նորման կարող է իրրև չափ ծառայել այն օգուտին, որ կապիտալիստները դուրս են քաշում գնած բանւորական ոյժից:

Իւրաքանչիւր կապիտալիստական հասարակութեան համար յաւելեալ արժէքի նորմաներն արտադրութեան զանազան ձիւղերում և զապան ձեռնարկութիւնների մէջ ձգտում են մի միջին մակերևոյթի: Պատճառը մրցման հաւասարեցնող գործողութիւնն է: Եթէ ձեռնարկութիւնների որևէ խմբի մէջ յաւելեալ արժէքի նորման աւելի բարձր է լինում, քան միւսների մէջ, այն ժամանակ բանւորներն անազին քանակութեամբ դուրս են գալիս այդ ձիւղից և մտնում ուրիշ այնպիսի ձեռնարկութիւնների մէջ, ուր շահագործումն աւելի պակաս է: Բայց այն ժամանակ ձեռնարկութիւնների անազին խմբի համար պահանջի և բանւորական ոյժի առաջարկութեան յարաբերութիւնը փոխւում է բանւորների բարենպաստ կերպով և այս խմբի ձեռնարկողներն հարկադրւած են լինում բարձրացնել վարձը կամ պակասեցնել բանւորական ժամանակը, ընդհանրապէս—իջեցնել յաւելեալ արժէքի նորման: Ընդհակառակը, միւս ձեռնարկութիւնների մէջ, շնորհիւ բանւոր ձեռքերի սպաստիկ առատութեան, ոյժերի յարաբերութիւնը փոխւում է յօգուտ

ձեռնարկողներին և յաւելեալ արժէքի նորման մի քիչ բարձրանում է: Հետեանքն այն է լինում, որ նորմայի բարձրութեան մէջ եղած տարբերութիւնները հարթուում են:

Եւ այսպէս, կապիտալիստական արտադրութեան էութիւնը նրանումն է կայանում, որ ապրանք դարձած բանտրական ոյժը, որ կապիտալիստը ձեռք է բերում փոփոխական կապիտալով, արտադրութեան մէջ սպառում է, ընդ նմին վերարտադրելով իւր արժողութիւնը և դեռ ստեղծում է յաւելեալ արժէք, որն և կապիտալիստ դասակարգի «շահի» աղբիւրն է ծառայում:

Տնտեսագէտների մէջ գոյութիւն ունէր մի կարծիք, թէ կապիտալիստ դասակարգի շահն արտադրութեան մէջ չի ստեղծուում, այլ փոխանակութեան մէջ—իբրև թէ այդ շահը պայմանաւորուում է նրանով, որ կապիտալիստը ապրանքն իւր արժողութիւնից բարձր է ծախում: Օրինակ՝ մի ապրանք, որի արժողութիւնը 100 ժամ է և արժողութեան համապատասխանող գինը 10 բուբլի, փոխանակում է մի ուրիշ ապրանքով, որի արժողութիւնը 110 ժամ է, գինը 11 բուբլի. օգուտ է ստացւում 1 բուբլի: Բայց իրականութեան մէջ այդպիսի եղանակով կարող են հարստանալ միայն աւանձին մարդիկ. կապիտալիստ դասակարգի օգուտն այդպէս բացատրել չի կարելի: Եթէ առաջին կապիտալիստը 10 բուբլի գին ունեցող ապրանքի տեղ ստանում է 11 բուբլանոց ապրանք, երկրորդը, ընդհակառակը, 11 բուբլու տեղ՝ 10 բ. է ստանում, այսինքն 1 բուբլի վնաս: Նրանք երկուսը միասին ոչ օգուտ են ստանում, ոչ վնաս. նախ քան փոխանակելը, նրանք՝ ընդհանուր գումարով 21 բուբլու ապրանք ունէին, փոխանակելուց յետոյ էլ նոյն քան մնաց, միայն, ում մօտ որ շատ կար – սլակասեց և ընդհակառակը: Եթէ նոյն իսկ ենթադրենք, որ իւրաքանչիւր առևտրական անպայման գնողին խաբում է յօգուտ իւր, չէ՞ որ նա էլ հարկադրւած է գնող լինել և, ուրեմն, նա էլ պիտի խաբւի:

Ընդհանրապէս, եթէ փոխանակութիւնից բացի, օգտի ուրիշ աղբիւր չլինէր, կապիտալիստների դասակարգը չէր կարող գոյութիւն ունենալ:

դ) Զարգացող կապիտալիստական մեռնարկութիւնների ազդեցութիւնը արտադրութեան յետամնաց մեռերի վրայ:

Մանուֆակտուրաներն առաջանում և զարգանում էին զանազանակերպ տնտեսական ձևերի բարդ գուգակցման մէջ: Քաղաքային արդիւնագործութեան մէջ կապիտալիստական արտադրութեան տրանսպին ձևն էր տիրապետում, բայց և զգալի չափով պահւած էին մանր-բուրժուական արհեստաւորական կազմի մնացորդները նրան յատուկ կօրպօրատիւ կազմակերպութիւններով: Գիւղում քանակապէս գերակշռում էին բնական արտադրութեան բեկորները—մանր երկրա-

գործական տնտեսութիւնները զանազան օժանդակ արհեստների հետ. առևտրական կապիտալը ձգտում էր տարածել նրանց վրայ իւր կազմակերպչական - շահագործող գործունէութիւնը. այս բանը նրան բաւականաչափ յաջողուում էր, բայց ոչ լիովին, որովհետև, աչքի առաջ ունենալով Ֆէօդալական յարաբերութիւնների շատ սեղերում դեռ շարունակելով, քիչ արգելքների չէր հանդիպում: Յետամնաց ձևերի քայքայումն ու վերացումը, որ սկսել էր առևտրական կապիտալի ոյժով, արդիւնաբերական կապիտալի ազդեցութեան տակ շատ աւելի արագ առաջ գնաց, բաց անելով իւր համար նախկիններից բացի՝ և նոր ճանապարհներ:

Արտադրութեան մանր արհեստաւորական ձևի հետ մրցման մէջ մտնելով խոշոր մանուֆակտուրային ձևն աւելի ուժեղ է դուրս գալիս և ճնշում առաջինին: Մանուֆակտուրաների մէջ տեխնիկապէս-բաժանւած աշխատանքի մեծ արտադրողականութիւնը արժողութեան և, հետևապէս, արդիւնքների գների այնպիսի ցածրացումն առաջացրեց, որին արհեստն անկարող էր դիմանալ: Այս պատճառով արհեստն արագ անկման էր դիմում արդիւնագործութեան այն ճիւղերում, որոնց յափշտակում էր մանուֆակտուրան. իսկ այդպիսի ճիւղերի թիւն անընդհատ աճում էր:

Որպէսզի անհասար մրցման մէջ գոնէ ժամանակաւորապէս պահպանեն, համբարական վարպետները հարկադրւում էին մի կերպ մեծացնել աշխատանքի արտադրողականութիւնը կամ գոնէ՝ զօրեղացնել նրա շահագործութիւնը: Ծնորհիւ այս բանի, մանուֆակտուրայի շրջանում մի աւանձին ոյժով են երևան գալիս հին արհեստաւորական կազմակերպութիւնների քայքայման այն բոլոր նշանները, որոնք փոքր չափով դեռ նախընթաց շրջանումն էին երևացել. — վարպետների մէջ բացառիկութեան ոգու զարգացումը, քարգահների՝ անկախ վարպետներ դառնալուն ամեն կերպ արգելք լինելու նրանց ձգտումը, վարպետների՝ քարգահների հետ ունեցած նախկին անմիջական կապի քայքայումը, առաջինների և երկրորդների կազմակերպութիւնների մէջ եղած կատարի գասակարգային կռիւը, վերջապէս, հէնց համբարութիւնների ներքին կապերի սերտութեան նւազելը, որ արտայտուում էր այն ձգտման մէջ, որով աւանձին վարպետները բարձի թողի էին անում համբարութիւնների կողմից արւած՝ իրանց վերաբերմամբ անշահաւէտ որոշումները և առևտրական կապիտալի եղանակներով շահագործում էին իրանց ընկեր՝ միւս վարպետներին: Համբարութիւնների կենսունակութիւնն արագութեամբ ընկնում էր:

Ենթարկելով բոլոր՝ իրանց դարն անցկացրած ձևերի ընդհանուր օրէնքին, համբարական կազմակերպութիւններն այդ դէպքում ոչ միայն կորցնում էին իրանց հասարակական օգտակարութիւնը, այլև նոյնիսկ վնասակար էին դառնում, իբրև յետագայ զարգացման խոչընդոտ: Համ-

քարութիւններն իրանց ձեռքին ունենալով արտադրութեան և մասամբ քաղաքների մեծամասնութեան շուկաների մենավաճառութիւնը, չափազանց ճնշում էին մանուֆակտուրայի զարգացումը: Մինչդեռ «բազմացած բնակչութեան» մասսան մարդ էր փնտռում ծախելու իւր բանտրական ոյժը և գոյութիւն ունեցող ձեռնարկութիւնները չէին կարողանում նրան ամբողջապէս կլանել: Հասարակութեան մեծամասնութեան շահերը մանուֆակտուրայի յետագայ զարգացումն էին պահանջում. իսկ դրա համար անհրաժեշտ էին կապիտալի ազատութիւն և համքարական ճնշումների ու առանձնաշնորհումների վերացումն:

Պաշտպանելով իրանց նեղ շահերը, համքարութիւններն անհաշտ թշնամութեամբ էին վերարբերում տեխնիկական յառաջադիմութեանը, որը կորուստ էր սպանում մանր արտադրողներին: Համքարութիւնները, օգտւելով իրանց հասարակական նշանակութիւնից և պետութեան վրայ ունեցած ազդեցութիւնից, բոլոր ոյժերով արգելք էին լինում հասարակական տեխնիկայի մէջ նոր հնարումներ մտցնելու և այս դէպքում յաճախ այն տեղն էին հասցնում, որ այս գիւտերը խորտակւում էին նրանց զանոցների հետ միասին: Այսպիսի փաստերի մէջ հին կազմակերպութիւնների յետադիմական դերն առանձին պարզութեամբ էր երևան գալիս:

Այսպիսով, արդիւնաբերական աճող դասակարգերի, ինչպէս բուրժուազիայի, այնպէս և պրօլետարների գիտակցութեան մէջ համքարական կարգերը ոչնչացնելու անհրաժեշտութեան միտքն աստիճանաբար տարածւում և արմատանում էր: Պետութեան գործունէութիւնը հետզհետէ աւելի մեծ չափով էր ուղղւում իրանց դարն անցրած կազմակերպութիւնների դէմ:

Կորցնելով իրանց հասարակական նշանակութիւնը, համքարութիւններն սկսում էին ձևականորէն էլ քայքայուիլ: Ամենից առաջ նրանք զրկւեցին իրանց նախկին անկախութիւնից: Թագաւորական իշխանութիւնը իւրացրեց վարպետի կոչում տալու իրաւունքը և եռանդով օգտւում էր այս իրաւունքից՝ զանձարանի եկամտները մեծացնելու համար: Վարպետի կոչման արտօնագրեր տալու մէջ լայն ասպարէզ էր բացւում կամայականութեանը. մի թագաւորի տւած արտօնագրերը միւսն անվաւեր էր յայտարարում այն պատճառով, որ իրան էլ փող էր պէտք: Յաճախ այդպիսի արտօնագրերի փոխանակ, ինչպէս ցոյց տրւեց, համքարական սահմանափակումների հսկողութեան առանձնաշնորհումներ էին ծախւում. աւելի յաճախ միաժամանակ լինում էին և՛ այս, և՛ այն:

Պետութեան՝ դէպի համքարութիւնները բռնած այդպիսի դիրքը արագացրեց սրանց խորտակումը Անգլիայում, որտեղ նրանք աւելի առաջ անյայտացան, քան ուրիշ երկրներում: Գերմանիայում նրանք գոյութիւն ունէին մինչև ներկայ դարու սկիզբը: Ֆրանսիայում համ-

քարական կարգի վերացումը միանգամից կատարւեց 1789 թւին, յեղափոխական ճանապարհով: Բայց այնտեղ էլ նրանք այդ ժամանակ, ճնշւած մանուֆակտուրայի և տնային կապիտալիստական արտադրութեան մրցումից, հազիւ էին իրանց պահում:

Ճորտական իրաւունքի ժամանակ և կապիտալիզմի շրջանի ըսկզբում գիւղացի բնակչութեան մէջ ամեն տեղ դեռ տարածւած էին օժանդակ արհեստները: Նրանց մէջ յատկապէս կարևոր դեր էր խաղում հագուստի արտադրութիւնը, — մանած, ոստայնակութիւն, կար, իսկ յետոյ՝ տնտեսութեան մէջ շատ անհրաժեշտ գործիքների արտադրութիւնը:

Օժանդակ արհեստների արդիւնքները մասամբ արտադրողների սեփական տնտեսութիւնների մէջ էին սպառւում և մասամբ՝ ծախւելու գնում: Դրամական յարաբերութիւնների զարգանալու, գիւղացիական տուրքերի ու հարկերի՝ բնականից դրամականի փոխելու և մանականը առևտրական կապիտալի հանդէս գալու հետ ծախու արտադրութիւնը օժանդակ արհեստների մէջ վճռականորէն գերակշռում է սպառման արտադրութեանը: Այս դէպքում օժանդակ արհեստների կազմակերպութիւնը, շուկային ենթարկւելով, տնային կապիտալիստական արդիւնաբերութեան ձև է ստանում:

Յիշեալ շրջանում դէպի մանուֆակտուրան անցնելը խիստ աստիճանաբար էր կատարւում: Հէնց մանուֆակտուրան գիւղում մեծ մասամբ երկար ժամանակ պահում է այն արհեստների «օժանդակ» բընաւորութեան հետքերը, որոնցից ինքն առաջ եկաւ. նրա բանւորները բացառապէս նրանը չեն հանդիսանում — ամառը նրանք գնում են իրանց գիւղատնտեսական աշխատանքներին, ինչ մանուֆակտուրան լիովին կամ մասամբ անգործ է մնում: Յաճախ գիւղի ընդհանուր տնտեսական յետամնացութիւնն այն հետևանքն է ունենում, որ մանուֆակտուրան քայքայւում է. ձեռնարկողն աւելի շահաւէտ է գտնում, նուֆակտուրան քայքայւում է. ձեռնարկողն աւելի շահաւէտ է գտնում, որ գիւղացիք աշխատանքն իրանց տներում կատարեն, իբրև օժանդակ արհեստ: Բանը նրանումն է, որ գիւղացու պահանջների ցածր մակերևոյթի և նրա համար, իբրև երկրագործի, օժանդակ աշխատանքի երկրորդական նշանակութեան դէպքում տնային արտադրութեան արդիւնքները, չնայած յետամնաց տեխնիկային, շատ արժան կարող են ծախւել:

Սակայն մանուֆակտուրայի այսպիսի քայքայումը, նրա ցրւելը տարածութեան մէջ, արդիւնաբերական կապիտալի վերստին առևտրականի անցնելը, յամենայն դէպս, անցողական երևոյթ է, որ վերանում է տեխնիկայի յետագայ առաջադիմութեամբ: Աշխատանքի մեծ արտադրողականութիւն ունեցող խոշոր ձեռնարկութիւնների զարգացումը և նրա ընտանիքի աշխատանքը վարձատրելը: Այնուհետև կրճատւում է նաև անմիջական սպառման արտադրութիւնը: Մանուֆակտու-

բան հում նիւթերի զօրեղ պահանջ է ստեղծում և գիւղացին գտնում է, որ աւելի շահաւէտ է նիւթերը ծախել, քան մշակել: Մանաւանդ, որ խոշոր-կապիտալիստական ձեռնարկութեան արտադրութիւնների մեծ նրբութիւնը և աչքի ընկնող արժանութիւնը յաճախ ստիպում է գիւղացիներին գերադասել նրանց սեփական աշխատանքի արտադրութիւններին:

Այսպէս, խոշոր արտադրութեան տեխնիկայի յառաջադիմութեան հետ կատարում է աշխատանքի հասարակական բաժանման զարգացումը. երկրագործութիւնը զատում է արդիւնագործութիւնից, գիւղացին կամ մանուֆակտուրայի է գնում, կամ սահմանափակում է երկրագործական աշխատանքով:

Այս դէպքում մանր երկրագործական արտադրութիւնը, զրկելով օժանդակ արհեստների մէջ ունեցած յենարանից, իւր կայունութեան մի մասը կորցնում է և նրա ոյժը թուլանում է նորից զարգացող տնտեսական ձևերին ընդդիմադրելու:

Այսպէս է արդիւնաբերական կապիտալի զարգացման հիմնական միտումը: Մանուֆակտուրայի շրջանում, արդիւնաբերական կապիտալի մի զարգացման առաջին աստիճանում, նա համեմատաբար թոյլ չափով է երևան գալիս, մասամբ նոյն իսկ մանուֆակտուրաների հետ կապւած մի քանի նոր և զարգացմամբ մի քանի նախկին օժանդակ արհեստների առաջանալով բոլորովին քօղարկւում է. մանուֆակտուրայի համար նիւթեր մատակարարելը շահաւէտ գործ է դառնում և գիւղացիները, մասամբ ինքնուրոյն, մասամբ ձեռնարկող-կապիտալիստների օգնութեամբ, իրանց վրայ են առնում այս նիւթերի արտադրութիւնը, եթէ միայն գործի տեխնիկան թոյլ է տալիս:

Երկրագործութեան մէջ կապիտալիզմը, ընդհանրապէս, այնպէս արագ և յաջողակ չի զարգանում, ինչպէս արդիւնագործութեան մէջ:

Գիւղական տնտեսութեան տեխնիկան աշխատանքի այնպիսի ընդարձակ բաժանումն թոյլ չի տալիս, ինչպիսին կարելի է տեսնել մանուֆակտուրաների մէջ: Միթէ հնարաւոր է, օրինակ, բազկացուցիչ մասերի բաժանել այնպիսի մի գործողութիւն, ինչպիսին հողը վարելն է: Մանաւանդ որ տարբեր երկրագործական աշխատանքներ տարբեր ժամանակներում են կատարում, որն և աշխատանքի տեխնիկական բաժանման նշանակութիւնն յիշեալ ձիւղում աւելի ևս փոքրացնում է:

Այս պատճառով խոշոր-կապիտալիստական և մանր երկրագործական արտադրութիւնները, նոյնիսկ մանուֆակտուրայի շրջանում, աշխատանքի արտադրողականութեան նկատմամբ քիչ են տարբերում, այնպէս, որ վերջինս մրցման մէջ յաջողակ է դուրս գալիս:

Ասեմք, խոշոր երկրագործական ձեռնարկութիւններն արդէն ըսկզբից որոշ տեխնիկական առաւելութիւններ ունին, մանաւանդ շուկայից արտադրութեան միջոցներ մատակարարելու և պատրաստի

արդիւնքները շուկայ ուղարկելու շրջանում: Բնական է, որ խոշոր ձեռնարկութիւնների տեխնիկան էլ աւելի արագ է զարգանում: Եւ այնուամենայնիւ, մանր տնտեսութիւնը դեռ երկար շարունակում է խոշոր տնտեսութիւնների հետ ունեցած մրցման մէջ դիմանալ: Տեխնիկայի պակասութիւնները վարձատրւում են մանր երկրագործի աշխատութեան չափազանց բարձր լարւածութեամբ: Սրա մէջն է այդպիսի տնտեսութեան էական պակասութիւնը: Միայն աշխատանքային եռանդի ահագին ծախսումն է մանր երկրագործին հնարաւորութիւն տալիս մրցմանը դիմանալու, այնպէս որ, ընդհանուր առմամբ, աշխատանքը վատ է վարձատրւում:

Մանր գիւղացիական տնտեսութեան «կենսունակութեան» սահմանը մանուֆակտուրայի շրջանի սահմաններից այն կողմն է, բայց այն ժամանակ նրա «կենսունակութիւնն» արդէն անընդհատ ցածրանում է: (Կապիտալիստական երկրագործութեան պատմութիւնը հողային բեռնատայի մասին եղած գլխում միքիչ աւելի մանրամասն պէտք է քննենք):

Ե. Առևտրական և արդիւնաբերական կապիտալ

Ինչ չափով որ առևտրական կապիտալից բաժանւում է արդիւնաբերականը, այնքան էլ հէնց առևտրական կապիտալի հասարակական դերի շրջանը նեղանում է: Նա կորցնում է իւր անմիջական կազմակերպչական նշանակութիւնը արտադրութեան մէջ, որովհետեւ նրա այդ ֆունկցիան արդիւնաբերական կապիտալին է անցնում:

Առևտրական կապիտալն արդիւնաբերական կապիտալի համար էլ է արտադրութեան միջոցները գնելու և ապրանքը ծախելու գործի մէջ միջնորդ հանդիսանում, բայց սրանից, ընդհանրապէս ասած, չի առաջանում արդիւնաբերական ձեռնարկութիւնների այն ենթարկումը առևտրական ձեռնարկութիւններին, ինչ որ մանր ձեռնարկութիւնների համար նկատւում է տնային-կապիտալիստական սիստեմի մէջ: Ոյժերի յարաբերութիւնն այն չէ. եթէ առևտրական կապիտալիստը փորձ է անում դուրս գալ միջնորդի ծառայութեան դերից և առանձնաշնորհեալ դիրք բռնել, այսինքն, ապրանքների գները չափից դուրս իջեցնելով, շահագործել արդիւնաբերական կապիտալիստին, այս վերջինս գերադասում է առանց նրա ծառայութիւններին կառավարել և շուկայի հետ անմիջական յարաբերութիւններ է հաստատում:

Սակայն առևտրական կապիտալի ֆունկցիաների այս կրճատումը կատարւում է այն չափով միայն, ինչ չափով որ զարգանում է մանուֆակտուրան. իսկ սա իւր ընդարձակութեան կողմից դեռ երկար ժամանակ — Անգլիայում՝ մինչև XVIII դարու սկիզբը, Գերմանիայում՝ դեռ աւելի ուշ — տնային-կապիտալիստական արտադրութեան կից բաւականին համեստ տեղ է բռնում:

Բացի այդ, մանուֆակտուրայի զարգացումը շատ դէպքերում

տնային կապիտալիստական սիստեմի համար ճանապարհ է բաց անում. մանուֆակտուրայի մրցումը, ուժասպառ անելով ինքնուրոյն մանր արտադրողին, ուղղակի նրան առևտրական և վաշխառուական կապիտալի ձեռքն է տալիս:

Այնուհետև, մանուֆակտուրայի ձեռնարկողը յաճախ ինքը մեծաքանակ գնող է հանդիսանում մանր արտադրողների նկատմամբ, որոնք նրան արտադրութեան նիւթեր են մատակարարում: Շատ անգամ հէնց մանուֆակտուրայի մէջ արտադրութեան բոլոր գործողութիւնները չեն կատարում, այլ նրանցից միքանիսը տրւում են մանր արտադրողներին, որոնք տանն են աշխատում—գարձեալ կապիտալիստական արտադրութեան տնային սիստեմ:

Ընհանրապէս, կապիտալիզմի բարձրագոյն ձևերի հետքով և նըրանց ազդեցութեան տակ սովորաբար զարգանում են ստորինները, որոնք իրանց յետագայ զարգացման մէջ պէտք է բարձրագոյն ձևերին անցնեն:

Ինչ վերաբերում է կապիտալի ձևերի աստիճանաբար մասնագիտական բնաւորութիւն ստանալուն—արդիւնաբերական կապիտալի զատելուն—դա կապիտալիստական հասարակութեան մէջ աշխատանքի՝ ձեռնարկութիւնների միջև զարգացող բաժանման մի մասնաւոր դէպքն է ներկայացնում:

3. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲԱՇԽՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՄԱՆՈՒՅԱԿՏՈՒՐԱՅԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Կապիտալիստական հասարակութեան համար բաշխման հիմնական, համարեա ընդհանուր եղանակը փոխանակութիւնն է, անկազմակերպ, շուկայի բաշխումը: Փոխանակութեան պրոցեսսի մէջ իւրաքանչիւր հասարակական դասակարգ և դասակարգի իւրաքանչիւր առանձին անդամ ստանում է հասարակական արդիւնքի իւր բաժինը: Անմիջական բաշխումը սովորաբար ընտանեկան տնտեսութեան մէջ է պահպանւում միայն:

Փոխանակութեան զգալի զարգացմանը համապատասխանում է դրամական շրջանառութեան յառաջադիմութիւնը: Կապիտալիստական արտադրութեան մէջ փողն անհրաժեշտ շարժիչ ոյժ է. առանց փողի նա միտք չունի: Փողով է կապիտալիստն արտադրութեան միջոցներ և բանւորական ոյժ ձեռք բերում: Երբ արտադրութեան այս տարրերի փոխազդեցութեան միջոցով ստացւում է արդիւնք, նա դարձեալ պէտք է փողով ծախել: Ստացւած փողերով կամ նրանց մի մասով նորից բանւորական ոյժ, գործիքներ ու նիւթեր են գնւում, նորից ապրանքը ծախւում է և այլն: Յետոյ ապրանքը ձեռքից-ձեռք անցնելով՝ դարձեալ փողի միջոցով է հասնում սպաւողին:

Այսպիսով, կապիտալիստական կեանքի նորմալ ընթացքի համար

խիստ կարևոր է, որ դրամական շրջանառութիւնը ճիշտ և անարգել կատարւի, որ փողի առաջարկութիւնը միշտ համապատասխան է պահանջին: Ի՞նչպէս է այս ստացւում:

Ինչպէս ցոյց տրւեց, փողն արժողութեան այնպիսի ձև է ներկայացնում, որը թոյլատրում է խնայել անորոշ ժամանակով և կուտակել անսահման քանակութեամբ: Ինչպէս ցոյց տրւեց, փողը անսահման կուտակման և խնայողութեան ձգտումն էլ է առաջացնում: Հետևանքն այն է, որ փոխանակական տնտեսութիւն ունեցող երկրում փողի ընդհանուր գումարը համարեա միշտ անցնում է այն քանակութիւնից, ինչ որ շրջանառութեան համար անմիջապէս անհրաժեշտ է: Ամբողջ աւելորդը շրջանառութեան շրջանից դուրս է գտնւում,—կալաւածատէրերի գրպաններում, սնդուկներում և նկուղներում—և դրամական գանձի դեր է խաղում:

Հէնց շնորհիւ գանձի գոյութեան, դրամական շուկայում առաջարկութիւնը սովորական պայմաններում կարող է հեշտ և արագ կերպով յարմարւել պահանջին:

Փողի պահանջը որոշւում է փոխանակութեան և կրեդիտի պայմանների ամբողջութեամբ: Ժամանակի որոշ շրջանի համար այս պահանջի մեծութիւնը, ինչպէս պարզեց, հետևեալ կերպով է իմացւում. պատրաստի ծախւող ապրանքների գների գումարի վրայ աւելացւում է որոշ շրջանում հարկաւոր եղող պայմանաժամով վճարումների գումարը—հանած սրանցից նրանք, որոնք փոխադարձաբար ոչնչանում են և արդիւնքը բաժանւում է փողի շրջանառութեան միջին թւի վրայ: Հետևապէս, փողի պահանջի տատանումը կախած է կամ ապրանքների քանակութեան և գների փոփոխութիւններից, կամ կրեդիտային գործիչների ու տեխնիկայի փոփոխութիւններից և կամ փողի շրջանառութեան արագութեան փոփոխութիւններից:

Ենթադրենք, թէ շուկայում մի շաբաթւայ ժամանակամիջոցում ծախւած առձեռն ապրանքների գների ընդհանուր գումարը մի միլիոն թուրքի է կազմում, պայմանաժամով վճարումների գումարը, առանց նրանց, որոնք իրար փոխադարձաբար ոչնչացնում են, կազմում է 1/2 միլիոն թուրքի, փողի շրջանառութեան միջին թիւն է 1. այն ժամանակ փողի պահանջը հաւասար կլինի 1,500,000 թուրքու: Հետևեալ շաբաթը, շնորհիւ ապրանքների քանակութեան աճելուն կամ գների բարձրացմանը, ապրանքների գների ընդհանուր գումարը 1 1/2 միլիոն թուրքի է, առանց միւս պայմանները փոփոխելու: Այս կէս միլիոն աւելին ապրանք գնողները ստիպւած են հանել իրանց սնդուկներից և վճարել վաճառողներին—ուրիշ միջոցով չի կարելի ապրանք ձեռք բերել: Փողի առաջարկութիւնը, այսինքն՝ շրջանառութեան մէջ գտնւած փողի քանակութիւնը 1/2 միլիոնով աւելացած է լինում, իսկ գանձը—նոյն քանակութեամբ պակասած: Ընդհակառակը, եթէ ապրանքների

գնեցի գումարը չմեծանար, այլ փոքրանար, այն ժամանակ փողի մի մասը, փոխանակ ապրանքի վճարին գնալու, տէրերի գրպաններում կմնար և դրամական գանձը կաւելացնէր:

Գործը ճիշտ այդպէս է և՛ պայմանաժամով վճարների գումարի աւելանալու կամ իջնելու ժամանակ: Այս դէպքում կրեդիտի տեխնիկան մեծ նշանակութիւն ունի. եթէ չկան կրեդիտային հիմնարկութիւններ, որտեղ հակադրուում և փոխադրուում են՝ զանազան ձեռնարկութիւնների պարտքերը, այն ժամանակ կրեդիտային շուկայի համար աւելի շատ փող է պահանջուում. հարկ է լինում փող վճարել և մասամբ այնպիսի պարտքերին, որոնք, եթէ միաժամանակ պարզէին ու փոխադարձաբար հակադրէին, իրար կոչնչացնէին. այսպիսի պարտքերի գումարները, փոխանակ գանձի վրայ աւելանալու, մեծացնում են շրջանառութեան փողի քանակութիւնը:

Այժմ ենթադրենք, որ ապրանքների գների անփոփոխ գումարը 1 միլիոն և պայմանաժամով վճարումների անփոփոխ գումարը 1/2 միլիոն լինելիս, փողի շրջանառութիւնների միջին թիւը 1-ից բարձրանում է մինչև 2. ապրանքներն ու փողն աւելի արագ են շրջանառութիւն գործում: Այն ժամանակ շուկան կարողանում է միևնոյն գումարից՝ մէկի փոխարէն երկու անգամ օգտուել. օրինակ, կապիտալիստը կարողանում է իւր 1000 բուրլով արտադրութեան միջոցներ գնել, յետոյ վերագարձնել այդ փողը իւր ապրանքները վաճառելով և նորից նրանով արտադրութեան միջոցներ գնել, այսինքն՝ փոխանակ 2,000-ի, կառավարել հազար բուրլով: Հետևապէս, ամբողջ զրամական շուկան, փոխանակ առաջւայ 1,500,000 բուրլու, 750,000 է պահանջում միայն. աւելորդ 750,000 բուրլին մնում է տէրերի գրպաններում և շատացնում գանձը: Ապրանք-զրամի շրջանառութեան արագութիւնը պակասեցնելու դէպքում հակադիր երևոյթներ են կատարուում և գանձի մի մասն անցնում է շրջանառութեան մէջ:

Այսպիսով, իրերի նորմալ, սովորական ընթացքում համապատասխանութիւն է հաստատուում փողի պահանջի և առաջարկութեան մէջ: Գանձը խաղում է պահեստի դեր, որտեղից, կարիքի դէպքում, փողն անցնում է շրջանառութեան մէջ և որտեղ, հակառակ դէպքում, հաւաքուում է նրանց աւելորդը:

Կապիտալիստական հասարակութեան զարգացման հետ շուկայում շրջանառութիւն կատարող գումարն աւելի արագ էր աճում, քան գանձը. բայց գանձն էլ պէտք է բազմանար, որովհետև, հակառակ դէպքում, նա, ժամանակի ընթացքում, անկարող կլինէր կարգաւորել հսկայական զրամական շուկան իւր տատանումներով: Փողի արտադրութիւնը անհրաժեշտօրէն պէտք է աճէր: Եւ իրօք, կապիտալիզմի ամենաառաջին քայլերը եւրոպայում նոր բացւած երկրներէից, մասաւանդ Ամերիկայից՝ չտեսնւած քանակութեամբ ազնիւ մե-

տաղներ կրելով յաւերժացան: Ասենք, փողի այս առատութեան նըշանակութիւնը մինչև որոշ աստիճանի թուլանում էր այն փաստով, որ փողի արժողութիւնը, ուրեմն և նրա գնող ոյժը, համեմատած միջնադարեան աշխարհի հետ, ցածրացաւ: Իսկ սա կախւած էր փողի մետաղներ ձեռք բերելու առաջւանից աւելի մեծ դիւրութիւնից, որի շնորհիւ փողի որ և է գումարի մէջ մարմնացած հասարակական-աշխատանքային եռանդի քանակութիւնն զգալի կերպով պակասած էր երևում:

Գործը նրանով չսահմանափակեց, որ ահագին քանակութեամբ ազնիւ մետաղներ շրջանառութեան մէջ նետուեցին: Փողի պահանջը հսկայական արագութեամբ ընդարձակեց և բացի մետաղէ դրամներէից, ժամանակի ընթացքում առաջ բերեց և քղթալրամի գործածութիւնը:

Թղթազրամի ծագումը հիմնական գծերով այսպէս է: Փոխանակական գործերի մէջ փողի մշտական կշռելը դադարեց անհրաժեշտ լինելուց, հէնց որ պետութիւնը զրամական շրջանառութեան կոնարոլը իւր վրայ առաւ: Պետութիւնը զրամական մետաղներից պատրաստում էր որոշ քաշի, ձևի և արժողութեան ձուլւածքներ—դրամներ: Դրամներն ընդունուում էին առանց կշռելու, որովհետև պետութիւնը երաշխաւորում էր նրանց քաշը և միշտ պատրաստ էր նրանց վրայ նշանակւած արժողութեամբ ընդունել:

Մետաղէ դրամները մաշուում են շրջանառութիւնից, անհամար ձեռքերի միջով անցնելով կորցնում են իրանց կշիւը, բայց այնուամենայնիւ, պահում են այն միևնոյն գնող ոյժը, ինչ որ նրանց վրայ նշանակւած է, որովհետև պետութիւնը չի հրաժարուում մաշւած դրամը լիակշիւ փոխարինելուց: Երբ մարդ հաւատացած է, որ կառավարութիւնը փոխանակում է լիակշիւ դրամով այն մաշւածը, որ նրան առաջարկում են, նա միշտ վերցնում է, թէկուզ նա համարեա քաշ չունենայ: Այստեղից մինչև թղթազրամը մի քայլ է:

Պետութիւնը բաց է թողնում թղթէ նշաններ, որոնց համար նա երաշխաւորում է և որոնք, շնորհիւ պետութեան վերայ ունեցած վստահութեան, բոլորն ընդունում են իբրև դրամ: Թղթէ նշանը, այսպէս առանց, մինչ այն աստիճանի մաշւած դրամ է, որ նրանից միայն առնուն է մնացել:

Սկզբնապէս պետութիւնը միայն փոխանակելու թղթազրամ է բաց թողնում, այսինքն՝ այնպիսի թղթազրամ, որը նա առաջին իսկ պահանջին պարտաւորում է նրանց վրայ նշանակւած արժողութեան համաձայն ազնիւ մետաղների փոխարինել: Փոխանակելու փողերը միշտ մետաղէ փողերին համահաւասար են անցնում: Ինքն ըստ ինքեան համարեա ոչ մի արժողութիւն չունենալով, նրանք փոխանակութեան մէջ արժեքաւոր են, ներկայացնելով մի տեսակ վկայական՝ իրացնելու

դրամական մետաղների մէջ մարմնացած հասարակական-աշխատանքային եռանդի որոշ քանակութիւնը:

Սակայն փոխանակելի թղթադրամներ բաց թողնելով, պետութիւնը սովորաբար ոչ թէ շրջանառութեան պահանջներն ի նկատի ունի, այլ իւր սեփական պահանջները: Թղթադրամները պետութեան համար անտոկոս փոխառութեան ամենայարմար ձևն են ներկայացնում. փողերը տպուում են և նրանցով վճարում պետական գնումները, պետական ծառայութիւնները և այլն: Եւ որովհետև պետութեան պահանջները տնտեսական զարգացման ընթացքի հետ աճում են, ուստի և զարմանալի չէ, որ հետզհետէ թղթերն այնպիսի քանակութեամբ են բաց թողնուում, որ զգալի կերպով գերակշռում են դրամական շուկայի պահանջին: Այն ժամանակ թղթերն սկսում են ահագին քանակութեամբ ներկայացել՝ ոսկով փոխանակելու. իբրև «գանձ», ոսկէ դրամներն աւելի վստահելի են հանդիսանում, քան թղթադրամները, որոնք պետութեան սնանկանալու ժամանակ կարող են կորցնել իրանց արժէքը: Սկզբում պետական գանձարանները փոխանակում են թղթերը, բայց յետոյ, երբ կառավարութեան համար այդպիսով պարզւում է, որ անտոկոս փոխառութիւնն իրան չի յաջողում, նա դադարեցնում է ազատ փոխանակութիւնը—փոխանակելի թղթադրամները դառնում են անփոխանակելի:

Պետութիւնը օրէնքի ոյժով ստիպում է քաղաքացիներին ընդունել անփոխանակելի թղթադրամները և ինքն էլ է ընդունում հարկերի տուրքերի և այլն վճարման ժամանակ:

Անփոխանակելի թղթադրամների հետ միաժամանակ ոսկին էլ շրջանառութեան մէջ չի պահուում, կամ գանձ է դառնում, կամ արտասահման է գնում ներմուծւած ապրանքներին վճարելու: Ներքին շրջանառութեան շրջանում մնում են միայն թղթադրամները, բայց սրանք սովորաբար խիստ շատ են լինում—պահանջից աւելի: Հեռանալ շրջանառութիւնից՝ նրանց համար շատ դժւար է. արտասահմանում նրանք չեն ընդունւում, իսկ իբրև գանձ՝ բաւականին կասկածաւոր և անվստահելի են: Ուրեմն ի՞նչ է դուրս գալիս:

Ենթադրենք, մի որևէ պետութեան մէջ՝ դրամական շուկայում իսկական պահանջը 800 միլիոն ըլլելի է, իսկ թղթադրամը —մինչև 1,200 միլիոն: Այն ժամանակ, ակներև է, որ 1,200 միլիոն թղթադրամը փոխարինում է 800 միլիոն ոսկուն և շրջանառութեան մէջ միեւնոյն արժէքն է ներկայացնում, ինչ որ 800 միլիոն ոսկի ըլլելին: Հետևապէս,

$$\text{մի թղթադրամ ըլլելու արժէքը հաւասար կ'լինի } \frac{800 \text{ միլիոն}}{1,200 \text{ միլիոն}} \text{ կամ } \frac{2}{3}$$

ըլլելու՝ ոսկով, կամ  $66\frac{2}{3}$  կոպէկի՝ ոսկով: Այս արտայայտում են այսպէս. «Թղթադրամների կուրսը— $66\frac{2}{3}$  կոպէկը՝ ոսկով՝ մի ըլլելու փոխարէն»:

Թղթադրամի կուրսի ընկնելը Ռուսաստանում հասաւ մի ըլլելու փոխարէն մինչև 23 կոպէկի: Իսկ ընդհանրապէս այդ անկումը կարող է անվերջ գնալ: Փրանսիայում առաջին հասարակապետութեան ժամանակները չափազանց շատ թղթադրամներ բաց թողնելը իջեցրեց սրբանց արժէքը մինչև  $2\frac{1}{2}\%$  նոմինալ արժողութեան, այսինքն՝ 40 ֆրանկ թղթադրամը հաւասար էր 1 ֆրանկ ոսկու:

Անփոխանակելի թղթադրամների արժէքի տատանումները զանազան տեսակ զուտ տնտեսական և, այսպէս կոչւած, քաղաքական պատճառներից կարող են տեղի ունենալ: Օրինակ պատերազմի, յեղափոխութեան և այլն ժամանակ պետութեան քաղաքականապէս անվստահելի դրութիւնը միանգամից կուրսն իջնեցնում է. կորչում է դէպի պետութիւնն եղած վստահութիւնը և նրա թղթադրամների պահանջը միանգամից պակասում է:

Ինչպէս որ, կուրսի ընկնելը երկրի ներսը ամեն բանի գինը բարձրացնում է, իսկ կուրսի բարձրանալը, ընդհակառակը,—ամեն բանի գինն իջեցնում է: Բայց գների տատանումները կուրսի փոփոխութիւններին անմիջապէս չեն յաջորդում: Կուրսին ամենից շուտ յարմարում են այն ապրանքների գները, որոնք, զլիսաւորապէս, արտահանութեան համար են արտադրւում և որոնք արտասահմանից են ներմուծւում. այս իսկապէս այն պատճառով է, որ թղթադրամների կուրսն ամենից առաջ արտասահմանեան շուկայում է որոշւում. ներքին դրամական շուկայում նա չի կարող ուղղակի ճշտութեամբ որոշել, որովհետև այնտեղ մետաղեայ փողերը, որոնց համեմատ է սահմանւում թղթադրամների կուրսը, համարեա շրջանառութիւն չեն գործում: Աւելի դանդաղ են փոխւում այն ապրանքների գները, որոնք մասամբ են միայն ներմուծւում կամ արտահանւում, այլ, զլիսաւորապէս, արտադրւում ու երկրի ներսում են սպառւում: Ամենից ուշ կուրսի բարձրութեանը համապատասխանում են այն ապրանքների գները, որոնք երկրի մէջ են արտադրւում և երկրի մէջ էլ սպառւում: Այսպիսի ապրանքների թւին է պատկանում և բանւորական ուժը: Ուստի կուրսի ընկնելը բանւոր դասակարգի համար ընդհանրապէս ձեռնտու չէ. ապրուստի անհրաժեշտ միջոցների գներն աւելի արագ են բարձրանում, քան աշխատավարձը. կապիտալիստն երբէք չի շտապում ապրուստի միջոցների գների բարձրացման համաձայն՝ բարձրացնել աշխատանքի վարձը:

Կատարւող փոխանակական գործերի ընդհանուր թւի մէջ պարտքով առ ու ծախք հետգետէ աւելի սովորական երևոյթ է դառնում: Ճիշտ նոյնպէս էլ մեր ուսումնասիրած շրջանում հսկայական չափերով տարածւում է վաշխառութիւնը:

Պետութիւնը, փոխանակական տնտեսութեան ամենավաղ ժամանակներից սկսած, կրեդիտային համաձայնութիւնների կոնտրոլը իւր վրայ է վերցնում: Կարիքի դէպքում նա օգնում է կրեդիտին պարտքը

ստանալու, բայց միայն այն պայմանով, որ պարտքի գրաւոր պահանջները, այսպէս կոչւած, կրեղիտային վաւերագրերը գոյութիւն ունենան:

Կրեղիտային վաւերագրի ամենապարզ ձևը՝ պարտքը առևտրական գրքերի մէջ ղետեղելն է: Առևտրական մարդիկ սահմանուած կարգով պահում են այնպիսի առևտրական գրքեր, որոնց մէջ նշանակում են թէ իրանք ունենաւ և ուրքան և ո՞վ իրանց ու ուրքան է պարտական: Երբ վճարելու ժամանակը հասնում է, նրանք իրար մէջ ստուգում են առևտրական գրքերը և միայն փոխադարձ պարտքի տարբերութիւնն են փողով վճարում:

Կրեղիտային վաւերագրի ամենակարևոր ձևը մուրհակն է—պարտքի անգործագիրը, որ կազմուած է որոշ օրէնքների կանոնները պահպանելով: Միջազգային առևտրի մէջ սա միակ կրեղիտային վաւերագիրն է: Նա մասամբ և փողի է փոխարինւում և ահա թէ ինչ կերպ:

Ենթադրենք, որ ոուս Ա. առևտրականը որոշ քանակութեամբ ցորեն ուղարկեց անգլիացի Գ. վաճառականին: Անգլիացի Գ. գործարանատէրը մեքենաներ ծախեց ոուս Բ.-ին: Այն ժամանակ Բ. գնում է Ա.-ից Գ. Անգլիացու վրայ գրուած մուրհակը և ուղարկում է անգլիացի Գ.-ին, որ և այս մուրհակով ստանում է Գ.-ից: Փող ուղարկելու կարիք ամենակին չեղաւ և իւրաքանչիւրն իւրը ստացաւ. ծախսերից ու կրկնակի ուղարկման ընկերից խուսափեցին:

Կրեղիտի զարգացման հետ հանդէս եկան այնպիսի հիմնարկութիւններ, որոնք բացառապէս կրեղիտային գործերով են զբաղւում. մի կողմից կրեղիտ են ստանում նրանցից, որոնց տրամադրութեան տակ ազատ կապիտալ կայ, միւս կողմից—կրեղիտ են տալիս կարիք ունեցող կապիտալիստներին, այսինքն՝ շրջանառութեան մէջ են բաց թողնում իրանց և ուրիշներից փոխ վերցրած փողերը: Այդ հիմնարկութիւնները կոչւում են բանկեր:

Կրեղիտի ձևերն ու ժողովրդական տնտեսութեան ընդհանուր սիստեմի մէջ ունեցած նրա նշանակութիւնը աւելի մանրամասնօրէն ուսումնասիրելու կարիք այն ժամանակ կլինի, երբ խօսք կլինի ոչ թէ սկզբնաւորուող (մանուֆակտուրային), այլ զարգացած արդիւնաբերական կապիտալի մասին: Յամենայն դէպս, արդէն մեր ուսումնասիրած շրջանում կրեղիտը զօրեղ ազդեցութիւն ունի փոխանակութեան և սրա միջոցով նաև արտադրութեան վրայ: Ընդհանուր առմամբ, այս ազդեցութիւնն այնպէս է, որ կրեղիտը նպաստում է խոշոր արտադրութեան զարգացմանը, որովհետև բազմաթիւ անձերի միջոցները ժամանակաորապէս կենդրոնացնում է մի քանի ձեռքերի մէջ:

4. ՀԱՍՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՐԴԻԻՆՔԻ ԲԱՇԽՈՒՄԸ ՉԱՆԱՉԱՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՍԱՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ԴԱՍՍԱՐԱԿԱՆ ՄԻՋԵՏԻ

ա) Օգուտ.

Այն ժամանակահատից, երբ առաջ եկաւ առևտրականների հասարակական դասակարգը, մի յատուկ արտայայտութիւն սահմանեց—«օգուտ»—ցոյց տալու այդ դասակարգի՝ հասարակական արդիւնքի մէջ ունեցած բաժինը. մինչդեռ արհեստաւորի բաժինն, օրինակ՝ նշանակեցին «վաստակ» խօսքով: Այս տերմինների տարբերութիւնը պարզօրէն ցոյց է տալիս այն, թէ հասարակութեան մէջ տիրապետող հայեացքի համաձայն, արհեստաւորի եկամուտը իւր աշխատանքի ուղղակի արդիւնքն է, մինչդեռ առևտրականի եկամուտը իւր աշխատանքից այդպիսի կախում չունի: Ընդունուած է կարծել, թէ առևտրականը ոչինչ չի արտադրում, որովհետև արդիւնքը նրա ձեռքից դուրս է գալիս այն միևնոյն ձևով, ինչպէս որ նա ձեռք էր բերել. արհեստաւորի աշխատանքը, ընդհակառակը, նիւթի մէջ ակներև փոփոխութիւններ է առաջացնում, նոր արդիւնք է ստեղծում:

Այս հայեացքը երևոյթների մի ակնբերութեան վրայ է հիմնւում և սխալ դատողութիւնից է բղխում: Արդիւնքը դեռ չի կարելի աւարտուած համարել, եթէ նա չի կարողանում սպառել այնտեղ, որտեղ արտադրւում է. արդիւնքի մի տեղից մի ուրիշը կամ մի տնտեսութիւնից մի ուրիշը տեղափոխելն «արտադրութեան» վերջնական անհրաժեշտ գործողութիւնն է: Այս մտքով, առևտրականի աշխատանքը ոչ չնոյզ չի տարբերւում արհեստաւորական աշխատանքից և որքան որ շահը առևտրականի կողմից աշխատանքային եռանդի հանրօգուտ ծախսուածով է որոշուած, այնքան նա իսկական վաստակ է:

Բայց հէնց բանն էլ նրանումն է, որ վաճառականի եկամուտն ամենակին չի յանգում, ընդհանրապէս ասած, միայն առևտրական վաստակին: Ամենից առաջ վաճառականն առևտրական կապիտալիստի դերի մէջ է հանդէս գալիս: Նա մանր ձեռնարկութիւններն իրան է ենթարկում և նրանցից դուրս հանած օգուտը ոչ թէ նրանց կատարած հանրօգուտ աշխատանքի քանակութիւնից է կախուած, այլ նրա կապիտալի չափից և արտադրողների վրայ ունեցած իշխանութիւնից: Այսպիսով, շահը, մեծ մասամբ, վաստակ չէ. և գնալով իսկական առևտրական վաստակն աւելի մեծ չափով է հալւում առևտրական «օգուտի» մէջ և սրա համեմատութեամբ չնչին երևում:

Միևնոյնը վերաբերում է և արդիւնաբերական կապիտալիստին. նրա ստացած օգուտը ոչ մի համապատասխանութիւն չունի աշխատանքային եռանդի այն ծախսումների մեծութեան հետ, որոնց համապատասխանում են նրա համար իւր կազմակերպչական գործունէութիւնը: Ընդհակառակը, ձեռնարկութեան ընդարձակելու հետ զուգըն-

թաց, կապիտալիստը, սովորաբար, իւր աշխատանքի հետզհետէ աւելի մեծ մասն է յանձնում վարձու բանւորներին և կրճատում իւր կազմակերպչական աշխատանքի չափերը. իսկ օգուտը միևնոյն ժամանակ աճում է:

Այս մտքով, կապիտալիստական օգուտի սովորական հակադրութիւնը վաստակին՝ բոլորովին համապատասխանում է իրականութեանը:

Արդիւնաբերական օգուտի ծագումը վերևում բացատրեց. նա առաջ է գալիս յաւելեալ արժէքից, այսինքն՝ վարձու բանւորների յաւելեալ աշխատանքից: Առևտրական կապիտալի օգուտն ևս տնային-կապիտալիստական սիստեմի մէջ՝ միայն ձեռնարկայէս անկախ մանր արտադրողների յաւելեալ աշխատանքի արդիւնքն է հանդիսանում. երկու դէպքերի մէջ տարբերութիւնն էական չէ և հետզհետէ հարթւում է այն չափով, ինչ չափով որ առևտրական կապիտալիզմը փոխւում է արդիւնաբերականի:

Հետագօտելով կապիտալիստի օգուտի հարցը, պէտք է ամենից առաջ ի նկատի ունենալ, որ յաւելեալ աշխատանքի նորման օգուտի խիստ անբաւարար չափ է. այս նորման խնդրի միայն մի կողմն է պարզում—թէ ինչքան անշահաւէտ է բանւորի համար ուրիշի ձեռնարկութեան մէջ կատարող լինել. բայց նա ցոյց չի տալիս խնդրի միւս կողմը—թէ որքան շահաւէտ է կապիտալիստի համար վարել իւր ձեռնարկութիւնը:

Նախընթաց գլխում վերլուծեց կապիտալիստական ձեռնարկութեան մի օրինակը—հրացանի արտադրութիւնը: Յաւելեալ արժէքի նորման այնտեղ 100 % էր, որովհետև այն 12 1/2 բուրլին, որ կապիտալիստը ծախսեց բանւորական ոյժ գնելու, նրա համար նոյն 12 1/2 բուրլուն համապատասխանող 125 ժամայ յաւելեալ աշխատանք բերեց: Բայց կապիտալիստը գործի մէջ միայն փոփոխական կապիտալը չդրեց, այլ և 50 բուրլի մշտական կապիտալ—նիւթերի և գործիքների ծախսերը: Նա, իւր հաշուով, ամբողջ 62 1/2 բուրլի ծախսած կապիտալին 12 1/2 բուրլի օգուտ բերեց կամ կապիտալի վրայ աւելացրեց 20 %: Ամբողջ կապիտալի ստացած օգուտի տոկոսների թիւը կոչւում օգուտի նորմա:

Ակներև է, որ օգուտի նորման աւելի պակաս է յաւելեալ արժէքի նորմայից, որովհետև յաւելեալ արժէքի նորման միայն փոփոխական կապիտալից է հաշււում, իսկ օգուտի նորման—ամբողջ կապիտալից—և՛ մշտականից, և՛ փոփոխականից: Բերած օրինակում ամբողջ կապիտալը 5 անգամ շատ է փոփոխական կապիտալից և օգուտի նորման 5 անգամ քիչ է յաւելեալ արժէքի նորմայից:

Մի ուրիշ ձեռնարկողի գործի մէջ, ենթադրենք, թէ համեմատաբար աւելի մեծ քանակութեամբ մշտական կապիտալ է ծախսւած, օրինակ՝ միևնոյն 12 1/2 բուրլի փոփոխական կապիտալին՝ ամբողջ 112 1/2

բուրլի: Այն ժամանակ, յաւելեալ արժէքի նոյն նորմայի դէպքում, օգուտի նորման ընդամենը  $\frac{12,5}{125}$  կլինի, այսինքն 10%: Հետևապէս, երկրորդ ձեռնարկութիւնն աւելի պակաս շահաւէտ է, քան առաջինը և այս կախւած է նրանից, որ երկրորդ ձեռնարկութեան մէջ զգալի կերպով աւելի շատ մշտական կապիտալ է դրւած:

Ընդհանրապէս, յաւելեալ արժէքի միատեսակ նորմայի դէպքում, ինչքան փոփոխական կապիտալը, մշտականի համեմատութեամբ, քիչ է, այնքան օգուտի նորման ցածր է լինում:

Սա ուրիշ կերպ այսպէս են արտայայտում. յաւելեալ արժէքի որ և է նորմայի դէպքում՝ ինչքան կապիտալի օրգանական կազմը բարձր է, այնքան օգուտի նորման ցածր է լինում: «Օրգանական կազմ» են անւանում կապիտալի մշտական ու փոփոխական մասերի արժողութեան մէջ եղած յարաբերութիւնը. օրգանական կազմը բարձր է համարւում այն ժամանակ, երբ մըշտական մասը համեմատօրէն աւելի շատ է, — և սա այն պատճառով, որ զարգացման պրոցեսսը, ինչպէս յետոյ կբացատրելի, մըշտական կապիտալի համեմատական մեծութեան աճելուն է տանում:

Ամբողջ նախընթաց հաշիւը լսնդիրը խիստ պարզ տեսքով է ներկայացնում. նրա մէջ կապիտալի միայն մի շրջանառութեան համար է օգուտի նորմայի մասին խօսք լինում: Կապիտալիստը մի անգամ գնեց նիւթեր ու գործիքներ, վարձեց, բանւորներ, ծախեց ապրանքը և ծախսւած կապիտալը օգուտով վերագարձաւ: Իրականութեան մէջ ամեն ինչ այսպէս պարզ չի կատարւում: Ձեռնարկողը իւր կապիտալի մի շրջանառութեամբ միայն չի սահմանափակւում, այլ գործը աւելի կամ պակաս երկարատև ժամանակով է տանում: Իւր ձեռնարկութեան շահաւէտութիւնը նա չափում է տարեկան շահի տոկոսով: Նա գնում է կարիք եղածի չափ բանւորական ոյժ, գործիքներ, նիւթեր և ապրանքը ծախւում է, ինչքան որ հնարաւոր է:

Նրա կապիտալը շրջանառութիւնների մի ամբողջ շարք է կատարում. բացի դրանից, անհնար է այս շրջանառութիւնները ճշտաբար կերպով դատել մէկը միւսից: Ձեռնարկողը միաժամանակ և՛ վաղուց պատրաստած ապրանքն է ծախում, և՛ գնած բանւորական ոյժի միջոցով նորն է արտադրում, և՛ յետագայ արտադրութեան համար անհրաժեշտ եղածն է գնում: Դրամական կապիտալը մաս-մաս է ծախսւում, մաս-մաս վերագտնում և խիստ անհնաւասարաչափ է:

Բանւորական ոյժի վրայ արած ծախսը բանւորական ոյժի սպառումով ստեղծւած ապրանքի իւրաքանչիւր վաճառման ժամանակ ամբողջապէս վերագտնում է կապիտալիստին: Ճիշտ նոյնպէս էլ իւրաքանչիւր վաճառման ժամանակ ամբողջապէս վերագտնում է այն նիւթերի արժողութիւնը, որոնք գործածւել են ապրանքի արտադրութեան համար: Օրինակ՝ եթէ կապիտալիստը 1000 արշին չիթ

է ծախում, նա այս դէպքում պէտք է ստանայ այն բոլոր ծախսի փողը, ինչ որ նստել է յիշեալ 1000 արշինի արտադրութեան վրայ ծախսուած նիւթերն ու բանւորական ոյժը (ի հարկէ, բացի դրանից, նա պէտք է շահ էլ ստանայ. բայց առայժմ այդ կարելի է մի կողմ թողնել):

Միևնոյնը չի կատարում այն կապիտալի հետ, որ գործիքների վրայ է ծախսում—արհեստանոցի, դաշտահի, գործիքների և այլն: Կապիտալի այս մասը ապրանքի իւրաքանչիւր վաճառման ժամանակի միանգամից չի վերադառնում: 1000 արշին չիթ ծախելով, կապիտալիստը միւս փողերի թւում չի ստանում այն գումարը, որ նա ծախսել է արհեստանոցի վրայ,—օրինակ՝ 100,000 բուրլի: Եւ սա բոլորովին բնական է. արհեստանոցը չօժանդակում, նա իւր տեղումն է, նա գուցէ դեռ շատ տարիներ կծառայէ արտադրութեան համար: Ենթադրենք, թէ արհեստանոցը միլիոն աշին չիթ արտադրութեան կը դիմանայ, այն ժամանակ իւրաքանչիւր արշինի արժողութեան մէջ մտնում է արհեստանոցի արժողութեան մէկ միլիոներորդական մասը և 100 արշին ծախելիս պէտք է արհեստանոցի վրայ ծախսուած կապիտալի միայն <sup>1</sup>/<sub>1000</sub>-ը վերադառնայ:

Միևնոյն բանը վերաբերում է և գործիքներին. չիթը վաճառելիս իւրաքանչիւր անգամ վերադառնում է կապիտալիստին ապրանքի արտադրութեանն օգնող դազգահի, մաքոքի վրայ արած ծախսի մի մասը միայն: Եթէ դազգահը 100,000 արշինի է դիմանում, ուրեմն 1000 արշին վաճառելիս կապիտալիստը փողային ձևով դազգահի արժողութեան <sup>1</sup>/<sub>100</sub> մասն է վերադարձնում և այլն: Մի գործիքն աւելի երկար է դիմանում, քան միւսը. օրինակ՝ արհեստանոցը—50 տարի, դազգահը—5 տարի: Կապիտալի այն բաժինը, որ արհեստանոցի վրայ է ծախսուած, մանր մասերով է վերադառնում, իսկ ամբողջը—միայն 50 տարուց յետոյ, ուրիշ խօսքով, նրա շրջանառութեան տևողութիւնը 50 տարի է: Դազգահի վրայ ծախսուած կապիտալի համար շրջանառութիւնը ընդամենը 5 տարումն է կատարում: Նիւթերի և բանւորական ոյժի վրայ ծախսուած կապիտալը աւելի արագ է գործում շրջանառութիւնը, օրինակ՝ մի ամսում:

Կապիտալիստի համար նրա կապիտալի երկու բաժինների մէջ նկատուած տարբերութիւնը մեծ նշանակութիւն ունի. մէկը—նիւթի և բանւորական ոյժի վրայ ծախսուածը—ապրանքի իւրաքանչիւր վաճառման ժամանակ միանգամից վերադառնում է ձեռնարկողին. սա, այսպէս կոչուած, շրջանառական կապիտալն է. միւսը—գործիքների վրայ ծախսուածը—մաս-մաս է վերադառնում կապիտալիստին. սա հիմնական կապիտալն է: Հիմնական կապիտալը համեմատաբար մեծ քանակութեամբ միանգամից ծախսուում է ձեռնարկութեան սկզբումը. իսկ գործն առաջ տանելու համար այնքան շրջանառական կապիտալ է հարկաւոր միայն, որ

ապրանքի մի վաճառումից մինչև միւսը բաւականանայ: Չեոն որ կողի հաշիւների համար այդպիսի տարբերութիւնը խիստ կարևոր է:

Հիմնական և շրջանառական կապիտալի մէջ տարբերութեան ուրիշ դժեք էլ կան: Հիմնական կապիտալն իւր գործադրութեան ամբողջ ժամանակամիջոցում, մինչև որ անպէտք չի դառնում, ձեւերը չի փոխում արհեստանոցը մնում է արհեստանոց, կացինը—կացին: Շրջանառական կապիտալը արտադրութեան ժամանակ իւր ձեւը փոխում է. մասնաձը դառնում է գործւածք, ածուխն այրում է—թէ այս և թէ այն այլևս նախկին ձևով գոյութիւն չունեն. բանւորական ոյժն էլ, քանի որ միանգամ ծախսուած է, դադարում է կապիտալ լինելուց, նա այլևս կապիտալիստին չի պատկանում և կակապիտալիստը յետագայ արտադրութեան համար հարկադրում է նորից բանւորական ոյժ գնել: Պէտք է խուսափել շրջանառական կապիտալը փոփոխականի և հիմնականը—մշտականի հետ խառնելուց: Կապիտալի մի բաժանումը մասերի ձեռնարկողի հայեցակէտով է արւում, միւսը—բանւոր-կատարողի տեսակէտով: Փոփոխական կապիտալը—բանւորական ոյժի արժողութիւնը—շրջանառական կապիտալի մի մասն է միայն, որովհետև շրջանառականի մէջ նիւթերի արժողութիւնն էլ է պարունակում. իսկ մշտական կապիտալը հիմնականից աւելի շատ է, որովհետև հէնց նիւթերի արժողութեան այս գումարն է պարունակում իւր մէջ:

Արտադրութեան մէջ.

Մշտական կապիտալ. Փոփոխական կապիտալ

Գործիքներ. Արտադր. նիւթեր. Բանւորա. ոյժ

Շրջանառութ. մէջ.

Հիմնական կապիտալ Շրջանառական կապիտալ.

Իմանալով կապիտալի առանձին մասերի շրջանառութեան ժամանակը, կարելի է դուրս բերել ամբողջ կապիտալի շրջանառութեան միջին տևողութիւնը, այսինքն՝ պարզել, թէ մաս-մաս դրւած կապիտալի ամբողջ գուարը, առանձին վաճառումների դէպքում, որքան ժամանակումն է իրրե փող հասնում կապիտալիստի ձեռքը:

Դժւար չէ հասկանալ, որ շրջանառութեան այս միջին ժամանակը կապիտալիստի հաշիւների մէջ ինչ դեր է խաղում. եթէ իւրաքանչիւր շրջանառութեան ժամանակ  $2\%$  շահ է ստացւում, ուրեմն, երեք շրջանառութեան ժամանակ շահի տոկոսը կըլինի  $6\%$ , իսկ հինգիւնը— $10\%$ :

Շահի տարեկան տոկոսի հարցի համար յատուկ նշանակութիւն ունի փոփոխական կապիտալի շրջանառութեան ժամանակը: Թող այդ ժամանակը հաւասար լինի մի ամսի, այնպէս, որ փոփոխական

կապիտալը մի տարւայ մէջ 12 անգամ վերադառայ ձեռնարկողին: Եթէ յաւելեալ արժէքի նորման 100 % է, այսինքն՝ մի բուբլի փոփոխական կապիտալը իւրաքանչիւր անգամ մի բուբլի յաւելեալ արժէք է բերում, այն ժամանակ միևնոյն մի բուբլի փոփոխական կապիտալը ամբողջ տարւայ մէջ 12 անգամից կը բերէ 12 բուբլի, այսինքն՝ 120 % յաւելեալ արժէք: Եւ այսպէս, յաւելեալ արժէքի տարեկան նորման յիշեալ դէպքում ոչ թէ 100 % է, այլ 120 %: Ինչքան փոփոխական կապիտալի շրջանառութիւնն արագ է կատարւում, այնքան յաւելեալ արժէքի տարեկան նորման բարձր է լինում:

Բանւոր դասակարգի համար յաւելեալ արժէքի հասարակ նորման. այսինքն՝ իւրաքանչիւր առանձին շրջանառութեան նորման միայն նշանակութիւն ունի, որովհետև նա ցոյց է տալիս յաւելեալ աշխատանքի յարաբերութիւնը անհրաժեշտ աշխատանքի հետ, ցոյց է տալիս, թէ բանւորի համար որքան անօգտակար է ծախել իւր բանւորական ոյժը: Իսկ կապիտալիստի համար յաւելեալ արժէքի տարեկան նորման է կարևոր, որովհետև նրա նպատակն է, որքան կարելի է, իւր փողին մեծ տարեկան տոկոս ստանալ. և յաւելեալ արժէքի տարեկան նորման ցոյց է տալիս, թէ նրա համար որքան շահաւէտ է բանւորական ոյժ գնելը:

Ինչպէս պարզեց, առանձին շրջանառութեան համար եղած յաւելեալ արժէքի նորման հասարակական արտադրութեան բոլոր ճիւղերում հաւասարութեան է ձգտում: Մինչդեռ զանազան արտադրութիւնների մէջ կապիտալի միջին շրջանառութիւնը խիստ տարբեր է, ուստի և յաւելեալ արժէքի տարեկան նորման միատեսակ չէ: Այսպէս, եթէ մանելու գործի մէջ փոփոխական կապիտալի շրջանառութեան միջին տևողութիւնը 1 ամիս է, իսկ կաշու գործի մէջ — 2 ամիս, այն ժամանակ յաւելեալ արժէքի 100 % նորմայի դէպքում՝ սա մանելու գործի համար 1200 % տարեկան նորմա է կազմում, իսկ կաշու գործի համար — 600 %:

Նախընթացի մէջ ցոյց է տրւած, որ, նոյնիսկ յաւելեալ արժէքի միատեսակ նորմայի դէպքում, շահի նորման միատեսակ չէ, եթէ կապիտալի կազմը, նրա մշտական և փոփոխական մասերի յարաբերութիւնը տարբեր է: Այժմ սրան պէտք է աւելացնել, որ յաւելեալ արժէքի տարեկան նորման էլ միատեսակ չի լինում, եթէ փոփոխական կապիտալի շրջանառութեան ժամանակը զանազան է: Այստեղից կթւար, թէ այսպիսի եզրակացութիւն դուրս կգայ, որ շահի տարեկան նորման զանազան ձեռնարկութիւնների մէջ պէտք է տարբեր լինի:

Սա կարելի է մասնաւոր օրինակների վրայ հետևեալ կերպով բացատրել: Տւած է երկու կապիտալիստական ձեռնարկութիւններ — շաքարի և բամբակի:

Ձեռնարկութիւնների №	Մշտական կապիտալը	Փոփոխական կապիտալը	Ցաւելեալ արժէքի նորման	Փոփոխական կապիտալի շրջանառութեան թիւը	Ցաւելեալ արժէքի տարեկան նորման	Ցաւելեալ արժէքի տարեկան քանակութիւնը	Շահի տարեկան նորման
1	900 բուբ.	100 բուբ.	100 %	3 շրջանառ.	300 %	300 բուբ.	30 %
2	950 »	50 »	100 %	2 » »	200 %	100 »	10 %

Արդեօք իրականութեան մէջ իրերի այսպիսի դրութիւնը թոյլատրելի է: Ո՛չ. որովհետև նա հակասում է կապիտալիստական հասարակութեան մէջ՝ տիրապետող մրցման օրէնքներին: Երբ իրակաշնութեան մէջ արտադրութեան մի ձիւղի ձեռնարկութիւններն աւելի շահաւէտ են դուրս գալիս, քան միւսի ձեռնարկութիւնները, այն ժամանակ կապիտալները՝ երկրորդից առաջինին անցումն է կատարւում. առաջինի մէջ արտադրութեան ընդարձակումն է կատարւում և շուկայում նրա արդիւնքների առաջարկութիւնն աճում է. երկրորդի մէջ արտադրութեան կրճատումն է կատարւում և նրա արդիւնքների առաջարկութիւնն իջնում է. այն ժամանակ արտադրութեան առաջին ձիւղի մէջ գներն իջնում են, երկրորդի մէջ — բարձրանում. իսկ դրա հետ միասին թէ՛ այս և թէ՛ այն ձեռնարկութիւնների շահաւէտութիւնը, նրանց շահի նորման փոխւում է: Հետևապէս, մրցման ոյժով գների տեղափոխութիւնն այնպիսի ուղղութեամբ է կատարւում, որ աւելի շահաւէտ ձեռնարկութիւնների համար շահաւէտութիւնը ցածրանայ: Այսպիսով՝ շահի տարեկան տոկոսը ձգտում է հասասարել: Այդպէս է ազդում նրա վրայ կապիտալների մրցումը: Ընդհանրապէս շուկան անհասարակութիւն չի տանում. կապիտալիստական հասարակութեան մէջ նա ընդհանուր, տարեբային հաւասարիչի դեր է կատարում:

Եւ այսպէս, մրցման օրէնքներով, կապիտալի վրայ եկած շահի տարեկան տոկոսը որ և է հասարակութեան մէջ ձգտում է հաւասարութեան և տատանւում է մի միջին մեծութեան շուրջը:

Դժուար չէ համոզել, որ այդպիսի օրէնքի գորութեամբ պարանքներից մի քանիսը իրանց արժողութիւնից շարունակ մի քիչ բարձր են ծախւում, մի քանիսը — նրանից ցածր: Սա յարմար կլինի քննել նախկին օրինակի մէջ, պարզութեան համար ենթադրելով, որ ամբողջ հասարակութեան մէջ միայն երկու կապիտալիստներ կան (իբրև օրինակ, քանի կապիտալիստ էլ որ վերցնենք, խնդիրը չի կարող փոփոխել):

Ձևնարկումների №	Մշտական կապիտալ	Փոխարկի կոտորակներ	Նույնի	Ցուցանիշները կապիտալի հարաբերակցությունը	Մի տարում արտադրված ապրանքների քանակը	Մի տարում արտադրված ապրանքների արժեքը	Մի տարում արտադրված ապրանքների արժեքի փոփոխությունը	Շահի տարբերությունը
1	900 ռ.	100 ռ.	300%	300 ռ.	1300 ռ.	1200 ռ.	20%	Ապրանքի գինը արժողութիւնից 100 ռուբլով ցածր է:
2	950 »	50 »	200%	100 »	1100 »	1200 »	20%	Ապրանքի գինը արժողութիւնից 100 ռուբլով բարձր է:

Եւ այսպէս, ապրանքը ծախուում է, միջին հաշուով, ոչ թէ աշխատանքային արժողութեան համաձայն, այլ նրանից բարձր կամ ցածր: Ինչ որ շահուում է միքանի ապրանքների գնից, նոյնքան փաս է ըստացուում ուրիշ ապրանքների գնից: Միայն, ընդհանուր առմամբ և միջին հաշուով, ոչ թէ առանձին ապրանքի, այլ հասարակական արդիւնքի համար շուկայի գները լիովին համապատասխանում են արժողութեանը:

Իրանց արժողութեանը ոչ լիովին համապատասխան ապրանքների վաճառումը կապիտալիստական արտադրութեան առանձնայատկութիւնն է: Փոխանակական տնտեսութեան ժամանակ, բայց ոչ կապիտալիստական, այլ մանր-բուրժուական (որն իսկապէս մաքուր ձևով երբէք դոյութիւն չի ունեցել), անմիջական արտադրողն էր վաճառող հանդիսանում. այսպէս, թէ այնպէս, նա փոխանակելիս պէտք է համակերպւէր արդիւնքների արժողութեանը. հակառակ դէպքում, առանձին տնտեսութիւնները, ինչպէս ցոյց տրւեց, անկման են դիմում և արտադրութիւնը կրճատում են և այս շնորհիւ, պահանջի և առաջարկութեան մէջ առաջացած փոփոխութիւնները ձգտում են արժողութիւնների ու գների մէջ համապատասխանութիւն առաջ բերել: Այն ժամանակ ապրանքի շուկայի միջին գինը կարող էր յարմարել նրա արժողութեանը:

Այդպէս չէ կապիտալիստական հասարակութեան մէջ. ապրանքը չի ծախում ապրանք արտադրողը, այլ մի ուրիշ կապիտալիստ: Կապիտալիստների համար հասարակական-աշխատանքային եռանդի հաւասար քանակութիւնների փոխանակութիւնն անհրաժեշտութիւն չի հանդիսանում, նրանց համար շահն է կարևոր: Շահի տոկոսը պէտք է միակերպ լինի, եթէ նոյնիսկ շուկայի գինը արժողութիւնից էլ շեղւէր:

Շահի տարեկան տոկոսին վերաբերեալ ամբողջ բացատրութիւնը վերաբերում է ոչ միայն զուտ արդիւնաբերական, այլ և առևտրական

ու կրեդիտային ձեռնարկութիւններին: Ինչքան էլ աննշան լինի այդպիսի ձեռնարկութիւնների փոփոխական կապիտալը, ինչքան էլ աննշան լինի նրանց մէջ ճշտիւ արտադրւած յաւելեալ արժեքի գումարը, նրանք պէտք է շահի սովորական տարեկան տոկոս տան կամ անշահաբեր թողնւին. իսկ կապիտալները հասարակական արտադրութեան միւս ճիւղերը կանցնեն:

Ասենք, արտադրութեան տարբեր ճիւղերում կարող են շահի տարեկան տոկոսի բարձրութեան մէջ որոշ տարբերութիւններ պահպանւել: Այս տարբերութիւնները նախ և առաջ կախած են այն հասարակական արդիւնքից, որ կապիտալիստի կազմակերպչական գործունէութիւնը միքանի ձեռնարկութիւնների մէջ աւելի բարդ ու դժւար է հանդիսանում, ուրիշների մէջ՝ պակաս: Իւր կազմակերպչական գործունէութիւնը վարձու բանուորների վրայ դնելով, կապիտալիստը պէտք է շահի միջին փոքրացած տոկոսով բաւականանայ: Նման պատճառով, կապիտալի կրեդիտային տոկոսն էլ սովորաբար ցածր է սովորական արդիւնաբերական ձեռնարկութեան շահից: Եթէ արդիւնաբերական ձեռնարկութեան մէջ ես իմ 100 ռուբլուց տարեկան 7 ռուբլի շահ ստանայի, այն ժամանակ, այս 100 ռուբլին արդիւնաբերական կապիտալիստին փոխ տալով, 5 ռուբլով կբաւականանայի և կազատէի այն ահագին հոգսերից, որոնց հետ կապւած է արդիւնաբերական գործը:

Շահի բարձրութեան մէջ տարբերութիւններ ստեղծող միւս պայմանը գործը վարելու հետ կապւած բիսկի աստիճանն է: Որպէսզի կապիտալիստը հարկադրւած լինի անսովոր կերպով մեծ բիսկ անել, շահ պէտք է սովորականից բարձր լինի: Այս բանը կրեդիտային ձեռնարկութիւնների օրինակի վրայ կարելի է աւելի հեշտ տեսնել: Արդիւնաբերական շահի սովորական 7%-ի դէպքում՝ կրեդիտային կապիտալիստը համաձայնեց, օրինակ՝ 100-ից 5% վերցնել միայն այն դէպքում, եթէ պարտապանը բաւականացուցիչ գրաւական կներկայացնէ. իսկ եթէ այդպիսի գրաւական չի գտնւի, փոխատւի համար 5%-ն արդէն անբաւարար վարձատրութիւն է, որովհետեւ նա բիսկ 5%-ն արդէն անբաւարար վարձատրութիւն է, որովհետեւ նա բիսկ է խտուն, այդպիսի դէպքերում, 6, 8, 10% նոյնիսկ աւելի կարող է վերցնել:

Որ և է հասարակութեան համար տարեկան շահի սովորական նորման որոշուում է նրա կապիտալների և մի տարւայ մէջ արտադրւած յաւելեալ արժեքի ամբողջ գումարով: Եթէ կապիտալների գումարը 1,000 միլիոն է, իսկ յաւելեալ արժեքը—100 միլիոն, շահի միջին նորման կլինի 10%: Ասենք, այստեղ պէտք է մի ուղղում անել, ահա թէ ինչ մտքով. յաւելեալ արժեքի մի մասը պետութիւնն է վերցնում իրեն հարկեր և տուրքեր. միւս մասը, ինչպէս յետոյ ցոյց կըտրւի, հո-

զատէրն է վերցնում, իբրև բննտա: Թող այս երկու մասերը 30 միլիոն կազմեն. այն ժամանակ կապիտալիստները ամբողջ շահը 70 միլիոն կլինի, իսկ միջին տարեկան նորման--7 %:

Վերադառնալով մասնաւորապէս ուսումնասիրած կապիտալիզմի շրջանին—մանուֆակտուրայի էստրային—պէտք է նկատել, որ այն ժամանակ շահի նորման շատ բարձր էր, ընդհանրապէս, տասնեակ տոկոսներով էր չափւում (յատուկ բարենպաստ պայմաններում հասնում էր 300-ից մինչև 400%~ի): Սա այս կերպ պէտք է բացատրել. քանի աշխատանքը ձեռքի աշխատանք է մնում, բանւորական ոյժի վրայ արած ծախսերը, այսինքն՝ փոփոխական կապիտալ, ամբողջ կապիտալի խիստ աչքի ընկնող մասն է ներկայացնում. իսկ որովհետև շահը փոփոխական կապիտալից է առաջանում, ուստի, ինչքան այս վերջինը շատ լինի, այնքան շահի տոկոսը բարձր կլինի: Այս պատճառով, թէև մանուֆակտուրային ձեռնարկութիւնների մէջ յաւելեալ արժէքի նորման այնքան էլ բարձր չէ, բայց շահի տոկոսը բաւականին բարձր է:

Սակայն շահի ընդհանուր մասսան ամենևին չի հասնում այնպիսի հսկայական քանակութիւնների, ինչպէս զարգացած մեքենայական կապիտալիզմի շրջանում. կապիտալները համեմատաբար դեռ փոքր էին, իսկ փոքր կապիտալից ստացւած մեծ տոկոսը դեռ նշանաւոր դումար չի ներկայացնում:

բ) Հողային թեմա

Մարդկութեան կեանքի ֆէօդալական շրջանում, երբ երկրագործութիւնն արտադրութեան հիմնական տիրապետող ձևն էր ներկայացնում, հողատիրութիւնն անբախտելի կերպով կապւած էր բնութեան դէմ վարած հասարակական կռիւ կազմակերպչական դերի հետ: Հողատէրֆէօդալի եկամուտը (ճորտական աշխատանքը և հողային տուրքը) անհրաժեշտ հետևանք էր այս կազմակերպչական գործունէութեանը և միևնոյն ժամանակ անհրաժեշտ պայման՝ այն բանի համար, որ հողատէրն իրագործէր իւր հանրօգուտ դերը:

Փոխանակական տնտեսութեան զարգացումը փոխում է հողատիրական եկամուտի բնաւորութիւնն ու նշանակութիւնը: Ըստ ձևի՝ փոփոխութիւնը նրանումն է կայանում, որ եկամուտն սկսւում է ոչ թէ բնական տեսքով, այսինքն՝ ոչ թէ ուղղակի իբրև արդիւնքներ ըստացել, այլ նախապէս փող է դառնում: Ըստ էութեան, փոփոխութիւնը նրանումն է կայանում, որ այս եկամուտն աւելի քիչ է կապւում հողատիրոջ կազմակերպչական արտադրական գործունէութեան հետ, որովհետև փոխանակական յարաբերութիւնների սիստեմի մէջ մտած ֆէօդալը հետզհետէ աւելի մեծ չափերով է ազատում իրան այդպիսի գործունէութիւնից:

Այդ չի նշանակում, որ հողատիրոջ եկամուտը սկսւում է փոքրանալ: Ընդհակառակը, ինչպէս պարզեց, իսկապէս զարգացող փոխանակու-

թեան ազդեցութեան տակ է ֆէօդալական շահագործութիւնը դաւլի կերպով զօրեղանում և առաջ բերում, սկզբում, գիւղացիներին՝ հողի հետ կապելը և յետոյ նրանց լիակատար կամ մասնակի հողազրկութիւնը:

Երբ որ ճորտական աշխատանքն և հողային տուրքը վերանում են, իսկ ստորագրւած գիւղացին դառնում է մասամբ ազատ մանր սեփականատէր-հողատէր և մասամբ կապալառու, այն ժամանակ նրա ֆէօդալական կազմակերպչական դերից համարեա ոչինչ չի մնում: Ասենք, կալւածատէրն իւր հողը միշտ չի տալիս կապալով, իսկ շատ անգամ վարձու բանւորների օգնութեամբ իւր հողի վրայ սեփական տնտեսութիւն է վարում. բայց անտեսութեան տիպն այն ժամանակ այլ ևս բոլորովին կապիտալիստական է, նման չէ արտադրութեան ֆէօդալական կազմակերպութեանը: Հողատիրոջ եկամուտը նման է դառնում կապիտալիստի «շահին». հողը փոխւում է կապիտալի, իսկ որ և է հասարակութեան մէջ արտադրւած յաւելեալ արժէքի ընդհանուր գումարից պէտք է հողի տէրն ստանայ իւր բաժինը, ինչպէս իւրաքանչիւր ուրիշ կապիտալիստ: Միայն թէ այս բաժնի չափերը մի քիչ աւելի տարբեր պայմաններով են որոշւում, քան ուրիշ կապիտալիստների համար:

Հողատիրութեան կապիտալիստական ձևերի զարգացումը որոշ աստիճանականութեամբ էր կատարւում: Ֆէօդալական յարաբերութիւնների բեկորներն Անգլիայում միայն XVIII դարու կիսում անյայտացան, իսկ Երոպական միւս երկրներում երկար պահւում էին. — Ֆրանսիայում՝ մինչև XV III դարու վերջը, Գերմանիայում և Աւստրիայում՝ մինչև վերջին ժամանակներն և այլն:

Ֆէօդալիզմի մնացորդները, տարբեր երկրների և տարբեր էստրատիաների համար, ըստ ձևի խիստ զանազանակերպ են: Երբեմն նրանք յանգում են բնական-տնտեսական կապալին. այս կարգին է վերաբերում առաջին՝ նախկին ճորտական աշխատանքից առաջացած՝ բանելով հատուցանելու (отработка) կապալը, երկրորդ՝ կիսատիրութիւնը (половничестве), որ նման է ֆէօդալական հողատուրքային յարաբերութիւններին (կապալառու-կիսատէրը տալիս է հողի տիրոջն իւր արդիւնքի որոշ մասը, ըստ մեծի մասին, կէսը, շատ անգամ և աւելի): Երբեմն, պատմական յատուկ պայմանների շնորհիւ, զարգացած կապիտալիստական յարաբերութիւնների մէջ երկար ժամանակ պահւում են ճորտական համայնքի բեկորները (սովորաբար պետութիւնն է համայնքին պահպանում այն միևնոյն պատճառների շնորհիւ, ինչով որ առաջ ֆէօդալն էր պահպանում նրան. — զանազան տուրքեր, հարկեր զանձեղու համար աւելի յարմար է գործ ունենալ համայնքի հետ, որի անդամները կապւած են փոխադարձ երաշխաւորութեամբ, քան թէ առանձին տնտեսութիւնների):

Տնտեսական զարգացումը նախկին յարաբերութիւնների մնացորդները տարբեր ճանապարհներով է վերացնում: Ինչպէս արդէն առաջ ցոյց տրեց, կալւածատէրը, յանուն իւր սեփական շահերի, դրամական

տնտեսութեան զարգացման հետ միաժամանակ, սկսում է գիւղացիական տուրքերը բնականից դրամականի փոխել. ապա, յանուն իւր շահերի, խիստ շատ դէպքերում, ենթարկւած ժառանգական կապալառուներին փոխարինում է ազատ կապալառուներով և այլն: Ուր որ անցելի մնացորդները չափազանց երկար են պահպանուում, այնպէս որ զգալի կերպով ճնշում են զարգացումը, այնտեղ նրանք, սովորաբար, օրէնսդրական ակտերի օգնութեամբ են ոչնչացուում: Այստեղ կարիք չկայ աւելի մանրամասնօրէն քննել այդպիսի փոփոխութիւնների պատմութիւնը: Յամենայն դէպս, նրանք կատարուես էին այն ամեն տեղերում, որտեղ կատարուում էր փոխանակական հասարակութեան զարգացումը:

Բննտայի էութիւնն ու նրա փոփոխութիւնների օրէնքներն՝ ամենից աւելի պայծառ երևան կզան այն ժամանակ, երբ կապիտալիստական հասարակութեան հողային յարաբերութիւնների զարգացած ձևերի վրայ ռեսուրսասիրենք նրանց: Աւելի թերի աւարտած յարաբերութիւնն աւելի դիւրին է հետազօտել, հիմնւած լինելով արդէն քիչ թէ շատ աւարտած յարաբերութիւնների մասին ունեցած ծանօթութեան վրայ:

Կապիտալ ունեցող ձեռնարկողը կամենում է մի ձեռնարկութիւն կազմակերպել—արդիւնաբերական, առևտրական թէ երկրագործական—այդ միևնոյնն է: Ոչ մի ձեռնարկութիւն չի կարող տարածութիւնից դուրս կազմել. հետևապէս, ձեռնարկողը պէտք է մի յարմարաւոր հողամաս գրաւէ: Բայց քաղաքակիրթ կապիտալիստական երկրում անտէր հող չկայ:—Պէտք է գնել հողը կամ կապալով վերցնել, որորհետև հողը ձրի չեն գիշեր:

Հետևապէս, ձեռնարկողը գնում կամ կապալով է վերցնում, ենթադրենք, բոլորովին անմշակ, իւր մէջ մարդկային աշխատանքի ոչ մի ատոմ չպարունակող հողի կտոր, որ արժողութիւն չունի: Ուրեմն այս դէպքում ձեռնարկողն ի՞նչ բանի համար է վճարում:—Որ ես ե հողի տարածութեան վրայ հասարակական աշխատանքի գործադրութեան հնարաւորութեան համար: Այստեղ փոխանակութիւնը ոչ թէ աշխատանքային արժողութեան օրէնքին, այլ մենավաճառութեան օրէնքին է ենթարկուում: Եթէ հողը մենավաճառութեան առարկայ եղած չլինէր, կապիտալիստը հարկ չէր ունենայ հողաբաժնի վրայ հասարակական աշխատանք գործադրելու հնարաւորութեան համար վճարել: Արտադրւած գործունէութեան հասարակ հնարաւորութեան համար վճարքի մէջ՝ կապիտալիստական յարաբերութիւնների համար ոչ մի անսովոր բան չկայ. չէ՞ որ հէնց ինքը ձեռնարկողը յաւելեալ արժէք է ստանում այն հիմունքով, որ բանւորին հասարակական արտադրութեանը մասնակցելու հնարաւորութիւն է տալիս:

Վճարքի ձևը—գնումը կամ կապալը—մեծ նշանակութիւն չունի

յիշեալ խնդրի համար: Թող հողի կապալի վճարքը 1,000 ռուբլի լինի. եթէ երկրագործը յիշեալ հողաբաժինը ծախէ, նա դրա համար մի այնպիսի գումար կվերցնէ, որն առանց նեղութեան ու ըրիկի 1,000 ռուբլու հաւասար եկամուտ կտայ նրան: Եթէ սովորական կրեդիտային լուծույթ տարեկան 4 % է կազմում, ուրեմն հողաբաժնի գնման արժէքը 25,000 ռուբլի կանէ, որովհետև այս գումարը տիրոջը 1,000 ռուբլի եկամուտ է բերում այն միևնոյն յարմարութիւններով, ինչ որ հողի բննտայի ձևի մէջ կայ: Ընդհանրապէս, հողի գնման արժէքը, ինչպէս ընդունւած է ասել, կապիտալ զարձած բննտայ է ներկայացնում, այսինքն՝ բննտայ, որ փոխարինւում է կապիտալով, որ նրան հաւասար կրեդիտային շահ է տալիս: Կապիտալը հող գնելու վրայ ծախսելով, ձեռնարկողն այս ծախսը ձեռնարկութեան անհրաժեշտ ծախսերի շարքն է դասում և նրանից սովորական շահ պէտք է ըստանայ. ուրիշ լուծույթ, հողատէր դառնալով, նա պէտք է առաջուց հողի բննտայն էլ ստանայ:

Սակայն բննտայն հողատիրոջը տուող կամ իրան վերցնող ձեռնարկողը ումիթց է ստանում բննտայն, եթէ հողը հէնց իրան է պատկանում: Ակներև է, որ իւր գնողներից, արդիւնքների գներից: Այսպիսով, բացի արտադրութեան սովորական ծախսերից ու սովորական շահից, արդիւնքի գինը բննտայն էլ պէտք է ծածկէ, այլապէս՝ ձեռնարկութիւնը կապիտալիստի համար ձեռնտու, շահաւէտ չի լինի: Ենթադրենք, թէ հանքագործը գործիքների, նիւթերի ու բանւորական ոյժի համար ծախսեց 750,000 ռուբլի, ըստ որում արտադրւած է մէկ միլիոն փութ չուզուն. շահի սովորական նորման տարեկան 10 % է, իսկ հանքի և գործարանի շէնքի հողերի բննտայն—25,000 ռուբլի. այդպիսի դէպքում արդիւնքը պէտք է ծախել 750,000 + 75,000 + 25,000 = 850,000 ռուբլով, փութը 85 կոպէկով, որպէսզի ձեռնարկութիւնը կարողանայ արդիւնաւէտ համարել:

Այսպէս է գործը առանձին կապիտալիստի, առանձին հողատիրոջ հայեցակէտով: Իսկ ի՞նչպէս կներկայանայ գործը ամբողջ հասարակական տնտեսութեան հայեցակէտով:

Հողատէրը ցանկանում է, որ բննտայն հնար եղածին չափ բարձր լինի. իսկ կապիտալիստը ձգտում է հողին հնար եղածին չափ քիչ վճարել—սրա մէջն է կայանում նրանց շահերի հակադրութիւնը: Այստեղից էլ առաջանում է կռիւ բննտայի համար: Ինչպէս միշտ նման դէպքերում, այնպէս էլ այստեղ, կռիւ ելքը որոշում է ոյժերի փոխադարձ յարաբերութեամբ, հողատիրոջ՝ կապիտալիստի վրայ ունեցած և կապիտալիստի՝ հողատիրոջ վրայ ունեցած իշխանութեան աստիճանով: Եթէ մի երկրում շատ ազատ հողեր կան, որոնց նրանց տէրերն ուզում են վիճել որ և իցէ ձեռնարկութեան—երկրագործական կամ արդիւնաբերական,—այն ժամանակ կապիտալիստները կռիւ բա-

րենպատ պայմաններում են լինում. հողատէրերը խիստ կարիք ունեն նրանց. հողային շուկայում նրանք մրցում են իրար հետ և չեն կարողանում մեծ ընտա պահանջել: Ընդհակառակը, եթէ ձեռնարկութեան նպատակների համար պէտքական ազատ հողեր համեմատաբար շատ չկան, այն ժամանակ կապիտալիստներն աւելի են կարիք ունենում հողատէրերին, աւելի զօրեղ են մրցում իրար հետ և հարկադրում են աւելի բարձր ընտա վճարել:

Այդպիսի պայմաններում ակներև է, որ արտադրութեան ընդարձակելու և կապիտալիստական ձեռնարկութիւններից ազատ, բայց սրա համար պէտքական հողի տարածութեան փոքրանալու չափով պէտք է աճի հողային մենավաճառների՝ ձեռնարկողների վրայ ունեցած իշխանութիւնը, պէտք է բարձրանայ ընտան: Այս բարձրանալու սահմանը իւրաքանչիւր որոշ մոմենտում կախած է կուլիմէջ եղած ոյժերի ու շահերի անշուքիւնից: Իսկապէս, եթէ որոշ երկրի հողատէրերը սկսում են չափազանց բարձր հողի վարձ պահանջել, այսինքն՝ խիստ ուժեղ կերպով կտրում են կապիտալիստների շահը, այն ժամանակ կապիտալիստները միջոցներ են որոնում իրանց կապիտալներն ուրիշ երկրներ փոխադրելու, մի բան, որ շատ անգամ նկատուում է իրականութեան մէջ: Իսկ եթէ այս միջոցն անիրագործելի է, այն ժամանակ պէտք է արտադրութեան զարգացման մէջ դանդաղութիւն առաջանայ, որովհետև կապիտալիստների համար կուտակելու հնարաւորութիւնը պակասում է: Մրցման պայմաններն առանձնապէս դժարին կդառնան, այնպէս որ աւելի մանր ձեռնարկողների խորտակումը կփութանայ նրանց կապիտալները քիչ թւով խոշոր կապիտալիստների ձեռքերում հաւաքելով, մի աւելի նշանաւոր ոյժ կկազմեն, քան առաջ, որովհետև այս ոյժն աւելի քիչ է մաս-մաս եղած. և հողատէրերը, որոնք դիւրութեամբ էին յարմարում աւելի թոյլ ձեռնարկողներին, հարկադրուած են լինում զիջողութիւններ անել աւելի զօրեղներին:

Այսպէս, ուրեմն, որ և է հասարակութեան մէջ հողատիրոջ ստացած ընտայի ընդհանուր գումարը հետևեալ երկու պայմաններից է կախւած. նախ՝ երկրի մէջ արտադրւած յաւելեալ արժէքի ընդհանուր գումարից, որ ենթակայ է հողատէրերի ու ձեռնարկողների մէջ բաժանւելուն. երկրորդ՝ ընտայի ու շահի կուում երկու դասակարգերի ոյժերի պատմականապէս դասաւորւած անշուքիւնից: Առաջին պայմանը, ակներև է, որ արտադրութեան զարգացման ընդհանուր մակերևոյթով է որոշուում. բայց դրանով հէնց երկրորդ պայմանն էլ է որոշուում, ինչպէս երևում է այն փաստից, որ արտադրութիւնը ընդարձակողների կողմից ցոյց տւած հողի պահանջի աճումը հողատէրերի՝ ձեռնարկողների վրայ ունեցած իշխանութիւնը մեծացնում է, իսկ մանր ձեռնարկութիւնների խոշորներով փոխարինելը հակառակ ազդեցութիւն է ունենում:

Ենթադրենք, որ մի երկրի կապիտալի ընդհանուր գումարը 1,200 միլիոն ժամ է, որ համապատասխանում է 120 միլիոն բուրլու. յաւելեալ արժէքի տարեկան գումարը—120 միլիոն ժամ, որ իբրև փող 12 միլիոն բուրլի է անում: Մրանից հողատէրերը իրանց են վերցնում 3 միլիոն բուրլի, ձեռնարկողներին մնում է 9 միլիոն: Այն ժամանակ շահի նորման տարեկան դուրս է գալիս  $7\frac{1}{2}\%$  (120 միլիոնից՝ 9 միլիոն) և ամբողջ երկրի համար ընտայի նորման  $2\frac{1}{2}\%$  է լինում (120 միլիոնից՝ 3 միլիոն): Արտադրութեան աճելու հետ կապիտալն աճում է, օրինակ՝ մինչև 300 միլիոն բուրլի. յաւելեալ արժէքը, ենթադրենք, 25 միլիոն է. հողատէրերը, օգտուելով իրանց՝ կապիտալիստների վրայ ունեցած իշխանութեան աճելուց, որով այժմ առաջանից աւելի դժար են իրանց համար ձեռնարկութեան հող գտնում, սրանից վերցնում են ամբողջ 10 միլիոն, թողնելով ձեռնարկողներին 15 միլիոն. շահի նորման  $5\%$  է, ամբողջ երկրի համար ընտայի նորման— $3\frac{1}{3}\%$ : Այնուհետև արտադրութիւնը դարձեալ աճում է.—կապիտալի գումարը—800 միլիոն բուրլի, յաւելեալ արժէքը—60 միլիոն. բայց կապիտալիստներին յաջողեց կապիտալների գործադրութեան համար նոր ասպարէզ գտնել. օրինակ՝ երկրում գաղութներ հիմնեց, ուր երկրագործական ու արդիւնաբերական ձեռնարկութիւններին յարմար ազատ և արժան հող շատ կայ: Այն ժամանակ հողատէրերը ստիպւած են լինում աւելի զիջող լինել. նրանք վերցնում են յաւելեալ արժէքի ընդհանուր գումարի արդէն ոչ թէ  $\frac{2}{5}$ , այլ  $\frac{1}{3}$  մասը միայն, այսինքն՝ 20 միլիոն բուրլի. շահը—40 միլիոն բուրլի, շահի նորման— $5\%$ , ընտայի ընդհանուր նորման— $2\frac{1}{3}\%$ :

Այժմ անցնենք այն խնդրին, թէ ինչ եղանակով է ընտայի ընդհանուր գումարը բաշխում առանձին հողատէրերի մէջ:

Այս դէպքում պէտք է ի նկատի ունենալ տարբեր հողաբաժինների անմիատեսակութիւնը. միքանիսի վրայ աշխատանքի գործադրութիւնն աւելի արտադրողական է, ուրիշների վրայ—պակաս: Այդ տարբերութիւնը յատկապէս պարզ հանդէս է գալիս հանքային արդիւնաբերութիւնը յատկապէս պարզ հանդէս է գալիս, որ մի հողաբաժնի մէջ հունձը մէկին հինգ է, իսկ միւսի մէջ միևնոյն կապիտալը ծախսելով և միևնոյն աշխատանքով՝ մէկին տասը. հանքային գործի մէջ մի հողաբաժնում հանքը մետաղով աւելի է հարուստ, միւսում—պակաս և այլն: Բայց և արդիւնագործութեան մէջ էլ պակաս նշանակութիւն չունի, օրինակ՝ ջրի մօտիկութիւնը, որ արտադրութեան համար անհրաժեշտ է, կամ գետի և աւելի հոսանքի շարժողական ոյժը գործադրելու հնարաւորութիւնը: Այնուհետև, բոլոր գուտ կապիտալիստական ձեռնարկութիւնների մէջ, աշխատանքի արտադրողականութեան նկատմամբ, խիստ կարևոր է հանդիսանում շուկաների հեռաւորութիւնը, ուր գընւում են նիւթեր և արտադրւած ապրանքներ և նոյնպէս այդ շուկաները

տանող յարմար կամ անյարմար ճանապարհները գոյութիւնը: Որովհետեւ փոխադրութեան արժողութիւնը մտնում է արդիւնքի արժողութեան մէջ և եթէ փոխադրութիւնը սովորականից աւելի պակաս աշխատանք է նստում, ուրեմն աշխատանքի արտադրողականութիւնը յիշեալ ձեռնարկութեան մէջ միջակից աւելի բարձր է դուրս գալիս:

Եւ այսպէս, մեր առաջ կայ, ենթադրենք, երկրագործական միա տեսակ ձեռնարկութիւնների մի շարք, որոնք անմիակերպ բնական պայմանների մէջ են տարւում: Մի հողաբաժնում արտադրութեան միջոցների և բանւորական ոյժի վրայ 10,000 ռուբլի ծախսելիս՝ 10,000 փութ ցորեն է ստացւում—այս՝ ամենավատ յատկութիւն ունեցող հողաբաժին է. երկրորդից նոյն ծախսերով 15,000 փութ ցորեն է ստացւում. երրորդից, սր յատկութեամբ ամենալաւն է—20,000 փութ: Շահի սովորական տարեկան տոկոսը, ենթադրենք, թէ 5% է: Ամենավատ հողաբաժնի վրայ տնտեսութիւն վարող ձեռնարկողը պէտք է իւր 5%-ը ստանայ, այսինքն՝ տարեկան 500 ռուբլի շահ, այսպէս՝ նա ձեռնարկութիւնը անշահաւէտ կհամարէր և կաշխատէր իւր կապիտալն արտադրութեան մի ուրիշ ձեւի մէջ փոխադրել: Բայց որովհետեւ հողը նրան չի պատկանում և ձրի էլ չի կարող ստանալ, ուրեմն նա ստիպւած է, բացի այդ, հողատիրոջը դեռ որոշ բնուտա էլ վճարել, ի հարկէ, ոչ այնքան մեծ, որովհետեւ այդ հողաբաժինը միւսներից աւելի վատ է. այսպէս՝ ձեռնարկողն իւր կապիտալը ուրիշ երկիր կփոխադրէ, գտնելով, որ ապրանքները փոխադրելու ծախսերը բնուտայի աւելորդից աւելի պակաս են դուրս գալիս: Թող բնուտան 300 ռուբլի լինի: Ուրեմն ձեռնարկողը պէտք է արդիւնքի գնի մէջ ընդամենը 10,800 ռուբլի ստանայ (10,000 ռ. արտադրութեան ծախսերը, 500 ռ. շահ և 300 ռ. բնուտա): Հետևապէս, նա պէտք է ցորենի փութը 1 ռ. 8 կոպէկով ծախէ, սրանից արժան նա չի կարող ծախել—այն ժամանակ նա պէտք է գործը թողնէ. աւելի թանկ ծախել, ընդհանրապէս ասած, նրան չի յաջողւում—այն ժամանակ նրա շահը սովորականից բարձր կլինէր: Ակնհայտ է, որ որ և է հասարակութեան մէջ ցորենի շուկայի գինը հասարակութեան է մօտաւորապէս 1 ռ. 8 կոպէկի: Եթէ գինն այս նորմայից ցածր է, երկրագործութիւնը կրճատւում է և, շնորհիւ իջած առաջարկութեան, հացի գինը բարձրանում է. եթէ գինը բարձր է, երկրագործութեան մէջ շահը սովորականից շատ է լինում, կապիտալները ձգտում են դէպի այս ձեւը և հողատէրը, օգտւելով նրանց մրցումից, բնուտան բարձրացնում է այնպէս, որ շահը իջնի սովորականին, օրինակ, վերցնում է 500—1,000 ռուբլի:

Ամենավատ հողաբաժնից ստացւած բնուտան կոչւում է բացարձակ բնուտա: Հետևապէս, ցորենի սովորական շուկայի գինը համապատասխանում է ամենավատ բնական պայմաններում կատարւած արտադրութեան ծախսերին, որոնց մէջ կապիտալիստները դեռ տանում

են գործը, գումարած դրա վրայ սովորական շահը և գումարած բացարձակ բնուտան: Ակնհայտ է, որ այս միայն ցորենին չի վերաբերում, այլ և բոլոր միւս արդիւնքներին: Մեր ժամանակներում միայն արդիւնաբերութեան մէջ բնական պայմանների նշանակութիւնն աւելի պակաս մեծ է, քան երկրագործութեան մէջ նրա յետամնաց տեխնիկայով, հողից ու կլիմայից ունեցած զօրեղ կախումով և մեծ տարածութեան հողերի պահանջով:

Շուկան վատ և լաւ պայմաններում արտադրւած արդիւնքների մէջ ոչ մի տարբերութիւն չի դնում, գինը միեւնոյնն է, մեր օրինակում 1 ռ. 8 կոպէկ. երկրորդ հողաբաժնի մէջ արտադրւած 15,000 փութը, ուրեմն, պէտք է 16,200 ռուբլով ծախել, այսինքն՝ սովորական ծախսերից ու շահից բացի, կմնայ 5,700 ռուբլի, որ հողատէրը ստանում է իրրեւ բնուտա: Այս 5,700 ռուբլուց կապիտալիստին ոչինչ չի հասնի— շահի տարեկան նորմայի համաձայն, նա միայն իւր սովորական շահը կստանայ. եթէ բնուտան 5,000 ռուբլուց պակաս լինէր, իսկ շահը 500 ռուբլուց աւելի, այն ժամանակ անյապաղ երևան կգային մրցակիցներ— ուրիշ կապիտալիստներ,—որոնք կհամաձայնէին բնուտայի բարձրանալուն:

Ուրեմն, երկրորդ հողաբաժնի տէրը, բացի 300 ռուբլի բացարձակ բնուտայից, ստանում է դարձեալ 5,400 ռուբլի, որն և կազմում է, այսպէս կոչւած, դիֆֆերենցիալ բնուտա: Երրորդ, ամենալաւ հողաբաժնի տիրոջ համար դիֆֆերենցիալ բնուտան աւելի շատ է—10,800 ռուբլի, ինչպէս կարելի է տեսնել նախընթացի նման հասարակ հանումից:

Այստեղ կարող է հարց ծագել, թէ արդեօք դեռ արտադրութիւնը վարելու հնարաւոր ամենավատ բնական պայմանների և շուկայի գնի մէջ մատնացոյց արած կապը չի հակասում աշխատանքային արժողութեան թէօրիային: Վերջնական հաշւի մէջ գները որոշւում են արժողութիւններով, իսկ արժողութիւնը՝ ապրանքն արտադրելու համար անհրաժեշտ աշխատանքային եռանդի միջին քանակութիւնն է, հետևապէս՝ արժողութեան մեծութիւնը համապատասխանում է աշխատանքի ծախսումներին կամ միջին բնական պայմաններին և ոչ թէ վատ. կթւար, թէ այս միեւնոյնը շուկայի միջին գնին էլ պէտք է վերաբերի, այսինքն՝ նա պէտք է համապատասխանէ միջին բնական պայմաններում կատարւած արտադրութեան ծախսերին՝ գումարած շահը և բացարձակ բնուտան: Բայց այստեղ հակասութիւնը միայն թւում է, սակայն վերլուծութիւնով հետազոտութեամբ վերանում է:

Ինչպէս յայտնի է, ապրանքի արժողութիւնը բաժանւում է մշտական և փոփոխական կապիտալի արժողութեան և յաւելեալ արժէքի վրայ: Համապատասխան սրան, գինն էլ պէտք է վերաբարձի վրայ: Համապատասխան միջին ծախսերի, միջին շահի և միջին բնուտայի (որովհետեւ բնուտայի ու շահի ընդհանուր գումարը հաւատար է յաւելեալ արժէքի ընդհանուր գումարին): Իսկ այս գլխի սար է յաւելեալ արժէքի վերաբերում. արտադրութեան ֆորմուլայով՝ գինը ուրիշ կերպ է վերածւում. արտադրութեան միջին ծախսերի փոխարէն՝ վերցւած են ամենավատ ձեռնարկու-

Թեան որոշ տեսակի համար ամենայնարժար հողաբաժնի մէջ կատարած արտադրութեան ծախսերը, իսկ միջին բննտայի փոխարէն՝ վերցւած է բացարձակը: Մակայն դժուար չէ տեսնել, որ ինչքան վատ հողի վրայ արած ծախսերն աւելի են միջին հողի վրայ արածներէն, այնքան բացարձակ բննտան քիչ է միջինից, որի մէջ, բացի բացարձակից, դեռ միջին դիֆֆերենցիալ բննտան էլ է մտնում: Ուրեմն, գնի երկու ֆորմուլաները բոլորովին նման են իրար: Ստուգենք այդ մեր թւաւոր օրինակի վրայ, համարելով թէ երկրորդ հողաբաժինը միջինն է:

Վատ հողաբաժնի վրայ 10,000 փութ ցորենի արտադրութիւնը պահանջում է 10,000 բուրլի մշտական և փոփոխական կապիտալի ծախս. 5% շահը—500 բ., բացարձակ բննտան 300 բ.—գումարն է 10,800 բուրլի—փութը 1 բուրլի 8 կոպէկ:

Վատ հողաբաժնի հետ հաւասար չափ ունեցող միջին հողաբաժինը, 10,000 բուրլի մշտական և փոփոխական կապիտալ ծախսելիս, 15,000 փութ կտայ, նշանակում է վատի հետ համեմատելու համար 1 1/2 անգամ աւելի փոքր հողաբաժին պէտք է վերցնել, որից նոյնպէս 10,000 փութ է ստացւում. այն ժամանակ դուրս կգայ.

Մշտական և փոփոխական կապիտալի ծախսերը—6,666 2/3 բ. (10,000 բուրլուց 1 1/3 անգամ քիչ).  
շահը 5%—333 1/3 բ.  
միջին բննտան—3,800 բ. (5,700 բուրլուց 1 1/2 անգամ քիչ):

Գումարն է—10,800 բ. փութը 1 բ. 8 կոպէկ:

Իհարկէ նրանումն է, որ միջին հողաբաժնի համար հաշուելիս ծախսը 3,333 1/3 բուրլով քիչ է վերցւում, շահը—166 2/3 բուրլով քիչ, նոյնիսկ բացարձակ բննտան 100 բուրլով քիչ է (300 բուրլու տեղ 200, որովհետև հողաբաժինը 1 1/2 անգամ քիչ է վերացւում). բայց դրա փոխարէն գնի մէջ մտնում է վատ հողաբաժինների համար բացակայող միջին դիֆֆերենցիալ բննտան—3,600 բուրլի և հետևանքը ստացւում է միևնույնը:

Այս բոլոր հաշիւները գործադրելի են նաև բոլոր միւս ապրանքների վերաբերմամբ, միայն այն տարբերութեամբ, որ արդիւնագործութեան մէջ դիֆֆերենցիալ բննտան, ևս առաւել բացարձակը, աւելի պակաս նշանակութիւն ունի, քան երկրագործութեան մէջ:

Ի միջի այլոց, այս հաշիւց երևում է և այն, թէ կապիտալիզմի շրջանում ինչ մտքով է գինը աշխատանքային արժողութեամբ որոշուում: Արդիւնքի գինը որոշուում է մշտական և փոփոխական կապիտալի միջին ծախսերով, սրա վրայ գումարած կապիտալիստական միջին եկամուտը (միջին շահի և միջին բննտայի գումարը): Իսկ կապիտալիստական եկամուտի միջին նորման որոշուում է երկրի ամբողջ կապիտալի աշխատանքային արժողութեան յարաբերութեամբ: Այսպիսով, աշխատանքային արժողութեան օրէնքը, որոշելով կապիտալիստական եկամուտի նորման, գները որոշում է կողմնակի կերպով. սա էլ իւր կողմից մշտական և փոփոխական կապիտալի որոշ ծախսերի ժամանակակայ գինն է որոշում:

Դիֆֆերենցիալ բննտան առանձնակի հսկայական չափերի է հասնում արդիւնաբերական վայրերում և քաղաքներում, ուր հասարակական աշխատանքի գործադրութիւնն ամենալարած կերպով է կատարուում, ուր շուկայի մօտիկութիւնն ապրանքների փոխադրութեան և պահպանման գործում աշխատանքի մեծ խնայողութիւն է ստեղծում: Իսկապէս, ենթադրենք, թէ մէկ միլիոն փութ ապրանք արտադրող մի ֆաբրիկա շուկայից մի վերստով է հեռու, իսկ նոյնպիսի մի ուրիշը— 11 վերստով. միլիոն փութի 10 վերստ տեղափոխելը ահագին ծախս է առաջադրում և եթէ առաջին ֆաբրիկան ազատուում է այս ծախսից, ուրեմն առաջին ֆաբրիկատիրոջ շահի սովորական մեծութեան դէպքում ամբողջ խնայածը կանցնի հողատիրոջ տրեւիք բննտայի առանձին բարենպաստ պայմաններում հասարակական աշխատանքը գործադրելու հնարաւորութեան վարձին: Ասենք, խոշոր կապիտալիստի անտեսական ոյժն այնպէս է, որ քիչ անգամ չի խլում այս դիֆֆերենցիալ բննտայի մի մասը և դրանով աւելի դիւրութեամբ է հարւածում մրցակիցներին:

Արտադրութեան ընդհանուր յառաջագիմութիւնը, ինչպէս ցոյց տրւեց, այն հետևանքն է ունենում, որ բննտան, առանց սրա ստացողների որ և է մասնակցութեան, աճում է. ամեն տեսակ ձեռնարկութիւնների համար հողի պահանջի հետ միասին աճում է նաև մենափաճառների ձեռնարկողների վրայ ունեցած հողի իշխանութիւնը:

Այս դէպքում, գլխաւորապէս, դիֆֆերենցիալ բննտան է աճում, մանաւանդ, երբ որ և իցէ հողաբաժնի մօտերով հողորդակցութեան լաւ ճանապարհներ են գցւում, որոնք այդ հողաբաժինները մօտեցնույր են շուկային, կամ երբ այդ հողաբաժինների մէջ նոր բնական հարստութիւններ են բացւում և այլն:

Շնորհիւ բննտայի մշտական աճելուն, հողը սովորաբար աւելի թանկ է ծախուում, քան հարկաւոր է բննտայի կապիտալիզացիայի հաշուով: Բննտայի ապագայ աճումը մասամբ հողի գնով է ծածկուում: Այս դէպքում չի խանգարում նկատել, որ հողի վաճառքը ապահովեցնում է բննտան: Իսկապէս, հողը գնող կապիտալիստը վճարած փողին նայում է, իբրև հողի վրայ գրւած կապիտալի վրայ, որն անպայման պէտք է համապատասխան շահ բերէ: Այս ժամանակահատիկից ոչ միայն մենավաճառութեան ոյժն է պահպանում բննտային, այլ և այն կապիտալիստների մրցութիւնների ոյժը, որոնք բոլոր կապիտալիստների համար հաւասար շահի նորմա են պահանջում:

Այսպէս կոչւած, կապալային վճարը չպէտք է ուղղակի խառնել բննտայի հետ: Կապալով են վերցնում, գլխաւորապէս, ոչ թէ մերկ, անմշակ հողը, այլ նրա հետ և վրան գտնւած շէնքերը, նախընթաց աշխատանքով նրա վրայ կատարւած բարւոքումները և շատ անգամ գործաշատանքով նրա վրայ կատարւած բարւոքումները և շատ անգամ գործիքները, տաւարը և այլն: Այս բոլորը ներկայացնում է մի ըէալ կապիտալ, որ փոխ է տրւում կապալաուին և որը պէտք է բերէ կապալիտալ, որ փոխ է տրւում կապալաուին և որը պէտք է բերէ կապալաուին:

լաււին, այսինքն՝ հողատիրոջը, սովորական կրեդիտային տոկոս: Հետեւապէս, կապալի վճարի մի մասը հողատիրոջ կրեդիտային կապիտալի սովորական շահն է ներկայացնում: այս մասը պէտք է դուրս հանենք կապալային վճարից, որ ստանանք զուտ բննտան:

Կապիտալիստական հողատիրութեան ձեերի հետ միասին մանուշակաւորայի շրջանի մէջ ամեն տեղ և դեռ աւելի ուշ - երկրների մեծամասնութեան մէջ աւելի պակաս աւարտեած ձեեր են պահպանուում, մանաւանդ երկրագործութեան մէջ: Այդպիսի ձեերի կարգը կարելի է դասել և այն տնտեսութիւնները, որոնց մէջ հողատէրն ու կապիտալիստական ձեռնարկողը մի անձի մէջ են պարփակուում, որը ստանում է թէ շահը և թէ բննտան: Բայց այստեղ կարիք չկայ սրա վրայ կանգ առնել: այդպիսի պարփակուումը դործի ընդհանուր ընթացքի մէջ համարեա ոչինչ չի փոխում:

Շատ յաճախ կապալաւուի դերը ոչ թէ կապիտալիստն է կատարում, այլ մանր արտադրողը, որ բոլորովին կամ համարեա առանց վարձու աշխատութեան է կառավարուում, — սովորաբար գիւղացի-երկրագործը: Այս դէպքում Ֆերմերի «շահը» շատ հեշտութեամբ գերօյի է հաւասարուում: մանր կապալաւուն կապիտալիստի ոյժը չունի, նա չի կարող կապալային վճարի համար յաջողակ կռիւ մղել հողատիրոջ դէմ և բննտան հասնում է այն մակերևոյթին, որի դէպքում կապալաւուն մնում է միայն ապրուստի անհրաժեշտ միջոցները: Էութեամբ նա այն ժամանակ հողատիրոջ վարձու բանւորն է, ինքնուրոյն կապալաւուի դիմակի տակ: Առևտրական կապիտալի ազդեցութեան տակ, որն իւր կողմից շահագործում է մանր կապալաւուն, երբեմն այս վերջինի բաժինն էլ աւելի ցած է իջնում, մինչև այն աստիճան, որ արտադրողի այլասերումն է պայմանաւորում (օրինակ — Իրլանդիան):

Այն դէպքերում, երբ հողատէրն ու երկրագործը միևնոյն գիւղացու մէջ են պարփակուում, առաջին հայեացքից գործն այն հետեանքն է ունենում, որ միևնոյն անձնաւորութիւնը ստանում է և՛ աշխատանքի վարձը, և՛ շահը, և՛ բննտան: Իրականութեան մէջ այս դէպքում շահը, սովորաբար, խիստ արագ է առևտրական կապիտալիստին անցնում, ինչպէս և նախընթաց դէպքում: Իսկ բննտան, ընդհանրապէս, համեմատաբար աւելի փոքր քանակութիւն ունի, որովհետև մանր հողատէր-սեփականատէրերի դասակարգը չունի իւր յետևում այն պատմականօրէն դասաւորուած նշանաւոր հասարակական ոյժը, ինչ որ խոշոր հողատէրերի դասակարգն ունի:

Այս ուրեմն ի՞նչ բան է հողային բննտան: Սա յաւելեալ արժէքի այն բաժինն է, որ կապիտալիստը զիջում է հողատիրոջ, որպէսզի հողի որ և է տարածութեան վրայ հասարակական աշխատանքի գործադրութիւնը հնարաւոր դարձնէ:

Բնութեան ոյժերը հասարակական աշխատանքով շահագործելու

հնարաւորութիւնը սահմանափակեած չէ. ամենախիտ ընակեած երկրներում ամենապտղաւէտ հողերն անգամ ամբողջապէս մշակեած չեն: Բայց հասարակութիւնն անարգել կերպով չի կարող այս բոլորից օգտուել: նա ընդգրկմադրութեան է հանդիպում հողատէր դասակարգի կողմից և այս ընդգրկմադրութիւնը բննտայի օգնութեամբ է յաղթահարում:

գ) Ա շ խ ա տ ա վ ա ր մ

Բանւորական ոյժի արժողութիւնը բանւորն ստանում է իբրև աշխատարար:

Բնական-տնտեսական շրջաններում վարձու աշխատանքը հազարգէպ բացառութիւն է ներկայացնում: Ֆէօդալական ժամանակների թափառող արհեստաւորի՝ գործ պատւիրողի տանը վերջինիս պատկանող նիւթերից շինած գործը միայն արտաքին նմանութիւն ունի վարձու աշխատանքին. այդպիսի արհեստաւորի ստացած վարձը ոչ թէ նրա բանւորական ոյժին է համապատասխանում, այլ նրա աշխատանքով Նորից արտադրած արժողութեանը — այստեղ դեռ ոչ մի շահագործութիւն չկայ, որովհետև ինքն արհեստաւորն է արտադրութեան գործիքների աէրը և, փոքր չափով, նոյնպէս կարող է առանց որ և է պատւէր տողի կառավարել, ինչպէս վերջինս՝ առանց արհեստաւորի:

Առաջներում վարձու աշխատանքն այն ժամանակ է սկսում կեանքի մէջ նկատելի դեր խաղալ, երբ քաղաքներում զարգանում է արհեստի մանր բուրժուական կազմակերպութիւնը: Քարգահներն ու աշակերտները արդէն վարչետի վարձու բանւորներն են հանդիսանում: Սակայն, քանի դեռ արհեստաւորական շրջաններում պահպանուում են նահապետական յարաբերութիւնները, քանի դեռ քարգահի դերը վարչետ կոչմանն անցնելու աստիճան է հանդիսանում, քարգահի աշխատավարձը բանւորական ոյժի արժողութիւնից կտրուկ կերպով չի որոշուում, այլ սրանից միքիչ բարձր է լինում. այլապէս՝ քարգահը չէր կարող իւր ծառայութեան ընթացքում անհրաժեշտ միջոցներ հաւաքել, որ յետոյ սեփական արհեստանոց և սեփական տնտեսութիւն սարքէ: Բայց երբ առևտրական կապիտալը քանդում է նահապետական-արհեստաւորական յարաբերութիւնների նախկին ներդաշնակութիւնը և վարչետաւորական յարաբերութիւնների նախկին ներդաշնակութիւնը և վարչետի շահագործելով, ստիպում է նրան շահագործել քարգահներին, այն ժամանակ արհեստի մէջ աշխատավարձի մակերևոյթը իջնում է մինչև ապրուստի անհրաժեշտ միջոցների արժողութեանը, մինչև բանւորական ոյժի արժողութեան մակերևոյթին:

Ինչպէս պարզեց, առևտրական կապիտալը մանր արհեստաւորին և գիւղացուն վարձու բանւոր չի դարձնում՝ մեաակոտնապէս միայն, իսկ երականութեամբ նրանց աշխատանքի փոխարէն նա միայն բանւորական ոյժի արժողութիւն է տալիս, այնպէս որ, ըստ Էուրթեան, նրանց



չ նաև շահի որոշ մասը, օրինակ՝ 5—10 տոկոսը: Վարձի այս ձևը չուրջ, ընդհանուր նշանակութիւն չունի. այդ վարձը շատ քիչ անգամ է ձեռնարկողի համար շահաւէտ լինում և դորձադրուում է համարեա բացառապէս այն ժամանակ, երբ առանձնապէս կարևոր է շահագրգռել բանւորներին իրանց աշխատութեան մէջ,—օրինակ՝ երաժշտական գործիքների մանուֆակտուրաներում:

Ձեռնարկողը աշխատավարձն աշխատանքը կատարելուց յետոյ է տալիս: Այս կանոնից շատ քիչ անգամ են բացառութիւններ լինում: Հետևապէս, բանւորը, ընդհանրապէս ասած, փոխ է տալիս կապիտալիստին իւր բանւորական ոյժը,—պարտք է տալիս. բանւորական ոյժը, վճարելուց առաջ է սպառուում:

Այս բանի շնորհիւ, վճարման պայմանաժամը—շաբաթական, երկշաբաթական, ամսական և այլն,—բանւորի համար առանձին նշանակութիւն է ձեռք բերում: Մի վճարից մինչև միւսը բանւորը հարկադրած է, սովորաբար, պարտքով ապրել: Բայց այն խանութպանը, որից բանւորը սպասելու նիւթեր է գնում, պարտքը ձրի չի տալիս: Այդպիսի պայմաններում ինչքան վճարն ուշ-ուշ է տրուում, այնքան բանւորի դրութիւնն աւելի դժւարանում է:

Աշխատավարձի բարձրութեան հարցը հետազոտողի համար մի քանի առանձին դժւարութիւններ է յարուցանում: Ամենից առաջ պէտք է քննել, թէ ինչ միջոցով կարելի է տարբեր վայրերի և ժամանակաշրջանների համար աշխատավարձի մեծութիւնների համեմատութիւն կատարել:

Վարձի բնական ձևի ժամանակ այդպիսի համեմատութիւնը դեռ բաւականին հեշտ է հանդիսանում. որտեղ բանւորին աւելի շատ արդիւնքներ են տալիս, այնտեղ էլ վարձն աւելի շատ է լինում (հասկանալի է, որ եթէ միայն արդիւնքները միատեսակ են. հակառակ դէպքում՝ խիստ մօտաւոր դատողութիւններն են միայն հնարաւոր):

Վարձի դրամական ձևի ժամանակ դժւարութիւններն աճում են. եթէ մի տեղից բանւորը երկու անգամ աւելի շատ փող է ստանում, քան մի ուրիշ տեղից, այդ դեռ չի նշանակում, որ նրա իսկական վարձն աւելի բարձր է: Փողը, ինքն ըստ ինքեան, կարևոր չէ բանւորի համար, որովհետև նա փողով սպառման նիւթեր է գնում. եթէ մի երկրում աշխատավարձը 2 բուրլի է, իսկ մի ուրիշում—1 բուրլի, բայց առաջին երկրում բանւորների սպառման բոլոր նիւթերը երկու անգամ աւելի թանկ են, ուրեմն երկու դէպքումն էլ իսկական վարձը հաւասար պէտք է համարւի:

Այդպիսով, պէտք է տարբերել վարձի անւանական, թւացող մեծութիւնը—այսքան բուրլի, այսքան կոպէկ,—և իրական, իսկական մեծութիւնը. որպէսզի գաղափար կազմենք իրական վարձի մասին, պէտք է պարզենք, թէ որ և է դրամական վարձով ինչ քանակութեան սպառ-

ման նիւթեր են գնւում—այսքան ֆունտ հաց, միս, այսքան արշին կտաւ և այլն:

Դրամական վարձը ճիշտ համեմատել կարելի է միայն միևնոյն տեղում, միևնոյն ժամանակում, ապա թէ ոչ, հեշտութեամբ խոշոր սըխախներ կարելի է անել:

Այս դեռ բոլոր դժւարութիւնները չէ: Աշխատավարձի բարձրութեան մասին դատելիս՝ անհրաժեշտ է ի նկատի ունենալ նաև բանւորական օրւայ երկարութիւնն ու աշխատանքի լարւածութիւնը—ընդհանրապէս՝ աշխատանքային եռանդի ծախսերի քանակութիւնը: Եթէ մի երկրի բանւորները տասժամեայ օրւայ համար նոյնքան են ստանում, որքան մի ուրիշ երկրի բանւորները տասներկուժամեայ օրւայ համար, այն ժամանակ վերջինների վարձը, սկներև է, որ ցածր պէտք է ընդունել: Եթէ երկու դէպքում երկարութեամբ հաւասար բանւորական օրը, օրինակ՝ 10 ժամ է, բայց երկրորդ դէպքում աշխատանքն աւելի լարւած է, ուրեմն երկրորդ երկրի համար աշխատավարձի մակերևոյթը ցածր է:

Շնորհիւ այս բոլոր ցոյց տւած դժւարութիւնների, էկոնոմիկական գրականութեան մէջ պակաս չեն այն անվերջ վէճերը, թէ այս ինչ տեղում, այս ինչ ժամանակաշրջանում արդեօք աշխատավարձը բարձրացան, թէ իջան:

Յամենայն դէպս, աշխատավարձը ոչ այլ ինչ է, եթէ ոչ բանւորական ոյժի շուկայի գինը: Այդ պատճառով աշխատավարձը, միջին հաշուով, մօտաւորապէս համապատասխանում է բանւորական ոյժի արժողութեանը:

Ինչպէս բացատրեց, բանւորական ոյժի արժողութիւնը բանւորի և նրա ընտանիքի սովորական պահանջներին բաւարարութիւն տալու արժողութիւնն է:

Այս առիթով դեռ մի քանի պարզաբանութիւններ էլ պէտք է անել:

1) Բանւորի սովորական կարիքների շարքում արհեստական կերպով առաջացածները համարեա նոյնպիսի ազդեցութիւն ունեն բանւորական ոյժի արժողութեան և վարձի բարձրութեան վրայ, ինչ որ բնականները:

Դիտողութիւնները ցոյց են տւել, որ եթէ որ և է տեղում աշխատավարձը, բարենպաստ պայմանների շնորհիւ, երկար է մնում բարձրացած մակերևոյթի վրայ, նա արդէն շատ քիչ անգամ է վերադառնում ցած մակերևոյթին: Բանւորնախկին մեծութեանը կամ սրանից աւելի ցածր է ընկնում: Բանւորները յամառ կերպով պաշտպանում են բարձրացած վարձը, որպէս զի հնարաւորութիւն ունենան նոր ձեռք բերած սովորութիւնների համեմատ ապրել: Իսկ եթէ, այնուամենայնիւ, վարձն իջնում է, այդ դէպքում բանւորը յաճախ պակասեցնում է հացի, մսի պահանջը, միայն քում բանւորը յաճախ պակասեցնում է հացի, մսի պահանջը, միայն թէ ծխախոտ, զինի, թէյ, գրքեր և այլն գնելու հնարաւորութիւն ունենայ:

2) Երբ ասուում է, որ բանւորական ոյժի արժողութեան մէջ մըտնում է բանւորի ընտանիքի պահանջներին բաւարարութիւն տալու արժողութիւնը, այս դէպքում, իսկապէս միջին չափի ընտանիք է ենթադրուում:

Բացի այդ, ենթադրուում է այս դէպքում, որ որ և է հասարակութեան մէջ ամբողջ ընտանիքից, միջին թւով, մի մարդ է միայն ծախում իւր բանւորական ոյժը, որն և վաստակում է ընտանիքի բոլոր անդամների համար: Իսկ եթէ ընտանիքից ոչ թէ մի մարդ է աշխատում, այլ աւելի շատ, այդ ժամանակ բոլոր բանւորների վարձը միասին պէտք է միջին էներգով բաւակրանալ ընտանիքի պահանջներին բաւարարութիւն տալու:

Ընդհանրապէս աշխատավարձի մասին արած այս՝ բոլոր նկատողութիւններից յետոյ կարելի է մանուֆակտուրայի շրջանի աշխատավարձի խնդրին անցնել:

Աշխատանքը, նոյն իսկ զարգացած մանուֆակտուրայի, ինչպէս և արհեստի մէջ՝ ձեռքի աշխատանք է մնում: Ուստի և բանւորի անձնական հմտութիւնն առաջնայ պէս մեծ նշանակութիւն ունի:

Աշխատանքի տեխնիկական բաժանման ժամանակ աշխատանքի տարբեր տեսակներն աւելի պարզ կամ աւելի բարդ են դուրս գալիս և մեծ կամ փոքր հմտութիւն և վարժութիւն են պահանջում: Աշխատանքի բարդութեան ու հմտութեան և վարժութեան աստիճանի համեմատ՝ մանուֆակտուրայի բանւորները բաժանուում են կարգերի, որոնց համար աշխատավարձը միատեսակ չէ:

Ցածրագոյն կարգը կազմում են, այսպէս կոչւած, հասարակ կամ անհմուտ բանւորները—մանուֆակտուրայի շրջանի համար «հասարակ» աշխատանքի ներկայացուցիչները: Նրանցից ոչ մի առանձին վարժութիւն չէր պահանջւում, նրանց յանձնւում էին այնպիսի գործողութիւններ, որ ամեն մէկն էլ կարող է կատարել: Նրանք, իրանց չափազանց քիչ զարգացած կարիքների համեմատ, ամենափոքր վարձն էին ստանում: Հողագործի գիւղացիք, մեծ ճանապարհների թափառաշրջիկները, մուրացկանները հասարակ բանւորութեան ամենամեծ մասն էին մատակարարում մանուֆակտուրաներին:

Հմուտ բանւորները իւր տեսակի մի արիստոկրատիա էին կազմում և հասարակ բանւորներից անհամեմատ աւելի շատ էին ստանում: Նրանց մէջ ևս, հմտութեան աստիճանի և վարձի քանակութեան համեմատ, աւելի մանր կարգերի բաժանում գոյութիւն ունէր: Սկզբնապէս հմուտ բանւորների աղբիւրը քանզւած արհեստաւորների և նոյնպէս նախկին քարգահների դասակարգն էր հանդիսանում:

Ի նկատի ունենալով, որ աշխատավարձը բանւորական ոյժի արժողութեամբ, այսինքն՝ բանւորի կենսական պահանջներին բաւարարութիւն տալու արժողութեամբ է որոշւում, դժւար չէ հասկանալ, որ մանուֆակտուրայի շրջանում աշխատավարձի մէջ խոշոր և մշտական

տարբերութիւններ կարող էին գոյութիւն ունենալ. արտադրութեան մէջ անմիատեսակ դեր կատարելով և աշխատանքի պրոցեսի մէջ հասարակական աշխատանքային եռանդի անմիաչափ քանակութիւն ծախսելով՝ բանւորների տարբեր կարգերը պէտք է որ կարիքների տարբեր մակերևոյթ ունենան. իզուր չէ, որ նրանք, հասարակական ունեւոր և չունեւոր խմբերից ծագած լինելով էլ էին տարբերուում իրարից: Բայց ինչո՞ւ է կապիտալիստն իւր բանւորների կարիքների տարբեր մակերևոյթի վրայ ուշադրութիւն դարձնում, ինչո՞ւ նա սովորած բանւորների վարձը չի իջեցնում մինչև հասարակ բանւորների վարձի քանակութեանը: Չէ՞ որ նա հոգս չի անում այն մասին, թէ բանւորի սովորածը մի բան օրժել է:

Նախ՝ ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ սովորած բանւորները եռանդով են պաշտպանում իրանց կարիքների բարձր մակերևոյթը: Երկրորդ՝ նրանք վարձի կուշի մէջ համեմատաբար բարենպաստ պայմանների մէջ են գտնուում, շատ աւելի բարենպաստ, քան չսովորած մանւնների մէջ են գտնուում, շատ աւելի բարենպաստ է, նրանց ներքը: Սովորածները քիչ են, նրանց մէջ մրցումն աւելի թոյլ է, նրանց փոխարինելն աւելի դժւար է, մի խօսքով—պահանջի և առաջարկութեան յարաբերութիւնը նրանց համար աւելի շահաւէտ է և կապիտալիստի համար առանձնապէս դժւար է նրանց վարձը պակասեցնել:

Թէ սովորած բանւորների գրութիւնը, ընդհանուր ամամբ, որքան շահաւէտ էր հանդիսանում մանուֆակտուրաների՝ ձեռնարկողների հետ ունեցած յարաբերութեան նկատմամբ, կարելի է իմանալ հետեւեալ հասկացողութիւնից: Եթէ միքանի բանւորներ, որոնք մի առանձին, լեալ հասկացողութիւնից: Եթէ միքանի բանւորներ, որոնք մի առանձին, ուրիշների հետ անհրաժեշտ և հմտութիւն պահանջող գործողութիւն են կատարում, հրաժարւում են աշխատելուց, այն ժամանակ ձեռնարկողը, նրանց անմիջապէս նորերով փոխարինելու անհնարաւորութեան դէպքում, հարկադրւում է առժամանակ դադարեցնել արտադրութիւնը և կամ զիջել: Չարգացող մանուֆակտուրային արտադրութեան կողմից հմուտ բանւորների պահանջն այնքան խիստ էր, որ յաճախ նրանք հնարաւորութիւն էին ունենում պայմաններ դնել տէրերին: Ի հարկէ, ամեն ժամանակ և ամեն տեղ այդպէս չէր:

Ընդհանրապէս, եթէ նոյնիսկ միքանի բացառիկ հանգամանքների շնորհիւ հմուտ բանւորների վարձը հասարակ բանւորներին էլ չէին լիբարձր չլինէր, այն ժամանակ իրանք հմուտ բանւորներն էլ չէին լիբարձր հետոյ հետզհետէ կձգէին իրանց առաջնայ գործը, որ նեարգերի խիստ լարումն ու եռանդի մեծ ծախսումն է պահանջում և հասարակ բանւորներ կգառնային. իսկ նորից բարդ աշխատութեան վարժելը ոչ ոք չէր ցանկանայ, որովհետև այս ոչ մի օգուտ չէր բերի:

Ցամենայն դէպս, պրօլետարիատի մեծաթիւ մասը հասարակ բանւորներն ու քիչ սովորած բանւորներն էին կազմում: Իուրս գալով այն բանւորներն ու քիչ սովորած բանւորների միջավայրից, որոնք ճնշւած և տնտեսարակական դասակարգերի միջավայրից, որոնք ճնշւած և տնտես-

սպէս ծայրայեղութեան չափ շլատեած էին, նրանք չափազանց դանդաղութեամբ էին զարգացնում իրանց կարիքները: Այդ պատճառով XVI; XVII դարերում աշխատավարձը, ընդհանրապէս, ցածր էր կանգնած: Արդիւնագործութեանը վերաբերող այս երևոյթը դեռ աւելի մեծ չափով՝ առաջ եկած կապիտալիստական երկրագործութեանն է վերաբերում, որտեղ հմուտ աշխատանք համարեա չկայ, իսկ աշխատողների կարիքներն առանձնապէս անզարգացած են:

Տնային-կապիտալիստական եղանակով կազմակերպւած աւելի յետաձգեաց տիպի ձեռնարկութիւնների մէջ արտադրողների վաստակի մակերևոյթը մօտաւորապէս այնպէս է, ինչպէս մանուֆակտուրաների մէջ, կամ դեռ աւելի ցածր: Առևտրական կապիտալն աւելի քիչ է մըտածում արտադրողի մասին, քան արդիւնաբերականը, որի համար պէտք է, որ թափացած, այլասերւած բանւորը խիստ անշահաւետ է:

Մանուֆակտուրայի շրջանում աշխատավարձի բարենպաստ պայման է հանդիսանում այն փաստը, որ կանանց և երեխաների աշխատանքը դեռ շատ քիչ է տարածւած. ամբողջ ընտանիքից, սովորաբար, միայն մի մարդ է ծախում իւր բանւորական ոյժը: Այդպիսով, մի բանւորական ոյժի վաճառքը ամբողջ ընտանիքին՝ գոյութեան միջոցներ է մատակարարում: Այդ բանի շնորհիւ, կիրնը շարունակում է ընտանիքի մէջ միևնոյն «բնական-տնտեսական» դերը խաղալ, ինչ որ մանր-բուրժուական շրջանում. նա տնային տնտեսութեամբ է սահմանափակւում:

Մանուֆակտուրայի շրջանի ցածր աշխատավարձը, սովորաբար, միանում է առանձնապէս ոչ երկար բանւորական օրւայ և աշխատանքի ոչ բարձր լարւածութեան հետ:

Մանուֆակտուրայի շրջանի սկզբում բանւորական օրւայ երկարութիւնը արհեստի ծաղկման շրջանում արհեստաւորական քարգահների համար գոյութիւն ունեցող բանւորական օրւայ երկարութիւնից շատ չի գանազանւում—օրւայ մէջ 9, 10 ժամ, երբեմն սրանից էլ աւելի պակաս է լինում: XVII դարու մի գրող դառը կերպով գանգատւում է անգլիական բանւորների եսականութեան և ծուլութեան վրայ, որոնք օրական 8 ժամ և շաբաթւայ մէջ 4-5 օր բանելով՝ ապրուստի անհրաժեշտ միջոցներ են ստանում և ամենևին հոգս չեն տանում աւելի շատ աշխատել:

Բարդ աշխատանքի ներկայացուցիչների համար բանւորական ժամանակի այդպիսի չնչին տևողութիւնը, գլխաւորապէս, աշխատանքի շուկայում նրանց ունեցած բարենպաստ դիրքով է բացատրւում: Հասարակ աշխատանքի ներկայացուցիչների համար խնդիրը, գլխաւորապէս, նրանց կարիքների չափազանց անզարգացած լինելուց էր կախւած. աւելի երկարատև աշխատանքի միջոցով աւելի մեծ վարձ ստանալու դրողները շատ թոյլ էին: Միևնոյն պատճառներով էլ պայ-

մանաւորւում էր աշխատանքի համեմատաբար ոչ բարձր լարւածութիւնը:

Իրերի այդպիսի դրութիւնը ստիպում էր այն ժամանակւայ օրէնսդրութեանը միջոցներ ձեռք առնել բանւորների չափից աւելի «ծուլութեան» և «եսասիրութեան» դէմ: Այդ միջոցների շարքում պէտք է դասել «Թափառաշրջիկների», այսինքն՝ անգործների վերաբերմամբ եղած խիստ օրէնքները, որոնք անպատճառ պէտք է մի որևէ տեղում վարձէին, եթէ ցանկանում էին խուսափել մտրակից սկըսած մինչև կախաղանի սոսկալի պատիժներից: Այս միջոցով տնանկ մարդկանց մասսաները նրա համար էին կարգապահ դառնում, որ արդիւնաբերական կապիտալի նպատակներին համար պէտքական լինեն և աշխատանքի առաջարկութիւնը շատացնելով՝ միւսների անհնազանդութիւնն էլ մի քիչ պակասեցնեն: Բայց այդ նպատակը շատ չնչին չափով էր իրագործւում:

Այնուհետև, բանւորական օրն օրէնքով էր կանոնադրւում. սահմանւում էր նրա ամենափոքր երկարութիւնը: Օրինակ՝ XVII դարու անգլիական օրէնքները բանւորական օրը 11—12 ժամ են որոշում և, աւելի պակաս տևողութեան բանւորական օրւայ պայմանագրութիւն կապելու դէպքում, երկու կողմին էլ տուգանքի են ենթարկում: Գործնականի մէջ այդպիսի օրէնքները խիստ կերպով չէին իրագործւում. երբեմն զանազան հնարքներով նրանց առաջն առնում էին, իսկ շատ անգամ ուղղակի քանդում:

Մանուֆակտուրայի շրջանի աւելի ուշ աստիճաններում գործը փոխւեց, բայց ոչ բանւորի օգտին: Գիւղացիների հողագրկութիւնը, որ դեռ շարունակւում էր, և մանր արտադրութեան անկումը հետզհետէ մեծացնում էին պրօլետարիատի քանակութիւնը: Ո՛չ մանուֆակտուրային արտադրութիւնը և ոչ արհեստի մնացորդները կարող էին քաղցած մարդկանց այս մասսային բաւականացուցիչ վաստակ տալ: Բանւորական շուկայում մրցումը գնալով աւելի սուր կերպաբանք էր ստանում:

Այնուամենայնիւ, բանւորական օրւայ երկարութիւնը խիստ աստիճանաբար էր աճում: Ճշգրիտ հիմունքներ բերել դժւար է, սակայն հետևեալ փաստը համոզեցուցիչ կերպով ապացուցանում է, որ մանուֆակտուրային շրջանի ամենավերջումն իսկ բանւորական օրն անուհիներ երկարատևութեամբ աչքի չէր ընկնում: 1770 թւականին մի էկոնոմիկական ուսումնասիրութեան հեղինակ այսպիսի նախագիծ է առաջարկում: Որպէզի փրկել Անգլիան բոլոր անգործներից ու դատարկաշրջիկներից, պէտք նրանց համար հսկայական բանւորական տուն շինել, որը, նախագծի հեղինակի խօսքերով, իսկական «սարսափի տուն» լինէր: Այնտեղ բանտարկւածները պէտք է գոյութեան անհրաժեշտ միջոցներ ստանային և զրա փոխարէն «օրական 12 ժամ»

աշխատէին: Դատելով նրանից, սր «սարսափի տան» համար 12-  
ժամեայ օր էր առաջարկուում, կարելի է մտածել, որ բանւորական  
օրւայ սովորական երկարութիւնը զգալի կերպով աւելի պակաս էր:

5. ՄԱՆՈՒՑԱԿՏՈՒՐԱՅԻՆ ՇՐՋԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԳԾԵՐԸ.

Արդիւնաբերական կապիտալիզմի մանուֆակտուրային առա-  
ջին շրջանում՝ ֆէօդալական սիստեմի յարաբերութիւններից զերծ մնա-  
ցած զանազան հեղինակաւոր մարդկանց խնամակալութեան տակից  
անձի ազատումը շարունակուում է: Ճորտական իրաւունքը ոչ ըն-  
չացուում է այնտեղ, ուր նա դեռ պահպանուում էր. հասարակական  
ոյժն ու կաթոլիկ կազմակերպութեան ազդեցութիւնը արագ կերպով  
նւազում են. համքարութիւնները վերջնականապէս կորցնում են ի-  
րանց նշանակութիւնը. իրերի ընդհանուր ընթացքի համեմատ՝ փոխ-  
ւում են և քաղաքական ձևերը: Այս բոլորն այն հետևանքն է ունենում,  
որ անհատական անտեսութեան և առանձին անձի զարգացման խոչըն-  
դոտները վերանում են: Առաջանից աւելի արագ կարող են կեանքի  
նոր հասարակական ձևեր մշակել:

Բայց եթէ մարդկային անձը իւր զարգացման մէջ հետզհետէ ա-  
ւելի քիչ արգելքների է հանդիպում արտաքին աւտորիտետների կող-  
մից, եթէ անձի գործունէութիւնն ընդարձակելու համար քանդ-  
ւում են ձեռակալ սահմանները, դեռ նիւթակալ սահմանները պահ-  
պանուում են. խիստ շատ դէպքերում զարգացման հնարաւորութիւնը  
նրա նիւթական պայմանների թերութեան պատճառով՝ չափազանց  
թուլա չէ՛ւմ է: Այս նկատմամբ հասարակութեան զանազան խմբերի հա-  
մար խիստ տարբեր են այդ արգելքները:

Հարստութիւնների՝ հետզհետէ աւելի մեծ քանակութեամբ կուտա-  
կելը կազմակերպչական գործունէութեան տէր (արտադրողական և մա-  
նականգ բաշխողական) դասակարգերի ձեռքերում, ինքն ըստ ինքեան,  
այս դասակարգերի ներկայացուցիչներից շատ շատերին լիակատար  
հնարաւորութիւն է տալիս իրանց ոյժերը մտաւոր աշխատանքին նւի-  
րելու: Միևնոյն ժամանակ արտադրութեան ու յարաբերութիւնների  
տեխնիկաների ընդհանուր զարգացումը և արտադրութեան կազմակեր-  
պչական գործունէութեան աճող բարդութիւնը մտաւոր աշխատանքի  
սաստիկ պահանջ են առաջ բերում. կապիտալին հարկաւոր են ճար-  
տարապետներ, գիտուն տեխնիկներ, գիտական կրթութեամբ ծովա-  
գնացներ, հաշւապահներ, տնտեսագէտներ և այլն. պետութեանը հար-  
կաւոր են կրթած չինոզիտիկներ, սպաներ և այլն: Այդպիսի հանգա-  
մանքների շնորհիւ առաջ է գալիս բազմաթիւ բուրժուական ինտելի-  
գենցիան: Նրա աշխատանքը, իւր բարձր կարիքների և մենաշնորհեալ  
գրութեան համեմատ, լաւ է վարձատրուում: Նւիրելով բացառապէս

մտաւոր աշխատանքին, ինտելիգենցիան հնարաւորութիւն ունի մեծա-  
պէս զարգացնել իւր ճիւղի աշխատութեան արտադրողականութիւնը:  
Այդպիսով՝ հասարակութեան վերին խաւերը, հողատէրերից ըս-  
ակաւած մինչև բուրժուական ինտելիգենցիան, իրանց զարգացման հա-  
մար նիւթական արգելքների համարեա թէ չեն հանդիպում:

Բոլորովին ուրիշ դրութեանմէջ են գտնուում այն դասակարգերը,  
որոնք արտադրութեան ընդհանուր սիստեմի մէջ զլիսաւորապէս կա-  
տարողական դեր են խաղում: Ինչպէս որ աշխատավարձի մասին ե-  
ղած զլիսում բացատրեց, բանւորական ոյժ վաճառողը մեր ուսումնա-  
սիրած շրջանում ամենևին բարենպաստ պայմանների մէջ չէր ապրում.  
անգարգացած կարիքներին լիովին համապատասխանող ցածր աշխա-  
տավարձը համարեա զարգանալու հնարաւորութիւն չէր թողնում: Այս  
տակամամբ բանւորների հետ հաւասար մակերևոյթի վրայ են կանգ-  
նած նաև առևտրական կապիտալի միջոցով անային-կապիտալիստական  
արդիւնաբերութեան տիպով կազմակերպւած մանր արտադրողները:

Միայն բարդ աշխատանքի ներկայացուցիչները, համեմատաբար  
աւելի մեծ աշխատավարձ ստանալով, միքիչ մտաւոր կեանքով ապրե-  
լու հնարաւորութիւն ունէին: Բայց նրանք բանւորական դասակարգի  
միայն մի մասն էին ներկայացնում, առանձնացած մասը և նրանց  
նպաստաւոր դրութիւնը համարեա ամենևին չէր ազդում մնացած բան-  
ւորների հոգեկան կեանքի յառաջադիմութեան վրայ: (Ընդհանրապէս,  
ւորների հոգեկան կեանքի յառաջադիմութեան վրայ: (Ընդհանրապէս,  
կեանքի նիւթական պայմանների չափազանց զանազանակերպ լինելու  
շնորհիւ, մանուֆակտուրայի շրջանի բանւորներն իրապէս դեռ մի դա-  
սակարգ չէին կազմում. նրանց միջավայրում միաբանութեան զիտակ-  
ցութիւնը շատ քիչ էր զարգացած):

Չի խանգարում նկատել, որ աշխատանքի մանուֆակտու-  
րային բաժանումը, որ ձգտում է իւրաքանչիւր գործը վերածել  
ամենապարզ գործողութիւնների, որոնցից իւրաքանչիւրը պէտք  
է առանձին բանւոր կատարէ, ինքն ըստ ինքեան զարգացման  
համար աննպաստ պայման է հանդիսանում: Բանւորին գործու-  
նէութեան չափազանց նեղ շրջան է տրւում. միակերպ, միևնոյն  
գործիքի օգնութեամբ, միևնոյն նիւթի վրայ արած զուտ մեքենայա-  
կան աշխատանքը ընդունակ է մտաւորապէս բթացնել մարդուն, մե-  
քենայ դարձնել նրան: Սակայն չպէտք է չափազանցել այդ ազ-  
դեցութիւնը. եթէ աշխատանքը մտաւորապէս անբովանդակ է,  
ընց միևնոյն ժամանակ աւելորդ եռանդ է մնում զարգացման  
համար, ուրեմն հոգեկան կեանքը, ակամայից, չսահմանափակե-  
լով մասնագիտութեան շրջանակներով, լայն կերպով զարգանա-  
լու հնարաւորութիւն է ստանում:

Ընդհանուր առմամբ, պէտք է ասել, որ մանուֆակտուրայի շրջ-  
ջանին յատուկ մտաւոր աշխատանքի՝ ֆիզիկականից կտրուկ կերպով  
անջատելը թէպէտ առաջինի էլ, երկրորդի էլ արտադրողականութիւ-  
նը բարձրացնում է, բայց և միևնոյն ժամանակ հասարակութեան

առաջին խմբերի խիստ անհաւասարաչափ հոգեկան զարգացման համար պայմաններ է ստեղծում:

Հասարակութեան արտադրական կեանքից առաջացած գիտակցութեան նիւթի քանակը չափից դուրս աճում է: Քաղաքակրթւած ժողովուրդների արտադրական գործունէութեան շրջանը ընդարձակւում է տարածութեամբ, գրաւելով հետզհետէ երկրագնդի նորանոր մասերը. աւելի եռանդով են շահագործւում իւրաքանչիւր շրջանի բնական հարստութիւնները. թէ այս և թէ այն անմիջականապէս քաշում-բերում են իրանց յետեից տեխնիկական գիտութիւնների յառաջադիմութիւնը: Իրանց զարգացման մէջ վերջիններին յետևում են սրանց հետ անքակտելիորէն կապւած բնական գիտութիւնները: XVI, XVII և XVIII դարերը հռչակւած են մատեմատիկայի, տեսական մեքանագիտութեան, բնագիտութեան, քիմիայի, իսկ յետոյ նաև կենսաբանական աւելի բարդ գիտութիւնների արագ յառաջադիմութեամբ: Զարգացող ծովագնացութիւնը մեծ ազդեցութիւն գործեց ընդհանրապէս բոլոր բնական գիտութիւնների յառաջադիմութեան վրայ, թեթևացնելով կրոնացիների համար զանազան երկրների բնութիւնն ուսումնասիրելու գործը. բայց առանձնապէս ուժեղ զարկ ստացաւ աստղաբաշխութիւնը—մի գիտութիւն, որ ծովային գործի մէջ մեծ գործադրութիւն ունի: Աստղաբաշխութեան յառաջադիմութիւնը սերտ կապւած էր լուսագիտական գործիքների հնարման և բարելաման հետ, որն իւր կողմից զգալի կերպով արագացրեց կենդանի բնութեան մասին եղած բոլոր գիտութիւնների զարգացումը և այլն:

Տեխնիկական յառաջադիմութիւնը զանազան ճանապարհներով անհրաժեշտութիւն էր առաջացնում և ստեղծում գիտակցութեան յառաջադիմութիւնը, որ իրականապէս անբաժանելի է առաջինից և նրա անմիջական շարունակութիւնն է ներկայացնում:

Մանուֆակտուրային կապիտալիզմի շրջանում գիտակցութեան յառաջադիմութիւնը ահագին նշանակութիւն ունի հէնց կապիտալիզմի յետագայ զարգացման համար: Մանուֆակտուրային կապիտալիզմից՝ մեքենայականին անցնելը գիտութեան զարգացման միայն որոշ աստիճանի վրայ է հնարաւոր:

Գիտութեան զարգացումը ոչ միայն խորն էր ընթանում, այլև ընդարձակ, լայն: Այն միևնույն հասարակական կարիքները, որոնք առևտրական կապիտալի շրջանում գիտութիւնների աճող ծաւալումն էին պայմանաւորում ժողովրդական մասսաների մէջ, աւելի ևս մեծ ոյժով մանուֆակտուրայի շրջանում են շարունակում գործել: Սակայն, չի կարելի ասել, որ մեր ուսումնասիրած շրջանում կրթութիւնը շատ լայն տարածեց. ինչպէս մանուֆակտուրաները, այնպէս էլ կապիտալիստական երկրագործութիւնը գրագէտ, որոշ աստիճանի կրթւած բանուորների դեռ շատ թոյլ պահանջ են ցոյց տալիս:

Արտադրութեան և գիտակցութեան զարգացումը,—մարդու՝ բնութեան վրայ ունեցած իշխանութեան աճումը—իւր յետեից բերում է, անհրաժեշտորէն, բնական ֆետիշիզմի մնացորդների մեծ անկումը: Բայց նրանց վերջնականապէս անհետանալը դեռ հեռու է. մարդկութիւնը ոչ թէ մեր ուսումնասիրած շրջանումն է վերջնական յաղթութիւն տանում բնութեան վրայ, այլ աւելի ուշ:

Հասարակական յարաբերութիւնների՝ մարդկանց վրայ ունեցած իշխանութիւնն ամենևին չի խախտւում, նոյն իսկ, փոխանակութեան և մրցումի ընդհանուր զարգացման շնորհիւ, աւելի շուտ աճում է: Անխախտ է մնում նաև այս իշխանութիւնից բխած փոխանակական ֆետիշիզմը, հասարակական գործողութիւնների աղճատւած հասկացողութիւնը:

Մեր ուսումնասիրած շրջանի տնտեսական հայեացքների մէջ ամենից յարմարն է հետախուզել մի կողմից մարդկանց հասարակական գործունէութեան ֆետիշիստական հասկացողութիւնը, միւս կողմից—նրա հետ միասին այս իրականութեան ուղիղ հասկացողութեան առաջնալը, որ միշտ այնքան է միայն զարգանում, որքան թոյլ էին տալիս իրական հասարակական յարաբերութիւնները եւ րանց հետ անխուսափելիորէն կապւած ֆետիշիզմը:

Առևտրա-արդիւնաբերական կապիտալի, ինչպիսին նա արտադրութեան տնային-կապիտալիստական սիստեմի մէջ է հանդիսանում, և նոյնպէս հազիւ գոյացած զուտ արհեստագործական կապիտալի շահերն ու հայեցողութիւններն իրանց արտայայտութիւնը գտան մերկանտիլ կամ «առևտրական հաշուեկշիռի» դպրոցի տնտեսագէտների աշխատանքների մէջ:

Մեր ուսումնասիրած շրջանում փոխանակական յարաբերութիւններն արդէն բաւականին հաստատուն և սերտ կապ ստեղծեցին համարեա այն ընդարձակ երկրների իւրաքանչիւր առանձին վայրերի տնտեսական կեանքի մէջ, որոնցից բաղկացած է Եւրոպան: Ինչպէս պարզեց, այս կապը ազգայնական պետութեան մէջ արտայայտեց: Բայց առանձին երկրների մէջ էլ են հետըզհետէ փոխանակական ընդարձակ յարաբերութիւններ հաստատուում և զանազան երկրների կապիտալներն սկսում են մրցել միջազգային շուկայում, որտեղ յաճախ նրանց շահերն ընդհարւում են: Օրինակ՝ Անգլիայի XVII դարու կապիտալիստները բնակաւոր նարար ամենից շատ այն մասին պէտք է հոգային, որ նրանց համար իրանց երկրիներքին շուկայի շահագործութիւնն ապահովւած լինէր հողանդական աւելի զարգացած կապիտալի ոտնձգութիւններից, բացի այդ, նաև այն մասին, որ Ֆրանսիայի ներքին շուկայի նըբացի տալիս իւր կողմից ֆրանսական կապիտալը: Ընդհանրապէս, ցոյց տալիս իւր կողմից ֆրանսական կապիտալը ցանկանում է ոչ միայն բոլոր իւրաքանչիւր երկրի կապիտալը ցանկանում է ոչ միայն բոլոր վրին հանգիստ կերպով տիրապետել սեփական երկրի արտադրութեան վրայ, այլև երազում է ուրիշ երկրների արտադրութիւնն էլ իրան ենթարկել:

Այսպէս են առևտրական հաշուեկշիռի հիմքը կազմող գործնա-

կան շահերը: Ինչ վերաբերում է տեսականի հիմքին, նա փողի վրայ նախկին հայեացքն ունի—փողն է միակ հարստութիւնը: Մերկանտիլիստի համար փողն ինքը իւր ճամար արժէք ունի և միայն փողը. միւս ապրանքները միայն այնքան արժէք ունին, ինչքան որ փող կարող են փոխանակել. մի երկրում փողի քանակութեամբ է չափուում նրա իսկական տնտեսական ոյժը և փողի քանակութեան աճումը այս ոյժի աճումն է: Հասկանալու համար, թէ ինչպէս կարող էր մեր ուսումնասիրած շրջանում այդպիսի կոպիտ-ֆետիշիստական հայեացք պահպանել, պէտք է յիշել, որ քանակապէս դեռ առևտրական կապիտալն էր գերակալում, իսկ վերջինս, գլխաւորապէս, դրամական ձև ունի: Իսկ արդիւնաբերական կապիտալը, որ գլխաւորապէս արտադրութեան միջոցների ձևով է հանդէս գալիս, նոր էր ծնել:

Բայց եթէ փողի վրայ, իբրև միակ հարստութեան վրայ ունեցած հայեացքից մանր բուրժուան և սրա հետ դրամական հաշվեկշիռի դպրոցը այն հետևութիւնն էին անում, որ պէտք է ինչքան կարելի է քիչ փող ծախսել, կապիտալիստն ու առևտրական հաշվեկշիռի դպրոցը արդէն այլ եզրակացութիւն են անում.— պէտք է փողն այնպէս ծախսել, որ ինչքան կարելի է շատ շահ ստացւի: Խոշոր բուրժուան բարձր է կանգնած աննշան խնայողութիւնից.— այս բանը կեանքն է սովորեցնում նրան: Նա ոտքի է կանգնում աւելորդ փարթամութիւնն արգելող հին օրէնքները դէմ. նա գտնում է, որ փարթամութիւնն օգտակար է, որովհետև որոշ արդիւնքների շուկայ է ստեղծում: Դեռ աւելին—նա ոտքի է կանգնում փողն արտասահման հանելը արգելող նախկին ճնշող օրէնքները դէմ. նա հասկանում է, որ երբեմն օգտակար է միանգամից շատ փող արտահանել, որպէսզի յետոյ աւելի շատ յետ բերելի, ինչպէս սա լինում է, օրինակ՝ ուրիշների ապրանքները վերածախելիս:

Մասնաւոր անձերի և ընկերութիւնների մենավաճառութեանը նոր դպրոցի ներկայացուցիչները, մեծամասնութեամբ, թշնամաբար են վերաբերում. այդ երևոյթը բոլորովին հասկանալի է. մենավաճառութիւնը մարդկանց աննշան թւի համար շահաւէտ լինելով՝ երկրի միւս կապիտալիստների համար անհաճելի է, որովհետև ստիպում է նրանց թանկ վճարել մենավաճառութեան արտադրութեան ապրանքներին և վերջապէս, որովհետև բարձր շահով նրանց նախանձն է գրգռում:

Ազգային կապիտալներն օտարերկրեայ մրցումից պատրաստ պարելու ցանկութիւնը դրող է մերկանտիլիստներին պահանջել պետութիւնից, որ նա ներմուծւած սպառման իրերի վրայ բարձր հարկեր սահմանէ: Բայց, դրամական հաշվեկշիռի դպրոցից տարբեր, նոր դպրոցը ներմուծւած հում նիւթերի և գործիքներին հարկերի ցածրացումն է ուղում. արդիւնաբերական կապիտալի համար ցանկալի է արտադրութեան անհրաժեշտ միջոցները որքան կարելի է աւելի արժան ստանալ: Այնուհետև, հոգ տանելով ոչ միայն ներքին շուկան պատասպարելու, այլ և արտաքիններին տիրելու վրայ, նոր դպրոցը իւր կարծիքն է յայտնում յօգուտ արտահանական հարկերի պակասեցնելու և արտահանութեան դիւրութեան:

Ընդհանուր առմամբ, մերկանտիլ դպրոցը կողմնակից է տնտեսական կեանքի մէջ պետական լայն և բազմակողմանի միջամտութեանը, բայց միայն այնպիսի միջամտութեան, որ կապիտալի զարգացման համար օգտակար լինի: Առանձին երկրի կապիտալիզմը, իւր դեռահասութեան պատճառով, պետական հովանաւորութեան և պաշտպանութեան կարիք է դրում, այլապէս նրա համար խիստ դժուար է օտարերկրեայ կապիտալիստներին և նոյնիսկ անկախ մանր արտադրողներին մրցման հետ գլուխ գալ: Այդ պատճառով նա շարունակ կոչ է անում պետութեանը, պահանջելով, որ սա ապահովէ ազգային մենավաճառութիւնը և փրկէ նրան արտաքին մրցումից:

Եւ պետութիւնը գործունեայ կերպով կեանքի մէջ էր մտնում մերկանտիլիզմի պահանջները: Նա ոչ միայն հարկերի համապատասխան սխտեմ էր ստեղծում, այլ և ուրիշ ճանապարհներով հովանաւորում էր կապիտալը:

Այսպէս, Ֆրանսական կառավարութիւնը Կոլլեբերի ժամանակներում, (Լիւդովիկ XV-ի ժամանակ) չբաւականանալով օտարերկրեայ մանուֆակտուրաների արդիւնքների վրայ արգելող հարկեր նշանակելով, անագին ջանքեր էր գործ դնում ազգային տեխնիկան բարձրացնելու: Նա արտասահմանից Ֆրանսիա էր բերել տալիս և գրաւում հմուտ բանուորներին և կաշառքի միջոցով օտար մանուֆակտուրաների բոլոր արդիւնաբերական գաղտնիքներն իմանում էր իւր կապիտալիստների համար: Նա մանուֆակտուրաների համար պարտաւորեցուցիչ էր դարձնում արտադրութեան որոշ եղանակներ, որոնք այն ժամանակ լուազոյն էին համարում: Կազմւած էին ամենամանրամասն կանոնադրութիւններ, որոնք, համարական կանոնների նման, ճշտութեամբ որոշում էին ապրանքի որակը և արտադրութեան բոլոր պարագայում էին ամենամանակ արդիւնաբերական ձեռնարկութիւնների ներքէ: Եւ այն ժամանակ արդիւնաբերական ձեռնարկութիւնների տեխնիկայի մէջ այդպիսի մանրակրկիտ միջամտութիւնը արտադրութեան զարգացման համար մեծ մասամբ օգտակար էր դուրս գալիս. որովհետև կառավարութիւնն արժան կերպով հետևում էր արդիւնաբերութեան առաջադիմութեանը: Ուրիշ դէպքերում պետութիւնը նոյնիսկ կապիտալով օգնում էր մանուֆակտուրիստներին: Ծուկաներ փնտտելու հոգսի մէջ նա կանգ չէր առնում պատերազմների առաջ:

Այն միջոցները, որոնց դիմում էին կառավարութիւնները իրանց «հովանաւորող» քաղաքականութեան մէջ, ընդհանրապէս վերին աստիճանի բազմատեսակ և երբեմն խիստ օրիժինալ էին: Վերին աստիճանի բազմատեսակ և երբեմն խիստ օրիժինալ էին: 1563 թւին Անգլիայի Եղիւսարէթը ձկնորսութեան պաշտպանութեան համար պարտաւորեցուցիչ պաշտօն սահմանեց—շաբաթւայ թեւն համար պարտաւորեցուցիչ պաշտօն սահմանեց—շաբաթւայ մէջ երկու օր: 1666 թւին, դարձեալ Անգլիայում, հրատարակեց մէջ երկու օր:

Արդիւնադրժութեան պետական հովանաւորութեան զանազան եղանակներին կից՝ իրստ կարևոր պատմական նշանակութիւն ունէր «օգտութալին քաղաքականութիւնը»: Սրա հուշիւնը նրանում է կայանում, որ զաղութիւնն իրաւունք չունէին մանուֆակտուրաներ պահել իսկ հում նիւթեր արտահանել միայն նուֆակտուրաներ պահել իսկ հում նիւթեր արտահանել միայն

մայրաքաղաքում էր թոյլատրւում նրանց: Գաղութային շուկաների սյդպիսի շահագործութիւնը պակաս չարագացրեց, օրինակ՝ անգլիական կապիտալիզմի զարգացումը:

Կրոմվէյի «Նաւագնացային ակտի» համաձայն՝ ամեն մի ապրանք կարող էր մտնել գաղութները կամ դուրս գալ այդ տեղերից՝ միայն անգլիական նաւերով, իսկ Անգլիայում օտարերկրացիները միայն իրանց երկրի արտադրութիւններն իրաւունք ունէին իրանց նաւերով ներմուծել: Այդպիսով, թէ ինքն Անգլիան, և թէ նրա գաղութները լիովին ապահովւած շուկաներ էին հանդիսանում անգլիական կապիտալիստների համար:

Գաղութային քաղաքականութեան մէջ պակաս կարեւոր դեր չէր շարունակում խաղալ մենավաճառութեան սիստեմը. մի կողմից արքունի գանձարանի շահերն էին պահանջում այդ, միւս կողմից — մասնաւոր նախաձեռնութեան ոգին գուցէ դեռ զարգացման այնպիսի բարձր աստիճանի չէր հասել, որ կարողանար առանց յատուկ քաջալերութեան կառավարել գաղութային բարդ և վտանգաւոր ձեռնարկութիւնների մէջ: Կապիտալիստների խոշոր ընկերութիւններին, զանազան ուրիշ տնտեսական մենաշնորհութիւնների հետ միասին, կապալով էր տրւում մի քանի գաղութներ ռաւտրական գործերի ղեկավարութիւնը: Այդպիսի ընկերութիւններին քանակաւոր սահմանաւորում անգլիական Արեւելահնդկական ընկերութիւնն էր. նա իւր ճարպիկ և նենդ քաղաքականութեամբ ու պատերազմներով կարողացաւ մի քանի տասնեակ միլիոն ընկերներ ունեցող ահագին կալւածքներ ձեռք բերել:

Այդպէս, միապետութիւնների «հովանաւորող» քաղաքականութեան մէջ գործնականապէս իրագործւում էին զարգացող կապիտալիստական արտադրութեան հէնց այն պահանջները, որոնք տեսականապէս արտացոլւում էին առևտրական հաշւեկշռի դպրոցի հայեացքների մէջ:

Առաջին անգամ առևտրական հաշւեկշռի դպրոցում ծագեց տնտեսական երևոյթների որոշ օրինաւամապատասխանութիւն (законосообразность) գաղափարը: Սա վերին աստիճանի կարեւոր գաղափար է, առանց որի տնտեսական դիտութեան առաջնալը հնարաւոր չէր լինի, որովհետև օրէնքը չի կարող լինել այնտեղ, որտեղ չկայ գոնէ երևոյթի օրէնքները պարզելու ձգտում: Առաջին անգամ Թոմաս Մէօն (XVII դարու սկզբում) յայտնեց իւր կարծիքն այն մտքով, թէ տնտեսական կեանքը յատուկ օրէնքների է ենթարկւում: Նրա կարծիքով, պետութեան կամայական միջոցները կարճ ժամանակով միայն կարող են փոխել պատահարների ընթացքը, իսկ յետոյ կյալթանակեն էկոնոմիկայի սեփական օրէնքները և ամեն ինչ նորից իւր ճանապարհով կրնա թանայ: Այդպիսի հայեացքին նիւթ էր տալիս, ի հարկէ, զանազան պետական միջոցների անյաջողութիւնը, որոնք ժամանակի կարիքներին հակառակ էին գնում, օրինակ՝ դրամական հաշւեկշռի սիստեմի ոգով ստեղծւած միջոցները:

Եթէ նորածին, դեռ չամրացած կապիտալիզմի համար հովանաւորողական սիստեմը խիստ օգտակար է, իսկ որոշ պայմաններում նոյնիսկ անհրաժեշտ, այս դեռ չի նշանակում, որ ներքա նշանակութիւնը կապիտալիստական զարգացման յետագայ

աստիճանների համար էլ այդպէս է: Վաղ թէ ուշ, համուծ է բուպէն, երբ արդիւնաբերական կապիտալն իւր մէջ այնքան ոյժ է դնում, որ առանց կողմնակի օգնութեան է կառավարւում: Այն ժամանակ պետական հոգատար խնամակալութիւնը նրա համար անյարմար է դառնում:

Նախ՝ ինչ չափով որ երկրի ներսում աճում է մանուֆակտուրային ապրանքների սպառումը, նոյն չափով միջակ և մանր բուրժուան, իրրե սպառող, սկսում է ոտքի կանգնել հովանաւորման դէմ (протекционизм): Իսկապէս ի՞նչ բան է հովանաւորումը սպառողի հայեցակէտով:

Ենթադրենք, թէ Անգլիայում բրդէ գործւածքների արտադրութիւնը խիստ զարգացած է, աշխատանքի արտադրողականութիւնն այդ ճիւղի մէջ շատ բարձր է և անգլիական կապիտալիստներն արտադրութեան և գործւածքի Ֆրանսիա տեղափոխելու ծախսերը, մի մետրը 2 ֆրանկ նստած դէպքում, կարող են բաւականին շահով վարձատրել: Ֆրանսիայում բրդի գործը դեռ նոր է սկսւում, տեխնիկան վատ է և Ֆրանսիայի կապիտալիստներն իրանց գործւածքը մետրը 3 ֆրանկից պակաս չեն տալիստներն իրանց գործւածքը մետրը 2 ֆրանկից պակաս չեն պէտք է ֆրանսական շուկայում յաղթեն ֆրանսացիներին, — և պէտք է ֆրանսիայում պէտք է ընկնի: Պետութիւնը, իւրաբար չի բարձր մետրի վրայ 1 1/2 ֆրանկ ներմուծելու մաքս դնելով, այդ վտանգը վերացնում է: Անգլիական ալրանքը պէտք է 3 1/2 ֆրանկից արժան չծախել, — և ֆրանսական կապիտալիստները փրկւած են կորստաբեր մրցումից: Սակայն ֆրանսական սպառողները, 2 ֆրանկով անգլիական լաւ գործւածք ստանալու փոխարէն, ստիպւած են 3 ֆրանկով ֆրանսական վտտերը գնել: Ժամանակի ընթացքում նրանք սկսում են բողոքել հայրենի կաթաւաճառական տեխնիկան անգլիականի մակերևոյթին հասցնելու հնարաւորութիւն է ներկայանում:

Երկրորդ՝ կապիտալի միջանի ճիւղերը հովանաւորելը վնասակար է միւս ճիւղերին: Երկրագործական գործիքների ներմուծելու բարձր մաքսերն անշահաւէտ են ֆերմերի համար, որին պէտք են այդ գործիքները: Երկաթի ներմուծելու մաքսը ցանկալի չէ արտադրող գործիքների համար: Բանւորների սպառման իրերի մաքսերը անհաճելի են ընդհանրապէս բոլոր ձեռնարկողներին, որովհետև բարձրացնում են բանւորական ոյժի գինը և այն: Ընդհանրապէս, մենավաճառութիւնը բոլորին զայրացնում է, բացի մենավաճառից:

Արդիւնաբերական ձեռնարկողը նրանով է անբաւական, որ օրէնքը տեխնիկայի գործերի մէջ է խառնւում, օրինակ՝ նմուշ օրէնքը տեխնիկայի գործերի մէջ է խառնւում, որոնց հետեւը պարտաւորեցուցիչ է արտաներ է սահմանում, որոնց հետեւը պարտաւորեցուցիչ է արտադրութեան մէջ, — այդ դէպքում նա գնալով աւելի յետ է մնում տեխնիկական արագ յառաջադիմութիւնից, այնպէս որ նմուշները հնացած են դուրս դալիս:

Չարագացող արդիւնաբերական կապիտալն սկսում է իւր համար արտաքին շուկաներ վնասել, բայց նրանք անմատչելի են

երևում, շնորհիւ դարձեալ միևնոյն հովանաւորման: Մի տէրութեան ներմուծելու բարձր տարիֆներին միւսները նոյնպիսի տարիֆներով են պատասխանում: Տարիֆները վրայ տեղի է ունենում մի առանձնայատուկ կօր, որ շատ անգամ իսկական պատերազմի է յանգում:

Հետևապէս, հովանաւորող քաղաքականութիւնը կապիտալի շահերից դուրս է գտնուում: Այն ժամանակ տնտեսական հայեացքները փոխուում են: Նոր հայեացքները գիտական ձևով ամենից առաջ անգլիական տնտեսագէտներն արտայայտեցին:

Անգլիայում՝ արդիւնաբերական կապիտալի համար կառավարչական միջամտութեան բոլոր տեսակներից ամենաճշողը երկրագործութեան հովանաւորութիւնն էր—«ցորենի օրէնքները»: Արտասահմանից Անգլիա ցորեն ներմուծելը միայն այն ժամանակ է թոյլատրւում. երբ ցորենի գները որոշ, խիստ բարձր նորմայի են հասնում: Ցորենի բարձր գների հետևանքը բարձր աշխատավարձն է, այսինքն՝ կապիտալիստների համեմատաբար ցածր շահը: Իսկապէս հէնց ցորենի օրէնքների առիթով առաջին անգամ բողոք բարձրացաւ երկրագործութեան պետական հովանաւորութեան դէմ (մեծ մասամբ, յատկապէս, հողատիրութեան հովանաւորութեան): Նոյնպիսի բողոքով XVII դարու կէսերին հանդէս եկաւ Բալէյն:

Առևտրական կապիտալի հետ համեմատած՝ արդիւնաբերական կապիտալի զգալի զարգացումը, կապիտալի աճող գերակշռութիւնը, որ կապիտալի դրամական ձևի արտադրութեան միջոցների տեսք ունի, փոփոխութիւն է առաջ բերում փողի վրայ եղած հայեացքների մէջ: Չայլըլը գտնում է, որ փողը ապրանքներից մեկն է, թէպէտ լաւագոյն ապրանքը: Սրանով քանդուում է թէև դեռ ոչ լիովին, հին դպրոցի տեսական հիմքը:

Որովհետև առևտրական կապիտալն իւր անմիջական գործունէութիւնը փոխանակութեան վրայ է կենդրոնացնում, իսկ արտադրութիւնից համեմատաբար հեռու է կանգնած և որովհետև առևտրականի հաշիւները շատ դէպքերում իսկապէս գնի փոփոխութիւնների և նորմայից շեղելու վրայ են հիմնուում, ուրեմն շատ հասկանալի է, որ առևտրական կապիտալի իդիօլոգներից խուսափում է փոխանակութեան հիմնական օրինականութիւնը— փոխանակական յարաբերութիւնների՝ ապրանքների աշխատանքային արժողութիւնից ունեցած կախումը: Արդիւնաբերական կապիտալիստն ուրիշ գրութեան մէջ է գտնում. նա անմիջականապէս է կազմակերպում աշխատանքը, անմիջականապէս է հետևում արտադրութեանը և իւր գործերն աւելի գների հաստատութեան, քան թէ նրանց տատանման հաշուով է կատարում: Այս բանի շնորհիւ, արդիւնաբերական կապիտալի իդիօլոգը՝ ապրանքների արտադրութեան աշխատանքային արժողութեան և նրանց գների մէջ եղած կապը պարզելու համար, համեմատաբար աւելի յարմար պայմանների մէջ է գտնում: Եւ իրօք, XVII դարու վերջում Վիլեամ Պետտին արդէն ընդհանուր գծերով սահմանում է աշխատանքային արժողութեան տեսութիւնը, որ ժամանակակից տնտեսական գիտութեան հիմքն է կազմում: Սրա հետ միասին վերջնական հարւած է տրւում այն ուսմունքին, որ հրահանգում

էր, թէ փողն է միակ, բացառիկ և իսկական հարստութիւնը. պարզուում է, որ փողն էլ արժէք ունի այն պատճառով միայն, որ նա ևս աշխատանք արժէ:

Այնուհետև, հին դպրոցի գաղափարներին հակառակ, մի առանձին վճռականութեամբ, լիութեամբ ու պարզութեամբ ազատ մրցման գաղափարներ է արտայայտում Դէլլէյ Նորտ, որին ընդունւած է առաջին հետևողական ֆրիտրեյդեր—ազատ առևտրի կողմնակից—համարել:

Նորտի ուսուցմունքը, ընդհանուր առմամբ, այսպէս է: Ազգը միայն արդիւնաբերութեան և առևտրի շնորհիւ է հարստանում: Նրանց հիմքը աշխատանքն է ներկայանում, որին պէտք է հարստութիւնների աղբիւրը ճանաչել: Իսկ փողը—ոչ աւելի, եթէ ոչ ապրանքներից մէկը: «Երկրի մէջ փողը ոչ քիչ է լինում և ոչ ապրանքներից մէկը», ըստ Նորտի, «Նորտի կարծիքով, համար», բայց այս միայն այն դէպքում, երբ, Նորտի կարծիքով, փողով առևտուր չի ձնչւած:

Առևտուրն ու արդիւնաբերութիւնը պէտք է ազատ լինեն. եթէ հարստութեան աղբիւրն աշխատանքն է, ուրեմն ոչ մի կանոնադրութիւն չի կարող նպաստել ազգի հարստանալուն, այլ ճնշելով աշխատանքի զարգացումը, կարող է միայն արգելք դառնալ նրան: «Ո՛չ մի քաղաք պետութեան ձեռք առած միջոցներով չի հարստացել, այլ միայն խաղաղութիւնը, աշխատասիրութիւնն է հարստութիւնը ստեղծեցին արդիւնաբերութիւնն ու հարստութիւնը»: Նորտը դէմ է կանգնում տնտեսական կեանքի մէջ ամեն ինչի մի արտաքին միջամտութեան: Փարթամութիւնը սահմանափակող մի հասկացողութեամբ է ապացուցում, որ օրէնքների զուտը նա այն հասկացողութեամբ է ապացուցում, որ կարիքների զարգացումը, մարդկանց աւելի եռանդով աշխատելու դրդելով, յառաջադիմութեան հօր մղիչ է հանդիսանում:

Ըստ Նորտի, թէ ներքին առևտուրը և թէ արտաքին առևտուրը հաւասար չափով անհրաժեշտ են և իրարից փոխադարձ կախումն ունեն: Առաջինն էլ, երկրորդն էլ հաւասարապէս պէտք է ազատ լինեն: Աշխարհի բոլոր ազգերը ձիշտ այնպէս են կապւած իրար հետ և այնպէս պէտք են մէկ մէկու, ինչպէս մի երկրի առանձին հարկերը, արգելումները և այլն են, նոյնպէս անմիտ է, տան հարկերը, արգելումները և այլն են, նոյնպէս անմիտ է, մէջ բոլոր ազգերը մի նպատակի են դիմում, նրանց ծառայում է մի նպատակի են: Մարդկութիւնն արդիւնաբերական կեանքի մէջ լիովին համերաշխ պէտք է լինի: Իւրաքանչիւր նեղ նացիօքի մէջ լիովին համերաշխ պէտք է լինի: Դա ծառայութիւնները, նախիզմ, փոքրացնելով ազգերի փոխադարձ ծառայութիւնները, զիջում է բերում միայն և ուշացնում նրանց տնտեսական զարգացումը:

Տնտեսական ճիւղի մէջ պետութեան օգտակար գործունէութիւնը՝ սեփականութիւնը պաշտպանելու վրայ է յանգում. իւրաքանչիւր ուրիշ միջամտութիւն, ըստ Նորտի, արդիւնաբերութեան ջանքերին զիջում կարող է միայն: Նորտի հայեացքները լայն ընդշահերին զիջում կարող է միայն: Նորտի վերջը (XVII դարու վերջը): Նոյնիսկ հանրացում չգտան նրա ժամանակ (XVII դարու վերջը): Նոյնիսկ Անգլիայում կապիտալիստական արտադրութեան մի քանի ճիւղերն էին միայն այնքան զարգացել, որ բոլորովին անկախ, առանց պէ-

տութեան խնամակալութեան կարիքի ապրէին:

Կէս դար յետոյ ազատ մրցման դպրոցը Ֆրանսական հողի վրայ էլ բարձրացաւ: Միքանի առանձնաշատուկ պայմաններ աշխտեղ նոր ուսմանը մի առանձին գոյն տւին, բայց էութիւնը միևնոյնն էր:

Երբ հովանաւորումը տւեց Ֆրանսական զարգացող արգիւնաբերութեանը համարեա այն բոլորը, ինչ որ կարող էր տալ, այն ժամանակ նա, ինչպէս միւս երկրներում, սկսեց հետզհետէ զարգացման ճանապարհի խոչընդոտ դառնալ: Այս երևոյթն արգիւնաբերական-առևտրական բուրժուազիայի տրամադրութեան մէջ ընկալելի առաջ բերեց նրա դէմ: Հետեանքը Ֆիզիոկրատների տեսութիւնը եղաւ (բնութեան գերիշխանութիւն — ուսուցմունք, որ հողն ու հողային տնտեսութիւնն է հարստութեան աղբիւրը ընդունում):

Բայց միայն հովանաւորումը չէր ճնշում կապիտալի զարգացումը: Այս մտքով աւելի ևս զգալի փաստ ֆէօդալական համաքարական ձևերի մնացորդներն էին բերում, որոնք ոչ կապիտալի ազատութեանն էին յարմարում, ոչ էլ աշխատանքի:

Հետևապէս, ֆիզիոկրատները միաժամանակ պէտք է թէ այս մնացորդների հետ կռւէին և թէ հովանաւորման հետ: Նոր դպրոցի համար կուի ամենայնամայն գործիքը երկրագործութեան շահերն էին և սա երկու պատճառներից էր կախած: Նախ՝ այն ժամանակ Փրանսիան դիտարարւում էր երկրագործական երկիր էր, և երկրորդ՝ երկրագործութիւնը վերին աստիճանի նեղում էր այն միևնոյն պայմաններից, որոնք արգելում էին կապիտալի յառաջադիմութիւնը:

Միջնադարեան շրջանի մնացորդների՝ երկրագործական արտադրութեան զարգացմանը հասցրած հսկայական փլուստի մասին այստեղ առանձին խօսելու կարիք չկայ. այդ նախընթացի մէջ բացատրեց. ինչ վերաբերում է հովանաւորմանը, սա աւելի կողմնակի ճանապարհներով էր նպաստում երկրագործական տնտեսութեան քայքայմանը: Ամենից առաջ նա գիւղացուն անհրաժեշտ՝ շատ արգիւնների գները չափազանց բարձրացրեց. յետոյ Փրանսիային գրաւեց մի շարք պատերազմներով, որոնք խիստ քայքայելի էին երկրի համար և իրանց ամբողջ ծանրութեամբ երկրագործ դասակարգի վրայ էին ընկել: Գիւղացին պէտք է վճարէր պատերազմական ծախսերը ծածկելու տուրքերի ամենամեծ մասը և իւր լաւագոյն բանւորական ոյժերը պէտք է տար այնպիսի ապարդիւն աշխատանքի, ինչպիսին պատերազմն է և այն էլ շատ անգամ խիստ անյաջող:

Երկրագործական դասակարգի շահերը կապիտալի իդիօլօգների սրտին աւելի մօտիկ էին նրանով, որ գիւղացիութեան քայքայումը ներքին շուկան կապիտալիստական արգիւնաբերութեան համար չափազանց էր նեղացրել: Տնտեսական քաղաքականութեան հին հոսանքը չէր նկատում, որ արգիւնագործութեան զարգացումը խիստ ենթարկւած է երկրագործութեան էկոնոմիկային: Նոր դպրոցը ստեղծեց մի այնպիսի թէօրիա, որ երկրագործութիւնը տնտեսական կեանքի անկիւնաքարն է համարում:

Ֆիզիոկրատների ուսմունքի համաձայն, բնութիւնն է բոլոր հա-

րստութիւնների աղբիւրը: Այն աշխատանքն է միայն հարստութիւն ստեղծում, այն աշխատանքն է միայն արտադրողական, որն անմիջապէս բնութեան հետ գործ ունի — երկրագործական և, ընդհանրապէս, հանրային աշխատանքը: Միայն երկրագործութիւնն է զուտ եկամուտ բերում և արտադրութեան վրայ ծախսածից աւելի շատ արդիւնք մատակարարում մարդուն:

Արհեստաւորական, մանուֆակտուրային և ընդհանրապէս, արգիւնագործող աշխատանքը, ֆիզիոկրատների կարծիքով, հողից ստացած հարստութեան ձևն է փոխում միայն, իսկ նոք հարստութիւն չի ստեղծում: Առևտուրն էլ նոր արժէքներ չի ստեղծում, նա միայն արժէքները ձեռքից ձեռք է տեղափոխում: Ամբողջ ազգը երկրագործ դասակարգի աշխատանքով ստեղծւած զուտ եկամուտի հաշուով է ապրում: Մնացած արգիւնաբերական և ոչ արգիւնաբերական դասակարգերը, այսպէս ասած, երկրագործներից ռոճիկ են ստանում:

Այստեղից այսպիսի եզրակացութիւն է դուրս գալիս, թէ բոլորովին բնական և մտացի է, որ բոլոր տուրքերն ընկնէին հողի վրայ, իբրև հարստութիւնների միակ աղբիւրի: Բոլոր հարկերը պէտք է փոխարինւէին մի հողային տուրքով: Արգիւնագործութիւնն ու առևտուրը, իբրև ոչ մի հարստութիւն չստեղծողներ, պէտք է բոլոր հարկերից ազատ լինէին: Այս եզրակացութիւնը ներկայացնում է մի բողոք ազնւականութեան և հոգևորականութեան տուրքերից ազատ լինելու դէմ. բայց միևնոյն ժամանակ այդ եզրակացութիւնը խիստ պարզ ցոյց է տալիս, որ ֆիզիոկրատները, չնայած իրանց՝ դէպի երկրագործութիւնն ունեցած ամբողջ սիրոյն և մշտական նրան փառաբանելուն, իսկապէս արգիւնաբերական և առևտրական կապիտալի շահերի ներկայացուցիչներն էին (գիտակից, թէ անգիտակից — այդ ուրիշ հարց է):

Ֆիզիոկրատների հայեացքով՝ բնութիւնը ոչ միայն հարստութիւնների միակ աղբիւրն է — այլ և միևնոյն ժամանակ ժողովուրդների կեանքի միակ, իսկական առաջնորդողը: Հասարակական կարգը պէտք է բնութեան յաւիտենական, անփոփոխելի օրէնքներով որոշուի, ինչպէս սրանցով են որոշում բոլոր միւս երևոյթները: Հասարակական կազմը միայն այն դէպքում է խեղդու ու կանոնաւոր, երբ նա համապատասխանում է բնութեան օրէնքներին, միայն այդ ժամանակ է նա հասարակութեան բոլոր անդամներին բարօրութեան հասցնում: Իսկ որքան հասարակական կարգն իրականութեան մէջ շեղում է բնութիւնից՝ այնքան նա անիմաստ է և վնասակար:

Ամենաբնական և ուրեմն, ամենախելացի կարգը, ֆիզիոկրատների կարծիքով, այն կարգն է, որ ամենից քիչ է ճնշում մարդկային բնութեան արտաշայտութիւնները: Ինքն իրան մնալով, նա ամենից ընդունակն է գործունէութեան նկատմամբ իսկական ճանապարհի վրայ կանգնելու մէջ: Իրաքանչիւրը իւր բնութեան ձայնով առաջնորդուելով, գիտակցօրէն և խելացի կերպով կձգտի իւր անձնական առաջնորդուելու, ամենքը բաղդաւոր կդառնան: Մարդկաբաղդին, այդ միջոցով ամենքը բաղդաւոր կդառնան: Մարդկային կեանքը պէտք է ազատել նրա վրայ ծանրացած ճնշումներից (աւիններ է — ֆէօդալական, համաքարական, հովանաւորական և այլն

ճնշումներին): Ամեն բանի մէջ ազատութիւնն անհրաժեշտ է, իսկ տնտեսական կեանքի մէջ—առանձնապէս: Այստեղ կարելի է համարձակօրէն վստահել անձնական շահերի գործունէութեան վրայ, որովհետև իւրաքանչիւրը, հոգալով իւր սեփական հարստութիւնը մեծացնելու մասին, դրանով ազգային հարստութիւնը մեծանալուն է օգնում: Հետևապէս, պետութիւնը տնտեսական կեանքի մէջ չը պէտք է խանութ: Նրա գործը՝ անձնաւորութիւնը, սեփականութիւնը պաշտպանելն է, ուրիշ աւելի ոչինչ չի պահանջում նրանից:

Նոր դպրոցի ձգտումներն ամենապայծառ և եռանդուն ձևով արտայայտւած են ֆիզիոկրատ Գուրնէ-ի պետութեանն ուղղած հոչակաւոր դարձածքի մէջ. «Laissez faire, laissez aller». («Մի խանութք, թողէք կեանքն իր ճանապարհով գնայ»): Այս դարձածքը ամբողջ ազատամիտ տնտեսական ուսուցման գլխաւոր պատւիրանը դարձաւ:

Ֆիզիոկրատները մի համախմբւած ընկերութիւն էին ներկայացնում, որոնց գլուխն էր անցել Լիւդովիկ XV-ի բժիշկ Կենէ-ն: Նրանց դպրոցին էր պատկանում նշանաւոր քաղաքական գործիչ Տիւրգոտ: Առաջին անգամ նա պարզ կերպով արտայայտեց աշխատավարձի հիմնական օրէնքը.—վճարի քանակը որոշուած է բանորի համար կեանքի անհրաժեշտ միջոցների արժէքով: Արդիւնաբերական կապիտալի իրական յարաբերութիւնների ըմբռնման մէջ այդքան զգալի պարզութիւնը, այնուամենայնիւ, մի ապացոյց է, որ ֆիզիոկրատներն իսկապէս արդիւնաբերական կապիտալի իդիօլօգներն էին:

Ֆիզիոկրատների գործնական ծրագիրը ֆրանսական յեղափոխութիւնը զգալի կերպով կեանք մտցրեց: Հետևապէս, այդ ծրագիրը ժամանակի պահանջների հարազատ արտայայտութիւնն էր:

Ազատ մրցման դպրոցի յետագայ զարգացումը մեզ նորից Անգլիա, Ադամ Սմիտի գործունէութեան շրջանն է տանում:

XVIII դարու երկրորդ կիսին Անգլիան բաւականին զարգացած մանուֆակտուրային-կապիտալիստական երկիր էր: Սոշոլ-բուրժուական կազմի հասարակական յարաբերութիւններն արդէն բաւականին որոշ և պայծառ էին հանդէս եկել և կեանքի մէջ տիրապետող դեր էին խաղում:

Այդպիսով, կապիտալիստական սիստեմի հիմքերի բաւականին լրիւ, ճիշտ և ընդհանրապէս, գիտական պատկերը հնարաւոր դարձաւ: Այդ կատարեց Ադամ Սմիտը, որին և սովորաբար տնտեսական գիտութեան հայր են անւանում: Այս, էպպէս, ճիշտ չէ և աւելի օրինաւոր կլինէր Վիլիամ Պետտի-ին համարել տնտեսական գիտութեան հիմնողը, որ նրան հաստատուն թէօրիտիկական հիմք, պարզ ասած, ընդհանուր գծերով, աշխատանքային արժողութեան ուսմունք տւեց: Սակայն սովորական կարծիքն ամբողջապէս այն ահագին ազդեցութեամբ է բացատրւում, որ Ա. Սմիտի աշխատանքներն ահագին ազդեցութիւն ունեցան տնտեսական գիտութեան զարգացման վրայ:

Ա. Սմիտն զգալի կերպով ֆիզիոկրատների աշակերտն է հանդիսանում. նա ծանօթ էր այդ խմբի հետ և իւրացրեց նրա գաղափարներն ու ուղղութիւնը: Բայց հասարակական բարենը պատ պայմաններն օգնեցին Սմիտին մեկուսանալ ֆիզիոկրատ-

ների ուսուցման միակողմանիութիւններից: Ֆրանսիայի տնտեսական կեանքը ի մի էր հաւաքել այս դպրոցի թէօրիտիկական սխալները. իսկ Սմիտն ուսուցնասիրեց անգլիական հասարակական տնտեսութիւնը, որն իւր զարգացման մէջ ֆրանսականից խիստ առաջ անցաւ և ընդհանրապէս զգալի կերպով տարբերուած էր նրանից:

Ա. Սմիտի տնտեսական հետազոտութեան եղանակները, ըստ մեծի մասին, դեղուկուիւ են: Նա հասկանում է, որ մարդ իւր տնտեսական գործունէութեան մէջ միմիայն անձնական շահի ըզգացմանն է ենթարկւում, իսկ կեանքի որ և է շրջանի համար անձնական շահը՝ հնարաւոր եղածին չափ մեծ հարստութեան ձգտելու մէջ է կայանում: Սկիզբն առնելով այս մտքից, նա աշխատում է մարդու և հասարակութեան ամբողջ տնտեսական գործունէութիւնը բացատրել:

Սակայն դեղուկցիայի համար քիչ է մի հիմունքը, թէ մարդը տնտեսական շրջանում տնտեսական եսասիրութեան գրգռմանը են է հնազանդուում: Պէտք է այնպիսի պայմաններ էլ իմանալ, որոնց դէպքում մարդը հարկադրւում է իրագործել իւր եսասիրական ձգտումները: Հետազոտութեան համար Ա. Սմիտը վերցնում է ընդհանուր գծերով այն սօցիալ-տնտեսական պայմանները, որոնք այդ ժամանակ գոյութիւն ունէին Անգլիայում և, ինչպէս որ պատահեց, հէնց այդպիսի պայմաններում էլ քննում է մարդու տնտեսական գործունէութիւնը:

Սակայն Ա. Սմիտը ի նկատի ունի պարզել ոչ թէ կապիտալիստական հասարակութեան կեանքի մասնաւոր օրէնքները զարգացման այն աստիճանի վրայ, որ անց կացրեց Անգլիան, այլ նա իւր եզրակացութիւններն էկոնոմիկայի ընդհանուր օրէնքների արտայայտութիւնն է համարում, ընդհանուր քաղաքական տնտեսութիւն է գրում («Ազգերի հարստութիւնը», 1776 թւին): Սուրբը նրանումն է, որ կապիտալիստական յարաբերութիւններն է նա միակ նորմալը համարում. յարաբերութիւնները նա կամ ամենեւին չի քննում, կամ նրանց նորմայից շեղւած և չաւարտւած, անկատար զարգացման արդիւնք է համարում:

Երկրի հարստութիւնը, ըստ Սմիտի, երկրի ապրանքների ամբողջ քանակութիւնն է: Ակնբռն է, որ հարստութեան մասին այդպիսի հասկացողութիւնը միայն ապրանքային, փոխանակական տնտեսութիւն ունեցող երկրին է յարմարում. բնական-տնտեսական հասարակութեան համար, որտեղ արդիւնքները ապրանքներ չեն, այդ հասկացողութիւնը բոլորովին այնպիսի է:

Սմիտի վարդապետութեամբ, արժէքի ու հարստութեան միակ աղբիւրը՝ աշխատանքը, ընդհանրապէս, իւրաքանչիւր արտադրողական աշխատանքն է: Այն էլ չմոռանանք, որ Սմիտը նիւթալան բարիքներ ստեղծող աշխատանքն է միայն արտադրող համարում: Յամենայն դէպս, Սմիտը ֆիզիոկրատների նեղ հայեացքի մէջ չի ընկնում, որոնք միայն երկրագործական աշխատանքն էին արտադրող ընդունում. Սմիտի ժամանակները Անգլիայում արդիւնագործութիւնը ազգային հարստութիւն ստեղծելու մէջ հանքային արդիւնաբերութիւնից պակաս դեր չէր խաղում:

Սմիտի որոշելով, կապիտալը կուտակւած աշխատանքի այն

մասն է, որ նշանակում է եկամուտներ ստանալու համար: Ակններև է, որ եկամուտներ ստանալու համար՝ մարդիկ յետագայում միշտ պէտք է հաւաքած աշխատութիւնը գործադրեն արտադրութեան մէջ: հետևապէս, կապիտալը, Սմիտի հայեցակէտով, միշտ պէտք է գոյութիւն ունենայ: Կապիտալի յաւիտենականութեան մասին այսպիսի պատկերացում ունենալիս, կապիտալիստական յարարերու քիւնցերի անփոփոխելիութեան միտքը խելքի մօտիկ է լինում:

Կապիտալները նախնական կուտակումը Սմիտը խնայողութեամբ է բացատրում. մասն արտադրողներն ինչ որ արտադրում էին, բոլորը չէին սպառում և աւելորդները կուտակումը կազմում էր կապիտալները:

Արժէքի մասին Սմիտի ուսուցմունքն ընդհանուր գծերով այսպէս է: Արժէքի նախնական աղբիւրը նա աշխատանքն է ընդունում: Սրանից դուրս բերած ուղիղ եզրակացութիւնը պէտք է աշխատանքային արժողութեան տեսութիւնը լինի. ապրանքների փոխանակական արժէքը նրանց մէջ մարմնացած հասարակական աշխատանքային եռանդի քանակութեամբ է որոշուում: Սմիտն այս հետևութիւնից շեղում է: Նրա կարծիքով, ժամանակակից հասարակութեան մէջ ապրանքի գինն՝ աշխատանքի արժէքից, կապիտալի շահից և հողային ընկալից է կազմուում: Միջակ գնի և աշխատանքային արժողութեան գուգադիպութիւնը նա միայն այն շրջանի համար է ընդունում, երբ աշխատանքի գործիքներն արտադրողին էին պատկանում: Իսկ երբ քաղաքակրթութեան զարգացման հետ աշխատանքն ու կապիտալը բոլորովին բաժանուեցին, այն ժամանակ, իրրև արտադրութեան համար նրանից օգտուելու հնարաւորութեան վարձատրութիւն, գնի կազմի մէջ պէտք է մտնէր նաև կապիտալի շահը: Հողը մասնաւոր սեփականութիւն դառնալուց յետոյ, գնի կազմի մէջ բննական էլ մտաւ:

Իրականութեան մէջ ապրանքների գինը, ինչպէս պարզեց, նրանց վերջնական հաշի արժողութեամբ է որոշուում. իսկ ապրանքի արժողութիւնը վերածուում է մշտական կապիտալի արժողութեան, (որ Սմիտը բոլորովին մի կողմն է թողնում), փոփոխական կապիտալի արժողութեան և յաւելիալ արժէքի: Սմիտի հայեցողների մէջ թագնւում է այն, առանձնապէս կարևոր, հանգամանքը, որ աշխատավարձի շատանալով շահը փոքրանում է, որովհետև նրանք մի անփոփոխելի գումարը՝ նորից արտադրած արժէքի—երկու մասերն են ներկայացնում: Սմիտի հայեցակէտով, երբ աշխատավարձը շատանում է, ապրանքների գներն են միայն աւելանում, մինչդեռ, աշխատանքային արժողութեան տեսութեան համաձայն, բանուր դասակարգի բաժնի աճումը ոչ թէ գների աճումն է նշանակում, այլ միւս դասակարգների բաժնի փոքրանալը:

Սմիտի գիտական ծառայութիւնն է կազմում, ի միջի այլոց, նաև նրա այն ուսուցմունքը, թէ ինչպէս է մրցումը հաւասարեցնում շահը և զանազան ձեռնարկութիւնների ու արտադրութեան զանազան ճիւղերի աշխատավարձը:

Աշխատավարձի ուսուցման մէջ Սմիտը պարզում է, որ նրա փոփոխութիւնները բանաւորների սպասելու իրերի գների փոփոխութիւններից են առաջանում:

Շահի ուսուցման մէջ Սմիտն այն կարծիքն է յայտնում, որ շահի տոկոսը աղբի հարստութեան աճելուց է փոքրանում: Ըստ նրա ուսուցման, սրա պատճառն այն է, որ այս ղէպում կապիտալիստների մէջ մրցումը սաստկանում է. կապիտալներն այնքան շատանում են, որ դժւարութեամբ են գործադրութիւն զբաղում: Երևոյթը ճիշտ էր նկատւած, բայց նրա բացատրութիւնը, ինչպէս յետոյ ցոյց կտուի, բոլորովին սխալ է:

Սմիտն աւելի անյաջող է հետազօտել հողային ընկալին: Նա ընկալին համարում է հողից օգտուելու համար մի վարձ, որ տրուում է այն ժամանակ, երբ հողի պահանջը գերազանցում է առաջարկութեանը:

Փողը Սմիտի համար նոյնպիսի ապրանք է, ինչպէս միւս ապրանքները: Փողը «ժողովրդական կապիտալի փոքր մասն է միայն, բայց ամենաանշահ մասը... նա անարտադրող և մեռած կապիտալ է»: Եթէ այդպէս է, ուրեմն սկներև է, որ առևտրական հաշուեկշիւը էական նշանակութիւն չունի: Սրա փոխարէն Սմիտը օրական արտադրութեան և սպառման հաշուեկշիւն է դնում: Երկիրը հարստանում է այն ժամանակ, երբ աւելի շատ արժէք է արտադրում, քան սպառածը:

Արդարևո՞վ, արտադրութեան անուճը պետութեան խելացի անտեսական քաղաքականութեան նպատակն է հանդիսանում: Բայց իսկապէս որ քաղաքականութիւնն է ընդունակ դիւրացնելու արտադրութեան զարգացումը:

Հովանաւորողական սխտենմն արտադրութեան ընդհանուր աճմանը չի նպաստում, նա միայն ստիպում է կապիտալիստներին փոխադրել կապիտալներն արդիւնաբերական մի ճիւղից մի ուրիշը, պետութեան հովանաւորողականութիւնը չունեցողներից գէպի ընդհակառակը: Փոխում է միայն ազգային կապիտալի՝ արտադրութեան ճիւղերի մէջ բաշխումը. սրանով կապիտալի քանակութիւնը չի աճում: Ընդհակառակը, կապիտալի գործադրութիւնն երկրի համար աւելի քիչ շահաւէտ է դառնում և աճ թէ ի՞նչ ու. երբ պետական միջամտութիւն չկայ, այն ժամանակ կապիտալիստները կգիմեն արտահանութեան այն ճիւղին, որտեղ աշխատանքն ամենաարտադրողն է. իսկ հովանաւորումը կապիտալներից քաշում է գէպի այնպիսի ճիւղեր, որոնք ինքն ըստ ինքեան այնքան էլ յատուկ չեն որ և է երկրի և որոնց մէջ աշխատանքն աւելի քիչ արտադրող է:

Փոխանակութեան մէջ ամենախելացի կանոնն այս է. «գնիր ամենաարժան շուկայում, ծախիր ամենաթանկի մէջ»: Հովանաւորումը սամանափակում է այս կանոնի գործադրութիւնը. երկիրը ստիպւած է գնել այն ապրանքները, որոնց հովանաւորութիւն է ցոյց տրւած. ուրեմն նա պէտք է ոչ թէ արտասահմանի արժան շուկայից դնէ, այլ աւելի թանկ շուկայից— հայրենի արտադրողներից:

Բացի այդ, հովանաւորումը ազդերի մէջ առաջ է բերում միայն թշնամութիւն և կոիւ, իսկ առևտուրը պէտք է բարեկամութեան և գաշնակցութեան կապ լինի (Անգլիայի մանուֆակուրները XVII դարում բուականին զարգացել էին և չէին տուրաները XVIII դարում բուականին զարգացել էին և չէին տուրաները XVII դարում արգումից. իսկ միւս պետութիւնների հովանա-

ւորող քաղաքականութիւնը, խլելով Անգլիայից արտաքին շուկաները, խիստ վնասում էր նրա արդիւնաբերութեանը)

Հովանաւորութիւնից և ճնշումներից բոլորովին ազատ արդիւնաբերութիւն—անհն խելացի, բնական կարգ: Պետութեան գործը սրանք պիտի լինեն.— թշնամիներից պաշտպանել, արգարադատութիւնն իրագործել և բացի այդ, պահել այնպիսի հիմնարկութիւններ, որոնք դուրս են մասնաւոր ձեռնարկութիւնների շրջանակներից (հիւանդանոցներ, դպրոցներ, անկեղանոցներ և այլն): Այդպիսի պայմաններում առանձին մարդկանց անձնական շահը իրանց ազատ գործունէութեամբ աւելի մեծ հասարակական օգուտ կունենայ: Մտիտի կարծիքով, մարդիկ իրանց եսասիրութեանը ծառայելով, յաճախ աւելի լաւ են ծառայում ընդհանուր բարիքին, քան եթէ նրանք ամենաօտարասէր և անշահասէր ձգտումների հետեւէին:

Մտիտի դէպի հովանաւորումը ունեցած ատելութիւնը նրան միակողմանիութեան չէր հասցնում: Իեղուկցիայի ամենավերացական հետևութիւններից կոնկրետ իրականութեան անցնելով, նա միքիչ—սահմանափակում է իւր հիմունքները: Այսպէս, օր՝. նա ընդունում է սպառազինութեան և ընդանրապէս զօրքին անհրաժեշտ առարկաների վրայ դրւած տուրքերը. այս արդիւնքները երկիրն ինքը պէտք է արտադրէ և ոչ թէ օտարերկրացիներից բերել տայ, թէկուզ արժան գնով. այլապէս, բիսկ և անում պատերազմի ժամանակ անպաշտպան դուրս գալ: Մտիտի կարծիքով, ազատ առևտուրը պէտք է աստիճանաբար ներս մտցնել, եթէ ոչ նա շատ կապիտալիստների կքանդէ:

Մտիտի իդէալը արտադրութեան անսահման աճումն է և որովհետև Մտիտը չի կարողանում նրան կապիտալիստական յարաբերութիւններից դուրս պատկերացնել, ուստի նա խելացի ու բնական է համարում այն բոլոր պայմանները, որոնք նպաստում են այս յարաբերութիւնների զարգացմանը: Նրա ժամանակներում և նրա երկրի մէջ այդպիսի պայմաններից ամենակարևորը տընտեսական ազատութիւնը, կապիտալի ազատութիւնն էր հանդիսանում, ուստի և Մտիտը նրան «բնական կարգ», հասարակութեան կեանքի սովորական կազմ է դարձնում:

Մտիտի կարծիքով՝ ազատ մրցման «բնական կարգը» արտադրութեան զարգացման հետ միասին բերում է նաև «արդարացի բաշխումն»: Մտիտի և տնտեսական գիտութեան մէջ նրա բոլոր նախորդների համար այս գիծը ընդհանուր է—ազգային հարստութեան կուտակումը հօմանիշ համարել ժողովուրդական բարօրութեանը: Այս երկու հասկացողութիւնների հակասութեան հնարաւորութիւնը այն ժամանակներն այնքան պարզ չէր հանդէս գալիս, ինչպէս մեքենայական կապիտալիզմի դարում: Այնուամենայնիւ, հին տնտեսագէտներին յայտնի էին այս հակասութեան դէպքերը: Բնական է, որ այդպիսի դէպքերում տնտեսագէտները—բուրժուազիայի իդօլոգները—պատրաստակամութիւն էին ցոյց տալիս «արգարացի բաշխումը», այսինքն՝ մասսաների շահերը զո՛հ բերել արտադրութեան ընդարձակելուն, որ միևնոյն է, թէ ձեռնարկողների շահերին: Օրինակ՝ Անգլիայի շատ տեղերում, նոր ժամանակի սկզբում վարելահողերն՝ արօտատեղիներով և մարդկանց՝ ոչխարներով փոխարինելը Ա. Մտիտը երկրի համար շահա-

ւէտ է համարում, որովհետև այս փոխարինութիւնն արտադրութեան համար անվիճելի կերպով շահաւէտ էր:

Իրրև կապիտալիզմի մանուֆակտուրային շրջանի տնտեսագէտ, Մտիտը աշխատանքի մանուֆակտուրային բաժանմանը ահագին նշանակութիւն է տալիս: Աշխատանքի բաժանման այս ձևը նա տեխնիկական յառաջադիմութեան գլխաւոր գործիքն է համարում. մեքենաները նրա աչքում երկրորդական, ստորադրեալ դեր են խաղում միայն: Միևնոյն ժամանակ նա աշխատանքի այդպիսի բաժանման հասարակական-անշահաւէտ կողմերն էլ է նկատում.— բանւորի օրգանիզմի ֆիզիկական, բարոյական և մըտաւոր անկումը: Նա կարծում է, որ աշխատանքի մանուֆակտուրային բաժանումն իր ծայրայտ զարգացման ժամանակ կարող կլինի ժողովրդական մասսաներին բոլորովին բթացնել և այդ երևոյթը ցանկալի չի համարում: Այս փաստը թուլացնելու համար Մտիտն առաջարկում է պետութեան հաշուով ժողովրդական ուսում մտցնել, սակայն ուսումը խորհուրդ է տալիս զգուշութեամբ, չափաւոր քանակութեամբ կատարել, ընդունելով, որ ժողովրդի չափազանց բարձր մտաւոր զարգացողութիւնը վտանգաւոր է:

Ադամ Մտիտով բոլորում է մանուֆակտուրա-բուրժուազական շրջանի տնտեսական գիտութեան զարգացումը:

6. ԶԱՐԳԱՅՄԱՆ ՈՅԺԵՐՆ ՈՒ ՆՐԱ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ ԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Կապիտալի մանուֆակտուրային շրջանում տնտեսապէս ամենաառաջադէմ դասակարգը արդիւնաբերական բուրժուազիան է հանդիսանում: Զարգացման հիմնական շարժիչ ոյժը առաջւայ նման ներկայանում է մրցումն ու սրա հոգեբանական հետևանքը—անսահման կուտակելու և ձեռնարկութիւններն անսահման ընդարձակելու ձգտումը:

Քինեհնք, թէ զարգացման այս ուժերն ինչպէս են գործում առանձին ձեռնարկութեան շրջաններում և ինչպէս են յայտնագործում ձեռնարկութիւնների փոխադարձ յարաբերութիւնների մէջ: Որովհետև հասարակական բաշխման մէջ կապիտալիստի բաժինը յաւելեալ արհեստականութեանը, արտադրութիւնը կազմակերպելով, կապիտալիստն անհրաժեշտօրէն կձգտի, որ ձեռնարկութեան յաւելեալ արժէքը շատացնէ:

Առանձին ձեռնարկութեան մէջ յաւելեալ արժէքի մեծութիւնը կախւած է երկու պայմաններից. նախ՝ իւրաքանչիւր բանւորի առաջացրած յաւելեալ արժէքի քանակից և երկրորդ՝ բանւորների թւից: Մեծացնելով առաջինը կամ երկրորդը, ձեռնարկողը մեծացնում է ձեռնարկութեան յաւելեալ արժէքի գումարը:

Ենթադրենք, թէ բանւորական անհրաժեշտ ժամանակը 5 ժամ է, յաւելեալը—նոյնպէս 5 ժամ: Իւրաքանչիւր բանւորի առաջացրած յաւելեալ արժէքը մեծացնելու ամենահասարակ եղանակը կայանում է, ի



քի լարւածութիւնը բարձրացնելու սովորական միջոցը, ինչպէս ցոյց տրւեց, կտորով աշխատավարձն է հանդիսանում: Կապիտալիզմի վաղ շրջաններում յաւելեալ արժէքը բարձրացնելու այդպիսի միջոցը համեմատաբար մեծ դեր չի խաղում, որովհետեւ նա համապատասխան չէ բանւորական օրւայ երկարանալուն, որն այն ժամանակ լայն գործադրութիւն ունէր և որովհետեւ, երբ բանւոր դասակարգի զարգացման մակերևոյթը ցածր է, սնունդը վատ և ընդհանրապէս պահանջներն անզարգացած, աշխատանքի լարւածութիւնն ուղղակի անհնարաւոր է:

Երբ բանւորական օրը նախկինն է մնում, իսկ բանւորական անհրաժեշտ ժամանակը փոքրանում է, յաւելեալ ժամանակն ու յաւելեալ արժէքը, այնուամենայնիւ, աճում են: Օրինակ՝ եթէ 12-ժամեայ օրւան դէպքում անհրաժեշտ ժամանակը 6 ժամից 5-ի է իջնում, յաւելեալ ժամանակը 6 ժամից բարձրանում է 8-ի:

Բայց ինչ միջոցով է փոքրանում անհրաժեշտ ժամանակը: Պարզ է, որ բանւորական ոյժի արժողութիւնը իջնեցնելով, ինչքան այդ ոյժը քիչ լինի, այսքան քիչ ժամանակ կհարկաւորւի նրան մշակելու համար:

Բանւորական ոյժի արժողութիւնը բանւորի՝ համար անհրաժեշտ կենսական միջոցների արժողութիւնն է, հասարակական-աշխատանքային էներգիայի այն քանակութիւնը, որ պահանջւում է նրանց արտադրելու համար: Եթէ այդ միջոցները—հաց, միս, բամբակէ գործւածքներ և այլն—սկսում են աւելի պակաս աշխատանքային էներգիայի վատնումով ձեռք բերել, քան առաջ, եթէ, ուրեմն, երկրագործութեան բամբակի գործի մէջ և այլն, աշխատանքի արտադրողականութիւնը բարձրանում է, դրանով իջնում է բանւորական ոյժի արժողութիւնը: Այսպէս, եթէ բանւորի սովորական գործածութեան իրերի արժէքը առաջ մի օրւայ համար 5 ժամ էր կազմում, իսկ արտադրութեան եղանակների զարգացման շնորհիւ 4 ժամի հասաւ, այդ դէպքում 10-ժամեայ օրւայ մէջ յաւելեալ ժամանակը 5 ժամից հասնում է 6-ի, իսկ յաւելեալ արժէքի նորման—100% -ից 150% ի: Այս դէպքում բանւորի դրամական վարձը համեմատաբար ցածրանում է. օրինակ՝ 50 կոպէկից իջնում է 40 կոպէկի, բայց այս փոփոխումը նա կարող է նախկին քանակութեամբ գործածութեան իրեր գնել:

Եթէ աւելի պակաս վերացական հայեցակէտի վրայ կանգնենք, կտեսնենք, որ դրամական վարձն իջեցնելը բանւորների համար միքիչ անշահաւէտ է: Եթէ մի առանձին բանւորի մէջ դեռ մասսայի մէջ չզարգացած որ և է բարձրագոյն պահանջներ առաջանան, օրինակ՝ վայելուչ շորերի, լրագիր կարգալու և այլն պահանջը, այն ժամանակ սրանց բաւարարութիւն տալու համար բանւորը պէտք է անհրաժեշտ առարկաների մէջ խնայող լինի: Իսկ երբ այս արդիւնքների գները բարձր են, պարզ է, որ տընտեսելն աւելի հեշտ կլինի, քան եթէ գները ցածր լինէին:

Բանւորների գործածութեան իրերը ստեղծող աշխատանքի արտադրողականութիւնն աճելիս՝ յաւելեալ արժէքի աճումը որ և է հասարակութեան բոլոր կապիտալիստների համար միանգամից է կատարւում: Բայց առանձին ձեռնարկողն էլ, որոշ պայմաններում, կարող է, միւսներից անկախ, փոքրացնել իւր ձեռնարկութեան մէջ անհրաժեշտ ժամանակը և այդպիսով, մեծացնել յաւելեալը: Այս լինում է այն ժամանակ, երբ նրան յաջողւում է իւր ձեռնարկութեան մէջ աշխատանքի արտադրողականութիւնն աւելի բարձրացնել, քան արտադրութեան որ և է ճիւղի աշխատանքի արտադրողականութիւնը: Օրինակ, նա իւր ձեռնարկութեան մէջ աշխատանքի աւելի մեծ բաժանումն է մտցնում, քան ինչ որ նոյն տեսակի միւս ձեռնարկութիւնների մէջ կան: Ենթադրենք, որ նա դանակի գործարանատէր է և որ նրա կատարելագործումը ուղիղ երկու անգամ մեծացնում է աշխատանքի արտադրողականութիւնը.— դանակի արժողութիւնը 4 ժամի փոխարէն՝ 2 ժամով է չափւում: Որովհետեւ բոլոր միւս գործարանատէրերը մասամբ դեռ չեն առաջադիմել և մասամբ կապիտալի պակասութեան պատճառով չեն կարողացել յիշեալ կատարելագործումը մտցնել, ուրեմն դանակի հասարակական արժողութիւնն առաջւայ պէս 4 ժամ կլինի: Ենթադրենք, բանւորական օրը տևում է 12 ժամ և բանւորական ոյժի արժողութիւնը 6 ժամ է, ըստ որում իւրաքանչիւր ժամն էլ, ենթադրենք, հաւասար է 10 կոպէկի: Առաջ իւրաքանչիւր բանւորի վրայ օրական 3 շինւած դանակ էր ընկնում. դանակի գինը 40 կ. էր (ենթադրում ենք, որ դանակն արժողութեան համաձայն է ծախւում) և փոփոխական կապիտալի 60 կոպէկից՝ կապիտալիստի օգտախուճում) և փոփոխական կապիտալի 60 կոպէկից՝ կապիտալիստի օգտին 60 կ. յաւելեալ արժէք էր ստացւում: Այժմ բանւորն օրական շինում է 6 դանակ, որոնք առաջւայ պէս հատը 40 կոպէկով են ծախւում, որովհետեւ նրանց հասարակական արժողութիւնը չի փոխւել. 6 հատից ստացւում է 2 ր. 40 կ., փոփոխական կապիտալը 60 կոպէկ է, ձեռնարկողի օգտին մնում է 1 րուբ. 80 կոպէկ: Ներկայ ձեռնարկութեան մէջ անհրաժեշտ ժամանակը 6 ժամի փոխարէն՝ ընդամենը 3 ժամ է դուրս գալիս. յաւելեալ արժէքի նորման—100 % -ի փոխարէն՝ 300 % է լինում:

Պէտք է նկատել, որ կապիտալիստը պէտք է իսկապէս իւր դանակները շուկայի միջին գնով չծախէ, այլ մի քիչ նրանից պակաս, որպէսզի իւր ապրանքն աւելի արագ և անպայման ծախէ: Այս նրա համար է աւելի անհրաժեշտ, որ, դանակներն առաջւայնից աւելի պակաս ծախսով շինել տալով, նա շատացնում է դանակի արտադրութիւնը, որով դանակի առաջարկութիւնն էլ շուկայում շատանում է:

Այսպիսով, երբ առանձին կապիտալիստը իւր ձեռնարկութեան մէջ մեծացնում է աշխատանքի արտադրողականութիւնը, նրա ձեռնարկութեան յաւելեալ արժէքի քանակն աճում է: Սակայն այս

երևոյթը ժամանակաւոր է միայն: Կամաց-կամաց միւս ձեռնարկողնե-  
րն էլ են միւսնոյն տեխնիկական բարելաւումները մտցնում, ներկայ  
գէպքում— աշխատանքի միւսնոյն տեսակ բաժանումը. իսկ ով այդ բանի  
համար բաւարար կապիտալ չունի, նա իւր ոյժից վեր մրցման մէջ  
կքայքայւի: Դանակի արտադրութեան սովորական եղանակը փոփոխ-  
ւած է դուրս գալիս— դանակի արտադրութեան հասարակական անհրա-  
ժեշտ ժամանակն առաջւանդից պակաս է— Չ ժամ է: Դանակների գինը  
պակասում է, բոլոր առանձին կապիտալիստների, սրանց հետ և ամե-  
նից առաջ կատարելագործում մտցնողի շահը իջնում է սովորական  
քանակին կամ նոյնիսկ աւելի ցածր (իրականութեան մէջ, ինչպէս կը-  
պարզւի, իսկապէս վերջինն է կատարում):

Հետևապէս, իւրաքանչիւր առանձին կապիտալիստին շահւէտ է  
իւր ձեռնարկութեան մէջ տեխնիկական կատարելագործումներ մտցնել-  
բայց բոլոր կապիտալիստների դասակարգի համար ամբողջութեամբ  
այս կատարելագործումներն այդպիսի օգուտ չեն բերում, որովհետև,  
վերջ ի վերջոյ, արժողութեան և ապրանքների գնի ցածրացնելուն են  
են հասցնում:

Չանազան ճանապարհներով իւր բանւորներից ստացած յաւելեալ  
արժէքը մեծացնելով, կապիտալիստը մեծացնում է և իւր շահը, որն  
և յատկապէս կարևոր է նրան: Բայց կայ նաև եղանակների մի շարք,  
որոնց միջոցով ձեռնարկողը կարող է, յաւելեալ արժէքի քանակից ան-  
կախ, իւր շահը սովորականից էլ աւելի բարձրացնել: Այս շարքին են  
պատկանում մշտական և փոփոխական կապիտալի անսովոր խնայողու-  
թեան եղանակները:

Երբ ձեռնարկողն արհեստանոցը շինելիս՝ անսովոր խնայողու-  
թիւն է գործ դնում հէնց շէնքի չափի վրայ, բայց սրբաբանները  
մշտական նեղւածքի մէջ են լինում, երբ նա վառելիքի, լուսաւորու-  
թեան, օդամաքութեան և առողջապահական յարմարութիւնների ծախ-  
սերը հնար եղածին չափ իջեցնում է, երբ ստիպում է բանել միւսնոյն  
գործիքներով մինչև նրանց վերին աստիճանի մաշելը, որպիսին միւս  
ձեռնարկողները չեն թոյլ տալիս իրանց ձեռնարկութիւնների մէջ, ըն-  
դունելով, որ նրանք վտանգաւոր և անյարմար են բանւորների հա-  
մար—այս բոլորը կազմում են մշտական կապիտալի սովորականից  
դուրս խնայողութիւնը: Երբ մեծանում է կապիտալի ծախսերի ընդ-  
հանուր քանակը, որին հարկ կլինի ներկայ շահի գումարը,— ներկայ  
կապիտալիստի համար շահի տոկոսը, հետևապէս, կցածրանայ, թէև  
ձեռնարկութեան մէջ յաւելեալ արժէքի գումարը չի փոխւում:

Այս կարգին չպէտք է վերագրել այն գէպքերը, երբ առանձին  
ձեռնարկութեան մէջ արտադրութեան աւելորդ կտորներից աւելի շատ  
են օգուտ դուրս քաշում, քան ուրիշների մէջ. այս ուղղակի աշխա-  
տանքի արտադրողականութեան բարձրացումն է, որովհետև այդ օգ-

տակար դարձրած անպէտք կտորները արտադրութեան աւելորդ ար-  
դիւնքներ են հանդիսանում միայն և այդ աւելի ակներև է դառնում,  
երբ ձեռնարկողը ծախում է նրանց:

Եթէ ձեռնարկողը բանւորական ոյժը նրա հասարակական արժէ-  
քից պակաս է գնում, — սա փոփոխական կապիտալի սովորականից դուրս  
խնայողութիւն է:

Այստեղ էլ է անհատական շահն աճում, թէպէտ յաւելեալ արժէքի  
գումարը չի փոխւում (որովհետև յաւելեալ արժէքը բանւորների բան-  
ւորական ոյժի հասարակական արժողութեան վրայ գործ դրած աշ-  
խատանքային էներգիայի ծախսերի աւելորդն է, իսկ այդ արժէքը  
առաջւանդ է մնում):

Ընդհանուր գծերով այսպէս են այն եղանակները, որոնց գործա-  
դրութիւնը, բանւորական ոյժերի որոշ թւի գէպքում, մեծացնում է  
ձեռնարկութեան շահը: Եթէ բանւորների թիւն աճում է, պարզ է, որ  
համապատասխանորէն աճում է նաև յաւելեալ արժէքը, իսկ նրա յե-  
տևից՝ շահը. 200 բանւորից ստացած յաւելեալ աշխատանքը երկու  
անգամ աւելի շատ է, քան 100-ից ստացածը և այլն:

Բանւորների մեծ թիւը ունի և այն նշանակութիւնը, որ աշխա-  
տանքի բաժանումը, հետևապէս և նրա արտադրողականութիւնը զար-  
գացնելը հնարաւոր է դարձնում. իսկ արտադրողականութիւնը, ինչ-  
պայմաններում, բանւորի ընդդիմադրութեան մէջ է գտնում իւր վեր-  
ջին սահմանները:

Բանւորական օրը երկարացնելու կամ աշխատանքի լարւածու-  
թիւնը բարձրացնելու միջոցով յաւելեալ աշխատանքի գումարի ուղ-  
ղակի մեծացնելը մարդկային կազմւածքի յատկութեան, իսկ որոշ  
պայմաններում, բանւորի ընդդիմադրութեան մէջ է գտնում իւր վեր-  
ջին սահմանները:

Ձեռնարկութեան մէջ աշխատանքի արտադրողականութեան բարձ-  
րացումը որ և է ժամանակի տեխնիկայի և գիտութիւնների ընդհա-  
նուր դրութեամբ է սահմանափակում: Կարելի չէ կատարելագործում  
մտցնել, քանի դեռ սա չի հնարւած:

Կապիտալի սովորականից դուրս խնայողութիւնը, ընդհանրապէս,  
մասնաւոր երևոյթ է և բաւականին նեղ սահմաններ ունի:

Համարեա անսահման կերպով գործադրելի է շահը մեծացնելու  
նրա եղանակը, որ ամբողջ ձեռնարկութիւնն ընդարձակելու համապա-  
տասխանութեամբ՝ բանւորների թիւը մեծացնելու մէջ է կայանում:  
Նրան արգելք է հանդիսանում միայն ապրանքի պահանջի՝ կամ գործն  
ընդարձակելու կապիտալի պակասութիւնը:

Ձեռնարկութեան իւրաքանչիւր ընդարձակում կապիտալիստական  
կուտակման միջոցով է կատարւում: Ընդարձակումն այն է, որ կապի-  
տալիստը իւր շահի մի մասը չի ծախում իւր կարիքների վրայ և



է միայն իւր կարիքները վրայ ծախսում, մնացածը գործն ընդարձակե-  
լու վրայ է դնում. գներն ընկնելիս՝ այդպիսի կապիտալիստը ձեռնար-  
կութիւնն ընդարձակելն է դադարեցնում միայն, իսկ եթէ վնաս էլ է  
կրում, գոնէ համեմատաբար աւելի ուշ է վերջնականապէս քայքայուում:

Մրցմանը չզիմանալով, մանր ձեռնարկողներն ստիպւած են լինում  
ծախել իրանց արհեստանոցները, ըստ որում գործիքները կորցնում են  
հասարակական արտադրութեան մէջ իրանց կազմակերպչական դերը:  
Իսկ խոշոր կապիտալիստները ձեռք են բերում առաջ մանր կապիտա-  
լիստներին պատկանող արտադրութեան միջոցները և այդպիսով կա-  
պիտալն աստիճանաբար իրանց ձեռքերի մէջ են կենդրոնացնում:

Կապիտալի կենդրոնացման այս պրոցեսը կապիտալիստական  
մրցման անհրաժեշտ հետևանք է. ինքն ըստ ինքեան նա ձգտում է  
փոքրացնել ձեռնարկութիւնների թիւը: Բայց արդիւրաբերական կա-  
պիտալիզմի վաղ շրջաններում այս երևոյթը, հակառակ պրոցեսսով դի-  
մակաւորւած լինելով, պարզօրէն հանդէս չի գալիս. անընդհատ նոր ու  
նոր ձեռնարկութիւններ են հիմնուում (ի հաշիւ նախնական կուտակման):

Այն, ինչ որ այստեղ բացատրւած է աւելի խոշոր և աւելի  
մանր կապիտալիստների նկատմամբ, որոշ չափով վերաբերում է  
նաև գործի մէջ աւելի ճարպիկ, հմուտ, փորձած ձեռնարկողնե-  
րին և աւելի քիչ գործնական ձեռնարկողներին: Առաջիններն  
իրանց կապիտալներից աւելի շատ օգուտ են դուրս բերում, կար-  
ծես, նրանց կապիտալներն աւելի խոշոր լինէին: Ինչ չափով որ  
ձեռնարկութիւնների մէջ կազմակերպչական գործունէութիւնը  
վարձու մասնագէտներին է յանձնուում, այնքան էլ գործի այս  
կողմն սկսում է կորցնել իւր նշանակութիւնը:

Կապիտալի ձգտումը—զանազան միջոցներով մեծացնել իւ-  
րաքանչիւր որ և է բանւորական ոյժից ստացւած յաւելեալ արժէքի  
քանակը՝ բանւորական օրը երկարացնելով, աշխատանքի լարւածու-  
թիւնը բարձրացնելով, փոփոխական կապիտալի մէջ արած սովորակա-  
նից դուրս անտեսութեամբ և այլն—բանւորների կողմից հակառակ  
ձգտում է առաջացնում—բարելաւել կամ գոնէ թոյլ չտալ իրանց  
կեանքի նիւթական պայմանների վատթարացումը: Սա՝ արդիւնաբե-  
րական-կապիտալիստական հասարակութեան մէջ զարգացումն առաջ  
տանող մի ուրիշ շարժիչ ոյժ է, որ սկզբնապէս իւրաքանչիւր բան-  
ւորական ոյժ գնողի և այդ ոյժը ծախողի մէջ մրցման ձևով է հան-  
դէս գալիս: Կապիտալիզմի առաջին շրջաններում զարգացման այս  
գործօնը, շնորհիւ զարգացման ցածր մակերևոյթի և բանւորական ոյժը  
ծախողների գործողութիւնների չափազանց անշատութեան, գործնա-  
կանապէս մեծ նշանակութիւն չունի: Այս գործօնի կենսական նշանա-  
կութիւնը մանուֆակտուրայի շրջանում աւելի ցածր է, քան քարգահ-  
ների՝ համաբարական վարպետների դէմ մղած կռիւ շրջանում, երբ ա-

առաջինները, իրանց կազմակերպութիւնների օգնութեամբ, գործողու-  
թիւնների մեծ միութիւն էին ձեռք բերել:

Ընդհանուր եղրակացութիւն դուրս բերելով՝ մանուֆակտուրայի  
շրջանի զարգացման ոյժերի մասին հետևեալը կարելի է ասել: Նրան-  
ցից հիմնականը—զանազան ձևերի մրցումն իւր հոգեբանական հետե-  
ւանքով—կուտակելու ծարաւ է: Իսկ այն ուղղութիւնը, որի մէջ գոր-  
ծում են այս շարժիչ ոյժերը, անտեսական կողմից բնորոշուում է կա-  
պիտալների կենդրոնացումով, աշխատանքի ու աշխատակցութեան ա-  
ճող բաժանմամբ. իսկ տեխնիկական կողմից—իւրաքանչիւր բանւոր-  
ւոր կատարողի գործունէութիւնը հնարաւոր եղածի չափ պարզ դարձնելով  
(աշխատանքի մանուֆակտուրային բաժանումն), աշխատանքի աճող  
լարւածութեամբ, աճող տևողութեամբ և աճող արտադրողականութեամբ:

Մանուֆակտուրայի շրջանի պատմական սկիզբը Անգլիայի և  
Հոլանդիայի համար XV—XVI դարի մէջ է. միւս երկրներում՝ աւելի  
ուշ է: Այս շրջանի պատմական վերջը Անգլիայում՝ պէտք է մեծ գիւ-  
տերի շրջանը համարել—XVIII դարու վերջը. միւս երկրներում մա-  
նուֆակտուրային կապիտալիզմն աւելի ուշ սկսեց տեղի տալ մեքենա-  
նուֆակտուրային կապիտալիզմին XIX դարու առաջին, երկրորդ քառորդում:

### VII ԱՐԳԻԻՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄ

#### ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ

##### 1. ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԷՊԻ ԲՆՈՒԹԻՒՆԸ

ա) Մեքենայի ծագումը

Կապիտալիստական հասարակութեան ներքին յարաբերութիւննե-  
րից բղխում է կապիտալի՝ աշխատանքի արտադրողականութիւնն ան-  
ընդհատ զարգացնելու ձգտումը: Բայց մանուֆակտուրայի շրջանում  
այս ձգտումը ընդհարուում է մանուֆակտուրային շրջանի արտադրող  
ոյժերի բնաւորութեան մէջ գտնուող արգելքին: Աշխատանքը ձեռքի  
ոյժերի բնաւորութեան մէջ գտնուող արգելքին: Աշխատանքը էր մնացել, արտադրութեան մէջ մարդու ֆիզիկական ուժն  
աշխատանք էր մնացել, արտադրութեան մէջ մարդու ֆիզիկական ուժն  
էր գլխաւոր դեր կատարում: Եւ որովհետև այդ ոյժը իւր սահմաններն  
ունի, ուրեմն աշխատանքի արտադրողականութիւնը չէր կարող որոշ  
բարձրութիւնից առաջ անցնել, քանի որ գործիք շարժողը անմիջակա-  
նապէս մարդկային ձեռքն էր հանդիսանում:

Մանուֆակտուրան զարգացնում էր աշխատանքի արտադրողակա-  
նութիւնը՝ աշխատանքը հետզհետէ աւելի շատ մասերի բաժանելու,

քարդ գործը հետզհետէ աւելի պարզ, մասնաւոր գործողութիւնները վերածելու միջոցով: Այդ դէպքում առանձին բանւորի գործունէութիւնը, վերին աստիճանի պարզելով, հետզհետէ աւելի մեքենական, մեքենաձէ էր դառնում: Երբ մանուֆակտուրան ձեռքի աշխատանքի զարգացումը վերջին սահմանին հասցրեց և նախկին ուղղութեամբ արւած իւրաքանչիւր հետեւեալ քայլը սկսեց ահագին դժւարութիւններ ներկայացնել և իւրաքանչիւր բանւորի գործողութիւնը պարզ և մեքենական դարձաւ, այս երևոյթի շնորհիւ իսկապէս համեմատորէն դիւրին եղաւ այդ գործողութիւնների կատարումը մեքենային յանձնել: Բանւոր-կատարողին մեքենայ դարձնելով, մանուֆակտուրան նրան փոխարինեց մեքենայով: Եւ երբ շուկաների ընդարձակումն արտադրութեան եղանակների յետապայ զարգացում պահանջեց, իսկ մանուֆակտուրան արդէն ոչինչ աւելի չէր կարող տալ, այդ ժամանակ ձեռքի աշխատանքը մեքենային անցաւ:

Մեքենայի արտադրութեան գլխաւոր առանձնայատկութիւնն այն է, որ արտադրութեան անմիջական կատարողական գործողութիւնները բնութեան ոյժերով են կատարւում և ոչ թէ մարդու. իսկ բանւորի դերը մեքենան կառավարելով ու նրա վրայ հսկելով է սահմանափակւում և ըստ տիպի, շատ բաներով նախկին կազմակերպչական աշխատանքին է նմանում:

Որովհետև բնութեան ոյժերն անսահման են, ուստի գիտական հասկացողութիւնների առաջադիմութեան հետ աշխատանքի արտադրողականութիւնն էլ մեքենայի արտադրութեան մէջ կարող է անընդհատ աճել:

Մեքենայի պատմութիւնը մեքենայական կապիտալիզմի շրջանից շատ աւելի առաջ է սկսւում: Դեռ կլասիկական ստրկութեան ժամանակ հնարւած էին ջրաղացը և ջրի նասոսները—չուր քաշելու մեքենաները, միջին դարերում գոնեց քամու ջրաղացը, իսկ մանուֆակտուրայի շրջանում խոշոր գործերը կատարելու համար մեքենաներ էին գործածում, որովհետև այդ գործերը մեքենայական մեծ ոյժ էին պահանջում, օրինակ՝ հանքերը մանրացնելը, հանքահորերից ջուրը դուրս քաշելը և այլն: Բայց մեքենայի ընդհանուր նշանակութիւնն արտադրութեան մէջ աննշան էր:

Նախակապիտալիստական շրջանում մեքենաների գործադրութիւնը չէր սահմանափակւում միայն տեխնիկական գիտութիւնների պակասութեամբ, որի շնորհիւ շատ քիչ և այն էլ խիստ անկատար մեքենաներ էին հնարւում: Յաճախ՝ հնարւած մեքենաները, շնորհիւ զուտ հասարակական սնրարենպաստ պայմանների, չէին կարողանում արտադրութեան ընդհանուր տեխնիկայի մէջ մտնել: Այսպէս, դեռ XVIII դարում հնարւել էին գործելու և մանելու մեքենայական դազգահներ, որոնք, ձեռքիների համեմատութեամբ, յառաջադիմութեան մեծ քայլ

էին ներկայացնում: Բայց այդ ժամանակները թէև միջնադարեան արհեստաւորական կազմակերպութիւններն արդէն դէպի անկումն էին թեքուել, սակայն դեռ տնտեսական մեծ ոյժի, հեռեպէս և սրան համապատասխան քաղաքական նշանակութեան տէր էին: Իսկ նրանք, մապատասխան քաղաքական նշանակութեան տէր էին: Իսկ նրանք, շատ հասկանալի գրողներին շնորհիւ, մարդու աշխատանքը մեքենայի աշխատանքով փոխարինելու ամեն մի փորձին կատաղի թշնամութեամբ էին վերաբերւում: Եկեղեցական մարմինների ազդեցութեան տակ քաղաքային խորհուրդները մէկը միւսի յետեից որոշումներ են հրատարակւում, որոնցով մեքենայական դազգահներ մտցնելն արգելւում է. ժողովուրդը կտրրատում է մեքենաները և հնարարողներին՝ որպէս արհեստաւորներին ու բանւորներին հացի պատասից զրկել ցանկացող մարդկանց, սոսկալի հալածանքների է ենթարկւում:

Սակայն, առևտրական և արդիւնաբերական կապիտալի ազդեցութեան տակ, հին կազմակերպութիւնները, կորցնելով իրանց տնտեսական ոյժը, սրա հետ և քաղաքական նշանակութիւնն ու բարոյական հեղինակութիւնը, քայքայւում էին: Տնտեսական կեանքում տիրապէսող նշանակութիւնը ձեռք էին բերում առևտրականներն ու մանուֆակտուրիստները: Իսկ նրանց՝ դէպի մեքենաներն ունեցած վերաբերմունքը բոլորովին այլ էր: Մեքենաները նրանց արդէն չէին սպանում, մինչքան որ համքարական արհեստաւորներին, կործանել հասարակական ինչպէս որ համքարական և նրանց համար թանկագին կազմը և քանդել նրկեանքի սովորական և նրանց համար թանկագին կազմը և քանդել նրանց գոյութեան նիւթական հիմքերը: Մեքենաները շահ էին խոստանում և այդ անփխտելի արգումնետ էր նրանց օգտին:

Այսպէս, տնտեսական զարգացումը՝ խախտելով, թուլացնելով ու տնջացնելով մեքենային թշնամի ոյժը, ամբարցրեց նրան պաշտպան ուժերին և այդպիսով հող բաց արեց մեքենայի ընդարձակ գործադրութեան համար:

Համաշխարհային կապիտալիստական զարգացման մէջ մանուֆակտուրայի շրջանն անպայման անհրաժեշտ աստիճան է. նոյնիսկ չէ էլ կարելի երեւակայել, որ, օրինակ՝ արհեստաւորական տեխնիկայից էլ կարելի երեւակայել, որ, օրինակ՝ արտադրութիւն առաջանմիջականապէս կարող է մեքենայի խոշոր արտադրութիւն աւելի ուշ ոտք նալ: Բայց կապիտալիզմի ճանապարհը միւսներից աւելի ուշ ոտք գնող առանձին հասարակութիւնների պատմութեան մէջ՝ նրանց պատմական միջավայրի ազդեցութիւնը—աւելի հին ազգերի կուլտուրան— համարեա թէ թոյլ է տալիս անցնել տեխնիկայի մանուֆակտուրային աստիճանը, առևտրական կապիտալի կազմակերպած մանր արհեստաւորական-երկրագործական արտադրութիւնից անմիջապէս անցնում են և որակաւ-երկրագործական արտադրութիւնը, իւր բոլոր հասարակական-դէպի մեքենայի խոշոր արտադրութիւնը, իւր բոլոր հասարակական-տնտեսական հետևանքներով:

բ) Խճից բան է մերեման

Մեքենան աշխատանքի այնպիսի գործիք է, որ մարդու կատարողական աշխատանքը փոխարինում է արտաքին բնութեան ոյժերի գործողութեամբ: Սա գործիքի ամենաբարձր, ամենակատարեալ տիպն է:

Ընդհանուր գծերով քննելով զանազան մեքենաների կազմութիւնը, դժւար չէ տեսնել, որ նրա հիմքը մի սխեմա է (առարկայի ընդհանուր գծերը ներկայացնող պատկեր): Մեքենայի մէջ պէտք է տարբերել երեք մասեր. շարժիչ, հաղորդող մեխանիզմ և բանւորական մաս կամ մեքենայական գործիք: Մեքենայի այս մասերից իւրաքանչիւրը իւր զարգացման պատմութիւնն ունի:

Երբ մեքենան մեքենայական ոյժի զգալի ծախսեր չպահանջող փոքր գործի համար է գործադրւում, այդ դէպքում մեքենայի շարժիչը շատ անգամ մարդու մեքենայական բանւորական ոյժն է հանդիսանում: Յյսպէս, օրինակ՝ կարի մեքենան օտքի կամ ձեռքի միակերպ շարժումով է բանում: Այս՝ մեքենայի անկատար, թերի զարգացած տիպն է:

Մեքենայի շարժողական մասի զարգացման մէջ մարդկային շարժիչ ոյժը կենդանիների (գլխաւորապէս ձիերի) ոյժով փոխարինելը՝ առաջին քայլն է: Բայց այստեղ խոշոր յառաջադիմութիւն դեռ չկայ. կենդանիների ոյժը համեմատաբար թանկ է նստում, նրանք շարունակ աշխատել չեն կարող (օրինակ՝ փորձառու տէրը թոյլ չի տայ, որ ձին օրական 8 ժամից աւել բանի). վերջապէս, կենդանիների ոյժը խիստ զգալի կերպով չի գերազանցում մարդու ոյժին:

Երկրորդ քայլը կենդանիների ոյժը քամու կամ վայր թափւող ջրի ոյժով փոխարինելն էր: Այս շարժիչներն արդէն այն առաւելութիւնն ունեն, որ անշունչ են. բայց նրանց մէջ էլ միքանի պակասութիւններ կան:

Քամու ոյժը, որ այնչիղի ժամանակներից սկսած մեծ քանակութեամբ ջրի վրայով բեռներ փոխադրելու համար էր գործադրւում (առագաստանաւեր), արդիւնաբերութեան միւս ճիւղերի մէջ շատ քիչ, նա այն անյարմարութիւնն ունի, որ խիստ փոփոխական է և անհաւասարաչափ է գործում: Ջրի ոյժը այս անյարմարութիւնները չունի և այդ պատճառով մանուֆակտուրայի էպոխայում նա ամենամեծ նշանակութիւն ունէր: Բայց նա էլ լուրջ թերութիւններից զուրկ չէ: Նախ՝ ջրային շարժիչը կարելի է գործադրել միայն այնտեղ, ուր ձեռքի տակ թափւող կամ հոսող ջուր կայ և որտեղ ջուրն ամբարտակով կապելը տեղացի բնակիչների կամ հողատէրերի շահերին չի հակասում: Երկրորդ՝ մեր ցուրտ երկրներում ձմեռը ջրի ոյժն ամեն անգամ չի գործում: Վերջապէս, անհնար է ջուրը քմահաճոյքի համաձայն մեծացնել: Ծնորհիւ ջրային շարժիչների այդպիսի առանձնայատկութիւնների,

նրա գործածութիւնը չէր կարող ընդարձակ լինել: Սա է այն երևոյթի պատճառներից մէկը, որ մանուֆակտուրայի շրջանում, քանի դեռ լաւագոյն շարժիչ չէր գտնւել, մեքենաները շատ քիչ էին գործադրւում:

Մանուֆակտուրայի շրջանում տեղ-տեղ գործածւում էին և շոգէ շարժիչներ, բայց դրանք չափազանց անկատար և անյարմար կազմութիւն ունէին: Երբ 1774 թւին Ուատտը զգալի կերպով կատարելագործեց նրանց մեխանիզմը և կրկնակի գործող որոշ շոգէ մեքենայ ստեղծեց, այդ ժամանակ դուրս եկաւ, որ հէնց շոգին է այն լաւագոյն շարժիչը, որ կարևոր էր զարգացող կապիտալիստական արդիւնաբերութեան համար:

Շոգէ շարժիչի մէջ մեքենայական ոյժը ածուխ և ջուր սպառելով է առաջանում: Ցանկութեան համաձայն՝ գործողութեան ոյժը կարելի է աւելացնել կամ պակասեցնել: Ինքը շարժիչն այնպէս է շինւած, որ դժւար չէ նրան տեղից տեղ փոխադրել և հարկաւոր եղած բանւորական մեքենաներին յարմարեցնել:

Մեքենայի շարժիչ մասի զարգացումը սրա վրայ կանգ չառաւ: Վերջին ժամանակներս գնալով աւելի մեծ նշանակութիւն են ստանում նոր, էլեկտրական շարժիչները: Դեռ սրանց գործադրութիւնը խիստ սահմանափակ է, բայց արդէն հիմա էլ էլեկտրական շարժիչ ոյժի մի քանի առաւելութիւնները նկատելի են շոգու ոյժի առջև. գլխաւոր առաւելութիւնն այն է, որ էլեկտրական ոյժը հնարաւոր է ուղածի չափ մանր մասերի բաժանել և որ այդ ոյժը չնչին կորուստով (որոշ պայմաններում) կարելի է ամեն տարածութեան վրայ հաղորդել:

Ամենայն հաւանականութեամբ էլեկտրականութիւնը արտագրութեան կազմակերպութեան հետեւալ շրջանի գլխաւոր շարժիչը կհանդիսանայ: Բնութեան ամեն մի ոյժը էլեկտրականութեան փոխելը և յետոյ՝ պէտք եղած տեղը հաղորդելն արդէն ժամանակակից տեխնիկային յայտնի է: Այս բանի շնորհիւ՝ էլեկտրականութիւնը, հաւանօրէն, հնարաւորութիւն կտայ բնութեան մէջ օգտակար կերպով գործադրել ոյժի այնպիսի հսկայական աղբիւրները, ինչպէս ամենամեծ ջրվէժները, ծովային մակնթացութիւնները և այլն. այդօրինակ աղբիւրներից շատերը մինչև օրս չեն շահագործւել գլխաւորապէս այն պատճառով, որ նրանց ոյժը չեն կարողացել տարածութեան վրայ հաղորդել:

Մեքենայի երկրորդ մասը հաղորդիչ մեխանիզմն է, որ շարժիչի ոյժը հաղորդում է բանւորական մեքենային: Նա պէտք է փոփոխէ այն շարժողութիւնների բնութիւնն ու ուղղութիւնը, որ տալիս է մեքենայի առաջին մասը, փոփոխէ նպատակայարմար կերպով, մեքենայի կոչման համեմատ և այս գրութեամբ շարժողութիւնը հաղորդէ բանւորական գործիքին: Ինչքան մեքենան արտագրութեան աւելի բարդ պրոցեսների համար է գործադրւում, այնքան հաղորդիչ մեխանիզմը բարդանում է: Նրա բարդութիւնն աւելի է աճում այն ժամանակ, երբ

միևնոյն շարժիչից օգտուում են միաժամանակ մի քանի բանւորական մեքենաներ բանեցնելու համար, մասնաւանդ, եթէ նրանք տարրեր տեսակի են: Եթէ մի բանւորական մեքենային շրջանաձև շարժողութիւն է հարկաւոր, միւսին՝ ուղղագիծ, երրորդին՝ ուղղագիծ-բեկւած, ուրեմն դժւար չէ երևակայել, թէ ինչքան բազմաթիւ մասնաւոր յարմարութիւններ պէտք է պարունակէ իւր մէջ հաղորդող մեխանիզմը, որ իւր նպատակին բաւարարութիւն տայ: Նա վերածուում է ատամնաւոր անիւնների, պտտող գլանակների, էկսցենտրիկ շրջանների, շարժուն ձողիկների և այլն մի ամբողջ ընդարձակ սիստեմի. և ինչքան մի շարժիչով գործող բանւորական մեքենաներն աւելի բարդ, բազմապիսի ու բազմաթիւ են լինում, այնքան այդ սիստեմը բարդանում է:

Մեքենայի երրորդ, ամենակարևոր մասը բանւորական կամ մեքենայական գործիքն է: Սա անմիջականապէս ծագում է այն գործիքից, որով արհեստի կամ մանուֆակտուրայի ձեռքով-աշխատող բանւորն է բանում: Բայց այս գործիքը բանւորական մեքենայի մէջ յաճախ այնքան փոխւած է լինում, որ նոյնիսկ դժւար է ճանաչուում:

Բայց բանւորական մեքենայի և ձեռքով-աշխատող գործիքի գըլխաւոր տարբերութիւնն այն է, որ առաջինն՝ անմիջականապէս հանդէս է գալիս իբրև մեքենայի գործիք և ոչ թէ մարդու. այժմ մեքենան կատարում է այն շարժողութիւնը, որն առաջ գործիքը մարդու ձեռքերով էր կատարում: Եթէ նոյնիսկ մեքենան շարժողը մարդու ձեռքն է, այնուամենայնիւ, բանւորական գործիքը ոչ թէ մարդու ձեռքերով է բանում, այլ հաղորդիչ մեխանիզմով:

Հետևապէս, մեքենան այն չափով է փոխարինում բանւորին, ինչ չափով որ վերջինս արտադրութեան մէջ հասարակ կատարող, կազմակերպող կամքի հասարակ գործիք է հանդիսանում: Այս պատճառով մանուֆակտուրաները կատարող-բանւորների մէջ առաջ գոյութիւն ունեցող յարաբերութիւններից շատերն անցնում են մեքենաներին:

Այսպէս, մանուֆակտուրայի բանւորների մէջ եղած աշխատակցութեանը և աշխատանքի բաժանմանը համապատասխանում են մեքենաների «աշխատակցութիւնն» ու «աշխատանքի բաժանումը» (արտայայտութիւնները պայմանական են, որովհետև «աշխատել» կարող է միայն մարդը):

Պարզ աշխատակցութեան օրինակ է ներկայացնում ջուլհակի ֆաբրիկան, որ կազմւած է միատեսակ գործ կատարող բազմաթիւ մեքենայական դազգահներից, զետեղւած մի շինութեան մէջ: Միևնոյն շարժիչն այս դէպքում բանեցնում է բազմաթիւ միատեսակ մեքենաներ:

Մեքենաների մէջ «աշխատանքի բաժանումն» այն է, որ զանազան տեսակի, բայց փոխադարձ կապեր ունեցող մեքենաների մի ամբողջ շարք մէկը միւսի յետեից մշակում են միևնոյն նիւթը, մինչև որ սա իւր վերջնական ձևն ստանայ: Որտեղ որ առաջին անգամ է մեքե-

նաների մէջ աշխատանքի բաժանում մտցւում, այդ բաժանումը մատուորապէս այնպէս է լինում, ինչ որ նոյն արտադրութեամբ զբաղող մանուֆակտուրայի մէջ: Օրինակ՝ բրդի մանուֆակտուրայում աշխատանքը բաժանւած էր գլորարների, մանողների վրայ և այլն: Այժմ այդ բանւորների փոխարէն ներկայանում է գլող, մանող և այլն մեքենաների մի շարք: Անցման աստիճանում գործողութիւններից մի քանիսն արդէն յանձնւած են մեքենային, մինչդեռ միւսները դեռ ձեռքի աշխատանքով են կատարում:

Մեքենաների մէջ գործը բաժանելու եղանակը յետոյ կարող է, ի հարկէ, փոխել:

Մեքենաների վրայ գործը բաժանելու դէպքում, մի մեքենայ միւսի համար մշակման նիւթ է մատակարարում, ինչպէս մանուֆակտուրայի մէջ մի բանւոր՝ միւսին: Ինչպէս այնտեղ տարբեր բանւորների ձեռքերում, մի բանուհի էլ տարբեր մեքենաների մէջ նիւթը միաժամանակ իւր մշակման բոլոր աստիճանների վրայ է գտնւում: Մանուֆակտուրային լամբին, այսինքն՝ տարբեր մասնագիտութեան բանւորների թւի որոշ յարաբերութեանը համապատասխանում է «մեքենաների սիստեմը», այսինքն՝ առաջին, երկրորդ, երրորդ մեքենաների թւի, չափերի, շարժողութեան արագութեան մէջ եղած որոշ կապը. ինչպէս որոշ թւով ժողութեան արագութեան մէջ եղած որոշ կապը. որ սրանք կարողանան առամանողներին պէտք են որոշ ջուլհակները, որ սրանք կարողանան առամանողների մատակարարած նիւթը մշակել, այնպէս էլ որոշ թւով որ և է ջինների մատակարարած նիւթը մշակել, այնպէս էլ որոշ թւով որ և է կազմ կազմ ունեցող մանելու մեքենաներին պէտք է որոշ թւի որ. և է կազմ ունեցող գործելու մեքենայական դազգահներ ընկնեն:

Այս բոլորից երևում է, որ մանուֆակտուրային բանւորի դերն աւելի մեծ չափով իրապէս մեքենայով էր փոխարինել, քան մեքենայի ժամանակ՝ բանւորով: Մեքենան իւր արտադրական գործունէութեան փոխարինելով իր ստ տարբերում է բանւորից. բանւորը գլխաւորապէս կատարում է փոխարինում է, մինչդեռ մեքենան կատարում է: Այս սովորում և վերահսկում է, մինչդեռ մեքենան կատարում է:

Ասկիք, անցման աստիճաններում, լիակատար զարգացման չհասած մեքենայական արտադրութիւնների մէջ բանւորները ոչ միայն մեքենաների գործողութիւնը հսկելու և վերահսկելու համար են հարկաւոր, այլ մասամբ և այն բանի համար, որ մեքենայական գործիքների մի անմիջականապէս տան այն որոշ շարժողութիւնն, որին մեքենան դեռ չի յարմարել: Սակայն մեքենայական արտադրութեան զարգացումը ձգտում է բոլոր այդպիսի անկատար մեքենաները փոխարինելով ձեռքով մշակող մեքենաներով, որոնց մէջ բանւորական մեքենաները առանց մարդու ուղիղ գործակցութեան, նիւթը մշակելու համար բոլոր անհրաժեշտ շարժողութիւնները կատարում են: Ինչքան այսպիսի փոխարինութիւնն աւելի մեծ չափով է կատարւում, այնքան բանւորի աշխատանքը մեքենայի դէպքում աւելի մեծ

համանութիւն է ունենում նախկին կազմակերպչական աշխատանքին:

Արհեստաւորական արտադրութեան մէջ գործի կազմակերպչական կողմը աննշան չափով է դատուած կատարողականից. բանւորը, վարպետը կամ քարգեանը գլխաւորապէս ինքը իրան է վերահսկում, ինքը իրան է կառավարում: Մանուֆակտուրան լրացնում է գործի երկու կողմի բաժանումը և գործն այնպիսի ծայրայեղութեան է հասցնում, այնպիսի անհեթեթութեան, ինչպիսին մարդուն մեքենայ դարձնելն է: Մեքենան հաշտեցնում է այս հակադրութիւնները, կազմակերպչական ընդթ տալով կատարողական աշխատանքին և բանւորից պահանջելով ոչ միայն կոպիտ ոյժ և մեքենական սովորութիւն, այլ և խելք ու կամք:

Աշխատանքի արտադրողականութեան նկատմամբ մեքենայի գործը ձեռքի գործի առաջ հետեւալ առաւելութիւնն ունի. ինչքան էլ որ բանւորը հմուտ լինի, չի կարող միանգամից միքանի գործիքներով աշխատել, որովհետև նա երկու ձեռք, երկու ոտք ունի միայն և ոչ աւելի: Մի ժամանակ Գերմանիայում փորձում էին հարկադրել բանւորին, որ նա երկու ձեռքով և երկու ոտքով միանգամից երկու մանող անիւններ և երկու իլիկ գարձնէ, բայց սա այնպիսի ահագին լարւածութիւն էր պահանջում, որ ընդհանրապէս բանւորի ոյժից վեր է: Իսկ մեքենան միանգամից բազմաթիւ գործիքներով է բանում: Օրինակ՝ այժմեան մանելու ֆաբրիկաներում մի բանւորը միւլ-մեքենայի օգնութեամբ ամբողջ հարիւրեակ իլիկներ է վարում (Անգլիայում, դեռ 1887 թւին իւրաքանչիւր բանւորին, միջին թւով, 333 իլիկ էր ընկնում, իսկ աւելի լաւ մանարաններում՝ 400-ից աւելի): Եթէ սրա վերայ աւելացնենք և այն, որ մեքենայի շարժողութեան արագութիւնը զգալի չափով գերադանցում է մարդու շարժողութեան արագութեանը, այն ժամանակ ակնհայտ կգտնուի, թէ մեքենաների օգնութեամբ աշխատանքի արտադրողականութեան ինչպիսի հսկայական աճում կարող է ստացւել: Օրինակ՝ մեքենայական գործւածքի զէպքում մի միջակ բանւոր կարողանում է այնքան գործել, որքան առաջ 40 լաւ շուրհակներ:

Այստեղ յարմար է գնդասեղի արհեստաւորական, մանուֆակտուրայի արտադրողականութիւնը և մեքենայական արտադրութեան մէջ եղած աշխատանքի արտադրողականութիւնը համեմատել:

Գնդասեղի արտադրութեան բոլոր գործողութիւնները կատարող առանձին բանւորը հազիւ թէ կարողանար մի օրում տասը գնդասեղ պատրաստել: Մանուֆակտուրայի մէջ, աշխատանքը միայն 10 բանւորներին մէջ բաժանւած զէպքում, արտադրութեան օրական քանակը 48,000 գնդասեղ է լինում, իւրաքանչիւր բանւորին ընկնում է 4,800 հատ: Գնդասեղի մեքենան օրական 180,000 հատ է պատրաստում, ըստ որում մի բանւոր կարող է միաժամանակ միքանի այդպիսի մեքենաներ վարել: Մի ամերիկական ֆաբրիկա, որ 70 գնդասեղի մե-

քենայ ունէր և օրական 7 1/2 միլիոն գնդասեղ էր պատրաստում, ընդամենը 5 բանւոր էր աշխատեցնում. հետեւապէս, իւրաքանչիւրին, միջին թւով, օրական 1 1/2 միլիոն գնդասեղ էր ընկնում:

Ներկայումս մարդն առդէն իւր տրամադրութեան տակ այնպիսի մեծ քանակութեամբ շոգէ ոյժ ունի, որ կարող է 1 1/2 միլիարդ բանւորների փոխարինել, մինչդեռ հասակաւոր բանւոր-մարդկանց թիւը երկրագնդի վրայ 500—600 միլիոնից աւելի չէ:

Այս զէպքում մեքենայական արտադրութեան առաջադիմութիւնը անընդհատ աճող արագութեամբ է ընթանում: Արտադրութեան մէջ բանւորի ոյժը բնութեան ոյժերով փոխարինելով, մեքենաների գործադրութիւնը արտադրող ոյժերի և հասարակական մարդու՝ բնութեան վրայ ունեցած իշխանութեան աճման առաջ անսահման ասպարէզ է բաց անում:

գ) Մեքենայական արտադրութեան տարածւիլը

Մեքենան արդեօք արտադրութեան մէջ միշտ օգտակար է. նա արդեօք միշտ մեծացնում է աշխատանքի արտադրողականութիւնը: Հասկանալի է, միայն այն ժամանակ, երբ նա իսկապէս տնտեսում է աշխատանքը:

Ենթադրենք, որ գտնւած է մի նոր մեքենայ, որի օգնութեամբ մի բանւոր կատարում է այն, ինչ որ առաջ 11 բանւորի աշխատանքով էր կատարւում, հետեւապէս, մեքենան 10 բանւոր-կատարողների է քող էր կատարւում, հետեւապէս, մեքենան 300 օրւայ մէջ է մաշւում. այդ փոխարինում: Ենթադրենք, մեքենան 300 օրւայ մէջ է մաշւում. այդ փոխարինում նա իւր ամբողջ ծառայութեան միջոցին աշխատանքի 3000 օր է տնտեսում:

Եթէ ինքը մեքենան (այսինքն նրա ամբողջ շինւածքը) 3,500 օրւայ աշխատանք է նստում, ուրեմն, ի հարկէ, անտեղի կլինէր մեքենայ մտցնել, որովհետև այդպիսով խնայողութեան փոխարէն՝ 500 բանւորական օրւայ զուտ կորուստ կստացւէր: Եթէ նոյնիսկ մեքենան արւորական օրւայ զուտ կորուստ կստացւէր, դարձեալ նա օգտաւէտ չէ, դարձեալ ոչ մի աշխատանք չի տնտեսի:

Բայց եթէ մեքենայի արժողութիւնը, օրինակ՝ 2,500 բանւորական օր է, այդ զէպքում նա բարձրացնում է աշխատանքի արտադրողականութիւնը, օգտակար է արտադրութեան համար, որովհետև ամբողջ 500 բանւորական օր է տնտեսում:

Սակայն ձեռնարկող-կապիտալիստը, որից և կախւած է մեքենայ մտցնելը կամ չմտցնելը, այդպիսի հայեցակէտ չունի: Նրա համար, ընդհանրապէս ասած, բոլորովին միևնոյնն է, մեքենան խնայում է մարդկային աշխատանք, թէ ոչ. նրա համար այս հարցն է կարևոր, մարդկային աշխատանք, թէ ոչ. նրա համար այս հարցն է կարևոր, թէ արդեօք նա իւր շահը կմեծացնէ: Կապիտալիստը հաշւում է, թէ քանի բուրլի պէտք է ծախսէ մեքենան գնելու համար և թէ մեքենան



տև հանդէս է գալիս ուրիշ կատարելագործութիւնների մի ամբողջ շարք, որոնք ոչ միայն մեծացնում են մանածի բանակը, այլ և բարելաւում են նրա որակը:

Բամբակի արդիւնաբերութեան մէջ արտադրութեան առանձին աստիճանների միջև նորից անհամապատասխանութիւն է ծագում, բայց արդէն առաջինին հակառակ. այժմ ջուլհակը չի հասնում մանողներին: Այս անհամապատասխանութիւնն էլ 1787 թւի ջուլհակի մեքենայական դադարէի հնարումով է վերանում:

Թէ աշխատանքի մանուֆակտուրային բաժանումը սրբան թեթեւացրեց դէպի մեքենան անցնելը, այդ երևում է, ի միջի այլոց, այն հանգամանքից, որ առաջին հնարողները սովորաբար ոչ ընդհանուր և ոչ տեխնիկական կրթութիւն ստացած, այլ միայն արտադրութեան յիշեալ ճիւղի գործնականին տիրող հասարակ բանւորներն էին հանդիսանում: Դեռ աւելին, ջուլհակի մեքենայական դադարէն կեսո քաքաքի մի քահաճայ է հնարել:

Մանելու և գործելու մի շարք կատարելագործութիւններից յետոյ բամբակէ կտորները սպիտակացնելու նախկին միջոցը բոլորովին անբաւարար դուրս եկաւ: Այս պրոցեսի խիստ երկար տևողութիւնը — մի քանի ամիսներ — մեծ անյարմարութիւններ չէր ներկայացնում այն ժամանակ, քանի դեռ ձեռքով էին մանում և գործում և քանի դեռ արտադրւած գործւածքների քանակութիւնը համեմատօրէն մեծ չէր: Իսկ այժմ, մանողների և ջուլհակների աշխատանքի արտադրողականութիւնը ահագին քանակութեամբ բարձրանալով, սպիտակացնելու գործողութիւնն արագացնելու պահանջ առաջացաւ: Օգնութեան հասաւ քիմիան. թթուտներ գործադրելով՝ սպիտակացնելու գործողութեան տևողութիւնը պակասեց և մի քանի օր, նոյնիսկ մի քանի ժամ դարձաւ:

Ճիշտ նոյնպիսի պատճառների շնորհիւ անցեալ դարու վերջը բարելաւումներ առաջացան ներկելու և չիթ նախշելու գործի մէջ: Այնուհետև, որպէսզի մեքենայի մանելու արտադրութեան համար բաւականաչափ նիւթ պատրաստուի, անհրաժեշտ էր խիստ ընդարձակել բամբակի արտադրութիւնը. սրա համար պէտք եղաւ մտցնել մի առանձին մեքենայ, որ բամբակի թելերը բաժանում է սերմերից:

Այսպիսի փոփոխութիւններ միայն բամբակի արդիւնաբերութեան մէջ չկատարեցին: Սրանք առաջ բերին ուրիշ անհրաժեշտ փոփոխութիւններ: Այսպէս, հնարւած մեքենաներից շատերը խիստ շատ դէպքերում անօգուտ կլինէին, եթէ գտնւած չլինէր մի նոր շարժիչ ոյժ, որ ընդունակ լինէր աւելի մեծ քանակութեամբ աշխատանք արտադրել: Այդպիսի ոյժի աղբիւրը կրկնակի և աւելի շատ գործողութեան մեքենան հանդիսացաւ:

Այսպիսի փոփոխութիւնների հետևանքն այն եղաւ, որ արտադրութիւնը չափազանց ընդարձակեց: Այս երևոյթը նոր, աւելի լաւ

հաղորդակցութեան ճանապարհների պահանջ առաջացրեց: Իւրաքանչիւր անտեսական շրջանի համար հաղորդակցութեան ճանապարհների զարգացումը արտադրութեան ընդհանուր զարգացումով է որոշւում: Օրինակ՝ միջնագարեան հաղորդակցութեան ճանապարհները, որ մանր արտադրութեան համար բաւարար էին, մանուֆակտուրայի շրջանի համար անբաւարար դուրս եկան, — այն ժամանակ կատարելագործեց ծովագնացութիւնը և խճուղիներ շինեցան: Ճիշտ այսպէս, սա էլ չափազանց փոքր թւաց մեքենայական կապիտալիզմին և նրա աշխատանքի հակառական արտադրողականութեանը, — այն ժամանակ վրայ հասաւ շոգենաւերի, երկաթուղիների, հեռագրերի և այլն ժամանակը:

Այսպէս, շնորհիւ արդիւնաբերութեան տարբեր ձիւղերի մէջ եղած սերտ կապին, մեքենաներն իրար յետևից արագ հնարեցան և մտցեցին արդիւնաբերութեան մէջ: Շատ շատ մեքենաներ XVIII դարու վերջից և XIX դարու սկզբից, այդքան կարճ շրջանում յայտնուեցան:

Երկրագործութեան մէջ մեքենաների գործադրութիւնն ամենից ուշ է կատարւում և այդ իւր շատ պատճառներն ունի: Նախ՝ երկրագործութեանը չլիճակեց զարգացնել աշխատանքի մանուֆակտուրային բաժանում, որն այնպէս յաջող կերպով է մեքենայի համար հող պատրաստում: Երկրորդ՝ մեքենաների՝ երկրագործութեան մէջ մտցնելուն աշխատանքի արտադրողականութեան այնպիսի կտրուկ փոփոխութիւն աշխատանքի արտադրողականութեան համար մեքենաներ մտցնելու դրդումն էր աւելի թոյլ է: Վերջապէս, երկրագործութեան շրջանում երկար պահապանող ֆէոդալիզմի մնացորդների ճնշումը արտադրութեան այս ճիւղի տեխնիկական առաջադիմութեան համար փոքր արգելք չհանդիսացաւ: Դիւրական բնակչութեան ճորտացումն ու չբաւարութիւնը թոյլ էին տալիս կալւածատէրերին այնպիսի արժան գնով բանւոր ձեռքեր ունենալ, որ այդպիսի դէպքում նրան ձեռնառու չէր բանւորները մեքենաներով փոխարինել:

Մեքենայի շրջանի սկզբում մեքենաները գործիքների մանուֆակտուրաներում էին պատրաստւում: Բանի դեռ մեքենաշինական գործը ձեռքի աշխատանքի վրայ էր հիմնւած, մեքենայի արտադրութեան զարգացումը, անհրաժեշտօրէն, շատ դանդաղ էր ընթանում: Մեքենաները թանկ էին նստում և այն էլ պակաս ուժեղ ու պակաս կատարելագործւած: Որպէսզի մեքենան լաւ գործէ, անհրաժեշտ է, որ նրա առանձին մասերի ձեռք խիստ ճիշտ և մասերի չափերը բոլորովին համապատասխան լինեն, մի խօսքով, մեքենան արտադրելու շատ համապատասխան լինեն, մի ձեռքով է հարկաւոր: Բանւորի ամեֆործողութիւնների մէջ մեծ ճշտութիւն է հարկաւոր: Բանւորի ամեֆործողութեան համար մեքենան դէպքում իսկ ձեռքի աշխատանքը այդպիսի ճշտունամեծ հմտութեան դէպքում իսկ ձեռքի աշխատանքը այդպիսի ճշտութեան չի կարող հասնել, մեքենան միայն կարող է այդ անել: Բացի այդ, գործիքների մանուֆակտուրաների մէջ աշխատանքի արտադրողա-

կանութիւնն իսկապէս այնքան մեծ չէր, որպէսզի նրանք կարողանային այնպիսի մեծ քանակութեամբ մեքենաներ պատրաստել, որպիսին գործադրում է ներկայումս:

Երբ մեքենաների արտադրութիւնն սկսեց մեքենայական դառնալ, խոշոր արդիւնաբերութեան զարգացման վերջին արդելքն էլ վերացաւ և նա սկսեց չտեսնուած արագութեամբ առաջագրմիլ:

Այս զէպքում գիտութիւնը կապիտալիստական արտադրութեան մշտական հաւատարիմ ծառան է եղել և ամենաբարեխիղճ կերպով է կատարել նրա նոր պահանջները: Կապիտալը գիւտերի պահանջ դրեց և այդ պահանջը մտաւոր աշխատանքի կողմից գիւտերի զեղուն հոսանք բղխեցրեց:

2. ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՏԱՐԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԵՔԵՆԱՅԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

ա) Հասարակ աշխատակցութեան եւ աշխատանքի բաժանման զարգացումը առանձին մեքենայութեան ներքին

Այնպէս կ'ըլլար, թէ մեքենաներ մտցնելը, ձեռքի կատարողական աշխատանքի պահանջը պակասեցնելով, պէտք է առանձին ձեռնարկութիւնների մէջ բանւորների թիւը փոքրացնէր, այնպէս որ աշխատակցութեան զարգացումը, ընդհանրապէս, պէտք է նւագէր: Սակայն մեքենաների այդպիսի ազդեցութիւնն աւելի, քան հաւասարակընում է ուրիշ պայմաններով:

Նախ մեքենայական արտադրութեան ընդարձակելին այնպիսի հսկայական արագութեամբ է ընթանում, արտադրելի ապրանքների քանակութիւնը այնպէս արագ է աճում, որ, չնայած աշխատանքի բարձրացած արտադրողականութեան, արդիւնաբերութիւնը մեծ մասամբ առաջնայից աւելի շատ աշխատող ձեռքեր է պահանջում: (Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ արտադրութեան այդպիսի աճումը շուկայի ընդարձակումն է առաջադրում. աշխատանքային արժողութեան օրէնքների համաձայն, աշխատանքի արտադրողականութեան բարձրանալը ապրանքների արժանանալուն է յանգում և սրանց պահանջը սաստիկ մեծանում է):

Երկրորդ՝ մեքենաների շրջանում մրցման ներգործութիւնը առանձին կապիտալիստների վրայ առանձնապէս զօրեղանում է: Հետզհետէ նոր մեքենաներ մտցնելու և ձեռնարկութեան վրայ հետզհետէ աւելի մեծ կապիտալ զնելու անհրաժեշտութիւնը թոյլ կապիտալիստներին առաջնայից աւելի արագ է կորստի հասցնում: Արհեստի և մանուֆակտուրայի մնացորդներն ապշեցուցիչ արագութեամբ են կորչում. սրանց հետեւում են մեքենայական մանր ձեռնարկութիւնները: Ձեռնարկութեան ընդհանուր թիւը փոքրանում է: Յաղթածների կապի-

տալները կենդրոնանում են յաղթողների ձեռքերում: Այդպիսով, առանձին ձեռնարկութիւնները հետզհետէ աւելի խոշորանում են:

Շնորհիւ արտադրութեան ընդարձակման և սաստկացած մրցման, աշխատակցութեան չափերը, ընդհանրապէս, ոչ միայն չեն փոքրանում, այլ և սոսկալի արագութեամբ աճում են: Եթէ նախկին մանուֆակտուրան հարիւրաւոր բանւորների էր միացնում, աւելի յետագայ մեքենայական ֆաբրիկան կամ գործարանը, սովորաբար, հազարաւոր, երբեմն տասնեակ-հազարաւոր բանւորների է կազմակերպում:

Աշխատակցութեան այդպիսի զարգացումը, որ անագին քանակութեամբ մարդկանց առանձին ձեռնարկութիւնների մէջ է ժողովում, այն հետեւանքն է ունենում, որ արտադրութիւնը գնալով աւելի հասարակալան է դառնում:

Այս կարելի է ասել ընդհանրապէս աշխատակցութեան մասին, ներփակելով սրա մէջ և հասարակ կօօպերացիան և ձեռնարկութեան մէջ աշխատանքի տեխնիկական բաժանումը: Բայց առանձին ուշադրութեան են արժանանում աշխատանքի տեխնիկական բաժանման բնաւորութեան փոփոխութիւնները:

Մանուֆակտուրայի մէջ աշխատանքի տեխնիկական բաժանումն այնպիսի ձև է ընդունում, որ տարբեր բանւորներ, տարբեր, իրար ջնմանող գործեր են կատարում. բանւորը մասնագէտ է դառնում և իւրաքանչիւր մասնագիտութիւն խիստ հեռանում է միւսների սահմաններից:

Մեքենան աստիճանաբար վերացնում է այդ մասնագիտանալն ու այդ հեռացումը: Նախ՝ արտադրական գործունէութիւնը տարբեր բանւորների համար աւելի նման, աւելի միատեսակ է դառնում. բանւորին բանւորն է վիճակում վարել, թէ այն, միւսինն է, նրա գործը, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ ուշադիր վերահսկումն անշունչ գործողի վրայ, իւր ընդհանուր բնաւորութեամբ փոքրիկ զանազանութիւն է ներկայացնում. և ինչքան մեքենաներն աւելի կատարեալ են լինում, ինչքան բանւորն անմիջականապէս քիչ է միջամտում մեքենայի շարժողութեան բանւորն անմիջականապէս քիչ է միջամտում մեքենային և դառնում: Երկպրոցեսսի մէջ, այնքան բանւորի գործը նմանօրինակ է դառնում: Երկրորդ՝ ինչ չափով որ մեքենան մասնագիտական հմտութիւն է ստանում, տարբեր է դառնում. բանւորը դիւրութեամբ է սովորում այս, այն կամ երրորդ մեքենան վարել, նրա համար անհրաժեշտ չէ ամբողջ կեանքը մի մանրամասն աշխատանքի նւիրել:

Այսպիսով, տարբեր բանւորների դերը նրանց վրայ բաժանուած աշխատանքի մէջ ձգտում է միատեսակ դառնալ. հէնց ինքն աշխատանքի տեխնիկական բաժանումը հետզհետէ հասարակ աշխատակցութեան քի տեխնիկական բաժանումը հետզհետէ հասարակ աշխատակցութեան գծեր է ստանում: Այս կարևոր է մեր ուսումնասիրած շրջանի հոգեբանութիւնը հասկանալու համար. ոչ նման դերը արտադրութեան

մէջ առաջ է բերում ոչ նման ձգտումներով ոչ նման հոգեբանական տիպեր, նման դերը—նման տիպեր, նման ձգտումներ: Ստեղծում են բանւորներին կենսական կուլի մէջ միացնելու պայմաններ:

Այսպէս է այն ընդհանուր ուղղութիւնը, որի մէջ զարգանում են արտադրական յարաբերութիւնները: Սակայն հին ձևերը նորերին աստիճանաբար են տեղի տալիս, իսկ աշխատանքի զուտ մանուֆակտուրային բաժանման մի քանի գծեր դեռ երկար են պահպանւում ձեռնարկութիւնների կազմակերպութիւնների մէջ: Այս երևոյթը մասամբ նրանից է կախած, որ ինքը մեքենայի տեխնիկան էլ է աստիճանաբար զարգանում և մանուֆակտուրային տեխնիկայից մեքենայականին անցնելու ձևերի մի ամբողջ շարք կայ, ըստ որում, ի հարկէ, բանւորների փոխադարձ յարաբերութիւնները բնաւորութեամբ խառն են լինում: Միևս կողմից՝ ժամանակակից մեքենայական արտադրութիւնը կապիտալիստական է: Չեռնարկութեան կազմակերպողը ներկայանում է կապիտալը, որ և արտադրութիւնն այնպէս է սարքում, ինչպէս շահաւէտ է. կապիտալի շահերի տեսակէտով: Իսկ այս տեսակէտով Ֆարերիկայի գործի մէջ կարգն ու կարգապահութիւնը պահանջում են, որ բանւորը հնարաւոր եղածին չափ հաստատուած լինի որ և է մասնագիտութեան մէջ և չփոխէ նրան ըստ իւր հայեցողութեան: Բանւորին կարգում են մի որոշ մեքենայի, յաճախ նրա մի մասի վրայ, առանց որ սա իրաւունք ունենայ փոխել իւր զբաղմունքը. նրա կողմից ոչ մի ընտրութիւն չի ընդունւում:

Ի հարկէ, բացառութիւն է կազմում այն դէպքը, երբ բանւորը դուրս է գալիս մի վարձողի մօտից և մի ուրիշի մօտ է վարձւում: Բայց այս միտքը նա հեշտութեամբ չի վճռում, որովհետև նրա դրութիւնն ապահովւած է և չի էլ կարող յաճախ իւր տեղը փոխել միմիայն այն պատճառով, որ ազատի աշխատանքի միօրինակութիւնից:

Ի վերջոյ՝ ձեռնարկութեան մէջ աշխատանքը մեքենայի դէպքում խիստ բաժանւած է լինում: Իւրաքանչիւր բանւոր ընդ միշտ կապւած է մի մեռած մեխանիզմի հետ, իբրև նրա կենդանի յաւելւածը:

Սակայն մարդուն մի մեքենայի մշտական ստրուկը դարձնելու այդ միտումը գնալով հետզհետէ թուլանում է ուրիշ ազդեցութիւններից, որոնք հետևեալներն են. նախ՝ արտադրութեան տեխնիկայի փոփոխականութիւնը ձեռնարկութեան բանւորական ոյժերի բաշխման մէջ խիստ յաճախակի փոփոխութիւններ է առաջացնում. երկրորդ՝ ձեռնարկութեան մէջ հէնց արտադրութեան քանակների՝ շուկայի պայմանների համաձայն փոփոխութիւններն էլ բանւորների դասաւորութեան մէջ տեղափոխութիւններ են առաջացնում. երրորդ՝ ընդհանրապէս բանւոր դասակարգի շարժականութիւնն աճում է մի կողմից քանւորական շուկայի պայմանների փոփոխական լինելուց, միևս կողմից կատարելագործւած հարգողակցութեան ճանապարհների ժամանակ բան-

ւորական շուկայի՝ տարածութեան մէջ չափազանց ընդարձակելուց. մի տեղ իւր աշխատանքը կորցնելով, բանւորը յաճախ հազարաւոր վերատեր է կտրում մի երկրորդ, երրորդ տեղում աշխատանք փնտռելու համար. մի երկրի կապիտալիստը հազարաւոր բանւորներ է բերել տալիս մի ուրիշ երկրից և այլն:

Արտադրութեան մէջ համեմատաբար կղզիացած դերը է շարունակում բռնել վարձու բանւորների բարձրագոյն խումբը, այսպէս կոչւած՝ ինտելիգենտ պերսօնալը—Ֆարերիկաների գիրեկատօրները, արհեստանոցների կառավարիչները, հաշւապահները, ուսեալ մեխանիկները, տեխնոլոգները և այլն: Սրանք արտադրութեան մեքենայական կազմակերպութեան բարդ աշխատանքի ներկայացուցիչներն են: Նրանց աշխատանքը, գլխաւորապէս, կազմակերպչական է—ընդհանուր վարչութիւն կամ ընդհանուր վերահսկողութիւն բանւորների գործունէութեան և մեքենաների գործողութիւնների վրայ: Ինտելիգենտ պերսօնալը համեմատաբար սակաւաթիւ խումբ է:

Մեքենայական արտադրութիւնը իւր զարգացման մէջ ձգտում է այս խումբն էլ մօտեցնել հաւասարեցնել միևս վարձու բանւորներին: Մի կողմից, որքան մեքենաները կատարելագործւում են, նրանց կազմութեան բարդութիւնն ու նրբութիւնն էլ սաստկանում է, այնպէս որ հասարակ բանւորի համար էլ է հետզհետէ նույն աւելի շատ ինտելիգենտութիւն, աւելի շատ ընդհանուր և նոյն իսկ տեխնիկական կրթութիւն անհրաժեշտ լինում, այլապէս՝ նա մեքենան նպատակայարմար վարելու անընդունակ կլինի. միևս մեքենան նպատակայարմար վարելու անընդունակ կլինի. միևս մեքենայական կապիտալիզմին յատուկ տնտեսական յակողմից, մեքենայական կապիտալիզմին յատուկ տնտեսական յարաբերութիւնների փոփոխականութիւնն ու անյարատուութիւնը շատ անգամ գնալով աւելի յաճախ այն հետևանքն են ունենում, որ ինտելիգենտ պերսօնալի տարրերին հասարակ բանւորներ են դարձնում և նոյնիսկ ընդհակառակը, այնպէս որ այս երկու դասակարգերի մէջ ամեն հաստատուն սահման կորչում է:

բ) Աշխատանքի հասարակական բաժանման զարգացումը

Չեռնարկութեան մէջ աշխատակցութեան առաջադիմութեան հետ միասին՝ մեքենաների շրջանում արագընթաց զարգանում է նաև աշխատանքի հասարակական բաժանումը: Այս դէպքում, ինչպէս նաև աշխատանքի հասարակական բաժանումը, այնպէս և արգիւնաբերութեան ամառանձին ձեռնարկութիւնները, այնպէս և արգիւնաբերութեան ամբողջ ճիւղերի փոխադարձ կապն ու կախումը զօրեղանում է և արտադրութեան ամբողջ հասարակական յառաջադիմութիւնը հետզհետէ միութեան և անբաժանելիութեան աւելի խիստ բնաւորութիւն է ըստանում:

Մրցումը առանձին միատեսակ ձեռնարկութիւնների մէջ փոխադարձ կախումն է ստեղծում. սա գլխաւորապէս այն երևոյթի մէջ է արտադարձ կախումն է ստեղծում. սա գլխաւորապէս այն երևոյթի մէջ է արտադարձ կախումն է ստեղծում, որ մի ձեռնարկութեան տեխնիկայի մէջ արւած բարելաւումը յայտւում, որ մի ձեռնարկութեան տեխնիկայի մէջ արւած բարելաւումը միևս մէջ ևս բարելաւման անհրաժեշտութիւն է առաջ բերում: Մեքենայական արտադրութեան ժամանակ ձեռնարկութիւնների փոխադարձ կապի-

այս ձևը վերին աստիճանի զարգանում է հէնց այն պատճառով, որ մրցումն այն ժամանակ ամենագորեղ աստիճանին է հասնում:

Այնուհետև, արդիւնաբերութեան տարբեր ճիւղերի փոխադարձ կապն է զօրեղանում: Սա երկու ճանապարհով է տեղի ունենում:

Առաջին՝ արտադրութեան հսկայական ընդարձակումն այն հետեւանք է ունենում, որ արդիւնաբերութեան միւս ճիւղերին նիւթ և գործիքներ մատակարարող ճիւղերը մի առանձին արագութեամբ զարգանում են. հանդէս են գալիս աճողին քանակութեամբ այս տեսակի նոր արտադրութիւններ, իսկ առաջնաներն աւելի նեղ մասնազիտութիւնների են բաժանւում: Օրինակ, առաջ է գալիս մեքենաշինական գործը և հասողին ճիւղերի է բաժանւում. չուգունի արտադրութիւնը զատւում է երկաթի, պողպատի արտադրութիւնից և այլն: Այստեղ առանձնապէս ակնբեր է արտադրութիւնների փոխադարձ կապը.—մի քանիսի գոյութիւնն ամբողջովին կախւած է միւսների գոյութիւնից:

Ինչի այդ, չափազանց արագ են զարգանում այն ձեռնարկութիւնները և խիստ աճում են այն դասակարգերը, որոնց հասարակական դերը կապւած է հասարակութեան մէջ արդիւնքների փոխանակական բաշխման հետ: Օրինակ՝ Անգլիայում առևտրական գործով են պարագում բնակչութեան  $\frac{1}{9}$  մասը (4 միլիոն մարդուց աւելի), Ֆրանսիայում  $\frac{1}{8}$  մասը (մօտ 5 միլիոն), համեմատաբար յետամնաց Ռուսաստանում—մօտ  $\frac{1}{3}$  մասը (3 միլիոնից էլ աւելի), հիթ է հաշւի առնենք առևտրականներին, նրանց գործակատարներին և միւս ծառայողներին՝ ընտանիքներով միասին:

Երկրորդ՝ արդիւնաբերութեան առանձին ճիւղերը մէկը միւսից աւելի խտորէն են սահմանափակւում: Նախկին խառը տիպի տնտեսութիւնները, որոնք այլատեսակ արտադրութիւնները միացրել էին, բոլորն անհետանում են: Երկրագործութիւնը վերջնականապէս գատւում է արդիւնաբերութիւնից. վերանում է օժանդակ երկրագործութեան հետ միացած մանր արհեստաւորական և տնայնագործական արտադրութիւնը. երկրագործ գիւղացու օժանդակ արհեստները դուրս են մղւում: Ինչպէս բացատրւեց, մանուֆակտուրաները իրանց մրցումով արդէն քանդում էին սյդպիսի երկտեսակ տնտեսութիւնները, իսկ մեքենան կարող է և վերջնականապէս ոչնչացնել նրանց: Թէ մեքենաների մրցումն ինչ եռանդով ու խտութեամբ է նախկին տնտեսական ձևերի այս մնացորդները կործանում, այդ հետեւալ իրողութիւնից կարելի է դատել. Ռուսաստանում, շնորհիւ ֆաբրիկաների մէջ մանելու և ուտայնակելու զարգացման, տնային արտադրութիւնն այնքան վատ է վարձատրւում աշխատանքը, որ բոլոր ծախսերը դուրս գալուց յետոյ, իւրաքանչիւր ժամայ աշխատանքը գեղջուհուն մի կոպէկից պակաս է տալիս (ուրիշ դէպքերում վարձի այդպիսի նորման նոյնիսկ  $\frac{1}{2}$  կոպէկի է հասնում):

Մինչդեռ, ինչպէս մեքենայի, այնպէս և մանուֆակտուրային արտադրութեան զարգացումը սկզբում նոյնիսկ այդօրինակ նոր արհեստներ է ստեղծում, պահանջ առաջացնելով այնպիսի նիւթերի, որոնց արտադրութիւնը խոշոր ձեռնարկութիւնները դեռ բոլորովին չեն ընդգրկել, կամ նոյնիսկ թողնելով տանն աշխատող մանր արտադրողներին կատարելու արտադրութեան այն միկատարելապէս չի յարմարեցւած: Երբ արդիւնագործութիւնը բոլորովին գատւում է երկրագործութիւնից, քաղաքի՝ գիւղից ունեցած տնտեսական կախումը աճում է և ընդհակառակը:

Արտադրութեան հասարակական բնաւորութիւնը մինչև այն տեղն է հասնում, որ ամբողջ երկրներ են իրար հետ արտադրական ամենասերտ կապերով կապւում: Փոխանակութիւնը այն աստիճան է միացնում զանազան պետութիւնների արտադրութիւնը, որ նրանց անկախ տնտեսական գոյութիւնը անիրագործելի է դառնում: Մի երկրում կախ տնտեսական գոյութիւնը անհրաժեշտ է դառնում: Մի երկրում քացաւիկ զարգացողութեան հասած մի արտադրութեան հետ միասին քաղաքիկ զարգացողութեան հասած մի արտադրութիւն ունեցողութիւն է ունենում մի ուրիշ, աւելի պակաս կարևորութիւն ունեցող, չափազանց անզարգացած արտադրութիւն և կամ վերջինս բոլորովին բացակայում է, այնպէս որ ամբողջ ժողովուրդը առանց փոխանակութեան անկարող կլինէր իւր կարիքներին բաւարարութիւն տալ: Օրինակ՝ Անգլիան, որտեղ սպառւած ցորենի մեծ մասը ուրիշ երկրներից է ստացւում:

Մեքենաների շրջանում այդ ձևով աստիճանաբար միանում է ամբողջ աշխարհքի արտադրութիւնը:

3. ԲԱՇԽՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ա) Դրամական շրջանառութիւն

Փողը կապիտալիստական արտադրութեան անհրաժեշտ շարժիչն է: Այդ պատճառով կապիտալիզմի մեքենայական շրջանի արտադրութեան հսկայական զարգացումը չտեսնւած չափերի հասցրեց նաև դրամական շրջանառութիւնը:

Ոսկէ և արծաթէ փողերի քանակութիւնը միջանի տասնեակ անգամ աճեց: 45 տարւայ ընթացքում—1851 թւից մինչև 1895-ը—երկու անգամ աւելի ոսկի ստացւեց, քան նախընթաց 358 տարում (Ամերիկայի գիւտից սկսած), այսինքն՝ 295,000 փութի դիմաց՝ 655,000 փութ և համարեա նոյնքան էլ արծաթ, որքան նոյն 358 տարում, այսինքն՝ 9,300,000 փութի դիմաց, 8,900,000 փութ:

Չպէտք է մոռանալ, որ արծաթը՝ վերջին 20—30 տարիներում սկսեց արագ կորցնել իւր դրամական մետաղի դերը, մասաւանդ միջազգային շրջանառութեան մէջ: Ոսկին, դուրս վանելով արծաթը, հե-



բէք փողատունները միաժամանակ իրանց բոլոր փողերը չեն պահանջում. բացի այդ, նրանց պահանջները նոր բերած փողերով ծածկուած են:

Իխողութիւններից պարզեց, որ, որոշ տնտեսական պատճառների շնորհիւ, փող պահ տալն ու յետ պահանջելը որոշ ճշտութեամբ են կատարուում, այնպէս որ հնարաւորութիւն ներկայացաւ նախատեսել փողերի պարբերական մակընթացութիւններն ու տեղատուութիւնները:

Ձանազան երկրներում գոյութիւն ունեն լծարուսների վաճառական ընդհանուր պայմանաժամեր, որոնց են յարմարեցնում և պարտաժողովներին ամենամեծ մասը: Իւրաքանչիւր որոշ երկրի համար այդ պայմանաժամերը երբեմն ուղղակի նրա արտադրութեան բնական պայմաններով են որոշուում, երբեմն—սովորութիւններով, որոնց տնտեսական ծագումը դժուար է հետազօտել, թէ և կասկած չկայ, որ այս սովորութիւնների արմատները հասարակութեան կեանքի նիւթական պայմանների մէջ են: Օրինակ՝ երկրագործական երկրներում վճարուսների ժամանակը, մեծ մասամբ, ցորենը ծախելու ժամանակին է համապատասխանում: Ըստ երևոյթին, սովորութիւնների վրայ վճարուսների նախատճառական պայմանաժամերն են հիմնւած. Անգլիայում—Օլընդին, Ռուսաստանում—Ձատկին: Այսպիսի պայմանաժամերում դրամական շուկան միանգամից փողի շատ մեծ պահանջ է առաջադրում վճարուսների համար: Միաժամանակ փողը մեծ քանակութեամբ «զանձից» անցնում է շրջանառութեան մէջ. կրեդիտային հիմնարկութիւնների դրամարկղները արագ դատարկուում են: Նոյնիսկ դրամական շուկան մի քիչ խանգարուում է, բայց այդ տևողական չէ և կարևոր նշանակութիւն չի ունենում. շուտով փողի աւելին նորից վերադառնում է զանձի շրջանը և կրեդիտային հիմնարկութիւնների դադարկած դրամարկղները նորից, երբեմն նոյնիսկ միևնույն օրը լցւում են:

Իրամական շրջանառութեան այդպիսի օրինականութեան վրայ հիմնւելով, բանկիրներն սկսեցին զանազան մարդկանց պարտք տալ իրանց մօտ պահած փողերի մի մասը,—սկզբում միայն կարճ ժամանակով և ճշգրիտ ապահովութեամբ: Այդ ժամանակ փողատունները բանկի իսկական կրեդիտօրներ դարձան և բանկը նրանց փողերից օգտւելու համար սկսեց արդէն որոշ տոկոս վճարել նրանց, մինչդեռ առաջ հակառակն էր—փողատուններն էին վճարում պահելու համար:

Այսպէս առաջացան բանկերի երկու սկզբնական գործողութիւնները.—փողերի ընդունելութիւնը կամ դրամաւանդի (депозитный) գործողութիւնը—«պասսիւնների» մէջ հիմնականը, այսինքն՝ նրանց մէջ, որոնց բանկը պարտապան է հանդիսանում, որոնցից կրեդիտ է ստանում, և փոխատուութեան (ссудный) գործողութիւն—«ակտիւնների» մէջ հիմնականը, այսինքն՝ նրանց մէջ, որոնց բանկը կրեդիտօր է հանդիսանում, պարտք է տալիս:

Իրամաւանդի գործողութիւնը քանակի նկատմամբ ևս կրեդիտով զարգացած բոլոր երկրներում գլխաւոր պասսիւ գործողութիւն է հանդիսանում: Նա երկու գլխաւոր ձևերով է գործադրուում.—պայմանաժամով և առանց պայմանաժամի դրամ փողեր: Պայմանաժամով, մանաւանդ երկար պայմանաժամով դրամ գումարները (լինում են և՛ «յաւիտենապէս» դրամ գումարներ) բանկի համար այն առաւելութիւնն ունեն, որ չեն կարող անապասելի կերպով յետ պահանջել: Իսկ առանց պայմանաժամի կամ «ընթացիկ հաշու» դրամ փողերը ամեն ժամանակ կարող են յետ պահանջել. բանկը ստիպւած է նրանց մեծ զգուշութեամբ բաց թողնել շրջանառութեան մէջ, ուստի և նրանց զգալի կերպով աւելի քիչ տոկոս է վճարում, քան պայմանաժամով դրամ փողերին:

Մեծաքանակ դրամ-գումարներ ունենալով, բանկը խորտակումից լիովին ապահովւած չէ. խորտակումը հեշտութեամբ կարող է կատարւել, եթէ փողատունները, որ և իցէ չնախատեսւած տնտեսական փոփոխութիւնների պատճառով, միանգամից մեծ, անսովոր քանակութեամբ յետ պահանջեն իրանց փողերը: Այս նրանով է աւելի հեշտութեամբ կատարուում և նրանով աւելի վտանգաւոր լինում, որ առանց պայմանաժամի դրամ փողերն են սովորաբար բանկի միջոցների մեծ մասը կազմում և որ նրանք, ըստ մեծի մասին, արդիւնաբերական և առևտրական ձեռնարկողների են պատկանում: Իւրաքանչիւր ցնցում, տնտեսական, թէ քաղաքական, ստիպում է այդպիսի փողատուններին անմիջապէս յետ պահանջել բանկից իրանց փողերը, որպէսզի ապահովւած լինեն պատահականութիւններից:

Փողերի տոկոսների բարձրացնելն ու իջեցնելը բանկի համար մի միջոց է, ըստ կարևորութեան իւր դրամարկղը փող գրաւելու կամ բաց թողնելու համար: Օրինակ՝ ենթադրենք, որ բանկում ազատ փող շատ կայ, իսկ կապիտալիստների կողմից փողի պահանջ չի նկատուում և բանկը, հետևապէս, ստիպւած է շրջանառութեան բաց չթողած փողերի համար տոկոսներ վճարել. այդ ժամանակ բանկը փողի տոկոսն իջեցնում է և նոր փողերի հոսանքը նւազում է, իսկ նախկին փողատունների մի մասը իրանց փողերը յետ են վերցնում, որպէսզի աւելի շահաւէտ կերպով տեղաւորեն:

Իրրև դրամաւանդի գործողութեան ձևափոխութիւն կարելի է նրկատել «տոկոսաբեր գրաւաթղթերի» (закладные листы) բաց թողնելը, որոնք բանկի պարտաժողովներ են և որոնք թէ տոկոսի և թէ պարտքի հիմնական գումարի աստիճանական և տևողական վճարում ունեն: Տոկոսաբեր գրաւաթղթերը համապատասխանում են երկար պայմանաժամով դրամ փողերին, որոնց բանկը, պայմանաժամը լրանալիս, միանգամից չի վերադարձնում, այլ մաս-մաս:

Սեղանաւոր-բանկերի գրաւոր հաշիւների միջոցով փողատունների







քնորոշում են կապիտալիստական անտեսութեան անկայունութիւնը:

գ) Ձեռնարկութիւնների բաժնետերական (акционерный) մեք:

Չարգացած կրեդիտի հողի վրայ առաջ եկաւ կապիտալիստական ձեռնարկութիւնների մի ուրոյն տիպ — բաժնետէրական ընկերութիւնը:

Ձեռնարկութիւնների այս ձևի զարգացման հետևողականութիւնը մօտաւորապէս այսպէս էր: Շատ անգամ կապիտալիստը, որ ձեռնարկութեան համար բաւականացուցիչ փող չէր ունենում և ուրիշ կապիտալիստներից էլ կրեդիտ չէր կարողանում ստանալ, հրաւիրում էր կապիտալ ունեցող ընկերակիցների, որպէսզի միասին գործ անեն: Էութեամբ, սա առանձնապատուկ պայմաններով փոխառութիւն է, որի դէպքում կրեդիտորներն իրաւունք են ստանում գործի մէջ մասնակցել և վերահսկել նրան, ըստ որում տոկոսաբեր փողերը փոխարինւում են իրանց բաժնի համապատասխան շահով: Այդպիսի ձեռնարկողական ընկերութիւններից՝ բաժնետէրական ընկերութիւններին անցնելը նրա մէջ է կայանում, որ գործի սկզբնական կազմակերպողները հրաւիրում են ոչ թէ որոշ մարդկանց, այլ այն բոլոր ցանկացողներին, ովքեր միայն կարող են կապիտալի թէկուզ աննշան բաժինը դնել գործի մէջ: Սրա համար դիմում են կրեդիտային գործի մշակած միջոցին, այսինքն՝ բաց են թողնում արժէթղթեր, որոնք ներկայ դէպքում կոչւում են բաժնեթղթեր:

Հիմնարկւում է մի խոշոր կապիտալիստական ձեռնարկութիւն, — օրինակ՝ կազմակերպւում են երկաթուղային, շոգենաւային ընկերութիւններ և այլն: Բաց են թողնում, ենթադրենք, 100 բուրլանոց 10,000 բաժնեթղթեր. իւրաքանչիւր բաժնեթուղթ՝ ձեռնարկութեան շահի  $\frac{1}{10,000}$  մասն ստանալու վկայական է ներկայացնում: Կապիտալիստները մէկով, տասով, հարիւրով և այլն գնում են այդ բաժնեթղթերը: Այս միջոցով կազմւում է մէկ միլիոն բուրլի կապիտալ, որով և կազմակերպողները գործ են սկսում (իրանք շատ անգամ կապիտալի մի չնչին մասն են միայն տալիս): Բոլոր ծախսերը ծածկելուց և գործը տանող ծառայողներին ուժիկ վճարելուց յետոյ, ենթադրենք, տարեկան 60,000 բուրլի զուտ շահ է մնում. այս փողը բաժանւում է բաժնետէրերի մէջ, իբրև, այսպէս կոչւած, շահաբաժին (дывиденды) — իւրաքանչիւր բաժնեթղթին՝ 6 բուրլի:

Բաժնեթղթի տէրը կարող է գործը վարելու մէջ ամենևին մասնակցութիւն չունենալ և եթէ ունենում էլ է, միմիայն բաժնետէրերի ընդհանուր ժողովների մէջ, որտեղ վարչութիւն են ընտրւում, հաշիւները հաստատում և եկամուտները բաժանում:

Այդպէս են բաժնետէրական ընկերութիւնները, որոնք կապիտալիստական ձեռնարկութիւններ են, միայն այն տարբերութեամբ, որ սրանց մէջ մի ձեռնարկողը փոխարինւած է բազմաթիւ բաժնետէրերով:

գործն առաջ տանելու աշխատանքը վերջնականապէս զատւած է կապիտալի «աշխատանքից» ու յանձնւած է կազմակերպողների — դիրեկտորներին և վարչութեանը:

Բաժնետէրական ընկերութիւնների մէջ մտնելով՝ մանր կապիտալիստները, իբրև խոշոր և հզոր ամբողջութեան անդամներ, կորըստաբեր մրցումից աւելի ապահովւած են լինում: Մանր կապիտալիստներին պահելով, նրանց՝ չունևորների կարգն անցնելը դանդաղեցնելով, առանց կապիտալիստներին կորստեան մատնելու՝ կապիտալների կենդրոնացում ստեղծելով, բաժնետէրական ընկերութիւնները ձեռնարկողական դասակարգի ոյժը տնտեսելու միտում են ցոյց տալիս: Սակայն նրանք անհամեմատ աւելի զօրեղ են գործում հակառակ մրտքով, որովհետև կապիտալիստներին հասարակ բնատիւերներ են դարձնում, զրկելով նրանց արտադրութեան մէջ ունեցած փաստացի դերից և հասարակութեան համար նրանց նշանակութիւնն ամբողջովին պտտաբուծութեան են հասցնում:

Ասենք, ձեռնարկող դասակարգի թւական քանակութիւնը պահպանելու նկատմամբ էլ բաժնետէրական ընկերութիւնների նշանակութիւնը շատ մեծ է: Մրցումը, մասնաւանդ իւր խիստ մոմենտներում — ճգնաժամի շրջաններում — այնուամենայնիւ, բաւականին յաջող հնձում է բաժնետէրական ձեռնարկութիւնները, թէև աւելի պակաս, քան առանձին կապիտալիստներին: Բայց, միևս կողմից, բաժնետէրական ընկերութեան անկման դէպքում, միանգամից բազմաթիւ սեփականատէրեր են աղքատանում:

Կապիտալները միացնելու գործի մէջ ձեռնարկութեան բաժնետէրական ձևի նշանակութիւնը շատ մեծ է: Մի ձեռնարկութեան մէջ միանում են տասնեակ, հարիւրաւոր միլիոններ: Միայն բաժնետէրական սիստեմն է հնարաւորութիւն ստեղծում այնպիսի ահազին ձեռնարկութիւններ առաջացնել, ինչպիսին Հիւսիսային Ամերիկայի երկու ուկրիանոսները միացնող երկաթուղին է, որ միքանի հարիւր միլիոն արժէ, կամ Պանամայի ջրանցքի «բաց անելը», որ աւելի շատ արժէ:

Բաժնետէրական ընկերութիւնների աճումը վերջերս ապշեցուցիչ արագութեամբ էր կատարւում: Այսպէս, Ռուսաստանում, 1895 թւի սկզբին այդ ընկերութիւնները 784 էին հաշւում՝ 890 միլիոն բուրլի պահնստի կապիտալով. իսկ 1898 թւի ապրիլի 15-ին արդէն — 990-ից պահնստի կապիտալով. իսկ 1898 թւի ապրիլի 15-ին արդէն — 990-ից պահնստի կապիտալով: Առաջին դէպքում ձեռնարկուել աւելի՛ 1,690 միլիոն կապիտալով: Առաջին դէպքում ձեռնարկութեան համար պահնստի կապիտալի միջին քանակութիւնը մօտ 1,133,000 էր, երկրորդում — 1,703,000, — այդպէս արագ աճում է բաժնետէրական ձեռնարկութիւնների միջին քանակութիւնը: Հէնց միայն այս աւրագ զարգացումն արդէն ապացուցում է նրանց առաւելութիւնը՝ առանձին ձեռնարկութիւնները նկատմամբ:

Բաժնետէրական կապիտալին ամենից շատ առանձնապատուկ է







բար վերցւած—ամբողջ կապիտալի համեմատութեամբ՝ իբրև ամբողջ կապիտալի մասը—նա փոքրացաւ:

Ընդհանուր առմամբ, այս երևոյթը տեխնիկայի ամեն մի առաջադիմութեան էլ վերաբերում է. որովհետև, եթէ մի որոշ արտադրութեան մէջ աշխատանքի արտադրողականութիւնը բարձրանում է, մշտական կապիտալի որ և է քանակութեան համար (գործիքներն ու նիւթերը) առաջւանդից աւելի քիչ կենդանի աշխատանք, աւելի քիչ բանւորական ոյժ և աւելի քիչ փոփոխական կապիտալ է պահանջւում: Բայց մեքենայական արտադրութեան մէջ, որտեղ աշխատանքի արտադրողականութեան բարձրացումը յատկապէս արագ է կատարւում, ներկայ երևոյթը մի առանձին պայծառութեամբ է հանդէս գալիս:

XVIII դարու սկզբում անգլիական բամբակ մանելու արտադրութեան մէջ ամբողջ կապիտալը կիսով չափ մշտական և կիսով չափ փոփոխական կապիտալներէից էր բաղկացած: Արդէն XIX դարու 60-ական թւականներին կապիտալի մշտական մասը  $\frac{7}{8}$  մասն էր, իսկ փոփոխականը—միայն  $\frac{1}{8}$ -ը, այսինքն՝ նախկինից համեմատաբար 4 անգամ քիչ (իսկ այս բացարձակ ութերորդը, շնորհիւ ամբողջ կապիտալի աճման, նախկին կիսից զգալի կերպով աւելի է):

Նախորդ գլուխներում պարզեց, որ յաւելեալ արժէքը բանւորական ոյժի գործադրութիւնից է առաջանում և որ այդ պատճառով յաւելեալ արժէքի քանակը ոչ թէ կապիտալի մեծութիւնից է կախւած, այլ նրա փոփոխական մասի մեծութիւնից, որով բանւորական ոյժ է գնւում:

Յաւելեալ արժէքի նորման ցոյց է տալիս, թէ յաւելեալ արժէքը փոփոխական կապիտալի քանի տոկոսն է կազմում. շահի նորման ցոյց է տալիս ամբողջ—թէ մշտական և թէ փոփոխական կապիտալի յաւելեալ արժէքի տոկոսների թիւը: Ուստի, քանի անգամ շահի նորման փոքր է յաւելեալ արժէքի նորմայից, այնքան անգամ փոփոխական կապիտալը փոքր է ամբողջ կապիտալից:

Մեքենաներ մտցնելիս և առհասարակ, արտադրութեան տեխնիկայի զարգացման ղէպքում, փոփոխական կապիտալը համեմատաբար փոքրանում է: Եթէ յաւելեալ արժէքի նորման չի փոխւում, ուրեմն շահի նորման պէտք է ցածրանայ:

Ենթադրենք, յաւելեալ արժէքի նորման 100% է, մշտական կապիտալը 8,000 բուբլի է, փոփոխականը՝ 2,000 բուբլի, այսինքն՝ առաջինը կազմում է ամբողջ կապիտալի  $\frac{4}{5}$ , իսկ երկրորդը  $\frac{1}{5}$  մասը: Այն ժամանակ յաւելեալ արժէքը հաւասարւում է 2,000 բուբլու, իսկ շահի նորման՝ 20%-ի:

Նոր մեքենաների գործադրութիւնը մշտական կապիտալը հասցնում է 27,000-ի, փոփոխականը, ենթադրենք, 3,000-ի, այսինքն՝  $\frac{9}{10}$  և  $\frac{1}{10}$ :

Այն ժամանակ յաւելեալ արժէքը 3,000 կլինի, իսկ շահի նորման 10% միայն: Թէև փոփոխական կապիտալը բացարձակապէս 1,000-ով աճեց, բայց յարաբերաբար 2 անգամ փոքրացաւ ( $\frac{1}{5}$ -ի փոխարէն  $\frac{1}{10}$ ), շահի նորման էլ երկու անգամ փոքրացաւ:

Հաշիւների պարզութեան համար այստեղ ընդունւած է, որ ամբողջ յաւելեալ արժէքը կապիտալիստի շահն է դառնում: Իրականութեան մէջ այդ այդպէս չէ. բայց անճշտութիւնն այստեղ աննշան է և էութեամբ գործն ամենևին չի փոխում:

Վերադառնանք մեր օրինակին: Եթէ ձեռնարկողին յաջողէր յաւելեալ արժէքի նորման երկու անգամ բարձրացնել, այսինքն՝ 200%, այն ժամանակ շահի նորման դարձեալ 20% դուրս կգար, այսինքն՝ տոկոսի փոքրացումն այն ժամանակ տեղի չէր ունենայ: Այդպիսով, ձեռնարկողները միջոց ունեն շահի տոկոսի փոքրանալն արգելել և այդ միջոցը յաւելեալ արժէքի նորման մեծացնելն է, այսինքն՝ շահագործութեան սաստկացումը: Եւ նրանք օգտւում են այս միջոցից (բանւորական օրը երկարացնել, աշխատանքի լարւածութիւնը սաստկացնել և այլն):

Սակայն, այս միջոցները գործադրելով, կապիտալիստը մեռած մեքենայի հետ գործ չի ունենում, այլ կենդանի էակի: Մեքենան անշարժ է. ձեռնարկողը, եթէ ուզենայ, կարող է մի օրւայ մէջ 24 ժամ անդադար բանեցնել և այնպիսի արագութեամբ, որքան թոյլ կտայ նրա կազմութիւնը, այս ղէպքում մեքենան մաշւում և արտադրութեան համար անպէտք է դառնում 4 անգամ աւելի արագ, քան եթէ նա օրական 12 ժամ բանէր և երկու անգամ աւելի դանդաղ: Այդպէս չէ մարդու կազմածքը. շահագործութեան սաստկացումը վաղ թէ ուշ հանդիպում է բանւորի ընդդիմադրութեանը, որն անդադար աճում և սխառեմատիկ կուրի է փոխւում: Այն ժամանակ փոփոխական կապիտալի յարաբերական նւազումն ու մշտական կապիտալից դուրս քշւելը հասցնում է շահի տոկոսի իջնելուն. մի բան, որ իրականութեան մէջ նկատւում է:

Այս պատճառով էլ կապիտալիզմով քիչ զարգացած երկներում շահի տոկոսը համեմատաբար բարձր է. օրինակ՝ Ռուսաստանում քիչ չեն այն ձեռնարկութիւնները, որոնք կապիտալին 25% են բերում, մինչդեռ Արևմտեան Եւրոպայում 5%-ը արդէն արդիւնաւէտ է համարւում: Իհարկէ, այստեղ ուրիշ պատճառներ էլ են գործ կատարում, բայց գլխաւորն և հիմնականը մնում է փոփոխական կապիտալի յարաբերաբար փոքրանալը:

Շահի տոկոսի ցածրացումը դեռ չի նշանակում շահի, նրա դումարի բացարձակ մեծութեան փոքրացում: Եթէ 10,000 բուբլի կապիտալից 20% ստացւի, 2,000 բուբլի եկամուտ կկազմւի. իսկ ամբողջ 10%-ով 40,000 կապիտալից ստացւած շահը հաւասար է 4,000-ի:





պահանջում, որ ամեն մէկն էլ կարող է կարճ ժամանակում սովորել: Բանւորների նախկին դասաւորումները աստիճանաբար միանում, մէկ են դառնում, որը շատ բաներով նման է հասարակ բանւորութեան: Գլխաւոր տարբերութիւնն այն է, որ մեքենայով աշխատող բանւորը՝ պէտք է անպայման մի փոքր ընդհանուր զարգացողութիւն, մի քիչ ինտելիգենտութիւն ունենայ, եթէ ոչ, վտանգաւոր և անշահաւէտ կը լինէր յանձնել նրան մեքենան, որի բարդ մեխանիզմը հարկաւոր է գոնէ մի քիչ հասկանալ նպատակայարմար վարելու համար: Եւ որքան մեքենան աւելի ինքաշարժ է, որքան բանւորից աւելի քիչ ուղղակի ֆիզիկական մասնակցութիւն է պահանջում, այնքան աւելի շատ զուտ հոգեկան աշխատանք է պահանջում նրանից—լարւած ուշադրութիւն, զիտակից վերաբերմունք դէպի գործն ու մեխանիզմի տարբեր մասերի կոչմանը և նրանց փոխադարձ կապի ըմբռնողութիւն:

Այդպիսով, հասարակ բանւորների ձեռքի աշխատանքի նման, մեքենայով աշխատող բանւորների աշխատանքն էլ հասարակ է դառնում, այսինքն՝ ամեն տեսակ հասարակական արտադրութեան մէջ մասնակցելու համար էլ ամենափոքր վարժութիւն և զարգացում է պահանջում: Բայց, միև կողմից, բանւորները մի քիչ ընդհանուր ինտելիգենտութիւն են ստանում և այդ գնալով հետզհետէ զգալի է դառնում:

Աւելի շատ ինտելիգենտութեան հետ անհրաժեշտօրէն կապւած են աւելի բարձր կարիքներ, հետևապէս և աւելի բարձր աշխատավարձ: Ուրեմն, թէպէտ իւրաքանչիւր կապիտալիստ ձգտում է, որքան կարելի է, աշխատավարձն իջեցնել, բայց արտադրութեան պահանջները ստիպում են նրան հաշտել վարձի փաստացի բարձրացման հետ. եթէ նոյնիսկ յաջողի էլ ժամանակաւորապէս յաղթահարել բանւորները՝ վարձը բարձրացնելու ձգտումը, ճնշել նրանց պահանջները, բանւորները, իրանց բարձրացած կարիքներին լիովին բաւարարութիւն չստանալով, մեքենայով աշխատելու մէջ քիչ ընդունակ կլինէին, իսկ այդ հանգամանքը հէնց կապիտալիստին անշահաւէտ կլինէր:

Բացի մեքենայական «հասարակ» աշխատանքի՝ ներկայացուցիչներից, արտադրութեան մէջ, ինչպէս ցոյց տրւեց, շարունակում է մասնակցել նաև բարդ աշխատանքի ներկայացուցիչների մի առանձին խումբ—ինտելիգենտ-տեխնիկական պերսոնալը,—գիտուն մեքենայագէտներ, տեխնօլոգներ, քիմիկոսներ. ձեռնարկութեան ընդհանուր կազմակերպութեան մասնագէտներ—դիրեկտորներ, հաշւապահներ և այլն: Այս՝ համեմատաբար փոքրաթիւ դասակարգը իւր աշխատավարձով զգալի կերպով տարբերում է հասարակ բանւորներից: Իբրև ձեռնարկողների և բանւորների մէջ միջին տեղը բռնող խումբ, նա ներկայումս ընդհանրապէս չի կարող բանւորական դասակարգի շարքին պատկանել:

Այնուամենայնիւ, ինչպէս ցոյց տրւեց, պակաս չէր մեքենայական կապիտալիզմին յատուկ միտումը—այս խումբը՝ ար-

տադրողական դերով, հասարակական դիրքով և հոգեբանութեամբ մօտեցնել աւելի պակաս բարդ աշխատանք ունեցող խմբերին: Այս միտումը ինտելիգենտ-տեխնիկական պերսոնալի ցածրագոյն և աւելի բազմաթիւ մասի վրայ է ամենից զօրեղ ազդեցութիւն ունենում, որն և կամաց-կամաց կորցնում է իւր ստորին սահմանը և ձուլում է բանւորների արտօնազուրկ մասի հետ: Այդպէս չէ տեխնիկական պերսոնալի միև մասի զարգացման միտումը, որոնք ծառայելով կապիտալիստների մօտ՝ աւելի բարձր դիրք են բռնում և մօտ են նրանց թէ՛ ծագումով և թէ՛ սովորութիւններով. ինչքան տնտեսական յարաբերութիւնները առաջադիմում են, ինչքան նրանց ճշտութիւնը աճում է, այնքան ինտելիգենտ պերսոնալի այս բարձրագոյն մասը վճռականապէս յարում է ձեռնարկող դասակարգին:

Արդէն կապիտալիզմի մանուֆակտուրային շրջանում կանանց և երեխաների աշխատանքը գործադրում է արտադրութեան մէջ, միայն շատ աննշան չափով: Մանուֆակտուրայի ձեռքի աշխատանքի համար, զլխաւորապէս, հասակաւոր տղամարդկանց ոյժ է հարկաւոր, իսկ կանայք ու երեխաները չունեն այդ ոյժը: Այս պատճառով մանուֆակտուրայի շրջանում կանայք և երեխաներն իրանց բանւորական ոյժի վաճառքով խիստ քիչ էին մրցում տղամարդկանց հետ:

Կանանց և երեխաների աշխատանքը տնային-կապիտալիստական արտադրութեան մէջ է համեմատաբար աւելի շատ գործադրում. այս նրանից է կախւած, որ աւետրական կապիտալի՝ մանր արտադրողին շահագործելու առանձնապէս դաժան բռնաւորութիւնը թափում է մանր ձեռնարկութեան տիրոջը աննաւորութիւնը թափում է մանր ձեռնարկութեան տիրոջը աննաւորութիւնը շահագործիչ իւր ընտանիքի ոյժերը, առանց ուշադրութիւն դարձնելու աշխատանքի և աշխատողների ոյժերի անհամապատասխանութեանը: Մանուֆակտուրայի կապիտալիստի համար աւելի շահաւետ է գործը ֆիզիկապէս զօրեղ, հասակաւոր բանւորների օգնութեամբ առաջ տանել. թէև նրանց աւելի շատ պէտք է վճարել, բայց ձեռքի գործի մէջ նրանց բանւորական ոյժն այնքան զերսպանց է կանանց և երեխաների բանւորական ոյժից, որ առաջիններից դարձեալ աւելի շատ յաւելեալ արժէք կարելի է ստանալ:

Մեքենայական արտադրութեան մէջ գործերի մեծ մասը հասակաւոր մարդու ֆիզիկական ոյժ չի պահանջում: Ուստի կանանց և կապիտալիստների աշխատանքը սկսում է հետզհետէ աւելի մեծ գործապատանիների աշխատանքը սկսում է հետզհետէ աւելի մեծ գործապատանիներին գտնել. իսկ այնտեղ, ուր ոչ միայն ֆիզիկական, այլև հասակաւոր մարդու մտաւոր ոյժ ևս չի պահանջում, հանդէս է գալիս երեխաների աշխատանքը: Կապիտալիստի համար խիստ շատ դէպքերում շահաւէտ է լինում հասակաւոր տղամարդկանց փոխարինել աւելի արժան, թէև աւելի թոյլ բանւորներով:

Հետևանքն այն է լինում, որ, շնորհիւ շուկայում ահագին քանակութեամբ նոր բանւորական ոյժեր յայտնելուն, բանւորների մէջ մըրկութեամբ նոր բանւորական ոյժեր յայտնելուն, բանւորների մէջ մըրկութեամբ սաստկանում է: Ինչքան կանանց և երեխաների աշխատանքի

գործադրութիւնն աճում, է, այնքան աշխատավարձն աւելի ընկնում է: Դժուար է պարզել, թէ որտեղ է այն նորման, որին դիմում է վարձը իւր իջնելու ընթացքում: Արժողութեան օրէնքով՝ աշխատավարձը պէտք է համապատասխանէ բանւորի ընտանիքի գործածութեան սովորական միջոցների գնին. միայն այժմ այդ աշխատավարձը մենակ մի տղամարդունը է, ինչպէս առաջ, այլ ընտանիքի բանւորական ոյժը ծախող բոլոր անդամներինը: Ինչպէս առաջ, այնպէս և այժմ ընտանիքը, միջին հաշուով, գոյութեան անհրաժեշտ միջոցներ է ստանում. տարբերութիւնն այն է միայն, որ կապիտալիստական արտադրութեան մէջ մենակ ընտանիքի գոյութիւնը չի մասնակցում, այլ և՛ նրա կիներն ու երեխաները:

Կապիտալի զարգացման հետ աճում է և կանանց ու երեխաների աշխատանքի գործադրութեան քանակը: Ռուսաստանում, որ դեռ նոր է կապիտալիստական երկիր դարձել, կանայք ֆաբրիկաներում բանւորների մօտ  $\frac{1}{4}$  մասն են կազմում, իսկ երեխաները՝ մօտ  $\frac{1}{40}$  մասը: Հին կապիտալիստական երկրում — Անգլիայում — յարաբերութիւնն արդէն ուրիշ է. այսպէս, մանկու-գործելու արդիւնաբերութեան մէջ տղամարդիկ չորրորդ մասից մի քիչ աւելի են (298,000 հոգի), կանայք — կէսից աւելի (610,000), պատանիները — մօտ  $\frac{1}{11}$ -ը (89,000) և համարեա այսօր էլ մինչև 13 տարեկան երեխաներ (86,500):

Տղամարդկանց, կանանց և երեխաների աշխատավարձերի մէջ տարբերութիւնը բաւականին զգալի է: Այսպէս, Մոսկւայի շրջանի ֆաբրիկաներում և գործարաններում տղամարդկանց միջին վարձը ամսական 19 ռուբլի է, կանանցը — մօտ 9 ռուբլի, երեխայինը — մօտ 6 ռուբլի: Այս տարբերութիւնները մասամբ են միայն կախած կանանց և երեխաների՝ գործին աւելի պակաս ընդունակ լինելուց: Եթէ բոլորովին միևնոյն քանակի աշխատավարձերը համեմատենք, դուրս է գալիս, որ այնուամենայնիւ տղամարդը շատ է ստանում, կինը քիչ, իսկ երեխան աւելի քիչ: Պատճառն այն է, որ բանւորական շուկայում կանայք և երեխաներն այնքան ընդունակ չեն պաշտպանել իրանց և որ, ընդհանուր առմամբ, սրանք աւելի քիչ դիտակցօրէն և եւանդուն են կուտում իրանց շահերի համար:

Կանանց և երեխաների աշխատանքի սօցիալական հետեւանքները խիստ բարդ են և մասամբ բացասական ու մասամբ դրական բնուորութիւն ունեն:

Բանւորների մէջ սաստկացած մրցումը նրանցից իւրաքանչիւրին աւելի մեծ չափով է ենթարկում ձեռնարկողին. բանւորներին փոխաբերինելը հեշտանում է և բանւորների կարիքն առաջւանից աւելի պակասում: Գործազուրկների թիւն աճում է:

Ֆաբրիկայի աշխատանքը կանանց և մանուկները երեխաների կազմաւածքը խիստ շատ դէպքում անժամանակ հիւժում է և այս ուժասպառութիւնը յաճախ մինչև այն աստիճանի է հասնում, որ բան-

ւորները կատարելապէս այլասերում են:

Յղի կանանց աշխատանքը վատ ազդեցութիւն է գործում ապագայ սերնդի առողջութեան վրայ. երեխաները ծնւում են թոյլ, վիժլածի և սոսկալի մահացութիւն ստացածի կերպարանքով: Բացի այդ՝ բանւորուհի-մայրը չափազանց քիչ ժամանակ ունի երեխայի վրայ հոգ ստանելու:

Մի քիչ մեծանալով, երբեմն արդէն 6-8 տարեկան հասակում, երեխան ինքս է վարձւում ֆաբրիկայում, եթէ օրէնքը չի արգելում: Այդպիսի երեխաների ֆիզիկական թուլութեան մասին ոչ միայն ֆաբրիկայի վերատեսուչները, այլ նոյնիսկ իրանք ձեռնարկողներն էլ են վրեկայում: (Անգլիայում, նախ քան ֆաբրիկայի օրէնքների հրատարակելը, ութը տարեկան երեխաներն աշխատում էին ժամացոյցի ֆաբրիկաներում, այն էլ օրական 14 ժամ):

Ֆաբրիկայի երկարատե աշխատանքը ոչ միայն այլանդակում է երեխաների մարմինը, այլև արմատապէս սպանում է նրանց մտաւոր ոյժը, բթացնում, վայրենացնում է նրանց, անընդունակ դարձնում զարգացման համար և երբեմն ուղղակի ապշութեան է հասցնում: Այսպիսի երեխաներից դուրս են գալիս ամեն մի ինքնուրոյնութիւնից և ամեն մի մտաւոր եռանդից զուրկ, սնխօս, անօգնակտն մարդիկ, որոնք, բացի ուրիշի ձեռքում կրաւորական գործիք դառնալուց, ուրիշ բանի պէտքական չեն:

Տղամարդկանց, կանանց և երեխաների գիշերային միատեղ աշխատանքը բանւոր դասակարգի համար սեռական անառակութեան վրտանդաւոր աղբիւր է հանդիսանում:

Կանանց և երեխաների ֆաբրիկային աշխատանքը, կնոջը՝ մարդուց և մօրը՝ երեխաներից հեռացնելով, օտարացնելով, կործանում է բանւորի ընտանիքը: Սրա հետ կապւած են անթիւ այնպիսի տանջանքներ, որպիսիք մարդկային կեանքի նախընթաց շրջանները չգիտէին:

Բայց միևնոյն ժամանակ կինը դուրս է գալիս ընտանիքի մէջ ունեցած նախկին ստրկական դրութիւնից: Ինքնուրոյն բանւորուհի դառնալով և այդպիսով տնտեսական անկախութիւն ձեռք բերելով, նա դատնալով և այդպիսով տնտեսական աստացի իրաւունք է ստատարածանաբար տղամարդուն հաւասար փաստացի իրաւունք է ստանում: Երեխաների գրութիւնն էլ ընտանիքում աւելի պակաս իրաւազուրկ է դառնում:

Իսկ կանանց և երեխաների աշխատանքի հիմնական նշանակութիւնը հասարակութեան արտադրող ոյժերի այն աճեցողութեան մէջ է կայանում, որ կանանց և երեխաների՝ աշխատակցութեան ընդհանուր փոխտեմի մէջ աւելի լիակատար մասնակցումով է ձեռք բերում: Սրասիտեմի մէջ աւելի լիակատար մասնակցութեան գործադրուելից բղխում են կանանց և երեխաների իսկ բացասական հետեւանքութեան վերոյիշեալ զրական հետեւանքները. իսկ բացասական հետեւանքները միայն այս գործադրութեան ժամանակակից կապիտալիստական ձևից են բղխում և ամեն հասարակական պայմաններում անհրաժեշտ









քական և այլն միութիւնների գործունէութիւնը կարող է հաստատուն պահել ձեռք բերւած կեանքի մակերևոյթի բարձրացումը: Տնտեսական դարգացման առաջադիմութեան մէջ սպառողական և փոխատու-խնայողական ընկերութիւնների նշանակութիւնն այն է, որ նրանք իրանց մրցումով արագացնում են մանր առևտրականների և մանր վաշխատուների կորուստը: Որովհետև նրանք կապիտալի շահերին չեն դիպչում, ուստի և շատ անգամ ձեռնարկողների հովանաւորութեան տակ են կազմւում:

Բանւորական կազմակերպութիւնների մի քիչ աւելի բարձր տիպն են ներկայացնում արտադրողական ընկերութիւնները: Սրանք բանւորների խմբեր են, որոնք իրանց տրամադրութեան տակ են ունենում արտադրութեան միջոցները և սեփական ձեռնարկութիւններ են պահում: Հետևապէս, այս ընկերութիւնների անդամները լինում են թէ՛ ձեռնարկողներ և թէ՛ բանւորներ: Այդպիսի կազմակերպութիւնները, շահը կապիտալիստի ձեռքն անցնելը վերացնելով, ընդունակ են դառնում բաւականին զգալի կերպով բարելաւել իրանց անդամների նիւթական դրութիւնը:

Սակայն արտադրողական ընկերութիւնները շատ քիչ դէպքերում կարող են առանց կողմնակի օգնութեան հիմնւել (օրինակ՝ պետութիւնից ստացած օգնութիւն)։ ներկայ տեխնիկայի դէպքում ձեռնարկութիւն սկսելու համար սովորաբար զգալի քանակութեամբ կապիտալ է անհրաժեշտ: Այնուհետև, արտադրողական ընկերութիւններով գործ առաջ տանելը մեծ դժւարութիւններ է ներկայացնում.— արտադրութեան մէջ միատեղ կազմակերպչական գործունէութեան նկատմամբ բանւորների անսովորութիւնը, նրանց աննշան կապիտալը, կապիտալիստների թշնամական վերաբերմունքը, որոնք երբեմն իրանց խոշոր միջոցներով յաջողում են մրցումով քանդել բանւորների ձեռնարկութիւնները և այլն:

Կազմակերպւելով կապիտալիստական յարաբերութիւնների մէջ, արտադրողական ընկերութիւնները բարենպաստ պայմաններում արժատականապէս բարելաւում են իրանց անդամներին, այսինքն՝ համեմատաբար աւելի սակաւաթիւ բանւորների դրութիւնը: Այն ժամանակ վերջիններիս շահերը սկսում են խստիւ հեռանալ միւս բանւորների շահերից: Իսկապէս, ընկերութեան համար ուղղակի անշահաւէտ է դառնում նոր անդամ ընդունելը հներին համահաւասար պայմաններով, երբ նա արդէն կարգին կապիտալ ունի: Եթէ ընկերութիւնը այնքան փող է հաւաքում, որ իւրաքանչիւր անդամին 1,000 բուբլի է ընկնում, այս դէպքում առանց հազար բուբլի գանձելու նոր անդամ ընդունելը նրա համար իւր շահն ուղղակի ուրիշների հետ բաժանել կնշանակէ:

Ընդհանրապէս, բանւոր ձեռնարկողներին բանւորների մէջ մի առանձին արիստոկրատիա դարձնելուց աւելի դիւրին բան չկայ: Շատ անգամ պատահում է, որ արտադրողական ընկերութիւնները վարձում են կողմնակի բանւորներ և սովորական վարձ են վճարում միայն (օրինակ՝ Գիդայի նշանաւոր «Փամելիստերը»)։ Արտադրողական ընկերութիւնները իրանց զարգացման մէջ ձգտում են բաժնետէրական ընկերութիւններ դառնալ: Նրանք, էութեամբ, մանր բուրժուազիան են բազմացնում միայն և շատ ան-

գամ կազմւում են ոչ թէ զուտ բանւորներից, այլ մանր-բուրժուական տիպի արտադրողներից, օրինակ՝ Ռուսաստանի գիւղացիական արտերները: Մինչև այժմ արտադրողական ընկերութիւնները համեմատաբար աւելի քիչ յաջողութիւն են ունեցել:

Շատ աւելի հաստատուն և աւելի կենսունակ են սպառողական-արտադրողական ընկերութիւնները: Մեծ միջոցներ հաւաքելով՝ սպառողական ընկերութիւնները սարքում են սեփական արհեստանոցներ, Փարբիկաներ և արտադրում են միքանի տեսակ ապրանքներ, որոնք ընկերութեան անդամներն ամենից շատ են գործածում: Այս դէպքում արտադրիչի ապրանքների համար պահանջը ապահովւած է լինում, սովորաբար աւելի լաւ աշխատավարձ են ստանում և դեռ սպառողական ընկերութեանը մասնակցելու համար շահից էլ օգտւում են:

Բանւորների այս քաղաքական կռիւը, որ մղում են իրանց կեանքի և աշխատանքի տնտեսական պայմանները բարելաւելու համար, ներկայ կազմի շրջանակների մէջ գործարանական օրէնսդրութիւն է առաջ բերում:

Գործարանական օրէնսդրութիւնը նրանումն է կայանում, որ պետութիւնը միջամտում է առանձին կապիտալների կազմակերպչական գործունէութեանը և սահմանափակում է կապիտալի ու աշխատանքի մէջ եղած պայմանի ազատութիւնը: Պետութեան համար այդ սահմանափակման պահանջը ծագում է առանձին ձեռնարկողների շահերի՝ ամբողջ կապիտալիստական հասարակութեան շահերի հետ ընդհարելուց: Գործարանական օրէնսդրութիւնը զանազան դէպքերում ինչպիսի ձևեր էլ ընդունէ— բանւորական օրւայ սահմանափակում, մեքենաներից առաջացած դժբախտ դէպքերի համար ձեռնարկողների պատասխանատուութեան որոշումն, աշխատանքի առողջապահական պայմանների վերաթեան որոշումն, աշխատանքի անհրաժեշտութիւն ստեղծում, Անգլիայից մի օրինակ բերքը: Անգլիան, որտեղ մեքենայական կապիտալիզմն ամենից առաջ զարգացաւ, միւս բոլոր երկրներից առաջ ձեռնամուխ եղաւ գործարանական օրէնսդրութեան:

Որպէսզի պարզենք, թէ մեքենայական արտադրութիւնը, վերակազմելով բոլոր յարաբերութիւնները, ինչ կերպով է գործարանական օրէնքների անհրաժեշտութիւն ստեղծում, Անգլիայից մի օրինակ բերքը: Անգլիան, որտեղ մեքենայական կապիտալիզմն ամենից առաջ զարգացաւ, միւս բոլոր երկրներից առաջ ձեռնամուխ եղաւ գործարանական օրէնսդրութեան:

Երբ կապիտալի՝ բանւորական օրը երկարացնելու և աշխատավարձը ցածրացնելու ձգտումը ծայրայեղութիւնների հասաւ և սպառնաց բանւոր դասակարգին այլասերել, այն ժամանակ երևոց, որ սպառնաց բանւոր դասակարգին այլասերելու են ոչ միայն բանւորայդպիսի պայմանների փոխելով շահագրգռւած են ոչ միայն բանւորները, որոնք աշխոյժ կուր էին մտել գործարանական օրէնքների համար, այլև հասարակութեան միւս բազմաթիւ տարրերը: Նախ՝ հողամար, այլև հասարակութեան միւս բազմաթիւ տարրերը: Նախ՝ հողատէր դասակարգը պակաս հիմունքներ չունէր համակրանքով վերաբերւելու դէպի բանւորների ձգտումները: Բանւորների կեանքի պայման-





քի պայմանների օրէնսդրական կարգաւորումը խիստ մեծ, դրական նշանակութիւն ունի. նախ՝ նա արագացնում է տեխնիկական առաջադիմութիւնը հէնց նրանով, որ բարձրացնում է բանւորական ոյժի արժողութիւնը, որի շնորհիւ մարդկային աշխատանքը մեքենայականով փոխարինելը ձեռնարկողների համար աւելի շահաւէտ է դառնում. երկրորդ՝ նա արագացնում է կապիտալի կենդրոնացումը, հեշտացնելով մանր ձեռնարկութիւնների կործանումը, որովհետև նրանք շատ աւելի դժւար են դիմանում բանւորական ոյժի մեծացած ծախսերին և աշխատանքի պարագանների այլ և այլ բարելաւումներին, քան խոշոր ձեռնարկութիւնները. երրորդ՝ պետական միջամտութիւնը թոյլ է տալիս, որ իւրաքանչիւր կապիտալ արտադրութեան միակ և լիազօր կազմակերպիչ լինելու իրաւագորութիւն ունենայ. չորրորդ՝ բարելաւելով բանւոր դասակարգի դրութիւնը, օրէնսդրական կարգաւորումը հասարակութեան կազմը արմատապէս փոխելու ձգտող պրօլետարական կուլի և պրօլետարի դիտակցութեան զարգացման համար աւելի բարենպաստ պայմաններ է ստեղծում:

5. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՈԳԵՐԱՆՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱԳԼՍԱԻՈՐ ՓՈՓՈՒՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ

Ըստ բնաւորութեան, հասարակական հոգեբանութեան այն փոփոխութիւնները, որ կատարւում են մեքենայական կապիտալիզմի շրջանում, մասամբ ուղղակի շարունակութիւն են հանդիսանում այն փոփոխութիւնների, որ նախընթաց շրջանումն էին կատարւում, մասամբ էլ զգալի կերպով տարբերւում են նրանցից:

Անհատի ազատումը ֆէոդալական աշխարհից ժառանգած ձեւական ճնշումներից և աւտօրիտետներից շարունակւում է և մեքենայական արտադրութեան ժամանակներում համարեա աւարտւում: Հասարակութեան բուրժուական դասակարգերի վերաբերմամբ այս երեոյթը բացատրելու էլ կարիք չկայ: Իսկ ինչ վերաբերում է բանւորներին, հէնց միայն նախկին մեքենայական-կատարողական դերից, որ նրանք կատարում էին մանուֆակտուրային արտադրութեան մէջ, դէպի գիտակից-կատարողականին անցնելը, որ էութեամբ շատ մօտ է կազմակերպչական դերին, մտքերի և ձգտումների հորիզոնի ընդարձակումն է առաջացնում: Ճշմարիտ է, զարգացման համար ձեւական ազատութիւն ունենալով՝ բանւորը սովորաբար անհամեմատ աւելի պակաս նիւթական ազատութիւն և զարգացման նիւթական հնարաւորութիւն ունի իւր տրամադրութեան տակ, սակայն, այս ևս սակաւ առ սակաւ ընդարձակւում է (բանւորական միութիւններ, գործարանական օրէնսդրութիւն և աշխատավարձի աւելացում):

Այն ուղղութիւնը, որով փոփոխւում է հասարակութեան երկու հիմնական խմբերի — կապիտալիստների և պրօլետարների հոգեբանու-

թիւնը, այս դէպքում միատեսակ չի լինում: Կապիտալիստները կազմակերպչական գործունէութիւնն աստիճանաբար վարձու մասնագէտներին յանձնելով, սկսում են գլխաւորապէս սպառողական — այսինքն՝ պարագիտային ուղղութեամբ զարգանալ. պրօլետարները իրանց արտադրողական դերի աճող բարդութեան համաձայն, գլխաւորապէս արտադրողական ուղղութեամբ են զարգանում: Ժամանակի ընթացքում զարգացման այս երկու տիպերը իրանց փոխադարձ համապատասխանութեան մէջ ևս հետզհետէ աւելի ամուր են հաստատւում. թէ այս վերջ է վերջոյ ինչ հետևանք պէտք է ունենայ, դժւար է պատկերացնել:

Այն ճանաչողական նիւթի աճումը, որի վրայ յենւում է յետագայ զարգացումը, արտադրութեան ընդհանուր աճմանն է համապատասխանում: Երեոյթների պատճառականութեան ճանաչումը անընդհատ ընդարձակւում է: Բնական ֆետիշիզմը իւր հողն ամբողջովին կորցնում է, սրանից միայն աննշան բեկորներ են պահպանւում:

Ապրանքի ֆիտիշիզմը պահպանւում է, որովհետև պահպանւում է աշխատանքի այն հասարակական անկազմակերպ բաժանումը, որ ապրանքի ֆետիշիզմ է ծնում: Սակայն այս ֆետիշիզմը հասարակական հիմնական երկու խմբերի հոգեբանութեան վրայ հաւասար չափով չէ հիմնական երկու խմբերի հոգեբանութեան վրայ հաւասար չափով չէ տիրապետում. նա իւր ոյժը լիովին պահպանում է միայն ձեռնարկող խմբի վերաբերմամբ, որի համար աշխատանքի անկազմակերպ բաժանումը խիստ մեծ, անմիջական նշանակութիւն ունի կեանքի մէջ, որի համար գործունէութեան նիւթական պայմանները փոխանակական սեփականութեան ձև ունեն, որի համար գոյութեան կուլը հետզհետէ փականութեան ձև ունեն, որի համար գոյութեան կուլը հետզհետէ փականակական գործողութիւնների շարքն է անցնում: Ընդհակառակը, փոխանակական գործողութիւնների շարքն է անցնում: Ընդհակառակը, աշխատակցութեան և աշխատանքի բաժանման կազմակերպած ձևերը բանւոր դասակարգի կեանքում հետզհետէ աւելի մեծ դեր են խաղում՝ և իրանց պարզութեամբ ու թափանցկութեամբ տեղ չեն թողնում ֆետիշիզմին, — աշխատանքի գործողութիւնների մէջ միատեղութեան կապը հետզհետէ աւելի աղօտ է դիմակաւորւում փոխադարձ կուլ — մրցումով. կեանքի մէջ արտադրութիւնն է գլխաւոր դերը խաղում և սիտիշիզմով. կեանքի մէջ արտադրութիւնն է գլխաւոր դերը խաղում և սիտիշիզմով. կեանքի մէջ արտադրութիւնն է գլխաւոր դերը խաղում և սիտիշիզմով. կեանքի մէջ արտադրութիւնն է գլխաւոր դերը խաղում և սիտիշիզմով. կեանքի մէջ արտադրութիւնն է գլխաւոր դերը խաղում և սիտիշիզմով:

Մեքենայական արտադրութեան՝ հասարակական հոգեբանութեան վրայ ունեցած վերանորոգող ազդեցութիւնը յարմար կլինի մեր ուսումնասիրած շրջանի տնտեսական հայեացքներով լիովին հետազօտել:

Ֆիզիոկրատների (Նորտ) և մանուֆակտուրային շրջանի զարգացման ամենավերջին աստիճանի տնտեսագէտների (Ա. Սմիտ) համար բնորոշ է հանդիսանում այն խորին համոզմունքը, որ ազատ մրցման տիրապետութեան ժամանակ հասարակութիւնը պէտք է խիստ բարեկեցիկ լինի, որ անձնական շահերի ալտու կուլի մէջ է «արդար» բաշխումն ստեղծւում: Այդ ժամանակները զարգացող կապիտալիզմի բաշխումն ստեղծւում: Այդ ժամանակները զարգացող կապիտալիզմի

քացասական կողմերը դեռ շատ քիչ էին զարգացել և շատ աղօտ էին հանդէս գալիս: Հողագուրկ գիւղացիութեան և առհասարակ այն բոլորի համար, որոնք ապրուստի միջոցների նախկին աղբիւրները կորցրել էին, մանուֆակտուրան մի տեսակ՝ սովամահութիւնից փրկող բարեգործ էր հանդիսանում: Այս հանգամանքը տնտեսագէտների—կապիտալի իդիօլօգների—արտադրութեան և բաշխման նոր ձևերի վրայ ունեցած լաւատես հստիսցքի համար բաւականաչափ նիւթ էր մատակարարում:

XVIII դարու վերջի արդիւնաբերական մեծ յեղաշրջման և մեքենայական արտադրութեան զարգացման հետ շատ բան փոխեց: Կապիտալիստական պահեստի բանակի արագ կերպով գոյանալը, կանանց և երեխաների աշխատանքի ծայրայեղութիւնները, աշխատավարձի ցածրանալը, բանւորների տարերային ապստամբութիւնները իրականութեան մէջ ազգային հարստութեան և ժողովրդական ազատութեան կողք կողքի լինելը,—այս բոլորը աչքի էին ընկնում և բացատրութիւն պահանջում: Տնտեսագէտները կեանքի դրած հարցերի առաջը չէին կարողանում աւնել:

Միևնոյն ժամանակ Անգլիայի տնտեսագէտների, իբրև կապիտալի իդիօլօգների առաջ կանգնած էր և դուտ գործնական մի հարց—չափազանց բազմացած կապիտալիստական պահեստի բանակը չրքաւորների համար հաւաքած տուրքերի հաշուով ապրեցնելը խիստ թանկ էր նստում բուրժուազիային և նրա յաւելեալ արժէքն աւելի շատ էր պակսեցնում, քան ինչ որ բուրժուազիայի հայեցակէտով էր ցանկալի: Հարկաւոր էր կրճատել այս ծախսերը մինչև այն աստիճան, որը համապատասխանէր կապիտալի համար իսկապէս անհրաժեշտ պահեստի բանակին. սրա համար հարկաւոր էր իդիօլօգիական, ըստ կաքելոյն, գիտական հիմունքներ գտնել:

Այսպիսի հասարակական պայմանների մէջ առաջ եկաւ Բօրերդ Մայլտուսի գիտական գործունէութիւնը: Այս տնտեսագէտը (հասարակական դիրքով բողոքական քահանայ) հին ասկետական (ձգնաւորական) գաղափարները կատարելագործեց, նրանց յարմարեցնելով նոր նպատակներին: Բոլոր սօցիալական դժբախտութիւնների պատճառը նա սերունդը բազմացնելու բնագործ համարեց. մարդիկ ազատութիւն են տալիս այդ բնագործին և այնքան են բազմանում, որ հողը այլ ևս չի կարողանում նրանց կերակրել. սովը դատում է մարդկանց և սնկընայ պատժում է այն բոլորին, որոնք չպէտք է աշխարհ մտնէին—այսպէս է նախախնամութեան կամքը, այսպէս է բնութեան օրէնքը:

Ի հարկէ, ինքը իրականութիւնն էր այս գաղափարին նիւթ տալիս: Դիտելով առանձին տնտեսութեան կեանքը, յաճախ կարելի է տեսնել իսկական «չափազանցութիւն», այսինքն՝ ընտանիքի միջոցներին անհամապատասխան բազմացում: Մասնաւոր տնտեսութիւնների վրայ արևած գիտողութեան եզրակացութիւնը հարկաւոր էր միայն ամբողջ հասարակութեան վրայ փոխանցել, իսկ այս միջոցը խիստ սովորական է հին բուրժուական տնտեսագէտների համար—և կատարել էր մայլտուսականութիւնը:

Բայց միթէ բնութիւնն արդէն այնքան աղքատ է, որ անկարող է կերակրել բոլոր ապրող մարդկանց և դեռ շատ միլիոնների: Ո՛չ—պատասխանում է Մայլտուսը—բնութիւնն անսահման հարուստ է, բայց նա մարդուն այդպէս հեշտութեամբ բաժին չի տալիս: Ինչքան էլ որ մարդու բնութեան դէմ մղած կռիւլը յաջողակ լինի, այ-

նուամենայնիւ, ապրուստի այն միջոցները, որ նա հողից է ստանում, չեն կարող այնպիսի արագութեամբ աճել, ինչպէս մարդն է աճում: Մարդը միշտ յաղթում է բնութեանը, բայց ամեն մի յետագայ յաղթանակ հետզհետէ աւելի թանկ է նստում: Այսօր երկրագործը որոշ չափով աշխատանք է դնում, որ իւր մի բուռ հողից իւր ընտանիքի համար մի կտոր հաց ձեռք բերէ. վաղը նրա ընտանիքը մեծանում է, նրանք երկու անգամ աւելի շատ հաց է հարկաւոր. սակայն այս դէպքում աշխատանքը թերևս երեք անգամ աւելի շատ պիտի լինի: Որպէսզի միևնոյն հողաբաժնից, սովորականից դուրս, նոյնքան ցորեն ստացի, հարկաւոր է առաջւանից շատ աւելի աշխատել: Որ և է հողաբաժնի վրայ դրած աշխատանքի իւրաքանչիւր նոր քանակութիւն աւելի քիչ արդիւնք է բերում, քան առաջւանը:

Ճշմարիտ է, տեխնիկայի զարգացումը աշխատանքն աւելի արտադրող է դարձնում, բայց նա չի կարող սնունդի պահանջի մեծանալու յետևից հասնել:

Ենթադրենք, երկրի բնակիչները իւրաքանչիւր 25 տարին կըրկնապատկուում են (Մայլտուսը իւր հաշիւների հիման վրայ այս ժամանակամիջոցն այնքան էլ կարճ չի համարում): Որովհետև մարդկային բնութիւնն անփոփոխ է մնում (ըստ Մայլտուսի), ուրեմն հիմք չկայ սպասելու, որ այս ժամանակամիջոցը պէտք է ժամանակի ընթացքում փոփոխուի:

Հետևապէս, եթէ այժմ երկրում 1 միլիոն բնակիչ կայ, ուրեմն 25 տարուց յետոյ 2 միլիոն կլինի, 50 տարուց—4 միլիոն, 75 տարուց յետոյ—8 միլիոն կայն. 250 տարուց յետոյ բնակչութեան թիւը 1,024 միլիոնի պէտք է հասնի: Այս դէպքում, թող առաջ երկրում 100 միլիոն փութ ցորեն ստացէր, իւրաքանչիւր մարդուն 100 փութ, որն և ենթադրենք, գոյութեան անհրաժեշտ միջոցների նորմա է հանդիսանում:

Իսկ այնքան ժամանակում ապրուստի միջոցների արտադրութիւնը յիշքան կարող է աճել: Հասարակական զարգացման ընթացքի հետ հողի արտադրողականութիւնն աճում է, բայց, ըստ Մայլտուսի, այդ արդէն խիստ շատ կլինէր, եթէ իւրաքանչիւր նոր սերունդ կարողանար հողից 100 միլիոն փութ ցորեն աւելի ստանալ, քան նախընթացը: Մայլտուսը նկատում է, որ եթէ, օրինակ՝ Անգլիայում երկրագործութեան յառաջադիմութիւնը այսպիսի արագութեամբ գնար, երկիրը մի քանի դարերի ընթացքում մի խիտ այգի կդառնար: Հետևապէս, 25 տարուց յետոյ կարտադրելի 200 միլ. փ. իւրաքանչ. մարդուն 100 փ. 50 « » » » 300 « » » » արդէն 75 « 75 « » » » 400 « » » » « » 50 «

և այլն: Իսկ որովհետև իւրաքանչիւր մարդու անհրաժեշտ է 100 փութ, ուրեմն, ակնհերև է, բնակչութեան մի մասն աւելորդ է լինում և ինչպէս տեսնում ենք, գնալով աւելի մեծ մասը: Այս մասը դատապարտած է կործանելու սովից, հիւանդութիւններից և այլն:

Ահա, թէ որտեղից դուրս եկաւ գործազուրկը. ըստ Մայլտուսի, այս մի աւելորդ մարդ է, որին ծնողները չպէտք է աշխարհ բերէին: Քահանայ-տնտեսագէտի վճիռն այսպէս է.

«Բնութեան օրէնքները, որ միևնոյն ժամանակ Աստուծոյ օրէնքներն են, աւելորդ մարդուն և նրա ընտանիքին, քանիցս կրկնւած խրատներին չհնազանդելու համար, սովամահ լինելու դատապարտեցին»:



յանում, որ նա հետևողական կերպով իւր վերլուծութեան մէջ գործադրեց աշխատանքային արժողութեան տեսութիւնը. ի միջի այլոց, այս հանգամանքը թոյլ էր տալիս նրան պարզ հասկանալ և արտայայտել դասակարգային շահերի հակադրութիւնը, որ նրա նախորդները մասամբ չէին հասկանում, մասամբ էլ քողարկում էին:

Բիկարդօի մեթոդը բացառապէս դեգուկտիւ է իբրև նախապայման՝ վերցնում են զարգացած կապիտալիստական յարաբերութիւնները, մարդկային գործունէութեան հիմնական շարժիչը ընդունում է անձական շահը և բացատրում է այնպէս, ինչպէս որ մարդկանց յարաբերութիւնները պէտք է կազմէին այդպիսի պայմանների մէջ:

Ըստ Բիկարդօի, ապրանքների արժէքը նրանց մէջ պարունակւած աշխատանքի միջին քանակութեամբ է որոշւում: Այդպիսով, արժէքը արտադրութեան մէջ է կազմւում և ապրանքը արդէն որոշւած արժէքով է շուկայ գալիս: Այստեղից դուրս է գալիս, որ ապրանքի արժէքը բաձանուում է աշխատավարձի, շահի և բենտայի վրայ: Երեք դասակարգերի անձինք— կապիտալիստը, հողատէրն ու բանուորը—ըստ տեղւած արժէքը բաժանում են իրար մէջ: Բաժանելիս՝ եթէ մէկին շատ է հասնում, ուրեմն միւսին քիչ պիտի հասնի: Ահա սրա մէջն է կայանում Բիկարդօի ցոյց տւած դասակարգային շահերի հակադրութիւնը: (Սմիտի հայեացքներով, ապրանքների գինը կազմւում է աշխատավարձից, շահից և բենտայից: Այս դէպքում իւրաքանչիւր բաժնի աճումը կարող է միւսների հաշւին չկատարել):

Բիկարդօն առաջինն էր, որ բենտայի գիտական, թէև կիսկատար, բայց առանձին դէպքերում բոլորովին ուղիղ տեսութիւնը տւեց: Այդ տեսութեան էութիւնը հետևեալն է:

Բենտան բնութեան ձրի ոյժերից օգտուելով ձար է. այն մարդիկ որոնք գրաւել են հողն ու նրա բնական հարստութիւնները մենավաճառութեան համար, հասարակութիւնից հարկ են վերցնում՝ իբրև բենտա: Մշակելի հողերից ամենավատերն արդէն բենտա չեն տալիս, այլ միայն ծախսւած կապիտալի շահը (Բիկարդօի համար բենտա գոյութիւն չունի): Աւելի պտղաբեր հողերը սովորական տոկոսից աւելի մեծ շահ են տալիս. շահից դուրս, ֆնացածը բենտա է: Եթէ հողաբաժինը նոյնիսկ ծախսւած կապիտալի սովորական շահն էլ չի տալիս, այդ հողաբաժնի մշակումը դադարեցնում են: Եթէ ամենանւազ հողն էլ սովորական շահից աւելի է տալիս, սկսում են չգրաււած, անպտղաբեր հողերն ևս մշակել:

Ժամանակի ընթացքում, շնորհիւ բնակչութեան աճման, ապրուստի միջոցների—հողի արդիւնքների պահանջը հետզհետէ մեծանում է, իսկ նրանց գներն աւելի արագ են բարձրանում, որովհետև առանց այս սպառման առարկաների կառավարելն ամենից դժւար է: Սկսում են հետզհետէ աւելի ու աւելի վատ հողաբաժիններ մշակել, աւելի մեծ կապիտալ են դնում այն հողերի վրայ, որ արդէն գրաււած են երկրագործութեան համար: Այս հանգամանքի շնորհիւ՝ բենտան ժամանակի ընթացքում բարձրանում է:

Սրա հետ միասին բարձրանում է և աշխատավարձը. սա որոշւում է ապրուստի անհրաժեշտ միջոցների արժողութեամբ, իսկ այս միջոցները—ամենից առաջ հացը և միւսը—բենտայի մեծանալով՝ հետզհետէ թանկանում են. այսպիսով, եթէ նոյնիսկ բանուորների կարիքները չաճեն, այնուամենայնիւ, փողով աշխատավարձը բարձրանում է:

Բենտայի և աշխատավարձի բարձրանալով՝ շահը պէտք է պակ-

սի: Եթէ բաժանման մէջ բանուորն ու հողատէրը աւելի շատ են վերցնում, ուրեմն կապիտալիստին աւելի քիչ է հասնում: Ըստ Բիկարդօի, այս է շահի տոկոսի աստիճանարար իջնելու պատճառը: (Շահի տոկոսի իջնելու միւս, աւելի էական պատճառը—փոփոխական կապիտալի յարաբերական նւազումը—բիկարդօ-ի աչքից խուսափում է):

Բիկարդօն աշխատավարձն աւելի անյաջող է ուսումնասիրել, քան բենտան: Սմիտի նման, Բիկարդօն ևս աշխատավարձը աշխատանքի արժողութիւն է համարում: Աշխատանքն է որոշում բոլոր ապրանքների արժէքը և ինքը չի կարող արժէք ունենալ. որոշ քանակութեան աշխատանքի արժէքը միմիայն հէնց աշխատանքի քանակը կարող է լինել և 10 ժամեայ աշխատանքի համար պէտք է 10 ժամեայ աշխատանքի արդիւնք տալ. այս դէպքում յաւելեալ արժէքն անհարին կլինէր: Բուրժուական տնտեսագէտներին ընդհանրապէս չյաջողեց հասնել բանորակաց ոյժի հակացողութեանը՝ նրանք չհասկացան, որ ոչ թէ աշխատանքն է գնւում, այլ աշխատանքի հնարաւորութիւնը, բանուորի ոյժը:

Ինչ վերաբերում է աշխատավարձի քանակին, Բիկարդօն այս վերաբերմամբ ընդհանուր օրէնք սահմանեց, որ յետոյ «երկաթեայ» կոչւեց և որի համաձայն՝ աշխատավարձը փոքրիկ տատանումներով հասնում է ապրուստի անհրաժեշտ միջոցների գներին: Նա այս օրէնքի հիմքը Մայլտուսի ուսմունքով է կազմում: Հէնց որ աշխատավարձն անհրաժեշտ միջոցների նորմայից բարձրանում է, բանուորներն սկսում են աւելի արագ բազմանալ, որովհետև ամուսնութիւններն աւելանում են, իսկ մահացութիւնները պակասում: Սաստիկ բազմացումը շուտով աւելորդ բնակչութիւն է առաջացնում, բանուոր ձեռքերի առաջարկութիւնը սկսում է պահանջը բարձրացնել և աշխատավարձը անհրաժեշտ միջոցների մակերևոյթից աւելի ցածր է իջնում: Այն ժամանակ սոցիալ ու հիւանդութիւնները, ջնջելով բանուորների աւելորդը, շուտով նորից պահանջի և առաջարկութեան մէջ հաւասարակշռութիւն են հաստատում:

Բիկարդօի աշխատավարձի օրէնքը այն նկատմամբ է սխալ, որ թոյլ չի տալիս աշխատավարձի ընդհանուր և հաստատուն բարձրացումն և նրա համար անփոփոխ նորմա է ստեղծում: Աւելի ևս սխալ է այս օրէնքը Մայլտուսի ուսմունքի վրայ հիմնելը. մի կողմից կապիտալիստական պահեստի բնակի փոփոխութիւնները և միւս կողմից աշխատանքի շուկայում բանուորների խտութեան աստիճանը,—անաշխատավարձի բարձրութիւնը որոշող իսկական պայմանները:

Աշխատավարձի հարցի մէջ Բիկարդօի արած գիտական ծառայութիւնների թւին է պատկանում, ի միջի այլոց, նրա այն ցուցմունքը, թէ մեքենաները շատ անգամ պէտք է վատթարացնեն աշխատաւորների դրութիւնը:

Բիկարդօի վիճակագրական էկոնոմիկայի վրայ ունեցած ընդհանուր հայեացքը միևնոյնն է, ինչ որ Սմիտինը. յարաբերութիւնների կապիտալիստական սխտեմը նա մարդկութեան յետագայ կեանքի մէջ է կատարեալ և միակ հնարաւոր համարում, — մի հայեացք, որ աւելի քան բնական է բուրժուական տնտեսագէտի—կապիտալի իդիօլօգի համար:

Կլասիկ-տնտեսագէտների ուսմունքի մէջ երևան եկած ինդիւիզմոսայիստական հոգեբանութեան հիմքի մէջ կան այն հասարակական յարաբերութիւնները, որոնք յայտնւում են իբրև «աշխատանքի հասա-

բակազան անկազմակերպ բաժանում», և որոնք արտայայտում են արտագրութեան փոխանակութեան, մրցումի և անխշխանութեան մէջ: Բայց կապիտալիստական հասարակութիւնը զարգացնում է և ուրիշ յարաբերութիւններ—հասարակ աշխատակցութեան և աշխատանքի կազմակերպւած բաժանման կապը, —որոնք տիրապետում են իւրաքանչիւր առանձին տնտեսութեան սահմաններում և միացնում նրա արտադրող անդամներին: Այդպիսի կապերի հողի վրայ կազմւում է ուրիշ կօյնկտիվիստական հոգեբանութիւն, որ ամենից առաջ և շատ քիչ զարգացած ձևով հանդէս է գալիս ուսույլիստ սօցիալիստները դպրոցի ուսմունքի մէջ:

Ուսույլիստները խիստ և աշխոյժ բննադատութեան ենթարկեցին իրանց ժամանակակից հասարակական կազմը: Պարզօրէն հանդէս հանելով այդ կազմի բացասական կողմերը, դրանց հակադրում էին իրանց իդէալները և ամբողջ ընդարձակ նախազօգէր էին առաջարկում, որոնց իրագործումը պէտք է երջանկացնէր մարդկութիւնը:

Առաջին ուսույլիստների շարքը կարելի է դասել ֆրանսական յեղափոխութեան գործիչ Գրակիս Բարէօֆին: Նա կազմակերպեց կօմունիստական դաւադրութիւնը, որ վերջացաւ լիակատար անյաջողութեամբ և թէ Բարէօֆի և թէ բազմաթիւ բարէօֆականները կործանմամբ:

Արիւնահեղ կուլի մէջ պարտութիւն կրելով, ուսույլիստ-սօցիալիստական հոսանքը նոր ձևեր և բոլորովին խաղաղ բնաւորութիւն է ստանում:

Սեն-Սիմօնի և նրա «նոր քրիստոնէութեան» մէջ սօցիալիստական իդէալը դեռ այնքան էլ պարզ չէ արտայայտւած: Նա ենթադրում էր, թէ կրօնը կլինի այն ոյժը, որ կվերակազմէ աշխարհն եղբայրական ոգով և կվերացէ հասարակութեան բաժանումը, անհաւասարութիւնն ու կոիւր:

Շարլ-Ֆուրիէն շատ աւելի ճշգրիտ ու պարզ է պատկերացնում իւր իդէալները: Նա տւեց ապագայ խոհուն հասարակութեան լիակատար ֆանտաստիկ պատկերացումը և նկարագրեց արտագրութեան ու բաշխման կանոնաւոր կազմակերպութիւնը («Ֆալանստերներ»): Չի կարելի չնկատել, թէ նրա ժամանակի տիրապետող յարաբերութիւնները ինչահագին ազդեցութիւն ունէին նոյնիսկ այնպիսի ուղեղների վրայ, ինչպիսին Ֆուրիէն էր: Իդէալական բաշխման կազմակերպութեան մէջ Ֆուրիէն ամբողջ արդիւնքի 12 մասից 5 մասը նշանակում է աշխատանքին, 4 մասը կապիտալին, իսկ 3 մասը տղանդին: Ստացւում է յաւելեալ արժէքի մի բաւական պատկանելի նորմա—4 տոկոս:

Բոքերտ Օուենը, որ ապրում էր Անգլիայում, աւելի զարգացած տնտեսական յարաբերութիւնների մէջ, քան ֆրանսական ուսույլիստները, հանդէս եկաւ արդէն իբրև վճռական հակառակորդ մասնաւոր սեփականացման և կուսակից՝ հասարակական-կազմակերպւած արտադրութեան: Միւս ուսույլիստների նման Օուենը պարզ գծագրում է իւր իդէալները և որովհետև նրանց հայեցակէտն ունի, ենթադրում է, որ գաղափարները իրանք իրանց կարող են փոխել կեանքը: Բայց նա բոլորովին ազատ է Սէն-Սիմօնին յատուկ կրօնական միատիցիւդից և Ֆուրիէին բնորոշ փիլիսոփայական երևակայութիւններից:

Նոր դպրոցի ուսույլիստները ամենից պայծառ հանդէս է գալիս այն միջոցների մէջ, որ նա առաջադրում էր իւր իդէալներն իրագործելու համար: Սէն-Սիմօնը յոյսը կրօնի ոյժի վրայ է դնում. Ֆուրիէն և Օուենը խիստ վառվռուն յոյսեր էին դնում «այս աշխարհի ուժեղների»

համակրութեան և աջակցութեան վրայ, սկսած թագաւորներից՝ մինչև խոշոր կապիտալիստները:

Օուենը եռանդուն անգլիացի և փորձած գործնական — ձեռնարկող լինելով՝ մի քանի անգամ ջանք թափեց դնել իւր գաղափարների իրագործման հիմքը: Նա ենթադրում էր, որ կօմունիստական միութիւններ հիմնելով՝ կարելի է վերակրթել մարդկութիւնը աւելի լաւ կազմի համար. և նա ինքը մասնաւոր, գլխաւորապէս, սեփական միջոցներով հիմնել էր այդպիսի միութիւններ. սակայն գործը շարունակ անյաջողութեամբ էր վերջանում:

Օուենի պատմական կարևոր ծառայութիւններից մէկն էլ բանւորական օրւայ նկատմամբ ունեցած նրա վերաբերմունքն է: Իւր ֆարքիկայում կրճատւած բանւորական օր հաստատելով՝ նա խիստ օժանդակեց բանւորական ժամանակը կրճատելու կարևոր մտքի տարածմանը: Օուենն ևս այն անձերից մէկն էր, որոնք առաջին անգամ մամուլի միջոցով հանդէս եկան պաշտպանելու պետական միջամտութիւնն այս շրջանի մէջ. նա գործունեայ մասնակցութիւն էր ցոյց տալիս 30-ական թվականներին բանւորական օրը օրէնքով որոշելու համար եղած ազդեցիկաներին:

Ուսույլիստներն առաջինն էին, որ գրականութեան մէջ մտցրին հասարակական ձևերի փոփոխելիութեան միտքը. Ֆուրիէն և դեռ նրանից առաջ Սէն-Սիմօնի աշակերտ Բալարը իրանց գրեւորների մէջ պատկերացնում էին հասարակական ձևերի յաջորդական փոփոխութիւնը: Բայց ուսույլիստները չջանացին իրանց իդէալները կապել պատմական զարգացման ընթացքի հետ, չաշխատեցին ցոյց տալ, որ հասարակական ձևերի շարունակելող փոփոխութիւնը պէտք է իրականացնէ իրանց իդէալները: Իդէալներն իրականութիւնից անջատւած էին:

Ուսույլիստներն իրանց ժամանակակից տնտեսական գիտութիւնից այնքան հեռու էին, որ նրանց ազդեցութիւնը գիտութեան վրայ բոլորովին աննշան էր:

Սոշոր մեքենայական արտադրութեան զարգացումը մրցման գործողութիւնը վերին աստիճանի սրելով, փութացնում է մանր-բուրժուական ձեռնարկութիւնների կորուստը: Աւանձնագէս սուր և անտանելի բնաւորութիւն ստանալով, մրցումը խորտակում է հասարակութեան մանր-բուրժուական տարրերի խաղաղ-պահպանողական հոգեբանութիւնը և նրանց կողմից մի շարք փորձեր է յարուցանում պաշտպանելու իրանց տնտեսական գոյութիւնը, խանդարելու խոշոր կապիտալին՝ մանր արտատնտեսական գոյութիւնը, խանդարելու խոշոր կապիտալին՝ մանր արտադրողներին պրօլետարացնելու ձգտումը: Հասարակական կեանքի այս գրողներին պրօլետարացնելու ձգտումը տնտեսագէտներն էին: հոսանքի արտայայտիչները մանր-բուրժուական տնտեսագէտներն էին:

Ինչպէս որ ամենամանր բուրժուական յարաբերութիւնների կապիտալիստական սիստեմի մէջ միջին անցնողական տեղն է բռնում հասարակական գլխաւոր դասակարգերի մէջ ճիշտ այդպէս էլ մանր-բուրժուական դպրոցի հայեցքները, որոշ կետերի նկատմամբ, միջին տեղն են բռնում հին և նոր քաղաքատնտեսութեան մէջ:

Սիմօնդին կապիտալիստական խոշոր արդիւնաբերութեան կատաղի թշնամին էր: Ոչ ոք նրա չափ պարզ չնկատեց ու չընդգծեց մեքենաներ մտցնելու բացասական հետեանքները: Սիմօնդիի իդէալը արտադրութեան մանր ձևերն էին: Որովհետև ազատ մրցումը սրանց կոտորութեան մասն էր, լիովին ապահովեցնելով խոշոր արդիւնաբերութեան և մեքենաների յաղթանակը, ուստի Սիմօնդին աշխուժով ոտ-

քի ելաւ ազատ մրցման դէմ և պնդում էր, որ պետական միջամտութիւնն անհրաժեշտ է: Բայց թէ իսկապէս ինչ բանի մէջ պէտք է արտայայտէր այդ միջամտութիւնը, նա պարզ չէր որոշում:

Միսմօնդիի հայեացքի այս կողմը—մանր արտադրութիւնը խոշորի դէմ պահպանելու անհրաժեշտութեան գաղափարը—նչ միայն ուսույթիստական էր (իրագործելու հնարաւորութիւն արդէն չկար), այլև բէակցիօն (խոշոր արտադրութեան զարգացման խափանելը հասարակութեան զարգացման խոչընդոտ կլինէր):

Պակաս պատմական հետաքրքրութիւն չեն ներկայացնում Միսմօնդիի՝ արդիւնաբերական ճգնաժամերի վրայ ունեցած հայեացքները: Նրա կարծիքով, ճգնաժամերը արտադրութեան և սպառման անհամապատասխանութիւնից են առաջանում: Այս անհամապատասխանութեան պատճառը խոշոր արդիւնաբերութիւնն է, որը մի կողմից չափազանց ընդարձակում է արտադրութիւնը, միւս կողմից պակսեցնում է ահագին քանակութեամբ բնակիչներին գնման միջոցները, քայքայելով իրանց մրցումով մանր արտադրողներին և նրանց՝ մեքենաներով փոխարինելով: Ճգնաժամերի աւելի խորը պատճառը—հասարակական արտադրութեան անկազմակերպ դրութիւնը—վրիպել է Միսմօնդիի աչքից:

Պրուդոնը, Միսմօնդիի նման, հասարակական տնտեսութիւնը մանր-բուրժուական հայեցակէտով էր քննում. միևնոյն ժամանակ, իբրև հասարակական յարաբերութիւնների հաւասարութեան ոգով վերակազմութեան ընդարձակ և բարդ պլանների հեղինակ, նա Ֆրանսական հին ուսույթիստների գաղափարները շարունակող է հանդիսանում (տարբերելով նրանցից այն բանով, որ «եղբայրութեան» փոխարէն հակառակ էր դնել «փոխադարձութիւնը»—փոխանակութեան սկզբունքը):

Պրուդոնի ուսույթիական պլաններն աչքի են ընկնում խիստ որոշակիութեամբ և նոյնիսկ արտաքին գործնականութեամբ. նրանց մէջ, բացի խորտակող մանր արտադրութիւնը պահպանելու հոգսից, հանդէս է գալիս նաև բնակչութեան պրօլետարացած մասի նախկին տնտեսական անկախութիւնը վերացնելու ձգտումը:

Պրուդոնը ենթադրում էր, որ բանւոր դասակարգի տնտեսական կախման գլխաւոր պատճառը փոխանակութեան և կրեդիտի ժամանակակից կազմակերպութեան մէջն է: Արտադրողը ստիպւած է շարունակ իւր ապրանքի համար շուկայ որոնել և յաճախ երկար ժամանակ պահանջի յարմար առիթի սպասել. այս դէպքում մանր արտադրողները չեն դիմանում մրցումին և հեշտութեամբ զրկւում են արտադրութեան միջոցներից. իսկ որոնց որ այդ մի անգամ պատահեց, հասարակական ներկայ պայմաններում նորից անկախ արտադրող դասնալու նչ մի միջոց չկայ—կրեդիտը միայն ունեւորների համար գոյութիւն ունի:

Հետևապէս, փոխանակութեան և կրեդիտի գործը պէտք է այնպէս կազմակերպել, որ մի կողմից մանր արտադրողը միշտ կարողանայ արտադրած ապրանքի գրաւականով գոհացուցիչ փոխատուութիւն անել, որի շնորհիւ պահանջի ժամանակաւոր պակասութիւնը չէր փչացնի նրա գործը, միւս կողմից—որ կազմակերպւած ձրի կրեդիտը իւրաքանչիւր բանւորական անկախ գործ սկսելու միջոց տայ: Այն ժամանակ բոլորը մանր արտադրող կլինեն և ատոիճանաբար շահերի ներգաշնակութիւն կհաստատուի:

Այս նպատակներին հասնելու համար հարկաւոր է հիմնել ժողովրդական բանկ, որտեղից իւրաքանչիւր արտադրող կարողանար իւր

ապրանքի արժողութեան վկայական ստանալ: Այդ վկայականները բանկի մասնակցողների միջև փողի նման շրջանառութիւն կգործեն. նըրանցով կարելի կլինի ապրանք գնել—նրանք ժողովրդական փողեր են: Այսպիսի պայմաններում մանր ձեռնարկութիւններ պահելու համար կապիտալի պակասութեան դժարութիւններ չեն լինի: Բանկի ընկարձակւած միջոցներն այնուհետև հնարաւորութիւն կտան նրան ձրի դրեդիտ կազմակերպելու նաև անկախ գործ սկսել ցանկացող բանւորների համար:

Պրուդոնը ջանաց իւր պլաններն իրագործել գործնականի մէջ. ջանքը լիակատար անյաջողութեամբ վերջացաւ:

Պրուդոնեան ուսույթի մի կողմը նրանումն է կայանում, որ Պրուդոնը լոյս ունէր տնտեսական հակասութիւնները միայն փոխանակութիւնն ու կրեդիտը կազմակերպելու միջոցով վերացնել. մինչդեռ այս հակասութիւններն ամբողջ արտադրութեան անկազմակերպ լինելուց են բխում: Օրինակ, գերարտադրութիւնն ու ճգնաժամերը Պրուդոնի նախադէրի իրականացմամբ եղբէք վերացւած չէին լինի:

Բացի այդ, տնտեսական կուլի մէջ աշխատանքի արտադրողականութիւնը անբաւ ձեւեցող խոշոր արտադրութեան առաջ մանրը պահպանելու իւրաքանչիւր փորձ պատմութեան կողմից անյաջողութեան դատապարտւեց:

Պրուդոնի հայեացքները Ֆրանսիայի բանւոր բնակչութեան մէջ երկար ժամանակ ահագին յաջողութիւն էին վայելում: Այս նրանով է բացատրւում, որ Ֆրանսիան, գլխաւորապէս, մանր-բուրժուական հոգեբանութիւն ունեցող երկիր է. այս երկրում ամենաբազմաթիւ դասակարգը մանր-հողատէրերն են (սրանք այժմ էլ Ֆրանսիայում միւքանի միլիոն են), որոնց մտքերը անխուսափելի կերպով պէտք է մանր-բուրժուական լինեն: Շատ հասկանալի է, որ բանւորներն ևս, որ մանր-բուրժուալիայից դուրս եկած և այս միջավայրում ապրած լինելով, տոգորւեցան նրա հայեացքներով ու ձգտումներով:

Որքան կեանքի մէջ դանազան հասարակական դասակարգերի և խմբերի գործնական շահերը աւելի սուր ընդհարումներ են ունենում, այնքան դասակարգային և խմբերի իդիօլօգները աւելի որոշ կերպով են փոխադարձ կուլ բռնւում: Ժամանակի ընթացքում, Անգլիայի զարգացած արդիւնաբերական և աւետարական կապիտալի միջնորդում րիշ երկրների խոշոր-բուրժուական իդիօլօգների կողմից յարձակման ենթարկւել:

Այսպէս, անգլիական երկրագործութիւնն հովանաւորող հացի օրէնքների դէմ եղած կուլի շրջանում, տնտեսագէտները, որ լէնգլորդների կողմն էին, ազատ մրցման ուսմունքը խիստ քննադատութեան ենթարկեցին և շատ դէպքերում չափազանց յաջող կերպով ցոյց տւին նրա թոյլ կողմերը:

Նոյնիսկ արդիւնաբերական կապիտալով Անգլիայից աւելի թոյլ զարգացած երկրների համար էլ կլասիկ գալոցի ուսմունքը շատ բաների նկատմամբ անյարմար էր ներկայանում:

Ներկայ դարու սկզբին Գերմանիայի նոր գոյացած կապիտալիզմի համար անգլիական զարգացած արտադրութեան մրցումը խիստ ծանր էր: Ազատ աւետարող գերմանական արդիւնաբերութեան համար կատարեալ խոչընդոտ դուրս եկաւ: Հարկաւոր էր գերմանական կապի-

տալիստների համար առանձին բարենպաստ պայմաններ ստեղծել:  
 Լիստը՝ մերկանտիլիստների հին, փորձած միջոցն առաջարկեց—  
 հովանաւորականութիւն, մաքսային բարձր տուրքեր: Այս դէպքում  
 Լիստը ստիպւած էր կուել ազատամիտ քաղաքատնտեսութեան դէմ,  
 որը Գերմանիայում պակաս հետևողներ չունէր: Սրանք, զլիսաւորապէս,  
 առետրական կապիտալի շահերի ներկայացուցիչներ էին, իսկ առետրա-  
 կան կապիտալի համար առհասարակ առետրի ազատութիւնը ցան-  
 կալի է:

Լիստի հիմնական սկզբունքը հետևեալն է. «քաղաքատնտեսութեան  
 նպատակը պէտք է լինի երկրի արտադրող ոյժերի լիակատար, բազ-  
 մակողմանի զարգացումը»:

Այս հիմունքից այն եզրակացութիւնը կարելի է անել, որ եթէ  
 մի երկրում արդիւնագործութիւն է գոյանում և նրա զարգացմանը  
 վնասում է օտարերկրեայ մրցումը, ուրեմն պէտք է այդ երկրի ձեռ-  
 նարկողներին պաշտպանել անհաւասար կուլից—պաշտպանել բարձր  
 տուրքերով: Մի-երկու սերունդի համար այս անշահաւէտ կլինի, որով-  
 հետև նրանք պէտք է օտարերկրեայ լաւ և արժան արդիւնքների փո-  
 խարէն թանգ գնով հայրենի վատ արդիւնքներ գնեն: Բայց դրա փո-  
 խարէն հետևեալ սերունդները կօգտեն զարգացած արդիւնքերութեան  
 շահերով: Տուրքերը պէտք աստիճանաբար նւազեն, որպէսզի հայրենի  
 ձեռնարկողները չկարողանան միևնոյն ցածր տեխնիկայի վրայ մնալ.  
 Իսկ երբ նրանք ընդունակ կլինեն օտարերկրեայ կապիտալիստներէ  
 հետ մրցել, այդ ժամանակ հովանաւորութիւնը պէտք է բոլորովին դա-  
 դարի և տեղի տայ ազատ առևտուրին:

Այդպիսով, Լիստն ազատ մրցման դպրոցի հետ կուելիս ստիպւած  
 է լինում արդէն որոշ չափով պատմական հայեցակէտի, զարգացման  
 հայեցակէտի վրայ կանգնել:

Ինչքան բուրժուական տնտեսական գիտութեան հորիզոնը ընդար-  
 ձակւում, անգլիական կապիտալիզմի սահմաններից ացնում էր, ինչ-  
 քան պանազան երկրներ ի թիւս որոնց և Անգլիայի փաստացի յա-  
 ռաբերութիւնները զարգացման գործողութեան մէջ փոփոխւում էին,  
 այնքան բուրժուական տնտեսագէտների համար աւելի դժուար էր լինում  
 նախկին վիճակագրական հայեցակէտի վրայ մնալ. ինքը կեանքը  
 ստիպեց նրանց գոնէ մասամբ ընդունել զարգացման գաղափարը:

Անգլիայում 30-ական և Գերմանիայում 40-ական թւականներին  
 առաջ եկաւ բուրժուական քաղաքատնտեսութեան «պատմական» դպրոցը:  
 Այս դպրոցն ամենամեծ զարգացումն ստացաւ Գերմանիայում, որտեղ  
 նրա աչքի ընկնող ներկայացուցիչներն էին՝ Րօզեր, Կնիս և Գիլքերրանդ:

Հին ուսմունքների քննադատութեան մէջ իրանց ժամանակի գեր-  
 մանական կապիտալի շահերի հայեցակէտից մեկնելով, այդ տնտեսա-  
 գէտներն, այլևս չէին պաշտպանում այն կարծիքը, թէ ազատ մրցման  
 մէջ շահերի լիակատար ներդաշնակութիւն կհաստատուի, այլ գտնում  
 էին, որ լիովին լիբերալ կազմը կարող է ամենամեծ արտադրութեան  
 և ամենալաւ բաշխման հասնել: Զարգացման գաղափարները էկոնոմի-  
 կային յարմարեցնելու մէջ, այս դպրոցը աւելի քան չափաւոր էր:

Ահա այն հիմնական դրութիւնները, որ այդ դպրոցը պաշտպա-  
 նում էր գիտութեան մէջ:

Տնտեսական կազմը անփոփոխելի մի բան չէ, նա ընդունակ է  
 զարգացման: Այս պատճառով նրան պէտք է ուսումնասիրել պատմա-

կանապէս, և ոչ թէ միայն վիճակագրականապէս,— նրա փոփոխութիւն-  
 ներով և ոչ թէ միայն այնպէս, ինչպէս որ նա ներկայ մոմենտումն  
 է կամ ինչպէս որ նա տնտեսագէտի արտարակտ երևակայութեան մէջ  
 է ներկայանում: Քաղաքատնտեսութեան մեթոդը պէտք է ինդուկտիւ  
 լինի, զլիսաւորապէս— վիճակագրական: Ուսումնասիրելով ազգային տըն-  
 տեսութիւնը, պէտք է նկատել նրան իբրև մի բարդ ամբողջութիւն և  
 ոչ թէ իբրև մասնաւոր տնտեսութիւններ և ստումնասիրելուց ստացած եզրա-  
 կացութիւնները յարմարեցնել ազգային տնտեսութեանը, ինչպէս անում  
 էին Մմիտը, Րիկարդօս և ուրիշները: Այնուհետև, տնտեսական հետա-  
 դօտութեան մէջ պէտք է ի նկատի ունենալ ժողովրդական տնտեսու-  
 թեան՝ հասարակական կեանքի միւս կողմերից ունեցած կախումը—  
 քաղաքականութիւնից, սովորոյթից, տիրապետող մտքերից և այլն: Պէտք  
 է նոյնպէս կտրուել հին տնտեսագէտների այն հայեացքներից, թէ տնտեսա-  
 կան գործունէութեան մէջ մարդ միայն անձնական շահով է առաջնորդ-  
 ւում, պէտք է ի նկատի ունենալ և միւս զրգիչները, օրինակ՝ բարո-  
 յական զգացումը:

Այս հայեացքները, Մմիտի—Րիկարդօսի կլասիկ դպրոցի հետ հա-  
 մեմատած, ամբողջակի առաջադիմութիւն չեն ներկայացնում: Այս-  
 պէս, անհատների տնտեսական կեանքի մէջ փոխանակական տնտեսու-  
 թեան համար բացի անձնական շահից ուրիշ մղիչ ոյժեր ընդունելը—  
 բարոյական բնոյթի ոյժեր—միմիայն շփոթում է վերլուծութիւնը. ի-  
 բրականութեան մէջ, օրինակ՝ դուռ օտարասիրական դրողմների հա-  
 մար փոխանակական կեանքի մէջ տեղ չկայ. նրանք շղթայւած են և  
 բացառիկ դէպքերում միայն կարող են երևան գալ: Անձնական-եսա-  
 սիրական զգացումների և ձգտումների վրայ հարկաւոր էր աւելացնել  
 միայն նրանց շատ մօտ ազգակցական սօցիալական-եսասիրական կամ  
 դասակարգային ձգտումները, որոնք իսկապէս պայծառ երևան են գա-  
 լիս տնտեսական կեանքի մէջ և նրա զարգացման համար անազնինշա-  
 նակութիւն ունեն:

Տնտեսական գիտութեան մէջ «պատմական» դպրոցից շատ աւելի  
 հետևողական և լրիւ կերպով պատմական տեսակէտ զարգացրեց Րօզ-  
 բերդուս-Շագեցովը:

Պրուսական հարուստ կալւածատէր և մի ժամանակ մինիստր  
 Րօզբերդուսը, էութեամբ, իւր ժամանակի գերմանական ազրարինե-  
 րի \*) իդիօլօգն էր: Այս հանգամանքին ամենևին չհակասեց նրա տըն-  
 տեսական բազիկալիզմի ինքնուրոյն գոյնը, որ նկատելի է Րօզբեր-  
 դուսի գրւածքների մէջ: Գերմանիայի կեանքի մէջ սուր կերպով հան-  
 դէս եկող դեռ կիսաֆէօդալական հողատէրերի և կապիտալիստների  
 շահերի հակասութիւնները, այս խմբերից առաջինի գաղափարական  
 ներկայացուցչի մէջ հեղուկութեամբ կարող էին կապիտալի յարաբերու-  
 թիւնների աշխոյժ քննադատութեան հակումն դաստիարակել, իսկ  
 բանւոր դասակարգի շահերը, որոնք այն ժամանակ ազրարինների շա-  
 հերի հետ այնքան էլ ակնբերև հակասութիւն չունէին, յարմար յենակէտ  
 էին ծառայում այդպիսի քննադատութեան համար: Մասնաւանդ, որ  
 Րօզբերդուսի տնտեսական բազիկալիզմը, խիստ արտայայտելով, հա-

\*) Գերմանիայում այն կուսակցութեան հետևող, որ պաշտպանում է հոգա-  
 տէրերի և գիւղատնտեսների շահերը: Ծան. Թարգ.

մարեա նրա անմիջական-գործնական ծրագրի վրայ չի տարածուում:

Տնտեսական յարաբերութիւնների վերլուծութեան մէջ Բոգբերգուսը ամբողջովին յինչեց Րիկարդօի աշխատանքային արժողութեան տեսութեան վրայ: Առանձնապէս կարևոր պատմական նշանակութիւն ունեն Բոգբերգուսի այն գրաւորները, որոնք ազգային եկամուտը հասարակական դասակարգի մէջ բաշխելու հարցին են վերաբերում:

Ազգային եկամուտը, ըստ Բոգբերգուսի, բաժանուում է աշխատավարձի և «ընդհանրապէս բնատայի» (այսինքն յաւելեալ արդիւնք): Րիկարդօի նման, Բոգբերգուսն ևս ընդունում է, որ աշխատավարձը որոշուում է բանւորի համար անհրաժեշտ կենսական միջոցների արժէքով. բայց փաստերը քննելով՝ Բոգբերգուսը աշխատավարձի վերաբերմամբ ուրիշ եզրակացութիւնների է գալիս:

Մալտուսից անմիջապէս յետոյ Րիկարդօն ենթադրելով, որ երկրագործական աշխատանքի արտադրողականութիւնը զարգացման ընթացքի հետ պակասում է, եզրակացրեց, որ դրամական աշխատավարձի բարձրանալն անխուսափելի է. բանւորի կենսական միջոցների արժէքը և գնները, որոնք գլխաւորապէս գիւղատնտեսութեան մէջ են արտադրուում, պէտք է բարձրանան: Իսկ Բոգբերգուսը, յինչեւով իրանից առաջ աբւաժ գիտողութիւնների և իւր ժամանակակից հողագործական գիտութեան վրայ, ապացուցում էր, որ այդպիսի հայեացքը բոլորովին սխալ է. գիւղատնտեսութեան մէջ ևս աշխատանքի արտադրողականութիւնը չի իջնում, այլ բարձրանում է. ինչպէս սրգիւնագործութեան մէջ, թէև ոչ այնքան արագ: Այստեղից բխում է բանւորական ոյժի արժողութեան մշտապէս իջնելու անհրաժեշտութիւնը: Այսպիսով, բանւոր դասակարգի յարաբերական բաժինը, ամբողջ ազգային եկամուտի մէջ տեխնիկայի յառաջդիմութեան աստիճանով փոքրանում է, իսկ «բնատան» աճում: Բաշխման անհաւասարաչափութիւնը սաստկանում է:

Բաշխման այս աճող անհաւասարաչափութեան մէջ Բոգբերգուսը տեսնում է կապիտալիստական սխտեմի հիմնական հակասութիւնը և այդ սխտեմի միւս բոլոր հակասութիւնների աղբիւրը: Բոգբերգուսի ճգնաժամերի տեսութեան հիմքի մէջ հէնց այդպիսի միտք կայ, որ շատ նման է Միսմօնդիի տեսութեանը: Արտադրութեան քանակի մշտական մեծացումը, որ աշխատավարձի յարաբերական ցածրացման հետ միասին է ընթանում, պէտք է այն հետևանքն ունենայ, որ շուկայում ապրանքների առաջարկութեան և ազգի գնման ոյժի մէջ եղած հաւասարակշռութիւնը խանգարւի. շուկայում շատ աւելի ապրանք կլինի, քան այն, ինչ որ կարող է գնել ամբողջ ազգը, որի մէջ գլխաւոր սպառողը բանւոր դասակարգն է ներկայանում: Այդ ժամանակ պայթում է ճգնաժամը: Այդպիսով Բոգբերգուսը, ինչպէս և Միսմօնդին, չի հասնում գերարտադրութեան—աշխատանքի հասարակական անկազմակերպ բնաւորութիւնն ունեցող բաժանման հիմնական պատճառներին և ինդուկտիւսիւ, մասնաւոր պատճառի վրայ է կանգ առնում. մինչդեռ, փոխանակութիւնն ու մրցումը պակեղու դէպքում այս պատճառի լիովին վերացումն իսկ գերարտադրութեան հանդէս գալուն չէր խանգարի:

Հողային բնատայի հարցի մասին Բոգբերգուսն այսպիսի կարծիք էր յայտնում.— փոփոխական կապիտալը երկրագործութեան մէջ համեմատաբար աւելի մէծ է, քան արդիւնաբերութեան միւս ձեւերում, հետևապէս՝ յաւելեալ արժէքն էլ աւելի շատ է. սրա աւելորդը դառ-

նում է հողային բնատայ: Այս հայեացքը աշխատանքային արժողութեան թէօրիայի սխալ գործադրութեան վրայ է հիմնւած. կապիտալի շրջանում առանձին ապրանքների, ի թիւս որոց և հացի գնները օւղղակի նրանց աշխատանքի արժողութեամբ չեն որոշուում, և եթէ հողային քենտան չլինէր, հացի արտադրութիւնը, չնայած մեծ յաւելեալ արժէքի, մրցումի օրէնքների համաձայն, միայն սովորական շահ կբերէր:

Բոգբերգուսի գիտական կարևոր ծառայութիւններն են հանդիսանում նրա այն աշխատութիւնները, որոնք հասարակական ձևերի պատմական զարգացման հարցն են շօշափում: Այս աշխատութիւնների հիմնական պատմափիլիսոփայական հայեացքները մի քիչ ազատ են և անորոշ: Երբեմն նա կարծես պատրաստ է ընդունել, որ իրաւական յարաբերութիւնները ենթարկւած են արտադրական յարաբերութիւններին, օրինակ՝ ասում է, որ «իրաւական գաղափարն ու տնտեսական անհրաժեշտութիւնը վաղուց ի վեր ձեռք ձեռքի տւած էին ընթանում. իսկ շատ դէպքերում, ընդհակառակը, նա հակւած է հասարակական տնտեսական զարգացումը իրաւական գաղափարի զարգացումով բացատրելու այն գրաւորների մէջ, որ զուտ ստրկութիւնից դէպի կոտնատն անցնելու մասին է, նա աւելի շուտ առաջին հայեցակէտն ունի, արտայայտելով այն միտքը, թէ անցումը երկրագործութեան տեխնիկայի առաջադիմութեան հետևանքն էր: Նա նոյնպէս մատնացոյց էր անում, որ հէնց ստրկութիւնն ինքը աշխատանքի արտադրողականութեան որոշ զարգացում է պահանջում, որ ստրկութիւնը միայն երկրագործ ժողովրդների մէջ է հնարւոք:

Բոգբերգուսը մարդկութեան զարգացման առաջադիմութիւնը հետևեալ կերպով է պատկերացնում: Ստրկութեան շրջանում—զարգացման առաջին աստիճանը—նչ միայն գործիքներն ու նիւթերն էին մասնաւոր սեփականութիւն և կապիտալ ներկայանում, այլ և ինքը բանւորը: Վարձու աշխատանքի շրջանում—զարգացման երկրորդ աստիճանը—բանւորն արդէն ոչ մասնաւոր սեփականութիւն է ոչ կապիտալ, նա կապիտալի տէր է, բայց չի կարողանում անկախ արտադրող դառնալ և շնորհիւ այս հանգամանքի, փաստօրէն անազատ է դուրս գալիս. այդպիսով, վարձու աշխատանքը, ըստ Բոգբերգուսի, ստրկութեան նոր, մնդմացած ձևն է միայն: Երրորդ աստիճանը Բոգբերգուսը բնորոշում է արտադրութեան միջոցների հաւաքական հասարակական սեփականութեամբ և արտադրողների՝ նիւթական կախումից վերջնականապէս ազատելով: Այս աստիճանին անցնելը դանդաղ կլինի և յաջողական, և ըստ Բոգբերգուսի, պէտք է աւելի կամ պակաս հեռաշրջական, և ըստ Բոգբերգուսի, պէտք է աւելի կամ պակաս հեռաշրջան արագացում կատարւի—հինգ հարիւր տարուց յետոյ. իսկ անցումը ոյժով իրագործողը պետութիւնն է. այս՝ Բոգբերգուսի հայեացքների մի քննորոշ գիծ է, որ նրան խիստ բաժանում է գիտական սօցիալիստներից, որոնք այդ ոյժը բանւորական շարժման մէջ են տեսնում:

Բացի ընդհանուր տեխնիկական հասկացողութիւններից, Բոգբերգուսն ամենամօտ ապագայի համար վերանորոգութեան գործնական ծրագրեր էլ էր առաջարկում: Այս ծրագրերը, որ մի կողմից հասարակականութեան ոգով և միւս կողմից պետութեան ամենագործութեան հաւատով է տոգորւած, միևնույն ժամանակ աչքի է ընկնում ծայրայեղ ուսուցիչով: Այդ ծրագրի էութիւնն այս է. որովհետև սօցիալական թշուառութիւնների հիմնական պատճառը բանւոր դասակարգի՝ լական թշուառութիւնների հիմնական պատճառը բանւոր դասակարգի՝ ազգային եկամտի մէջ ունեցած բաժնի մշտական նւազումն է, ուրեմն

պետութիւնը այս նւագելու առաջը պէտք է առնէ. նա պէտք է օրէնքով որոշէ, թէ արտադրւած ապրանքի արժողութեան որ մասը պէտք է բանւորին տալ և որը—կապիտալիստին և հողատիրոջը (այս դէպքում ազրարիններն էլ անշահ չէին մնայ, որոնք կփրկւէին ազգային եկամտաւ ընդհանուր գումարի մէջ երկրագործական բնտայի յարաբերական նւագումից, որ այդ ժամանակ արդէն նկատելի էր): Այս պլանը իրագործելու համար պետութիւնը պէտք է ճշտութեամբ որոշէ իւրաքանչիւր արդիւնքի աշխատանքային արժողութիւնը և հետևի այս արժողութեան փոփոխութիւններին: Դժուար չէ երևակայել, թէ այդ պիտի նախագծի կեանք մտցնելը ինչպիսի ահագին դժուարութիւններ ու վտանգներ կպատճառէր պետութեանը:

Բողբերգուսի հայեացքներին որոշ չափով հակադրուած են Ամերիկայի տնտեսագէտ Հենրի Զօրջի հայեացքները, որ հանդէս եկան սրանից 20 տարի առաջ: Միացեալ-Նահանգների արագ զարգացող արդիւնարեւակաւ կապիտալի իրիօլօգ Հենրի Զօրջը շատ բանում ֆիլիթօկրատներին ուսմունքն է վերաբարձրում. ինչպէս որ ֆիլիթօկրատները ըմբոստացել էին երկրագործ բարձագոյն դասակարգերի մենաշնորհների դէմ, Զօրջն ևս ոտքի է կանգնում հողային բնտայի և ընդհանրապէս մասնաւոր հողատիրութեան դէմ: Զօրջի գործնական ծրագրերը ֆիլիթօկրատների ծրագրից շատ աւելի արմատական է. նա «հողային տուրք» չի պահանջում, այլ հողն ազգային սեփականութիւն զարծնելը հողի «նացիօնալիզացիան» (պետականացում): Զօրջի թէօրիան էլ շատ նման է ֆիլիթօկրատների թէօրիային այսպէս, օրինակ նա կապիտալի «տոկոսը» հողի արտադրող ոյժով է բացատրում: Ամերիկայի և մանաւանդ Անգլիայի բուրժուական դասակարգերի մէջ Զօրջի ուսմունքը բազմաթիւ հետևողներ գտաւ:

Երբ հին քաղաքատնտեսութիւնը իւր յաջորդական զարգացման մէջ դադարեց բուրժուազիայի շահերին ծառայելուց, որի իրիօլօգները զրբին այս գիտութեան հիմքը, այն ժամանակ գիտութիւնից բաժանւեց մի առանձին երկրորդական ճիւղ, որի առանձնայատուկ գիծը հէնց այս շահերին ծառայելն էր:

Գիտութիւնը կեղծելու կարիքը միայն ներկայ դարում առաջ եկաւ: Այն տնտեսագէտները, որոնք սովորել էին իրանց նախորդներին բաց արած անխախտ, յաւիտենական օրէնքների վրայ հիմնելի, հասկացան, որ այդ օրէնքները իրանց բնւորութիւնն ու մարդկանց մը տքիրի վրայ ազդելու ուղղութիւնը փոփոխում են: Տնտեսական հին օրէնքների սնխախտութիւնը մթազնւեց, ապացուցւեց, որ այդ օրէնքները զարգացման որոշ աստիճանի համար են միայն, իսկ զարգացման այս աստիճանի համար նրանք հակասող եղան: Այդ ժամանակ սկսեց գոհնիկ տնտեսագէտների ժամանակը: Նրանց ձեռքում գիտութիւնը հակադրութեան փոխւեց: Սրան միքանի օրինակներ բերենք:

Պետտի—Բիկարդօի աշխատանքային արժողութեան տեսութիւնը սովորեցնում է, որ ապրանքի արժէքը նրա մէջ պարունակող աշխատանքի քանակով է որոշուում: Այստեղից անգլիական ուսուցիտները եզրակացրին, որ աշխատավարձը պէտք է ամբողջ արդիւնքի արժողութիւնը լինի. մի սխալ, որ աշխատանքը և բանւորական ոյժը իրար հետ շփոթելուց է առաջացել. բանւորը իսկապէս ոչ թէ իւր աշխատանքն է թախում, այլ բանւորական ոյժը, ուստի և կապիտալիստական յարաբերութիւնների դէպքում նա պէտք է բանւորական ոյժի արժողութիւնն ստանայ և ոչ թէ իւր աշխատանքի արժողութիւնը): Այս եզրակացուածութիւնն անկարող էին հերքել շատագուց շատագուց, որոնք նոյնպէս չէին կարողանում աշխատանքն ու բանւորական ոյժը իրարից տարբերել:

թիւնն ստանայ և ոչ թէ իւր աշխատանքի արժողութիւնը): Այս եզրակացուածութիւնն անկարող էին հերքել գոհնիկ շատագուցները, որոնք նոյնպէս չէին կարողանում աշխատանքն ու բանւորական ոյժը իրարից տարբերել:

Երբ անգլիայում, 12-ժամեայ օրւայ օրէնսդրական կանոնադրութիւնից յետոյ, հասարակական—տնտեսական զարգացումը հերթական դարձրեց բանւորական ժամանակի յետագայ կրճատման հարցը, ձեռնարկողների մեծամասնութիւնը գտնում էր, որ եթէ նոր օրէնքն անցնի, իրանց շահերը պէտք է վնասւեն: Յանձին քաղաքատնտեսութեան ուսուցչապետ Սենիօրի, «Գիտութիւնն» անմիջապէս հանդէս եկաւ և պնդեց, որ ամբողջ շահը բանւորական օրւայ 12-բողջ ժամի մէջ է ստեղծուում:

Սենիօրը շատ հասարակ էր դատում: Ենթադրենք, այն կտաւը, որ բանւորը 12 ժամւայ մէջ է կարողանում գործել, 7 ր. 20 կոպ. արժէ. հետևապէս, իւրաքանչիւր ժամում 60 կոպէկի կտաւ է գործում: Բայց կապիտալիստը թիւի և գործիքների վրայ 6 բուրջի և բանւորին 60 կոպէկ է վճարել, շահը ընդամենը 60 կ. դուրս կգայ: Պարզ է, որ այս շահը վերջին 12-բողջ ժամւայ մէջ է ստեղծուել և եթէ այդ ժամը ոչնչացւի, գործարանատէրը ոչինչ չի ստանայ:

Չատագուցը աչքից բոլորովին բաց է թողնում այն փաստը, որ բանւորի նոր ստեղծած արժողութիւնը երբէք 7 ր. 20 կոպէկի չի համապատասխանում, այլ միայն 1 ր. 20 կոպէկի, որովհետև 6 բուրջին գործիքների և նիւթերի արժողութիւնն է, որ ապրանքի—կտաւի արժողութեան մէջ է մտնում, որպէս նրա բաղադրիչ մասը: Ուրեմն, մի ժամում միայն 10 կոպէկի նոր արժողութիւն է ստեղծուում, և եթէ ժամում միայն 10 կոպէկի նոր արժողութիւն է ստեղծուում, և եթէ օրը մի ժամով պակսեցնենք, իսկ վարձը մնայ առաջւանը, շահը 10 կոպէկով միայն կպակասի և 60 կոպէկի փոխարէն՝ 50 կ. կմնայ: Իսկապէս, եթէ գործարանատէրը բանւորին 12 ժամւայ համար 6 բուրջու պէս, եթէ գործարանատէրը բանւորին 1 ժամւայ համար այս բոլորից գործիքներ ու նիւթ է տալիս, ուրեմն 1 ժամւայ համար 5 ր. 50 կոպէկի. 50 կոպէկի հարկաւոր կլինի, իսկ 11 ժամւայ համար—5 ր. 50 կոպէկի. 60 կոպէկի աշխատավարձի հետ միասին կանէ 6 ր. 10 կ. այս է կապիտալիստի ծախսերի գումարը: Ապրանքն առաջւանից 3/13-ով քիչ կը տալիստի ծախսերի գումարը: Ապրանքն առաջւանից 7 ր. 20 կոպէկի, այլ 6 ր. 60 կոպէկի: պատրաստելի, այսինքն՝ ոչ թէ 7 ր. 20 կոպէկի, այլ 6 ր. 60 կոպէկի: հետևապէս, շահը կլինի 6 ր. 60 կոպէկից հանած 6 ր. 10 կոպէկ, այն է 50 կոպէկ: Իսկ Սենիօրը, ակներև է, ենթադրում էր, որ 11 սինքն՝ 50 կոպէկ: Իսկ Սենիօրը, ակներև է, ենթադրում էր, որ 11 ժամեայ օրւայ նիւթի և գործիքների համար էլ առաջւայ պէս 6 ր. կգնայ. այն ժամանակ շահ ամենևին չէր ստացւի:

Ի միջի այլոց, գոհնիկ տնտեսութիւնը միշտ աշխատել է կապիտալիստների շահի համար այլ և այլ բարոյական արդարացումներ գտնել: Ամենասովորականներից մէկն այն էր, թէ շահը կապիտալիստի փաւորութիւնը մի ծառայութիւն է, որ վարձատրութիւն էլ պիտի ստանայ: «Հափաւորութեան» համար ստացած վարձատրութիւնն է: Կապիտալիստը կարող էր ուտել, խմել իւր կապիտալը, բայց նա իրան յետ է պահում, նա իւր կապիտալին արտադրողական գործադրութիւն է տալիս և դրանով հասարակութեանը օգուտ է բերում: Ուրեմն, նրա շահը և դրանով հասարակութեանը օգուտ է բերում: Ուրեմն, նրա շահը փաւորութիւնը մի ծառայութիւն է, որ վարձատրութիւն էլ պիտի ստանայ:

Եւ իրօք, առանձին կապիտալիստների դասակարգը կարող է վատնել, բայց այդ արդեօք կապիտալիստների դասակարգը կարող է վատնել, նրա համար կապիտալը արտադրութեան միջոց է և վատնել ամբողջովին, այսինքն՝ սպառման իրերի փոխանակել, վճարականապէս

անհնար է, որովհետև ո՞վ կգնէր արտադրութեան այս միջոցները, եթէ կապիտալիստները մտադրէր զսակարգը «շտայութեան» մէջ ընկնէր: Եւ ընդհանրապէս տարօրինակ է պնդել, թէ մարդ «չափաւորութիւն է անում», երբ նա այնպէս է իւր կարողութիւնը գործածում, որ շահ ստանայ:

Որպէսզի բնորոշենք գոնիկ քաղաքատնտեսութեան դէպքի բանւորներն ունեցած վերաբերմունքը, մի ֆրանսացի տնտեսագէտից մի ցիտատ բերենք:

«Քաղաքատնտեսութեան մէջ բանւորը ոչ այլ ինչ է, եթէ ոչ երկրի կուտակած հիմնական կապիտալը, երկրի, որ միջոցներ է աւել բանւորի ոյժին սովորելու և լիովին զարգանալու: Հարստութիւններ արտադրելու նկատմամբ բանւորի վրայ պէտք է նայել իբրև մեքենայի, որի շինելու համար որոշ կապիտալ է ծախսել և որը սկսում է տոկոս բերել այն օրւանից, երբ բանւորը արդիւնաբերութեան օգտակար գործօնը կդառնայ»:

Ռուս ջատագոյններից մէկը աւելի հեռու է գնում: Գիտական այն տեսութեան առիթով, որ բացատրում է, թէ յաւելեալ արժէքը այն աւելորդն է, որ առաջ է գալիս արտադրողների գոյութեան միջոցներն ստեղծող աշխատանքի և հասարակական արտադրողական աշխատանքի տարբերութիւնից, նա նկատում է. աշխատող կամ կաթնատու տաւարը, անկասկած, աւելի շատ արդիւնք է պատրաստում, քան ինչ որ նստում է ձեռնարկողին և այսպիսով մարդկային բանւոր ոյժի հետ հաւասար հիմունքներով յաւելեալ արժէք է ստեղծում: Օրինակ՝ ձին կէս բանւորական օրւայ ընթացքում ծածկում է իւր դրամական արժէքի որոշ բաժինը իրան պահելու ծախսերի հետ միասին, իսկ միւս կէս օրւայ աշխատանքը, տիրոջ համար յաւելեալ արժէք կազմելով, մտրոյղապէս տիրոջ օգտին է մնում... Այսպիսով, ընտանի տաւարը դարձնելով հասարակական արտադրող դասակարգ, որ էական տարբերութիւն չունի վարձու բանւորներից, նա այնուհետև խիստ հետեւողականօրէն տարածում է այս տրամաբանութիւնը նաև մեքենաների վրայ, ցոյց տալով, որ բանւորներին մեքենաներով փոխարինելիս՝ մարդկային բանւորական ոյժի վերոյիշեալ բնական պարզելների հետ կապւած առաւելութիւնների կորստեան մասին խօսք լինել չի կարող (այսինքն՝ աշխատանքի գործողութեան մէջ արժէք ստեղծելու ընդունակութիւն, երևի ջատագովի մեքենաներն էլ են «աշխատում»):—Այստեղ փոխանակական ֆետիշիզմը այն աստիճան ծայրայեղութեան է հասնում, որ համարեա իսկապէս հակադրութեան—բնական ֆետիշիզմի է փոխում:

Ընդհանուր տնտեսական զարգացման և տնտեսական գիտութեան զարգացման ազդեցութեան տակ կոպիտ ջատագովութեան դպրոցը պէտք է տեղի տար կոմպրոմիսսի դպրոցին: Նոր դպրոցի ներկայացուցիչները գլխաւորապէս քաղաքատնտեսութեան ուսուցչապետներ էին, այնպիսի մարդիկ, որոնք, շնորհիւ իրանց հասարակական միջին դիրքի, հոգեբանօրէն ամենից շատ էին հակւած կոմպրոմիսսի ձգտման արտայայտիչներ հանդիսանալու: Աւելի անհաշտ պահպանողական գոյն ունեցող տնտեսագէտները նոր դպրոցին «կատեղեր-սօցիալիստներ» անձիշտ մականունն էին տալիս. իսկ դպրոցն իրան անւանում է «բէալիստական», «սօցիալ-վերանորոգչական», «պատմա-բարոյագիտական» և այլն: «կատեղեր-րեֆորմներ» անունն աւելի ճիշտ կարտայայտէր

այս ուղղութեան էութիւնը:

Իրանց տեսական հիմնական դրութիւններով կատեղեր-րեֆորմները շատ քիչ են տարբերում 40-ական թւականների գերմանական պատմական դպրոցից: Նրանցից շատերն աւելի լայն չափերով ընդունում են, որ հասարակական ձևերի պատմական փոփոխութիւնները հնարաւոր են: Շատերը յատկապէս ընդգծում են ընդհանուր-պետական շահերի տնտեսապէս կազմակերպող նշանակութիւնը— մի ոյժ, որը պետք է, կարող է, և կուզենայ իրականացնել հասարակական արդարացիութեան պահանջները և ոչ թէ դասակարգային ձգտումները: Մեծամասնութիւնը յատկապէս մեծ նշանակութիւն է տալիս այն ինքնուրոյն և կարևոր դերին, որ խաղում են, նրանց կարծիքով, բարոյական, օտարասիրական զգացմունքներն ու ձգտումները արտեսական կեանքի մէջ (այստեղից է առաջացել դպրոցի «պատմա-բարոյագիտական» անունը):

Իրանց գործնական ծրագրների մէջ կատեղեր-րեֆորմները հայեացքների խիստ զանազանակերպութիւն են ներկայացնում: Բէալիստները, ընդհանրապէս, սօցիալական վերանորոգութիւնների կողմնակիցներ են, բայց որովհետև յիշեալ դպրոցն իբրև կոմպրոմիսսի դպրոց, ամենից մեծ չափով հէնց սրա մէջ է հանդէս գալիս, ուստի և շատ հասկանալի է, որ վերանորոգումներ ցանկանալու խնդրում դպրոցի իրանց իղէալներով համարեա բոլորովին պահպանողական են. օրինակ՝ Բրենտանօ, Հելդե, Շմօլեր, ուրիշները, օրինակ՝ Վագները, այս նկատմամբ որոշ չափով ուսուցիչներին են մօտենում, միայն թէ իրանց «պետական-սօցիալիստական» իղէալների իրականացումը խիստ հեռավոր ապագային են վերագրում, իսկ ներկայի համար հնարաւոր են համարում գործարանական օրէնադրութեան շրջանի մէջ միջանի չափաւոր վերանորոգումներով բաւականանալ:

Բոլոր բէալիստները համաձայն են նորմալ ճանաչել այնպիսի հասարակական կազմակերպութիւնը, որ ամենաընդարձակ արտադրութիւնը միացնում է արդար բաշխման հետ: Բայց թէ ինչ է «արդար բաշխումը», այդ մասին բէալիստները տարբերում են:

Շմօլերը, օրինակ, կարծում է, թէ արդար բաշխումը պէտք է իւրաքանչիւրին «ըստ ծառայութեան» վարձատրէ. ծառայութիւն ասելով նա տեսակ տեսակ հասկացողութիւններ ի նկատի ունի.—բարեւոյ զործութիւններ, գիտութիւններ, աշխատանքներ, նոյնիսկ կապիտալ (այսինքն՝ իսկապէս կապիտալը կուտակելու աշխատանք. տես՝ սկզբնական և կապիտալիստական կուտակման մասին եղած պարագրաֆները): Շմօլերի համար սօցիալական կազմի իղէալն այնպիսի մի հասարակութիւն է, որ դանազան կեանքերի մի ունդուլք է ներկայացնում, սակայն մի աստիճանից դէպք միւսն անցնելը չափազանց դիւրին է: Այս, ի հարկէ, շատ հաստատուն սիստեմ կըլինէր, որովհետև իւրաքանչիւր ցածր աստիճան բոլոր բարձր աստիճանների ճնշմանից իւր ցածր դրութեան մէջ կմտար. ակներև է, որ այս իղէալը բիւրօկրատիկ ծագումն ունի:

Բրենտանօի կարծիքով, ժամանակակից յարաբերութիւնների մէջ անորմալ է ոչ թէ այն, որ աշխատանքը ապրանք է դարձել, այլ որ այդ ապրանքը մտրոյղովին այնպէս չէ, ինչպէս միւս ապրանքները, որ բանւորական ոյժ ծախողը գնողների հետ շուկայի մրցման հաւ-

սար պայմանների մէջ չի գտնուում: Բրենտանօի կածիքով, պայմանների այնպիսի փոփոխութիւն է ցանկալի, որի դէպքում երկու կողմի դիրքերն էլ շուկայում հաւասար կըլինէին. իսկ այս նպատակին կարելի է հասնել բանւորական ոյժ ծախողներին արհեստակցական միութիւններ կազմակերպելով, ինչպէս անգլիական տրէդ-ունիօնները: Պետութեան գործը կլինի հեշտացնել այդպիսի միութիւններ կազմակերպելը կամ գոնէ չխանդարել կազմակերպութիւնը: Երբ բանւորական ոյժ ծախողը ոչ թէ առանձին անհատ է, տրէդ-ունիօնը, այն ժամանակ փոխանակութեան պայմաններն էլ հաւասար կլինին և արդիւնքը կստանայ արդար բաշխում: Հետևապէս, արտադրութեան անկազմակերպութիւնը իւր ամբողջութեամբ Բրենտանօի համար այն հակասութիւնների հիմնական պատճառն է, որոնց վերացնելու համար և նա հոգս է տանում:

Ուրիշ բէալիստներ, օրինակ՝ Ադօլֆ Վադները, արտադրութեան կազմակերպութեան մէջ պետութեան ուղղակի միջամտութեանը շատ աւելի մեծ նշանակութիւն են տալիս, քան Բրենտանօն:

Ընդհանուր առմամբ, բէալիստական դպրոցը պատմական-վիճակագրական մեթօդով տնտեսական բազմաթիւ մասնաւոր հարցերի մըշակման նկատմամբ քիչ ծառայութիւններ չի մատուցել:

Վերացական-տնտեսական տեսութեան ձիւղի մէջ մենք պէտք է նկատենք նաև մեր ժամանակում կաֆեդրայի ներկայացուցիչների մէջ խիստ տարածւած արժէքի ուսումը, որ յօյտնի է «սահմանաւոր օգտակարութեան տեսութիւն» անունով: Այս ուսումնաքը, չափազանց բարդ լինելու պատճառով, չենք կարող այստեղ բացատրել, այլ միայն նրա ելակէտը ցոյց կտանք, որ հա թէ ինչու մն է կայանում: Արդիւնքը իւրաքանչիւր մարդու համար այս կամ այն «սուբեկտիւ արժէքն» ունի. այս արժէքը որոշուում է այն օգտակարութեամբ, որ ո և է արդիւնք տալիս է որ և է անձի: Ամեն մի մարդ սուբեկտիւ կերպով, ըստ իւր է գնահատում որ և է ապրանք նրա օգտակարութեան համաձայն և դատում է, թէ ինչ կարող է գոհել նրանց ձեռք բերելու համար կամ ընդհակառակը: Փոխանակութեան ժամանակ այսպիսի գնահատութիւն և այսպիսի համեմատութիւն են անում թէ գնողներն և թէ վաճառողները, ըստ որում, այդ դէպքում սրանցից իւրաքանչիւրի համար «սուբեկտիւ արժէքը» տարբեր է, իսկ «սուբեկտիւ արժէքների» ընդհարումով կորոշելի նրա օբեկտիւ, իսկական փոխանակական արժէքը: Ինչպէս մարդ իւր սուբեկտիւ գնահատութեան մէջ կարող է համեմատել տարբեր ապրանքներ և ինչպէս գնողների ու վաճառողների որ և է ապրանքի գնահատումների շարքը ապրանքի օբեկտիւ փոխանակական արժէքն է կազմում—այս բոլորը բացատրում է «սահմանաւոր օգտակարութեան» ինքնուրոյն հասկացողութեան և զանազան հաշիւների օգնութեամբ, սակայն այս բոլորն անհնար է միքանի խօսքերով բացատրել, ուստի և կանցնենք ցոյց տալու այն հիմնական հայեցակէտի թերութիւնները, որի վրայ Զեվօնս, Մենգեր, Բեմ-Բավերկ և ուրիշները հիմնել են «սահմանաւոր օգտակարութեան» ամբողջ տեսութիւնը:

Մնդիրը նբանումն է, որ մարդ ծնուում, ապրում զարգանում է հասարակութեան մէջ և ոչ թէ նրանից դուրս, և անձի հոգեբանութիւնն անհրաժեշտօրէն որոշուում է այն հասարակական միջավայրով, որի մէջ հոգեբանութիւնը կազմուում է: Ապրանքների սուբեկտիւ գնա-

հատումն ևս անհրաժեշտօրէն հասարակական պայմանների կախման ներքոյ է կազմուում: Վաճառողը կամ գնողը իւր սուբեկտիւ գնահատումների մէջ չի կարող չենթարկել շուկայում նրա կամքից անկախ գոյութիւն ունեցող օբեկտիւ գներին, այնպէս որ նրանք կորոշեն սուբեկտիւ գնահատումը շատ աւելի մեծ չափով, քան ընդհակառակը: Միստ շատ դէպքերում անհատը ընդհանրապէս չի կարող այս կամ այն ապրանքին ըստ օգտակարութեան գնահատում տալ և հագին խորամանկութիւններ է հարկաւոր, բացատրելու այն «սուբեկտիւ արժէքը» որ, օրինակ՝ միլիոնատէր-կապիտալիստի համար ունի նրանց ծախսած մի արշին արժան չիթը, կամ աղքատ կար անողի համար—այն շքեղ գլխարկը, որ նա չի կարող գործածել, կամ դազադագործի համար—դազաղը, որ նա արտադրում է առանց երբէք անձնական գործածութիւնն ի նկատի ունենալու: Սուբեկտիւ արժէքի թէօրետիկները հարկադրեցին ստեղծել իսկական սխոլաստիկա, որպէսզի իրանց ուսմունքը փոխանակական գնահատման բոլոր իրական դէպքերի վրայ տարածւի:

Փոխանակութեան շրջանից ուղարկելով մեզ առանձին մարդկանց ներքին հոգեկան կեանքի գաղտնի տեղերը, սուբեկտիւ արժէքի թէօրեիան հետազօտութեան մատչելի փաստերը բացատրում է իրան անմատչելի փաստերով, տեսանելին բացատրում է անտեսանելիով: Սա արմատական պակասութիւն է, որ թէօրիան տնտեսագէտի գիտական աշխատանքի համար անօգուտ է դարձնում:

Բուրժուական տնտեսագէտներն առաջ են քաշում սահմանաւոր օգտակարութեան թէօրիան, իբրև հակալիւ աշխատանքային արժողութեան տեսութեանը, որի վրայ յենում են կապիտալի թշնամիները կապիտալիզմի դէմ վարած գաղափարական կռի ժամանակ: Երբ անգլիական ուսուպիստներն աշխատանքային արժողութեան թէօրիայից գուրս հանեցին իրանց սխալ հետեւութիւնը, թէ արդիւնքի ամբողջ արժէքը «պէտք է աշխատանքին պատկանի», այն ժամանակ, ինչպէս տեսանք, աշխատանքային արժողութեան գաղափարի դէմ գուրս եկան հին գոհիկ տնտեսագէտները: Երբ բանւոր դասակարգին կողմնակից տնտեսագէտների նոր սերունդը սկսեց բացատրել բանւորներին աշխատանքի թէօրիայի ուրիշ, արդէն բոլորովին ճիշտ հետեւութիւնը—պրօլետարիատի և բուրժուազիայի դասակարգային շահերի անհաշտ հակասութիւնը—այն ժամանակ աւստրիական դպրոցն ու նրա բազմաթիւ սուբիւնը—այն ժամանակ աւստրիական դպրոցն ու նրա բազմաթիւ հետեւորդները արշաւանք սկսեցին աշխատանքային արժողութեան դէմ: Նրանցից շատերը, օրինակ՝ Բեմ-Բավերկ, բացէ ի բաց մատնացոյց են անում «սահմանաւոր օգտակարութեան» տեսութեան այն կարևոր ծանուում «սահմանաւոր օգտակարութեան» ինքնուրոյն հասկացողութեան վնասուայութիւնը, թէ նա ասպարէզը խլում է բանւոր կուսակցութեան վնասակար, «կեղծ վարդապետութիւններից»: Այնուամենայնիւ, նրանք ընդունում և ընդգծում են իրանց թէօրիայի ջատագովական բնոյթը: Նոր տնտեսագիտութեան գլխաւոր ներկայացուցիչները հանդիսացան Ֆերդինանդ Լասսալ և Կարլ Մարկս:

Լասսալը բանւորական շարժման աւելի մեծ գործնական առաջնորդն էր, քան շարժման տեսութեան հեղինակը: Նա կարողացաւ լայն նորդն էր, քան շարժման տեսութեան հեղինակը: Նա կարողացաւ լայն կերպով կազմակերպել դեմանական կուսակցութեան երկու հիմնական գաղափարով նրանց բանւորական կուսակցութեան երկու հիմնական գաղափարները. դասակարգային շահերի հակասութիւնը և քաղաքական իրաւունքների ու քաղաքական ոյժերի անտեսական-դասակարգային նշա-

նակութիւնը: Նա ժողովրդականացրեց Րիկարդօի և Մարկսի տնտեսական տեսութիւնները: Լասսալը Րիկարդօից փոխ առաւ, գլխաւորապէս, աշխատավարձը կառավարող օրէնքների հասկացողութիւնը (Լասսալի «երկաթեայ օրէնք»): այս, ի հարկէ, նրա տեսութեան թոյլ կողմն էր: Ինչպէս տեսանք, բանւորական ոյժի արժէքն անփոփոխելի մեծութիւն չէ (Րիկարդօի և Լասսալի համաձայն՝ կենսական միջոցների անհրաժեշտ միւնիմումը), այլ փոփոխական է և կախած բանւոր դասակարգի կեանքի այն մակերևոյթից, որ ձեռք է բերում նա կապիտալի դէմ վարած կռիւ մէջ: Բայց այս տեսական թերութիւնը Լասսալի գաղափարական-կազմակերպչական գործի վրայ շատ քիչ ազդեց: Աւելի վըտանգաւոր կարող էր լինել Լասսալի հայեացքների միւս կէտը.— նրա յափշտակելի արտադրող ընկերութիւններով: Նա՛ հնարաւոր համարեց զարգացման և այդպիսի բանւորական միութիւնների տարածելու միջոցով քայլ առ քայլ մօտենալ կապիտալիզմի վերացմանը. իւրաքանչիւր այդպիսի միութեան մէջ նա տեսնում էր բարձրագոյն կազմի մասնակի իրագործումը— արտադրութեան միջոցների ու յաւելեալ արժէքի բանւորների ձեռքն անցնելը: Մենք գիտենք, թէ որքան սխալ է այդ գաղափարը. կապիտալիստական յարաբերութիւնների մէջ արտադրողական միութիւնները կամ կործանոււմ են և կամ բաժնետէրական դէպի կապիտալիստական ձեռնարկութիւններ են դառնում. բանւոր դասակարգի դրութիւնը նրանք չեն կարող բարելաւել, արտադրութեան բոլոր միջոցների՝ նրա ձեռքն անցնելը չեն մօտեցնում: Բայց նոյնիսկ այս կեղծ գաղափարը հանձարեղ առաջնորդի ձեռքերում, բանւոր դասակարգի զարգացմանը գուցէ շատ աւելի օգուտ բերեց, քան վնաս: նա այդ գաղափարից հանեց այն հետեւութիւնը, որ բանւոր դասակարգի համար անհրաժեշտ է քաղաքական լիակատար իրաւագորութիւն և քաղաքական ոյժ, արտադրողական ընկերութիւններ կազմելու համար օգտւելու պետական ապարատից, որը բուրժուազիայի քաղաքական տիրապետութեան դէպքում չի կարող ընդարձակօրէն զարգանալ (ընդհանուր ընտրողական իրաւունքի կռիւ): Միևնոյն ժամանակ Լասսալը չտեսնած ոյժով պրօլետարական գիտակցութեան մէջ միացնող գաղափարներ մտցրեց— դասակարգային կռիւի, դասակարգային կազմակերպութեան, դասակարգային իդէալի գաղափարներ:

Ինչ վերաբերում է Կարլ Մարկսին, այստեղ նրա հայեացքների մասին առանձնապէս խօսելու կարիք չկայ. էապէս այս ամբողջ գիրքը նրա հայեացքների բացատրութեան է նւիրւած: Նա XIX դարու ամենամեծ գաղափարական կազմակերպիչն էր: Նա առաջինն էր, որ հասարակական զարգացման ուսմունքը գիտութիւն դարձրեց և գիտականապէս սահմանեց այս զարգացման ճանապարհը: Նրա ձեռքերում հասարակական գիտութիւնը սկսեց գործել և սօցիալական յառաջադիմութեան հզօր գործիք դառնալ:

**6. ՀԱՍՍԱՐԱԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԵՒ ԴԵԳՐԱԴԱՅԻԱՅԻ ՊՐՈՑԵՍՍՆԵՐԸ ՄԵՔԵՆԱՅԱԿԱՆ ԿՍՊԻՏԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆՈՒՄ:**

Մրցումը, որ արտադրութեան կազմակերպւած չլինելուց է բըղխում, շարունակում է դարձեալ հասարակական յարաբերութիւնները փոփոխող ուժերից մէկը լինել. մեքենայական կապիտալիզմի շրջանում այս ոյժի գործողութիւնն: աւելի սաստկանում է և միայն այն հետևանք

քը չի ունենում, որ կապիտալը կենդրոնացնում է, այլ և առաջ է բերում տեսակ-տեսակ բարդ պրոցեսներ, որոնք ուղղւած են լինում մասամբ դէպի զարգացումը և մասամբ էլ դէպի հասարակական արտադրող ոյժերի դեգրադացիան:

Այս ոյժի հետ մասին հանդէս է գալիս և մի ուրիշը: Բանւոր ոյժ գնողի ձգտումը— հնար եղածի չափ արժան գնել այդ ոյժը և բանւորների ձգտումը— հնար եղածի չափ թանկ ծախել նրան— ընդհարելով առաջ են բերում զանազան փոփոխութիւնների մի ամբողջ շարք, որոնց էութիւնն այն հետևանքն է ունենում, որ բանւոր դասակարգը զարգանում է կամ դեգրադացիայի ենթարկւում, որ բանւորի նիւթական և ապա անմիջապէս նրա կեանքի միւս բոլոր պայմանները բարելաւում են կամ վատթարանում:

Նախընթացի մէջ այս ոյժն ևս քննեց իբրև գնողի և ծախողի «մրցման», այսինքն՝ փոխանակութեան գործողութեան մէջ նրանց կռիւի մի առանձին, մասնաւոր դէպք: Բայց մեքենայական կապիտալիզմի շրջանում մրցման այս մասնաւոր ձևը մի առանձին բնոյթ և հասարակութեան կեանքի մէջ մի առա նձին նշանակութիւն է ստանում. առանձին բնոյթը կայանում է նրանում, որ բանւորական ոյժ գնողների և ծախողների անտագօնիզմը (հակառակութիւն) տարածւում է ոչ միայն նրանց փոխանակական յարաբերութիւնների, այլ և ամբողջ իդէոլոգիայի հետևապէս և հասարակական պրոցեսի զանազան ճիւղերի մէջ տեղի ունեցող բազմաթիւ կենսական արտայայտութիւնների վրայ, իսկ առանձին նշանակութիւնն արտայայտւում է հասարակական նոր ձևերի մի ամբողջ շարքով, որ առաջ են գալիս այս անտագօնիզմից (դասակարգային կազմակերպութիւններ, գործարանական օրէնսդրութիւն և այլն):

Վերոյիշեալ երկու ոյժերի—մրցման և բանւորական շարժման անդադար սուր կերպարանք ստացող ազդեցութեան տակ ընութեան դէմ մղող հասարակական կռիւը, ընդհանրապէս, այնպիսի արագընթաց զարգացումն է երևան հանում, որպիսին նախընթաց հասարակական կազմերից և ոչ մէկը չէր տեսել:

ա) ձգնաժամներ

Մրցման տարերային ոյժը կապիտալիստական արտադրութեան անսահման ընդարձակման ձգտումն է առաջ բերում: Իւրաքանչիւր առանձին ձեռնարկող չի կարող չենթարկել այս ձգտմանը, չի կարող ձեռնարկութեան ընդարձակելը և նրա տեխնիկայի զարգացումը կանդնեցնել. այլապէս նա մրցման մէջ շատ հեշտութեամբ կարող է յաղթւել միւս աւելի եռանդուն կապիտալիստներից:

Վաճառքի համար արտադրելով, կապիտալիստը, ի հարկէ, հասկանում է, որ արտադրութիւնն ընդարձակելը անօգուտ կլինի, եթէ

ապրանքը չի ծախուում: Սակայն, բացի այդ, նա հասկանում է, որ եթէ արտադրութիւնը կրճատէ, այս ևս օգտակար չի լինի. շուկայում ընդհանուր դրութիւնը դրանով նա չի փոխում, որովհետև միայն մէկը շատ քիչ նշանակութիւն ունի. այս դէպքում շահում են միայն նրա ախոյեանները, որոնք այնուհետև աւելի մեծ շահով կընդարձակեն իրանց ձեռնարկութիւնները. և նոյնիսկ եթէ շուկաները անգոհացուցիչ լինեն, այդ դէպքում առանձնապէս նրա ձեռնարկութիւնը, իբրև մանր ձեռնարկութիւն, գների իջնելով շատ աւելի հեշտութեամբ կարող է կորստի մատնել: Բացի այդ կապիտալիստը յոյս է գնում և այն հանգամանքի վրայ, որ գներն իջնելով՝ պահանջը պէտք է մեծանայ և որ հետևապէս, աշխատանքի մեծ արտադրողականութիւնը նրա ձեռնարկութեան մէջ ինքը շուկայ կստեղծէ իւր համար:

Արտադրութեան արագ ընդարձակումը բոլոր ձեռնարկութիւնները մէջ վաղ թէ ուշ յանգում է կապիտալիստական գերարտադրութեան: Կապիտալիստական արտադրութիւնը ապրանքներ, այսինքն՝ արդիւնքներ է ստեղծում շուկայի, վաճառքի համար: Ուրեմն, աճող արտադրութիւնն աճեցնում է և շուկայում ապրանքների առաջարկութիւնը և հետևապէս, իւր սովորական ընթացքի համար համապատասխան աճող պահանջի կարիք է ունենում: Եթէ արդիւնքների պահանջը չի համապատասխանում արդիւնքների արտադրութեան քանակին, յետ է մնում, այդ դէպքում գների ընդհանուր անկումն է կատարւում և ամբողջ հասարակական արդիւնքը մասամբ արժողութիւնից պակաս է ծախուում և մասամբ էլ ամենևին չի ծախուում: Արտադրութեան սովորական ընթացքն էապէս խանգարւում է. ձեռնարկութիւնների անագին մեծամասնութիւնը փասուում է:

Բայց ինչպէս է լինում, որ բոլոր կապիտալիստական արդիւնքների շուկայի պահանջը առաջարկութիւնից քիչ է դուրս գալիս:

Հասարակական արտադրութիւնը ոչ միայն ընդարձակւում է, այլ և այս ընդարձակումը աւելի աճող արագութեամբ է կատարւում, որովհետև այս աճման պատճառը—մրցումը—հետզհետէ աւելի մեծ ոյժով է գործում, նայած թէ ինչ չափով է կապիտալը գոյութիւն ունեցող շուկաները գրաւում և որքան նոր շուկաներ որոնելն աւելի դժւարանում է: Մինչդեռ պահանջի փոփոխութիւններն ուրիշ օրէնքով են կատարւում:

Կապիտալիստական հասարակութեան մէջ պահանջը ոչ թէ ուղղակի հասարակութեան անդամների ունեցած այս կամ այն արդիւնքի կարիքով է որոշւում, այլ անդամների գնող ոյժովը: Փոխանակական հասարակութիւնը, բնական հասարակութեան հակառակ, ընդունում է միմիայն այնպիսի կարիք, որը միացած է նրան բաւարարութիւն տալու վճարքի միջոցների հետ: Շնորհիւ այս հանգամանքի, կապիտալիստական հասարակութեան մէջ լիովին հնարաւոր է և իսկապէս էլ լինում

է, որ, օրինակ՝ բնակչութեան մէջ ցորենի չափազանց կարիքի հետ լինում է և ցորենի պահանջի պակասութիւն. արդիւնքն արտադրւած է խիստ մեծ քանակով և ի դուր փտում է շտեմարաններում, որովհետև որոնք որ ցորենի պահանջ ունեն, վճարելու միջոցներ չունեն:

Պահանջի վերաբերմամբ զարգացող կապիտալիստական արտադրութիւնը երկու հակադիր միտումներ է երևան հանում: մէկը ուղղւած է պահանջի մշտական մեծացնելուն, միւսը—փոքրացնելուն: Առաջին միտումը բղխում է այնպիսի փաստերից, ինչպիսին է՝ տեխնիկայի առաջադիմութեան շնորհիւ գների իջնելը, որը արդիւնքները գնողներին աւելի լայն շրջանի համար է մատչելի դարձնում, —ինչպէս փոփոխական կապիտալի և յաւելեալ արժեքի աճումը, որ պայմանաւորւած է արտադրութեան ընդհանուր ընդարձակմամբ և ցոյց է տալիս զանազան դասակարգերի գնման ոյժի մեծանալը, ինչպիսին է նոր շուկաներ որոնելն և այլն: Երկրորդ միտումի հիմքը մի կողմից ձեռնարկութիւնների կենդրոնացման առաջադիմութեան մէջ մանր բուրժուազիտայի և կապիտալիստ դասակարգի պրօգրեսիւ նւազումն է, այսինքն՝ աւելի մանր և թոյլ ձեռնարկութիւններին ճնշելը ու դուրս քշելը խոշորներից և ուժեղներից. միւս կողմից մեքենաների՝ բանւորներին դուրս անելը, որ առաջ է բերում արտադրութեան մէջ մասնակցողների և աշխատավարձ ստացողների պակասումն, առաջինն էլ, երկրորդն էլ սպառողների գնման ոյժի նւազումն է նշանակում:

Այս երկու միտումների կռուով որոշւում են շուկայի պահանջի ընդհանուր գումարի փաստացի փոփոխութիւնները: Արդիւնաբերական կապիտալի զարգացման աւելի վաղ շրջաններում առաջին միտումը չափազանց զօրեղ է. կապիտալի համար՝ փոխանակական յարաբերութիւնների մէջ ընկած ոչ կապիտալիստական երկրների և հասարակութեան ոչ կապիտալիստական դասակարգերի հաշին կատարւած շուկայի մշտական ընդարձակումը և մասամբ նոր ունոր ձեռնարկութիւններ ստեղծելու անընդհատ շարունակող գործողութիւնը այն հետևանքըն են ունենում, որ արագ աճող պահանջը հասնում է առաջարկութեանը, կամ նոյն իսկ անցնում է նրանից: Սակայն, ինչ չափով որ կապիտալիզմը ընդգրկում է բոլոր երկրները և հասարակական տնտեսութեան բոլոր ճիւղերը, նա աւելի ևս հարկադրւած է լինում նախկին սութեան բոլոր ճիւղերը, նա աւելի ևս հարկադրւած է լինում նախկին շուկաների ընդարձակումով բաւականանալ, հնարաւորութիւն չունենալով նորերը գտնել: Նոր ձեռնարկութիւնների առաջանալը հետզհետէ աւելի հազւագէպ է դառնում, որովհետև աճում է և ձեռնարկութիւնն սկսելու համար անհրաժեշտ կապիտալի քանակը: Այդպիսով՝ պահանջի ընդարձակման համար նախկին պայմաններն աւելի անբարենպաստ պայմաններով են փոխարինւում: Մինչոյն ժամանակ սաստկանում է պահանջը ներով են փոխարինւում: Մինչոյն ժամանակ սաստկանում է պահանջը նւազեցնելու միտումը. տեխնիկական առաջադիմութիւնը, հետզհետէ աւելի արագ կատարւելով, աւելի շատ է սահմանափակում գործ ունե-



լարտադրութիւններ. նախ՝ բացարձակը, որ արտադրութեան՝ պահանջից անցնող աճումից է կախած և երկրորդ՝ յարաբերականը, որ պայմանաւորուում է արդէն գործերի ընդհանուր խանգարումից առաջացած պահանջի նւազումով, ձեռնարկութիւնների խորտակելով, գործադրութեամբ և այլն. առաջինը այդ օրինակ ճգնաժամերի մէջ հիմնական երևոյթ է լինում, երկրորդը—երկրորդական, որ միանալով առաջինի հետ, խիստ սաստկացնում և սուր կերպարանք է տալիս նրա ազդեցութեանը:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ընդհանուր տնտեսական խորտակման մէջ արտադրութեան միւս ճիւղերի հետ անխուսափելի մասնակցութիւն ունի առևտրական ու կրեդիտային գործը: Հարկաւոր է միայն աւելացնել, որ այս կամ այն տեսակի արտադրութիւնը հէնց իւր բնակորութեան շնորհիւ առանձնապէս զօրեղ ցնցման է ենթարկուում. անգոհացուցիչ պահանջի ազդեցութիւնն ամենից աւելի անմիջականօրէն առևտրականներն են կրում. իսկ բանկիրները թէ՛ իրանց բազմաթիւ պարտապանների քայքայելուց են վրասուում, որոնք դադարում են վճարելուց, և թէ՛ փգնաժամից վախեցած փողատուների անչափաւոր պահանջներից, որոնք շտապում են փողերը բանկից իրանց ձեռքը ձգել: Իսկ առևտրականների և բանկիրների աւերելը խանգարում է նաև նրանց հետ գործ ունեցող բազմաթիւ արդիւնաբերական կապիտալիստների գործերը և այլն:

Այսպէս, ճգնաժամի երևոյթը արտադրողական կեանքի միջանի բաժանմունքներից տարածւում է միւսների վրայ: Այս բանի մէջ է երևում կապիտալիստական կազմակերպութեան խիստ բարդութիւնը և կոպակցութիւնը: Բնական տնտեսութեան շրջանում, երբ առանձին խմբերը համարեա կզդիացած կեանքով էին ապրում, այդպիսի բան չէր կարող լինել. նոյնիսկ մի քանի խմբերի կատարեալ կորուստը միւսների վիճակի վրայ քիչ էր ազդում: Մանր-բուրժուական հասարակութեան մէջ տնտեսութիւնների մէջ եղած կապն արդէն աւելի զարգացած է, բայց իւրաքանչիւր այդպիսի դէպքում այդ կապը նրանց համեմատաբար ոչ մեծ թւի համար է քիչ թէ շատ սերտ հանդիսանում,—և տնտեսական կեանքի խանգարումը ամեն տեղ չի տարածւում: Կապիտալիստական հասարակութիւնը իւր աշխատանքի խիստ զարգացած բաժանմամբ այս տեսակէտից նմանում է բարձրագոյն օրգանիզմներին, մինչդեռ նախընթաց հասարակական ձևակերպումը կարելի է համեմատել ստորին օրգանիզմների հետ. եթէ մարդու մարմնի մի մասը աւերւում է, ամբողջ կազմաւորում է ծանր ճգնաժամ կրում, այնպէս որ վնասակար ազդեցութիւնը ներգործութեան տեղից ամենահեռու գտնւած օրգանների վրայ իսկ անդրադառնում է. ընդհակառակը՝ որ և է պօլիպի կամ որդի, որի մարմնի մասերի մէջ կենսական գործունէութիւնը թոյլ է բաժանւած, մի տեղի խիստ վնասելը կազմաւորել

միւս մասերի վրայ շատ թոյլ ազդեցութիւն է ունենում:

Տիպիկ, սուր ճգնաժամի երևոյթները ծաղկած դրութիւնից զարմանալի արագութեամբ դէպի խորտակումը դիմելով են բնորոշուում: Մինչև ճգնաժամի սկիզբը արդիւնաբերութիւնն արագ աճում է և բոթաբեր օրւայ նախօրեկին կենդանութիւնը ծայրայեղ աստիճանի է հասնում: Արտադրութեան քանակը հսկայական է, բայց ապրանքները լաւ են գնում, շուկաները, ըստ երևոյթին գոհացուցիչ են: Մեծ քանակով գնող առևտրականները գնում են գործարանատէրերից կամ իւրարից, մանր առևտրականները—առաջիններից. շահագէտները գնում են վերածախման համար, պահանջի կեղծ աճումն են ստեղծում: Թէ՛ կապիտալիստները և թէ՛ բանւորները իրանց աւելի լաւ են զգում, քան երբ և իցէ: Ապրանքների աւելորդ հետզհետէ աւելի է կուտակուում: Թաղնւած հիւանդութիւնը զարգանում է հասարակական կազմաւորւածքի ներսում: Եւ այդ հիւանդութիւնը միայն այն ժամանակ է բռնկում, երբ արդէն զգալի աստիճանի է հասնում. հէնց այդ է պատճառը, որ նրա երևան գալը այդպէս սոսկալի լարւած է լինում:

Մորտակման մօտիկ նշանը սովորաբար ամենաշահագիտական բնակորութիւն ունեցող ձեռնարկութիւնների կործանումն է հանդիսանում, որոնց կեղծ ծաղկումը բօրսայական արհեստական միջոցներով էր առաջացել: Լուր է շրջում առաջին, երկրորդ, երրորդ ֆիրմայի սընանկանալու մասին: Կրեդիտի շրջանը, որ տնտեսական կազմաւորւածքի ամենագլխաւոր մասն է, անյապագ իւր վրայ է ցոլացնում առաջացած ցնցումը և սոսկալի ոյժով անդրադարձնում է, որպէս կրեդիտի ճրգնաժամ:

Կրեդիտը հիմնւած է վստահութեան զգացման վրայ, իսկ մարդկանց զգացումները փոփոխական են: Հասարակական տնտեսութեանը սպառնացող իւրաքանչիւր հարւածի դէպքում թէ՛ խոշոր և թէ՛ մանր կապիտալիստների վրայ վաղւան օրւայ համար երկրայութիւն, իրանց կապիտալների համար երկիւղ է տիրում: Որտեղ թագաւորում է սարսափը, այնտեղ կորչում է վստահութիւնը և կրեդիտն ընկնում է սարսափը, այնտեղ կորչում է վստահութիւնը և կրեդիտն ընկնում է: Կրեդիտային գործերը դադարում են: Որտեղ հնարաւոր է, աշխատում են տւած փողերը յետ ստանալ: Փող են փնտռում, փող ու փող, որովհետև այլևս մարդկանց չեն հաւատում, այլ միայն փողին: Յանկարծաճա երկիւղ է տիրում բօրսային առևտրականներին, բանկիրներին և ընտրիներին. բանկերը պաշարւում են փողատուների ներքիւ և ընտրիներին. բանկերը պաշարւում են փողատուների ներքիւ: Շատ բանկեր, որ հարկադրւած են պարտատէրերին վճարել, խմբերով: Շատ բանկեր, որ հարկադրւած են պարտատէրերին վճարել, խմբերով: Շատ բանկեր, որ հարկադրւած են պարտատէրերին վճարել, խմբերով: Շատ բանկեր, որ հարկադրւած են պարտատէրերին վճարել, խմբերով:

Առևտրական և արդիւնաբերական ձեռնարկողները փողի համար տենդային արագութեամբ շտապում են ծախել ապրանքները. մինչդեռ պահանջն աւելի է կրճատւում, որովհետև բոլորն աշխատում են փո-

դերը իրանց ձեռքերում պահել: Շուկաները լցուում են ապրանքներով և գները մինչև ամենավերջին աստիճանի իջնում: Մէկը միւսի յետեւից ընկնում են արդէն արդիւնաբերական ձեռնարկութիւնները, իսկ անգիսա ֆնացողները կրճատում կամ կանգնեցնում են արտադրութիւնը: Պահեստի բանակի թիւն իսկոյն հարիւր հազարների է բարձրանում, որոնց թւի մէջ մտնում են և հազարաւոր քայքայած կապիտալիստներ. ով որ կապիտալիստական մտքով թոյլ է, կորչում է բայց և ուժեղների դրութիւնն էլ վատ է լինում:

Ճգնաժամի օրերից յետոյ սկսւում է դադարի շրջանը: Նոր խոշոր խորտակումներ չեն լինում, բայց բարելաւում էլ չկայ. արտադրութիւնն ու շուկան ճնշւած դրութեան մէջ են:

Շուկայում ահագին քանակութեամբ ապրանքներ սկսում են քիչ—քիչ հալւել, նւազել: Սոշոր ձեռնարկութիւնները մէկը միւսի յետեւից աստիճանաբար կաղզուրում և սկսում են գործն ընդարձակել. քայլ առ քայլ դադարից անցնում են դէպի չափաւոր բարգաւաճում: Արտադրութիւնը դարձեալ առաջւայ չափերին է հասնում և դեռ աւելի գերազանցում: Այս դէպքում դուրս է գալիս, որ նախկին մանր ձեռնարկութիւններից շատերն անհետ կորել են և ձեռնարկութիւնների ընդհանուր թիւը պակասել է: Կենդանութիւնն աճում է: Արտադրութեան զարգացումը նորից անդուսպ սրընթացութիւն է ստանում: Պատճառների կրկնութիւնն առաջ է բերում հետևանքների կրկնութիւն և բարգաւաճման ծայրագոյն աստիճանից յետոյ նոր ճգնաժամ է վրայ հասնում:

Երևոյթների այս ամբողջ շրջանը ներկայ դարում արդէն միջանի անգամ կրկնւել է: Արտադրութեան առաջին ընդհանուր ճգնաժամը տեղի ունեցաւ 1825—26 թւին. երկրորդը—36—37 թւին, ապա 47 և 57 թւականներին. մինչև այս ժամանակ պարբերականութիւնը բաւականին ճիշտ էր, շարունակ տասը տարի միջոց էր լինում: Այնուհետև յաջորդեց 1873 թւի համաշխարհային ճգնաժամը: Այս ճգնաժամը իւր ոյժով և երկարատևութեամբ բոլոր նախընթացներին գերազանցեց տարածւելով երկրից երկիր, նա շարունակեց մի քանի տարի—մինչև 1878 թւականը: Այնուհետև, մինչև 90-ական թւականների սկիզբը լայն և ընդհանուր բարգաւաճում չէր նկատուում, դադարն էր տիրապետում: Բայց սակաւ առ սակաւ դադարը նորից փոխարինւեց համաշխարհային արդիւնաբերական ճոխ բարգաւաճմամբ և մի քանի տարւայ ամենաշխոյժ կենդանութիւնից յետոյ, 99 թւին նոր ճգնաժամ սկսւեց, որը մի առանձին ոյժով ջախջախեց Ռուսաստանը, բայց ամեն տեղ յայտնւեց: Այս ճգնաժամը տևեց մի քանի տարի և հսկայական ծաւալ ունէր:

Ճգնաժամերի յետագայ զարգացման հարցի առիթով պէտք է երկու տարբեր կարծիքներ նկատենք:

Միջանի հայեացքներով, ճգնաժամերն այսուհետև էլ պէտք է նոյն խիստ ձևով կրկնւեն, ինչպէս առաջ, միայն թէ ժամանակամիջոցները շատ աւելի երկար կլինին: Կապիտալիստական մեխանիզմի միջանի անգամ աճած հսկայական ընդարձակութիւնն ու բարդութիւնը ոյժերի հաւասարակշռութիւնը խանգարող աւել զօրեղ աղդեցութիւն է պահանջում, որպէսզի ճգնաժամը բռնկւի. այս յապաղումին օժանդակում է և հասարակական կեանքի մասնաւոր շրջաններում եղած տարբերի փոխադարձ յարմարութիւնը, որ ստեղծւել է, օրինակ՝ բօրսայական կազմակերպութեան զարգացման շնորհիւ և առաջանից շատ աւելի ընդարձակ է: Բաշխւելով համաշխարհային կապիտալիզմի ամբողջ շրջանում, համաշխարհային գերարտադրութիւնը պէաք է շատ աւելի զօրեղ աստիճանի հասնի, որպէսզի սուր և խիստ կերպարանքով արտայայտուի: Բայց դրա փոխարէն այս արտայայտութիւնները պէտք է շատ աւելի լարւած ու զարհուրելի լինեն: Բացի տեսական հասկացողութիւններից, այս հայեացքի օդտին են խօսում նաև 57 և 73 թւականների ճգնաժամերի տասնըվեցամիայ միջոցը և մանաւանդ վերջին ճգնաժամերի առեւելի ոյժը:

Միւս հայեացքով՝ ճգնաժամերի ընոյթն է փոխւում: Նրանց միջի ուրախ ժամանակամիջոցները հետզհետէ կարճանում են, ճգնաժամի և անշարժութեան շրջանները կցւելով իրար, նախկին տասնամիայ շրջագծի հետզհետէ աւելի մեծ մասն են դրաւում: Գերարտադրութիւնը հանդէս է գալիս արդիւնաբերական խրօնիկական հարստարահարութեան ձևով, որ աստիճանաբար մշտական երևոյթ դառնալով, հնարաւոր չի դարձնում այն զօրեղ կենդանութիւնը, արտադրական կեանքի այն լարւած առաջադիմական ընթացքը, որ անխսւսափելիօրէն ճգնաժամով է վերջանում: Բայց ճնշումը հետզհետէ աւելի խորն է գնում. արտադրական կեանքը խանգարելու միտումն անդադար սաստկանում է: Այս հայեացքը ներկայումս աւելի քիչ հիմունքներ ունի, քան նախընթացը, բայց նախքան վերջին ճգնաժամի սկսւելը, նա էր տիրապետող հանդիսանում:

Կապիտալիստական արտադրութեան մասնաւոր ճգնաժամերը ընդհանուրներից նրանով են տարբերւում, որ, նախ՝ առաջինների ծագումն աւելի մասնաւոր ընոյթ ունեցող պատճառներից է, քան կապիտալիզմի գերարտադրութեան միտումը, և երկրորդ՝ նրանք համեմատաբար աւելի փոքր ծաւալ են ունենում. նրանք ընդգրկում են երբեմն տարբար աւելի փոքր ծաւալ են ունենում. նրանք ընդգրկում են երբեմն առանձին երկրներ, երբեմն հասարակական տնտեսութեան մի որոշ ճիւղը և այս սահմանափակ շրջանից դուրս համեմատաբար աւելի թոյլ արձագանք են տալիս: Բայց այսպիսի մասնաւոր ճգնաժամերը ըստ ինքեան չափազանց զօրեղ կարող են լինել և ըստ լարւածութեան առանձին դէպքերում չտարբերել իսկական համաշխարհային ճգնաժամերից: Մասնաւոր ճգնաժամերի պատճառ են դառնում պատերազմները,

յեղափոխութիւնները, անբերրիութիւնը, բօրսայական ահագին շահադիտութիւնները... Այսպէս, անդլիական 1863—64 թւի բամբակի ճրգնածամը Միացեալ-Նահանգների կուլից էր առաջացել. այն ընդհանուր տնտեսական ճնշումը, որ կրեց Ռուսաստանը 1891—92 թւին, սաստիկ անբերրիութեան հետեանք էր և այլն: Աւելի կոնկրետ օրինակներով քննենք այդպիսի ճգնածամերի ծագման մեխանիզմը:

Միացեալ-Նահանգներում 1860—64 թւականների ներքին, քաղաքացիական պատերազմը, որ նեգրերի ազատութեան կռիւ անունով է յայտնի, հիւսիսի և հարաւի տիրապետող դասակարգերի—արդիւնաբերական բուրժուազիայի և երկրագործական արխտոկրատիայի շահերի հակադրութեան հետեանք էր: Առաջինը ձգտում էր հովանաւորականութեան, ցանկանում էր բարձր մաքսեր դնել արդիւնագործութեան արդիւնքների վրայ և թանգ գնով ծախել. երկրորդը ձգտում էր ազատ առևտրի, որ միևնոյն ապրանքներն աւելի արժան գնէ: Իսկ հոռմ նիւթերի արտադրութեան մէջ հարաւի սարկական արժան աշխատանքն անյարմար մրցակից էր հիւսիսի ձեռնարկողների համար, որոնք վարձու աշխատանքից էին օգտւում: Երբ տնտեսական կռիւը պատերազմի կերպարանք ստացաւ Անգլիայում, մանած-գործւածքի արտադրութեան համար բամբակի պակասութեան շնորհիւ ճգնածամ տեղի ունեցաւ, որովհետեւ բամբակի մեծ մասը հարաւային նահանգներից էր ներմուծւում: Բամբակի արդիւնաբերութեան քանակը չափազանց կրճատւեց և պահեստի բանակի թիւը մօտաւորապէս երկու հարիւր հազար հոգու հասաւ: Այսպէս, մի երկրի հասարակական կռիւը արտադրական ճգնածամ առաջացրեց միւսի մէջ, շնորհիւ երկրների մէջ եղած այն տնտեսական սերտ կապի, որ աշխատանքի հասարակական բաժանումից է առաջանում:

Յամենայն դէպս, այնպիսի մասնաւոր ճգնածամերի վերաբերմամբ, որոնք առաջ են գալիս անմիջապէս քաղաքական ցնցումներից, շահադիտութիւններից, ընդհանրապէս բացայայտ քաղաքական բնաւորութիւն կրող պայմաններից, դժւար չէ պարզել, որ նրանց հիմնական պատճառը համանման է ընդհանուր ճգնածամերի պատճառներին—աշխատանքի հասարակական բաժանման անկազմակերպ բնաւորութիւն: Բայց այնտեղ, ուր ճգնածամը, ըստ առաջին հայեացքի, գոլտ տարերային պատճառներից է առաջանում, օրինակ՝ բնական պայմաններից, որոնց հետեանքն անբերրիութիւն է լինում, ուշադրութեամբ, խնամքով վերլուծելուց յետոյ, սովորաբար, միևնոյն հիմնական պատճառն է երևան գալիս: Օրինակ՝ այնպիսի մեծ անբերրիութիւններ, ինչպիսին Ռուսաստանի 1891 թւին էր, միմիայն այն դէպքում կարող է տեղի ունենալ, երբ երկրագործական գիշատիչ տնտեսութիւնը հողը վերին աստիճանի ուժասպառ է դարձնում: Բնական արտադրութիւնից փոխանակականին անցնելը և այս անցման յարուցած գիւղացիական տըն-

տեսութեան անկումը ստիպում է գիւղացիներին դիմել վարելահողերի խիստ ընդարձակելուն և հողի սաստիկ շահագործելուն, ըստ որում ինչ չափով որ հողերն են փչացնում նրանց արտադրող ոյժերը, նոյն չափով չեն վերականգնում: Հէնց միայն ուժասպառ հողը գիւղացուէ այն աստիճանի ենթարկում է եղանակի պայմաններին, որ շատ անգամ լինում են, նոյնիսկ ժամանակ առ ժամանակ անխուսափելիօրէն պէտք է պատահեն, այնպիսի անբերրիութիւններ, որոնք միանգամից սարսափեցնում են ամբողջ երկիրը: Հետեապէս, այստեղ էլ ճգնածամը յարաբերութիւնների որոշ սխտեմի համար պատահական երևոյթ չէ համեմատաբար աւելի պատահական է այն փաստը միայն, որ ճգնածամը պայթում է 1891 թւին և ոչ թէ 1890-ին:

Հասարակական տնտեսութեան զանազան ձիւղերից ամենից հեշտ կրեղիտի ձիւղն է քայքայիչ ազդեցութիւններին ենթարկւում: Որովհետեւ կրեղիտի էութիւնը վստահութիւնն է կազմում, ուրեմն կրեղիտային ճգնամամի համար արտադրութեան պայմանների ցնցման հասարակ հնարաւորութիւնն իսկ գոհացուցիչ պատճառ է ներկայանում: Օրինակ՝ պատերազմ է սպառնում. երկիւղ է առաջ գալիս, թէ պատերազմը կքայքայէ միջանի երկրներ, որ այդ երկրների կապիտալիստները, մանաւանդ նրանց կառավարութիւնները կզաղարեն իրանց պարտքերը վճարելուց: Դրութեան անյուսութիւնը վերացնում է կրեղիտը: Այս դէպքում փողի խիստ մեծ պահանջ է առաջանում, շատ ձեռնարկողներ հարկադրւած են լինում վճարել այնպիսի պարտքեր, որոնց յետաձգելու յոյս ունէին: Շնորհիւ փողի պահանջի և առաջարկութեան անհամապատասխանութեան, կրեղիտային ճգնածամը բարդւում է դրամական ճգնածամով. կրեղիտի ընկնելու հետ մէջ է գալիս և անհրաժեշտ վճարումների համար փողի պակասութիւնը: Յնցումը, ի հարկէ, իսկապէս արդիւնաբերական շրջանների վրայ էլ է տարածւում, որովհետեւ արդիւնաբերական կապիտալիստների համար փողի սաստիկ պահանջը շատ դժւարին է, նրանց կապիտալը գլխաւորապէս արտադրութեան միջոցների և արտադրած ապրանքների մէջ է կայանում և ոչ փողի:

Մասնաւոր ճգնածամերի կարգը պէտք է դասել նաև կրոպական երկրագործութեան արդէն բազմամեայ խրօնիկական ճգնածամը: Նրա հիմնական պատճառներն են. նախ՝ միւս աշխարհամասերի պտղաբեր երկրների երկրագործական արտադրութեան հսկայական ընդարձակումը, որոնց հացը արժան է ոչ միայն շնորհիւ երկրագործական աշխատանքի մեծ արտադրողականութեան, այլ և այն պատճառով, որ խատանքի մեծ արտադրողականութեան, այլ երկրներում հողային բնտան: համեմատինչպէս արդէն ասել է, այդ երկրներում հողային կապիտալիստական երկրագորտաբար ցածր է. երկրորդ՝ Եւրոպայի կապիտալիստական երկրագործութեան բանուր ձեւերի պակասութիւնը, շնորհիւ հողագուրկ գիւղացիների՝ դէպի քաղաքները դիմելու ձգտմանը, որտեղ զարգանում է

արդիւնագործութիւնը, իսկ ապրուստի պայմանները վարձու բանուոր- ների համար աւելի լաւ են:

Ըստ ձևի, ճգնաժամերը մի տեսակ հասարակական տնտեսութեան զեզրադացիա, հասարակութեան արտադրող ոյժերի ժամանակաւոր ցածրացումն են ներկայացնում. բայց հէնց ճգնաժամերն էլ հզօր դըր- ղիչ են հանդիսանում տեխնիկական առաջադիմութեան և արտադրո- ղական ոյժերի յետագայ զարգացման հանար: Նախ՝ մրցումը, ճգնաժամի շնորհիւ, վերին առտիճանի սուր կերպարանք է ստանում. երկրորդ՝ կրած կորուստները վարձատրելու ձգտումը դրդում է կապիտալիստ- ներին հարստանալու նոր միջոցներ որոնել. վերջապէս երրորդ, որ և գլխաւորն է, կապիտալիստը ճգնաժամի ժամանակ կրած վնասների պատճառը ապրանքների գների չափազանց ցածրանալու մէջ է տես- նում և բնական է, որ աշխատում է ձեռնարկութեան տեխնիկան այն- պիսի բարձրութեան հասցնել, որ ամենացածր գներն իսկ վրաս չպատ- ճառեն:

Արագացնելով տեխնիկական առաջադիմութիւնը, ճգնաժամերը նպաստում են կապիտալիստական յարաբերութիւնների զարգացմանը- նրանց բոլոր հետեանքներով, որոնց թւին են պատկանում և՛ նոր ճըզ, նաժամերը: Այստեղ զարգացման միտումը ամենասերտ կերպով հիւս- լում է դեգրադացիայի միտումի հետ: Եթէ կապիտալիստական հասարակութիւնը չկարողանար իւր ծոցում զարգացման հաստատուն երաշ- խաւորութիւն ստեղծել՝ իւր վրայ վերցնելու արտադրութեան և բան- լոր դասակարգի կազմակերպութիւնը, նա ամենամօտաւոր ժգնաժա- մերից մէկում կործանուելու և քայքայուելու բոլոր շանսերը կունենար:

Ճգնաժամերը, իբրև հասարակական յարաբերութիւնների անկազ- մակերպ լինելու ամենակտրուկ արտայայտութիւն, վերջին ժամանակ- ներս ձեռնարկող դասակարգի համար էլ տնտեսական կեանքի մէջ մեծ կազմակերպումն մտցնելու դրդիչ ծառայեցին:

բ) Ձեռնարկողների սինդիկատներ

Երբ արտադրողական ոյժերի և հասարակական ձևերի մէջ եղած հակասութիւնը սաստկանալով՝ հէնց բուրժուազիայի համար խիստ ճըն- շող բնաւորութիւն ստացաւ,—չափազանց սրւած սպանիչ մրցում և ճըգ- նաժամեր—այն ժամանակ կապիտալիստների դասակարգն էլ կամաց- կամաց սկսեց կուր մտնել կապիտալիստական յարաբերութիւնների՝ իրան դիպչող անյարմարութիւնների դէմ:

Այս դէպքում ձեռնարկողների համար կուր միջոց է ներկայանում միութիւնը, կազմակերպութիւնը: Կազմակերպութեան միջոցով կապի- տալիստները ձգտում են ջլատել արտադրութեան այն անիշխանութեան ազ- ջեցութիւնը, որ ծայրայեղ մրցման և ճգնաժամերի հիմքի մէջ է գտնուում:

Միութիւն կազմակերպելով, արդիւնաբերութեան որոշ ճիւղի

ձեռնարկողներն աշխատում են նորմայի ենթարկել նրա արտադրու- թիւնը և որոշ կանոնների տակ դնել: Ձեռնարկութիւնների այդպիսի մի- ութիւնները կոչուում են սինդիկատներ կամ կարտէլներ (բարձրագոյն, ամենագարգացած ձևը—տրէստ):

Սինդիկատներ կազմակերպելու առաջին փորձերը մեր դարու 60- ական թւականներին եղան: Բայց այս նոր կազմակերպութիւնը հանդէս հանելու վճռական դարկը 1873 թւի և հետեւալ ճգնաժամերը տւին: Այդ ժամանակներից շատ կապիտալիստական երկրներում սինդիկատ- ները կարողացան խոշոր հասարակական ոյժ դառնալ:

Կապիտալի սաստիկ կենդրոնացումը, ձեռնարկութիւնների իւր- նւագումը և նրանց ծաւալի ընդլայնումը հող էին պատրաստել սինդի- կատների համար: Եթէ արտադրութեան որ և է ճիւղի կապիտալը դեռ չի կուտակել սակաւաթիւ ձեռնարկողների ձեռքերում, եթէ համեմատա- բար մանր ձեռնարկողներ դեռ շատ կան, ձեռնարկողների միութիւններ կազմելը նախ՝ շատ դժւար կլինի և երկրորդ՝ խախտու: Այդ ժամանակ նոյն ճիւղի բոլոր ձեռնարկողներին համարեա անհնար է լինում համա- ձայնութիւն կայացնել և նրանց մեծ մասը կազմակերպութիւնից դուրս են մնում. իսկ այսպիսի դէպքում կարտէլը անկարող է իւր նպատակն իրագործել—նորմայի տակ դնել, կանոնաւորել արտադրութիւնը: Կար- տէլը, ընդհանրապէս, խոշոր ձեռնարկողների միութիւն է:

Ինչ վերաբերում է կարտէլի միութեան ձևին, պէտք է ասել, որ այդ ձևը զգալի կերպով նախապատրաստել էին բաժնետէրական ըն- կերութիւնները, որոնք արդէն իւր տեսակի կապիտալիստական միու- թիւն են ներկայացնում:

Ձեռնարկութիւնների սինդիկատներ կազմելը հեշտացնող կարևոր պայմաններից մէկը արդիւնաբերական օրէնսդրութեան հովանաւորո- ղական սիստեմն է: Որ և է պետութեան գործարանատէրերին փրկելով օտարերկրեայ մրցումից, նրանց բացառիկ, մենաշնորհեալ դրութեան մէջ դնելով և ներքին շուկան նրանց մենավաճառութեան տալով, հո- վանաւորականութիւնը սինդիկատների կազմակերպութեան համար խիստ բարենպաստ պայմաններ է ստեղծում: Հովանաւորականութիւնը տիրապետելիս, սինդիկատը կարող է մրցումը բոլորովին վերացնել և նրա մէջ մտնող կապիտալիստներին մեծ օգուտներ տալ: Իսկ ազատ առևտրի դէպքում օտարերկրացի ձեռնարկողների մրցումը, որոնց դժւար է սինդիկատին միացնել, սինդիկատի անդամների օգուտները զգալի կերպով պակսեցնում է. սինդիկատն արտադրութեան մենավա- ճառութեանը չի տիրում, հետևապէս, չի էլ կարող նորմայի տակ դնել արտադրութիւնը, իւր կամքով որոշել նրա քանակն ու նրա արդիւնք- ների գները: Ահա թէ ինչու հովանաւորողական երկրներում, ինչպէս օրինակ՝ Միացեալ-Նահանգներում, կարտէլի սիստեմն առանձնապէս արագ է զարգանում: Այնուամենայնիւ, հովանաւորականութիւնը սին- արագ է զարգանում: Այնուամենայնիւ, հովանաւորականութիւնը սին- դիկատներ յարուցանելու անհրաժեշտ պայմանը չէ: Այսպէս, նոյնիսկ դիկատներ յարուցանելու անհրաժեշտ պայմանը չէ: Այսպէս, նոյնիսկ Անգլիայում, որտեղ առևտուրն ամենամեծ ազատութիւնն ունի, 1873 թւից յետոյ մեծ թւով կարտէլներ հիմնւեցան, որոնցից շատերը խիստ

հարուստ են և մեծ կարողութեան տէր: Առևտուրն ազատ լինելիս՝ աւելի հեշտութեամբ կարող են միջազգային սինդիկատներ կազմակերպել:

Կարտէշների զարգացման առաջին քայլերին ուղեկցում էին բազմաթիւ անյաջողութիւններ, խորտակումներ և քայքայումներ: Կարտէշներին անդամները, որ կրթւած էին տնտեսական անիշխանութեան մէջ և ներշնչւած «ազատ» մրցման ոգով, կարգապահութիւն պահելու և գործը կազմակերպելու նկատմամբ յաճախ անընդունակ էին լինում: Նրանք կամ բացայայտ կերպով խանգարում էին ընդհանուր կանոնադրութիւնները, կամ զանազան հնարագիտութիւններով խուսափում էին նրանցից և հէնց այն անդամներն էին տուժում, որոնք քարեխղճօրէն հպատակւում էին որոշւած սահմանափակումներին: Եւ դեռ այժմ էլ միևնոյն պատճառով շատ սինդիկատներ կորստի են մատնւում:

Բազմաթիւ կարտէշների կորստեան միւս, աւելի կարևոր պատճառն այն է, որ նրանց չէր յաջողւում իրանց ճիւղի արտադրութեան վրայ իսկական իշխանութիւն ձեռք բերել: Երբ անկախ մնացած մըրցակիցները ընդարձակում են իրանց արտադրութիւնը, կարտէշի կազմակերպութիւնը իւր գոյութեան ամբողջ միտքը կորցնում է. նրա անդամների համար խիստ անշահաւէտ է ենթարկւել սահմանափակումներին, որոնք միայն առաւելութիւն են տալիս նրանց թշնամիներին. կարտէշի՝ շուկայի գներ սահմանելը ուղղակի անհրնար է դառնում: Առանձնապէս կորստաբեր է լինում սինդիկատի համար, եթէ որեւէ ճիւղի ամենաուժեղ ձեռնարկողները, գիտակցելով իրանց կարողութիւնը, չեն ցանկանում միանալ նրան: Փորձը ցոյց է տալիս, որ սինդիկատը միայն այն ժամանակ կարող է գներ թելադրել, երբ նրա ձեռքումն է գտնւում ամբողջ շուկայի  $\frac{2}{3}$ — $\frac{3}{4}$  մասը:

Երբ սինդիկատը իւր ճիւղի արտադրութեան վրայ իսկական իշխանութիւն է ձեռք բերում, բոլոր միանալու անընդունակ ձեռնարկութիւնները կորստի են մատնւում: Սինդիկատը հակառակորդների դէմ կռւելու համար անխնայ օգտւում է իւր ոյժից և համախմբւած լինելուց: Օրինակ՝ գերմանական երկաթ արտադրողների սինդիկատը սահմանեց ջախջախող գներ յայտարարել այն բոլորի դէմ, «որոնք չէին յարում նրանց»: Ժանեակի Փարբիկաների զվեցերական սինդիկատը անհնազանդներին սաստելու համար կառավարութիւնից կարողացաւ Փարբիկաներում 11-ժամ աշխատելու խիստ գործադրութեան իրաւունքը ստանալ, որտեղ առաջ աշխատանքը շատ աւելի երկար էր լինում: Նա յայտարարեց այնուհետև, որ իրանց չյարևող ձեռնարկողների մօտ եղող բոլոր ծառայողները 3 ամիս անցնելուց յետոյ այլևս սինդիկատի գործարանները չպէտք է ընդունեն:

Կարտէշների զարգացումը զարմանալի արագութեամբ, բայց և միևնոյն ժամանակ խիստ հետևողականութեամբ էր ընթանում: Նրանց պատմութեան մէջ մինչև ներկայ ժամանակը միքանի աստիճաններ

կարելի է նկատել:

Առաջին աստիճանը նախապատրաստականն է: Համեմատաբար կարճ ժամանակամիջոցով թոյլ համաձայնութիւններ են կազմւում գները պահելու և կամ արտադրութիւնը սահմանափակելու համար: Դեռ ևս անորոշ ձգտումների ազդեցութեան տակ բազմաթիւ փորձեր են արւում: Անյաջողութիւնները խիստ յաճախակի են լինում:

Այնուհետև, գալիս է արդէն իսկական կարտէշների կազմակերպութիւնը: Աւելի երկարատև ժամանակամիջոցով հաստատուն միութիւններ են կազմւում միաժամանակ և՛ գներ սահմանելու, և՛ արտադրութիւնը կազմակերպելու:

Կամայ-կամաց միութիւնը աւելի ամրապնդւում է: Կարտէշի ծրագիրն ընդլայնւում է: Արտադրութեան վրայ իշխանութիւն ձեռք բերելով, կարտէշը շուկաները բաժանում է իր անդամների մէջ, ապրանքների վաճառման համար կենդրոնական վայրեր է հիմնում, պարտաւորեցնում է անդամներին իրանց գործերի մէջ նոր տեխնիկական քարելաւումներ մտցնել և այլն:

Վերջապէս, հէնց միութեան ներքին մրցման վերջին մնացորդները, առանձին ձեռնարկողների անկախութեան վերջին մնացորդներն էլ ոչնչանում են: Միութիւնը որոշում է արտադրութեան բոլոր մասնաբաժանութիւնները և իւրաքանչիւր անդամին հասանելիք շահի քանակը: Ստացւում է մի իսկայական ձեռնարկութիւն—տրէստ: Նախկին անկախ ձեռնարկողները նրա մէջ ուղղակի բաժնետէրեր են դառնում: Ներկայ ժամանակայ համար սա՛ կարտէշի ամենաբարձր ձևն է:

Դեռ այժմ էլ կարտէշի բոլոր տարբեր ձևերը միասին պատահում են. բայց ամեն տեղ բարձրագոյն ձևերին անցնելու միտումն է նկատւում:

Պատմական մեծ նշանակութիւն ունի միջազգային սինդիկատների երևան գալը (1889 թւին նրանց թիւը 11 էր, 1896 թւին—40-ից աւելի), իբրև փայլուն արտայայտութիւն այն փաստի, որ զարգացած կապիտալիզմը ազդութիւններ չի ձանաչում, նա միջազգային երևոյթ է: Այդպիսի սինդիկատներից արժէ յիշել կապար-արծաթի սինդիկատը, որի ձեռքին է գտնւում աշխարհի տարեկան ստացւած ամբողջ արծաթի  $\frac{2}{3}$  մասը, իսկ ամբողջ կապարի կէսը. այնուհետև ծխախոտի, դիթի նամիտային սինդիկատները և այլն: Հիւս. Ամբրիկայի նաւթային տրէստը վերջին տարիներս ձգտում էր ազդեցութիւն ձեռք բերել ուսական նաւթային գործի վրայ. եթէ նա ուսականին էլ տիրէ, այն ժամանակ տրէստի համար ամբողջ աշխարհում մրցում չի մնայ:

Սինդիկատների թիւը ներկայումս ամբողջ հարիւրեակներ է հասնում:

Այն ահագին միջոցները, որ սինդիկատներն ունեն իրանց տրամադրութեան տակ, թոյլ են տալիս նրանց արագ կերպով գործադրել ամեն մի կատարելագործում, որ առանձին ձեռնարկողների համար

չափազանց թանկ կլինէր: Սինդիկատները մէջ ծառայում են սովորաբար ահագին թւով ուսեալ մասնագէտներ և այդպիսի մասնագէտներ ունենալու համար սինդիկատները յաճախ գիտական և դպրոցական հիմնարկութիւններ են հիմնում: Կազմակերպութեան նոր ձևը ընդհանրապէս արագացնում է տեխնիկական առաջադիմութիւնը:

Այնուհետև, ինքն ըստ ինքեան հասկանալի է, թէ սինդիկատներն որքան արագացնում են կապիտալների կենդրոնացման գործողութիւնը: Վերջին տարիների տեղեկութիւններով, օրինակ ծխախոտի տրէստը կլանեց ոչ պակաս քան 150 ձեռնարկութիւններ, նաւթայինը—մօտ 400, պողպատինը—785: Հիւս. Ամերիկայի 447 տրէստների կապիտալը 20 միլիարդ դոլարի է հասնում 38,000 միլիոն բուրլի):

Սինդիկատները արդիւնաբերութեան ընդհանուր ընթացքի վրայ այն տեսակէտից են ազդում, որ նրան աւելի խաղաղ, աւելի միակերպ բնաւորութիւն են տալիս, ասենք, մասամբ միայն: Նրանք արդիւնաբերութիւնը պահպանում են համեմատաբար մանր ցնցումներից և մասնաւոր ճգնաժամերից:

Բայց կարտէլի կազմակերպութիւնն անկարող է վերացնել համաշխարհային ճգնաժամերը և այդ պարզ է հետևեալ հասկացողութիւններից: Քանի դեռ բոլոր ձեռնարկութիւնները սինդիկատների մէջ չեն կազմակերպուել, մինչև այդ ժամանակ ընդհանուր ճգնաժամերի վերացման մասին խօսք էլ չի կարող լինել: Սակայն, երբ արտադրութեան բոլոր ճիւղերն առանձին սինդիկատների մէջ են կազմակերպուում, այն ժամանակ էլ տնտեսական անիշխանութիւնը չի վերանում: Մրցումը միայն նոր, գուցէ և առաջանից աւելի ծանր ձև է ստանում: Արտադրութեան առանձին ճիւղերի կազմակերպութիւնների մէջ կատարել կուի է բացուում: Իւրաքանչիւր սինդիկատ իւր ճիւղի մէջ մենավաճառ լինելով, ձգտում է իւր ապրանքների գներն անսահման բարձրացնել. միևնորս էլ նման նպատակների հետամուտ լինելով, արգելք են հանդիսանում սրան. կուի ելքը կախում է սինդիկատների ոյժերի փոխադարձ յարաբերութիւնից: Որպէսզի կարողանանք դատել այս կուի լարւած և կատարի բնաւորութիւնը, պէտք է ի նկատի առնենք, որ արդիւնաբերութեան միջանի ճիւղերը միևնորսին արտադրութեան միջոցներ են մատակարարում և որ բոլոր ճիւղերի մէջ ամենասերտ փոխադարձ կապ և կախումն կայ: Ենթադրենք, բամբակի պլանտատորների սինդիկատը բամբակի գինը խիստ բարձրացնում է, մինչդեռ, մանած-գործւածքի սինդիկատը գներն արդէն այնպիսի բարձրութեան է հասցրել, որ նրա համար ամենից շահաւէտն է. այնպէս որ զբանից միքիչ աւելի բարձրացնելը, պահանջի կրճատում առաջացնելով, միայն վնաս կպատճառէ: Այն ժամանակ մանած-գործւածքի սինդիկատը հարկադրուում է կամ ընդունել բամբակի բարձր և իւր համար անշահ գները կամ որոշ ժամանակով դադարեցնել արտադրութիւնը: Առաջին

դէպքում այս սինդիկատի գործերն զգալի կերպով պէտք է վատանան և աւելի զօրեղ սինդիկատների հետ վարած կուում վաղ թէ ուշ վերջնական խորտակումը նրա համար անխուսափելի կլինի: Երկրորդ դէպքում կարծես սինդիկատներն իրար դէմ գործադուլ են անում և նր մէկը յաղթւի, նա պէտք է կորցնէ իւր ինքնուրոյնութիւնը, իսկ այս կուի ժամանակը տնտեսական սոսկալի ճգնաժամի ժամանակ է ներկայանում, որ հարւածում է ամբողջ հասարակական տնտեսութիւնը:

Իսկ ներկայումս արտադրութեան ընդհանուր ճգնաժամերի ժամանակ կարտէլներն իրանց վիթխարի կապիտալների համաձայն էլ վիթխարի վնասներ են կրում: Այսպէս, 1903 թւին Հիւսիսային Ամերիկայի 100 գլխաւոր կարտէլների համար կուրսի կորուստները 1754 միլիոն դոլարի կամ 3300 միլիոն բուրլու էին հասնում, բաժնեթղթերի ընհանուր արժողութեան մօտ 44%օ-ը:

Բայց կարտէլի կազմակերպութիւնն եթէ չի կարողանում վերացնել ընդհանուր ճգնաժամերը, գոնէ անհարկողմեքին հնարաւորութիւն է տալիս աւելի հեշտութեամբ տանել այդ հարւածները:

Միևնորսը չի կարելի ասել բանւորների վերաբերմամբ: Եւ իսկայէս, կարտէլները գերարտադրութեան դէմ՝ արտադրութիւնը կըրճատելու միջոցով են կուում և հէնց միայն այս պատճառով է բանւոր ձեռքերի պահանջը կըրճատուում: Իսկ տեխնիկական յառաջադիմութիւնը, որ կազմակերպութեան նոր ձևի մէջ աւելի արագ է ընթանում, աւելի շատ է կապիտալիստական պահեստի աճելուն նպաստում: Բացի այդ, սինդիկատների ահագին տնտեսական ոյժը զգալի չափով ուղղակի բանւորական միութիւնների դէմ է ուղղուում, թէև հէնց նոյն ոյժն էլ միւս կողմից նրանց զարգացման զրգիչ է հանդիսանում: Բանւորական կազմակերպութիւնների դէմ մղած կուի համար տրէստների կազմակերպութիւնները կարող են ծախսել և իրօք ծախսում են ահագին միջոցներ, այնպէս որ նրանց հետ առանց յաջողութեան շանսերի կուււել միայն ամենախոշոր արհեստակցական կազմակերպութիւնները կարող են և մէկ էլ, հասկանալի է, քաղաքական բանւորական կուսակցութիւնները, ի հարկէ, պետութեան վրայ ճնշում գործ զնելու միջոցով:

Ձեռնարկութիւնների թիւը չափազանց պակսեցնելով, սինդիկատները դիւրացնում են շործարանական օրէնադրութիւն մտցնելը—մի պայման, որ տնտեսական առաջադիմութեան համար նպաստաւոր է:

Թէ կարտէլի կազմակերպութիւնը որքան բարենպաստ ազդեցութիւն ունի կապիտալիստների շահի վրայ, այդ կարելի է դատել հետևեալ օրինակով: Մինչդեռ Արևմտքում 5—7%օ-ը սովորաբար արդէն խիստ բարձր է համարուում, երկրագնդիս բոլոր աւելի խոշոր դինամիտային ֆաբրիկաները միացնող միջազգային դինամիտային



տութիւնը հէնց նրա համար է, որ նախատեսէ: Ինչ բանի որ ճիշտ օրինակ դեռ չի եղել, հասկանալի է, որ գիտութիւնը չի կարող այդ բանը բոլորովին ճշգրտութեամբ նախատեսել: Բայց եթէ ընդհանուր առմամբ յայտնի է այն՝ ինչ որ կայ, և յայտնի է, թէ դէպի որ կողմն է փոփոխուում, ուրեմն գիտութիւնը պետք է հետևութիւն անէ այն մասին, թէ ինչ կատարելի սրանից: Նա պէտք է անէ այս հետևութիւնը, որպէսզի մարդիկ կարողանան իրանց գործողութիւնները մէջ համակերպել նրան, որպէսզի մարդիկ ապագայում հակառակ գործելով՝ իրանց ոյժերն ապարդիւն չվատնեն և նոր ձևերի զարգացումը չուշացնեն, — այլ որպէսզի կարողանան գիտակցօրէն աշխատել այս զարգացումը փութացնելու և դիւրացնելու համար:

Ապագայ կազմի վերաբերմամբ հասարակական գիտութեան հետևութիւնները չեն կարող լիովին ճշգրիտ լինել, որովհետև հասարակական երևոյթների ահագին բարդութիւնը մեր ժամանակում թոյլ չի տալիս լիովին, բոլոր մասնաւոր պարագաներով ընդգրկել նրանց, այլ միայն — ընդհանուր գծերով: Այս պատճառով, նոր կազմի պատկերն էլ կարելի է միայն դեռ ընդհանուր գծերով տալ: Բայց հէնց զբանք են, որ մասնաւոր մեր օրերի մարդու համար ամենակարեւոր գծերն են հանդիսանում:

Գիտութեան ժամանակակից դրութեան մէջ ոչ միայն չի կարելի հասարակական ձևերի արմատական փոփոխման և նորերով փոխարինելու ժամանակը գէթ մօտաւորապէս սահմանել, այլ նոյնիսկ հէնց նոր ձևերին անցնելն ևս պէտք է պայմանական կերպով ընդունել. նոր բարձրագոյն ձևն այն դէպքում հանդէս կգայ, երբ հասարակութիւնը իւր զարգացման մեջ առաջ կրնալէ, ինչպէս ընթանում էր մինչև այժմ: Հին աշխարհի պատմութիւնը ցոյց է տալիս, որ մարդկային հասարակութիւնները երբեմն կարող են յետ գնալ, կորստեան դիմել, քայքայուել. նախնական մարդու և նոյնպէս արևելեան միջանի կըղզիացած հասարակութիւնների պատմութիւնը երկար դադարի հընարաւորութիւն է ցոյց տալիս: Բայց դադարի կամ դեղրագացիայի համար գոհացուցիչ պատճառներ են հարկաւոր. ժամանակակից հասարակութեան կեանքի մէջ այդպիսի պատճառներ չի կարելի մատնացոյց անել: Հասարակութիւնը անշարժ կանգնել չի կարող բազմաթիւ ներքին հակասութիւնների՝ կեանքի մէջ յարուցած սուրացող ընթացքում: Այս հակասութիւններն այն դէպքում միայն կարող էին դեղրագացիա առաջացնել, եթէ ձեռքի տակ զարգացման համար բաւականաչափ ոյժեր չլինէին. բայց այդ ոյժերը կան և մինչև այժմ նոյն այդ հասարակական հակասութիւններն էին զարգացնում նրանց և բազմացնում: Հասարակութեան արտադրող ոյժերը անընդհատ աճում են, աճում և կազմակերպւում է հասարակութեան մի ահագին դասակարգ, որ ճշտում է իրականացնել նոր ձևերը: Ուստի և ոչ մի լուրջ հիմք

չկայ հակառակ շարժմանը, հասարակութեան դեղրագացիային սպասելու. անհամեմատ աւելի շատ հիմք կայ մտածելու, որ հասարակութիւնը կշարունակէ իւր ճանապարհը և կատեղծէ նոր ձևեր:

1. ՀԱՍՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԷՊԻ ԲՆՈՒԹԻՒՆԸ

Մեքենայական տեխնիկայի զարգացումը դեռ կապիտալիզմի շրջանում, այնպիսի հետևողական և անընդմիջւող բնաւորութիւն է ստանում որ բոլորովին հնարաւոր է դառնում որոշել այս զարգացման միտումը, ապա ուրեմն և յետագայ հետևանքները: Հիմնական միտումն արդէն նկատուեց, — նա ուղղած է դէպի մեքենական աշխատանքի ինքնաշարժութիւնը (автоматизм): Հին տիպի մեքենան, որի դէպքում աւելի կամ պակաս անհրաժեշտ մեքենայական շարժումները բանւորի ձեռքերով էին կատարուում, տեղի է տալիս նոր տիպին — ինքնաշարժ մեքենայի, որի առաջ բանւորի դերը լինում է համարեա բացառապէս հսկել մեքենայի գործողութեան վրայ: Վերահսկումն իսկ, օժանդակ կանոնաւորող յարմարութիւններ մտցնելով, հետզհետէ պարզւում, դիւրանում աւելի պակաս մանրակրկիտ է դառնում և մեքենայի կազմի մէջ մտնող զանազան գործիքների գործողութիւնն ուղղելու ընդհանուր հսկողութեան բնաւորութիւն է ստանում. մեխանիկը կարիք նուր հսկողութեան բնաւորութիւն է հոսանքը չափող գործիքը աչքի չունի ամեն ընդմեջ մասնօժեթը կամ հոսանքը չափող գործիքը աչքի անցնել և ամեն անգամ անձամբ կարգաւորել: շոգու ճնշման կամ հոսանքի ոյժի հարկաւոր չափը, եթէ մեքենան ունի այս բոլորը ինքնաբերաբար կանոնաւոր չափի վրայ պահող ընդունակատօրներ. նա միայն ժամանակ առ ժամանակ պէտք է տեղեկանայ, թէ արդեօք ընդունակատօրները գործում են և հարկ եղած դէպքում փոխել նրանց սարքը և նոյնպէս փշանալու դէպքում հոգ տանի շուտով, անմիջապէս ուղղել և նոյնպէս փշանալու դէպքում հոգ տանի շուտով, անմիջապէս ուղղել նրանց և այլն: Բայց այս դէպքում հետզհետէ աւելի բարձրանում է գիտութեան, հասկացողութեան, իմացականութեան և ընդհանուր հոգեկան զարգացման այն մակերևոյթը, որ պահանջւում է բանւորից: Մեքենայի դէպքում աշխատանքը իւր տիպով հետզհետէ աւելի «կազմակերպչական», հետզհետէ աւելի մտաւոր, աւելի պակաս արհեստաւորական է դառնում և գնալով աւելի քիչ չափով է նեղ մասնագէտի տեխնիկական ճարտիկութիւններ պահանջում: Մտքի աշխատանքը հետզհետէ գերակշռում է մկանների աշխատանքին:

Այս դէպքում մեքենաների քանակը և նրանց զարգացրած մեքենական էներգիայի գումարը աճում և այնպիսի վիթխարի չափերի է հասնում, որ մարդկանց ֆիզիքական ոյժը այս ահագին մեծութեան նկատմամբ անհամեմատ աւելի փոքր է: Բնութեան ոյժերը մարդու համար հսկայական աշխատանք են կատարում, նրանք հլու, մեռած ստրուկներ են, որոնց գորութիւնն անվերջ աճում է:

Հասարակական նոր ձևերի զարգացման համար առանձին նշանակու-

թիւն ունի մարդկանց հաղորդակցութեան տեխնիկան. սրա արագընթաց առաջադիմութիւնը, որ նկատելի է կապիտալիզմի շրջանի վերջում, բացայայտօրէն ուղղւած է վերցնելու այն բոլոր արգելքները, որ դնում են բնութիւնն ու տարածութիւնը մարդկանց միութեան և հասարման ճանապարհին: Անթել հեռագրի ու հեռախօսի կատարելագործումը հաւանօրէն ոչ շատ հեռու ապագայում մարդկանց համար հնարաւորութիւն կստեղծէ ունենալ ամեն մի տարածութեան և ամեն տեսակ բնական արգելքների մէջ անմիջական բանակցութիւններ: Տեղափոխութեան բոլոր միջոցների աճող արագութիւնը մարդկանց իրանց աշխատանքի արդիւնքների հետ միասին այն աստիճանի պէտք է ֆիզիկապէս մօտեցնէ իրար, որպիսին անցեալ սերունդները երազել անգամ չէին կարող: Վերջապէս, անկասկած, մօտ է արդէն այն բոլորէն, երբ պէտք է ազատ վարելի օդագնաց գործիքներ ստեղծեն: Այս ամենադժուար խնդրի լուծումը մարդկային յարաբերութիւնները երկրի մակերևոյթի աշխարհագրական պայմաններից, նրա կազմւածքից ու դժագրութիւնից իրապէս անկախ կը դարձնէ:

Բնութեան վրայ հասարակութեան իսկական իշխանութիւն, որ անսահման զարգանում է գիտականօրէն-կազմակերպւած տեխնիկայի հիմքերի վերայ—ահա այսպէս է յետ-կապիտալիստական կազմի առաջին բնոյթագիրը:

2. ԱՐՏԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ինչպէս տեսանք, մեքենայական տեխնիկան կապիտալիզմի շրջանում աշխատակցութեան ձևերը երկու տեսակէտով է փոխում: Մի կողմից՝ աշխատանքի տեխնիկական բաժանումը կորցնում է բանւորի հոգեկանը նեղացնող, սահմանափակող «մասնագիտացման» բնաւորութիւնը և նմանում է «հասարակ կօօպերացիայի», որի մէջ բանւորները միատեսակ աշխատանք են կատարում. այս դէպքում տեխնիկական «մասնագիտացումը» մարդուց անցնում է մեքենային: Միւս կողմից՝ հէնց այս աշխատակցութեան շրջանակները չափազանց ընդլայնում են. առաջ են գալիս ձեռնարկութիւններ, որոնք մի կազմակերպւած սիստեմի մէջ հազարաւոր և տասնեակ հազարաւոր բանւորներ են միացնում:

Այս երկու միտումները նոր կազմի համար անհամեմատ աւելի տևողական պէտք է երևակայել, քան մեքենայական կապիտալիզմի շրջանում: Արհեստացկական մասնագիտացման տարբերութիւններն այնքան աննշան են դառնում, որ վերջնականապէս անհետանում է այն հոգեկան բաժանւածութիւնը, որ առաջ է գալիս մարդկանց աշխատանքային կեանքի զանազանակերպութիւնից. նրանց հասկացողութեան և առնչութեան փոխազարձ կապն անարգել լայնանում և ամբարձրում է կեանքի բովանդակութեան իրական ընդհանրութեան

հիմքի վրայ: Միևնոյն ժամանակ կազմակերպւած աշխատանքային միութիւնն անընդհատ աճում է և արդէն հարիւր հազարաւոր և միլիոնաւոր մարդկանց մի ընդհանուր աշխատանքային նպատակի շուրջն է խմբում:

Այս երկու նախկին միտումների տևողական զարգացումից առաջ են գալիս արդէն յետ-կապիտալիստական կազմի երկու նոր առանձնայատկութիւններ: Մի կողմից՝ յաղթահարւում և կորցնւում է իւր նշանակութիւնը մասնագիտացման վերջին ամենահաստատուն ձևը—կազմակերպչի և կատարողի բաժանումը: Միւս կողմից՝ մարդկանց աշխատանքային բոլոր համախմբումները հետզհետէ աւելի դիւրաշարժ, աւելի գնայուն են դառնում:

Թէև մեքենայական կապիտալիզմի շրջանում մեքենայի դէպքում կատարողական աշխատանքը իւր բնաւորութեամբ արդէն կազմակերպչական աշխատանքին է մօտենում, այնուամենայնիւ նրանց մէջ բաւականին տարբերութիւն մնում է, ուստի և կազմակերպչական և կատարողական դերերի առանձնացումը դեռ հաստատուն կմնայ. մեքենայական արտադրութեան ամենափորձւած բանւորն էլ նոյնը չէ, ինչ որ տեսուչը, և չի կարող վերջինիս փոխարինել: Բայց մեխանիզմների բարդութեան և նրբութեան յետագայ աճելը և սրա հետ միասին բանւորի ընդհանուր ինտելիգենտութեան բարձրանալը պէտք է վերացնէ այս տարբերութիւնը և ստեղծէ բանւորին որ և է կազմակերպչի կատարողներից մէկով դիւրութեամբ փոխարինելու մշտական հնարաւորութիւնը և ընդհակառակը: Այս երկու տիպերի աշխատանքի անհաւասարութիւնը վերանում է և նրանք միմիանց հետ ձուլւում են:

Հոգեկան «մասնագիտացման» վերջին մնացորդների հետ վերանում են նաև որոշ մարդկանց որոշ մասնաւոր աշխատանքի կաշկելու անհրաժեշտութիւնն ու լեկացիութիւնը: Բոլորովին հսկառակը, աշխատանքի նոր ձևերը այնպիսի մտաւոր ձկունութիւն և փորձառութեան այնպիսի բազմակողմանիութիւն են պահանջում, որոնց պահպանելու և զարգացնելու համար բանւորն ուղղակի պէտք է ժամանակ ներկայ էր աշխատանքը, մի մեքենայից մի ուրիշին առ ժամանակ փոխէ իւր աշխատանքը, մի մեքենայից մի ուրիշին անցնի. «կազմակերպչական» դերից—«կատարողականին» և ընդհակառակը: Իսկ մեր շրջանի տեխնիկական յառաջադիմութիւնից անհամեմատ աւելի արագ՝ տեխնիկական յառաջադիմութիւնը մեքենաներն ու նրանց կօմբինացիաները շարունակ կատարելագործելով, մարդկային ոյժերի համախմբումներին պէտք է առանձին աշխատանքի սիստեմների մէջ (ինչպէս ներկայումս կոչում են «ձեռնարկութիւններ») վերին աստիճանի դիւրաշարժ և արագ փոփոխող դարձնէ:

Այս բոլորը հնարաւոր և իրագործելի է դառնում այն պատճառով, որ հասարակութիւնը արտադրութիւնն ամբողջապէս գիտակցօրէն և համազգափօրէն է կազմակերպում: Գիտական փորձի և աշխատանքի հա-

մերաշխուսթեան հիմքի վրայ աշխատանքի ընդհանուր, միացնող կազմակերպութիւն է ստեղծուում վերանում է այն անիշխանութիւնը, որ կապիտալիզմի շրջանում անխնայ մրցումով բաժանում է առանձին ձեռնարկութիւնները և դաժան կուռով անջատում է ամբողջ հասարակական դասակարգերը: Գիտութիւնը ցոյց է տալիս այդպիսի կազմակերպութեան ճանապարհը, մշակում է նրան իրադրժեւում միջոցները և գիտակից բանւորների միացեալ ոյժը իրականացնում է այդ կազմակերպութիւնը:

Արտադրութեան այս նոր սիստեմի մէջ բոլոր բանւորները, իբրև միակ խելացի ամբողջութեան գիտակից տարրեր, միմեանց հաւասար են. այս սիստեմի մէջ ամեն մէկին տրւում է բոլոր պայմանները, որ նա լի ու լի ամենաբազմակողմանի կերպով զարգացնէ իւր աշխատանքային ոյժը և ամենանպատակայարմար կերպով գործադրէ նրան յօգուտ բոլորի:

Այսպէս ուրեմն, ամբողջ արտադրական սիստեմի ներդաշնակ, համաչափ կազմակերպութիւն, որի տարրերն ու համախմբումները վերին աստիճանի շարժուն են եւ ուր աշխատանքները ներկայացնում են բազմակողմանի զարգացած, գիտակից բանւորների բարձր հոգեկան միատեսակութիւն—անա յետ-կապիտալիստական հասարակութեան երկրորդ բնոյթագիրը:

3. ԲԱՇԽՈՒՄ

Բաշխումը արտադրական սիստեմի ընդհանրապէս անհրաժեշտ մասն է հանդիսանում և իւր կազմակերպութեամբ ամբողջովին նրանից է կախւած: Արտադրութեան համաչափ կազմակերպութիւնը բաշխման նոյնպիսի կազմակերպութիւն է առաջադրում: Բարձրագոյն կազմակերպիչը թէ՛ այստեղ, և թէ՛ այնտեղ ինքը հասարակութիւնն է ներկայանում, իբրև մի ամբողջութիւն. նա է բաշխում աշխատանքը, սրան համապատասխան և աշխատանքի արդիւնքները: Այս ուղղակի հակադրութիւն է այն անիշխան, անկազմակերպ բաշխմանը, որ արտաշայտում է փոխանակութեան և մասնաւոր սեփականութեան մէջ և որը մրցման ու շահերի կռուի կուր հողի վրայով է հոսում:

Բաշխման սկզբունքը ուղղակի աշխատակցութեան կազմակերպութեան հիմքերից է բղխում: Եթէ արտադրութեան սիստեմն այնպէս է կազմակերպւած, որ պէտք է հասարակութեան իւրաքանչիւր անդամի ոյժերի լիակատար, բազմակողմանի զարգացումը և նրանց նպատակայարմար կերպով ընդհանուրի օգտին գործադրելը ապահովէ, ուրեմն բաշխման սիստեմը պէտք է տայ նրան գործածութեան բոլոր անհրաժեշտ միջոցները և սրա համար զարգացման ոյժ ու գործադրութիւն: Այս միտքը, ոչ բոլորովին լիակատար և ճշգրիտ, այլ մօտաւորապէս արտայայտուում է աշխատանքի և արդիւնքի բաշխման

այսպէս կոչւած, կոմմունիստական Փօրմուլայի մէջ.—իւրաքանչիւրից իւր ոյժերի համաձայն և իւրաքանչիւրին ըստ իւր կարիքների:

Արտադրութեան և բաշխման հասարակական կազմակերպութիւնը, ի հարկէ, առաջադրում է և այն, որ արտադրութեան միջոցները, ինչպէս նաև հասարակական աշխատանքով ստեղծւած սպառման առարկաները հասարակութեան սեփականութիւն լինեն մինչև այն մոմենտը, երբ հասարակութիւնը արդիւնքները կտայ առանձին մարդկանց գործածելու: Միայն գործածութեան շրջանում, որ իւր էութեամբ անհատական բնաւորութիւն ունի, սկսում է «անհատական սեփականութիւնը»: Վերջինս, ի հարկէ, ոչ մի ընդհանուր բան չունի կապիտալիստական մասնաւոր սեփականութեան հետ, որը նախ արտադրութեան միջոցների մասնաւոր անձերի սեփականութիւն է և որի մէջ բանւորները գործածութեան անհրաժեշտ միջոցների վրայ իրաւունք չունեն:

Ակներև է, որ բաշխման նոր կազմակերպութեան բարդութիւնը ահագին է և վիճակագրական ու տեղեկատու ապագարտի այնպիսի զարգացումն է պահանջում, որ մեր էպօխայից դեռ շատ հեռու է: Սակայն, արդէն ներկայումս, տնտեսական կեանքի ամենազանազան ճիւղերում կազմում են այլ և այլ տարրեր, որոնք պէտք է այգօրինակ ապագարտին նիւթ ծառայեն. բանկի և կրեդիտի գործի շրջանում գործակալութիւններ և շուկաների դրութիւնն իմանալու հետախոյզ մասնագէտների կոմիտէներ, բօրսայական կազմակերպութիւն և այլն. բանւորական շարժման շրջանում—փոխադարձ օգնութեան միութեան դրամարկդներ, սպառողական ընկերութիւնների կազմակերպութիւններ. այնուհետև սրանց մէջ է մտնում նաև պետական ապահովագրութեան կազմակերպութիւնը և այլն: Բայց այս բոլոր տարրերը պէտք է էսպէս վերակազմեն, որ բաշխման ապագայ սիստեմի մէջ մտնեն, որովհետև այժմ նրանք ամբողջապէս կապիտալիզմի անիշխանական սիստեմին են յարմարւած և նրա ձևերին են թարկւած: Սրանք աւելի շուտ ապագայ բաշխման միակ և համաչափ սիստեմի ցիր ու ցան սաղմնային նախատիպերն են:

Այսպէս ուրեմն, արտադրութեան բոլոր միջոցների հասարակական սեփականութեան հիմքի վրայ հասարակականապէս-կազմակերպւած բաշխումն—անա այսպէս է յետ-կապիտալիստական կազմի երրորդ բնոյթագիրը:

4. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

Նոր հասարակական կազմակերպութեան հիմնական կազմով որոշուում է հասարակական հոգեբանութեան առաջին դիժը, որ մտնում է նրա շրջանակի մէջ, այն է՝ վերին աստիճանի սօցիալականութիւն: Մարդկային Մեծ ընտանիքի աշխատանքային համախմբումը և մարդկանց զարգացման արմատական միատեսակութիւնը պէտք է մարդկանց միջև այն աստիճանի փոխադարձ կարեկցութիւն և փոխադարձ հասկացողութիւն ստեղծեն, որի թոյլ պատկերը բանւորական դասակարգի

գիտակից և կուռղ տարբերի—ներկայումս ապագայ հասարակութեան ներկայացուցիչները—ժամանակակից համերաշխութիւնն է ներկայանում: Կատարի մրցման, մարդկանց խմբերի և դասակարգերի տնտեսական անխնայ թշնամութեան էպօխայի մէջ կրթւած մարդը պատկերացնել անգամ չի կարող մարդկանց ընկերական կապի այն բարձր զարգացումը, որ օրգանապէս բղխում է աշխատանքային նոր յարաբերութիւններից:

Հասարակութեան՝ արտաքին և իւր սեփական բնութեան վրայ ունեցած ըէալ իշխանութիւնից բղխում է նոր աշխարհի հոգեբանութեան միւս գիծը—ամեն մի ֆետիշիզմի բացակայութիւն, միստիկայի կուռքերից և բնազանցութեան ուրականներից զերծ գիտութեան պարզութիւն և յստակութիւն: Զքանում են բնական ֆետիշիզմի վերջին հետքերը, ֆետիշիզմի, որ մարդու՝ արտաքին բնութեան վրայ ունեցած տիրապետութեան վերջնական գահընկէցութիւնն է արտացոլում. կործանւում ու արմատախիլ է լինում սօցիալական ֆետիշիզմը, որ արտացոլում է հասարակական բնութեան տարբերային ոյժերի՝ մարդու վրայ ունեցած տիրապետութիւնը և շուկայի ու մրցման իշխանութիւնը: Հասարակական մարդը, բնութեան տարբերի դէմ մղելիք կռիւն ու այս կուռ մէջ իւր սեփական յարաբերութիւնները գիտակցօրէն և համաշափ կազմակերպելով, կարիք չունի կուռքերի, որոնք շրջապատող աշխարհի անյաղթելի ոյժերի առաջ անօգնականութեան զգացում են մարմնացնում. նրա համար անիմանալին դադարում է այլևս անիմանալի լինելուց, որովհետև կազմակերպւած աշխատանքի հողի վրայ հաւասարաշափ կազմակերպւած իմացականութեան սրոցեսսին ոյժի գիտակցութիւնը, յաղթութեան զգացումն է ուղեկցում, որովհետև մարդու կեանքի փորձառութեան մէջ այլևս անխորտակելի պարիսպներով շրջապատւած գաղանիքներ չեն լինում:

Իբրև հասարակական հոգեբանութեան վերոյիշեալ երկու գծերի միացման հետևանք՝ հանդէս է դալիս երրորդ գիծը—հասարակական կեանքում ստիպողական նորմաների և ընդհանրապէս ստիպման տարրերի պրօգրեսի վերացումը:

Ի ուր ստիպողական նորմաների—սովորութեան, իրաւունքի, բարոյականութեան—կենսական նշանակութիւնն այն է, որ նրանք կարգի են բերում մարդկանց, խմբերի, դասակարգերի մէջ եղած հակասութիւնները: Իսկ այս հակասութիւնների հետևանքը լինում է կուռ, մրցումն, թշնամութիւն, բռնութիւն, իսկ իրանք հասարակական ամբողջութեան անկազմակերպ լինելուց ու անիշխանակութիւնից են բղխում: Ստիպողական նորմաները, որոնց մասամբ տարբերային կերպով և մասամբ գիտակցօրէն մշակում է հասարակութիւնը, այդ անկազմակերպութեան ու հակասութիւնների դէմ վարած կուռ մէջ, մարդկանց համար արտաքին ոյժ են դառնում, որին և նրանք հպատակւում են. և

իբրև մարդու գլխի կանգնած արտաքին ոյժ, այս նորմաները աղաւաղւած ֆետիշներ են դառնում, այսինքն՝ ներկայանում են մարդկանց աչքին ինչ որ աւելի բարձր պաշտամունք կամ յարգանք պահանջող բաներ: Առանց այս ֆետիշիզմի, ստիպողական նորմաները մարդկանց վրայ այն իշխանութիւնը չէին ունենայ, որպիսին անհրաժեշտ է կեանքի հակասութիւնները զսպելու համար: Բնական ֆետիշիստը իշխանութեանը, իրաւունքին, բարոյականութեանը աստուծային ծագումն է վերագրում. իսկ փոխանակական հասարակութեան ֆետիշիստը կամ մետաֆիզիկը այդ բոլորը հէնց «իբերի էութիւնից» ծագած է համարում: Թէ՛ այս, և թէ՛ այն բարձր ծագումն, բացարձակ նշանակութիւն են ցոյց տալիս: Նորմաների այդպիսի բարձր և բացարձակ բնաւորութեանը հուսատալով, ֆետիշիստը ստրուկի անձնւիրութեամբ հպատակւում է նրանց և պահպանում:

Երբ հասարակութիւնը դադարում է անիշխանական լինելուց և համաշափ կազմակերպութեան ներդաշնակ ձևերով է կազմւում, այն ժամանակ նրա կենսական հակասութիւնները դադարում են հիմնական և մշտական երևոյթ լինելուց, միայն թէ մասնաւոր և պատահական են լինում: Ստիպողական նորմաներն էլ իւր տեսակի «օրէնքներ» են այն մտքով, որ նրանք պէտք է կանոնաւորեն կրկնուող, հէնց հասարակութեան կազմից բղխող երևոյթները. ակներև է, որ նոր կազմի մէջ նրանք իրանց միտքը կորցնում են: Իսկ պատահական և մասնաւոր հակասութիւնները, սօցիալական զգացման և իմացականութեան բարձր զարգացման ժամանակ, առանց «իշխանութեան» ստիպմունքով անցկացւած առանձին «օրէնքների», հեշտութեամբ յաղթահարւում են մարդկանցից: Օրինակ՝ երբ հոգեկան հիւանդը մարդկանց վտանգ և վնաս է պատճառում, այդ դէպքում առանձին «օրէնքներ» կամ «իշխանութեան օրգաններ չեն պահանջւում վերացնելու այդ հակասութիւնը. բայց բաւական են գիտութեան ցուցմունքները, որ նպատակայարմար կերպով բժշկելի մարդը և շրջապատող մարդկանց սօցիալական զգացումները, որ, արգելելով հիւանդի ցոյց տւած բռնութեան արտայայտութիւնները, որքան կարելի է քիչ բռնութիւն պատճառեն նրան:

Ստիպողական նորմաների միտքը բարձրագոյն տիպի հասարակութեան մէջ կորչում է մասնաւոր նրանով, որ նորմաների հետ կապւած սօցիալական ֆետիշիզմի չքանալովը նորմաների «բարձրագոյն ոյժն էլ կորչում է:

Միայն են մտածում նրանք, որ ենթադրում են, թէ նոր հասարակութեան մէջ պէտք է պահպանել «պետական կառուցւածք» այսինքն՝ իրաւական կազմակերպութիւն, որովհետև անհրաժեշտ են մի քանի ստիպողական օրէնքներ, օրինակ՝ այն մասին, թէ իւրաքանչիւր մարդ օրական քանի ժամ պէտք է աշխատի հասարակութեան համար: Ամեն մի պետական կառուցւածք պատկարբային տիրապետութեան կազմակերպութիւն է և որտեղ դասակարգ չկայ, այնտեղ պետութիւն

չի կարող լինել: Ինչ վերաբերում է աշխատանքը հասարակութեան մէջ  
բաշխելուն, սա նոր կազմի մէջ երաշխաւորում է մի կողմից գիտու-  
թեան և նրա արտայայտիչներին՝ աշխատանքը տեխնիկապէս կազմա-  
կերպողներին ցուցմունքներով, որոնք ոչ թէ իշխանութեան, այլ գի-  
տութեան անունով են գործում, միւս կողմից—սօցիալական զգացման  
ոյժով, որ մարդկանց կապում է մի աշխատող ընտանիքի մէջ այն ան-  
կեղծ ձգտմամբ, որ ամեն բան արւել ամենքի բարիքի համար:

Միայն անցողական շրջանում, երբ անցեալի դասակարգային հա-  
կասութիւնների մնացորդները դեռ պահպանւում են, պետական ձևը  
միտք ունի և նոր հասարակութեան համար—«սպազայի պետութիւն»:  
Բայց այս պետութիւնն էլ նոյնպէս դասակարգային տիրապետութեան  
կազմակերպութիւն է, միայն—պրօլետարիատի տիրապետութեան, մի  
դասակարգի—որ ոչնչացնում է հասարակութեան՝ դասակարգերի բաժա-  
նելը և սպա սրանով վերացնում է հասարակութեան պետական ձևը:

5. ԶԱՐԳԱՅՄԱՆ ՈՅԺԵՐԸ

Նոր հասարակութիւնը ոչ թէ փոխանակական, այլ բնական տըն  
տեսութեան վրայ է հիմնւած: Արդիւնքների արտադրութեան և սպառ-  
ման մէջ չկան շուկաներ և առ ու տուր, —այլ միմիայն գիտակցօրէն  
և համաշափ կազմակերպւած բաշխումն:

Նոր բնական տնտեսութիւնը հնից,—օրինակ՝ հախնական-կօմ-  
ձունիստականից նրանով է տարբերւում, որ նա ոչ թէ մեծ կամ փոքր  
համայնք է ընդգրկում, այլ—հարիւր միլիոններից բաղկացած մի ամ-  
բողջ հասարակութիւն, իսկ յետոյ—ամբողջ մարդկութիւնը:

Փոխանակական տնտեսութիւն ունեցող հասարակութիւնների մէջ  
զարգացման ոյժերը—«յարաբերական գերաբնակչութիւնը», մրցումը—  
դասակարգային կռիւ է, այսինքն՝ էսպէս, հասարակական կեանքի  
ներքին հակասութիւններ: Բնական-տնտեսական, ցեղական, ֆէօդալա-  
կան և այլն հասարակութիւնների մէջ այս ոյժերը յանգում են «բա-  
ցարձակ գերաբնակչութեան» այսինքն՝ արտաքին ցակասութեան, հա-  
սարակութեան և բնութեան բազմանալուց առաջացած ապրուստի մի-  
ջոցների պահանջների աճեցողութեան և աշխատանքի՝ որ և է եղանակ-  
ներով բնութիւնից ստացած այս միջոցների գումարի հակասու-  
թիւններին:

Նոր բնական-տնտեսական հասարակութեան մէջ զարգացման ոյ-  
ժերը դարձեալ արտաքին հակասութեան — հասարակութեան և բնու-  
թեան հակասութեան մէջ են, այսինքն՝ հասարակութեան՝ բնութեան  
գէժ վարած կռիւ պրոցեսի մէջ: Այստեղ չափազանց բազմանալու դան-  
դաղ գործող ոյժ չի պահանջւում, որ մարդը իւր աշխատանքն ու իմա-  
ցականութիւնն աւելի ևս կատարելագործէ. մարդկային կարիքները  
հէնց աշխատանքի և փորձի պրոցեսի մէջ են աճում, բնութեան և  
նրա գաղտնիքների գէժ տարած իւրաքանչիւր նոր յաղթանակ նոր  
խնդիրներ և հանելուկներ է դնում նոր մարդու բարձր-կազմակերպ-

ւած, ներդաշնակ և իւրաքանչիւր թերութեան ու հակասութեան համար  
զգայուն հոգեկանի առաջ: Բնութեան վրայ իշխանութիւն՝ նշանակում  
է հասարակութեան՝ արտաքին բնութիւնից սեփականացած էներգիայի  
մշտական կուտակումն: Կուտակւած էներգիան ելք է որոնում և այդ  
ելքը ստ՝ դաւործութեան, աշխատանքի և իմացականութեան նոր ձևեր  
ստեղծելու մէջ է գտնում:

Ճշմարիտ է, ամեն անգամ էներգիայի կուտակւումը չի կարող  
ստեղծագործութեան յանգել—նա շատ անգամ կարող է և այլասերման  
տանել: Ժամանակակից և նախկին հասարակութիւնների պարալիտ  
դասակարգերն ուրիշ մարդկանց հաշին էներգիա կուտակելով, նրա  
ելքը ոչ թէ ստեղծագործութեան, այլ անստակութեան, աղաւաղան  
և իրերի գործածելու քնքրութեան մէջ էին որոնում. իսկ այս երևոյթը  
հոգեկանի թուլութիւն, դասակարգի անկումն է առաջացնում: Սակայն  
այդպէս միայն պարալիտներն են. նրանք ոչ թէ հանրօգուտ աշխա-  
տանքի, այլ համարեա բացառապէս սպառման շրջանումն են ապրում-  
բնական է, որ նրանք այդ շրջանում էլ կեանքի նոր ձևեր են փընտ-  
ռում և այդ նոր ձևերը քնքրութիւնների ու աղճատութեան մէջ են  
գտնում: Նոր հասարակութիւնը այդպիսի պարագիտներ չի ճանաչում,  
այնտեղ բոլորը աշխատողներ են և աշխատանքի շրջանումն են նրանք  
իրանց առատ էներգիայից բղխած ստեղծագործութեան ծարաւին բա-  
ւարարութիւն տալիս: Նրանք կատարելագործում են տեխնիկան ու  
հասկացողութիւնը, և ուրեմն իրանց սեփական բնոյթը:

Զարգացման նոր ոյժերը, որ մարդկանց աշխատանքի փորձից  
են ծնւում, այնքան աւելի ուժեղ և արագ են գործում, որքան աւելի  
լայն, բարդ և բազմակողմանի է այդ փորձը: Ուստի և նոր հասարա-  
կութեան մէջ, իւր աշխատանքի վիթխարի ընդարձակ և բարդ սիստե-  
մով, նրա հսկայական կապակցութեամբ, որ մօտեցնում և միացնում է  
մարդկային ամենատարբեր անձերի (զարգացման միատեսակ մակերևոյ-  
քով) փորձը, զարգացման այս ոյժերը մի այնպիսի արագընթաց առա-  
ջադիմութիւն պէտք է ստեղծեն, որի մասին մենք ճշգրիտ հասկացո-  
ղութիւն իսկ չենք կարող կազմել: Ապագայ հասարակութեան ներդաշ-  
նակ առաջադիմութիւնը անհամեմատ աւելի լարւած է, քան մեր էսօ-  
խայի կիսատարերային, հակասութիւնների մէջ տատանող յառաջադի-  
մութիւնը:

Նոր հասարակական սիստեմի մէջ զարգացման բոլոր տնտեսական  
արգելքները վերացւած են: Այսպէս, մեքենաների տարածումը, որ կա-  
պիտալիստական հասարակութեան մէջ մեքենաների շահաբերութեան  
մէջ է սահման գտնում, այստեղ ամբողջապէս նրանց արտադրողակա-  
նութիւնից է կախւած: Իսկ մենք արդէն տեսանք, որ աշխատանքը  
տնտեսելու համար խիստ օգտակար մեքենան կապիտալիստական շահի  
տեսակէտով շատ անգամ անշահաւէտ է ներկայանում:

Այսպէս ուրեմն, մեզ համար բնութեան վրայ ունեւանոյ իշխանու-  
թեան բարձրագոյն նպատակայարմար և խելացի աստիճանը՝ կազմա-  
կերպւած լինելու, սօցիալականութեան և սպա պրօգրեսիւ ընթացքի  
աստիճանն է—այսպէս է նոր, սօցիալիստական կազմի ընդհանուր բը-  
նոյթադիրը:

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

#### Ընդհանուր հասկացողութիւններ

- 1. Տնտեսական գիտութեան որոշումը . . . . . Երես
- 2. Արտադրութիւն . . . . . 1
- 3. Հասարակական օգտակարութիւն և հասարակական արժողութիւն 22
- 4. Ընդհանուր հանկարծութիւնների տեսութիւն . . . . . 25
- 5. Տնտեսական գիտութեան բացատրութեան բաժանումն ու կարգը 26
- 6. Տնտեսական գիտութեան մեթոդի մասին . . . . . 29

#### Նախնական ցեղական կոմունիզմ

- 1. Մարդու նախնական վերաբերմունքը դէպի բնութիւնը . . . . . 33
- 2. Արտադրութեան հասարակական յարաբերութիւնները նախնական ցեղական խմբերի մէջ . . . . . 35
- 3. Բաշխման նախնական ձևերը . . . . . 37
- 4. Նախնական հասարակութեան հոգեբանութեան հիմնական . . . . . 38  
գծերը . . . . . 40
- 5. Զարգացման ոյժերը նախնական հասարակութեան մէջ . . . . . 40

#### II. Հասարակութեան նւիրայեսական-ցեղական կազմակերպութիւն

- 1. Երկրագործութեան և անասնապահութեան ծագումը . . . . . 42
- 2. Յեղական խմբի արտադրական յարաբերութիւնների զարգացումը 43
- 3. Բաշխման ձևերը նահապետական ցեղական շրջանում . . . . . 48
- 4. Նահապետական-ցեղական շրջանի հասարակական հոգեբանութեան հիմնական գծերը . . . . . 53
- 5. Զարգացման ոյժերն ու կեանքի նոր ձևերը նահապետական-ցեղական շրջանում . . . . . 59

#### Հին ստրկութիւն

- 1. Հասարակութեան վերաբերմունքը դէպի արտաքին բնութիւնը 62
- 2. Ստրկութեան արտադրական և բաշխողական յարաբերութիւնների զարգացումը . . . . . 64
- 3. Հին աշխարհի հասարակական հոգեբանութեան հիմնական գծերը 70
- 4. Ստրկատիրական հասարակութիւնների ղեկավարացիայի պատճառներն ու ընթացքը . . . . . 79

#### III. Ֆէօդալական հասարակութիւն

- 1. Հասարակութեան վերաբերմունքը դէպի բնութիւնը . . . . . 86
- 2. Ֆէօդալական խմբի արտադրական և բաշխողական յարաբերութիւնները . . . . . 87
- 3. Ֆէօդալական շրջանի հասարակական հոգեբանութեան հիմնական գծերը . . . . . 102
- 4. Զարգացման ոյժերն ու նրա ուղղութիւնը ֆէօդալական հասարակութեան մէջ . . . . . 106

#### IV. Մանր-բուրժուական հասարակութիւն

- 1. Հասարակութեան վերաբերմունքը դէպի բնութիւնը . . . . . 109
- 2. Մարդկանց արտադրական և բաշխողական յարաբերութիւնները մանր-բուրժուական հասարակութեան մէջ . . . . . 110

- 3. Մանր-բուրժուական շրջանի հասարակական հոգեբանութեան հիմնական գծերը . . . . . 135
- 4. Զարգացման ոյժերն ու նրա ուղղութիւնը մանր-բուրժուական հասարակութեան մէջ . . . . . 144

#### V. Առեսրակական կապիտալի օրջան

- 1. Արտադրութեան տեխնիկական յարաբերութիւնները . . . . . 146
- 2. Առեսրակական կապիտալիզմի հասարակական յարաբերութիւնները 147
- 3. Հասարակական հոգեբանութիւնը և զարգացման ոյժերը առեսրակական կապիտալի շրջանում . . . . . 160

#### VI. Արդիւնաբերական կապիտալիզմ

##### Մանուֆակտուրային շրջան

- 1. Հասարակութեան վերաբերմունքը դէպի արտաքին բնութիւնը 165
- 2. Արտադրութեան հասարակական յարաբերութիւնների զարգացումը մանուֆակտուրային կապիտալիզմի շրջանում . . . . . 167
- 3. Հասարակական բաշխման եղանակները մանուֆակտուրայի շրջանում . . . . . 190
- 4. Հասարակական արդիւնքի բաշխումը զանազան կապիտալիստական դասակարգերի միջև . . . . . 197
- 5. Մանուֆակտուրային շրջանի հասարակական հոգեբանութեան հիմնական գծերը . . . . . 226
- 6. Զարգացման ոյժերն ու նրա ուղղութիւնը արդիւնաբերական կապիտալիզմի առաջին շրջանում . . . . . 243

#### VII. Արդիւնաբերական կապիտալիզմ

##### Մեքենայական արտադրութեան շրջան

- 1. Հասարակութեան վերաբերմունքը դէպի բնութիւնը . . . . . 253
- 2. Արտադրութեան հասարակական յարաբերութիւնները մեքենայական կապիտալիզմի շրջանում . . . . . 266
- 3. Բաշխման եղանակների զարգացումը կապիտալիզմի մեքենայական շրջանում . . . . . 271
- 4. Հասարակական արդիւնքի բաշխումը զանազան կապիտալիստական դասակարգերի մէջ . . . . . 289
- 5. Հասարակական հոգեբանութեան ամենագլխաւոր փոփոխութիւնները մեքենայական կապիտալիզմի շրջանում . . . . . 314
- 6. Հասարակական զարգացման և ղեկավարացիայի պրօցեսները մեքենայական կապիտալիզմի շրջանում . . . . . 336

#### VIII. Սօցիալիստական հասարակութիւն

- 1. Հասարակութեան վերաբերմունքը դէպի բնութիւնը . . . . . 357
- 2. Արտադրութեան հասարակական յարաբերութիւնները . . . . . 358
- 3. Բաշխումն . . . . . 360
- 4. Հասարակական հոգեբանութիւն . . . . . 361
- 5. Զարգացման ոյժերը . . . . . 364

ԽՈՇՈՐ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Տպւած է

պէտք է լինի

33-րդ երեսի վերնագրում.

Յարաբերութիւնները դէպի բնութիւնը

Վարաբերմունքը դէպի թւ  
նութիւնը

62-րդ երեսի վերնագրում.

Արտադրական և բախշողական

Արտադրական և բաշխողական

165-րդ երեսի վերնագրում.

Յարաբերութիւնները արտաքին բնու-  
թեան հետ

Վերաբերմունքը դէպի  
բնութիւնը



ՊՍՏՐԱՍ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

1. Ա. ԲԵՖԵԼ, Կինը և սօցիալիզմ.
2. ՄԱՐՏՈՎ, Սօցիալափոխականները և պրօլետարիատը.
3. ԲԵԼՏՕՎ, Մօնիստիքական հայեացք պատմութեան վրայ.

ԹԱՐԳՄԱՆՈՒՄ Է

1. ՄԱՔՍԻՄ ԳՕՐԿԻՅ, Մայրը.
2. ԲՕԺԿՈՎ, Կապիտալիզմ և սօցիալիզմ.

Դիմել հետևեալ հասցեով՝

Тифлисъ, Почтовый ящикъ № 108 М. И. Назарбекъ.

և Թիֆլիսի գրավաճառներին:

Մեծաքանակ գնողներին և գրավաճառներին 20% զեղջ:

Ուղարկելու ծախսը գնողի վրայ է:

«Ազգային գրադարան»



NL0198258

